ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ,
ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ՎԱՆԱՁՈՐԻ Հ. ԹՈՒՄԱՆՅԱՆԻ ԱՆՎԱՆ
ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ





ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ ՈՒՍԱՆՈՂԱԿԱՆ 11-ՐԴ ԳԻՏԱԺՈՂՈՎԻ ՆՅՈՒԹԵՐ

ՎԱՆԱՁՈՐ – 2022

ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ,
ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ՎԱՆԱՁՈՐԻ Հ. ԹՈՒՄԱՆՅԱՆԻ ԱՆՎԱՆ
ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ ՈՒՍԱՆՈՂԱԿԱՆ 11-ՐԴ ԳԻՏԱԺՈՂՈՎԻ ՆՅՈՒԹԵՐ

Նոր հեռանկարներ
ուսանողների գիտահետազոտական
ներուժի զարգացման համար

ՎԱՆԱՁՈՐ
2022

МИНИСТЕРСТВО ОБРАЗОВАНИЯ, НАУКИ,
КУЛЬТУРЫ И СПОРТА РА

ВАНАДЗОРСКИЙ ГОСУДАРСТВЕННЫЙ УНИВЕРСИТЕТ
ИМЕНИ О. ТУМАНЯНА

МАТЕРИАЛЫ 11-ОЙ РЕСПУБЛИКАНСКОЙ СТУДЕНЧЕСКОЙ КОНФЕРЕНЦИИ

Новые перспективы развития
научно-исследовательского потенциала студентов

ВАНАДЗОР
2022

RA MINISTRY OF EDUCATION, SCIENCE,
CULTURE AND SPORT

VANADZOR STATE UNIVERSITY
NAMED AFTER H. TUMANYAN

MATERIALS OF THE 11TH REPUBLICAN STUDENT CONFERENCE

New perspectives for the development
of students' research potential

VANADZOR
2022

ՀՏԴ 378:001(082)
ԳՄԴ 74.48+72գ43
Հ 316

Տպագրվում է Վանաձորի Հ. Թումանյանի անվան պետական համալսարանի գիտական խորհրդի որոշմամբ

Խմբագրական խորհուրդ
Ռ. Ռ. Սահակյան, տեխ. գ. դ. (խմբագրական խորհրդի նախագահ)
Վ. Վ. Հովսեփյան, կ. գ. թ. (խմբագրական խորհրդի նախագահի տեղակալ)
Տ. Ց. Օհանյան (պատասխանատու քարտուղար)
Է. Ա. Շարոյան (պատասխանատու քարտուղար)

Խմբագրական խորհրդի անդամներ
Վ. Վ. Բաղդասարյան, տնտ. գ. դ., **Հ. Ա. Ղազարյան**, ք. գ. դ., **Ֆ. Վ. Մովսիսյան**, պ. գ. դ., **Պ. Հ. Գևորգյան**, մ. գ. դ., **Ս. Մ. Փարսադանյան**, ֆ.-մ. գ. թ., **Հ. Պ. Հարությունյան**, բ. գ. թ., **Վ. Ա. Փիլոյան**, բ. գ. թ., **Լ. Ց. Վարդանյան**, բ. գ. թ., **Ռ. Ա. Ավագիմյան**, հ. գ. թ., **Վ. Վ. Հարությունյան**, տնտ. գ. թ., **Հ. Կ. Հակոբյան**, արվեստագիտության դոցենտ

Հ 316 ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ ՈՒՍԱՆՈՂԱԿԱՆ 11-ՐԴ ԳԻՏԱԺՈՂՈՎԻ ՆՅՈՒԹԵՐ
/ ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն, Վանաձորի պետական համալսարան, Խմբ. խորհուրդ՝ Ռ. Սահակյան և այլք. – Վանաձոր, 2022. – 754 էջ:

Ժողովածուն ամփոփում է ՎՊՀ 2022 թվականի ապրիլի 8-ին կայացած ուսանողական հանրապետական գիտաժողովի նյութերը: Հոդվածները խմբագրական խորհրդի կողմից գրախոսվել, խմբագրվել և երաշխավորվել են տպագրության:

ISBN 978-9939-1-1587-0

ՀՏԴ 378:001(082)
ԳՄԴ 74.48+72գ43
Հ 316

© Հեղինակային խումբ, 2022
© Վանաձորի Հ. Թումանյանի անվան պետական համալսարան, 2022

Печатается по решению ученого совета
Ванадзорского государственного университета им. О. Туманяна

Редакционный совет
Р. Р. Саакян, д. тех. н. (председатель редакционного совета)
В. В. Овсепян, к. б. н. (заместитель председателя редакционного совета)
Т. Ю. Оганян (ответственный секретарь)
Э. А. Шароян (ответственный секретарь)

Члены редакционного совета
В. В. Багдасарян, д. э. н., **Г. А. Казарян**, д. х. н., **Ф. В. Мовсисян**, д. и. н, **П. О. Геворкян**, д. пед. н., **С. М. Парсаданян**, к. физ.-мат. н., **А. П. Арутюнян**, к. ф. н., **В. А. Пилоян**, к. ф. н, **Л. Ю. Варданян**, к. ф. н., **Р. А. Авагимян**, к. псих. н., **В. В. Арутюнян**, к. э. н., **А. К. Акопян**, доцент искусствоведения

МАТЕРИАЛЫ 11-ОЙ РЕСПУБЛИКАНСКОЙ СТУДЕНЧЕСКОЙ КОНФЕРЕНЦИИ.
/ Министерство образования, науки, культуры и спорта РА, Ванадзорский государственный университет, Ред. совет – Р. Саакян и др. – Ванадзор. 2022. – 754 стр.

Сборник обобщает материалы республиканской студенческой конференции, состоявшейся 8 апреля 2022 года. Статьи были отредактированы и гарантированы печати редакционным комитетом.

© Авторская группа, 2022
© Ванадзорский государственный университет им. О. Туманяна, 2022

Printed by the Resolution of the Academic Council of
Vanadzor State University after H. Toumanyan

Editorial Board
R. R. Saakyan, Doctor of Technical Sciences (Chairman of Editorial Board)
V. V. Hovsepyan, Candidate of Biological Sciences (Deputy Chairman of the Editorial Board)
T. Y. Ohanyan (Secretary-in-charge)
E. A. Sharoyan (Secretary-in-charge)

Editorial Board Members
V. V. Baghdasaryan, Doctor of Economic Sciences, **H. A. Ghazaryan**, Doctor of Chemical Sciences, **F. V. Movsisyan**, Doctor of Historical Sciences, **P. H. Gevorgyan**, Doctor of Pedagogical Sciences, **S. M. Parsadanyan**, Candidate of Physical and Mathematical Sciences, **H. P. Harutyunyan**, Candidate of Philological Sciences, **V. A. Piloyan**, Candidate of Philological Sciences, **L. Y. Vardanyan,** Candidate of Philological Sciences, **R. A. Avagimyan**, Candidate of Psychological Sciences, **V. V. Harutyunyan**, Candidate of Economic Sciences, **H. K. Hakobyan**, Associate Professor of Art History.

MATERIALS OF THE 11TH REPUBLICAN STUDENT CONFERENCE.
/ RA Ministry of Education, Science, Culture and Sport, Vanadzor State University. Editorial Board: R. Sahakyan, etc. – Vanadzor. 2022. – 754 p.

The collection summarizes the materials represented during the national student conference at Vanadzor State University on April 8, 2022. The articles are reviewed by the editorial staff. They are edited and guaranteed to be printed.

© Author group, 2022
© Vanadzor State University
after H. Toumanyan, 2022

ՀԱՅ ԲԱՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆ

АРМЯНСКАЯ ФИЛОЛОГИЯ

ARMENIAN PHILOLOGY

Տեղը, ժամանակը և մարդը Ռուբեն Հովսեփյանի պատմվածքներում

Ասատրյան Մելինե
ՎՊՀ, Հայոց լեզու և գրականություն, մագիստրատուրա, 2-րդ կուրս
Գիտական ղեկավար՝ բ. գ. թ., դոցենտ ***Վ. Փիլոյան***

Հանգուցային բառեր. *գեղարվեստական տարածություն, ժամանակ, մարդ, հայրենիք*

Տարածությունն ու ժամանակը վճռական դեր են կատարում կերպարների աշխարհընկալման, մարդկային հարաբերությունների վերաբերյալ հայացքների ձևավորման, ինքնության հաստատման գործընթացներում: Իսկ յուրաքանչյուր առանձին պատմվածք իրականության ու հիշողությունների, իրականության ու հեքիաթի, առասպելի, մտքի յուրօրինակ խտացում է ժամանակի տարբեր չափումներում: Փորձենք անդրադառնալ Ռուբեն Հովսեփյանի պատմվածքներում տեղի, ժամանակի և մարդու առանձին հիմնախնդիրների:

Տեղը: Ռուբեն Հովսեփյանի կերպարները իրենց հողի, հիշատակների ու երազանքների շարունակությունն են, որ ժառանգաբար գտել են իրենց միակ ու ամենատաք երկիրը և չեն դավաճանում նրան: Գրողն իր ժողովածուներից մեկը անվանել է «Ամենատաք երկիրը» և այդ պատմվածքների միջոցով մարդկանց հարց ու պատասխանի միջոցով պատասխանում է «Ո՞րն է ամենատաք երկիրը» հարցին:

Յուրաքանչյուր հայ ստեղծագործող չի կարող գոնե իր ստեղծագործությունների մի մասը չնվիրել Հայաստանին, հայերին, և թերևս անհնար է գտնել մի այնպիսի հայ գրող, որը չի անդրադարձել Անիին: Հայաստանը հայերիս հայրենիքն է, ու մենք մեր պատմության միջից ուրախ կամ տխուր աչքերով նայում ենք մեր մի բուռ հայրենիքին: Իսկ ի՞նչ են Հայաստանը, Անին, Հայաստանի քաղաքներն ու գյուղերը Ռուբեն Հովսեփյանի համար. «Զարմանալի բան է հայրենիք հասկացողությունը: Ինչքան փոքրացնում ես հայրենիքիդ սահմանները, այնքան ուժեղանում է զգացմունքդ:

Հայաստան. սա հայրենիք է՝ մեծ, հզոր, հարազատ, բայց մարդիկ իրենց համար ունեն ավելի մատչելի, ավելի մոտ, հարազատ հայրենիքներ՝ Սյունիք, Լոռի, Շիրակ, Արարատյան դաշտ…

Սրանք էլ փոքրացնենք՝ Գորիս, Ղափան, Խնձորեսկ, Ալավերդի,

Սանահին, Լենինական, Արթիկ, Հայրենյաց, Արմավիր, Արտաշատ, Հոկտեմբերյան…

Սրանք էլ փոքրացնենք՝ մեր թաղը, ձեր թաղը, մեր տունը, ձեր տունը… Եվ ի՞նչ… Հանկարծ պարզվում է, որ բոլորովին էլ չես փոքրացրել՝ խտացրել ես։ Պարզվում է, որ ձեր աշխարհը, ձեր քաղաքը, ձեր թաղը, ձեր տունը Հայաստանի մասերը չեն։ Մեծ հայրենիքի և փոքր հայրենիքների զգացողությունները նույնն են» [1, 193]։

«Տո, գարնանը չէ՞ր, ասում էր՝ Խանում, Անիի կողմից ձայներ են լսվում։ Գիշերով, իբրև, հայեր են հավաքվում ավերակներում ու կանչում են թե՝ հեյ-հեյ, ես Սմբատն եմ, ալաշկերտցի Սմբատն եմ, տերտերանց Սմբատն եմ… Գինս՝ Մարիամը, տղերքս՝ Վարշամը, Աղասին, աղջիկներս՝ Խանումը, Անահիտը, ռուս-տաճկական կռվին փախան Ալեքպոլի կողմերը, ես մնացի գերի։ Հեյ-հեյ, չե՞ք ճանաչում կնոջս՝ Մարիամին, տղերքիս՝ Վարշամին, Աղասուն, աղջիկներիս՝ Խանումին, Անահիտին… Իբր, հորդ ձայնն է եղել։

Ավերակները ցերեկով են ավերակ, գիշերով կենդանանում է Անին։ Կրակներ են երևում, երգեր են լսվում ու ձայներ, ձայներ… Հեյ-հեյ» [1, 392]։

Երանի թե մեր կորցրածը միայն Անին լիներ, բայց չէ. ցավոք հայերս մի ամբողջ հայրենիք ենք կորցրել։ Ռուբեն Հովսեփյանի նման հայրենասեր մարդը չէր կարող չխոսել այդ մասին։ «Մեր պապերը» պատմվածքում կորցրած հայրենիքի մասին ցավով խոսում են Լևոն պապն ու Վարդան պապը. «– Լևոն, էսպես մի երկար լար լիներ։ Մի ծայրը կապեի Ալագյազից, մյուսը՝ Մասիսից։ Աչքերս փակ գնայի, գայի, գնայի, գայի»։

Գեղարվեստական տարածության առումով հերոսների աշխարհը վաղուց արդեն ծանոթ, վաղնջական թաղն է՝ իրար սեղմված, իրար մեջ մոլորված փողոցներով, մարդիկ՝ հարևան-խնամիական, ծոռից ծոռ անցնող ճակատագրական կապերով։ Այս տարածությունը սոսկ ֆիզիկական, աշխարհագրական տարածություն չէ, այլ մարդկային հոգու պատմության դրսևորման ասպարեզ։ Այս տարածությունը պատկերում է նախնիների կենսագրությունը, նրանց ճակատագիրը.

«Մեր թաղը մի պուճուր Հայաստան էր։ Մի տուն ղարսեցիներ կային, երկու տուն մշեցիներ, երկու տուն մեղրեցիներ, լոռեցիներ, խնուսցիներ… Եվ ամեն տուն իր բարբառն ուներ, որ չէր մոռացվում, չէր հղկվում»։ Ու այդ բոլոր բարբառները կրող մարդիկ ելք էին որոնում, որ օգնեին

Վարդան պապին: Բայց, ցավոք, պատմվածքը տխուր վերջաբան ունի. «Մեր թաղում հիմա պապեր չկան: Կան տատեր, որոնք օր-օրի փոքրանում են, կարճանում, և դժվար է ասել, թե դեռ ինչքան կարող են փոքրանալ: Տասնչորս կարճլիկ տատ դեռ ինչքան կարող են փոքրանալ: Տասնչորս կարճլիկ տատ և ոչ մի պապ: Երևի այս սարսափելի անհավասարությունը շտկելու համար է, որ բոլոր հարսները շարունակում են տղա բերել» [1, 169]:

«Ճայերը» պատմվածքում հեղինակը խոսում է ճայերի և իրենց հայրենիքի մասին: Թվում է, թե այս պատմվածքում ներկայացնում է միայն ճայերի առօրյան, կենցաղը, մտավախությունները, սակայն այս պատմվածքը ավելի շատ այլաբանական բնույթ ունի. չէ՞ որ մենք հասկանում ենք, որ ճայերի օրինակով նա մարդկանց է ներկայացնում, որոնք ցանկություն են ունենում թողնել իրենց հայրենիքը՝ չգիտակցելով, որ կորցնում են ամենաթանկը՝ հայրենիքը.

«– Նա ձեզ ասաց, որ մենք հզոր Երամ ենք,– խոսեց Ուսուցիչը,– արագ թռչել գիտենք և առանց զոհերի կարող ենք հասնել աշխարհի ցանկացած ծայրը: Դա այդպես է: Բայց նա չասաց, թե մենք կորուստ չենք ունենա: Մենք կգտնենք ջուր, ձուկ, ընդարձակ երկինք, բայց կկորցնենք… Հայրենիք: Եվ էլի կմեռնենք» [1, 521]:

«Գործուղում» ակնարկում հեղինակը պատմում է գործուղման ընթացքում իր այցելած վայրերի՝ Հին և Նոր Խնձորեսկների, Տաթևի վանքի և այլնի մասին: Հեղինակը նշում է Հին և Նոր Խնձորեսկ գյուղերի տարբերությունը, և հետաքրքիր է, որ այս հատվածների մեջ խոսում է կրակի մասին, որը հեղինակի կարծիքով կարևոր դետալ է հայերի համար: Չնայած նրան, որ մարդիկ հեռացել են Հին Խնձորեսկից ու ապրում են Նոր Խնձորեսկում, սակայն կարոտում են իրենց նախկին բնակավայրը, ու ցավ կա հենց Խնձորեսկում, քանի որ երբեմնի մարդաշատ գյուղը դատարկվել էր: Սակայն երբ հեղինակը այցելել էր Հին Խնձորեսկ, այնտեղ մարդկանց էր տեսել, որոնք վերադարձել են:

Այսպիսով՝ մատնանշելով տեղը Ռուբեն Հովսեփյանի պատմվածքներում, նկատեցինք նրա անսահման սերը դեպի իր հայրենիքը, դեպի իր հայրենիքի գյուղերն ու քաղաքները: Այդ անմնացորդ սիրո մեջ մեծ չափաբաժին ունի մարդը, որը պահում կամ կորցնում է ամենաթանկը՝ Հայաստանը:

Ժամանակը: Կարելի է ասել, որ ժամանակը Ռուբեն Հովսեփյանի

պատմվածքներում ունի իր ուրույն տեղը։

«Մարդ ի ծնե իր ժամանակի բոլոր իրադարձություններին մասնակից լինելու ձգտումն ունի։ Ժամանակն ինքը թելադրում է մարդկանց, թե դեպի ու՞ր ուղղել միտքը, ուժը։ Այդպես են հայտնաբերվել մարդկության բոլոր գյուտերը, այդպես են կառուցվել աշխարհի բոլոր հրաշալիքները, որոնք, երևի, արդեն յոթը չեն, ոչ էլ հարյուր յոթը» [1, 196]։

Մարդկանց ապրած տարիները հստակ սահմանազատված են առանձին ժամանակահատվածների՝ մանկություն, դեռահասություն, պատանեկություն, հասունություն, ծերություն։ Կյանքի այս փուլերից մի քանիսի մասին Ռուբեն Հովսեփյանը ներկայացրել է իր տեսանկյունները։ Մանկությունն ամենաքաղցր փուլն է բոլորիս կյանքում, և այս փուլում մեր հերոսներն են մեր ծնողները, պապիկ-տատիկները, քույրերը, եղբայրները, մանկության ընկերներն ու դասընկերները։

«Ես, բժիշկ, անձրև շատ եմ սիրում։ Դա էլ մանկությունից մնացած սեր է։ Ես այնպես եմ կարծում, որ մարդ իր մեջ ինչ լավ բաներ ունի, մանկությունից է հետը բերել» [1, 385]։

Մեր կյանքում անփոխարինելի են այս մարդիկ, բայց իրենց ուրույն տեղն ունեն մեր մայրերը, որոնց սերը անմնացորդ է ու անշահախնդիր։ Ռուբեն Հովսեփյանը իր պատմվածքներում քիչ է խոսել մայրիկի մասին, շատ հաճախ մանուկ հերոսների հեքիաթները իրենց հայրերն ու պապիկներն են իրականություն դարձրել, բայց մայրը չէր կորցնում իր տեղը։

Նրա ստեղծած մոր կերպարը շատ հաճախ ունի չոր, կտրուկ բնավորություն, սակայն թաքնված քնքշանքը, սերը միայն իր ընտանիքին է պատկանում, և հանուն իր ընտանիքի բարօրության՝ «Պատը» պատմվածքում հերոսի մայրը դառնում է երկու հարևանների գժտության պատճառը. «Պատը մինչև օրս էլ կա, թեպետ վարպետ Մկրտիչը գիտե, որ հայրս անմեղ է։ Հայրս նույնպես գիտե, որ վարպետ Մկրտիչն էլ մեղք չուներ։ Նրանք իրարից ծածուկ ներել են միմյանց։ Ես հաստատ գիտեմ, ներել են նույնիսկ մորս, որ պատճառ դարձավ գժտության։ Նա էլ մեղք չուներ։ Ախր, Արաքսն այդ տարի շատ էր իջել» [2, 176]։

Ծերությունն էլ չի անտեսվում Ռուբեն Հովսեփյանի պատմվածքներում։ Հեղինակը ներկայացնում է շատ հերոսների անցած կյանքը, և վերջում հենց հերոսներն իրենք են խոսում ծերության մասին։

«Լսածդ ոչ մի հնչյուն չի մարում, տեսածդ ոչ մի պատկեր չի ջնջվում, դրանք դարս-դարս կամ խառնիխուռն ամբարվում են ներսումդ ու քնում,

քանի դեռ չեն բթացել զգայարաններդ, քանի դեռ աստծո եկող օրը անկրկնելի է, քանի քեզ չի պատանավորել նորին մեծություն Ծերությունը։ Երբ խցանվում են ականջներդ, երբ խեղճանում են աչքերդ, երբ ներսդ լիքն է, երբ լեցունությունդ կտրատում է բոլոր կապերը՝ քեզ հասցնելով անսահման ազատության, ահա այդ ժամանակ են արթնանում լսածդ հնչյունները, տեսածդ պատկերները։ Եվ կամ՝ երբ շուրջդ լռություն է, երբ միօրինակությունից պաղում են աչքերդ, երբ անապատում ես…» [2, 465]։

Ժամանակի ընթացքում փոխվում է նաև մարդկանց մտածողությունը։ Կարող է այնպես պատահել, որ նախորդ սերնդի համար որևէ թագավորի, զինվորի, ռամիկի գործը դիտվի իբրև հերոսություն, իսկ հաջորդ սերունդի համար այն լինի ստրկություն։ Այս եզրահանգման ապացույցն է «Պատմության դասը» պատմվածքում արծարծված խնդիրներից մեկը. «Ստրուկի՞,– իր պատմությունից հուզված՝ նա բառեր չէր գտնում, որ պատասխանի նախկին աշակերտին։ Ինչու՞, ինչպե՞ս են աղավաղվում հասկացությունները, երևույթները. հերոսությունը ինչու՞ է երբեմն համարվում հիմարություն, ազնվությունը՝ միամտություն, անձնազոհությունը՝ ստրկամտություն։ – Ստրուկի՞» [2, 490]։

Կարևոր է, որ մարդն իր ապրած ժամանակի մեջ չկորցնի հիշողությունը, որովհետև շատ հաճախ հիշողությունն է օգնում, որ մենք անցնենք մեր կյանքի փուլերը։

Այսպիսով՝ ամենից կարևորն է, որ մարդ մնա իր ժամանակի մեջ՝ չմոռանալով անցյալի ու ապագայի մասին.

«Քրիստոսից հետո քանի՞ ագռավի կյանք է անցել։ Վեց։ Հիմա յոթերորդ ագռավն է ապրում։ Մենք բոլորս յոթերորդ ագռավի ժամանակակիցներն ենք։ Մեր հորական, մեր մորական պապերն էլ են յոթերորդ ագռավի ժամանակակիցները եղել։ Մեր ծոռներն էլ են յոթերորդ ագռավի ժամանակակիցները լինելու։ Բայց մեր հորական, մեր մորական պապերը, մեր ծոռները մեր ժամանակակիցները չեն։ Մեր ժամանակակիցները մեր հարևաններն են, մեր կնանիք են, մեր երեխաներն են, մեր ազգականներն են, Ավետիսն է, իսկ Ավետիսը այնքան հեռու է հիմա ու այնքան հեռավոր ազգական է, ու խաղողն իսկապես չամիչ է դառնում՝ չարազ, հի-հի-հի, պարապ մարդ եք՝ ծիծաղեք, միամիտ մարդ եք գտել՝ ծիծաղեք, խոսքի գերի եմ՝ ծիծաղեք, Ավետիսի զոհն եմ՝ ծիծաղեք, - իսկ Ավետիսն այնքան հեռու է հիմա ու այնքան հեռավոր ազգական է, որ

կարծես վեցերորդ, հինգերորդ ազռավների ժամանակակիցը լինի» [2, 391]։

Մարդը։ Գրողի ուշադրության կենտրոնում է հասարակ մարդու կերպարի որոնումը և նրա գեղարվեստորեն ճշմարտացի պատկերումը։

Մարդկային ցավ է, երբ մարդիկ դիմացինի ցավը չեն նկատում, և իրենց համար առաջնայինը իրենք են և իրենց փողը. «Մեռնողին ի՞նչ։ Ցավն էլ, պարծանքն էլ ապրողի համար է։ Պարծենալու բան են գտել՝ դամբարան, մարմար։ Թրիքի մեջ ապրում են, մարմարի տակ՝ պառկում։ Ի՞նչ անես, քույրիկ, հազարներ չծախսես, կասեն՝ աչքը դուրսն է, կասեն՝ ափսոսում է մի քանի կոպեկ ծախսի՝ քար դնի գերեզմանին։ Կոպեկը հազար է դառնում, հազարը՝ կոպեկ։ Նայած։ Ինձ որ մնա, ես իմ կոտրած ձեռքով քեզ կպսակեմ։ Ջահել-ջահել, ինչու՞ մնաս որբևայրի։ Քանի՞ անգամ ես ծնվելու։ Բա, մեղք չի՞ մարդը։ Տեր աստված, այսքան կկապոտե՞ն մարդուն։ Քառասունք, տարի, տարեդարձ, սուգ, լաց, ողբ, ուխտ, պայման… » [2, 397]։

Մարդկանց ամենաբնութագրական հատկանիշը տարբեր բնավորություններ ունենալն է։ «Ինչքան մարդ, էնքան բնավորություն,– մտածեց Գարեն։ – Մարդուն հասկանալ կլինի՞..։

Երբ ճանաչում ես մարդուն,– և ոչ թե նրա այս կամ այն հատկությունը,– այլևս անհնար է, անիմաստ է համեմատել նրան մեկ ուրիշի հետ» [2, 468]։

Մարդկային բնավորության տեսակ է սուտ խոսել կարողանալ-չկարողանալը։ Ազնիվ մարդիկ չեն կարողանում հաճախ նույնիսկ փոքրիկ սուտ հորինել՝ թեկուզ հանուն իրենց շահի. «Ես սուտ խոսել չեմ սիրում, բժիշկ, գլուխ չունեմ։ Սուտ խոսելը հեշտ բան չի։ Եթե մի պուճուր սուտ ես ասում, ընկնում ես կրակը։ Ամեն օր պիտի ուրիշ ստեր ասես, որ պահես առաջին պուճուր սուտը։ Ու ձյան մեջ գլորվող ձնագնդի նման մեծանում է սուտը» [2, 382]։

Շատ պատմվածքներում Ռուբեն Հովսեփյանը ներկայացնում է մարդկանց՝ տարբեր բնավորություններով, տարբեր հասկացողություններով.

«Հասկացողություն չունի, ասացի, չէ՞։ Այդպիսի մարդիկ շատ կան, բժիշկ. բահը տաս ձեռքը, ասես՝ փորիր հողը, կփորի։ Բահը տաս ձեռքը, ոչինչ չասես՝ կշվարի, կկանգնի» [2, 384]։

«Ըստ հասակի շարվիր» պատմվածքի վերջում հետաքրքիր է Անդրա-

նկի կարծիքը իր դասընկերոջ՝ Վարդանի և նրա նման մարդկանց մասին. «– Եթե նա Նապոլեոն դառնա, գիտեմ, կտրելու է գլուխս: Բայց նա Նապոլեոն չի դառնա: Նա միշտ կկանգնի շարքի վերջում: Ամենավերջում: – Եվ հետո, մեծավարի, կարծես նույնիսկ փոքր-ինչ իմաստնացած ավելացրեց,– միայն մի դեպքում, լսու՞մ ես, միայն մի դեպքում, նա կհայտնվի շարքի առջևում. երբ հրաման տրվի՝ ե՛տ դարձ…» [2, 359]:

Ռուբեն Հովսեփյանի պատմվածքներում զգացվում է նրա անսահման սերը հայրենիքի և մարդու նկատմամբ: Նա իսկապես շատ էր սիրում իր հայրենիքը ու ցավով էր խոսում հայրենիքը լքողների մասին.

«– Հենց դա է տունդ քանդողը,– ասաց դարբին Գրիգորը,– որ «երթալու տեղ ունիս»: Մարդ մնալու տեղ պիտի ունենա, ոչ թե երթալու: Քո սխալ խոսելը՝ սխալ մտածելուց է» [2, 432]:

Ինչքան էլ շատ մարդիկ փորձությունների են ենթարկվում, դաժան կյանք են ունենում, չեն կորցնում իրենց բարությունը և ամեն ինչ անում են, որ օգնեն նեղության մեջ ընկնողին: «Ամառ էր, կիրակի» պատմվածքը հենց դրա ապացույցն է. մարդը, որը որբ էր թողնում իր տղային, վերջին րոպեներին մտածում էր Սամսոնի մասին, որին ընդամենը մի քանի ժամ էր, ինչ ճանաչում էր:

«Ութերորդ վանդակը» պատմվածքում Թութիկը, որը կար էր անում և չնչին գումար էր վաստակում, ամեն ինչ անում էր, որ օգներ իր հարևաններին:

«Ճայերը» պատմվածքը այլաբանական բնույթ ունի. չնայած պատմվածքի հերոսները ճայեր են, սակայն նրանց մտքերը, առօրյան համեմատելի է մարդկանց մտքերին, առօրյային, և հետաքրքիր են Առաջնորդի և Ուսուցչի կերպարները, որոնք ամեն ինչ անում էին, որ իրենց ապագա առաջնորդը մանկուց պատրաստ լիներ այդ դժվար առաքելությանը: Հեղինակը այս պատմվածքով մարդկանց էր ուղղություն տալիս, թե ինչպես անգերազանցելի առաջնորդ դաստիարակեն:

«Կապույտ ժայռի տակ կայացած հավաքից հետո էր ծեր Ուսուցիչը գիտակցել, որ սրբություն դարձած իր սկզբունքը, որով տարիներ շարունակ ճայեր էր դաստիարակում, սխալ է: Ճտերի խմբից նա առանձնացնում էր առաջնորդացուին, նրան, միայն նրան տալով իմացությունների, հմտությունների իր ողջ պաշարը: Նա դառնում էր օրինակ: Մյուսները պետք է նմանվեին նրան: Նմանվել՝ նշանակում է հպատակվել: Հպատակվել՝ նշանակում է ապավինել: Դեռ մանկուց ճտերը վարժվում էին հպա-

տակության: Եթե առաջնորդացուն չէր էլ դառնում Առաջնորդ, ապա մնացածները գոնե սովորում էին ենթարկվել, նմանվել Առաջնորդին: Հզոր, միաձույլ Երամի գոյությունը սնամեջ խաբկանք էր, որովհետև թույլ անհատների միությունը երբեք չի դառնում հզորություն, և ոչ էլ առարկության չվարժված ուղեղների անգործությունն է միաձուլության նշան: Ազատ, անկաշկանդ զարգացող միտքը, զգացմունքը պիտի դառնա Առաջնորդ, իսկ նման Առաջնորդ կարող է ծնել ազատ, անկաշկանդ մտքով, զգացմունքով ապրող Երամը» [2, 526]:

Ռուբեն Հովսեփյանը անդրադարձել է նաև կանանց՝ մատնանշելով առանձին կանանց տարբերություններ: Ներկայացրել է նաև կնոջ հզորությունը:

«Օտար կինը ինչու՞ է ձգում մագնիսի նման,– ինքն իրեն հարցրեց Հայրապետը ու ինքն էլ փորձեց պատասխանել: – Որովհետև օտար է…» [2, 414]:

«Մարդու կյանքը կնոջ ձեռքում է: Երբ ուզենա՝ կսպանի… Ծեծող կանայք ավելի շատ են, քան ծեծվողները: Հավատացեք, ծեծողն ավելի է տառապում, քան ծեծվողը» [2, 508]:

Ուսումնասիրելով Ռուբեն Հովսեփյանի պատմվածքները՝ երևում է նրա սերը մարդկանց նկատմամբ, և նա շատ է ցանկանում էլ ավելի լավը դարձնել մարդկանց, այդ պատճառով էլ նշում է նրանց թերությունները, որ մարդիկ փորձեն փոխվել:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Հովսեփյան Ռ., Ամենատաք երկիրը, Երևան, «Սովետական գրող» հրատ., 1977:
2. Հովսեփյան Ռ., Երկար, հրաշալի օր, Երևան, «Սովետական գրող» հրատ., 1980:

Концепции места, времени и человека в рассказах Рубена Овсепяна

Асатрян Мелине
ВГУ, Армянский язык и литература,
Магистратура, 2-ой курс

Резюме

***Ключевые слова**: художественное пространство, время, человек, родина*

Анализируя концепцию места в рассказах Рубена Овсепяна, мы убедились в его безграничной любви к своей родине, к селам и городам своей родины. Большая часть этой безусловной любви направлена на людей, которые либо теряют, либо защищают самое дорогое – Армению.

В своих рассказах Рубен Овсепян излагает свои взгляды на некоторые этапы жизни. Самое главное, чтобы человек жил в настоящем, не забывая о прошломи будущем.

Рассказы Рубена Овсепяна раскрывают его любовь к людям. Он стремится сделать людей лучше, поэтому указывает на их недостатки, чтобы помочь им измениться.

The Concepts of Place, Time and Man in Ruben Hovsepyan's Short Stories

Asatryan Meline
VSU, Armenian language and literature,
MA the 2nd course

Summary

***Key words:** fictional space, time, man, motherland*

Analyzing the concept of place in Ruben Hovsepyan's short stories, we witnessed his boundless love for his motherland, for the villages and cities of his motherland. A great deal of this unconditional love is directed towards the people who either loses or protects what is most precious, Armenia.

In his short stories, RubenHovsepyan presents his views on some stages of life. It is most important that a person lives in his present time always keeping the past and the future in his mind.

Ruben Hovsepyan's short stories demonstrate his love for people. He strives to make people better, therefore he points out their shortcomings to help them change.

«Իմ ընտանիքը իմ ճամպրուկում է» և «Գոմեշը» մոնոներկայացումների կառուցվածքաբովանդակային առանձնահատկությունները

Մրզումանյան Վովա
ԵԹԿՊՀ, Սցենարադրամատուրգիական արվեստ, 1-ին կուրս
Գիտական ղեկավար՝ արվեստագիտության թեկնածու,
պրոֆեսոր ***Ն. Մարգսյան***

Հանգուցային բառեր. *արձակ, թատրոն, մոնոներկայացում, պատերազմ, երկրաշարժ, Գոմեշ*

Ներածություն

Թատրոնը համադրական արվեստ է, գրականությունը՝ նրա հիմնանյութը: Սակայն թատրոնի արտահայտչաձևերը տարբեր են, ասել է թե՝ ամեն ժամանակաշրջանում փոխվում են պահանջներն ու ներկայանալու ձևերը, երևան են գալիս նորարարական մի շարք առանձնահատկություններ, որոնք սնուցվում են այս կամ այն գաղափարներով: Թատրոնի համար ճաշակի հարցն առաջնային է՝ որպես ժառանգաբար փոխանցվող «շնչառություն»: Այն վերաիմաստավորվել է ժամանակակից մարդու՝ միջավայրին ու աշխարհին, սեփական անձն ինքնադիտարկելու առաքելությամբ: Լինելով այստեղ ու այս պահի արվեստ, թատրոնը նույնպես ունի բնավորություն ու բնություն, որը խաղն է:

«Մեկ դերասանի թատրոնի» ձևաչափում արձակ ստեղծագործությունը բեմականացնելու համար առանձնակի մասնագիտական սկզբունքներ են պահանջվում:

Իսկ մերօրյա թատերական իրականությունն ապացուցում է, որ քիչ դեպքեր են լինում, երբ մոնոներկայացումները տևական ժամանակ մնում են թատրոնի բեմում: Թերևս այս համատեքստում դիտարկենք ՀՀ վաստակավոր արտիստ, ռեժիսոր Նարինե Գրիգորյանի «Իմ ընտանիքը իմ ճամպրուկում է» և «Գոմեշը» մոնոներկայացումները:

Նարինե Գրիգորյանի դերասանական և ռեժիսորական ձեռագրին ծանոթ ենք նրա մի շարք ներկայացումներից, որոնք, կարծես, իրարից տարբեր լինելով, ծառի տերևներ են և հատ-հատ գալիս են ամբողջացնելու տարիքն առած, բայց միշտ երիտասարդ բեմը, որտեղից դերասա-

նուհին վերհուշի սկզբունքով պտտում է իրադարձությունները՝ ըստ ժամանակագրական հաջորդականության:

Նարինե Գրիգորյանի խաղի հմայքն հայ արդի թատրոնում բացառիկ է: Դերասանուհին առանձնանում է կերպավորման առանձնահատուկ վարպետությամբ և բեմական խոսքով, յուրօրինակ խաղաոճով, չկրկնվելու և թատերաշխարհում նոր նշանաձող սահմանելու համարձակությամբ, ռեժիսորական ինքնատիպությամբ: Արվեստագիտության թեկնածու, պրոֆեսոր Նարինե Սարգսյանը իրավացիորեն նկատում է. «Հազվադեպ է նույն անձի մեջ տաղանդավոր դերասանը գտնում տաղանդավոր ռեժիսորին, և դեռ հերիք չէ, նոր վավերագրություն ստեղծող վերբատիմ հնարքին դիմելով՝ պատմություն հյուսում»[1]:

Մեկ դերասանի թատրոնում ինքնավերահսկումը կարևոր նախապայման է: Հաճախ էլ գրական երկի խորը ըմբռնումն ու մեկնաբանությունն է պայմանավորում ինքնավերահսկման մեխանիզմը, որից էլ բխում է ներկայացման հաջողությունը: Հմուտ դերասանախաղի շնորհիվ անգամ գրական երկի կերպարը շատ դեպքերում ավելի հետաքրքիր և խաղարկային է դառնում մոնոներկայացումներում:

«Իմ ընտանիքը իմ ճամպրուկում է» մոնոներկայացումը



«Իմ ընտանիքը իմ ճամպրուկում է» մոնոներկայացումը գաղափար է՝ պատերազմի դժնդակ օրերից մինչև լուսավոր կետի՝ հեղհեղուկ խաղաղության ճանապարհը, որը Նարինե Գրիգորյանի լեզվով գեղարվեստորեն մարմնավորվում է՝ ձգվելով պատերազմի միջով և հասնելով մի հայտնի ու անհայտ տարածք՝ դերասանուհու, իմ, ձեր, բոլորիս հոգու խորքը:

Թվում է՝ տագնապելու առիթ չկա, որովհետև մենք սկզբից տեսնում ենք երջանիկ աղջնակին՝ այս պատմության հերոսուհուն՝ Նարինկային: Քանի որ պիեսի հիմքում ընկած նյութը կենսագրական է, հետևաբար գլխավոր գործող անձը և դերասանուհին նույնանում են, և Նարինեն ինքն իրեն անվանում է Նարինկա, ինչպես

առօրյայում դիմում էին հարազատները, ընկերները, համագյուղացիները: Այս էսսե-մենախոսությունը (հեղինակներ՝ Սառա Նալբանդյան, Նարինե Գրիգորյան)՝ որպես ներկայացման նախանյութ, շատ պարզ է շարադրված, որը դերասանուհու խաղով հստակ ուղերձներով նոր թևեր է առնում:

1992 թվական. պատերազմ: Նոր տարի: Բոլորս դերասանուհու հետ տեղափոխվում ենք Ղարաբաղ[2], գյուղ Նորագյուղ, որի ամեն անկյունն աղջնակն անգիր գիտի: Իր հարազատ գյուղում ազատ է, նա այստեղ տաբածություններ չի ճանաչում, սակայն պատերազմը՝ որպես պատնեշ, փակում է քայլերի ուղին, որն արդեն օրեր հետո ինքնաբացահայտման միջոցով լրացվում է և անարգելք անցնում հայրենի ճանապարհով: Սա անհատի պատմություն է, որը վերաճում և դառնում է մի ողջ ժողովրդի կենսագրություն:

Պատերազմի օրենքները ներկայացման մեջ պարզ ու հասկանալի լեզվով են արտահայտված, զերծ են պաթետիկ ձևակերպումներից: Գյուղի սահմանափակ հնարավորությունները, թշնամու ձեռնարկած հարձակումներն ու ռմբակոծումները հերոսուհուն չեն կարողանում լռեցնել, որովհետև, վերջիվերջո, նա իր հայրենի գյուղում է: Նա հավասար խոսում է՝ աչքերում՝ պատերազմը, մատները՝ դաշնամուրի ստեղներին, միշտ իր ճամպրուկի հետ, որ մայրն էր արագ-արագ դասավորել՝ Հայաստան ուղարկելու համար: «Իմ ամեն ինչն այս ճամպրուկում է». փոքրիկ աղջնակի ճանապարհի անբաժան ընկերն է ճամպրուկը: Ներկայացման ընթացքում այն դառնում է դաշնամուր, տուն, սեղան, և որքան տարօրինակ է՝ անգամ հեռուստացույց ու պատուհան:

Հերոսուհու հայրը զինվորական է, պապիկը՝ «չորս գյուղի նախագահ», որը փորձում է փրկել աղջնակին՝ ուղարկելով մայր Հայաստան: Նրա պատմության գունապնակը հարստանում է արցախյան կոլորիտով, որն ուղեկցվում է անսահման հետաքրքիր բարբառով: Այստեղ էլ դերասանուհին ներկայացնում է ոչ միայն իր կերպարը, այլ նաև պապիկի, տատիկի, մոր, քրոջ կերպարները, բայց հորը հիշելիս անընդհատ վերապրումի և ինքնամաքրման ճանապարհով է անցնում՝ դերասանախաղով բարձրացնելով իր՝ հայուհու իմաստնությունը:

Հոր՝ գերության մեջ հայտնվելն ու գյուղի մարդկանց հարցուփորձը հերոսուհուն՝ Նարինկային անընդհատ Նորագյուղում են պահում. մեկ առ մեկ վերապրում է օրերն առանց հոր և ապա՝ նրա հետ՝ վերադարձի

աննկարագրելի ջերմագին պահով: Այս տեսարանը նաև առանձնանում է տեխնիկական ինքնատիպ լուծումներով՝ պայմանականության օրենքներով՝ ճամպրուկը տեսարաններից մեկում բացված վիճակում օգտագործվում է որպես հեռուստացույց:

Ներկայացման գրեթե բոլոր տեսարաններում ցավ ու ցասում կա, բայց նաև ծիծաղը չի պակասում, քանզի երեխայի աշխարհը մաքուր է, և Նարինե Գրիգորյանը կարողանում է համոզել մարդուն՝ պատերազմի և խաղաղության արանքում տեղի ունեցող մարդկային բնավորության փոփոխությունները, ներշնչումն ու գիտակցական հետքը, զգացմունքների շերտավորումն ու ամբողջականությունը որտեղից ուր և ինչպես են գնում:

Պապիկ-թոռնիկ պատմությունը ներթափանցված է հերոսուհու հիշողության մեջ և ամեն պահ, արցախցուն հատուկ համառությամբ ու արժանապատվությամբ, վերհառնում է՝ միջանցք տալով գործողության շարունակականությանը, որը մերթընդմերթ ընդհատվում է Ստեփանակերտ հասնելու ճանապարհին ու արդեն Ստեփանակերտում: Նարինկան զարմացած է, որ ավերածություններ են քաղաքում, քարերը թափված են գետնին, իսկ ջարդված պատուհանները միմյանց են նայում՝ մեկը մյուսից տեղյակ, բայց գուցե անտեղյակ տիրող վիճակից… Սա ուրիշ զարմանք է, հեքիաթներում կամ գուցե ֆիլմերում հանդիպող «անիրական» եղելություններն իրական են այս պարագայում:

Խոսելով կերպարի զգացմունքայնության մասին՝ պետք է առանձնացնեմ Նարինե Գրիգորյանի կուռ ներաշխարհը, որը միայն ունի պատերազմի միջով անցած հայը: Իսկ այս դեպքում պատերազմը չի շրջանցում ոչ ոքի: Մանկական խաղաղ կյանքի խաղերը, երբ ապաստարան են տեղափոխվում, բառերով նկարագրելը դժվարանում է, որովհետև կյանքը շրջվում է, և սկսվում մի նորը՝ անսովոր սկզբունքներով, ապրելակերպով: Սա տխուր խաղալիքների ու կորսված մանկության պատկերն է հաղորդում: Դերասանուհին կարողանում է հավաստի դերասանախաղի միջոցով այն զգացողությունները փոխանցել, որոնք, իրոք, այդօրինակ դժնդակ օրերին մարդու ներսում նույնպես պատերազմում են: Սա բազմադեմ պատերազմ է, որի ժամանակ փոքրիկ Նարինկան որոշել էր՝ որ մեծանա, էլ պատերազմի չի մասնակցելու, որովհետև «դուրը չի գալիս»:

Վերապրումի փիլիսոփայությունը՝ որպես հոգեբանական շերտեր հաղորդող կարևորություն, լրացվում է հուզազգացական դետալների

միջոցով: Սրան զուգահեռ նաև կատակերգական նոտան է ակտիվանում: Ցավի մեջ ծիծաղը հաճախ լույս է տալիս, ինչպես ինքը՝ դերասանուհին, պատերազմի անմեղ ականատեսը: Ու լույսն իր կողքից ստվերներ է ծնում՝ որպես անավարտ պատմության առհավատչյա:

Երազանքներն ինչքան անսովոր էին, նույնքան ներդաշնակ էին իրավիճակի հետ: Հինգ տղա ունենալու երազանքով աղջնակը նախընտրում էր հայտնի մարդկանց անուններով անվանակոչել նրանց: Եվ այսպես նա շարունակում է անցյալի նորացումը՝ չբավարարվելով պատերազմի տարիներին ապրած մեկ կամ երկու օրվա հուշով, այլ՝ դրանք ամբողջացնելով և վարպետությամբ ներկայացնելով, դրվագ առ դրվագ գունավորելով իր «թերությամբ»՝ ձախ ձեռքով գույները տալով թղթին:

Պատերազմը շարունակվում էր: Քոլատակ գյուղից նրան պետք է ուղղաթիռով ուղարկեին Հայաստան: Այնքան ձգձգվում է այդ ընթացքը, որի ժամանակ հերոսուհին փորձում է բացել չակերտներն ու ներկայացնել շատերին անհայտ ու գուցե տարօրինակ թվացող իրականությունը: Նրա հուշերում Հրազդան քաղաքն է հայտնվում, որտեղ ծնվել և ռուսական դպրոց է հաճախել: Դպրոցական օրերը կինոժապավենի պես թերթում է և ընթացքում մեջբերումներ անում՝ կերպարների ներկայությունը նրանց հատուկ խոսելաոճով և շարժուձևով, կարծես, բնականորեն ապահովում է տեսարաններում:

Նարինե Գրիգորյանը ռեժիսորական ինքնատիպ լուծում է տվել իր հիշողությանը՝ համապատասխան մթնոլորտ հաղորդելու ընթացքին՝ պատերազմի մասին խոսելիս ոչ միայն այն ժխտելով, այլև երջանիկ պահերը երևան բերելով: Այսպիսի մոտեցումը նույնպես մոնոներկայացումը հետաքրքրության վրա պահող լուծումներից է: Երբ աշխարհագրության դասաժամին Խաղաղ օվկիանոսը նրա արտաբերմամբ դարձավ «Խաղաղության օվկիանոս», համադասարանցիները ծիծաղեցին, բայց նրանք չէին հասկանում, որ այդ պահին իրենց դասընկերուհու ամենամեծ երազանքներից մեկը երկրի խաղաղությունն էր:

Ծանր օրերի հուշերում ցույցերից մտահոգ վերադարձող ծնողներն են ու այն մարդկանց լուսանկարները, որոնք յաթաղանի բաժին էին դարձել: Իրար շարունակող ցավոտ իրականությունը աստիճանաբար աճում է:

Արդեն մեկ այլ՝ փախստականի կարգավիճակը հերոսուհին նկարագրում է ընթացիկ պատմություններով՝ միշտ փնտրելով լույսն ու ժպիտը,

որոնք դրական են ու իր մեջ տպավորված: Բայց, չնայած այս ամենին, կյանքն անցանկալի անակնկալներ ուներ՝ «ապրելուն» տեղյակ չպահելով:

Երկրաշարժ: Պատերազմից հետո աղջնակը մի ուրիշ պատերազմի մեջ է: Ութերորդ հարկում ապրող հերոսուհին առաջին անգամ էր զգում, որ ամեն ինչ շարժվում է առանց մարդու միջամտության: Ցրտաշունչ տարիներն էլ են ջերմանում նրա նկարագրություններով, որովհետև այդքան հյութեղ լեզվամտածողությամբ դժվար թե անհատը չկարողանա տեղափոխվել այնտեղ, որտեղ նա եղել է ու կա: Հիշողությունն այնպիսի բան է, որ հետ ու առաջ չի նայում, այլ անընդհատ ազդանշանի նման մարդու մտապատկերում է հայտնվում:

Աղջնակը «հայրենիքի շնորհիվ ճանաչեց ինքն իրեն», բացահայտեց աշխարհն ու սիրեց այն, հետո նոր միայն հասկացավ, թե ինքն ով է և ուր է գնում: Սա կարևոր ընդգծում է «Իմ ընտանիքը իմ ճամպրուկում է» մոնոներկայացման մեջ, որովհետև հայրենիքի ու հայրենասիրության գաղափարը այս մոնոդրամայում չի շաղախվում հուզական ձևակերպումներով ու տասնյակ անգամներ կրկնված խոսքերով:

Երկնքից երեք խնձոր է ընկնում՝ ընտանիքին, հանդիսատեսին, և երրորդը… «թող հնչի սխալ, բայց թող ամենամեծ օվկիանոսը լինի Խաղաղության օվկիանոսը»: Սա մի ամբողջ փիլիսոփայություն է՝ բազմատարր ասելիքով:

Նարինե Գրիգորյանի մոնոներկայացման ընթացքում երևույթներն անսպասելի նոր իրականություն են առաջ բերում: Ամբողջ ընթացքը նաև սեփական մտքերի հետ հարցուպատասխանն է հագեցնում, որը, անխոս, ներկայացման մեջ հստակ ուրվագծված է: Դերասանուհին կարողանում է պատերազմի ներսուդուրսը բացահայտել ոչ միայն իր հուշերի հետ, այլ նաև ինքն իրենով: Սա բովանդակակառուցվածքային այնպիսի ձևապատում է, որի շնորհիվ հերոսուհու ապրած դժնդակ անցյալով է ուրվագծվում այդ ամենը:

«Գոմեշը» մոնոներկայացումը

Արձակի բեմականացման մյուս օրինակը մեծանուն գրող Հրանտ Մաթևոսյանի «Գոմեշը» պատմվածքի հիման վրա բեմադրված մոնոներկայացումն է, որը գալիս է կրկին ապացուցելու արձակի հնարավորությունները բեմում:

«…Ամպի վրայով, նախիրների վրայով, բազեի, սարերի, ուրթերի ու

անտառների» վրայով անսպասելի բեմում է հայտնվում նաև Նարինե Գրիգորյանը: Նա ազատությունն ընտրել է որպես գոմեշի ներքին կարևոր բաղադրիչ, որը և համոզիչ է դարձնում դերասանուհու խաղը: Սա նաև խոսում է դերասանուհու և Մաթևոսյանի տողերի ներքին կապի մասին, քանի որ հստակորեն այն արտահայտվում է դերասանուհու ընտրած ռիթմով, ձայնով, տողը գունավորելու ներքին համոզմամբ:

Գոմեշը բնությունն է, տիեզերքում բնության, աշխարհի, երկրի և երկնքի միաձուլումն է: Ու թեման այս ներդաշնակության մեջ երկունքն է: Նարինե Գրիգորյանն այն բեմադրել է այնպես, որ կարողանա պարզ և հասանելի ներկայացնել երկունքը, ստեղծաբանությունը և թե ինչպես է ձգտում արարման հասնել գոմեշը: Այստեղ շատ կարևոր է շեշտել, որ երկունքի փիլիսոփայությունը լավագույնս է ներկայացված, որը ևս մեկ անգամ իր համատեքստում հաստատում է, որ մարդու, կենդանու, բնության հիմնական գործառույթը ստեղծելն է և ամեն գնով երկունքի հասնելը: Քանի որ գոմեշի բնավորության գիծ է անբռնազբոսությունը, դերասանուհին նույն կերպ արտահայտում է սեփական մարմնի միջոցով՝ պլաստիկ լուծումներով: Ներկայացման որոշ տեսարաններում դերասանուհու մազերը կոտոշներ են դառնում, իսկ պարանը՝ պոչ: Դերասանուհին նաև գոմեշի զգացական շերտերն է զարգացրել՝ դրանք դարձնելով ոչ թե անհատական ապրում, հույզ, այլ դուրս բերելով մեզ հայտնի ու անհայտ մաթևոսյանական գրչի տարածքներից:

Կարևոր ենք համարում ընդգծել, որ ներկայացման ընթացքում Նարինե Գրիգորյանը մարդկանց ներքին զգացական աշխարհը ձայների, սիրո, լռության ու ատելության, արարումի և համակերպման մաթևոսյանական տարածք հասցնելու համար կիրք է արթնացնում ինքն իր մեջ: Այս կիրքը Գոմեշինն է, որը, Նանի հոգատարությամբ և խնամքով պահված ու փայփայված, ընդառաջ է գնում արյան եռքին: Այստեղ կիրքը և մարմինը ներդաշնակորեն միահյուսվում են, հաճախ ներքին կռիվ տալիս, բայց ինչքան էլ դժվար լինի՝ մարմնի կողմից կա՛ դիմադրություն, որովհետև ջուրը հաճախ այդ մղվող պայքարին «ո՛չ» է ասում: Այստեղ բոլոր ձայնեղ և խուլ զգացմունքներն արթնանում են՝ մենակության մեջ պայծառացումներ գտնելով:

Գոմեշը մռնգում է: Ականջներում չտեղավորվող աղմուկը նրան ուրիշ աշխարհ է տեղափոխում: Սակայն բնությունը տիեզերական ու շռայլ է, և քաղաքի գայթակղություններին Գոմեշը մոտ չի գնում:

«Ջա՛ն,– ասաց նանը,– եկա՞ր…»: Եվ ինչպե՞ս չգար, եթե Գոմեշի երանելի աշխարհն այնտեղ է, որտեղ նա ապրել է, որտեղ հողը ոտքերին է քսվել, ջրի հետ խառնվել, ցեխ է դարձել, բայց էլի ու էլի ապրել է, որովհետև ամեն ինչի սկիզբն ու ավարտը նույն տեղում ավելի ճիշտ է: Քայլերը դանդաղ, բայց պատմությունն արագ է ընթանում՝ Գոմեշի հետ անընդհատ ազատատենչությամբ շրջելով հորիզոններով ու փաստելով, որ ապրելն անիմաստ չէ: «Գոմեշը» գոյի կարևոր նախապայմանն է մատնանշում՝ նոր փակագծեր բացելով մեր ներսում:

Բացի ռեժիսորական դիպուկ լուծումներից, կարևորում ենք դերասանուհու լեզվի պարզությունն ու խոսքի հստակությունը, որովհետև «Խոսքը, որ գեղարվեստական արտահայտության ձևերից մեկն է, դրամատիկական արվեստում ի հայտ է գալիս և՛ որպես նյութ, և՛ նյութն արտահայտելու միջոց, և՛ որպես ավարտված իրականություն» [3]:

Մաթևոսյանական տողերի հմայքը դերասանուհին ոչ միայն չի կորցնում մոնոներկայացման ընթացքում, այլև դրանք հասցնում է վճռականության մի նոր սահմանագծի, որտեղ գոմեշը բնական տարերքի մեջ հասնում է տիեզերական ազատությանն ու ստեղծարարությանը: Սրան զուգահեռ նշենք, որ արձակը ճիշտ ընկալելու և մատուցելու հմտությունը նույնպես կարևոր է և՛ բեմադրիչի, և՛ դերասանի համար, քանզի դերասանի և հանդիսատեսի միջև ստեղծվող կապը առաջնահերթ է, և ներկայացման հաջողությունը նաև դրանից է բխում:

Ընդհանրապես Հրանտ Մաթևոսյանի արձակը խորհրդավոր է, միաժամանակ՝ հյութեղ ու ծանրակշիռ, ինչը մի շարք հարցեր ու խնդիրներ է առաջացնում, մասնավորապես՝ բեմադրության հետ կապված: Սակայն հարկ է նշել, որ Նարինե Գրիգորյանը կարողացել է «Գոմեշը» գրական գործը բեմում պահել այն բարձրակետի վրա, որը թղթին կա: Սա խոսում է գրական գործի ներքին դրամատուրգիան բեմադրողի կողմից բացահայտելու և ճիշտ ներկայացնելու մասին, չէ՞ որ Մաթևոսյանը Աստծո կողմից սահմանված բնական կերպարի աշխարհն է ներկայացնում՝ առանց պայմանականությունների, ուղիղ և անկաշկանդ: Եվ գրողի տողերում նաև վեր են հառնում աստվածային էությանը միաձուլվելու տարերքը, տիեզերական ամբողջականության մեջ ապրելը: Շնորհիվ բեմանկարիչ Վիկտորյա Ռիեդո Հովհաննիսյանի՝ բեմում մինիմալիստական լուծում է ստացել Մաթևոսյանի տողերում պատկերված բնաշխարհը, որն ավելի ինքնատիպ է դարձնում ներկայացումը:

Դրամատուրգիական տեսանկյունից դիտարկվող գրական նյութի խտությունն անհետանում է գոմեշի երազը նկարագրող մենախոսության տեսարանում, երբ դերասանախաղը ներկայացնում է խորքային հոգեբանությամբ: Այսպիսով, դերասանուհին վերապրում է այն հոգեբանական ընթացքը, որը նաև օղակ է դառնում հանդիսականի սրտում տեղ գտնելու համար: Թատերագետ, արվեստագիտության թեկնածու Անուշ Ասլիբեկյանը իրավացիորեն է նկատել, որ «դեպի հանգուցալուծում կոմպոզիցիոն գրագետ օրինաչափություններով բեմադրության տեմպոռիթմը րոպե առ րոպե ահագնանում է, ինչում քիչ դեր չունի ներկայացմանը համահունչ ու տրամադրությունը հընթացս ընդգծող երաժշտական ձևավորումը (ձայնային և երաժշտական ձևավորումը՝ Հայկ Իսրայելյանի), իսկ ավարտը յուրաքանչյուր արտիստի անհատական մոտեցումն է պահանջում: Նարինեի դեպքում տիեզերական օղակի ամբողջացումն է՝ պարի, պտույտի, ու արդեն հոգեֆիզիկական արտահայտչականության երկաթե, պիրկ ջղից ու ամրությունից դեպի եթերային լուծումներ՝ երանավետության զգացողությամբ»[4]:

Կառուցվածքաբովանդակային այս առանձնահատկությունների շնորհիվ մոնոներկայացումը պոլիֆոնիկ է դառնում:

Եզրակացություն

Ճաշակն ու տաղանդը երբ միավորվում և արտահայտչականությամբ ընդգծված կերպար են ստեղծում, այդժամ նաև ներքին գործողությունն է սկզբունքայնորեն միահյուսվում՝ բացելով նոր թեմատիկ գեղարվեստագաղափարական առանցքներ՝ մարդկային սիրո, լավատեսության, երևույթների պայմանականության կամ հստակ ուղերձներով: Իհարկե, սա Նարինե Գրիգորյանի «աշխարհ բերած» արվեստն է, որին որպես գիտության կարելի է մոտենալ: Դերասանուհու մոնոներկայացումները շատ անգամ խտացնում և ներկայացնում են սեփական «ես»-ի և գրական ստեղծագործության հերոսի միահյուսված աշխարհայացք, որով նույնպես պայամանավորված են այս մոնոներկայացումների արժեքը:

Նարինե Գրիգորյանի մոնոներկայացումներում էմոցիոնալ հատվածները պարզապես երկար չեն ձգձգվում և հիմնավորված են, պահվում է տեսարանների տեմպառիթմը: Դերասանուհին իր անկեղծ, խոսքային և պլաստիկական գրագետ խաղով կարողանում է մեկնաբանել մարդու հոգեվիճակից բխող արարքներն ու հասցնել հանդիսատեսին: Այս մոնոներկայացումները փաստում են, որ նրա ռեժիսորական մոտեցումը ցան-

կացած ստեղծագործության նախ և առաջ գաղափարաձևի յուրօրինակ ընդգծումով է առաջ ընթանում, իսկ արդեն հանգուցալուծման պահին՝ կտրուկ իմաստային լուծումներով: Այս երկու մոնոներկայացումներն ունեն գերխնդիր՝ ցույց տալ ապրելու կերպը, կյանքի եռանկյունին ու ներքին մտածմունքները:

Այս դիտարկումները մղում են եզրակացության, որ Նարինե Գրիգորյանի մոնոներկայացումների կառուցվածքային դիպուկ տարրերն ու բովանդակային ինքնատիպությունը մղում են իրականության ներքին և արտաքին խորը վերլուծությունների: Այստեղ նաև դերասանուհու բծախնդրությունն է երևում ցանկացած մանրուքի նկատմամբ, որոնք կարևոր վիճակներ ստեղծելով բեմում, ոճի ու ձևի բեմադրչական մեկնությամբ ամբողջովին առանձնանում են:

Դերասանուհի և բեմադրիչ Նարինե Գրիգորյանի «Իմ ընտանիքը իմ ճամպրուկում է» և «Գոմեշը» մոնոներկայացումներ տևական ժամանակ որպես մնայում արժեք կարող են ներկայանալ հայ թատրոնի բեմում:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Ն. Սարգսյան, «Խաղաղության ճամպրուկը», tatron-drama.am, (16.11.2019 թ.):
2. Ներկայացման ընթացքում հնչում է հենց այսպես, գուցե առօրյա խոսակցականով է օգտագործվում, որովհետև շատերն են առօրյայում օգտագործում, կամ, հնարավոր է, ինչ-որ կոնտեքստ կա: Կա նաև մեկ այլ տարբերակ՝ ժամանակագրությունը ներկայացնելու դետալ է, որովհետև իրադարձությունները կատարվում են 90-ականներին, երբ ընդունված էր ասել Ղարաբաղ:
3. Հ. Հովհաննիսյան, «Բեմական խոսքի պոետիկան», Հայկական ՍՍՀ հրատարակչություն, Երևան, 1973:
4. Ա. Ասլիբեկյան, «Առավոտ» օրաթերթ, 29.08.2020 թ.:

Структурно-идейные особенности моноспектаклей «Моя семья в моем чемодане» и «Буйволица»

Арзуманян Вова
ЕГИТиК, Сценарно-драматургического искусства, 1-й курс

Резюме

Ключевые слова: *проза, театр, моноспектакль, война, землетрясение, Буйволица*

Проза имеет свои законы сценического воплощения. В этом контексте рассматриваются постановки Н. Григорян в статье «Структурно-идейные особенности моноспектаклей “Моя семья в моем чемодане” и “Буйволица”». В процессе анализа постановок исследуется творчество заслуженной артистки РА Н.Григорян и как режиссера – со своим своеобразным художественным мышлением, и как актрисы – с ярко выраженным обаянием и артистизмом.

Structural and Ideological Features of the Solo Performances “My Family in my Suitcase” and “Buffalo”

Arzumanyan Vova
YSITC, Art of Scriptwriting and Dramatic Stage Composition, 1st course

Summary

Key words: *prose, theatre, mono-performance, war, earthquake, Buffalo*

Prose has its own principles of stage representation. In this context, the productions by Narine Grigoryan are considered in the article “Structural and ideological features of the solo performances ‘My family in my suitcase’ and ‘Buffalo’ ”. In the process of analysing the productions, the work of Narine Grigoryan is studied as a director – with a peculiar artistic thinking, and as an actress – with a pronounced charm and artistry.

Յիսուս անուն-ենթակային վերագրված ստորոգյալների կապակցելիական առանձնահատկությունները «Աւետարան ըստ Մատթէոսի» երկում

Բադդասարյան Արփինե
ՎՊՀ, Հայոց լեզու և գրականություն, 2-րդ կուրս
*Գիտական ղեկավար՝ բ. գ. թ., դոցենտ **Լ. Պետրոսյան***

Հանգուցային բառեր. *նախադասություն, ներկա, անցյալ և ապառնի ժամանակներ, նախադասության անդամ, առդրություն, կառավարում*

Աստվածաշնչյան խոսքի յուրաքանչյուր ուսումնասիրություն «Աւետարան ըստ Մատթէոսի» երկի վերջին նախադասություն-պատգամի իրակացումն է. «Ուսուցէք նոցա պահել զամենայն, որ ինչ պատուիրեցի ձեզ, և ահաւասիկ ես ընդ ձեզ եմ զամենայն աւուրս, մինչև ի կատարած աշխարհի» [Մտթ. ԻԸ 20]:

Յուրաքանչյուր ստեղծագործություն ինքնին հաղորդում է, որն իրականացվում է նախադասությունների միջոցով: Նախադասություններում որպես կենտրոն են գործածվում ենթակաները, որոնց բովանդակությունը բացահայտելու համար Գ. Ջահուկյանը նշում է. «Ենթական իրական առարկայի կամ առարկայացված հասկացության բառային դրսևորումն է, որի հատկանշման համար հիմք են դառնում նախադասության մյուս անդամները» [9, 388]: Լեզվաբանության մեջ ենթական բնութագրվում է երեք կարգերով՝ իրական, հոգեբանական-տրամաբանական և լեզվաքերականական: «Աւետարան ըստ Մատթէոսի» երկի բառային բաղադրիչներից յուրաքանչյուրի քննությունը բացահայտում է մարդկային էության բաղադրիչների՝ հոգու և մարմնի հնարավոր և ընդունելի համադրելիության սահմանները, որոնք եզրագծվում են բառերի՝ ուղիղ իմաստներով կապակցելիության դեպքում [8, 329]:

Սույն ուսումնասիրության մեջ մենք ուսումնասիրել ենք «Աւետարան ըստ Մատթէոսի» երկի ***Յիսուս*** անվամբ ենթակաների կապակցելիական հնարավորությունները: Ուսումնասիրության արդյունքում զուգահեռաբար քննվել են ներկա, անցյալ և ապառնի ժամանակաձևերով արտահայտված ստորոգումները, որոնք հարաբերվում են ներկա ժամանակաձևին՝ ձևավորելով գործողությունների շղթաներ, որոնք միմյանց կապակցված են տրամաբանական հաջորդականությամբ [11]: ***Յիսուս*** անուն-ենթական կապակցելիական հետաքրքիր առանձնահատկություն-

ներով է հանդես գալիս. իբրև անձնանիշ գոյական՝ նրան առաջին անգամ վերագրվում է *ծնաւ* չեզոք սեռի իմաստով[1] անցյալ ժամանակաձևով արտահայտված գործողություն-հատկանիշը «զանեզական ծագումն ի հօրէ» իմաստով [5, 1020], սակայն իբրև աստվածային զորությունն իր մեջ ամփոփող էություն՝ նրան երկի վերջում վերագրվում են *խոսեցաւ* և *ասէ* [Մտթ, ԻԸ 18] գործողություն-հատկանիշները:

Լեզվում ժամանակի քերականական կարգն արտահայտում է «գործողության կամ եղելության կատարման ժամանակը» [1, 340]: ***Յիսուս*** անվանն ամենից հաճախ վերագրվել է *ասել* բայով ձևավորված գործողությունը [7, 182], որը հիմնականում գործածվել է ներկա ժամանակով: *Ասել* բայը ***Յիսուս*** անվանն է վերագրվում ինչպես երրորդ դիմային արտահայտությամբ, այնպես էլ առաջին. այս դեպքում այն զուգահեռաբար կապակցվում է *ամէն* բառին՝ «ստոյգ, ստուգութեամբ, հաստատութեամբ, արդարև» իմաստով [5, 69], ինչպես՝ «*Ամէն ասեմ* ձեզ, Մինչև անցցեն երկինք և երկիր, յովտ մի նշանախեց մի է՝ ոչ անցցէ յօրինացն և ի մարգարէից մինչև ամենայն եղիցի» [Մտթ. Ե, 17]: *Ասել* բայով վերագրված գործողությունները հիմնականում կապակցվում են հաղորդման իմաստով հանգման անուղղակի խնդիրների, որոնք գրաբարում երրորդ դեմքով գործածվելու դեպքում արտահայտվում էին «ց + հայցական հոլով» կաղապարով, իսկ երկրորդ դեմքով կիրառություններում՝ տրական հոլովով [3, 94]: *Ասել* բային երբեմն էլ առդրության եղանակով կապակցվում են մակբայ լրացումներ, որոնք արտահայտում են ժամանակի և չափի իմաստներ, ինչպես՝ «*Ասէ* ցնա *դարձեալ* **Յիսուս**, Գրեալ է թէ Ոչ փորձեսցէ զՏէր Աստուած քո: *Յայնժամ ասէ* ցնա **Յիսուս**, Երթ յետս իմ, Սատանայ, զի գրեալ է, Տեառն Աստուծոյ քում երկիր պագցես և զնա միայն պաշտեսցես» [Մտթ., Ե, 10]: Ինչպես երևում է բերված օրինակից ***Յիսուս*** անուն-ենթակայի խոսքում երկրորդ դիմային արտահայտություն ունեցող կառույցների ստորոգյալների մի մասը վերագրվում է նաև իրեն:

Ներկա ժամանակը գրաբարում արտահայտվում էր համադրական ժամանակաձևով, որ կազմվում է բայի առաջին հիմքից և դիմաթվային վերջավորություններից [2, 219]: ***Յիսուս*** անուն-ենթակային ներկա ժամանակով վերագրվել են նաև *գայ, անցանէ* շարժման իմաստ արտահայտող գործողություն-հատկանիշները [4, 101], ինչպես՝ «Յայնժամ *գայ* **Յիսուս** ի Գալիլէէ ի Յորդանան առ Յովհաննէս մկրտել ի նմանէ» [Մտթ, Գ 13]: Այս

[1] Մինչ ***Յիսուս*** ենթական ***ծնաւ*** բայաձևը ներգործական սեռի իմաստով կապակցվում է արական սեռի նշանակությամբ հատուկ գոյական-ենթակաների:

բայերն իրենց իմաստային տարբերությունները դրսևորում են կապակցելիական տարբեր հնարավորություններում: *Գալ* բայի գործողության կատարման համար անհրաժեշտ է լինում երկու տեղի պարագա՝ ուղևորման և ելման իմաստներով [10, 190], որոնցից առաջինն արտահայտվում է հայցական, և մյուսը՝ բացառական հոլովներով. հետաքրքիր է, որ երկու լրացումներն էլ արտահայտվում են *ի(յ)* նախդիրով: *Գալ* բային հատուկ է նաև նպատակի պարագա լրացմանը կապակցվելը, որը, ի տարբերություն տեղի պարագաների, պարտադիր արտահայտություն չունի: Ինչպես երևում է բերված օրինակում, «Աւետարան»-ում նպատակի պարագան արտահայտվել է անորոշ դերբայի ուղիղ ձևով: Կապակցելիական տեսակետից *գալ* բայի համար ավելի առաջնային է վերջնակետի տեղի պարագան, որը հիմնականում չի զեղչվում, ինչպես՝ «Յայնժամ *գայ* ***Յիսուս*** ընդ նոսա *ի գեղ* մի որում անուն էր Գեթսեմանի, և *ասէ* ցնոսա, նստարուք այդր, մինչեւ երթայց կացից յաղօթս» [Մտթ, ԻԶ 36]: Այստեղ պարզ է դառնում *գալ* բայի լրացումառության ևս մեկ՝ միասնության խնդիր առնելու հնարավորությունը: Ի տարբերություն *գալ* բայի՝ *անցանել* բայը գործածվել է առանց լրացումառության՝ ձևավորելով համառոտ նախադասություն, ինչպես՝ «Իբրեւ լուան, թէ ***Յիսուս*** *անցանէ*, աղաղակեցին» [Մտթ., ԻԱ 30]:

Յիսուս անվանը վերագրվող գործողությունները, որպես կանոն, դրական խոնարհման են: Սակայն *ասել* բայով ձևավորված ստորոգյալը մեկ անգամ կիրառվել է ժխտական խոնարհմամբ, որ գրաբարում արտահայտվում էր *ոչ* վերաբերականի միջոցով, ինչպես՝ «*Ոչ ասեմ* քեզ թէ մինչեւ յեւթն անգամ, այլ մինչեւ յեւթանասնեկին եւթն» [Մտթ., ԺԸ 22]:

Յիսուս անուն-ենթակային ներկա ժամանակով կապակցվել են նաև բաղադրյալ ստորոգյալներ, որոնց ստորոգելին արտահայտում է դերանուններով, ինչպես՝ *Սա է մարգարէն* **Յիսուս** որ ի Նազարեթէ Գալիլեացւոց [Մտթ., ԻԱ 11]: *Այս է* **Յիսուս**, թագաւորն Հրէից [Մտթ., ԻԷ 37]:

Ներկա ժամանակով արտահայտված գործողությունները ***Յիսուս*** անուն-ենթակային ավելի հաճախ վերագրվում են զուգահեռ գործողություններով, որոնք արտահայտվում են ինչպես անդեմ, այնպես էլ դիմավոր ձևերով, ինչպես՝ «….և տեսեալ *Յիսուսի* զհաւատս նոցա՝ *ասէ* ցանդամալոյծն, Թողեալ լիցին քեզ մեղք քո» [Մտթ., Թ 2]: «Եւ ծանուցեալ Յիսուսի զխորհուրդս նոցա՝ *ասէ* ցնոսա, Ընդէ՞ր խորհիք դուք չարիս ի սիրտս ձեր» [Մտթ., Թ 4]: Անդեմ բայերին զուգահեռված կառույցներում ենթական արտահայտվում է սեռական հոլովաձևով, որին միաժամանակ վերագրվում է երկու գործողություն:

Ներկա ժամանակին ավելի հաճախ կապակցվում է անցյալ կատարյալ ժամանակաձևը: Ինչպես արդեն նշել ենք, ***Յիսուս*** անուն-ենթակային ներկա ժամանակով ավելի հաճախ կապակցվել է *ասէ* բայաձևը, որին անցյալ կատարյալ ժամանակաձևով զուգահեռվում են *պատասխանի ետ, լուաւ, սաստեաց, գիտաց, խօսեցաւ, պատուիրեաց, հայեցաւ, կոչեաց, եհարց, կատարեաց* ստորոգյալները:

Անցյալ կատարյալ ժամանակաձևին զուգորդված ներկա ժամանակի գործողությունները երբեմն հանդես են գալիս եռաստիճան մակարդակով: Մի դեպքում անցյալ և ներկա ժամանակաձևերին է զուգահեռվում ևս մեկ անդեմ բայ, օրինակ՝ «Յայնմ հետէ *սկսաւ քարոզել* **Յիսուս** և *ասէ*, Ապաշխարեցէք զի մերձեալ է արքայութիւն երկնից» [Մտթ., Գ 1]: «Եւ անցեալ ընդ այն Յիսուսի՝ *ետես* այր մի զի նստէր ի մաքսաւորութեան, Մատթէոս անուն, և *ասէ* ցնա, Եկ զկնի իմ» [Մտթ., Թ 9]: Եւ մատուցեալ **Յիսուս**՝ *բուռն եհար* զնոցանէ և *ասէ*, Յոտն կացէք և մի՛ երկնչիք [Մտթ., ԺԷ 8]:

Մյուս դեպքում բազմակի դիմավոր բայեր են նախորդում ներկա ժամանակաձևին, ինչպես՝ «Իբրեւ *լուաւ* **Յիսուս**, *զարմացաւ*, և *ասէ* ցայնոսիկ որ զհետն երթային…» [Մտթ., Ը 10]: «Իսկ **Յիսուս** իբրեւ *դարձաւ* և *ետես* զնա, *ասէ*, Քաջալերացը, դուստր, հաւատք քո կեցուցին զքեզ. և փրկեցաւ կինն ի ժամէն յայնմանէ» [Մտթ., Թ 22]: «Իբրեւ *եկն* **Յիսուս** ի տուն իշխանին, և *ետես* զփողարսն և ամբոխ յոյժ, *Ասէ* ցնոսա, Ի բաց գնացէք, զի ոչ եթէ մեռեալ է աղջիկդ այլ ննջէ» [Մտթ., Թ 24]: «Զնոսա երկոտասանեսին *առաքեաց* **Յիսուս**, *պատուիրեաց* նոցա և *ասէ*, Ի ճանապարհ հեթանոսաց մի՛ երթայցէք» [Մտթ., Ժ 5]: «Եւ վաղվաղակի **Յիսուս** *ձգեաց* զձեռն իւր, *կալաւ* զնա և *ասէ*, Թերահաւատ, ընդէ՞ր երկմտեցեր» [Մտթ., ԺԴ 32]: Եւ *կոչեաց* առ ինքն **Յիսուս** մանուկ մի, *կացոյց* զնա ի մէջ նոցա, Եւ *ասէ*, *Ամէն ասեմ* ձեզ, Եթէ ոչ դարձջիք և լինիջիք իբրեւ զմանկտի, ոչ մտանիցէք յարքայութիւն երկնից [Մտթ., ԺԸ 3]:

Յիսուս անուն-ենթակային վերագրված ստորոգյալները վերագրվում են դիմաթվային տարբեր արտահայտություններով, ինչպես՝ «Յայնմ ժամանակի *պատասխանի ետ* **Յիսուս** և *ասէ Գոհանամ* զքէն, Հայր, Տէր երկնի և երկրի» [Մտթ., ԺԱ 25], Եւ վաղվաղակի *խօսեցաւ* ընդ նոսա **Յիսուս** և *ասէ*, Քաջալերեցարուք, *ես եմ*, մի՛ երկնչիք [Մտթ., ԺԴ 27] արտահայտությունների մեջ, ուղղակի խոսքում վերագրումը կատարվել է առաջին դեմքով:

Յիսուս անուն-ենթակային վերագրված ներկա ժամանակի գործողությունը երբեմն վերագրվում է հերոսների կողմից, որոնք հաստատում են իրականությունն անցյալ կատարյալ ժամանակաձևով կատարված

գործողություններից հետո, օրինակ՝ «Եւ ահա աղաղակեցին և ասեն, Զի՞ *կայ* մեր և քո, **Յիսուս**, որդի Աստուծոյ, *եկիր* տարաժամ տանջե՞լ զմեզ» [Մտթ., Ը 29]: Այս օրինակում հետաքրքիր է նաև այն հանգամանքը, որ անցյալ կատարյալ ժամանակաձևը ոչ միայն նախորդում, այլ նաև հաջորդում է ներկա ժամանակաձևով արտահայտված գործողություն-հատկանիշի: Իմաստային այս ընկալումն է ընկած նաև ***Յիսուս*** անուն-ենթակայի այլակերպության պատկերում. «Եւ յետ վեց աւուր *առնու* ընդ իւր **Յիսուս** զՊետրոս և զՅակովբոս և զՅովհաննէս զեղբայր նորա, և *հանէ* զնոսա ի լեառն մի բարձր առանձինն. եւ *այլակերպեցաւ* առաջի նոցա, և լուսաւորեցան երեսք նորա իբրեւ զարեգակն, և հանդերձք նորա եղեն սպիտակ իբրեւ զլոյս» [Մտթ., ԺԷ 1]: ***Յիսուս*** անուն-ենթական խորհրդանշող առաջին դեմքով արտահայտված գործողությունը երբեմն հաջորդում է երրորդ դեմքով արտահայտված անցյալ կատարյալ ժամանակաձևի՝ իբրև նախօրոք կատարված գործողության հետևանք, օրինակ՝ «Եւ մատուցեալ ***Յիսուս*** *խօսեցաւ* ընդ նոսա և *ասէ*, Տուաւ ինձ ամենայն իշխանութիւն յերկինս և յերկրի. որպէս առաքեաց զիս Հայր, և ***ես*** *առաքեմ* զձեզ» [Մտթ., ԻԸ 18]:

Կան բազմաբաղադրիչ կառույցներ, որոնցում զուգահեռվել են ժամանակային երեք արտահայտությունները՝ անցյալ, ներկա, ապառնի հաջորդականությամբ, ինչպես՝ «Զտեղի *առ* ***Յիսուս***, *կոչեաց* զնոսա և *ասէ*, Զի՞նչ կամիք զի *արարից* ձեզ» [Մտթ., Ի 33]: «*Պատասխանի ետ* ***Յիսուս*** և *ասէ* ցնոսա, *Հարցից* և զձեզ բան մի, զոր թէ ասիցէք ինձ, և ես ձեզ *ասացից* որո՛վ իշխանութեամբ *առնեմ* զայս» [Մտթ., ԻԱ 25]: «Դարձեալ երկրորդ անգամ *չոգաւ, եկաց* յաղօթս ***Յիսուս*** և *ասէ*, Հայր իմ, եթէ հնար իցէ՝ անցանել յինէն բաժակիս այսմիկ, ապա թէ ոչ՝ *արբից* զսա, եղիցին կամք քո» [Մտթ., ԻԶ 43]: Նման կապակցություններում ապառնի ժամանակաձևով գործողությունն արտահայտվում է առաջին դեմքով:

«Աւետարան ըստ Մատթէոսի» երկում գործածված *Յիսուս* անուն-ենթակային վերագրված ստորոգյալների կապակցելիական առանձնահատկությունների ուսումնասիրությունը բացահայտում է հին հայերենի ժամանակձևերի իմաստային առանձնահատկությունները՝ ըստ խոսքում ունեցած հաջորդականության: ***Յիսուս*** ենթակային վերագրված գործողությունների ամբողջացումը պարզաբանում է աստվածային և մարդկային զորություններ կրող ենթակայի կապակցելիական հնարավորությունները՝ որպես եզակի իրողություն:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Աբրահամյան Ս., Պառնասյան Ն., Օգանյան Հ., Ժամանակակից հայոց լեզու, հ. 2, Երևան, 1974:
2. Խաչատրյան Գ., Գրաբար, Երևան, 2014:
3. Խաչատրյան Գ., Շահվերդյան Թ., Պետրոսյան Լ., Գրական հայերենի պատմության դասընթաց, Մաս Բ., Երևան, 2016:
4. Հարությունյան Հ., Բայերի իմաստային դասդասման հիմունքները, http://ysu.am/files/07H_Harutyunyan.pdf Հասանելի է 12,02,2022:
5. Նոր բառգիրք հայկազեան լեզուի, հ. 1, Երևան, 1979:
6. Նոր կտակարան Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի, Աստուածաշունչի Լիբանանի ընկերութիւն, Բեյրութ, 1982:
7. Պետրոսյան Լ., Ավագիմյան Ա., *Ասել* բայի ենթակաառական կապակցելիությունը և արտահայտությունը «Աւետարան՝ ըստ Մատթէոսի» երկում, Հայերենագիտության հիմնահարցեր և զարգացման հեռանկարներ, Երևան, 2017:
8. Պետրոսյան Լ., Մատթէոսի Ավետարանի բայերի դասանշությունը, Ջահուկյանական ընթերցումներ, Երևան, 2017:
9. Ջահուկյան Գ., Ժամանակակից հայերենի տեսության հիմունքները, Երևան, 1974:
10. Գյուլբուդաղյան Ս., Ժամանակակից հայոց լեզու, Երևանի համալսարանի հրատարակչություն, Երևան, 1988,
11. Vyvyan E., *Language and Time, A Cognitive Linguistics Approach*, October 2013, https://www.cambridge.org/am/academic/subjects/languages-linguistics/cognitive-linguistics/language-and-time-cognitive-linguistics-approach?format=HB&isbn=9781107043800 Հասանելի է 12,02,2022:

Особенности сочетаемости сказуемых, относящихся к антропониму-подлежащему *Иисус* в сочинении «Евангелие от Мафея»

Багдасарян Аршине
ВГУ, Армянский язык и литература, 2-й курс

Резюме

***Ключевые слова**: предложение, настоящее, прошедшее и будущее времени, член предложения, приложение, управление*

В библейской речи подлежащее, выраженное антропонимом Иисус, могло сочетаться как с глаголами, выраженными разными видовременными формами, так с глаголами, выражающими различные отношения. Их обобщение объясняет возможности сочетаемости подлежащего, несущего божественную и человеческую силу, как уникальную реальность.

The Coherent Characteristics of Predicates Attributed to "Jesus" Subject-name in Writing "Gospal According to Matthew"

Baghdasatyan Arpine
VSU Armenian Language and Literature, 2nd course

Summary

***Key words**: sentence, present, past and future; part of the sentence; apposition; control (management)*

The subject "Jesus" in biblical discourse is tied with different finite forms as well as with verbs expressing different relations, the entity of which elucidates the coherent potential of the subject possessing divine and human power, which is considered an exceptional fact.

Կնոջ, ընտանիքի և հասարակության մաթևոսյանական ընկալումը

Բաղդասարյան Օֆելյա
ՎՊՀ, Հայոց լեզու և գրականություն, մագիստրատուրա, 2-րդ կուրս
Գիտական ղեկավար՝ բ., գ., թ., դոցենտ ***Վ. Փիլոյան***

Հանգուցային բառեր. *գրական ստեղծագործության, կերպարակերտման ձևը, կին-կերպար, ընտանիք, հասարակություն, սոցիալական և բարոյական արժեհամակարգեր, փոխհարաբերություններ, բնավորություն*

Յուրաքանչյուր գրական ստեղծագործության ծնունդ տեղի է ունենում գրողի երկարատև փնտրտուքների արդյունքում: Այդ փնտրտուքների և մտորումների առանցքը մարդն է, գրողի՝ կյանքից քաղած ասելիքը՝ էլի մարդը «որպես բացարձակ արժեք. գերմեծություն, պատասխանատվությունը նրա ճակատագրի, խղճի, ազնվության համար» [2, 368]: Հայ գրականության մեջ այս առումով առանձնանում է Հրանտ Մաթևոսյանի կերպարակերտման ուրույն ձևը, մարդուն, նրա բնությանը մոտենալու վարպետությունը:

Մաթևոսյանական կերպարները չափազանց իրական են, ազդեցիկ՝ բնավորությամբ ու արարքով: Երևի նրանք այսքան իրական չէին լինի, եթե չլիներ գրողի՝ «գրչով լուսանկարելու» շնորհքը: Եվ այո, նրա գրողական աչքից չեն վրիպում ուժեղ ու թույլ բնավորությունները, նրան հիացնում է հատկապես մարդկային տեսակի զանազանությունը. «Ինչ որ գրել եմ՝ իմ աշխարհի, իմ ճանաչած մարդկանց մասին է, երբեմն անունները փոխում եմ (նեղանում են), մեկ-մեկ էլ չեմ փոխում (հիմա էլ ջոկ են նեղանում): Ինձ համար յուրաքանչյուր իրական մարդ ավելի թանկ է, քան բոլոր տեսակի վերացարկումները, որովհետև վերացարկումներից են գոյանում գումարտակները. այսքան մարդ է զոհվել: Յուրաքանչյուր իրական մարդ դարերի աշխատանք է, հազար տարվա գոյացություն, ծմակուտցի ցանկացած մարդու մեջ շեքսպիրյան ողբերգություն կա, շիլլերյան ճախրանք, տոլստոյական մաքրություն, էլ ինչո՞ւ պիտի մարդ հորինեմ, կյանք հորինեմ: Ես իմ երկրի լուսանկարիչն եմ, վավերագրողն եմ և ինձ լիուլի բավարարում է եղած կյանքը» [2, 370]:

Մաթևոսյանական կերպարները «ի սկզբանե սքանչելի, ողբերգական, հերսական» [2, 370] մարդիկ են: Տարօրինակ է, որ այս բնորոշումները լսելով՝ մեր առջև հառնում են ավելի շատ Մաթևոսյանի կին կեր-

պարները (Աղուն, Շուշան, Աշխեն և այլք)։ Թեև սա ոչ այնքան բնական իրողություն է, սակայն ծմակուտյան միջավայրում դառնում է բնական ու օրինաչափ։

Մաթևոսյանը բարձր էր գնահատում կնոջ դերը հայ ընտանիքի ու հայրենիքի կառուցման գործում։ Եվ ընդհանրապես, ընտանիքը, գրողի կարծիքով, աշխարհի հիմքն է։ Նա շատ էր ափսոսում, որ իր ստեղծած կին կերպարների կողքին դեռ չի հասցրել կերտել մտքում արդեն ուրվագծած մյուսներին։ Ի դեպ, Մաթևոսյանի առաջին գրական փորձերից մեկը մի պատմվածք է եղել՝ «Հովսեփը վերադարձավ բանակից» («Վերադարձ») վերնագրով, որը մի կնոջ մասին էր։ Պատմվածքը գրվել է գրողի մանկությունից եկած տպավորությունների հիման վրա [2, 498-499]։

Երևում է՝ գրողին տպավորել են իր միջավայրի կանանց զանազան բնավորությունները, արտաքին ու ներքին որակները։ Այդ է պատճառը, որ Մաթևոսյանը հիմնականում իր միջավայրից դուրս քիչ կին կերպարներ ունի։ Բացառություն են, թերևս, «Խումհար» վիպակի այլազգի կին կերպարները և «Չեզոք գոտի» պիեսի կին կերպարները, որոնցից մեկը՝ Շողերը, շարունակում է մնալ ծմակուտյան գեղջուկների լիարժեք ներկայացուցիչը։

Երբ ասում ենք՝ կինը Հրանտ Մաթևոսյանի ստեղծագործության մեջ, տեսնում ենք լոբուտում Սոնային՝ Սիմոնի գրկում, Մարիամին՝ Անդրոյի հետ, Աշխենին՝ կիթ անելիս, Մուրադենց էն հարսին քարանձավում՝ Ռոստոմի կողքին, լաչառ Շուշանին և հայ գրականության մեջ ամենաուժեղ կանացի կերպարին՝ Աղունին։

Ճակատագրով ուժեղ այս կանանցից յուրաքանչյուրն իր պատմությունն ունի, որը գրողի գրչի տակ դարձել է բոլորինը։ Գրողը ուզում է ի ցույց դնել համայն աշխարհին հայ կնոջ մեծությունը, նրա պայքարը, մաքառումը հանուն ապրելու. «Ես իմ ժամանակի վավերագրողն եմ, իմ մոտ ժամանակի վավերագրողը։ «Նրանք հունձ էին անում, եզան հետ լուծ էին քաշում, իրենց տղաների թիկունքին, հայրերի տեղ, եղբոր նման կանգնած էին։ Երբեմն իրենք էին իրենց բաժին սերը գողանում, երբեմն էլ ես եմ մարդկային պարգև ընծայում նրանց լոբուտներում, շոգ օգոստոսների մեջ։ Պիտի ուզենայի իմ ողջ գործը մի կույր ուխտագնացություն լիներ առ իրենց մեղավոր-անմեղ ոտը, քանի որ մենք «Դավիթ», «Նարեկ», Կոմիտաս, Թումանյան ենք ստեղծել, բայց հայոց պատմության ամենամեծ ստեղծագործությունը հայ կինն է՝ աղջնակը, գաղթի ճանապարհի տատիկը, իրենց շքեղ մենատների տիրուհիները.... Տեղին պիտի լիներ, եթե այսօր մենք «Մեր մայրերը» խորագրով ընտրանի ունենայինք՝ Հայ

արձակի ընտրանին հայ կնոջ մասին: Այո՛, մի երկու կերպար ես ստեղծել եմ, մի երկուսն էլ պիտի ստեղծեմ ....» [2, 412]:

Մաթևոսյանի համոզմամբ՝ իր կողմից պատկերված միջավայրը սոցիալական ու բարոյական արժեհամակարգերի իր ուրույն օրենքներն ունի, և կախված այն բանից, թե ինչպիսի հասարակության մեջ է ծնվել և ապրում մարդը, որոշվում է վերջինիս վերաբերմունքը կյանքի իրողությունների նկատմամբ:

Մարդու համար ամենափոքր փոխհարաբերությունների շրջանակը իր ընտանիքն է, որտեղ նա առաջին անգամ բախվում է հասարակության մեջ ունեցած դերերի, այդ դերերի բաշխման, պարտականության, միմյանց օգնելու, միմյանցից սովորելու, սիրելու և համբերատարության, էգոիզմը հաղթահարելու և այլ սոցիալ-հոգեբանական իրողությունների:

Մի առիթով Մաթևոսյանն ասել է. «Գրականությունը փնտրում է չաղավաղված մարդուն ու չաղավաղված փոխհարաբերությունները՝ մի կողմից չափազանցնելով մինչև աբստրակցիա մարդու և փոխհարաբերությունների աղավաղումը, մյուս կողմից մարդկանց փոխհարաբերությունները ցուցադրելով անաղարտ, մաքուր, բնական, մինչև անգամ նախնական վիճակում» [1, 43] :

Եվ իրոք, Մաթևոսյանը մաքուր բնավորությունների փնտրտուքն սկսել է իր ընտանիքից: Նրա կարծիքով գրողը անհատականություն չի կարող ստեղծել, նա պարզապես պետք է իր առջև կանգնած անհատականությանը գրողական շունչ տա, դարձնի մյուսներինը: Նրա կարծիքով չկա ավելի ցնցող ու հերոսական կերպար, քան կինը, որ հունձ է անում տղամարդուն հավասար: Այդ հերոսականությունը նա առաջին անգամ տեսել է մոր օրինակով. «քառասուներեքի փետրվար-մարտին մայրս տնից երեք օրով կորավ. ո՛չ ապսպրանքով, այլ որևէ զգայարանով կռահել էր, որ մեր անասունը Զորագեղ ջարդվում է, պիտի փրկելու գնա: Մեկը փրկեց, այդ մի կովը երեք երեխայիս պահեց: Մեր գյուղից Զորագեղ ու ետ՝ 70 կմ է, ճանապարհին մի երկաթուղային կայարան, մի գյուղ ու մի-երկու տեղ լքված գոմեր են, այդ գոմերում այդ աղջիկ-կինը, այդ նիհար, ծանրած, ահա-ահա ծնող կովի հետ երկու գիշեր է անցըրել, երկու ցերեկ՝ խնդրելով, հրելով, լացելով, անիծելով ու հուսալով ժամը ժամի վրա մոտեցրել է իր գյուղին, որ մինչև ամուսնու զորակոչվելը թշնամական գերության ճամբարից լավ չէր: Եկան, մեր տնից ներքև զառիվերին դեմ առան ու ձմեռվա արևի մեջ փլվեցին: Ես ուզում եմ իմ հայրենիքի 70 կմ այդ ճանապարհից «Մագելանի սխրանք» հանել և այդ կնոջը անհատականություն դարձնել, եթե չդառնա՝ նշանակում է շատ ճիշտ են անում

նրանք, ովքեր իրենց խաչը նրապեսների շալակն են տալիս ու ետ էլ չեն նայում տեսնելու՝ բերո՞ւմ են թե չեն բերում» [1, 26-27] :

Գրողի համար անասելի հակասություն է այդ կնոջ «սխրանքն» ու հասարակության վերաբերմունքն այդ սխրանքին. միայն այդ միջավայրի ծնունդը կհասկանա «սխրանքի» արժեքն ու բովանդակությունը: Գուցե քաղաքացին կարդա սա և միանգամից չընկալի կնոջ բնազդային արարքը, բայց Մաթևոսյանը հենց սա է համարել իր առաջին պարտականություններից մեկը՝ ցույց տալ, որ իր գյուղում էլ ուժեղ բնավորությունների պակաս կա: Եվ ով է ասել, թե համաշխարհային գրականության մեջ հայտնի կերպար լինելու համար վերջինս պիտի մեծ քաղաքում ապրի, կրթված լինի, ընդհակառակը՝ գյուղի մարդիկ իրենց պարզությամբ հանդերձ անասելի իմաստուն են, նրանք բնության մասին գիտեն ամեն ինչ, նրանք ավելի շատ են հասկանում այս կյանքը, չէ՞ որ նրանք կպած են իրենց հողին ու արժեքներին:

Հայրենական պատերազմի տարիներին հայ կնոջ դերակատարության մասին Մաթևոսյանը խոսում է իր քիչ հայտնի մի հրապարակման մեջ՝ «Զրույց ի՛ր և մայրերի հետ». «Պիտի փառք տայի ջահել տղաներին, բայց իմ խոսքը եղավ թիկունքի մայրերի մասին: Այդ մայրերը տասնութից քսան տարեկան աղջիկներ էին, որ հասցրել էին երկուսից հինգ երեխա ունենալ և ամուսիններից զրկվել: Իրենց միսն իրենց բերանն առած ամեն ինչ քաշեցին» [3, 85]: Հոդվածի վերջում որպես եզրափակում Հրանտ Մաթևոսյանը նշում է. «Երբ ես ՀՈՒՇԱՐՁԱՆԻ բացման ԺԱՄԱՆԱԿ խոսեցի ՔԱՌԱՍՈՒՆ ՈՐԲԵՎԱՅՐԻՆԵՐԻ մասին, պիտի ցանկանայի, որ գրական ԻՄ ԳՈՐԾԸ ԿՈԹՈՂ ԴԱՌՆԱ իմ ժամանակ ապրած ՄԱՅՐԵՐԻՆ, նրանց, որ իրենց բաժին սերը գողությամբ, թաքուն մի կերպ խլած ունեցան» [3, 88]:

Գրողի համոզմամբ՝ գյուղը սովորեցնում է, սովորեցնում է ընկալել և իր գրականությունը, աշխարհը, չէ՞ որ Ծմակուտն էլ աշխարհից պոկված մի անկյուն է. «Ես իմ երեխաներին երկար ժամանակով տանում էի հայրական տուն, որպեսզի այդպես սովորեն աշխարհն ընկալել: Իմ կարծիքով դրանից է, որ դարձել են հասկացող, գրագետ ընթերցողներ:

Համաշխարհային գրականության ամբողջ բառային ֆակտուրան՝ Աստվածաշնչից մինչև ներկա «գյուղագիրներ» գյուղական կյանքի ծնունդ է: Մարդ ինչ էլ կարդա, գրողը նրան սովորեցնում է գրականության ընկալման այդ այբուբենը՝ ա – այգի, բ – բոռ, գ – գետ: Դու քաղաքաբնակ ես ու քեզ համար ջորին ուրիշ իմաստ ունի, ինձ համար՝ ուրիշ: Ես ջորու

մասին ամեն ինչ գիտեմ՝ ինչ տեսք ունի, ինչ է ուտում, ինչպես է քնում, ինչպես են լծում» [2, 390]։

Ըստ Մաթևոսյանի՝ «Ընտանիքը փոքր պետություն է» [2, 395], որտեղ ամենակարևոր դերը ծնողներինն է, և այդ դերը վճռորոշ է հասարակության, պետության մեջ մարդու կայացման համար. «Նույնիսկ Աստծուն առանց հոր ու մոր չէին կարող ստեղծել։ Նույնիսկ Հիսուս Քրիստոսը պիտի ծնողներ ունենար» [2, 395]։

Մաթևոսյանի անձնային և գրողական կայացման մեջ մեծ է եղել նրա ընտանիքի դերը, որին գրողը հաճախ է վերադարձել թե՛ ֆիզիկապես, թե՛ ստեղծագործությունների միջոցով. «Մարդու տոհմը, նրա ընտանիքը՝ իմ կարծիքով աշխարհի հիմքը դա է, ինչը դեռ մնացել է: Մի ժամանակ,– երիտասարդ էի,– մորիցս ու իմ համագյուղացիներից նետվում էի դեպի ուրիշները՝ ավելի «կուլտուրականները», ավելի «կրթվածները»: Կարծում էի՝ բարեկամությունն ամեն ինչից վեր է: Իսկ հետո սկսվեց վերադարձը դեպի տուն» [2, 395]։

Մաթևոսյանների ընտանիքում երեխաների դաստիարակությամբ, կրթություն ստանալու հարցերով զբաղվել է մայրը՝ Արուսը։

Հուշագրական նոթերում գրողը մոր մասին շատ է խոսել, և թվում է՝ բառացի պատմում է իր ստեղծագործության հերոսուհու՝ Աղունի կյանքը. «– Ինչպես ասեմ .... Առաջին անգամ ազատություն զգացի, երբ քաղաք գնացի, 1950 թվականին: Ինձ համար ազատություն էր ազատագրումն այն ամենից, ինչ թվում էր մայրական դաժանություն: Մայրս ծնունդով փոքր քաղաքից էր, իսկ ամուսնացել էր խուլ գյուղում. մի օրվա ձիու ճանապարհ հեռավորության վրա: Եվ նրա մեջ ապրում էր ճակատագրից նեղացածությունը: Նա ցանկանում էր, որ ես իրականացնեմ իր չիրականացած հնարավորությունները, և նա ինձ ուրիշ կյանքի էր պատրաստում, բայց ես ավագն էի ու պիտի ճանապարհ հարթողը լինեի: Մորս համար ամենակարևորը իմ լավ սովորելն էր: Նա դառը լացում էր, երբ ես «երկուս» էի ստանում: Մայրս ուրախանում էր՝ տեսնելով իմ լավ ձեռագիրը՝ ինքը գրել չգիտեր» [2, 390]։

Մի առիթով Մաթևոսյանը խոստովանել է. «Ես գրող դարձա մորս շնորհիվ»[2, 391]։

Մաթևոսյանի ստեղծագործության մեջ անկրկնելի է ոչ միայն մորից ածանցված Աղունի կերպարը: Ինքնատիպ են նաև Աշխենն ու Մարիամը «Օգոստոս» պատմվածքից, Շուշանը, որին տեսնում ենք «Պատիժը», «Տերը», «Տաշքենդ» ստեղծագործությունների մեջ, Էլյայի կերպարը «Տերը», «Տաշքենդ» երկերում: Փոքրիկ, հպանցիկ մի կերպար կա «Մեռելալույս»

վիպակում. Քեչոնց Շամամը, նաև մեկ այլ անանուն կերպար՝ Քեչոնց մյուս հարսը, և կա վերջինիս խեղճության ինքնարդարացումը. «Աղունը նրա համար էլ ջոկ լացեց: Նա Քեչոնց հարսներից էր, բայց թե որի կինը՝ Աղունն այդպես էլ չհասկացավ, որովհետև ասում էին «Արմո, Քեչոնց Արմո», բայց Աղունն Արմոյին չտեսավ: Ծտի, վառեկի, երեխայի չափ կինն էր, մեր Համբո հորեղբայրն, ասում է, որտեղ բռնացնում վերկոխ էր անում- լոբուտում, գետափին, մոշուտներում, դռները ջարդելով տուն էր մտնում, իսկ նա, ասում է, փախչում էր հորանց Ամոջ, երկու օրվա ճամփան Քեչոնք ծանրումեծ գնո՛ւմ, նրան ետ էին բերում Համբոյի համար, և նա լուռ վախենալով գալիս էր, ամուսնուն վախենում էր ասել, քանի որ վախենում էր Քոչոնք թվանք առնեն, և Համբոն խփի ջարդի նրանց: Վախենում էր Վրացոնք Քեչոնց պաշտպան կանգնեն, և Վրացոնց ու Բաբուշենց միջև արյուն լինի: Հետո, երբ Համբո հորեղբայրը անցած գնացած կանանց մեջ գերեզմանատանը մոլորվել էր, նրան իսկի չէր էլ հիշել- նա եղե՞լ էր, չէ՞ր եղել, կա՞ր, մեռե՞լ էր: Աղունը լացեց ոչ թե նրա պես լուռ – լացեց սիրտը պատռելով, զզվելով, անիծելով» [3, 88]:

Անգամ հպանցիկ անդրադարձը ձևավորում է ամբողջական կերպար, որ այլևս անջնջելի է ընթերցողի հիշողության մեջ: Այս իրողությունը բացառիկ է դարձնում Մաթևոսյանի ստեղծագործությունը ոչ միայն ընդհանրապես, այլ նաև կնոջ, ընտանիքի, հասարակության մաթևոսյանական գնահատումների տեսանկյունից:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Հր. Մաթևոսյան, Սպիտակ թղթի առջև, Ե., «Հայագիտակ» հրատարակչություն, 2004:
2. Հր. Մաթևոսյան, Ես ես եմ, Ե., «Ոսկան Երևանցի» հրատարակչություն, 2005:
3. Հր. Մաթևոսյան, Անտիպներ, Հտ. 1, Երևան, «Հրանտ Մաթևոսյան մշակութային բարեգործական հիմնադրամ», 2017:

Восприятие женщины, семьи и общества у Матевосяна

Багдасарян Офеля
ВГУ, Армянский язык и литература, Магистратура, 2-ой курс

Резюме

***Ключевые слова**: литературное произведение; создание персонажа; женский персонаж; семья; общество; социальные и моральные ценности; взаимоотношения; характер*

Матевосян высоко оценивает роль женщин в построении армянской семьи и родины в целом. Писатель считает, что семья – это основа мира. Он хочет показать миру величие армянских женщин, их усилия и борьбу за жизнь.

Женские персонажи Матевосяна в основном из его окружения. Даже при беглом упоминании о персонаже автор представляет полноценного персонажа, который произведет на читателей неизгладимое впечатление.

Писатель считает, что изображаемая им среда имеет свои законы социальной и нравственной системы ценностей. Отношение человека к реалиям жизни зависит от общества, в котором человек родился и живет.

Matevosyan's Perception of Women, Family, and Society

Baghdasaryan Ofelya
VSU, Armenian Language and Literature, MA the 2nd course

Summary

***Key words:** literary work; character creation; female character; family; society; social and moral values; relationships; character*

Matevosyan highly appreciates the role of women in building an Armenian family and the homeland in general. The writer believes that family is the basis of the world. He wants to show the world the greatness of Armenian women and their struggle and tussle for life.

Matevosyan's female characters are mostly from his environment. Even with a cursory reference, the author creates a complete character that will make an indelible impression on the readers.

The writer believes that the environment he depicts has its own laws of social and moral value systems. A person's attitude towards the realities of life depend on the society in which a person is born and lives.

Նորաբանությունների բառակազմական և ներքերականական քննություն Կորյունի «Վարք Մաշտոցի» երկում

Գևորգյան Նանե
ՎՊՀ, Հայոց լեզու և գրականություն, 2-րդ կուրս
Գիտական ղեկավար՝ բ. գ. թ., դոցենտ ***Լ. Պետրոսյան***

Հանգուցային բառեր. *ածանց, արմատ, գոյական, ածական, բառակազմական կաղապար, հատուկ և հասարակ անուններ*

4-5-րդ դարերի հայ պատմիչ, վարդապետ, թարգմանչաց շարժման գործիչ Կորյունի մասին մի շարք ուսումնասիրություններ կան՝ կապված նրա կյանքի, գործունեության, բառաստեղծման, «Վարք Մաշտոցի» երկի և հատկապես «Ագաթանգեղոս - Կորյուն» հեղինակների վարկածների վերաբերյալ: Ներկայացված ուսումնասիրությունների համակողմանի վերլուծությունը պատկանում է Վ. Առաքելյանին [2, 136-147], որոնք մենք դիտարկել ենք մեր ուսումնասիրության տեսակետից:

Մ. Աբեղյանը գրում է. «Հետագա գրողները Կորյունից են օգտվում» [10, 28]:Բանասերների մի խումբ այն վարկածն է առաջարկել, թե Կորյունն ու Ագաթանգեղոսը նույն անձնավորություններն են:

Ն. Բյուզանդացին հավաստում է, որ Ագաթանգեղոսի ու Բուզանդի գրքերը Կորյունի թարգմանություններն են հունարենից, և նրան վերագրվող նորաբանություններն իրականում այդ թարգմանություններից կրած ազդեցություններ են: Նույն տեսակետին է եղել Մ. Չամչյանը: Վ. Առաքելյանը, ամբողջացնելով վերը թվարկած հեղինակների ուսումնասիրությունը, գտնում է, որ դրանք հնացած ու անընդունելի դարձած վարկածներ են, որոնց հիմքում ընկած են անտրամաբանական փաստարկումներ և նույնիսկ հակասություններ: Նա փաստարկներով ապացուցում է, որ դրանք նույն դպրոցին պատկանող, սակայն տարբեր հեղինակներ են Կորյունի «Վարք Մաշտոցի» երկի սկզբնաղբյուր լինելու մասին են վկայում նաև Կարեն Յուզբաշյանը և Պարույր Մուրադյանը. «Վարքի առանձին հատուածներ մտել են Ագաթանգեղոսի եւ Փաւստոս Բուզանդի երկերի մէջ, վերիմաստաւորուել եւ ձուլուել նրանց հետ» [7, 227]:

Մեր ժամանակներում Ագաթանգեղոս – Կորյուն հեղինակների ինքնությանն է անդրադարձել նաև Վ. Եղիազարյանը՝ նշելով. «Ակնհայտ է, որ Կորյունը փոխել է մի բառ և ավելացրել երկու բառ՝ կորյունական ոճով

«ծաղկեցնելով» ազաթանգեղյան արտահայտությունը: Վերջապես, ընթերցողը չի կարող չնկատել, որ եթե Ագաթանգեղոսն օգտվեր Կորյունի երկից, առաջաբանում կգործածեր աստվածաշնչյան պատկերներ, մի բան, որ շռայլորեն արել է Կորյունն իր երկի առաջաբանում, իսկ Ագաթանգեղոսը՝ պատմության ընթացքում, բայց ոչ առաջաբանում» [3, 103]:

Մենք կարծում ենք՝ Վ. Առաքելյանի ներկայացրած տեսակետը հիմնավոր ու տրամաբանական է, քանի որ եթե Կորյունի բառապաշարը իրականում հունարենի ազդեցություն լիներ, ապա այդ ազդեցությունը պետք է երևար նաև ածանցավոր բառերի բառաբաղադրիչներում. հարյուր հիսունից ավելի ածանցակերտ բառերը կազմված են առավելապես -*ական*, -*արար*, -*իչ* ածանցներից, որոնք բուն հայկական ծագում ունեն:

Կորյունի «Վարք Մաշտոցի» երկում հանդիպող բազմաթիվ բառեր «Նոր բառգիրք հայկազեան լեզուի» բառարանում [9] ներկայացված են նույն արտահայտությամբ, որ բառացի մեջբերում է ինչպես Կորյունից, այնպես էլ Ագաթանգեղոսից ու Բուզանդից: Ելնելով Վ. Առաքելյանի առաջ քաշած տեսակետից՝ մենք էլ դրանք համարում ենք Կորյունի նորաբանությունները, որոնք ոչ միայն իմաստային, այլ նաև նույն կիրառական, կապակցելիական հնարավորություններով են գործածվել մյուս հեղինակների երկերում:

Սույն ուսումնասիրության մեջ քննում ենք Կորյունի «Վարք Մաշտոցի» երկի հեղինակային նորաբանությունները բառակազմական տեսակետից՝ շարունակելով Վ. Առաքելյանի ուսումնասիրությունը: Նա անդրադարձել է Կորյունի նորաբանությունների իմաստային հարաբերություններին՝ առանձնացնելով կրոնական (***աստուածաշունչ, աւետարանագործ***), մշակութային (***հռետորաբան, մատենապատում, շնորհագիր***), հասարակական, քաղաքական (***ազատագունդ, աշխարհակիր, արքայատուր, թագաւորակաց***) և ձևով ու իմաստով հնացած բառերի (***երկպատական, աննիազական, աշխարհահալած***) խմբերը [2, 142-143]:

Ուսումնասիրության հիմքն է «Մատենագիրք Հայոց» համահավաք աշխատասիրությունը [7], որ վերահրատարկվել է ըստ Մ. Աբեղյանի կազմած բնագրի [7, 229]:

Կորյունի «Վարք Մաշտոցի» հեղինակային նորաբանությունները, ըստ բառարաններում վկայված և չվկայված լինելու հանգամանքի, բաժանվում են երկու խմբի. կան մի շարք բառեր, որոնք «Նոր բառգիրք հայկազեան լեզուի» երկում վկայված չեն. ավելացնենք, որ դրանք վկայված չեն նաև Լ. Հովհաննիսյանի «Նոր հայկազյան բառարանում չվկայված բառեր» բառարանում [4]: Գրաբարի բառարաններում չվկայված

բառերից են ***մատենանշան*** [7, 229]***, թագաւորազին*** [7, 231]***, ողջապատում*** [7, 249]***, աշխարհալած*** [7, 252]***, վարդապետասէր*** [7, 256]***, կերպարակերպ*** [7, 258]***, աշխարհամեծ*** [7, 260] և այլն: Հետաքրքիր է այն հանգամանքը, որ այս բառերը գտնվում են աշխարհաբարի բառարաններում՝ մասնավորապես Ս. Մալխասյանցի «Հայերէն բացատրական բառարանում» [6]: Սա նշանակում է, որ Կորյունի երկը շարունակ ընթերցվել է, և դրա բառապաշարը կենսունակ է հայերենի զարգացման տարբեր շրջաններում: Այս բառերի ներքերականական վերլուծությունը կատարել ենք Ս. Մալխասյանցի հեղինակած բառարանի բացատրությունների հիման վրա՝ հետևելով Լ. Հովսեփյանի «Գրաբարի բառակազմությունը» [5] գիտական աշխատության դասակարգման չափորոշիչներին:

Պարզ կազմություն ունեն այն նորաբանությունները, որոնք հեղինակը փոխառել է այլ լեզվից՝ իբրև օտարաբանություն, օրինակ՝ ***սիւղբայ*** [7, 237] «վանկ», ***աղփաբետ*** [7, 236] «այբուբեն»: Վերջիններս, լինելով «կուլտուրական գերիշխանության» [1, 391] արտահայտություններ, դուրս են եկել գործածությունից՝ բառապատճենման օրենքով փոխարինվելով հայերենաշունչ *վանկ* և *այբուբեն* բառերով: Ի տարբերություն սրանց՝ ***բարբարիանոս*** [7, 245] «այլազգի, վայրենի, խուժադուժ» բառի հիմքը շարունակում է գործածվել գրական հայերենում:

Ածանցավոր կազմություն ունեցող բառերը, ըստ ձևութաբանական մասնակաղապարի, ենթադասակարգվում են հետևյալ խմբերով:

1. «**Նախածանց + արմատ**», ինչպես՝ ***նախընկալ*** [7, 238] «պատրաստ առ ընդունել»: Նորաբանությունը գործածվել է որպես ածական-ստորոգելի՝ **եղև** բայաձև-հանգույցի միջոցով վերագրվելով **թուղթս** գոյականին, օրինակ՝ «Ապա յետ այնորիկ առնոյր թուղթս յեպիսկոպոսէ քաղաքին եւ հրաժարեալ ի նոցանէ հանդերձ ամենայն իւրովքն, բերէր առ եպիսկոպոսն Ասորոց: Որ յորոց ***նախընկալն եղեւ***, առաջի արկեալ նոցա զնշանագիրս աստուածատուրս» [7, 238]:

2. «**Արմատ + ածանց**» կաղապարը ենթադասակարգվում է հետևյալ խմբերով.

2.1. «**Հատուկ անուն + ածանց**», որտեղ հատուկ անունը անձնանուն կամ տեղանուն է, ինչպես՝ ***մովսիսական*** [7, 230] «սեպհական Մովսեսի, որ ինչ հայի ի Մովսէս», ***կայենական*** [7, 242], ***Տիբերական*** [7, 251], ***Սամոսատական*** [7, 260], ***Նիկիական*** [7, 248], ***Եփեսոսական*** [7, 248], ***Սինէական*** [7, 260], ***Թաբաւրական*** [7, 251], ***Տարաւնական*** [7, 234], ***Պաղանական*** [7, 238]: Նշված նորաբանություններում հատուկ անունները մի դեպքում գործածվել են որպես տարբեր իրողությունների խորհրդանիշ-

ներ՝ վերածվելով իմաստակիր միավորների, իսկ մյուս դեպքերում գործածվել են որպես հատուկ անունների տարբերակներ՝ առանց նյութական իմաստի: Նշված կազմություններից Նոր բառգրքում միայն ***մովսիսական*** բառն է ներկայացված՝ ըստ նշանակության:

2.2. «**հասարակ անուն + ածանց**», ինչպես՝ ***ճիւաղութիւն*** [7, 242] - «այլանդակութիւն հանգոյն ճիւաղաց», ***կրկնաւոր*** [7, 238] - «կրկնակ ըստ քերականաց», ***շողաւոր*** [7, 255] - «ունօղ և արձակօղ զշող լուսոյ»:

2.3. «**ածական անուն + ածանց**» կաղապարով է կազմվել ***կայտառութիւն*** [7, 231] «կայտառ գոլն՝ ըստ ամենայն առման» և «**մակբայ + ածանց**» կաղապարով՝ ***կրկնաւոր*** «կրկնակ ըստ քերականաց» նորաբանությունը:

Բարդ կազմություն ունեցող նորաբանությունները դասակարգվում են ներքերականական հարաբերությամբ, քանի որ կազմված են ստորադասական հարաբերությամբ բառազույգերից: Այս կաղապարով օրինակներում նույնպես բառաբաղադրիչ են դարձել աստվածաշնչյան բառեր, ինչպես՝ ***աստուածապատիժ*** [7, 230] – «յԱստուծոյ առաքեալ ինչ ի պատիժ», ***աստուածակրաւն*** [7, 231] «ուր իցեն կրօնք և կարգք աստուածապաշտութեան», ***աստուածագիր*** [7, 231] «Աստուծոյ գծագրեալ, դրոշմեալ, նկարեալ, յօրինեալ», ***քրիստոսադիր*** [7, 261] «ի Քրիստոսէ եդեալ՝ կարդեալ և սահմանեալ», ***քրիստոսամեծար*** [7, 232] «մեծարեալ ի Քրիստոսէ. Աստուածապատիւ կամ մեծարօղ զՔրիստոս», ***առաքելածանաւթ*** [7, 246] «ծանօթ և տեղեակ լինել առաքելական վարդապետութեան», ***աստուածակարգ*** [7, 248] – «յԱստուծոյ կարգեալ», ***աստուածաբեր*** [7, 252] «յԱստուծոյ կամ Աստուծով բերեալ», ***աստուածադիր*** [7, 254] «յԱստուծոյ եդեալ, կարգեալ, սահմանեալ», ***քրիստոսակոչ*** [7, 254] – «ի Քրիստոսէ կոչեցեալ կամ հրաւիրեալ»: Նորաբանություններում աստվածաշնչյան բառերի հաճախադեպ կիրառությունը, կարծում ենք, վկայում է այն հանգամանքը, որ հեղինակը հիմնականում ազդվել է «Աստուածաշունչ» մատյանից:

Կազմությամբ բարդ նորաբանություններին նույնպես բնորոշ են հինհայերենյան բառակազմական հնարավորությունները, որոնք ենթադասակարգվում են հետևյալ կաղապարներով.

3.1. «**Գոյական + բայահիմք**» ներձևաբանական մասնակաղապարն ունենում է հետևյալ ներշարահյուսական հարաբերությունները.

3.1.1. **«Ենթակա + ստորոգյալ»**, ինչպես՝ ***իշխանակիր*** «որ ինչ կրի յանձին իշխանի» նորաբանությունը: Նկատենք, որ ***կիր*** բայարմատով կազմված ոչ բոլոր բառերն են պատկանելության իմաստ արտահայտում: Ասվածի ապացույցն են «….մերկանայր այնուհետև զ***իշխանակիր*** ցան-

կութիւնսն, և առեալ զխաչն պարծանաց՝ ելանէր զկնի ամենակեցոյց խաչելոյն: Եւ հաճեալ հրամանացն՝ ի խաչակիր գունդն Քրիստոսի խառնէր….» [7, 234] զուգադիր նախադասություններում գործածված ***իշխանակիր*** և ***խաչակիր*** նորաբանությունները: ***Իշխանակիր*** բառը գործածվել է որպես ածական և նշանակում է «աշխարհական, աշխարհիկ»: ***Խաչակիր*** նորաբանությունը նշանակում է «խաչի նշանը կրող»: Լեզվի զարգացման հետագա շրջանում այն ստացել է նոր իմաստ՝ «միջին դարի զորական»: Այս կաղապարով է կերտվել նաև ***աշխարհակոյտ*** [7, 263] նորաբանությունը՝ «աշխարհաժողով, համագումար» նշանակությամբ, որտեղ իրանիշ գոյականը գործածվել է որպես անձնանիշ հասկացություն:

3.1.2. **«Խնդիր + լրացյալ»**, ինչպես՝ ***ողջունապատում*** [7, 249] «պատմօղ ողջունի», ***սատանայակիր*** [7, 242] «կրօղ յինքեան զսատանայ. սատանայազգեաց», ***հայերէնախաւս*** [7, 241] «որ հայերէն խօսի», ***շնորհագիւտ*** [7, 261] «գտօղն շնորհաց»:

3.1.3. **«Պարագա + լրացյալ»**, ինչպես՝ ***շնորհապատում*** [7, 271] «Շնորհօք պատմեալ», ***շնորհագիր*** [7, 245] «շնորհօք գրեալ» բարդությունների առաջին բաղադրիչները գործածվել են գործիական հոլովի նշանակությամբ՝ որպես ձևի պարագաներ: ***Մատենապատում*** [7, 229] նորաբանությունը նշանակում է «Ի մատենի պատմեալ», որտեղ առաջին բաղադրիչ գոյական լրացումն արտահայտում է ներգոյական հոլովի իմաստ՝ ձևավորելով տեղի պարագա լրացման նշանակություն: ***Անձաւամուտ*** [7, 261]***, աշխարհամուտ*** [7, 244] նորաբանությունները համապատասխանաբար նշանակում են «մտեալ և բնակեալ յանձաւս», «յոր աշխարհ ամենայն կամ բազմութեան մարդկան մտանէ»: Դրանցում առաջին բաղադրիչները հանդես են եկել հայցական հոլովի իմաստով՝ նույնպես որպես տեղի պարագա: **«Հիմունքի պարագա + լրացյալ»** շարահյուսական կաղապարով է կազմվել ***ավետարանագործ*** [7, 243] նորաբանությունը, որը նշանակում է «որ ինչ գործի կամ լինի ըստ աւետարանին»: Պատճառի պարագայի նշանակությամբ է կազմվել ***արտաւսրագութ*** [7, 253] նորաբանությունը՝ «ուր իցէ արտասուք՝ ի գթոյ աղեաց» նշանակությամբ: Նորաբանության բաղադրիչների վերլուծությունից պարզ է դառնում, որ տվյալ դեպքում բառաբարդումը կատարվել է բայական բաղադրիչի զեղչումով:

3.1.4. «**Անուղղակի խնդիր + լրացյալ**». այս կաղապարով նորաբանություններում բավականին շատ են «**ներգործող անուղղակի խնդիր + լրացյալ**» հարաբերությամբ կերտված նորաբանությունները, ինչպես՝ ***արքունատուր*** [7, 245] «Յարքայէ կամ յարքունուստ տվեալ», ***Քրիստոսադիր*** [7,

232] «ի Քրիստոսէ եդեալ՝ կարդեալ և սահմանեալ», ***աստուածակարգ*** [7, 244] «յԱստուծոյ կարգեալ», ***կայսերագիր*** [7, 245] «ի կայսերէ գրեալ», աստուածաբեր «յԱստուծոյ բերեալ», ***Քրիստոսակոչ*** [7, 254] «ի Քրիստոսէ կոչեցեալ կամ հրաւիրեալ», ***Աստուածագիր*** [7, 231] «Աստուծոյ գծագրեալ, դրոշմեալ, նկարեալ, յօրինեալ», ***Աստուածաբեր*** [7, 252] «յԱստուծոյ կամ Աստուծով բերեալ», ***Քրիստոսաբեր*** [7, 236] «բերեալն ի Քրիստոսէ», ***Աստուածաղիր*** [7, 254] «յԱստուծոյ եդեալ, կարդեալ, սահմանեալ», ***Քրիստոսամեծար*** [7, 232] «մեծարեալ ի Քրիստոսէ», ***տեառնաբարբառ*** [7, 240] նորաբանությունը, որ նշանակում է «ի տեառնէ բարբառեալ»: «**Վերաբերության անուղղակի խնդիր + լրացյալ**» կաղապարով հանդիպել ենք երկու նորաբանության՝ ***աշխարհահոգ*** [7, 259] և ***մարգարէագէտ*** [7, 246]՝ «որ հոգայ վասն աշխարհի» և «գիտակ և խելամուտ գրոց մարգարէից» նշանակություններով:

3.2. «**Մակբայ + բայահիմք**» ներձևաբանական մասնակաղապարն ունենում է **«պարագա + լրացյալ»** ներշարահյուսական հարաբերություն, որտեղ մակբայներն արտահայտում են **ձևի պարագայի** իմաստ, ինչպես՝ ***դիւրապատում*** [7, 261] «Դիւրին բացատրութեամբ», ***դատարկաւուն*** [7, 246] «ի դատարկութեան սնեալ»: ***Յանկարծագիւտ*** [7, 248], ***միայնագործ*** [7, 229] և ***ընդունայնախաւս*** [7, 252] նորաբանությունները, որոնք ունեն «յանկարծ կամ անակնկալ օրինակաւ գտեալ», «միայնակ գործելով», «որ խօսի զսնոտիս և ընդունայն բարբառեալ» նշանակությունները: «**Տեղի պարագա + լրացյալ**» շարահյուսական կազմություն ունի ***յառաջամուտ*** [7, 231] նորաբանությունը՝ «յառաջ մտեալ. կանխաւ յառաջեալ» իմաստով: «**Ժամանակի պարագա + լրացյալ**» կապն էլ տեսնում ենք **մշտնջենամոռունչ** [7, 235] նորաբանության բաղադրիչների միջև:

3.3. «**Ածական + բայահիմք**» ներձևաբանական մասնակաղապարով նորաբանություններում ածականը գործածվում է փոխանվանաբար՝ կատարելով ուղիղ խնդրի շարահյուսական գործառույթ, ինչպես՝ ***ողջապատում*** [7, 249] «ողջամիտ բան պատմող» ***առատապատում*** [7, 256] «Պատմօղ՝ ճառօղ զառատ և զմտացածին բանս», ***ունայնավար*** [7, 246] «որ զհետ վարի ունայն իրաց», ***սնոտիագործ*** [7, 243] «ի սնոտիս գործեալ. մոլար», ***ճշմարտապաշտ*** [7, 244] «պաշտօնեայ և քարոզ ճշմարտութեան»: Այս շարքում առանձնանում է ***քաղցրատուր*** [7, 234] «քաղցրութեամբ տուեալ» նորաբանությունը, որտեղ ածականով արտահայտվել է ձևի պարագայական իմաստ, որը բացատրվել է գոյականի գործիական հոլովով: Այս կաղապարով կազմվում է նաև «**ձևի պարագա + լրացյալ**» ներշարա-

հյուսական հարաբերություն, ինչպես՝ ***անիրաւագիր*** [7, 268] «անիրաւութեամբ գրեալ», ***մենակոհւ*** [7, 271] «ըմբիշ»:

3.4. «**Գոյական + ածական**» ներձևաբանական կաղապարով են կազմվել ***ակնավայել*** [7, 241] և ***առաքելակից*** [7, 232] նորաբանությունները, որոնք նշանակում են «վայելչական և զուարճացուցիչ աչաց» և «ընկեր առաքելոց»: Երկու դեպքում էլ ունենք ածականական բառակապակցության բառացում՝ «**հանգման անուղղակի խնդիր + լրացյալ**» շարահյուսական կաղապարով:

3.5. «**Գոյական + գոյական**» ներձևաբանական բառաբաղադրիչների համադասական հարաբերությամբ մի դեպքում կազմվել է հոմանշային զույգերով ***օրինապատգամք*** [7, 240] նորաբանությունը՝ «օրէնք և պատգամք աստուծոյ» նշանակությամբ: Մյուս դեպքում «**որոշիչ + որոշյալ**» հարաբերությամբ են կազմվել ***հոգեկրօն*** [7, 250] «Ունօղ զհոգևոր կրօնս, կրօնաւորական» իմաստով և ***ճշմարտահաւատ*** [7, 252] «ողջամիտ և հաւատարիմ», ***աստուածակրաւն*** [7, 231] «ուր իցեն կրօնք և կարգք աստուածապաշտութեան» նորաբանությունները:

Ներձևաբանական այս կաղապարը լեզվում հանդես է գալիս նաև «**հատկացուցիչ + հատկացյալ**» ներշարահյուսական հարաբերությամբ, որով կազմվել է ***Տէառնեղբայր*** [7, 233] նորաբանությունը, կարծում ենք, շրջասույթ-նորաբանության օրինակ է: Այն «Հակոբ (Յակոբ) Արդար» անձնանվան մակդիրն է, որին համարում են աստվածաշնչյան Հովսեփի (Յովսէփի)՝ Քրիստոսի հոր որդին:

«Հատկացուցիչ + հատկացյալ» ներշարահյուսական հարաբերությամբ են կազմվել նաև ***հոետորաբան*** [7, 242] «որոյ բանքն են որպէս հոետորի. ճարտարախօս» ***Քրիստոսանշան*** [7, 270] «նշան կամ նշանակ Քրիստոսի ցուցեալ» իմաստներով նորաբանությունները:

Ներքերականական հարաբերությամբ են բնութագրվում նաև բարդածանցավոր կառույցները.

1. «**Արմատ + ածանց + արմատ**» կաղապարով նորաբանություններում սերող հիմքերը հիմնականում գործածական ածանցավոր բառեր են, որոնց հեղինակը գումարել է արմատներ՝ հիմնականում բայական նշանակությամբ, ինչպես՝ ***հայրենակատար*** [7, 233] – «կամակատար հաճոյից Հօր», ***սնոտիագործ*** [7, 243] «ի սնոտիս գործեալ, մոլար», ***հայերէնախաւս*** [7, 241] «որ հայերէն խօսի», ***մշտնջենամոռունչ*** [7, 259] «միշտ մոնչող», ***վերնապարգև*** [7, 246] «ի վերուստ պարգևեալ»:

2. «**Արմատ + արմատ + ածանց**» կաղապարով են կազմվել ***դիւրահաւոյց*** [7, 249] – «որ դիւրաւ հասուցանէ կամ հասկացուցանէ», ***լեռնակեցու-***

թիւն [7, 258] «լեռնակեացն լինել» նորաբանությունները, որոնցում հեղինակային է վերջածանցումը: Այս շարքում եզակի օրինակ է ***օրինապատգամք*** «օրէնք և պատգամք աստուծոյ» բառը, որ առանց ածանցի տարբերակ չունի հայ հին մատենագրության մեջ: Անածանց և ածանցավոր տարբերակներով են գործածվում ***բանջարաճաշակ*** [7, 258] և ***բանջարաճաշակութիւն*** [7, 234][1] զույգերը՝ «ճաշակելն զբանջար ևեթ» իմաստով:

3. Բարդ հարածանցավոր նորաբանությունների շարքում առանձնանում է «**ածանց + արմատ + արմատ**» կաղապարով ***ընդունայնախաւս*** [7, 252] – «որ խօսի զսնոտիս և ընդունայն բարբառեալ» նորաբանությունը, որի կազմության մեջ հեղինակային է վերջին արմատի հավելումը:

4. «**Արմատ + ածանց + ածանց**», ինչպես՝ ***հայրաբարոյ*** [7, 243] – «ունօղ զբարոյս հօր իւրոյ», ***միաւաղաբարոյ*** [7, 242] «բարուք նման միաւաղաց», ***երկպատական*** [7, 256] – «որպէս երկպատիկ», ***միայնաւորութիւն*** [7, 253] «միայնակեցութիւն»: Նշված նորաբանություններում հեղինակային է երկրորդ ածանցի կիրառությունը, քանի որ այս բառերի մենածանցավոր կառույցները գործածական են եղել հայ հին մատենագրության էջերում:

5. Հարածանցավոր կազմություններում բառակազմական կաղապարով՝ «**ածանց + արմատ + ածանց**», առանձնանում է ***աննիազական*** [7, 251] «անկարօտ և աննուազ» բառը, որով բնութագրվել է *անձն* գոյականը:

Կորյունի «Վարք Մաշտոցի» հեղինակային նորաբանությունները հիմնականում ածականներ և գոյականներ են, որոնք գործածվել են ինչպես բառաբաղադրիչներից ելնող, այնպես էլ փոխաբերական իմաստներով: Բայ-նորաբանություններից հանդիպել ենք երեք օրինակի, որոնցից երկուսը համադրական են, ինչպես՝ ***երկախառնել*** [7, 229]***, ամենաշնորհող*** [7, 238] անդեմ բայերը՝ «խառնիլ յերկս. վաստակակից և գործակից լինել», «ամեն ինչ շնորհող» իմաստներով, իսկ մեկը՝ հարադրություն է՝ ***առաքելածանօթ լինել*** «ծանօթ և տեղեակ լինել առաքելական վարդապետութեան»: Վերջինս գործածվել է իբրև դիմավոր բայ՝ սահմանական եղանակի անցյալ անկատար ժոմանակաձևով, օրինակ՝ «…և անասնաբարոյ աշխարհն Աղուանից մարգարէագէտք եւ ***առաքելածանաւթ*** և աւետարանաժառանգք լինէին, …» [7, 246]:

---

[1] ***Բանջարաճաշակութիւն*** նորաբանությունը Ագաթանգեղոսի երկում ենթարկվել է բառահատման՝ կիրառվելով ***բանջարաճաշակ*** [8, 1715] տարբերակով: Այն, որ և՛ ածանցավոր, և՛ անածանց տարբերակների հեղինակը Կորյունն է, վկայում է այն մասին, որ Կորյունի Վարք Մաշտոցի տարբեր բնագրերում նույնպես բառը մի դեպքում գործածված է ածանցմամբ, մյուս դեպքում առանց ածանցման, օրինակ՝ «քաղցի և ծարաւոյ և բանջարաճաշակութեանց», «բանջարաճաշակ լինելոյ»:

Կորյունի հեղինակային նորաբանությունները կարող են բնորոշվել լրիվ և մասնակի որոշիչներով: Լրիվ ենք անվանել այն նորաբանությունները, որոնց բառաբաղադրիչները առաջին անգամ հեղինակի երկում են միասնաբար գործածվել: Մասնակի են հատկապես բազմաբաղադրիչ նորաբանությունները, որոնց բաղադրիչներից միայն մեկի հավելումն է հեղինակային:

Ուսումնասիրելով Կորյունի «Վարք Մաշտոցի» երկի հեղինակային նորաբանությունների ներքերականական հարաբերությունները՝ բացահայտում ենք հին հայերենի բառակազմական կաղապարների նոր արտահայտություններ, որոնք, չնայած հիմնականում կազմվել են հայերենյան ընդհանուր օրինաչափություններով, այնուամենայնիվ երբեմն հեղինակային նոր կազմություններ են, որոնց ոչ միան բաղադրիչ արմատների և ածանցների համատեղ կիրառությունն է հեղինակային, այլ նաև կապակցելիության ձևերը՝ ըստ բառաբաղադրիչների ձևաբանական և շարահյուսական արտահայտությունների:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Աղայան Է., Լեզվաբանության հիմունքներ, Երևան, 1987:
2. Առաքելյան Վ., Ակնարկներ հայոց գրական լեզվի պատմության, Երևան, 1981:
3. Եղիազարյան Վ., Հայ հին գրականության պատմություն, Երեւան, 2014:
4. Հովհաննիսյան Լ., Նոր հայկազյան բառարանում չվկայված բառեր, Երեւան, 2010:
5. Հովսեփյան Լ., Գրաբարի բառակազմություն, Երևան, 1987:
6. Մալխասյան Ս., Հայերէն բացատրական բառարան, Երևան, 1944-1945:
7. Մատենագիրք հայոց, հ.1, Անթիլիաս-Լիբանան, 2003:
8. Մատենագիրք հայոց, հ.2, Անթիլիաս-Լիբանան, 2003:
9. Նոր բառգիրք հայկազեան լեզուի, Վենետիկ, 1837:
10. Կորյուն, Վարք Մեսրոպ Մաշտոցի, Առաջաբան, Երևան, 1994:

Изучение словообразования неологизмов в произведения Корюна, «Житие Маштоца»

Геворкян Нане
ВГУ, Армянский язык и литература, 2-ой курс

Резюме

Ключевые слова: *суффикс; корень; имя существительное; имя прилагательное; шаблон по словообразованию; собственные и нарицательные существительные*

Неологизмы Корюна в «Житие Маштоца» в основном включают прилагательные и существительные, употреблявшиеся как метафорически, так и со значениями, основанными на компонентах слов.

Среди авторских неологизмов Корюна особенно интересны слова, образованные корнями «*патум*» («*պատում*») и «*кир*» («*կիր*»). Основы, прибавляемые к этим корням, употреблялись в различных синтаксических значениях в зависимости от того, указывает ли основа на лицо, предмет или признак. Авторские неологизмы Корюна также можно охарактеризовать как полноценные и частичные. Полноценными называются те неологизмы, словесные компоненты которых впервые употреблены вместе в произведении автора. Если авторским является только один компонент, неологизм называется частичным.

Examination of Neologisms in Term of Word Formation in Koryun's "The Life of Mashtots"

Gevorgyan Nane
VSU, Armenian Language and Literature, 2nd course

Summary

Keywords: *suffix; root; noun; adjective; word-formation template; proper and common nouns.*

Koryun's neologisms in "The Life of Mashtots" mainly include adjectives and nouns that were used both metaphorically and with meanings formed on the basis of the components of words.

Among Koryun's authorial neologisms, the words formed with the roots '*patum'* («*պատուճան*») and '*kir'* («*կիր*») are particularly interesting. The derivative bases added to these roots were used in various syntactic meanings, depending on whether the derivative base denotes a person, a subject or an attribute. Koryun's authorial neologisms can also be characterized as complete and partial. Complete neologisms are the ones the word components of which were first used together in the author's work. If only one component is authorial, the neologism is called a partial one.

Ածականի կապակցելիական առանձնահատկությունները Պարույր Սևակի «Երգ երգոց» պոեմում

Թամարյան Անուշ
ՎՊՀ, Հայոց լեզու և գրականություն, մագիստրատուրա, 2-րդ կուրս
Գիտական դեկավար՝ բ. գ. թ., դոցենտ ***Լ. Պետրոսյան***

Հանգուցային բառեր. *որակական, հարաբերական, իմաստ, ածական, քննություն, խոսք*

Առարկայի հարաբերականորեն կայուն և տարբերակված հատկանիշ ցույց տվող երկու խոսքի մաս կա՝ ածական և թվական: Ածականի տեղը խոսքի մասերի համակարգում և մասնավորապես առարկայի կայուն հատկանիշ ցույց տվող խոսքի մասերի խմբում որոշելու համար անհրաժեշտ է վեր հանել նրա յուրահատկությունը՝ ի տարբերություն թվականի: Ամեն մի առարկա առանձին վերցրած կարելի է նշել *մեկ* թվականով, բայց ոչ ամեն առարկա է, որ կարելի է բնորոշել *չարաճճի*, *խելոք*, *համեստ* ածականներով: Ածականով արտահայտված հատկանիշը առարկայի համար բնութագրող արժեք ունի [1, 71]: Այսպիսով, ածականները, ցույց են տալիս ոչ ինքնակա հատկանիշներ՝ առարկայի հատկանիշներ [5, 127]:

Պ. Սևակի «Երգ երգոց» պոեմի մեջ, ըստ մեր հաշվարկների, գործածվել են *98* ածականներ, որոնցից *47*-ը որակական են, իսկ *51*-ը՝ հարաբերական:

1. Հարաբերական ածականները, ըստ իմաստային խմբերի, արտահայտում են.

Պատկանելության հարաբերություն, ինչպես՝ *բիբլիական*, որ նշանակում է «աստվածաշնչական» [3, 333]:[1] Պոեմում *բիբլիական* հատկանիշով բնութագրվել են *անուն* և *սեր* գոյականները: Վերջին դեպքում ածականին հակադրվել է *հեթանոսական* հարաբերական ածականը՝ «Հեթանոսին և հեթանոսությանը վերաբերող՝ հատուկ հեթանոսի» [ԺՀԼԲԲ, էջ 332] իմաստով՝ գործածվելով որպես ստորոգելի, որին բացահայտչի շարահյուսական պաշտոնով լրացրել է *անպարկեշտ* ածականը, որի

[1] ՕՆԹ. այսուհետ բառարանից կատարված մեջբերումները կներկայացվեն կից ուղիղ փակագծերում՝ ԺՀԼԲԲ համառոտագրությամբ:

միջոցով ձևավորվել է ինքնատիպ շարահյուսական կապակցություն: Ընդհանրապես բացահայտիչը, լինելով գոյականական անդամի լրացում, պետք է լրացներ գոյականի, սակայն այստեղ լրացրել է ածականի և հեղինակային կետադրությամբ առանձնացել է բութով՝ գործածվելով իբրև մեկնաբանություն լրացում: Երկրորդ գլխում արդեն *բիբլիական* հատկանիշը փոխարինվել է *աստվածաշնչյան* որոշչով՝ վերագրվելով *սեր* գոյականին և հակադրվելով *հեթանոսական* հատկանիշին, որին որպես հոմանիշ է կիրառվում *անպարկեշտ* հատկանիշը, ինչպես՝ «Աստվածաշնչյան ա՛յն տեսակ սիրով» [4, Ա][2], «Որ երբ իր բառե շապիկն է հագնում, Թվում է այսօր հեթանոսական՝ Նույնիսկ անպարկե՛շտ» [Պ. Ս., գլուխ Ա]:

Նյութի հարաբերություն արտահայտող ածականակերտ ածանցը հեղինակային արտահայտություն է ստացել՝ կապակցվելով *բառ* գոյականին՝ ձևավորելով *բառե* մակդիրային նշանակությամբ որոշիչ-ածականը, որ լրացրել է *շապիկ* գոյականին: Իդեպ՝ համացանցային ԱՐԵՎԱԿ որոնողական ծրագրով պարզեցինք, որ *բառե* բառը հեղինակային նորաբանություն է, որ Պ. Սևակի երկերում հանդիպում է նաև բանաստեղծություններում՝ նույպես լրացնելով *շապիկ* գոյականին, այս անգամ ընդմիջարկվելով *գունեղ* ածականով, ինչպես՝ «Որ Ազատությունն իր բառե գունեղ շապիկը ճեղքած Տրվի ճախրանքի….»: Մեկ այլ բանաստեղծության մեջ *բառե* ածականը նույնպես ընդմիջարկվել է *նեղ* որոշչով՝ զուգահեռաբար կիրառվելով *տառե* հեղինակային որոշչով, ինչպես՝ «Որոնք աշխարհում Երբեք չեն հագել *բառե* նեղ շապիկ, Ու քայլ չեն փոխել *տառե* ոտքերով»: Հետագա շարադրանքում *նեղ* հատկանիշով է բնութագրվում նաև *խուց* գոյականը, ինչպես՝ «Որ իմ նեղ խցում Արևածագի պատրանքն զգամ ես» [Պ. Ս., գլուխ Բ]: Կրկնություն գեղարվեստական պատկերավորմամբ է հանդես գալիս *բառե շապիկ* արտահայտությունը նաև երկրորդ գլխում, ինչպես՝ «Որ երբ իր բառե շապիկն է հագնում» [Պ. Ս., գլուխ Ա]: Նյութի հարաբերություն է արտահայտում նաև *ե* ածանցով *մսե* հարաբերական ածականը, որ լրացնելով *շապիկ* գոյականին՝ երկու անգամ ձևավորել է մակդիր գեղարվեստական պատկերավորման միջոց, ինչպես՝ «Մինչ նա իմ միա՛կ շապիկն է. մսե՛...» [Պ. Ս., գլուխ Ա]:

Առասպելական հարաբերական ածականն արտահայտում է ժամանակային հարաբերություն, որով բնութագրվել է *նախապապ* գոյականը,

[2] Այսուհետ [Պ.Ս., Ե.Ե]

ինչպես՝ «Առասպելական քո նախապապի՝ Սողոմոնի՛ պես» [Պ. Ս., Ե.Ե., գլուխ Բ]:

2. Որակական ածականները պոեմում գործածվում են բառակազմական մի շարք առանձնահատկություններով, ինչպես *նեղ* ածականը գործածվել է *նեղլիկ* ձևով՝ ստանալով *իկ* նվազական-փաղաքշական ածանցը՝ լրացնելով *բառե շապիկ* բառակապակցությանը, ինչպես՝ «Որ երբ իր նեղլիկ բառե շապիկն է աշխատում հագնել» [Պ. Ս., գլուխ Ա]:

Որակական ածականների մեջ առանձին խումբ են կազմում քանակային հատկանիշ արտահայտող ածականները, որոնցից պոեմում երկու անգամ հանդիպում ենք *միակ* բառին, որպես *շապիկ* գոյականի լրացում, որ գործածվել է փոխաբերաբար՝ «Մեկ հատիկ, միայն մեկ» [ԺՀԼԲԲ, էջ 530] իմաստով:

Որակական ածականները բազմակի հարաբերությամբ են գործածվել որպես *լեզու* գոյականի որոշիչ, ինչպես՝ *«Պա՛ղ-արհեստակա՛ն ու ճապա՛ղ լեզվի Մի թարգմանությո՛ւն»* [Պ. Ս., գլուխ Ա]: Այս կապակցության մեջ որպես հեղինակային նորաբանություն է կիրառվել *«պաղ-արհեստական»* հարադրությունը, որտեղ հեղինակային կարող ենք համարել նաև «որակական ածական + հարաբերական ածական» կապակցությամբ բառակերտումը:

Փակ որակական ածականով է բնութագրվել *ծոց* գոյականը: Ի դեպ, այստեղ գործածվել է ածականական բառակապակցություն, և *փակ* ածականին է վերագրվել *դեռ* մակբայով արտահայտված ժամանակի պարագան:

Աստվածաշնչյան «Երգ երգոց»-ում *գեղեցիկ* ածականով է բնութագրվել Երուսաղեմը, որի հետ է համեմատվել դուստրը, ինչպես՝ «...Գեղեցիկ ես իբրև զԵրուսաղեմ...»: Պ. Սևակի «Երգ երգոց» պոեմում նույնպես *գեղեցիկ* ածականը գործածվել է իբրև ստորոգելի՝ երեք անգամ վերագրվելով *Սուլամիթա* անձնանիշ գոյականին: Այս շարքում նույն կերպ են գործածվել *կախարդիչ, անսովոր, նոր, սովորական* ածականները, ինչպես՝ «Գեղեցիկ ես դու, ինչպես բոլորը, Որոնց սիրում են, Եվ ո՛չ ավելի ու ո՛չ էլ պակաս: Ի՞նչդ է գեղեցիկ՝ ուրի՛շը կասի, Մինչդեռ ինձ համար դու գեղեցիկ ես, Ինչպես բոլորը, որոնց սիրում են: Եվ կախարդիչ ես, ինչպես բոլորը, Որոնց չեն տիրել: Ե՛վ անսովոր ես, Քանի որ նոր ես, Ե՛վ սովորական՝ քանի որ դու էլ Երբեք չես կարող չսիրած մնալ» [Պ. Ս., գլուխ Բ]:

Հականիշ զույգերով են գործածվել *հին* և *նոր* ածականները, որոնցից *հին* հատկանիշը գործածվել է գոյականաբար՝ կիրառվելով ներգոյական հոլովով՝ որպես ժամանականիշ առարկա, և *նոր* ածականով բնութագրվել է *տաճար* գոյականը, ինչպես՝ «Որքան որ հնում հավատափոխման – դարձի բերումը» [Պ. Ս., գլուխ Բ], «Եվ քեզ համբուրելն – առաջի՛ն անգամ – Նու՛յնն է, ինչ մի նոր տաճա՞ր ավերել» [Պ. Ս., գլուխ Բ]։

Որակական ածականը հեղինակային համեմատություն պատկերավորման միջոցով արտահայտված բացահայտիչ լրացումով է մեկնաբանվել նաև «Դու սև ես՝ ինչպես քո ժողովըրդի դարավոր բախտը» կապակցության մեջ, որտեղ ստորոգելի ածականը մեկնաբանվել է ինչպես կապական բառով ձևավորված կառույցով, որտեղ հատկանիշ է արտահայտում նաև *դարավոր* հարաբերական ածականը։ *Մև* հատկանիշով է բնութագրվել նաև *վարս* գոյականը՝ այս դեպքում արդեն ուղիղ նշանակությամբ, ինչպես՝ «*Մև են վարսերըդ*» [Պ. Ս., գլուխ Բ]։ Այս դեպքում հեղինակը հակադրության գեղարվեստական պատկերավորման միջոցով կիրառել է *ճերմակ* հականիշ ածականը, որով բնութագրվել է *դեռ փակ կուրծքը*, առաջին աստիճանում գործածվելով դրական, երկրորդ և երրորդ աստիճաններում՝ բաղդատական աստիճանով, ինչպես՝ «ինչքան ճերմակ է Դեռ փակ կուրծքը քո» [Պ. Ս., գլուխ Բ], «Ավելի՛ ճերմակ Միշտ անհալ ձյունից իմ Արարատի» [Պ. Ս., գլուխ Բ], Երրորդ դեպքում *սև* հատկանիշով է բնութագրվել հեղինակի աչքը, ինչպես՝ «Իմ աչքերի պես և ո՛չ մի սև աչք Դեռ չի ստվերել անգամ հայացքո՛վ» [Պ. Ս., գլուխ Բ]։

Ճերմակ հատկանիշը հետագա շարադրանքում փոխարինվում է *այնքան սպիտակ* բառակապակությամբ, որը, կապակցվելով լինել բայով ձևավորված ստորոգելիին, վերագրվում է հերոսուհուն՝ հրամայական եղանակով, որն, ի դեպ, կազմվում է առաջին հիմքից, ինչպես՝ «Մի՛ լինիր այսքան... այսքան սպիտակ» [Պ. Ս., Ե. Ե., գլուխ Բ]. Այնուհետև ճերմակ որոշչով են բնութագրվում հերոսուհու ատամները՝ համեմատվելով *կուրծք* գոյականի հետ, ինչպես՝ «Քո կրծքի նման ճերմակ են նաև քո ատամները» [Պ. Ս., գլուխ Բ]։

Ճերմակ-սպիտակ հոմանիշային զույգը հաջորդիվ փոխարինվում է *մաքուր* որոշչով՝ բնութագրելով *այտ* գոյականը, որ զուգահեռաբար բնութագրված է նաև *շիկնած* հարակատար դերբայ որոշչով, ինչպես՝ «Ա՛խ, այդ քո շիկնած այտերը մաքուր՝ Քո թուխ մազերով լուսապսակված» [Պ. Ս., գլուխ Բ], որին նույնպես հաջորդում է հակադրություն և *սև*

գոյականին փոխարինում է *թուխ* հատկանիշը՝ վերագրվելով *լուսապսակված մազերին*:

Ստորոգելի-ածականների շարքն է լրացնում *պարկեշտ* որակական ածականը, որ նույնպես վերագրվում է հերոսուհուն, որպես պայմանի պարագա երկրորդական նախադասության գլխավոր անդամ, ինչպես՝ «*Եթե պարկեշտ ես՝ Մի՛ ժպտա երբեք...*» [Պ. Ս., գլուխ Բ]:

Միրտ գոյականը բնութագրվել է *տրտում* ածականով, որ գործածվել է որպես ստորգելի, ինչպես՝ «Որքան տրտում է սիրտըս ա՛յն պահին, Երբ ինձ թվում է, թե չե՛ս սիրելու» [Պ. Ս., գլուխ Բ]:

Որակական ածականներին հատուկ են նաև գոյականաբար կիրառությունները, որոնցից *նման* ածականը միաժամանակ կիրառվել է գոյականաբար և ածականաբար, երկրորդ դեպքում որպես որոշիչ կապակցվելով *երջանիկ կախաղան* բառակապակցությանը՝ ձևավորելով որակական ածականներով, բայց բազմաբառ որոշչային խումբ, որի անդամները միմյանցից ստորակետով չեն առանձնանում, քանի որ կապակցված են ենթաստորադասական հարաբերությամբ, ինչպես՝ «Որտեղից – դարե՛ր – մարդիկ են կախվել՝ Ինձ նմաննե՛րը... Նման երջանիկ կախաղանի դեմ Ես չե՛մ բողոքում» [Պ. Ս., գլուխ Բ]: Գոյականաբար կիրառությամբ է գործածվել նաև *օտար* ածականը՝ *ս* դիմորոշ հոդով՝ բնութագրելով հեղինակին, ինչպես՝ «Որտեղի՞ց հապա Նրա արյունը օտարի՛ս սրտում» [Պ. Ս., գլուխ Բ]:

Երրորդ գլխում փոխվում է գունային ներկապնակը, և սև ու սպիտակ գույներին փոխարինում է *խարտյաշ* ածականը՝ վերագրվելով *աղջիկներ* գոյականին, ինչպես՝ «Երուսաղեմում երբևէ չեղած աղջիկնե՛ր խարտյաշ» [Պ. Ս., գլուխ Գ]:

Մեփական որոշչով է բնութագրվել *սիրտ* գոյականը, ինչպես՝ «Մեփական սի՛րտըս», որ զուգահեռաբար բնութագրվել է նաև *ծանր* ածականով, վերջինս նույնպես կրկնությամբ է հանդես եկել, ինչպես՝ «Նա ծա՛նր է դարձել, Եվ... ծանրը այնքա՛ն, Որ հազիվ մի ցուլ իր մեջքին տանի» [Պ. Ս., գլուխ Գ]:

Պարույր Սևակի հեղինակային կիրառություններից մեկն էլ վերաբերում է ածականների ինքնատիպ համադրություններին, գրական հայերենում ճիշտ է համարվում «հարաբերական ածական + որակական ածական» շարադասությունը, որպեսզի որակական ածականի հատկանիշը չվերագրվի հարաբերական ածականի կազմության մեջ գտնվող գոյականին: Պ. Սևակը հենց այդ վերաբերությամբ է կիրառել «որակական

ածական + հարաբերական ածական» կապակցությունը, ինպես՝ «Ազնիվ մարմարե մի վե՛հ աշտարակ», որտեղ *ազնիվ* որակական հատկանիշը վերագրվում է *մարմարե* ածականի կազմության մեջ գտնվող *մարմար* գոյականին:

Որակական ածականի մի հատկանիշն է բայական հարաբերությամբ բայերի ածականացումը, որից *կազդուրիչ* հատկանիշը վերագրվել է *գինի* գոյականին, ինչպես՝ «Ի՛նձ էլ սնուցեք կազդուրի չգինով» [Պ. Ս., գլուխ Գ]:

Պ. Սևակի հեղինակային նորաբանություններից է *ծանրաքար* ածականը, որ վերագրվել է *բեռ* գոյականին, ինչպես՝ «Կախված է նաև ծանրաքար մի բեռ» [Պ. Ս., գլուխ Գ]:

Ինչպես թանձրացական և վերացական գոյականների ժամանակ են երբեմն խախտվում տարբերակման սահմանները, այնպես էլ հարաբերական և որակական ածականների ժամանակ: Յուրաքանչյուր հարաբերական ածականի մեջ այս կամ այն չափով առկա է նաև հատկանշային-որակական իմաստ, ուստի և հարաբերական ածականների իմաստային զարգացումը հաճախ հասցնում է նրան, որ գերիշխող, էական է դառնում հարաբերական ածականի հատկանշային-որակական նշանակությունը, իսկ առարկայական հարաբերության նշանակությունը խամրում, մթագնում ու երկրորդական է դառնում: Հենց դրանով էլ վերանում է հարաբերական ու որակական ածականների հիմնական տարբերությունը, և, այսպիսով, հարաբերական ածականները վերածվում են որակականների [2, 132]: Այսպես հարաբերականության և որակականության սահմաններում է հանդես գալիս *տոնական* ածականը «Ոչ սովորական, արտակարգ» [ԺՀԼԲԲ, էջ 524] իմաստով: Պոեմում երկու անգամ գործածվել է, որպես *օր* գոյականի լրացում՝ ամենայն հավանականությամբ ինչպես որակական ածական:

Այսպես, նաև *մայրենի* ածականը «հարազատ, մորից փոխանցված» [ԺՀԼԲԲ, էջ 472] իմաստով կարող է մի դեպքում կիրառվել իբրև որակական, մյուս դեպքում իբրև հարաբերական ածական: Հայերենի բառապաշարում իբրև կայուն բառակապակցություն է գործածվում *մայրենի լեզու* արտահայտությունը, որտեղ մայրենի ածականը գործածվում է իբրև որակական ածական: Պ. Սևակը այս դեպքում կիրառել է հետաքրքիր պատկերավորում: Մայրենի լեզվով խոսելու կարողությունը վերագրելով Ադամին, ստեղծում է պարադոքս գեղարվեստական պատկերավորման

միջոց, քանի որ Ադամը մայրենի լեզվով խոսել չէր կարող, քանի որ մայր չուներ: Ըստ մեզ մայրենի լեզվով կարող են խոսել Եվայի զավակները:

Ուսումնասիրելով ածականների հեղինակային կապակցական առանձնահատկությունները Պ. Սևակի «Երգ երգոց» պոեմում՝ բացահայտեցինք մի շարք հեղինակային բառեր և կիրառություններ, որոնք բնորոշ են հեղինակի լեզվամտածողությանը: Այստեղ ածականները, կիրառվելով ուղիղ և փոխաբերական նշանակություններով, հանդես են բերում ինչպես ավանդական, այնպես էլ նոր կապակցական հնարավորություններ, որոնց բացահայտումն ունի կիրառական նշանակություն:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Աբրահամյան Ս., Ժամանակակից հայերենի քերականություն, «Լույս» հրատարակչություն, Երևան, 1969:
2. Ասատրյան Մ., Ժամանակակից հայոց լեզու, Ձևաբանություն, Երևանի համալսարանի հրատարակչություն, 2004:
3. Ժամանակակից հայոց լեզվի բացատրական բառարան, հ. 4, Երևան,1980:
4. Պարույր Սևակ, Երգ երգոց, http://sevak.am/lpoem/poem/ (29.05.2021):
5. Ջահուկյան Գ., Ժամանակակից հայերենի տեսության հիմունքները, Հայկական ՍՍՀ գիտությունների, ակադեմիայի հրատարակչություն, Երևան, 1974:

Соединительные особенности прилагательных в поэме "Песнь песней" Паруйра Севака

Тамарян Ануш
ВГУ, Армянский язык и литература,
Магистратура, 2-й курс

Резюме

Ключевые слова: *качественный, относительный, значение, прилагательное, изучение, слово*

Разделенные на два типа, качественные и относительные, прилагательные использовались в поэме Севака метафорически. Прилагательные неологизмы представляют особый интерес как новые выражения речи, используемые автором для представления уже используемых понятий.

В основном используемые в синтаксической позиции определения, прилагательные использовались как в однословных, так и в многословных структурах, дополняя диапазон множественных и многословных определений. Для выражения переносных значений прилагательные сформировали эпитеты, служившие основой для градации или контраста.

В сочетании с существительными, прилагательные также использовались в переносном смысле, передавая значение словосочетаний с существительными.

Словосочетания с прилагательными отличаются сочетанием нескольких свойств, раскрывающих индивидуальное отношение автора с помощью уникальных сочетаний.

Символы, выражаемые прилагательными, соответствуют библейским свойствам и различаются по своим соединительным характеристикам.

The Conjunctive Features of Adjectives in Paruyr Sevak's "Song of Songs"

Tamaryan Anush
VSU, Armenian Language and Literature,
MA the 2nd course

Summary

Key words: *qualitative, relative, meaning, adjective, study, word*

Classified into two types, qualitative and relative, adjectives have been used metaphorically in Sevak's work. Adjectives in the form of neologisms are of special interest as new expressions of speech used by the author to introduce concepts that have already been in use.

Mainly in the syntactic position of an attribute, adjectives have been used both in one-word and multi-word structures, complementing the range of multiple and multi-word attributes. To express figurative meanings, adjectives have formed epithets that served as a basis for gradation or contrast.

In parallel with nouns, adjectives have also been used figuratively, conveying the meaning of noun phrases in their usages.

Adjective phrases are distinguished by the combined use of several features, revealing the author's individual attitude with unique combinations.

Symbols expressed by adjectives are paralleled to biblical properties and differ in their conjunctive features.

Կնոջ կերպարակերտման արվեստը Գրիգոր Զոհրապի նորավեպերում

Թևոսյան Մելանյա
ԳՊՀ, Հայոց լեզու և գրականություն, 3-րդ կուրս,
Գիտական ղեկավար՝ բ. գ. թ. ***Լ. Թունյան***

Հանգուցային բառեր. *սուր և կարճ սյուժե, կուռ կերպար-համակարգեր, կին կերպարներ, բարոյականի և անբարոյականի սահմանագիծ, տղամարդկանց և կանանց հոգեբանական անդրադարձումներ*

Հայ գրականության հատընտիր ու անփոխարինելի էջերից են Գրիգոր Զոհրապի նորավեպերը: Զուր չէ, որ նրան կնքել են «նորավեպի իշխան» պատվանունով: Զոհրապի նորավեպերը իր ժամանակի կյանքի հայելին են ու ճշմարիտ վկայությունը, նորավեպերի մեջ կյանքն է, ինչպիսին որ կա, և կյանքից վերցված մարդիկ են՝ որոշակի հանգամանքներում որոշակի նկարագիր ձեռք բերած:

Չնայած նորավեպերի սեղմ ծավալին ու սուր և կարճ սյուժեին՝ Զոհրապն իր նովելներում ստեղծել է կուռ ու հստակ կերպարային համակարգ: Գրողի շարադրած յուրաքանչյուր տողը, կառուցած յուրաքանչյուր կերպարը ունի առանձին կարևորություն և նպատակ: «Կարելի չէ գտնել տող մը, զոր ավելորդ համարես իր գրվածքներուն մեջ, կամ վայրկյան մը ձանձրանաս իր երկերուն ընթերցումին մեջ: Իր նկարագրությանց մեջ հոյակապ, սակավապետ, նույնիսկ ագահ այնքան, որ անոնց վրա հիացած պահուդ իսկ՝ հանկարծ կ՝ավարտեին»,– գրել է Սիպիլը [10]:

Զոհրապի կերպարների մեջ առանձնակի դիրք և նշանակություն ունեն կանայք, որոնց հեղինակը պատկերում է տարբեր հանգամանքներում համապատասխան բնորոշումներով:

Զոհրապի կերտած կանացիական աշխարհն ունի իր փիլիսոփայությունը՝ մասնավորի և ընդհանուրի, այսինքն՝ անհատի և հասարակության, սիրո և երջանկության, կյանքի ու մահվան գոյաբանական ընթերցումներով և հոգեբանական հանգուցալուծումներով:

Զոհրապի նովելներում կանայք գեղեցիկ են, խուրձ մազերը ուսերին թափած, խոսուն նայվածքով, եղնիկի աչքերով ու ամեն պարագայում առանձնահատուկ շարժուձև ունեցող: «Կանացի հոգեբանությունը,– գրում է Զոհրապը,– իմ մեծագույն զվարճալիքս է, անծանոթ, անմատչելի

բևեռն է ան, որ Հյուսիսինեն ալ ավելի համառությամբ կը պահե իր թաքուն հրաշալիքները... կնոջական հոգվույն ամեն առեղծվածները լուծողի հովեր կառնեմ» [2, 348]: Եվ ավելացնում է. «Կիները գիտեն, որ կը սիրեմ իրենց հոգեկան հարցերովը զբաղվիլ, այդ խուլ պայքարներուն պատմագիրը ըլլալ: Մանավանդ որ իմ մեծ ներողամտությունս իրենց մեղանչումներուն համար տեսակ մը հրավեր է խոսելու» [3, 374]: Քանի որ Գրիգոր Զոհրապը կին-կերպարների պատկերումն իրականացրել է հոգեբանական վերլուծության կամ հոգեվերլուծության շնորհիվ, ապա վերոնշյալ մեջբերումը ոչ միայն Զոհրապի վերաբերմունքն է կնոջ նկատմամբ, այլև նրա աշխարհընկալումն ու մեթոդը: «Կանանց խնդիրները քննաբանվում են գոյի իմացաբանական չափանիշներով,– նկատում է Անժելա Քալոյանը որոնց մեջ առաջնային են կնոջ հոգեբանության փիլիսոփայական հիմքերի ընկալումները: Զոհրապի կենսափիլիսոփայությունը աշխարհի ու կյանքի բազմազանության, իմացաբանական ու հոգեբանական շերտերի խորքերն է թափանցում, հայտնաբերում հոգեբանության նրբագույն դրսևորումներ և այդտեղ տեղադրում նաև կնոջ էությունը՝ հերոսուհիների վարքագծի բացատրությունը բխեցնելով կենսաբանական գործոնի, բնության, բնական գրգիռների վճռորոշ առաջնայնության գաղափարից» [7, 2]:

Զոհրապի հերոսուհիներն ազատ են իրենց քայլերում, հաճախ նրանց որևէ քայլի մեջ կասեցնում է տվյալ պահին մտքում արտացոլվող մեկ մարդ, կամ մեկ դեպք, կամ էլ այնպիսի մի հիշողություն, որն անմիջական կապ ունի նրանց կյանքի տվյալ պահի կամ մի որոշակի ժամանակահատվածի հետ:

Հեղինակն իր ստեղծած կին կերպարներին նախևառաջ ներկայացնում է նախնական, բայց անհրաժեշտ գաղափար տվող ուրվագծերով, ապա միայն բացահայտում նրանց էությունը գործողության կամ բախման մեջ [6, 115]:

Կին-կերպարների ընդհանրությունները բավականին շատ են, նշանակալի է նաև տարբերակվածությունը: Երբեմն գրողը երկու հակադիր կերպարներ ներկայացնում է կողք կողքի, որպեսզի ընթերցողն այդ հնարքի միջոցով ավելի լավ ըմբռնի կերպարի առանձնահատկությունները, գրողը սրա միջոցով փորձում է կերպարն ընթերցողի աչքի առաջ դնել այնպիսին, ինչպիսին հենց ինքն է տեսնում և ինչպիսին ցանկանում է՝ տեսնի ընթերցողը:

Բարոյականի և անբարոյականի նուրբ սահմանագծում են տեղավորվում Զոհրապի «Փոստալ» և «Թեֆարիկ» նովելներում հանդիպվող կին կերպարները՝ Տիգրանուհին և Աշխենը: Այս կանայք որոշակի հանգամանքներում դառնում են սպասուհիներ, և այն, որ սպասուհի լինել նշանակում էր լինել անդիմագիծ մեկը, փաստվում է «Թեֆարիկ» նորավեպի հետևյալ տողերով. «Մարիամ կը կոչեինք զինքը: Մայրս ուրիշ անուն չէր ընդուներ սպասուհիներու համար, իր բուն անունը Աշխեն էր և այս կրկնամկրտությունը, որուն կ՚ենթարկվեր ահա առաջին քայլեն, օտար տուն ծառայելու սկսածին պես, իր բոլոր անցյալին, իր գոյության, իր անհատականության ուրացման պես տպավորություն մը կը թողուր իր վրա» [3, 32]: Երկու կերպարներն էլ կապ են հաստատում տան էֆենտիների հետ: Ամուսիններից զրկված այս երկու մանկահասակ տիկինները ջերմություն ստանալու կարիքի մեջ էին: Եթե Տիգրանուհու համար կապանքների թուլացման կարմիր գիծը լինում է երիտասարդի համակրությունն ու Սուրբիկ հանըմի թողտվությունը, ապա Մարիամի համար սև հագուստի՝ տաբատի փոխարինումն է շրջազգեստով՝ «Շրջազգեստը հեղաշրջում մը բերավ…» [3, 35]: Տիգրանուհու կերպարն ավելի թույլ ու ոչ կամային կերպար է, քան Աշխենի կերպարը: Եթե Տիգրանուհին իր քայլերի մեջ զգուշավոր էր ու վախվորած, ապա Աշխենն ավելի համարձակ ու կամային էր: Զոհրապը Տիգրանուհու կողքին պատկերել է նաև Սուրբիկ հանըմի կերպարը: Կին, ում պատճառով Տիգրանուհին կնքվում է Փոստալ և ում պատճառով նորավեպն ունենում է ողբերգական ավարտ: Նորավեպի հանգուցալուծումը միայն ապացույց է այն բանի, որ Զոհրապի կերտած կանայք ուժեղ են անձնապես. Տիգրանուհին ողջ կյանքն աշխատում է իր երեխայի գերեզմանին այցելելու և նրա մանկական սրտի ուզելիքը գերեզման տանելու համար:

Այս խմբի մեջ կարող ենք առանձնացնել նաև «Մագդաղինե» նովելի համանուն հերոսուհուն: Եթե Տիգրանուհին ու Աշխենը որևէ պահի թուլակամ գտնվելու պատճառով են ձեռք բերել նման պիտակ, ապա «Մագդաղինե» նովելի հերոսուհին անբարո ներկայացվում է ներավեպի ամենասկզբից: Բայց գրողը այս կերպարին ևս դրական հատկանիշներով է օժտում. մեծից մինչև փոքր գալիս էին աղջկա մոտ, պատճառն այն էր, գուցե, «որ այս տարօրինակ աղջիկը ուղղամտություն ուներ իր վաճառիկ սիրույն մեջն ալ» [3, 51]: Ինչպես վերը նշված երկու գործերը, այնպես ևս հետևյալ գործը ունենում է ողբերգական ավարտ. աղջկան սպանում են.

«Հոդ, այդ անկողնին վրա տարածված տեսա զինքը վերջին անգամ: Իր սովորության հակառակ ամբողջ ճերմակներ հագած էր, ձյունաթույր ու շլացուցիչ. ու միայն լանջքին վրա ձախ կողմը շապիկը կարմրած էր պզտիկ բոլորակով մը, այդ անբծության վրա բացված վարդի մը պես» [3, 51]: Այս նորավեպի հերոսուհու առանձնահատկությունն այն է, որ նա խոսում է կրոնական պատկանելության մասին: Աղջիկը հրաժարվում է հաղորդություն ստանալ, «Չեմ կրնար հաղորդություն առնել, քանի որ վերջը դարձյալ մեղք պիտի գործեմ» [3, 49],– ասում էր նա: Նորավեպի ավարտին, երբ հերոսուհին ցանկանում է հաղորդություն ստանալ, քահանան հրաժարվում է կատարել կարգը, կարծես ընդգծելով, որ անբարո կանայք ևս կարող են ունենալ հավատ:

Անբարոյականության թեմային անդրադառնալով՝ գրողը միաժամանակ արծարծել է նաև հասարակության սոցիալական ծանր վիճակը, քանզի երեք կերպարներն էլ ստեղծվել են սոցիալական խնդիրներ լուծելու համար. « Ինչո՞վ պիտի ապրիմ ես. քույրս, եղբայրս, ծեր յայաս պիտի ապրեցնեմ»,– նշում է «Մագդաղինե»-ի հերոսուհին [3, 50]:

Բարոյականի ու անբարոյականի հատման կետում է կերտված նաև Զոհրապի «Դիմակը» նովելի հերոսուհին: Գրողն իր կերպարների ստեղծման ու կերպարի զարգացման համար բավականին նուրբ ու մանրակրկիտ աշխատանք է տարել: Վերոնշյալ նորավեպը փաստում է, որ հաճախ բարոյականության և անբարոյականության իմաստները խառնվում են, այս երկու գծերի շարունակականությունը մեկ կետում հատվում է: Համարձակ ու նախահարձակ հերոսուհին պարահանդեսի ժամանակ առաջինն ինքն է մոտենում Ա. Յազճյանին, հարցուփորձ անում, սիրաշահում: Հերոսուհու կերպարի անկման ամենահամոզիչ տողերն են. «Ամբողջ մարմինեն՝ մանիշակի զգլխիչ բուրում մը կը ծավալեր, չնչին կանխավճար այն ամեն թաքուն հրապույրներուն, զորս այս հսկա վարդի թերթը կը պահեր իր ծոցին մեջ» [3, 109]:

Հեղինակը միաժամանակ ցույց է տվել, որ մարդն իր կյանքի ընթացքում մի քանի դիմակ է փոխում՝ այդպիսով այլկերպ ներկայանալով մարդկանց: Զոհրապն այս ամենը ցույց է տվել առարկայացված, իր հերոսուհուն ընդամենը մեկ դիմակի օգնությամբ դարձրել է անբարո կերպար: «Սիգաճեմ ու խրոխտ կին մը», որ անցուդարձողներին նայվածք անգամ չէր շնորհում, դառնում է «երիտասարդի շնչառությունը դժվարացնողն» ու «նրա անուշադրությունից վրդովվողը»:

Տոմինո-կերպարի առանձնահատկությունն այն է, որ հեղինակը կողք կողքի հավասարապես զարգացրել է նույն կերպարի անբարո և բարոյական կերտվածքերը: Եվ գեղարվեստական այս հնարքի շնորհիվ է նաև ընթերցողը զանազանում անբարո կանանց կերպարները ու նրանց բնորոշ առանձնահատկությունները:

Վերոնշյալ կերպարների համար առանձնահատուկ գիծ է նաև սոցիալական հասարակության հետ ունեցած նրանց փոխհարաբերությունները, այսինքն այն, թե ինչպես են նրանք փոխհարաբերվում իրենց շրջապատի մարդկանց հետ, հաղորդակցման ի՞նչ տարբերակներ են օգտագործում: Գրականագետ Զ. Ավետիսյանը գտնում է, որ սա նախևառաջ կապ ունի հասարակության՝ նրանց ինչպիսինը ընկալելու գաղափարի հետ, և պետք է դիտվի հարցադրման երեք ասպեկտով [5, 59].

- Ի՞նչ է ուզում նա,
- Ի՞նչ կարող է անել,
- Ի՞նչ է իրենից ներկայացնում:

Բոլոր պարագաներում, Զոհրապն իր յուրաքանչյուր կերպարաստեղծման ժամանակ մտածել է նրանց օժտել նաև դրական հատկանիշներով և բացարձակ չդարձնել հերոսի՝ լավ կամ վատ կողմերը:

Զոհրապի նորավեպերի կերպարները փոխլրացնում են միմյանց: Ինչպես արդեն նշել ենք, հեղինակն անբարո կին կերպարների կողքին կերտել է նաև բարոյական հերոսներ՝ ունեցածի հանդեպ պատասխանատվություն կրող ու նվիրվածության խորհրդանիշ-կերպարներ, որի լավագույն դրսևորումը «Այրին» նորավեպի հերոսուհի Զարդարն է: Երիտասարդ կին, ով ընդունված «ադաթների» զոհը դառնալով՝ մինչև կյանքի վերջ մնում է հավատարիմ, բայց անամուսին: Նշված երկու հակադիր բևեռ հանդիսացող կերպարներին տարանջատող գծերն են.

- Բարոյական կինը պետք է խուսափի տղամարդուն առաջինը սեր խոստովանել կամ ի դերև դնել իր սերը:
- Բարոյական կինը նա է, ով «գիտե իր սրտին ու իր մարմնին իշխել»:
- Բարոյական կինը հավատարիմ է իր ամուսնուն այնքան ժամանակ, քանի դեռ կենդանի է, նրա ուրախությամբ՝ հրճվում և տխրությամբ սպառվում է:
- Գերադասելի են նրանք, «որ առանց հաշիվ կը թերանան, քան թե անոնք, որ Սառային պես, հաշիվներու շնորհիվ, անթերի կը հանդիսանան մեր աչքին»:

- Հասարակության աչքին ներկայանալ այնպիսին, ինչպիսին կաս. բարոյական կնոջ համար խոչընդոտ լինել չի կարող՝ հասարակությանը այլկերպ ներկայանալու՝ դիմակավորվելու կամ տրամաբանական հաշիվներ իրականացնելու համար:

Վերցնենք «Վերադարձ» և «Կարծեմ թե» նովելները: Երկու նովելների մեջ տեսնում ենք մոռացված սիրո կերպարներ Մաքրիկին և Աննիկային: Զոհրապի ստեղծած այս հերոսները սկզբում սիրում են, խոստանում, հույս ու հավատ ներշնչում, հետո մեկընդմիշտ մոռանում կամ թեթևակիորեն հիշում: «Կանացի աչքը անոր մեջ խորունկ նայողին համար, վիհի մը վրա բացվող լուսամուտի մը տպավորություն կ'ընե միշտ, և այնքա՛ն անստուգություններ, հեղակարծ անակնկալներ կ'ընդնշմարվին հոն, որ աննենգ և անխարդախ բանը, զոր կը տեսնեի դեմիս աչքերուն մեջ՝ զիս կը հափշտակեր» [3, 171],- «Կարծեմ թե» նովելի մուտքը նախանշող այս տողերն անգամ ազդարարում են, որ դավաճանություն կարող է լինել, որ կնոջից սպասելի են նենգոտ ու խարդախոտ քայլերը:

«Հո՛ս, հոս, սրտիս մեջն ես, գաղտնի, խորունկ, անհարկի աչքերե ծածուկ տեղն ես դուն, միս մինակդ ու բոլորովին իմս, հասկցա՞ր» [3, 172],– սրանք Աննիկայի խոսքերն են, ով շարունակ սիրաշահող արտահայտություններ անելով՝ կարծես հավերժական սեր էր խոստանում իր սիրելիին: Մինչդեռ Մարքրիկը երբեմն բաժանման հարցադրումներ կամ հավանական ակնարկումներ էր անում. «Ի՞նչ կ՛ընես, հոգի՛ս, թե որ գալ շաբթու հանկարծ ելլեմ մեկու մը հետ կարգվիմ» [3, 144]:

Հետաքրքիր է այն, որ Զոհրապի ստեղծած հակառակ սեռի կերպարները շատ լավ հասկանում են կանացի հոգեբանությունը, և բոլոր պարագաներում կանխորոշում են ապագայում կատարվելիք գործողությունները: Մարքրիկի առաջին սերը՝ Գրիգորը, ահա, այսպես է խոսում Մարքիկի մասին՝ «Երթա՛ս բարով, երթաս բարո՛վ, այդ մարդուն քով, զոր հարկավ պիտի խաբես սիրո խոստումներով, ինչպես որ զիս ալ խաբեցիր. Բարի վայելում կը մաղթեմ իրեն» [3, 145]:

Ո՛չ Մարքրիկը, ո՛չ Աննիկան չեն հիշում իրենց առաջին սերերին, չեն խոստովանում իրենց վաղուց խոստովանած սերը, միայն կցկտուր պատասխաններ են տալիս ու մոռացումի խոսքերով պատասխանում հարցերին. «Կարծեմ թե տեղ մը տեսած ըլլալու եմ էֆենտին» [3, 176]:

Երկու կերպարներն էլ՝ որպես կին, ուժեղ են և կայացած: Միայն այն, որ կարողանում են թողնել առաջին սերը, կարգվել մեկ այլ մարդու հետ,

և տարիների ընթացքում մոռանալ նախկին սերը, խոսում է ուժեղ ու հաստատուն կամքի մասին:

Հետաքրքիր լուծումներով են կառուցված այս նովելները, այս երկու կանայք ոչ միայն ապագան պատկերավորողներն են, այլև անցյալը ներկայացնողները:

Ժամանակային մեծ ընդգրկում ունի նրանց գործունեությունը, և բացի այդ նրանք ստեղծում են վերհուշի տեսարաններ, նրանց շնորհիվ մարդը կտրվում է իրականությունից, տեղափոխվում անցյալ: Կանանց տեսնելիս երիտասարդ հերոսները վերապրում են արդեն իսկ ապրածը: Կերպարները ստեղծում են տարածաժամանակային մի այնպիսի միջավայր, որտեղ միահյուսվում են անցյալը, ներկան և ապագան: Հերոսները միաժամանակ բացահայտում են.

- Անցյալ-ներկա անքակտելի կապը,
- Անցյալի ու ներկայի դրոշմները մարդու վրա՝ արտաքնապես և հոգեպես,
- Անցյալում ունեցածը վերաարժևորելու և վերագնահատելու մարդկային կարողությունները:

Վերադարձող սերերը իրենց հետ ոչինչ չեն բերում, այս կին-կերպարները ստեղծված են խրատելու, և մյուս կերպարներին կյանքի տարբեր կողմերի մասին ընդհանրական գաղափար տալու նպատակով:

Այսպիսով՝

- Զոհրապն ունի կուռ և կայուն կին կերպարներ:
- Կանանց կերպարները ստեղծված են որոշակի խնդրի լուծում տալու համար, չկան աննպատակ կերտված հերոսներ, բոլորն էլ ստեղծվել են իրենց առաքելությունը կատարելու համար:
- Յուրաքանչյուր կնոջ կերպարը կերտելիս Զոհրապն առաջ է շարժվել նրանց հոգեբանական ապրումները հաշվի առնելով, հոգեվերլուծության արդյունքում հեղինակը ընդգծել է կերպարի անկումներն ու վերընթաց զարգացումները:
- Կերպարներին բնորոշ առանձնահատկությունները և հատկանիշները լիակատար կերպով բացահայտվում են գործողությունների կամ բախումների ժամանակ, թեև մինչ այդ հեղինակը ներկայացնում է կերպարների ընդհանուր բնութագիրը:
- Չկան միայն վատ գծերով օժտված կին կերպարներ: Զոհրապն իր բոլոր կանանց բնորոշել է դրական և լավ հատկանիշներով, ինչն

օգնում է խղճալ երբևէ խոտոր ուղով գնացածին, հետաքրքրվել դավաճան կնոջով և այլն:

- Կանանց կերպարները խորհրդանշական, բացատրող և խրատող կողմեր ունեն: Սա և՛ ընթերցողի համար է չափազանց կարևոր, և՛ տվյալ կերպարների հետ համընթաց զարգացող այլ կերպարների բացահայտման համար:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Զոհրապ Գր., Նովելներ, «Լույս» հրատարակչություն, Երևան 1978, 320 էջ:
2. Զոհրապ Գր., Նովելներ, Երևան, «Լույս» հրատարակչություն, 1987, 368 էջ:
3. Զոհրապ Գր., Երկեր, Երևան, ՀԱՅՊԵՏ հրատարակչություն, 1954, 394 էջ:
4. Զոհրապ Գր., Երկեր, Երևան, «Խոհրդային գրող» հրատարակչություն, 1989, 652 էջ:
5. Ավետիսյան Զ., Գրական ստեղծագործության հոգեբանություն, Երևան, ԵՊՀ հրատարակչություն, 2011, 241 էջ:
6. Հյուսյան Մ., Գրիգոր Զոհրապ, կյանքը և ստեղծագործությունը, ՀԱՅՊԵՏ հրատարակչություն, Երևան 1957, 375 էջ:
7. «Պատմաբանասիրական» հանդես, Անժելա Քալոյան, «Կնոջ կենսաբանական առեղծվածի զոհրապյան մեկնության իմացաբանական ակունքները», Երևան 2018, N1, 19 էջ:
8. https://digilib.aua.am/(10.01.2022):
9. http://matyan.am/ (10.01.2022):
10. https://hy.wikisource.org/wiki/ (21.01.2022):

Искусство женской характеристики в романах Григора Зограпа

Тевосян Меланья
ГУГ, Армянский язык и литература, 3-й курс

Резюме

Ключевые слова. *острый и короткий сюжет, женские персонажи, нравственно-аморальная граница, психологические ориентиры мужчины и женщины*

В статье мы посмотрели особенности изобразительного искусства Григора Зограпа. Как он формирует свои женские характеры, какие черты он им придает и какое значение придает им для развития дела и процесса Романа.

The Art of Creating Female Characters in Grigor Zohrap's Novels

Tevosyan Melania
GSU, Armenian Language and Literature, 3rd course

Summary

Keywords. *sharp and short plot, female characters, moral and immoral border, psychological guidelines of a man and a woman*

The article presents the peculiarities of creating art in Zohrap's novels. How he shapes his female characters, what qualities he endows them with, what importance he gives to them for the development and he procedure of the novels.

Հերմենևտիկական ուսմունքի և էդիպյան բարդույթի քննությունը «Էդիպ արքա» և «Համլետ» ողբերգություններում տարբերակվող հայեցակերպով

Կարապետյան Հասմիկ
ԵԹԿՊՀ, Սցենարադրամատուրգիական արվեստ,
մագիստրատուրա, 2-րդ կուրս,
Գիտական դեկավար՝ ԳԱԱ Գրականության ինստիտուտի
*բ. գ. թ., դոցենտ **Ս. Ավետիսյան***

Հանգուցային բառեր. *հերմենևտիկա, արքետիպեր, բարդույթ, միֆաքննադատություն, լիբիդո, ճակատագրապաշտություն, վրեժ, գուշակ*

Խոսելով երկու խոշոր ողբերգությունների՝ «Էդիպ արքայի» և «Համլետի» թե՛ կերպարային, թե՛ սյուժետային և թե՛ գաղափարական առանձնահատկությունների մասին և առանձնացնելով նրանց ընդհանրությունները՝ կկապենք և՛ հերմենևտիկական ուսմունքի, և՛ Ֆրոյդի «Էդիպյան բարդույթի», և՛ Նիցշեի արքետիպերի և մտածողության խորհրդանիշների հետ: Հիմք ընդունելով ողբերգությունների տեքստը՝ կհասկանանք նրանց կապը ճակատագրապաշտության (որը գլխավոր դեր էր կատարում անտիկ շրջանի ողբերգություններում), սպասումի, մահվան, մեղքի գաղափարների հետ:

Քանի որ գաղտնիությունն ու թաքնված գաղափարը ողբերգությունների գլխավոր հիմքն են կազմում, հարկավոր է սկզբում նշել, թե ինչպիսի դեր է խաղում հերմենևտիկան, և ինչպես ենք հասկանում այս *«հարացույցի»* [6] որոշիչ դերը տեքստերում՝ հետևելով Օ. Տուրիշևայի դրույթներին:

«Հերմենևտիկան ձևավորվել է անտիկ շրջանում և երկար ժամանակ գոյատևել է իբրև առասպելների, հնագույն գրականության նմուշների հետազոտման եղանակ» [6], այսինքն՝ եզրակացնում ենք, որ այս հարացույցը գոյություն ունի գեղարվեստական խոսքի սկզբնափուլից, ավելի ստույգ՝ ստեղծվել է անտիկ շրջանում: Իր բնույթով հերմենևտիկան *«…թաքուն իմաստ պարունակող իմաստային իրողությունն է»* [6], այսինքն կարևորվում է ոչ թե բառը, տողերը, տեքստերը, այլ վերջիններիս ենթատեքստային բնույթը:

Հերմենևտիկան ըստ Տուրիշևայի *«…հասունացնում է հենց այն գաղափարը, որ տեքստը՝ իբրև իմաստային իրողություն, գոյություն չունի»* [6]: Միաժամանակ առանձնացնում ենք նաև միֆաքննադատական

հերմենևտիկան՝ իբրև *դիցաբանության և գրականության միջև ծագումնաբանական կապի տեսական հիմք* [6]: Այսպիսով, երբ խոսում ենք միֆաքննադատության մասին, առաջին հերթին առանձնացնում ենք ծեսը, որից էլ բխում են գրականության կառուցվածքային շրջադարձերը *«Միֆի այն տարրերը, որոնք վերարտադրվում են հետագա շրջանի գրականության մեջ, ծիսական քննադատները նշեցին «միֆոլոգեմ» հասկացությամբ՝ նկատի ունենալով դիցաբանական մոտիվներն ու կերպարները, սյուժեները»* [6]*:* «Էդիպ արքայում» ծիսական տարր ենք նկատում հենց սկզբում, երբ Թեբեի հրապարակում Էդիպը որոշում է կայացնում վերջ դնել կործանարար ժանտին: «Համլետում», որքան էլ զարմանալի է, ծիսական արարողությունը մոր ու հորեղբոր հարսանիքն է, քանի որ հարսանիքի ընթացքում Համլետը իմանում է ողջ ճշմարտությունը:

Անդրադառնալով բուն հերմենևտիկային՝ սկսած անտիկ շրջանից մինչև Շեքսպիր ու արդի շրջան, կարող ենք պնդել, որ «Էդիպ արքա» և «Համլետ» ողբերգություններում նման տեքստերը քիչ չէին, և նույնիսկ մեկ բառի, մեկ նախադասության խորքային ուսումնասիրությունից հետո դրանք կարող են դառնալ ծավալուն հետազոտության նյութ: Եվ նախքան երկու ողբերգությունները ներկայցնելը, պետք է հաշվի առնենք այն փաստը, որ «Էդիպ արքա» և «Համլետ» ողբերգությունները տարբերվում են իրենց թե՛ կառուցվածքային առանձնահատկությամբ, թե՛ կերպարների հոգեկան նկարագրությամբ, և թե՛ բարդույթների համեմատությամբ: Մենք փորձելու ենք ներկայացնել երկու ողբերգությունների տարբերությունները, բայց ոչ նրանց նմանության պնդումները:

Օրինակներն ու համեմատությունները կներկայացնենք ծանոթագրություններից հետո, որպեսզի առավել ընկալելի լինի, թե ինչու ենք բերում հենց այդ օրինակները, և ինչպիսի շրջադարձեր են կատարում հերոսները՝ արտաբերելով նման տեքստեր:

Հաջորդը՝ պետք է ուշադրություն դարձնենք կերպարներն առավել պարզ հասկանալուն. դրանք Զիգմունդ Ֆրոյդի *«Էդիպյան բարդույթ»*- ում և Կառլ Յունգի *«արքետիպեր և սիմվոլներ»*- ում առաջ քաշած դրույթներն են, որոնք առավելապես միտված են կերպարների անհատական հոգեվիճակի սրմանը:

Համեմատելով Ֆրոյդյան սկզբունքը Էդիպի և Համլետի հոգևոր անկայունության հետ՝ նկատում ենք հակասություններ, որոնք չեն համապատասխանում նրանց մտքերին և արարքներին: Ֆրոյդն ինքը նշում էր, որ *«իր տեսությունը (հոգեվերլուծությունը) բանավեճ չի նախորդների հետ, այլ հավելում նրանց ասածին, և այդ հավելումները երբեմն շատ*

կարևոր են» [7]: Սակայն, երբ ծանոթանում ենք Ֆրոյդի հոգեվերլուծությանը բնորոշող հավելումներին, հասկանում ենք, որ շատ դեպքերում դրանք հակազդում են Էդիպի հոգեկան նկարագրությանը. *«Տեսաբանները գտնում են, որ նրա հավելումները գերազանցապես վերաբերում են հոգեկան աշխարհի իռացիոնալ, տրանսցենդենտալ (այնկողմնային) ոլորտին»* [7],– ֆրոյդյան այս մոտեցումը չի համապատասխանում Էդիպին, քանի որ *«վերլուծում է մարդու հոգեկան կառուցվածքի անտեսանելի շերտերը, նրա տարբեր մակարդակները, կապը այնկողմնային աշխարհի հետ, մարդու մութ, խորքային բնազդները, բնազդների և գիտակցության հարաբերությունը, մարդու վարքագիծը և գործունեությունը պայմանավորող ներքին հոգեկան ազդակները»* [7], իսկ Էդիպի հոգեկան անկայունության դեպքում մեծ դեր էր խաղում ճակատագրապաշտությունը *«Ապրեք այնպես, ինչպես բախտը ցույց կտա ձեզ յուր ուղին»* [5]:

Հակադիր է նաև Ֆրոյդի հետևյալ տեսակետը՝ կապված *«Այն»* տարրի հետ: «Այնը»՝ իբրև *մարդու հոգևոր աշխարհի անգիտակցական մակարդակ,* նման է *քաոսի, եփվող գրգռիչներով լի կաթսայի* [7], մինչդեռ Էդիպը մշտապես խաղաղ վիճակում էր գտնվում.

«Եվ թեպետ աստ երջանիկ եմ չափազանց ու ցնծավետ,
Բայց առավել հաճելի է և սրտատենչ
Ապրել՝ այնտեղ, ծնողների գորովագութ աչքի տակ» [5]:

Նշենք, որ մինչ *«էդիպյան բարդույթը»* Ֆրոյդն առանձնացրել է մարդկային հոգեկերտվածքի ձևավորման երեք մակարդակներ.

1. *«Ես» (էգո)*
2. *«Այն» (իդ)*
3. *««Գեր» ես» (սուպեր էգո)*

«Ես» – ը գիտակցությունն է, որից զրկված էր Էդիպը, բայց ուներ Համլետը: *«Այն»*-ը, որը հոգու անգիտակցական նախասկիզբն է, բնորոշում է Էդիպին, սակայն Համլետի դեպքում ի հայտ է գալիս այն ժամանակ, երբ արտաբերում է հայտնի *«Լինե՞լ, թե՞ չլինել…»* մենախոսությունը (այս մասին քիչ ուշ): *««Գեր»ես»-ը* մշակութային նորմերի ազդեցության տակ գտնվող անհատն է, որը կբացատրենք երկու հերոսների դեպքում էլ՝ կենտրոնանալով *«Ես» -ի* և *«Այն» -ի* վրա: Անդրադառնանք *«Էդիպյան բարդույթ»* ասվածին (անվանումից պարզ է դառնում, թե որ կերպարից է ծագել այս բարդույթը): *Բարդույթը չորս տարեկանում տղայի՝ իր մոր հանդեպ սեռական մղումներն են, որի պատճառով սկսվում է ատելությունը հոր հանդեպ* [8]: Սա այն հիվանդագին ցանկությունն է, որն առաջ

է քաշում Ֆրոյդը՝ ամրագրելով որպես ախտաբանական ոլորտ: Սակայն այս առումով ևս հակադրվում ենք այս տեսակետին, քանի որ Էդիպը հոր հանդեպ թշնամանք է տածում լոկ անգիտակցական մակարդակում: Նման անգիտակցական մակարդակը, երբ Էդիպը չգիտեր, որ սպանել էր հորը և ամուսնացել մոր հետ, հանգեցնում էր *«անձի դրսևորված ակտիվության»* երկու բնազդների՝ *էրոսի և թանատոսի (կյանքի և մահվան)* ախտանիշների: *Էրոսը*, որը կառավարում է մարդու սեռային ակտիվությունը՝ այս դեպքում Էդիպի կողմից արված գործողություններն են

1. *Փրկել ժողովրդին ժանտախտի վտանգից,*
2. *Խաղաղ երկնքի տակ ապրել իր «կնոջ» հետ:*

Ինչն էլ փաստում են հետևյալ խոսքերը.

«Ի՞նչ օգնությամբ, ի՞նչ ադոթքով ես կարող եմ փրկել քաղաքը:

Օրերն եմ ես արդեն հաշվում, սպասում եմ անհնագիստ (սպասումի երևույթը կա նաև «Համլետ» ողբերգությունում)*:*

Նա ի՞նչ եղավ, ինչո՞ւ չեկավ, անցավ արդեն շատ ժամանակ:

Իսկ երբ նա գա, կիրագործեմ ես ամեն ինչ ճշմարտությամբ:

Լավը կանեմ, կկատարեմ, ինչ հայտնել է ինքն աստված») [4]:

Էրոսի ախտաբանական նշանները գտնում ենք նաև Համլետի հերթական մենախոսության հետևյալ տողում.

«...Աստված իմ, Աստված,

Ինչպես տաղտկալի, անհամ ու տափակ, փուչ են թվում ինձ

Աշխարհի բոլոր վայելչանքները» [4]:

Էրոսի կողմից կառավարվող էներգիան Ֆրոյդն անվանում է *լիբիդո*: Լիբիդոն երկու դրսևորում ունի.

1. *սուբլիմացիան*, որը էներգիայի մշակումն է. ցավի, վշտի բացասական էներգիան դուրս մղելով՝ լցվում է ստեղծագործական էներգիայով: «Համլետում» այս երևույթը հաստատվում է այն ժամանակ, երբ հորեղբոր նյութած դավադրությանը չդիմանալով՝ նա փորձում է ստեղծագործական հնարքով (մկան թակարդը) որսալ ոճրագործի հանցավոր հայացքը, իսկ հետո մի փոքր թուլանալ, հանգստանալ գիտակցաբար: «Էդիպում» նման դրսևորում չենք տեսնում:
2. *սիմվոլիզացիան* ինքնափրկությունն է: Այստեղ կրքերը, վախերը գաղտնագրված տարբերակով են ներկայացված: Սակայն ինքնափրկությունը հասկանում ենք որպես վշտին ստեղծագործական գործընթացով փոխարինող մի երևույթ:

Թանատոսը, որը մահվան բնազդն է, խոսում է ենթատեքստային մի շարք հարցերի մասին՝ *«կյանքի նպատակը մահն է»*, որոնցից ամենա-

կարևորը հետևյալն է. *«Մարդիկ մահանալու անգիտակից ցանկություն ունեն, բայց կյանքն այդ բնազդները բնավորության է վերածում»:* Սա առավել բնորոշ է Համլետի հոգեվիճակին, քան Էդիպին, քանի որ Համլետը գիտակցված *«լինել-չլինելու»* հարցադրում էր դնում իր առջև և հերմենևտիկայի սկզբունքից դատելով՝ ներքուստ *«լինել-չլինել»* հարցն էր շոշափում: Այսինքն՝ ճշմարտությունն իմանալուց հետո Համլետը գիտակցեց, որ մահվան բնազդը (ֆիզիկական, հոգեկան) նստած էր իր մեջ, ձևավորվել էր՝ որպես *«բնավորություն»,* իսկ դրանից առաջ, երբ ապրում էր հորեղբոր կողքին, չգիտակցված լինելու փաստը հաստատում են հետևյալ տողեր.

«...Կսկիծի բոլոր ձև ու կերպարի, նշանների հետ
Կարող են երբեք հարազատորեն ներքինս հայտնել:
Դրանք բոլորն էլ բաներ են, որ մարդ կարող է խաղալ,
Բայց այստե՛ղ ներսում, այնպիսի մի բան կա, որ անց է ցույցից»[4]:

Իսկ հիմա կարդանք հետևյալ տողերը, որտեղ Համլետը խոսում է ոչ որպես անգիտակից անձ.

«...Ժամանակն իր շավղից դուրս է սայթաքել, օ՜, բախտ իմ դժխեմ,
Ինչո՞ւ ծնվեցիր, որ հենց ես ուղղեմ ...» [4]:

Ֆրոյդը պնդում է. *«...հարկավոր է ընդունել այն փաստը, որ իրերը այնպիսին չեն, ինչպիսին իրենց տեսնում ենք: Մարդկային վարքն ու գիտակցությունը ղեկավարվում են անգիտակցական դրդապատճառներով: Հոգեվերլուծությունը հաստատում է, որ վաղ ձևավորվող կյանքի փորձը բերում է ներքին աշխարհների կազմավորմանը...*[8]*»,* այսինքն, երբ անձի ներաշխարհից զատ, ձևավորում է նաև ներքին իրականությունը: Այս դրույթը չի համապատասխանում Համլետի ներաշխարհին, քանի որ Համլետի վաղ ձևավորված շրջանի կյանքի փորձում, երբ մայրը հոր հետ էր, երբ մայրը *«այնպես փարած էր ամուսնուն»*, նա առավել քան երջանիկ էր, սակայն հայրը մեռավ դժբախտ: Երբ սկսում ենք ճանաչել Համլետի ներքին իրականությանը, հերքում ենք այս դրույթը: Էդիպի դեպքում, ընդհակառակը, համապատասխանում է:

Մենք կարդում ենք.

«Մինչ ծնվել եմ ես նրանից, ումից պետք չէ, որ ծնվեի,
Ես կապվել եմ ամուսնության մահիճով նրա հետ... » [5]:

Էդիպը ծնվում է անգիտակցորեն՝ մեծանալով և չիմանալով հոր մահվան իրական պատճառը, ու հենց այս անգիտակցական մակարդակը ձևավորում է նրա ներքին աշխարհը: Չէ՞ որ կարող ենք պատկերացնել ճշմարտությունը (գիտակցությունը) իմանալուց հետո, նա դժվար է

բաժանվելու իր *«կնոջից»,* քանի որ ձեռք բերելով ամուսնական որոշ պարտականություններ (օրինակ՝ արդեն երեխաներ ունեին)՝ որպես *«կյանքի փորձ»,* նրա մեջ զարգացրեց *«ներքին աշխարհների կազմավորման»* տարրերը:

Անդրադառնանք Կարլ Յունգի անալիտիկ հոգեբանությանը, որտեղ խոսվում է հիմնական վեց արքետիպերի մասին.

- *Պերսոնա (դիմակ)*
- *Ստվեր (անհատի կողմից ժխտված ցանկացած հույզերն են, քանի որ չեն համապատասխանում սոցիալական իդեալներին)*
- *Անիմա (տղամարդու մեջ անգիտակցական կյանքի հիմքն է)*
- *Անիմուս (անգիտակցական տղամարդու հիմքը կնոջ մեջ)*
- *Էգո (գիտակցական կենտրոն)*
- *Ինքնություն (ամբողջականության մարմնացում)*

Մի կողմ թողնելով չորս արքետիպերը՝ Պերսոնա, Անիմա, Անիմուս, Էգո, կփորձենք կերպարները բացահայտել երկու ամենակարևոր հոգեկան իրողությամբ՝ *ստվեր և ինքնություն:*

Ստվերն անգիտակցականի միջուկն է: Կերպարի ստվերը ժխտում է այն հիշողությունները, հույզերը, ցանկությունները, որոնք չեն համապատասխանում սոցիալական ստանդարտներին և իդեալներին: Մեկ այլ բառով կերպարը դառնում է զոհը, որովհետև գիտակցում է սոցիալական իդեալները, նրանց կողմից առաջ քաշված *«ճշմարտությունները»:* Համլետի ստվերի բացասական կողմի հետաքրքիր նկարագիր է տվել գրականագիտության դոկտոր, շեքսպիրագետ Նշան Մուրադյանը՝ իր «Շեքսպիրի տիպերի հանրագիտարան» գրքում. *«Խառնվածքի տեսակետից ունենալով խոլերիկ նկարագիր, Համլոտը տևական վարժությամբ հասնում է այն բանին, որ ընդհանրապես կարողանում է սանձել իր պոռթկուն զգացմունքներով հարուստ բնավորությունը և նույնքան արագ էլ դիմել սառը բանականությանը»*[3]*:* Նշան Մուրադյանը բերում է հետևյալ օրինակները, որտեղ ակնհայտ երևում է Համլետի ստվերային-խոլերիկ նկարագիրը.

1. *«Երբ ընկերները թույլ չեն տալիս, որ նա գնա Ուրվականի հետևից, նա բացականչում է. «Թողե՛ք, պարոններ, ուրու կդարձնեմ ինձ արգելողին* [3]*»:* Այս օրինակը խոլերիկի այն տեսակն է բնութագրում, որին դժվար է զարմացնելը, քանի որ գիտեն, թե ինչ է իրենց հարկավոր և ինչպես պետք է գործեն:
2. *«Անտակտ է խոսում թագուհու հետ. «Ինչո՞ւ չէ, շատ լավ, թագուհին ես դու, տեքորդ կինն ես, ոչ բարով մայրս*[3]*»:* Փաստում է

Համլետի՝ մարդկանց հեշտությամբ ճանաչելու, կողմնորոշվելու հակումի մասին:

3. Երբ Համլետը բեմականցնում է «Սկան թակարդը» փաստում է նրա՝ դժվար իրավիճակում արագ որոշում կայացնելու, հաստատակամության մասին:

Սակայն Էդիպի դեպքում պատկերն այլ էր: Էդիպը լսեց նրանց (սոցիալական նորմերը իրենց մեջ կրող այդ ամբոխին), ովքեր բղավում էին. *«Մե՛ղք է մոր հետ ամուսնանալը, հայրասպանությունը մե՛ղք է»*: Այդ պատճառով Էդիպը, անգիտակցված ընկալելով այդ ամենը, կուրացնում է ինքն իրեն, բայց հետաքրքիր է, որ չի խլացնում. չէ՞ որ կարող էր խլացնել ինքն իրեն, որպեսզի չկարողանար լսել սոցիալական նորմերի *«տգետ»* ճշմարտությունը, քննադատությունը, Համլետի նման կարող էր ոչինչ չլսել, խենթանալ ու ապրել հանգիստ: Տառապանքի անվերջանալի ուղին ընտրելով՝ Էդիպը ևս ազնվանում է մեր աչքում:

Սակայն Համլետը ինչո՞ւ չէր համապատասխանում այս արքետիպին: Միայն այն դրույթը, որ Համլետը հանուն հոր վրեժի սպանեց հորեղբորը՝ գիտակցելով իր արարքի հետևանքները, մեզ ստիպում է չհավատալ նրա մեղսագործ լինելուն: Համլետին շրջապատող մարդիկ կարծես *«երջանիկ»* էին, որ մայրը ունեցավ երկրորդ ամուսնությունը.

«***Հորացիո.***

Տեր իմ, ես եկա Ձեր հոր թաղումը տեսնելու համար:

Համլետ.

Խնդրեմ մի ծաղրիր, ուսանո՛ղ ընկեր: Կարծեմ թե եկար մորս հարսանիքը տեսնելու համար»[4]:

Եվ հետևյալ հատվածում, որտեղ Համլետը դեռևս անգիտակցական մակարդակում է (չի հանդիպել հոր ուրվականին).

«***Հորացիո.***

...Փողեր, թնդանոթ բեմի ետևից:

Այս ի՞նչ է, տե՛ր իմ:

Համլետ.

Արքան այս գիշեր տոն է կատարում և խնջույք ունի... [4]»:

Համլետը, արհամարհելով իրեն շրջապատող նորմերը, սուտ *«ճշմարտությունները»,* չի մասնակցում հարսանիքին, իսկ հետո, *«գիտակցական»* մակարդակի անցնելով (երբ հանդիպում է հոր ուրվականին), նկատում է, որ իրեն արդեն «խելագար» են անվանում:

Այսպիսով՝ կարող ենք փաստել, որ որևէ իրավիճակում, երբ ամբոխի ալիքին «դեմ ես գնում»՝ գիտակցելով, որ հանրությունը տեղյակ է քո

ճշմարտության «բանալիից», որով պիտի բացվեր նրանց մերկացնելու, խայտառակելու միակ ու հուսադրող դուռը, ասում է.

«Թագավոր.

Չեմ սիրում նրան (Համլետին), ոչ էլ մեզ համար ապահով բան է, Թույլ տալ, որ նրա խելագարությունն ազատ թափառի…» [4]*:*

Խոսելով *«զոհի»* կարգավիճակի մասին՝ կարող ենք ասել, որ Համլետը *«չէր ուզում»* հանգամանքների զոհը դառնալ (չէ՞ որ կարող էր, ճշմարտությունն իմանալով, *«լռելու»,* հանգիստ ապրելու, ինքն իրեն «հիմարի տեղ դնելու» անգիտակցական ուղին ընտրել) ու չի էլ դառնում: Այստեղ նա արնախում մարտիկ է. ողբերգության սկզբից մինչև ավարտը ոչ ոք ողջ չի մնում, ոմանց սպանել է Համլետը, ոմանք էլ սպանվել են այլ հանգամանքներում: Ողբերգությունն այն է, որ բոլորը սպանվել են, ոչ թե իրենց մահով մահացել, Համլետը, վրեժից *«կուրացած»,* ետ է բերում ճշմարտությունը և իրենից հետո նոր սերունդներ թողնում շարունակելու համար հետագա պայքարը: Համլետը, այսպիսով, ավելի ուժեղ էր, քան Էդիպը:

Էդիպը ոչ միայն բարոյական նորմերի ազդեցության տակ ընկած «զոհի» կարգավիճակում էր, այլև միակն էր իր անգիտակցության մեջ, ինչին սեփական բանականությունը չկարողացավ կառավարել. տրվեց սադրանքներին, իսկ հետո որպես ինքնափրկություն՝ կուրացրեց իրեն, բայց չկուրացրեց հոգին: Նա նժարին դրեց ինքն իրեն. այն ժամանակ աչքեր ուներ, բայց հոգին էր կույր, հետո աչքերն էին կույր, բայց հոգին պայծառատես էր: Էդիպը «զոհ» էր նաև այն պատճառով, որ աստվածները, իմանալով նրա դժբախտության մասին (անգիտակցության), այնուամենայնիվ, պատժում են նրան:

Ի՞նչ է *ինքնությունը.* Անձի այն կենտրոնն է, որտեղ տեղի է ունենում անգիտակցականի և գիտակցականի ադապտացումը: Այստեղ գիտակցությունն ու անգիտակցությունը պատասխանատվություն են կրում անձի և՛ հոգեկան, և՛ կենսաբանական պահպանման համար:

Ինքնության խախտվածությունը հանդիպում ենք թե՛ Էդիպի, թե՛ Համլետի պարագայում, և երբ նրանց մեջ խախտվում է վերը նշված համակարգը, նրանք ձեռք են բերում նյարդային շեղումներ, իսկ հետո Էդիպը ամուսնանում է մոր հետ, իսկ Համլետը սկսում է սպանել հոր պատճառով:

Այս առումով առանձնացնում ենք *«կոլեկտիվ անգիտակցականը»*՝ բնութագրելով մարդու հոգեկանի այն մասը, որը պայմանավորված չէ տվյալ մարդու սեփական փորձով, այլ ավելի շուտ կրում է նախնիների

կողմից թողած *«ժառանգական»* հոգեմտավոր մշակույթի ազդեցությամբ: Այս երևույթը մարդուն անջատում է սեփական կարծիքն ունենալու ձգտումից և ստիպում նրան *«գործել»* այնպես, ինչպես անցյալում «գործել» են նախնիները: Օրինակ՝ Էդիպը, անչափահաս լինելով, ամուսնացել է, քանի որ նախնիներից թողած կարգը այդպիսին էր, Համլետը, հասկանալով նախնիների կողմից արված սխալները, ակնարկում է.

«...O՜, բախտ իմ դժխեմ,
Ինչո՞ւ ծնվեցի, որ հենց ես ուղղեմ...» [4]*:*

Այսքանով չեն ավարտվում Ֆրոյդի և Յունգի առաջադրած բարդույթների համեմատությունները, սակայն հերոսների կյանքում գլխավոր շրջադարձային պահերը բնութագրում են հենց վերը նշված դրույթները: Այսպիսով՝ քննենք հերոսների կյանքում ամենակարևոր գաղափարները, որոնք առկա են նաև ողբերգությունների կառուցվածքում.

- *Ճակատագրապաշտությունը «Էդիպ արքա» և «Համլետ» ողբերգություններում:*
- *Վրեժը՝ որպես վերահսկիչ ուժ:*
- *Գուշակները՝ որպես ուղղորդող կերպարներ:*

Ճակատագրապաշտությունը: Ընդհանրապես անտիկ և միջնադարյան շրջանի գրեթե բոլոր գործերում գլխավոր ու որոշիչ դեր է խաղում հենց ճակատագիրը: Այդպիսով՝ ճակատագրապաշտական տարրերն են փոխում թե՛ սյուժետային ընթացքը, թե՛ հերոսների՝ իրենց նպատակին հասնելու հիմնական գործողությունները: Քանի որ անտիկ և միջնադարյան գործերում ճակատագրապաշտական տարրերի օրինակները շատ են, կներկայացնենք ընդամենը երկու գործեր, որտեղ ֆատալիզմը առավել վճռորոշ ու գլխավոր դեր է խաղում:

Ճակատագրապաշտությունը փիլիսոփայական ուսմունք է, որը շեշտում է բոլոր իրադարձությունների կամ արարքների հպատակությունը ճակատագրին կամ անխուսափելի կանխորոշմանը [9]: Ողբերգություններն են՝*«Շղթայված Պրոմեթևսը»* և *«Անտիգոնեն»*: *«Շղթայված Պրոմեթևսը»* ողբերգությունում միայն Պրոմեթևս անունը, որը նշանակում է «գուշակ», բավական է, որպեսզի ենթադրենք կերպարների՝ ճակատագրի հետ անմիջական շփումը սյուժետային շրջադարձերում: Պրոմեթևսը մեկն էր այն *«տիտաններից»* (այս դեպքում նա ոչ թե տիտան էր, այլ մարդկային տոհմից տոհմի խորհրդանիշ դաստիարակ և հովանավոր), որ, Օլիմպոսից գողանալով Զևսի կրակը (կրթության, լույսի, գիտակցության խորհրդանիշը), բաժանում է մարդկանց ու պատժվում Զևսի կողմից՝ գամվելով Կովկասյան ժայռին:

Եթե այս պատմությունից հանենք ճակատագրապաշտական բոլոր տարրերը, ապա կդառնա հասարակ, միֆական տարրերով պատմություն՝ սադոմազոխիստական բոլոր երանգներով, իսկ հերոսն ընդամենը զոհ կդառնա: Սակայն, երբ ողբերգությունը սկսում ենք ընկալել՝ ֆատալիզմին ծանոթ բոլոր նրբերանգները հաշվի առնելով *(գաղտնագրված տեքստեր),* հասկանում ենք հետևյալը. Պրոմեթևսը, որն ի սկզբանե գիտեր իր ճակատագրի դժբախտ ընթացքի մասին (պիտի պատժվեր՝ *«լույսը»* տարածելու պատճառով), ասում է.

«...Հարկ է կրել կանխորոշված ճակատագիրն անտրտունջ,
Չի անպարտ է անհրաժեշտի ուժը միշտ:
Բայց դժվար է ինձ և՛ խոսել, և՛ լռել.
Ճակատագրի այս լուծը ինձ վիճակվեց,
Որովհետև մարդկանց բարիք տվեցի» [1]*:*

Այդպիսով ընկալում ենք հանուն լույսի, գիտակցության, կրթության տարածման Պրոմեթևս-զոհի կերպարը, ում արարքը գոհացուցիչ է համարվում, հատկապես երբ գիտեր, որ պիտի Զևսի կողմից տառապանքի արժանանար ու *«շանթի հարվածից գահավիժեր անդունդը»*[1], սակայն զոհաբերեց իրեն. Պրոմեթևսը արդյո՞ք հասավ իր նպատակին: Ի դեպ, ողբերգության վերջում, երբ գալիս է Հերմես աստվածը (ով հերմենևտիկայի հիմնադիրն էր համարվում), հասկանալով Պրոմեթևսի զորեղ լինելը, գիտակցելով նրա լուսավոր միտքը, պիտակավորում է նրան որպես «խենթ» մի արարածի: Ինչպես վերևում նշեցինք, Համլետի հորեղբայրը ևս նրան պիտակավորել էր այդպես: Հերմեսն ասում է. *«Տեսնում եմ՝ մեծ խենթությամբ ես դու հիվանդ»* [1], այսպիսով ապացուցում է, որ Պրոմեթևսն ունի գիտակցություն և կառավարում է այն՝ նետելով Հերմեսին հետևյալ խոսքերը.

«Կանխավ գիտեի, թե ինձ ինչ լուրեր
Պիտի սա հայտնի.
Անվայել չէ, երբ տուժում է
Ոսոխն իր ոսոխներից:
Թող նա շպրտի ինձ վրա շուտով
Կրակե երկճյուղ, գալարուն շանթեր,
Թող հուզի եթերն այրող որոտով,
Վայրի հողմերով, և թող երկրի
Հիմքերը ցնցի ընդերքի քամին:
Ծովի ալիքներն ահեղ աղմուկով
Թող որ խառնվեն երկնի աստղերի

Ուղիների հետ, թող այս բարձունքից
Մարմինս նետի նա սև Տարտարոս,
Բայց ճակատագրի ժանտ պտույտի մեջ
Նա ինձ ոչ մի կերպ չի կարող սպանել» [1]:

«Անտիգոնեում» ճակատագրապաշտական տարրերն առավել հստակ են դառնում, երբ հասկանում ենք, որ նա Էդիպի դուստրն է: Անգիտակցաբար մեղքից ծնված ու ճակատագրով դատապարտված Անտիգոնեն պիտի ինքնասպանություն գործեր *(դատապարտելի մեղք)*: Անտիգոնեի անթաղ եղբոր՝ Պոլինիկեսի դին խորհրդանշում է Կրեոնի (Թեբեի արքայի, ում որդու՝ Հեմոնի հետ ամուսանցել էր Անտիգոնեն) հետագա դժբախտ ճակատագիրը.

«Ողբը կանանց և այրերի, որ քո տնից կտարածվի,
Ու խռոված քաղաքները կելնեն քո դ եմ...» [1]*:*

Ճակատագրապաշտությունը «Էդիպ արքա» ողբերգությունում ընդգծվում է հատկապես այն դրվագում, երբ վերջինս, իմանալով Լայոսի սպանության մասին (հայրն էր, ում սպանում է Էդիպը՝ չիմանալով այդ մասին), կոչով է դիմում ամբոխին.

«...կա՛մ կլինենք մենք երջանիկ, կա՛մ պետք է մենք խորտակվենք»[1]:

Համլետը, որոշելով թակարդ լարել ոճրագործի դեմ, սպանում է նրան, հետո դիակը հանձնում մարդկանց՝ ասելով.

«Նրան եմ տալիս մահամերձ ձայնս:
Պատմի՛ր այս նրան, այն դեպքերի հետ ավել կամ պակաս:
Որ պատճառ դարձան....մնացորդը լռություն» [4]*:*

Համլետը մեռնում է: Այդպիսով՝ կորցնում խոսելու ունակությունը (իմանալով՝ երբ կորցնի խոսելու ունակությունը, ոչ ոք չէր գիտենա, թե ինչ էր զգում ճակատագրի կողմից (հոր) տրված վրեժը, միաժամանակ թաքցնելով այն բոլորից, քանի որ «գիտենայիր էլ, դա ինձ այնքան պատիվ չէր բերի»), հետևաբար Համլետը չխոնարհվեց ճակատագրին, ու ինքը որոշեց, թե ինչպես մեռնի:

Էդիպին, սակայն, կրկին ճակատագրի զոհի կարգավիճակում ենք տեսնում. Կորցնում է տեսնելու ունակությունը, բայց իր կողմից արված անգիտակցված մեղքի մասին միշտ *«լսելու»* էր...Այդպես էր տառապելու:

Վրեժը՝ որպես վերահսկիչ ուժ. Կարող ենք պնդել, որ վրեժի ծարավը՝ Համլետի մեջ, իսկ մի քանի դրվագներից հետո՝ նաև Էդիպի, հիմնավորված ենք համարում:

Էդիպը Լայոսի մահվան վրեժը լուծում է, որպեսզի ժանտախտը վերանա ու մարդիկ չմեռնեն, քանի որ, երբ Կրեոնը հայտնում է, որ

«Աքսորելով, կամ լվանալ արյամբ արյուն, այն արյունը, որը տանջում, ալեկոծում է քաղաքն...» ստիպում է Էդիպին ինքնազոհաբերման գնալ:

Համլետն այս դեպքում վրեժը լուծում է, որպեսզի արդարությունը տեսներ ու *«...գոռ բախտի պարսաքարերն ու սլաքները»* քարշ չտար, չանիծեր իր *«բախտը դժխեմ»*: Երկու դեպքում էլ հոր գաղափարը գերակայում է:

Գուշակը՝ որպես ուղղորդող կերպար. Հիշատակեցինք «Շղթայված Պրոմեթևսը», որտեղ գուշակը հենցն ինքն էր, սակայն Հերմեսը, որ ներկայացվում էր որպես չար կերպար, փորձում էր գրավել գուշակի տեղը, այդպիսով սխալ ճանապարհով էր ուղղորդում Պրոմեթևսին:

«Անտիգոնեում» գուշակը՝ Տիրեսիասը, *«լավ», «ճիշտ»* ուղղորդողներից էր, որ Կրեոնին գուշակում է նրա դժբախտ ապագան ու հորդորում ազատ արձակել Անտիգոնեին՝ թաղելու համար իր եղբորը:

Սակայն *«Էդիպ արքա»* ողբերգությունում նույն Տիրեսիասը ներկայացված էր իբրև «չար» ուղղորդող կերպար. Նա Էդիպին ասում է. *«Թեկուզ գաղտնիքը թաքցնեմ ես լռությամբ, դա կբացվի ինքնիրեն»*: Պատկերացրեք, եթե Տիրեսիասը այստեղ *«չար»* չլիներ ու պատմեր Էդիպին՝ նրա անգիտակցական վիճակի մասին, շատ ավելի արագ կկանխվեր այն, ինչ տեղի ունեցավ հետո: Նույնիսկ Տիրեսիասի նետած ճշմարիտ, բայց լկտի խոսքերը. *«Գիտե՞ս, ո՞վ է ծնողը քո ...»,* արդեն իսկ մատնում է Տիրեսիասի՝ որպես չար կերպար լինելու ճշմարտությունը. Իրականում և՛ Էդիպը, և՛ Համլետը չէին ճանաչում իրենց ծնողներին:

Ամփոփելով մեր դիտարկումները՝ գալիս ենք այն եզրահանգման, որ գրականությունը, առնչվելով թե՛ հերմենևտիկայի, թե՛ ֆրոյդյան ու յունգյան ուսմունքի, միֆաքննադատության հետ, ստեղծում է լեզվառճական յուրօրինակ ու ինքնատիպ կառուցվածք, որը բացահայտում է և՛ հերոսների հոգեկան աշխարհը, և՛ բառերի տակ թաքնված ենթատեքստերը:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Անտիկ, միջնադարյան և վերածննդի գրականություն. Անտիգոնե, Երևան, Արևիկ հրատ., 1990:
2. Անտիկ, միջնադարյան և վերածննդի գրականություն. Էդիպ արքա, Երևան, Արևիկ հրատ., 1991:
3. Մուրադյան Նշան, Շեքսպիրի տիպերի հանրագիտարան, Վան Արյան հրատ., Երևան 2017:
4. Շեքսպիր Ու., Համլետ, Երևան, Անտարես հրատ., 2015:
5. Սոֆոկլես, Ողբերգություններ. Էդիպ արքա, թարգմ. Արամ Թոփչյան, Երևան, Արևիկ հրատ.,1990:
6. Տուրիշևա Օ. Ն. Արտասահմանյան գրականագիտության տեսությունը և մեթոդաբանությունը, Երևան, Երևանի պետական համալսարան հրատ., 2017:
7. Քալանթարյան Ժ., Քննադատությունն իբրև գործնական գրականագիտություն, Երևան, Երևանի պետական համալսարան հրատ., 2017:
8. http://www.hogeban.info/ (15.03.2022)
9. https://www.wikiwand.com/hy/ (16.03.2022)

Исследование эдипова комплекса герменевтического учения с дифференцированной концепцией в трагедиях «Царь Эдип» и «Гамлет»

Карапетян Асмик
ЕГИТиК, Сценарно-драматургического искусства,
Магистратура, 2-ой курс

Резюме

Ключевые слова: *герменевтика, архетипы, комплекс, мифокритика, либидо, судьба, месть, гадание*

Литература, которая связана как с герменевтикой, так и с учениями Фрейда и Юнга, создаёт уникальную и оригинальную языковую структуру, которая раскрывает «ментальный мир героев» и скрытые за словами подтексты.

Study of the Oedipus Complex of Hermetic Teaching with a Differentiated Concept in the Tragedies “Oedipus the King” and “Hamlet”

Karapetyan Hasmik
YSITC, Art of Scriptwriting and Dramatic Stage Composition,
MA the 2nd course

Summery

Key words: *hermeneutics, archetypes, complex, mytho-criticism, libido, fate, revenge, fortune-telling*

Literature, which is associated with both the hermeneutic and the teachings of Freud and Jung, creates a unique and original linguistic structure that reveals the “mental world of heroes” and the implications hidden behind words.

Հայ գիտական հրապարակախոսության մեջ դրսևորված տիեզերագիտական օտարաբանություն-տերմինների լեզվական քննություն

Կիրակոսյան Մյուզաննա
ՎՊՀ, Լրագրություն, 3-րդ կուրս
Գիտական ղեկավար՝ բ. գ. թ., դոցենտ ***Լ. Պետրոսյան***

Հանգուցային բառեր. *հունարեն, լատիներեն, փոխառություն, արմատ, ածանց, ժամանակակից հայերեն*

Հայ գիտական գրականությունն ունի բազմադարյան պատմություն, որն ավանդվել է 5-րդ դարից հետո: Ճշգրիտ գիտությունների զարգացմամբ հատկապես առանձնանում է 7-րդ դարը՝ շնորհիվ Անանիա Շիրակացու: Նրա գործը հետագայում շարունակվեց երկրաչափության, տիեզերագիտության, բժշկագիտության և այլ ոլորտներում:

Հայ գիտական գրականությունն աննախադեպ զարգացում ունեցավ սովետական շրջանում, որի հանրայնացումն իրագործվեց նաև հրապարակախոսության շնորհիվ: 1963 թ. Հայկական ՍՍՌ «Մինիստրների սովետի գիտահետազոտական աշխատանքների կոորդինացման պետական կոմիտեի» որոշմամբ սկսեց հրապարակվել «Գիտություն և տեխնիկա» ամենամյա «գիտա-մասսայական» պարբերականը, որի նպատակն էր, որ «….գիտությունը չմնա մեռյալ խոսք կամ մոդայիկ ֆրազ, այլ դառնա միս ու արյուն, վերածվի կենցաղի բաղադրիչ տարրի» [2]:

Գիտական գրականության լեզուն աչքի է ընկնում «մտածական, տրամաբանական յուրահատկությամբ, որը հենվում է հասկացությունների և դատողությունների վրա, օգտագործում է փաստական նյութ, ունի գիտական տերմինաբանություն» [1]: Տերմինները բառեր կամ բառակապակցություններ են, որոնք գործածվում են գիտության, տեխնիկայի, մշակույթի, քաղաքականության և այլ երևույթների ու առարկաների հասկացությունների տրամաբանորեն ճշգրիտ բնորոշումների համար: Տերմիններն առաջանում են լեզվի զարգացման արտաքին և ներքին գործոնների միջոցով. մի դեպքում համագործածական բառերն են վերաիմաստավորվում, մյուս դեպքում արմատների թարգմանության կամ պատճենման եղանակներով կատարվում է բառափոխառություն, որի իմաստային քննությանն է նվիրված մեր ուսումնասիրությունը՝ ըստ «Գիտություն և տեխնիկա» պարբերականի Վ. Համբարձումյանի հեղինակած «Գալակտի-

կաները և նրանց կորիզները» բառապաշարի վերլուծության: Նշենք, որ այս հոդվածով է սկսվում 1964 թ. հրապարակված «Գիտություն և տեխնիկա» պարբերականը: Այստեղ բազմաթիվ են տիեզերագիտական տերմինները, որոնք դասակարգվում են լեզվական հետևյալ արտահայտություններով.

1. **Օտարաբանություններ, որոնք չունեն իրենց հայերեն համարժեքները**: Սրանք, ըստ ծագման, օտարաբանություններ են հունարենից, լատիներենից և ֆրանսերենից:

1.1. Հունական ծագում ունեն հետևյալ բառերը. ***գալակտիկա*** [γᾰλαξίας] – «միասնական աստղային համակարգություն»: Այս օտարաբանությունը գործածվել է մեր ուսումնասիրվելիք հոդվածի վերնագրում՝ որպես անվանական միակազմ նախադասության գերադաս անդամ [2, 1]: Բառը գիտական գրականության մեջ ունի գրության երկու ձև՝ մեծատառով և փոքրատառով. «Արեգակը գտնվում է մի գալակտիկայում, որը մյուս համակարգություններից տարբերելու համար կոչվում է «Գալակտիկա» մեծատառով» [3, 1]: Մյուս գալակտիկաները գիտական խոսքում բնութագրվում են *գերհսկա, հսկա, միջանկյալ, թզուկ, ենթաթզուկ* որոշիչներով:

Էներգիա [ἐνέργεια] այս բառը՝ «մարդկային գործունեություն» իմաստով, գրավոր հիշատակություններում առաջին անգամ հանդիպում է Արիստոտելի «Ֆիզիկա» աշխատության մեջ: Ժամանակակից գիտական աշխարհում բառը նշանակում է «մարմնի աշխատանք կատարելու ունակությամբ բնութագրվող ֆիզիկական մեծություն»: Ներկայացված գիտական խոսքում այն բնութագրվել է *ճառագայթային* որոշչով, ինչպես՝ «*ճառագայթային* ***Էներգիա*** առաքող արեգականման մարմինների մեջ» [2, 1]:

Օպտիկական գիտաբառի արմատը ծագում է հունարեն [ὀπτική] բառից, նշանակում է «տեսաբանական, տեսագիտական»: Աստղագիտության մեջ այս հատկանիշով բնութագրվում է **լուսատվություն** գոյականը:

Էլիպտիկ օտարաբանությունը ունի հունարեն ծագում, կազմվել է հունարեն համարժեք *էլիպս* [ἔλλειψις] գոյականից, որի հայերեն համարժեքն է ձվածիր, արմատը ժամանակակից հայերենում գործածվել է մի շարք ածանցումներում, ինչպես ***էլիպսական, էլիպսային, էլիպսաձև, էլիպսանման*** և այլն: ***Էլիպտիկ*** օտարաբանությունը ժամանակակից հայերենում գործածվում է իբրև գիտաբառ մի դեպքում բնագիտության մեջ, մյուս դեպքում ոճաբանության:

1.2. Լատինական ծագում ունեն հետևյալ բառերը. ***օբյեկտ*** [objectum] այն գիտական գրականության մեջ գործածվում է «գործողության, գործու-

նեության առարկա, այն ամենը, որին ուղղված է որևէ գործողություն, գործունեություն» իմաստով:

Ինտեգրալ [integer] ծագում է «ամբողջ» նշանակությամբ արմատից: Որպես գոյական նշանակում է «ամբողջական մեծություն», որ դիտվում է իբրև իր անվերջ մանր մասերի գումար, իսկ որպես ածական նշանակում է «այդպիսի մեծության վերաբերող հատուկ»: ***Ինտեգրալ*** հատկանիշով է բնութագրվել ***սպեկտր*** գոյականը՝ ստեղծելով օտարաբանություններով կազմված բառակապակցություն:

Ռադիո [radio] բառով բնութագրվել է տարածության մեջ առանց հաղորդալարերի՝ հեռվից ազդանշաններ, հնչյուններ, պատկերներ հաղորդելու նպատակով տարածվող էլեկտրամագնիսական ալիքների հաղորդումն ու ընդունումը: Արմատը լայն տարածում է գտել ինչպես գիտական, այնպես էլ առօրյա խոսակցական ոճում: Աստղագիտության մեջ ***ռադիո*** արմատով են կազմվում ***ռադիոճառագայթիչ***, ***ռադիոճառագայթում, ռադիոգալակտիկա, ռադիոբաղադրիչ, ռադիոաստղագիտական*** և այլ բարդություններ: ***Ռադիո*** բաղադրիչով կազմվում են նաև բայեր՝ ***ռադիոճառագայթել***, որի ենթակայական դերբայով բնութագրվել են **խտացում**, **խոշոր զանգվածներ, երկու ամպեր** գոյականները, օրինակ՝ «Գալակտիկայի կենտրոնական կորիզից դուրս է գալիս մի շիթ, որը պարունակում է իր մեջ առանձին ***ռադիոճառագայթող*** խտացումներ կամ կորիզը դուրս է շպրտել ***ռադիոճառագայթող*** խոշոր զանգվածներ, կամ ***ռադիոճառագայթող*** երկու ամպեր» [4, 5]: Աստղագիտության մեջ իրենց գյուտերը բառերով են մկրտել Գրինշտեյնը և Շմիդտը՝ իրենց հայտնագործքությունը անվանելով «***աստղաձև ռադիոաղբյուրներ***» [5]:

Ռելյատիվիստական էլեկտրոններ հարադիր օտարաբանությունը կազմված է ***ռելյատիվիստական*** [relativus] բառից, որի արմատը նշանակում է «հարաբերական»: Օտարաբանությունը կազմվել է հարածանցման եղանակով, որտեղ առաջաին ածանցը նույնպես օտարաբանություն է: Օտարաբանության արմատը ծագում է «ռելյատիվիզմ» իդեալիստական փիլիսոփայական ուսմունքի անունից, որ չի ընդունում իրականության օբյեկտիվ ճանաչողության հնարավորությունը և բացարձակ ճշմարտությունների գոյությունը, այլ ամբողջ ճանաչողությունը համարում է հարաբերական: Օտարաբանությունը գիտական գրականության մեջ գործածվում է նաև ***ռելատիվիստական*** [2, 9] տարբերակով:

Գիտական հայտնագործությունների անվանադրումները Վիկտոր Համբարձումյանը բնութագրում է «հատուկ անունով նրանց մկրտել» բառակապակցությամբ: Այսպես նրա հեղինակած գիտաբառ արտահայ-

տություններից է ***գերմասսիվ մարմին*** կապակցությունը, որի առաջին բաղադրիչի արմատը՝ ***մասսիվ***, ծագում է ֆրանսերեն [massif]՝ «հզոր, ուժեղ, զորեղ, հուժկու» նշանակությամբ արմատից: ***Գերմասսիվ*** ածականին զուգահեռ կերտվել է նաև ***ամենամասսիվ*** ածականը, որով բնութագրվում է **աստղերի զանգված** արտահայտությունը:

2. **Օտարաբություններ, որոնք ունեն իրենց հայերեն համարժեքները**: ***Տենդենց*** բառը հայերենում գիտական տարբեր ոլորտներում գործածվում է տարբեր համարժեքներով, որոնց արդյունքում բառը զրկվում է իր բազմիմաստությունից և հաճախ չի արտահայտում իր բուն նշանակությունը: Ինչպես՝ քաղաքագիտության մեջ այն թարգմանվում է ***ձգտում*** կամ ***հակում***, գրականագիտության մեջ՝ ***միտում*** համարժեքներով: Ներկայացված գիտական խոսքում ***տենդենց*** բառը գործածվել է որպես «տիեզերքում նյութի բաշխում ու գոյաձև» իմաստով «….նշել տիեզերքում նյութի բաշխման ու գայաձևի հետևյալ երկու գլխավոր ***տենդենցը***» [3, 1] նախադասության մեջ՝ ամփոփելով վերը թվարկած թարգմանական տարբերությունների բոլոր իմաստները:

Էլեմենտ օտարաբանությունը նույնպես տարբեր գիտակարգերում թարգմանվում է տարբեր կերպ, մի դեպքում այն նշանակում է «տարր», մյուս դեպքում՝ «տարերք»: Աստղագիտության մեջ այն կիրառվում է «տարր» իմաստով: Օրինակ՝ «Խոսքը վերաբերում է մի գալակտիկայի մեջ ինչ-որ անսովոր, տվյալ գալակտիկայի համար ոչ հատուկ կառուցվածքային ***էլեմենտների*** առկայությանը» [4]:

Այս շարքում առանձնանում է ***սպեկտոր*** գոյականը, որ, ունենալով իր հայերեն համարժեքը, հայերենում գործածական է որպես արմատ, որին կապակցվում են տարբեր ածանցներ: ***Սպեկտր*** բառը նշանակում է «բազմագույն շերտ», որ ստացվում է «լուսային ճառագայթների՝ որևէ բեկող միջավայրով կամ պրիզմայի միջով անցնելիս»: Հայերեն համարժեքն է ***լուսակ*** կամ ***լուսապատկեր***: ***Սպեկտր*** արմատով է կազմվում ***սպեկտրալ*** ածականը, որի համարժեքը լինում է ***սպեկտրային***՝ «սպեկտրին հատուկ, սպեկտրի օգնությամբ կատարվող՝ ուսումնասիրվող» նշանակությամբ, օրինակ՝ «Կորիզների սպեկտրալ ուսումնասիրությունները ցույց են տվել, որ նրանց ***սպեկտրները*** մեծ մասամբ սկզբունքորեն չեն տարբերվում շրջապատի աստղային բնակչության ***ինտեգրալ սպեկտրներից*** [2, 5]: Աստղագիտության մեջ ***սպեկտր*** բառը կարող է լինել **կորիզ** բառի հատկացյալը և բնութագրվել **աստղային** որոշչով, ինչպես՝ «Կորիզի **սպետրը** նման է **աստղային սպեկտրին**» [2, 8]:

Օտարաբանություն գիտաբառերի մեջ առանձնանում է ***կոնֆերանս*** բառը «այլևայլ հարցեր քննարկելու համար բարբերաբար գումարվող պետական, հասարակական, կուսակցական, գիտական և այլ կազմակերպությունների ժողով» իմաստով: ***Կոնֆերանս*** բառը երբեմն փոխարինվում է հայերեն «համագումար» համարժեքով:

Ուսումնասիրության արդյունքում պարզ է դառնում, որ գիտական հրապարակախոսությանը տիրապետելու համար պետք են գիտելիքներ և՛ լրագրությունից, և՛ գիտության տվյալ ոլորտից, և՛ լեզվաբանությունից, քանի որ դրանց միասնական կիրառության շնորհիվ է հնարավոր ներկայացնել գիտահանրամատչելի խոսք, որ կհետաքրքրի ընթերցող լայն հասարակությանը:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Առաքելյան Վ., Խաչատրյան Ա., Էլոյան Ս., Ժամանակակից հայոց լեզու, հ. 1, Երևան, Հայկական ՍՍՀ ԳԱԱ հրատարակչություն, 1979, էջ 238:
2. Գիտություն և տեխնիկա, 1, 1963:
3. Գիտություն և տեխնիկա, 1, 1964:
4. http://tert.nla.am/archive/NLA%20AMSAGIR/GitutyunEvTexnika/1963(1).pdf Հասանելի է 25.07.21:

Космологический варваризм–языковая экспертиза терминов в армянской научной речи

Киракосян Сюзанна
ВГУ, Журналистика, 3-ий курс

Резюме

Ключевые слова: *греческий, латинский, заимствование, корень, суффикс, современный армянский язык*

В результате исследования становится ясно, что для овладения научной публицистики необходимы знания журналистики, из данной области науки, лингвистики так, как за счет их совместного употребления можно представить научно-популярную речь, которое заинтересует публичную широкую аудиторию.

Cosmological Barbarism–Linguistic Study of Terms in Armenian Scientific

Kirakosyan Suzanna
VSU, Journalism, 3rd course

Summary

Key words: *Greek, Latin, borrowing, root, derivative, modern Armenian*

As a result of the research it becomes clear that in order to master scientific journalism it is needed to have knowledge of both journalism, the exact sphere of science and linguistics, since thanks to their unified usage it is possible to present a popular-scientific speech that will interest the wide community of readers.

Ժամանակի պատկերումը գեղարվեստական պատկերների միջոցով. ժամացույց և ժամանակ (Գ. Խանջյան, Ս. Հարությունյան, Հ. Սարիբեկյան, Ա. Պաչյան)

Հակոբյան Տաթևիկ
ՎՊՀ, Հայոց լեզու և գրականություն, մագիստրատուրա, 1-ին կուրս
Գիտական ղեկավար՝ բ. գ. թ., դոցենտ ***Վ. Փիլոյան***

Հանգուցային բառեր. *գեղարվեստական պատկեր, ժամանակ, ժամացույց, առարկայացված պատկեր, գեղարվեստական պայմանականություն, պատումային ժամանակ*

Գրական ստեղծագործություններում յուրաքաչյուր իրողություն պահանջում է պատկերման միջոցների իր համակարգը: Արդի հայ արձակում պատկերման միջոցների յուրօրինակ համակարգով է հանդես գալիս ժամանակը: Գեղարվեստական պատկերը ոչ թե արտացոլում, այլ ընդհանրացնում է իրականությունը, եզակիի և անցողիկի մեջ բացահայտում էականն ու հավերժականը:

Կոնկրետ պատկերը դառնում է պատումային ժամանակի նկարագրման միջոց. «Իսկ բոշեքը եկել էին ուղտերով, մաղերով քաղցրավենիք, հաջողության թալիսմաններ, գույնզգույն շալեր ու ձեռք կարդացող պառավներ էին բերել իրենց հետ: <…> Ինչ-որ մեկը ինչ-որ տեղից ապրանք էր բերում, Երևանում վաճառում: Խորենը կենտրոնից առնում, ծայրամասում փոխանակում էր: Ծայրամասի փոխանակածը տանում էր գյուղ, գյուղում փոխանակածը՝ հեռավոր գյուղ, հեռավորինը՝ սահմանամերձ գյուղ, սահմանից ձեռք բերածը՝ տանում էր լեռներ: <…> Որտե՞ղ էին արտադրում այդ գույնզգույն փուչիկները, ումի՞ց էր Խորենը դրանք ստանում և ու՞մ էր հանձնում փուչիկների հետ փոխանակած քրջերը, ոչ ոք չգիտեր, բայց խանութներում նման փուչիկներ՝ փղից էլ ցմփոր, կախարդական թռչունից գույնզգույն, թիթեռի թևից թեթև, հորթ կուլ տված վիշապի պես գալար-գալար, հրեշաբար ատամնավոր՝ չէր գտնվի. դրանք արտադրվում էին միայն Խորենի համար» [4, 8]: Հեղինակները հստակ պատկերների միջոցով փորձում են միահյուսել անցյալն ու ներկան՝ միաժամանակ դրանք կենդանի պահելով: Ժամանակը կենդանի թվացող պատկերների միջոցով չի մաշվում, այլ գնում է հավերժության. պատկերի

միջոցով վերարտադրվում է ցիկլային ժամանակը. «Շոգից նեղվելով նայում էի մեքենայի պատուհանից ու զարմանում. օրեր, տարիներ, դարեր ու հավերժություն՝ միշտ նույն բանը. մայրամուտ-լուսաբաց, միշտ եղանակների նույն հերթագայություն՝ գարուն, ամառ, աշուն, ձմեռ. մի՞թե Տիրոջ երևակայությունը չի հոգնում» [2, 64], «Զարթուցիչի ձայնը ասես իր ներսից հնչեց. «Արևածագ, մայրամուտ, օր ու տարի, ժամ ու վայրկյան. ինչ-որ մեկը կտրատել է հավերժությունը…» [2, 122]: Մի դեպքում հեղինակը պատկերում է հստակ ժամանակ՝ ժամ, օր, ամիս, տարի, դար, մեկ այլ դեպքում՝ հավերժություն: Հստակ ժամանակի պատկերումը հստակ պատկեր է ստեղծում՝ ամբողջական ու խիտ. «Այս դարը վերջնականապես չոքեց, զզվում եմ այս դարից, դուխ չունի այս դարը, համատարած հարմարվողականություն է, փողի ստորաքարշ պաշտամունք, այս դարը պիտի փողի պաշտամունքի եկեղեցիներ հիմնի, փողի սրբապատկերներ կախի, մոմ վառեն տակը, աղոթեն՝ օ՜ սրբազան դոլար, գթա նվաստիս, այցելիր ինձ քո ամբողջ թափով, ես զոհեր կմատուցեմ՝ հայրենիքիս, մերձավորներիս, ծնողներիս, երեխաներիս, ում ուզես, միայն չլքես ինձ, աղերսում եմ» [1, 194]:

Գեղարվեստական երկի վերլուծության ժամանակ անդրադառնում ենք տվյալ հեղինակի մտահղացման արդյունք հանդիսացող ստեղծագործության ուրույն աշխարհին պատկանող առարկաների համախմբին, որոնք մարդու կենսակերպի անբաժան մասն են կազմում: Բնական է, որ այդ իրերը, որոնք անբաժանելի են մարդկային իրականությունից, ինքնըստինքյան դառնում են գրական ստեղծագործության «արհեստական իրականության» բաղկացուցիչ մասը: Գրական-առարկայական աշխարհը իրական աշխարհի մասնակի պատկերն է միայն, այլ ոչ թե նրա արտացոլանքը կամ կրկնօրինակը: Իրերը ստեղծագործություններում հանդես են գալիս կերպարների հետ և կերպարներից անկախ: Գրական երկում աշխարհը յուրօրինակ է, և այդ աշխարհի կառուցվածքը քննելիս հարկավոր է անդրադարձ կատարել նաև շրջապատում առկա առարկաներին, որոնց հեղինակը տալիս է փիլիսոփայական գունավորում: Դրանք հաճախ իրենց վրա են վերցնում բազմաթիվ գործառույթներ, օրինակ, տարածության ու ժամանակի պատկերումը: Գեղարվեստական ստեղծագործության մեջ իրի բազմակի հիշատակման երևույթը ստիպում է ընթերցողին միջավայրի մաս կազմող հասարակ իրի նկարագրության մեջ փնտրել լրացուցիչ նշանակություն:

Մեր քննած գործերի գեղարվեստական պայմանականության մեջ ժամացույցը դիտարկում ենք իբրև ժամանակը կառավարող գործիք: Մարդկային կյանքից անբաժան այս առարկայի յուրահատկությունները քննելով համատեքստում՝ զանազան երևույթներ կարելի է առանձնացնել: Պատումի ժամանակային տիրույթում կերպարներին ուղեկցում են ժամանակը ցույց տվող առարկաներ, օրինակ՝ տերողորմյան՝ որպես ժամանակի համրիչ, Արեգի հորեղբոր՝ պահարանում թաքցրած ժամացույցը, եկեղեցու պատի արևային ժամացույցը (Սարիբեկյանի «Երկվորյակների արևը» վեպից), տան պատի ժամացույցը (այն կա մեր քննած գործերի մեծ մասում), որոնք փորձում են ցույց տալ ժամանակի ու մարդու անբացատրելի կապը, ապացուցել գոյի լինելիությունը հավերժական ժամանակի որևէ տիրույթում: Այս երևույթից ելնելով էլ նշենք, որ հեղինակները իրենց գործերում մարդու սրտի զարկերը հաշվում են ժամացույցի զարկերի միջոցով, որը պատահական իրողություն չէ, բայց միևնույն ժամանակ թվում է անբացատրելի. «Ջահելը հիվանդի հետ մեռավ ու հարություն առավ, թևքով սրբեց քրտինքը: Նորից բռնեց հիվանդի դաստակը, նայեց ժամացույցին, մտքում հաշվեց» [2, 18], «Պատի ժամացույցի կանոնավոր թկթկոցը, իր սրտի թփթփոցը. ի՞նչ կապ ունի իր տրոփող սիրտը ժամանակի հետ» [6, 82]:

Միևնույն է, մարդը չի հաշտվում անիմանալի երևույթների հետ, փորձում է բացատրել ու գտնել պատասխաններ, բացատրության կարիք ունի դատարկ տարածության մեջ ժամանակի շարունակական ընթացքի առկայությունը: Ժամացույցի լինելությունը և ժամանակը կառավարելու դերը, որը ստանձնել է, չի ճանաչում ոչ դատարկություն ու ո՛չ էլ լռություն. միևնույն է, նա իրեն վստահված գործն է անում. «<…> ժամացույցները սկսում են թկթկալ դատարկ տների լուսավոր լռության մեջ» [6, 52], «<…> ժամանակն իրենց տանը դադարում էր լսվել, քողարկվում էր լռությամբ» [6, 91], «Գրպանի կլոր ժամացույցը, որ տղան իրենն էր ուզում լիներ, բայց չէր համարձակվում խնդրել նրանից, համաչափ թկթկում էր դարակի դատարկության մեջ. գուցե դարակում թաքցրած այդ ժամացույցն է պատճառը, որ իրեն թվում էր, թե ժամանակը սահում է գաղտնի» [6, 100], «Մտքով փորձեց կռահել ժամանակը, որ ընթանում էր գաղտնի, անգամ լռության մեջ» [6, 171]:

Առարկայի խորհուրդը ընկալելով՝ պետք է նշել, որ այն միշտ չի կատարում իրեն բաժին հասած գործառույթները՝ կեցության կանոններով

պայմանավորված. «Միջօրեի համրության մեջ ճոճանակով ժամացույցը զարկեց տասնմեկ թե տասներկու անգամ. տղան լավ չհաշվեց: Ինչևէ, ժամանակին դա չէր առնչվում. ժամացույցները, իհարկե, աշխատում էին, ժամանակը չափելու նրանց կարողությունն էր սպառված: Երկնքի մեջտեղում արևն անշարժ էր, տապը և մարդկանց գաղտնի կեցության ժամերը՝ առջևում: Հետո լսվեցին տեսլական եկեղեցու հավերժական ղողանջները: Տղան տասներկու ղողանջ հաշվեց» [6, 8], «Հյուրասենյակից զարկեց ճոճանակով ժամացույցը: Ուղիղ երեք անգամ, բայց դա ժամանակին չէր վերաբերվում» [6, 126]:

Երազին հասնելու ճանապարհին մարդը փորձում է իրեն ենթարկել ժամանակը, ուզում է դառնալ ժամանակի տերը, բայց անիմանալի է, թե դա նրան որքանով է հաջողվում. «Տղան գրասեղանի դարակներն էր բացում, ստուգում էր դատարկությունը: Գտա՛: Ժամացույցը, որ շատ էր ուզում իրենը լիներ: Բացվող ու փակվող ժամացույց, իսկական ժամացույց, որի իսկությունը ծանրություն էր վկայում, իսկ ժամացույցը բավական ծանր էր: Ուրախությունից ցնծում էր: <…> Իսկական ժամացույց էր ունենալու: Դա նրան մի գաղտնի արտոնություն էր տալիս ժամանակի հանդեպ: Ժամանակը կարող էր իր գրպանում գտնվել միշտ: Հիմա ժամանակը մշտապես իր հետ է լինելու՝ գրպանում…» [6, 106]:

Անդրադառնալով մեր քննած գործերին՝ կարող ենք նշել, որ հեղինակներից յուրաքանչյուրը առանձնահատուկ ընկալմամբ է պատկերում այս առարկայացված պատկերի խորհուրդը, փիլիսոփայությունը: Երևույթները տարբեր են, պատկերման միջոցները՝ զանազան, սակայն կեցության օրենքներից ելնելով՝ կա մեկ ընդհանուր իրողություն, որին յուրաքանչյուրը իր դիտանկյունից է մոտեցել. դա կանգնած ժամացույցի պատկերումն է իր խորհրդով: Սուսաննա Հարությունյանի «Պապիս մահը իմ կատարմամբ» պատմվածքը արդի արձակում լավագույն օրինակներից մեկն է, որը խտացնում է այս իրողությունը: Այստեղ առկա է հստակ իրողություն, որը անցնում է մարդկային ժամանակի ու ժամացույցի ժամանակի տիրույթով: Անգամ էժանագին ժամացույցը կարող է կայացնել դաժան դատավճիռ ու կանգ առնել. «Բայց այդ էժանագին, մուսուլմանական ժամացույցը կայացրել էր մարդու կյանքի հետ կապված դաժան դատավճիռ՝ կանգ էր առել: <…> Օրենք է՝ որ պահին մարդը հոգին տվեց, մինչև քառսունք տան ժամացույցը պիտի էդ ժամի վրա կանգնած մնա» [3, 67-70]: Հետաքրքրական է այն իրողությունը, որ տան

տարբեր սենյակներում ժամացույցը տարբեր ժամերի վրա է կանգ առած, իսկ այդ իրողությունը պատկերվում է կերպարի աչքերով, որը ներկայացնում է պապի մահը հետևյալ կերպ. «Ամեն սենյակում մի ժամի վրա է կանգնած,– զարմացա ես,– էդ մարդը քանի՞ անգամ է մահացել: Կարո՞ղ է՝ առհասարակ չի էլ մահացել: <…> Իմ սենյակը փակ էր եղել այդ օրը: Ես այնտեղ սիրային նամակներ ու մի քիչ էլ փող ունեի թաքցրած ու բանալին հետս տարել էի, ու ժամացույցը բանից անտեղյակ տկտկում էր. իմ փոքրիկ սենյակի տասնչորս քառակուսու վրա պապս դեռ ողջ էր: <…> Վերցրի փայտե աթոռը, դրեցի ժամացույցի տակ, կանգնեցի վրան, ձգվեցի ու ափս դրեցի նրա սառը, մետաղական սլաքներին: Նրանց վերջին զարկը շունչը փչեց իմ ձեռքի տակ: Վե՛րջ՝ պապս այլևս գոյություն չունի» [3, 68-69]:

Հեղինակից հեղինակ կարող ենք այս գիծը գծել՝ նշելով, որ գործ ունենք այնպիսի երևույթի հետ, որը մարդուց միշտ անբաժան է իր գոյության բոլոր հատվածներում: Ինչպես վերը նշեցինք, մարդու սրտի զարկերը զուգահեռվում են ժամացույցի զարկերի հետ, պատճառահետևանքային կապով էլ հանգում ենք նրան, որ սրտի զարկերի կանգը միայն ժամացույցը հստակ կնշի: Ճիշտ է, կանգնած ժամացույցը մահվան խորհուրդ է ամփոփում, բայց հստակ է նաև նրա փիլիսոփայական բովանդակությունը. այդ փաստում է Սարիբեկյանն իր «Երկվորյակների արևը» վեպում. «<…> ժամացույցը կանգնած էր: Հայտնի է, որ ամենաճշգրիտը կանգնած ժամացույցներն են. ո՛չ առաջ, ո՛չ ետ են ընկնում. օրվա մեջ ճշգրիտ ժամանակ են ցուցում երկու անգամ» [6, 203]: Ժամացույցի խորհրդանշական բովանդակությունն ամփոփող իրողություններ կարելի է գտնել նաև Սարիբեկյանի «Գուշակություններ հայելիներով» գրքում:

Անգամ մարդու երևակայական տիրույթում կա ժամանակ ու ժամացույց «<…> երբ փոքր էր, գիշերը ծածուկ ելնում էր տեղից, ոտնաթաթերի վրա կամացուկ քայլերով մոտենում էր, պատի վրայով հասնում ժամացույցին, մտնում էր մեջն ու նստում պտտվող ժամասլաք աքաղաղի կատարին՝ տիկ-տակ, տիկ-տակ <…> քունը տանում էր, երկու ձեռքով նա գրկում էր աքաղաղի գլուխն ու մինչև լուսաբաց ժամացույցի մեջ քուն մտնում, տիկ-տակ, տիկ-տակ, տիկ-տիկ-տիկ. ձայնը գնալով հեռվանում էր, հետո կորում մոռացության մեջ» [5, 86]:

Ժամացույցը դիտարկելով իբրև առարկայացված պատկեր՝ կարող ենք նշել, որ այն, մարդկային իրականությունից անբաժան լինելով, դառ-

նում է գեղարվեստական իրականության բաղկացուցիչ մասը: Այն հանդես է գալիս տրամաբանական գործառույթներով, որը պատճառահետևանքային կապով կապված է մարդու կենսական փորձի հետ: Հասարակ իրը, որը մարդուց անբաժան է, կտրվելով իրականությունից, պատումի իրական ժամանակային տիրույթում կորցնում է իր պարզ առարկայական խորհուրդը և ձեռք է բերում խորհրդանշական, փիլիսոփայական նշանակություն: Ժամացույցը յուրաքանչյուր հեղինակի մտահղացման արդյունք հանդիսացող ստեղծագործության ուրույն աշխարհին պատկանող առարկաների համախմբի անքակտելի բաղադրիչներից է:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Խանջյան Գ. Վ., Ենոքի աչքը, Երևան, «Անտարես» հրատարակչություն, 2012, 262 էջ:
2. Հարությունյան Ս. Ս., Երկրորդ կիրակին ներառյալ, Երևան, «ՀԳՄ» հրատարակչություն, 2018, 140 էջ:
3. Հարությունյան Ս. Ս., Խոսքը աշնան մասին է, Երևան, «Ծիծեռնակ» հրատարակչություն, 2008, 192 էջ:
4. Հարությունյան Ս. Ս., Քարտեզ առանց ցամաքի և ջրերի, Երևան, «Ծիծեռնակ» հրատարակչություն, 2010, 160 էջ:
5. Պաչյան Ա. Հ., Ցտեսություն Ծիտ, Երևան, «Դարակ» հրատարակչություն, 2017, 176 էջ:
6. Սարիբեկյան Հ. Հ., Երկվորյակների արևը, Երևան, «Անտարես» հրատարակչություն, 2012, 216 էջ:

Изображение времени с помощью художественными образами: часы и время (Г. Ханджян, С. Арутюнян, Г. Сарибекян, А. Пачян)

Акопян Татевик
ВГУ, Армянский язык и литература,
Магистратура, 1-й курс

Резюме

Ключевие слова: *художественное изображение, время, часы, образы-детали, художественная обусловленность, повествовательное время*

В статье изучили изображение времени с помощью художественными образами, основываясь на произведениях Г. Ханджяна, С. Арутюнян, Г. Сарибекяна, А. Пачяна. Наблюдая часы как инструмент управления временем, выделили его символическое и философское содержание. Изучили соотношение часов и времени. Представили обобщение и конкретные проявления восприятия времени. Конкретное изображение становится средством описания повествовательного времени. Детали, будучи неотделимыми от человеческой реальности, становятся неотъемлемой частью реальности художественного произведения.

Pictures of Time Through Artistic Images, Clock and Time (G. Khanjyan, S. Harutyunyan, H. Saribekyan, A. Pachyan)

Hakobyan Tatevik
VSU, Armenian Language and Literature,
MA, 1st course

Summary

Key words: *artistic image, time, clock, objectified image, artistic condition, narrative time*

In the article we examined the depiction of time through artistic images, relying on G. Khanjyan, S. Harutyunyan, H. Saribekyan A. Pachyan's works. Observing clock as a tool governing time, we have distinguished its symbolic and philosophical content. We examined the clock-time relationship. We have presented the general, concrete implications of time perception. The concrete image becomes a means of describing the narrative time. Objects, being inseparable from human reality, become an integral part of the reality of a work of art.

Անանիա Շիրակացու գիտական երկերի նորաբանությունների կապակցելիական և կիրառական առանձնահատկությունները

Հաջյան Ջուլիետա
ՎՊՀ, Հայոց լեզու և գրականություն», մագիստրատուրա, 2-րդ կուրս
Գիտական դեկավար՝ բ, գ. թ., դոցենտ ***Լ. Պետրոսյան***

Հանգուցային բառեր. *նորաբանություն, կապակցելիական առանձնահատկություն, կիրառական առանձնահատկություն, բայ, գոյական, ածական, մակբայ, իրանիշ, անձնանիշ*

Նորաբանությունների ուսումնասիրության տեսակետից կարևոր է դրանց կապակցելիական և կիրառական առանձնահատկությունների ուսումնասիրումը՝ բառային իմաստը պարզաբանելու դիտանկյունից: Նորաբանությունների՝ իբրև բառակապակցության եզրերի ուսումնասիրությունը բացահայտում է շարահյուսական կաղապարների աստիճանական զարգացումները հին և միջին հայերեններում: Ըստ խոսքիմաստային պատկանելության՝ Ա. Շիրակացու նորաբանությունները[1] գոյական, ածական, բայ և մակբայ են, որոնք գործածվել են տարբեր շարահյուսական պաշտոններով՝ ձևավորվելով թե՛ բայական, թե՛ գոյականական, թե՛ ածականական բառակապակցություններ:

Նորաբանությունները բառակապակցությունների մեջ հանդես են եկել թե՛ իբրև գերադաս, թե՛ իբրև ստորադաս անդամ: Դրանք՝ իբրև բառակապակցության գերադաս կամ ստորադաս եզր, ուսումնասիրել ենք հետևյալ խնդիրների լուծման ճանապարհով.

1. ցույց տալ նորաբանություններով ձևավորված բառակապակցությունները՝ ըստ շարահյուսական արտահայտության կաղապարի.
2. ճշտել նորաբանություններով ձևավորված բառակապակցությունների կապակցման եղանակներն ու միջոցները.
3. գծապատկերի տեսքով ներկայացնել նորաբանություններով ձևավորված ինքնատիպ բառակապակցությունները:


[1] Ա. Շիրակացու բառապաշարը քննել ենք ըստ «Մատենագիրք Հայոց» բազմահատոր աշխատության մեջ ներկայացրած բնագրերի. 1. Անանիայի Շիրակունւոյ երիցս երանեալ վարդապետի վասն որպիսութեան կենաց իւրոց: 2. Անանիայի Շիրակայւոյ համարողի յաղագս համարողութեան: 3. Անանիայի վարդապետի Շիրակունւոյ հարցման եւ լուծման: 4, Այլք:

1. Բայական նորաբանությունների կապակցելիական և կիրառական առանձնահատկությունները

Գիտական երկերի նորաբանությունների շարքում առանձնացող համադրական բայերը գործածվում են անդեմ և դիմավոր արտահայտություններով:


1.1. Ենթակառությամբ իրանիշ դիմավոր բայեր, որոնք գործածվում են որպես ստորոգյալներ՝ արտահայտվելով եզակի թվով, երրորդ դեմքով, սահմանական եղանակի ներկա ժամանակով: Ըստ սեռային արտահայտությունների՝ դրանք ենթադասակարգվում են հետևյալ խմբերով.

ա. Ներգործական սեռի բայեր, որոնց կատարման համար պարտադիր է միայն սեռի խնդիր լրացումը: Օրինակ՝ *…. եւ զնա (Աբրահամ) հանապազ խիղճ մտաց իւրոց **խիթացուցանէր**, տեսնելով զարարածս ընդ ապականութեամբ եւ ընդ սխալանաւք* (725): Նման բայերը զուգահեռաբար կարող են պահանջել նաև այլ լրացումներ, որոնցից տվյալ օրինակում գործածվել են ժամանակի և հիմունքի պարագա լրացումները (Տե՛ս գծապատկեր 1):




Գծապատկեր 1

Ներգործական սեռի բայերն ավելի հաճախ պահանջում են նաև այլ անուղղակի խնդիրներ, ինչպես՝ ***բացարձակեմ*** բայի կատարման համար պարտադիր է անջատման խնդիր լրացումը: Օրինակ՝ *…. եւ նա զաւրագլխոյս **բացարձակէ** յիւրմէ* (735): ***Գիշերացուցանեմ, առլցուցանեմ*** բայերի համար պարտադիր է միջոցի անուղղակի խնդիր լրացումը, օրինակ՝ *…. եւ թէ ոչ էին ընդդիմոտունք, ում արդեաւք արեգական տայր լոյս զկէս աւրն, յորժամ ստուերաւն զմեզ **գիշերացուցանէ*** (752): *….որ զմարմինս դարմանէ սննդականաւ եւ զոգիս **առլցուցանէ** կատարեալ գիտութեամբ քննելով եւ ի վերայ հասանելով ամենայն արարածոցս, որ ոչ ունին յինքեանց զգոյացութիւն* (748) (Տե՛ս գծապատկեր 2):



Գծապատկեր 2

Բ. Նորաբանությունների մեջ եզակի օրինակ է ***կափչիմ*** չեզոք սեռի դիմավոր բայը, որի կատարման համար պարտադիր է հանգման խնդիր լրացումը: Օրինակ՝ *….ի վայր գալով՝* ***<u>կափչի</u>*** *<u>հողն</u> <u>յիրեարս</u>* (751) (Տե՛ս գծապատկեր 3):



Գծապատկեր 3

գ. Եզակի օրինակ է նաև կրավորական սեռի ***միատեղիմ*** բայը, որ վերագրվել է իրանիշ ենթակայի, օրինակ՝ *Արդ հարցանելի է թե՝ առաջին վաճառողն են յԲ դրամ ծախեցաւ, եւ Կ նուռն ԻԴ դրամ* ***միատեղեցաւ*** *եւ երկրորդ վաճառուս այլ ԵԲ դրամ վաճառեցաւ* [625]:

1.2. Ենթակառությամբ անձնանիշ դիմավոր բայի օրինակը եզակի է Ա. Շիրակացու գիտական երկերում: Այն գործածվել է եզակի թվով, առաջին դեմքով, սահմանական եղանակի անցյալ կատարյալ ժամանակով, ինչպես՝ *…. զի մի՛ ձանձրոյթ ձեզ զյաճախելն առնիցիմ. սուղ եւ* ***հեշտաւրինեցի*** *զնախնեաց գիրս. Որպէսզի կարող լինիջիք յայսցանէ եւ զյոգունս իմանալ եւ զբովանդակն:*

Անդեմ բայական նորաբանությունները գործածվել են որպես անորոշ դերբայներ՝ կատարելով ստորոգելիի և ժամանակի պարագայի գործառույթ, օրինակ՝ *….ի* ***շրջագայանալն*** *իւրում յառնէ հողմն փոթորկեալ* (719): *….աւելորդ է մեզ վասն նոցա* ***յերկարաբանել*** (713): Սրանք նույնպես չեզոք սեռի բայեր են՝ մի դեպքում իրանիշ, մյուս դեպքում անձնանիշ ենթակառու:

2. Գոյական նորաբանությունների կապակցելիական և կիրառական առանձնահատկությունները

Գիտական երկերի նորաբանությունների շարքում առանձնացող գոյականները գործածվում են շարահյուսական տարբեր գործառույթներով:

Անվանական միակազմ նախադասություններ, օրինակ՝ *ԺԴ* ***վերագլխութիւն: Եռավարժումն***(604): ***….***այսինքն՝ յաւգնութիւն,* ***ուժաւորութիւն,*** *դաւաճանութիւն, և խարդախութիւն ամենայն պատճառք* (724):

Իրանիշ ենթակա նորաբանություններ, օրինակ՝ *….եւ ոչ խառնիցէ ի ներքս* ***ամպարշտութիւն*** *ազգի ազգի հնարագիտութեան: ….իսկ այլ*

ախտարք *եւ* ***ապախտարք*** *ըստ ԲԺ.իցդ ասեն բաժանեալ* (723): *….վեցերորդ կենդանատեսակ է* ***կուսանակն*** *մանրիկ մասն ժամանակի արդէն մարելոյ, երկրորդ մասն րոպէի, կէս վայրկեան* (771): *….իսկ բարերար աստեղքն են* ***լուսնթագ****, լուսաբեր* (768): *….կամ լուսովն թագազարդ,* ***լուսնթագն*** *բնութեամբ իսկ յաղթութիւն է* (724): *…..եւ յայսմ կենդանատեսակի աշխարհային* ***ժամագէտ*** *մանրիկ մասն ժամանակի արդէն մարելոյ, երկրորդ մասն րոպէի, կէս վայրկեան* (771): *….եւ ընդ անգայտութիւն ցան եւ ցիր հողմոց երկրի խառնեալ* ***մանրասիք*** *խոնաւութիւն ջուրց* (751): *Հրատն բնութեամբ իսկ համարձակութիւնէ, այսինքն՝ յաւգնութիւն,* ***ուժաւորութիւն,*** *դաւաճանութիւն, և խարդախութիւն ամենայն պատճառք* (724): Ենթակա նորաբանությունները կապակցվում են ինչպես դիմավոր, այնպես էլ անդեմ բայերի, օրինակ՝ *….որպէս զի լինել ի ձմեռնային ժամանակի ջերմութիւն, կամ յամարային (յարմարին) ցրտութիւն եւ* ***ձիւնաբերութիւն****.* Լեալ է յշտեմարանին ***գարեհատ(623)***: Այս դեպքում ենթակաները բային կապակցվում են կառավարման եղանակով՝ հանդես գալով իբրև կողմնակի ենթականեր [8, 346]:

Անձնանիշ ենթակա նորաբանություններ, օրինակ՝ *…..եւ յայսմ կենդանատեսակի աշխարհային* ***ժամագէտ*** *մանրիկ մասն ժամանակի արդէն մարելոյ, երկրորդ մասն րոպէի, կէս վայրկեան* (771):

Իրանիշ ստորոգելի նորաբանություններ, օրինակ՝ *….եւ զգենու զգոյնս զանազանս եւ ըստ երկնային գնդին երեւի ի տեսիլս կամարաձեւ ողորկակող, զոր եւ մարդիկ* ***աստուածակամար*** *կարդացին* (731): *Եւ եկեալ առ սպայապետն, զոր* ***խորաւարանն*** *կոչեն, եւ առաւել եւս ի նմանէ մեծարեալ տայ նմա զԺԴ մասն գերւոյն* (621): *….ոչ զի մարդատեացք իցեն թագաւորք, այլ* ***յառաջահոգակք****, շինիչք եւ խաղաղասէրք, կարգիչ եւ յաւրինիչք գեղեցկադիր աւրինաց. ….եւ այլ կենդանիք որք* ***ընդդիմոտունք*** *են մեզ* (752): Վերջին օրինակը կարճ տարբերակում գործածվել է որպես ենթակա, ինչպես՝ *….եթէ ո՛չ էին մեզ* ***ընդդիմոտունք*** *ներքոյաբնակք, ո՞ւմ արդեաւք արեգակնդ տայր լոյս զկէս աւուրն, յորժամ ստուերաւն զմեզ գիշերացուցանէ*: Նորաբանությունները, լինելով ոչ գործածական լեզվական միավորներ, հիմնականում բնութագրվել են որոշիչ լրացումներով, որոնք կապակցվել են համաձայնության եղանակով: կան նորաբանություն ստորոգելիներ, որոնք լրացնում են դերբայների՝ գործածվելով դերբայական դարձվածներում, օրինակ՝ *….որպէս զի լինել ի ձմեռնային ժամանակի ջերմութիւն, կամ յամարային (յարմարին) ցրտութիւն եւ* ***ձիւնաբերութիւն*** (767): *….են եւ այլ բազում ծովակք որ ո՛չ են* ***յաշխարհածովէ*** *թէպէտ եւ զաղի եւ զդառն ճաշակս ունիցին* (720, 753):

Իրանիշ հատկացուցիչ լրացումներ, օրինակ՝ *….ստացուածոց եւ փառաւ եւ* ***նախաբարձութեանց*** *յայտնիչ* (723):


Իրանիշ խնդիր լրացումներ, օրինակ՝ *ասեն հեթանոսք ի տգիտանէ զոմանս բարերարս եւ զոմանս թշուառացուցիչս, որպէս խնդրեն* ***տանուտէրութիւնս****. ….ո՛չ ելանէ ջուր ի վերայ երկրի,* ***զմրրութիւն*** *նորա և պղտորութիւն* (721): *….եւ ոչ խառնիցէ ի ներքս* ***ամպարշտութիւն*** *ազգի ազգի հնարագիտութեան* (759): *….ի տանուտեառնէ աստեղէ՝ շրջագայիկ եւ հետեւագայիկ աստեղք վիճակեալք ի* ***ժամադիտէն*** *բաշխեն ի մասունս եւ ի կրկնամասունս, ի մնրամանակս եւ ի մանրերկրորդս եւ ի մանրամասունս բազումս* (723):

Որս էր Կամսարականացն ի Գէն եւ կալեալ էր երէ բազում. Եւ ինձ ***որսամասն*** *ետուն բերել վարազ մի* (618): *Եւ զկնի ԺԵ աւուր իմացեալ Կամսարականին Զաւրակայ* ***հետամտիկս*** *առաքէր զկնի ունել զնա, որք զնային աւուրն Զ մղոն* (618): *Եւ իմացեալ իմ* ***զորկորէութիւն*** *առն հանի զնա արտաքս եւ մտեալ համարեցի եւ գտի ունջ Ա եւ Ժ* (618): *Զի իբրեւ եկի ես, բազումք ընթացան առ իս յուսումն, եւ սուղ ինչ խելամտեալ՝թողին զիս եւ գնացին,ոչ մնացեալք կատարման արուեստին, բաւական համարեալ վարուց կենցաղոյս* ***զորչափիկն*** *առին* (595): *Եւ արդ՝ ես, տրուպս Հայաստանեաց, ուսայ ի նմանէ զիզաւ արուեստս զայս, որ թագաւորաց է ցանկալի, եւ բերի յաշխարհս մեր՝առանց ուրուք լինելոյ ձեռնտու, միայն ջանիւ իմով անձինս,* ***աւգնականութեամբ*** *աղաւթից սրբոյն Գրիգորի, թէպէտ եւ ոչ ոք եղեւ շնորհակալ եւ մեծարաւղ իմոյ աշխատութեան…* (595): *Եւ ոչ զոք գտեալ* ***համագունակ*** *նմա յաշակերտաց նորին հաջորդել ի տեղի նորին՝յեն աղաչանս առ ցանկալին Տիրոքիկոս՝գալ եւ կալ ի տեղի նորա* (595) դերանվանական բառակապցություն

Իրանիշ պարագա լրացումներ, օրինակ՝ *….ի տանուտեառնէ աստեղէ՝ շրջագայիկ եւ հետեւագայիկ աստեղք վիճակեալք ի ժամադիտէն բաշխեն ի մասունս եւ* ***ի կրկնամասունս, ի մանրամանակս*** *եւ* ***ի մանրերկրորդս*** *եւ* ***ի մանրամասունս*** *բազումս: ….երեւումն լինի վերին լուսոյն իբրեւ ընդ* ***անօսրափապարս*** *ինչ օդեղէնս* (733): *….ի տանուտեառնէ աստեղէ՝ շրջագայիկ եւ հետեւագայիկ աստեղք վիճակեալք ի* ***ժամադիտէն*** *բաշխեն ի մասունս եւ ի կրկնամասունս, ի մնրամանակս եւ ի մանրերկրորդս եւ ի մանրամասունս բազումս* (723):

Գոյական նորաբանությունների կիրառություններում հետաքրքիր հանգամանք է այն, որ նորաբանությունները գործածվում են բազմակի կառույցներում, որոնց միավորները միասնաբար բնութագրվում են մեկ

որոշչով՝ առդրությամբ կամ համաձայնության եղանակով կապակցված (Տե՛ս գծապատկեր 4):



Գծապատկեր 4

Որոշիչ + որոշյալ կապակցությունները մենեզր են՝ մեկ գոյական պարունակող գոյականական բառակապակցություններ [10, 296], սակայն երբեմն մեկ լրացումով բնութագրվում են բազմակի որոշիչներ, որոնք այս դեպքում բազմակի նորաբանություններ են:

Նորաբանություն ստորոգյալները բնութագրվում են ենթակառությամբ, խնդրառությամբ և պարագառությամբ՝ կապակցվելով պարտադիր և ոչ պարտադիր [9, 96-97], միջնորդավորված և անմիջական [5, 53-58] կառավարման եղանակներով: Պարագա նորաբանություն գոյականներին հատուկ է պարագայական խնդրի [6, 158] նշանակությունը, որը բնութագրվում է պարտադիր լինելու հանգամանքով:

3. Ածական նորաբանությունների կապակցելիական և կիրառական առանձնահատկությունները

Ածական նորաբանությունները, ըստ շարահյուսական կիրառության, բաժանվում են երկու խմբի՝ որոշիչ և ստորոգելի:

Որոշիչ նորաբանություններ՝ կապակցված համաձայնության եղանակով, օրինակ՝ *….քանզի կարակնահատք բոլորութիւնք **անուշաձեւք** երկուց տարերցդ՝ մին առանձին ունի զբոլոր բազմութիւն լուսոյն* (738): *….եւ դարձեալ թէ սակաւիկ ինչ թիւրեսցի նոյն աստղ, զշարժումն եւ զդէմս իւր փոխէ ասէ **չարագործաբաշխն** րոպէն* (728):

Որոշիչ նորաբանություններ՝ կապակցված առդրության եղանակով, օրինակ՝ *….ինքն առանձին մարմին անհատ, անտեղիտալի, անկորանալի, անխորշ,* ***անփոթ*** (714): *թէ ոչ գոն այլ* ***ներքնաբնակ*** *կենդանիք, սակայն ես հաւանեալ էի ընդդիմտունս մեզ լինել* (718): *….եւ նա էր պատանի անմորուս,* ***ոսկէգիսակ*** (719): *….և ի գիրկս ընդունէի զնա, և նա էր պատանի անմաւրուս* ***ոսկեղիտակ****, և շրթունք բերանոյ նորա որպէս թէ ոսկւով լինէր աւծեալ* (752): *….եւ բաւական եղեւ* ***մեծատարած*** *շրջան նորա որ պատեաց զամենայն արտաքուստ, ցուցանել զմեծ ծոց փորուածի նորա, բոլորակ գնդաձեւ, զոր տարածեալ ձեւ յաւիտեան կոչեն նոքա* (749): *Եւ այնուհետեւ գային առ նա անտի յուսումն յամենայն աշխարհաց առ* ***ծովածալ*** *գիտութիւն* (597): *….ընդ անգայտութեան ցան և ցիր հողոյն երկրի խառնեալ* ***մանրասիկ*** *խոնաւութիւն ջուրց* (716): *….եւ ընդ անգայտութիւն ցան եւ ցիր հողմոց երկրի խառնեալ* ***մանրասիք*** *խոնաւութիւն ջուրց* (751): *….եւ զգենու զգոյնս զանազանս եւ ըստ երկնային գնդին երեւի ի տեսիլս կամարաձեւ* ***ողորկակոր,*** *զոր եւ մարդիկ աստուածականար կարդացին* (731): *Եւ եկեալ ի Նախճաւան վաճառեաց* ***զչորեւուր*** *մասն մարգարտին եւթանասուն դրամ գիատն: Էեալ էր գանձն* ***կենդիևար*** *ՌՈՉՉ* (622): Այլ բիւրեղ՝ խարտիշագոյն, խաժագոյն, **ծովաներկ, աւդանման**:

Հետաքրքիր է *….ի տանուտեառնէ աստեղէ՝* ***շրջագայիկ*** *եւ* ***հետեւագայիկ*** *աստեղք վիճակեալք ի ժամադիտէն բաշխեն ի մասունս եւ ի* ***կրկնամասունս****, ի* ***մնրամանակս*** *եւ ի* ***մանրերկրորդս*** *եւ ի մանրամասունս բազումս* (723) արտահայտությունը, որտեղ նորաբանություն-որոշիչները մի դեպքում կապակցվել են առդրության, իսկ մյուս դեպքում՝ համաձայնության եղանակով: Այստեղից պարզ է դառնում, որ հին հայերենին հատուկ էին թե առդրության, թե համաձայնության եղանակով կապակցված որոշիչները: *….քանզի* ***կարակնահատք*** *բոլորութիւնք անուշաձեւք երկուց տարերցդ՝ մին առանձին ունի զբոլոր բազմութիւն լուսոյն* քանզի: *…. **կարակնահատ** բոլորութիւնք երկոցունց տարեցդ մին առանձին ունի զբոլոր բազմութիւն լուսոյն* (738, 760): Համաձայնություն և առդրություն կապակցման միջոցները փոխարինվում են նաև երկի համառոտ և երկար տարբերակներում:

Ածականական բառակապակցություններ, որոնցում նորաբանությունները լրացրել են գոյականաբար գործածված ածականների, ինչպես՝ *Ակատն՝* ***առեւծատեսիլ*** *բազմագոյն: Եղունգն՝ սպիտակ* ***լերդագոյն:*** *Ոսկէքար ոսկէգոյն* ***կանաչանշոյլ****: Գայծակն՝* ***կայծատեսիլ*** *լուսաւոր: Մէլեսիկ՝ կարմիր* ***նշուլաւոր:*** *ԻՀ Միւս մեթիւստոսն՝ բազմագոյն և* ***սպիտականշոյլ:***

Ստորոգելի նորաբանություններ, օրինակ՝ *ապա ուրեմն անսկիզբն* ***անասաց*** *եւ անճառելի մնայ* (749) *….եւ խտանայ երկնային մարմինս ի ներքոյ ջուրցն՝ եւ լինի սալայատակ հաստատրամ* ***անփապելի*** *և* ***անպայթելի*** (716)**:** *Եւ ոմանք որպէս քուեայ* ***յերկեռեակ*** *դիմի, եւ ի միջոցի երկնի կառուցեալ՝ սաստկութեան հողմոյ ի ներքոյ մտեալ համբարձեալ ունի զերկիր ի վեր* (751): *….եւ խտանայ երկնային մարմինս ի ներքոյ ջուրցն՝ եւ լինի սալայատակ* ***հաստատրամ*** *անփապելի և անպայթելի նեցուկ անվթար* (716, 751): *….և լուսինն դիպեալ ի ներքոյ արեգականն: Եւ յորժամ* ***հաւասարագոյգ*** *լինին, մինչ զի իցէ մին ի վերոյ եւ միւսն ի ներքոյ կշիռ նմին* (765): *….եւ ոչ մեր աշխարհիս ծովակ զոր կոչեմք Բզնունեաց, եւ ո՛չ այլքն որ յարեւելս են* ***նոյանմանք*** (721): *Զայս լուեալ, խնդալից սրտիւ փառաւորեցի զնախախնամատուն Աստուած, որ առ* ***ձեռնպատրաստ*** *ունի զփափագ ծառայից իւրոց, որպէս եւ ասեն իսկ, եթէ՝ Հայեցեցէք եւ գտջիք* (594): *Եւ տեսի զի ոչ ունէր զբովանդակ արուեստն, այլ աստի եւ անտի* ***ծայրաքաղ*** (596):

Որոշիչ և ստորգելի անդամները ըստ էության նույն իրողություններն են, այդ մասին են վկայում այն զուգահեռ օրինակները, որոնցում նույն բառը մի դեպքում կիրառվել է իբրև որոշիչ, մեկ իբրև ստորոգելի: *….եւ այլ կենդանիք որք* ***ընդդիմոտունք*** *են մեզ* (752): *….եթե ո՛չ էին մեզ* ***ընդդիմոտունք*** *ներքոյաբնակք, ո՞ւմ արդեաւք արեգակնդ տայր լոյս զկէս աւուրն, յորժամ ստուերաւն զմեզ գիշերացուցանէ* (718):

Ըստ կապակցելիական հնարավորությունների՝ ածական նորաբանությունները դասակարգվում են իրանիշ և անձնանիշ ենթատեսակների՝ ըստ կապակցվող գլխավոր անդամի իմաստային առանձնահատկության:

1. **Մակբայ** նորաբանություն գիտական երկերում հանդիպել է միայն ***ձիւնակերպիկ*** բառը, որը գործածվել է իբրև ձևի մակբայ, օրինակ՝ *….իսկ ի նոյն ցրտութենէ ի պարզ ժամանակի յորժամ ջինջ երկին լինիցի ի խոնաւութենէն վերնոյ՝* ***ձիւնակերպիկ*** *իջեալ սփռմամբ նաւսր բնակութեամբ հողմոյն: ….ի խոնաւութենէ վերնոյն* ***ձիւնակերպ*** *իջեալ սփռմամբ անաւսրութեան հողմոյն* (755):

Նորաբանություններով ձևավորված պարագա լրացումները հիմնականում կառավարման եղանակով են արտահայտվել, և միայն մեկ դեպքում առդրությամբ, այսպիսով պարագաառությունը [7, 23] գիտական երկերում ունի կարևոր գործառույթ, որով բացահայտվում են գործողությունների կատարման տարբեր հանգամանքներ:

Ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ Անանիա Շիրակացու երկերում աստիճանավորված լրացումների [4, 425] բարդ ցանցերը

հաճախ կազմվել են նորաբանություններով. արդյունքում ստացվել են բառային նորաբանություններով շարահյուսական նորաբանություններ:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Աբեղյան Մ., Երկեր, հ. Զ, Երևան, 1974:
2. Աղայան Է., Ժամանակակից հայերենի հոլովումը և խոնարհումը, Երևան, 1967:
3. Անանիա Շիրակացի, Մատենագրություն, Երևան, 1979:
4. Առաքելյան Վ., Հայերենի շարահյուսություն, հ. 1, Երևան, 1958:
5. Ասատրյան Մ., Ժամանակակից հայոց լեզու, Երևան, 1987:
6. Գյուլբուդաղյան Ս., Ժամանակակից հայոց լեզու, Երևան, 1988:
7. Խաչատրյան Գ., Գրաբարի վերլուծական բայերի արժույթը, Երևան, 2000, էջ 23:
8. Խաչատրյան Գ., Գրաբար, Ուսումնական ձեռնարկ:
9. Հարությունյան Հ., *Կառավարումը ժամանակակից հայերենում*, Երևան, 1983:
10. Ջահուկյան Գ., Ժամանակակից հայերենի տեսության հիմունքները, Երևան, 1974:

Связанные и практические особенности неологизмов в научных произведениях Анании Ширакаци

Аджян Джульета
ВГУ, Армянский язык и литература,
Магистратура, 2-ой курс

Резюме

Ключевые слова: *неологизмы, связная особенность, практическая особенность, глагол, существительное, прилагательное, наречие, неодушевлённые, одушевлённые*

Дополнения, образованные неологизмами, в основном выражаются в форме управления, только в одном случае в аппозитивном, таким образом, атрибутика в научных произведениях имеет важную функцию, которая выявляет различные обстоятельства совершения действий.

Исследования показывают, что сложные сети градуированных дополнений в произведениях Анании Ширакаци часто состоят из неологизмов: в результате были получены синтаксические неологизмы с глагольными неологизмами.

The Connective and Applied Features of the Novelties of Anania Shirakatsi's Scientific Works

Hajyan Julieta
VSU , Armenian Language and Literature,
MA the 2nd course

Summary

Key words*: neologism, connective feature, applied feature, verb, noun, adjective, adverb, common noun, proper noun*

Adverbial modifiers formed with neologisms were mainly expressed through management and only in one case with apposition, so modifying has an essential function in scientific works which reveals different circumstances of the actions.

The studies show that in Anania Shirakatsi's works graded modifiers' complex networks are often formed with neologisms. As a result, syntactic neologisms with verbal neologisms were obtained.

Կազմությամբ բարդաձանցավոր բայերի կապակցելիական առանձնահատկությունները Գուգարքի տարածաշրջանի հայ ժողովրդական հեքիաթներում

Ղազարյան Հայկուշ
ՎՊՀ, Հայոց լեզու և գրականություն, մագիստրատուրա, 2-րդ կուրս
Գիտական դեկավար՝ բ. գ. թ., դոցենտ ***Լ. Պետրոսյան***

Հանգուցային բառեր. *ներգործական, չեզոք սեռ, ենթակա, խնդիր, պարագա, նախադասություն, բայանուն, գոյական, ձայնարկություն:*

«Հայկական ժողովրդական հեքիաթներ» մատենաշարում ամփոփված են Արարատյան, Շիրակի, Արցախի, Ուտիքի, Տավուշի, Սյունիքի, Բագրևանդի, Ալաշկերտի, Մանազկերտի, Բաղեշի, Տուրուբերանի ազգագրական նյութերը: Բանահավաք հեղինակները, կարևորելով ժողովրդական ստեղծագործությունների բովանդակային առանձնահատկությունները, զուգահեռաբար նշում են. «…. ժողովրդական բանաւոր գրականութեան **գրականական** հետաքրքրութիւնից զատ, նկատելի է և նորա **լեզուաբանական** նշանակութիւնը գաւառաբարբառների ուսումնասիրութեան տեսակէտից» [2, X], քանի որ հայոց լեզվի պատմության, ազգագրության, պատմագրության, բանագիտության և այլ բնագավառներին առնչվող շատ հարցերի պատասխանը կարելի է գտնել բարբառների բառապաշարի ուսումնասիրության շնորհիվ [1, 112]: Ուսումնասիրելով բարբառագիտական մի շարք աշխատություններ՝ պարզեցինք, որ լեզվաբանորեն ուսումնասիրված չեն Լոռու խոսվածքին բնորոշ բարդ և բարդաձանցավոր բառերը՝ ըստ իմաստային և կապակցական առանձնահատկությունների:

Հայտնի է, որ ամեն մի լեզու ունի բառակազմական, բառաբարդման յուրահատուկ միջոցներն ու եղանակները: Լոռու խոսվածքն էլ՝ իբրև հայոց լեզվի ինագույն արտահայտություն, ունի բառաբարդման ուրույն միջոցներ ու եղանակներ, որոնց կիրառմամբ շարունակ հարստացել ու հարստանում է նրա բառապաշարը:

Լոռու խոսվածքին բնորոշ եղանակներից է հարադրությունը, որը՝ որպես անիսկական բարդության տեսակ, հնագույն ժամանակներից սկսած, մեծ դեր է խաղացել ու այսօր էլ շարունակում է խաղալ բառապա-

շարի հարստացման գործում: Հարադրությունը՝ իբրև բառապաշարի հարստացման ուրույն եղանակ, հատուկ է առանձնապես բայ խոսքի մասին: Լոռու խոսվածքն ունի մեծ թվով բայական հարադրական բարդություններ, որոնք կազմվում են որևէ վերադիրից և բայից, կամ զուտ բայական միավորներից՝ արտահայտելով բաղադրիչներից տարբեր մի նոր նշանակություն [6, 9]: Կազմված լինելով երկու արմատից՝ բարդ հիմքով բայերը բառակազմական մակարդակում պարզ կամ բարդ չեն լինում. դրանց բնորոշ են ***էլ*** կամ ***ալ*** բայական երկբնույթ ածանցները:

Շարահյուսական կապակցությունների մեջ բայը կարող է հանդես գալ բոլոր հնարավոր դիրքերում՝ կատարելով մի դեպքում՝ համազոր, մյուս դեպքում՝ գերադաս, երրորդ դեպքում՝ ստորադաս բաղադրիչի քերականական գործառույթ: Դրանցից արժույթի արտահայտության միջոց են ծառայում այն կապակցությունները, որոնցում բայը հանդես է գալիս կամ համադաս, կամ գերադաս բաղադրիչի շարահյուսական գործառույթով: Ինչ վերաբերում է ստորադաս բաղադրիչի գործառույթ կատարող բայերին, ապա վերջիններիս դերը բայի արժույթի գնահատման գործում էական չէ: Համազոր և գերադաս բաղադրիչների գործառույթներով հանդես եկող դիմավոր բայերի մասնակցությամբ ձևավորվում են ենթակաստորոգյալ, կոչական-ստորոգյալ, ստորոգելի-հանգույց, խնդիր-լրացյալ և պարագա-լրացյալ քերականական կապակցություններ, որոնք իրականանում են տարբեր եղանակներով [3, 13]:

Գուգարքի տարածաշրջանի հեքիաթներից առանձնացրել ենք հատկապես բարբառին բնորոշ կազմությամբ բարդ հիմքով բայերը, որոնք դասակարգել ենք անդեմ և դիմավոր ձևերի՝ ներկայացնելով դրանց կապակցելիական առանձնահատկությունները:


1. Հարադիր բայերի կապակցելիական առանձնահատկությունները

Հեքիաթներում հարադրական բայերը բազմաթիվ են և հաճախ են իրար հաջորդում կազմությամբ բարդ կառույցներում, ինչպես «Բազրկանի հոգեորդին» հեքիաթն սկսվում է բարդ նախադասությամբ, որի յոթ բաղադրիչ նախադասություններից չորսի ստորոգյալներն արտահայտված են հարադիր բարդությամբ կամ դրան առնչակից բայական դարձվածքներով, ինչպես՝ *ժամանակով էղել ա մի բուդալա տղա,* ***վեր ա կացել****, գնացել մի քաղաք, տեհել ա մի բազրկան նստած.* «***Բարի օր ա տալի, գլուխ վեր բերում****, եղ* ***ճամփեն ընկնում***» [4, 250]:

«Բազրկանի հոգեորդու հեքիաթում» *նոքար մտնել, մշակութիւն անել, ծառա մտնել, ճակատին գրել, ռազի ըլել, քեֆ անել, վեր կենալ, հոգեորդի վեր ունել, անց կացնել, դովլաթը տղի գլխին գրել, միտքն ընկնել, սիրտը բաց անել, ճամփա տալ, փիքր անել, շանց տալ, դարդին դարման անիլ, գլուխ տալ, գլուխ վեր բերել, մտիկ տալ, դիվան անել, ուշունց տալ, մտքի եղնը ընկնել* անձնանիշ հարադրությունները, որոնք ըստ կապակցելիական հնարավորությունների և իմաստային ընկալումների բաժանվում են ներգործական և չեզոք խմբերի, դրսևորում են կապակցելիական հետևյալ առանձնահատկությունները:

Չեզոք սեռի բայերը գործողություններ են, որոնք կապակցվում են ենթակային հաջորդական շարադասությամբ՝ հանդես բերելով ոչ պարտադիր լրացումառություն, օրինակ՝ *Քյասիբ տղա եմ, **գնում եմ նոքար մտնում, մշակություն անեմ*** [4, 250]:

Ներգործական սեռի հարադրություններից է ***ճակատին գրել***-ը, որի սեռի խնդիրն արտահայտվել է երկրորդական նախադասությամբ: Հեքիաթում հարադրությանը կապակցվել է նաև պայմանի պարագա երկրորդական նախադասություն, որը, ի տարբերություն սեռի խնդրի, պարտադիր արտահայտություն չունի լեզվական մակարդակում, բայց խոսքային տվյալ իրավիճակում պարտադիր է, քանի որ գործողությունը կկատարվի միայն պայմանը իրագործելու դեպքում:



Հեքիաթներում հաճախադեպ բայերից է *ռաստ գալ* հարադրությունը՝ «հանդիպել» իմաստով [5, 5, 229], որ հիմնականում գործածվում է սահմանական եղանակի անցյալ կատարյալ ժամանակաձևով՝ կապակցվելով անձնանիշ բառերի, ինչպես՝ *էլի գնաց, մեկն էլ **ռաստ էկավ*** [4, 256]:

Դնել բաղադրիչով է հարադրություն կազմում *մի բանի դնել* բայը՝ «աշխատեցնել» իմաստով, որ բարբառային բառարանում վկայված չէ: «Խի՞ ա մարդը կնկա եղնից գնում» հեքիաթում բայը գործածվել է սահմա-

նական եղանակի անկատար ներկա ժամանակաձևով, որը, սակայն, տվյալ դեպքում արտահայտում է անցյալ ժամանակի իմաստ, ինչպես՝ *Ի՞նչ անեմ, կնքավո՛ր, բերել ես ու* ***մի բանի դնում չես****, ժամանակս էլ թամամում ա* [4, 257]:

Անել բաղադրիչով է ձևավորվել ***մտիկ անել*** արտահայտությունը՝ *նայել* չեզոք սեռի իմաստով, որտեղ կատարվում է սեռային փոխանցում. ներգործական սեռի բայը, կապակցվելով վերադիրի, վերածվում է չեզոք սեռի, ինչպես՝ *Դու* ***մտիկ կանես*** *ինձ* [4, 257]: ***Մտիկ անել*** գործողությանը հաճախ է հաջորդում ***տեսնել*** բայը՝ ստեղծելով զուգաբայի տպավորություն, ինչպես՝ ***Մտիկ արավ*** *տղեն,* ***տեհավ,*** *որ հոգիառը ոտների կռանն ա* [4, 257]:

Կնքավորը էկավ, ***վերի կուռը կտրեց*** [4, 258] արտահայտության մեջ ***կտրել*** բայով է ձևավորվում *վերի կուռը կտրել* հարադրությունը «համառել» իմաստով:

2. Համադրական բայերի կապակցելիական առանձնահատկությունները

Համադրական բարդություններում բաղադրիչների իմաստի սերտաճումն ավելի ակնհայտ է: Դրանցից է Լոռու խոսվածքին բնորոշ *երկուֆոգիսանալ* անձնանիշ բայը, որ կազմվել է «թվական որոշիչ + գոյական որոշյալ» մասնակաղապարով, որի երկրորդ բաղադրիչ արմատում հանդիպում ենք ***ռ*** ձայնավորից առաջ *հ>ֆ* հերթագայության, որը հատուկ է հայերենի բարբառներին [7, 47]: Չեզոք սեռի համադրական ***երկուֆոգիսանալ*** «հղիանալ» իմաստով բայը (Ար.՝ **էրգուհոքովնալ**, Մշ. Ապր. Սս. Կր. Շիր.՝ **էրկուֆոքիսանալ**, Ար. Աշտ.՝ **էրքոքիսանալ**) [5, 1, 391], ինչպես և ենթադրվում է, կապակցվում է իգական սեռի անձնանիշ գոյականների՝ որոշ տարիքային սահմանափակմամբ, սակայն հեքիաթներում այս վերջին սահմանափակումը չի գործում, և գործողությունը վերագրվում է *պառավ* գոյականին, օրինակ՝ *Էս պառավը* ***երկուֆոգիսանում ա*** [4, 18]:

Հեքիաթներում հետաքրքիր արտահայտություն ունի գրական հայերենին բնորոշ *անցկացնել* բայը, որ գործածվում է ***անցկրկացնել*** բառատարբերակով: Կարծում ենք սա «անց + -***իկ***» ածանցավոր կազմության ինչյունափոխված տարբերակն է, որ գործածվում է որպես ներգործական սեռի բայ՝ կապակցվելով անձնանիշ ենթակայի և իրանիշ սեռի խնդրի, օրինակ՝ *….հըլա մենք էլ կտանենք մեր սնուռը* ***անցկրկացնենք*** [4, 43]: Սրան զուգահեռ կիրառվում է նաև ***անցկացնել*** տարբերակը, օրինակ՝

Անցկացած *բանի եղնա էլ ի՞նչը կը հասնու. տեղը մընաց փոշիման նըստած* [4, 826]: Բայը գործածվում է նաև ***անկացնել*** տարբերակով, օրինակ՝ *….առ էս թուխտը՝ կը տաս իմ քվորը, նա քեզ անփորձ* ***կանց-կացնի*** [4,817]:

Բայի ***անցկենալ*** տարբերակում բացառական հոլովաձևով անորոշ դերբայական ձևը գործածվել է որպես չեզոք սեռի բայ՝ վերագրվելով իրանիշ գոյականի, ինչպես՝ *Մի ժամանակ* ***անցկենալուց*** *ետը՝ տղի հերն ու մերը միտն ընկան* [4, 817]: ***Անցկենալ*** բայը հաճախ է գործածվում նաև դիմավոր արտահայտություններում տարբեր եղանակային արտահայտություններով, օրինակ՝ *Որ կրակը* ***անցկացար****, գնացիր՝ կը հասնես՝ մի դուռ կա էտ դռանը, էտ դռան աղաքին էրկու հատ դարաուլ կա կայնած, թրերր բանցր ու ցածր են անըմ, որ մարդ* ***չանցկենա*** *էտ տեղից։ Դու ձախու ձեռիդ թխտին հուպ կը տաս, թուրերը քեզ չեն կտրի,* ***կանց կենաս****, կէթաս* [4, 818]: Բերված օրինակում ***անցկենալ*** բայը գործածվել է երեք անգամ՝ դրական և ժխտական ձևերով՝ համապատասխանաբար սահմանական, ըղձական և ենթադրական եղանակներով: Գործողության կատարման համար անհրաժեշտ են անհնարինություն խորհրդանշող իրանիշ գոյականներ, որոնցից տվյալ դեպքում գործածվել է *կրակ* բառը: Այստեղ հետաքրքիր է նաև ենթադրական եղանակի ***կ***- ցուցիչի կիրառությունը, որ դրվել է վերադիրի վրա:

Խաչակնքել բայը գործածվում է ***խեչակնքել*** տարբերակով, օրինակ՝ *Բեզըրգանը ըրեսին* ***խեչակընքեց*** [4, 823]: Օրինակից պարզ է դառնում, որ չեզոք սեռի անձնանիշ բայի իմաստի արտահայտման համար կարևոր է տրական հոլովով արտահայտված տեղի պարագան և նպատակի պարագա երկրորդական նախադասությունը:

Գրական հայերենում գործածական ***տիրապետել*** բայը հեքիաթներում գործածվում է ***տիրապաիտել*** տարբերակով՝ «ունենալ որպես սեփականություն» [5, 6, 185] իմաստով՝ կապակցվելով անձնանիշ ենթակայի և իրանիշ սեռի խնդրի, օրինակ՝ *Կէրթաք էն քառասուն կարաս ոսկին* ***կըտիրապաիտեք*** [4, 835]:

Համադրական բայերը գործածվում են ինչպես դիմավոր կառույցներում, այնպես էլ անդեմ կառույցներում՝ որպես հարակատար դերբայով ձևավորված դերբայական դարձվածի գերադաս անդամ: «Թոռչու տղեն» հեքիաթում նման օրինակներն ունեն կերպարաստեղծման յուրահատկություն: Առաջին դեպքում գլխավոր հերոսը գալիս է ու ….***լացակնքած***

նստում կրակի դրաղին [23]: Երկրորդ օրինակում ***ևսպրտած***, ինչպես՝ *Թոռչու տղեն րիգունը տուն ա գալիս ու ունքերը կիտած, **ևսպրտած** կրակի դրաղին նստում* [4, 24]: Այս դեպքում բարդածանցումը նշանակում է «խոր տխրությամբ համակվել, սիրտը դառը տխրությամբ լցվել» [5, 5, 309]:

Հարակատար դերբայը կիրառվում է նաև որոշչի շրահյուսական կիրառությամբ: «Անջիգյար մեր» հեքիաթում «գոյական հիմք + բայական հիմք» ստորադասական հարաբերությամբ է կազմվել ***թոզակալել*** ներգործական սեռի բայը, որն այստեղ նշանակում է «*մոռացված*»: Բայի հարակատար դերբայով բնութագրվել է *նետուաղեղ* կազմությամբ բարդ գոյականը, օրինակ՝ *Տղեն հասնում ա տուն, ձիու ճկատիցը պաչում, մտնում ա իր օթախն ու պատիցը վեր բերում **թոզակալած** նետուաղեղը* [4, 34]:

Համադրական բարդությունների մեջ առանձին խումբ են կազմում կրկնավորները, որոնք մի դեպքում կազմվում են.

▪ Չայնարկություններից, օրինակ՝ ***շվշվալ*** «սուլել» [5, 4, 283]՝ գործածվելով որպես անորոշ դերբայ՝ ***և*** հոլովական մասնիկով, որը, ըստ ծագման, բացառականին բնորոշ վերջավորություն է, բայց Լոռու խոսվածքում կիրառվում է գործիական հոլովի իմաստով՝ որպես ձևի պարագա՝ վերագրվելով անձնանիշ գոյականի, օրինակ՝ *տեհավ մի մարդ ձեռնափետը ուսին դըրած դըբա իրանց **շըվշվալեն** գալիս ա* [4, 822]:

▪ Գոյականներից, օրինակ՝ ***վախվախել*** «խիստ վախենալ» [5, 6, 13]: Ի տարբերություն նախորդ օրինակի՝ այս բայով ձևավորված ձևի պարագան կիրառվել է հենց գործիական հոլով, օրինակ՝ *Թոռչու տղեն **վախվախելով** ծառերի ճղքների միջիցը մտիկ ա անում* [4, 24]:

▪ Բայանուններից, այստեղ հանդիպել ենք ***վազվզել*** բազմապատկական բայի հնչյունափոխված տարբերակին՝ ***վազզել***, որ վերագրված է աշակերտներ անձնանիշ գոյականին, ինչպես՝ *Աշակերտները քաղաքի միջով լաց ըլիլեն որ **վազզում ին**, քաղաքի մարդիկ հարցրին* [4, 792]: Նույն բայը վերագրվում է նաև ***ձուկ*** կենդանանիշ գոյականին «Քաջ ախչիկը» հեքիաթում, օրինակ՝ *….տղեն հացը քցեց ծովի ղրաղը՝ ձուկը **վազզավ*** [4,788]:

Գուգարքի տարածաշրջանի հեքիաթների՝ կազմությամբ բարդածանցավոր բայերի կապակցելիական առանձնահատկությունների վերլուծությունից պարզ է դառնում, որ մի ամբողջ միտք արտահայտող բառային միավոր-բայերը դրսևորում են կապակցելիական հետաքրքիր առանձնահատկություններ՝ հաճախ ենթարկվելով իմաստափոխության: Կարևոր է

նշել այն հանգամանքը, որ լեզվում ոչ պարտադիր համարվող շատ լրացումներ խոսքային միջավայրում պարտադիր են դառնում՝ իմաստի ամբողջացման տեսակետից, և հաճախ այս կամ այն անդամի արտահայտությունը կապված է լինում մյուս անդամի կապակցությունից: Քննելով ժողովրդական մտքի խտացումների իմաստային և կապակցելիական առանձնահատկությունները՝ պարզ է դառնում տվյալ ժողովրդի լեզվամտածողության առանձնահատկությունը:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Բառնասյան Ջ., Կարնո բարբառի խոսվածքներին անդրադառնալու մի փորձ http://shirak.asj-oa.am/290/1/109-112.pdf Հասանելի է 13.02.2022թ.:
2. Էմինեան ազգագրական ժողովածու, հ. Ա, Ալեքսանդրապոլ, 1901:
3. Խաչատրյան Գ., Գրաբարի վերլուծական բայի արժույթը, Երևան, 2000:
4. Հայկական ծողովրդական հեքիաթներ, հ. VIII, Երևան, 1977:
5. Հայոց լեզվի բարբառային բառարան, հ. Ա, Երևան, 2001, հ. Դ, 2007, հ. Ե, 2008, հ. Ջ, 2010:
6. Մարգարյան Ա., Հայերենի հարադիր բայերը, Երևան, 1966:
7. Ջահուկյան Գ., Հայ բարբառագիտության ներածություն, Երևան, 1972:

Соединительные особенности сложных производных глаголов в армянских народных сказках Гугаркского района

Казарян Айкуш
ВГУ, Армянский язык и литература,
Магистратура, 2-ой курс

Резюме

***Ключевые слова**: активный залог, нейтральный залог, подлежащее, объект, наречие,предложение, местоимение, глагол, восклицание*

Анализ соединительных связей сложных производных глаголов в народных сказках Гугаркского района показывает, что глаголы, словесные единицы, выражающие цельную смысл, обладают интересные соединительными особенностями и часто претерпели семантические изменения. Важно отметить, что дополнения, которые не являются обязательными в языке, часто становятся обязательными в речевой среде для пополнения значения. Выражение того или иного члена предложения часто зависит от дополнения другого члена. Изучение семантических и соединительных особенностей сгущения народной мысли выявляет особенности языкового мышления данного народа.

The Linkage Peculiarities of Derivational Compound Verbs in the Armenian Folk Tales of the Gugark Region

Ghazaryan Haykush
VSU, Armenian language and literature,
MA the 2nd course

Summary

***Key words**: active voice; neutral voice; subject; object; adverbial modifier; sentence; pronoun; verb; interjection*

An analysis of the linkage peculiarities of the derivational compound verbs in the folk tales of the Gugark Region reveals that verbs, word units expressing a complete thought, demonstrate interesting linkage peculiarities, often undergoing semantic changes. It is important to point out that modifiers that are not mandatory in the language often become mandatory in speech to make a meaning complete. The expression of this or that member of a sentence often depends on the other member. The study of the semantic and linkage peculiarities of the condensations of folk ideas reveals the peculiarities of the linguistic thinking of the given people.

Զապել Եսայանի «Սիլիհտարի պարտեզները» կենսագրավեպը

Ղահրամանյան Տաթևիկ
ԱրՊՀ, Հայոց լեզու և գրականություն, 3-րդ կուրս
Գիտական դեկավար՝ բ. գ. թ. ***Ն. Դավթյան***

Հանգուցային բառեր. *կենսագրավեպ, Սիլիհտար, արևմտահայ գրականություն, մանրապատում, հուշագրություն*

Արևմտահայ գրականության ծիրում իր հախուռն ստեղծագործական, ազգային-հասարակական, համամարդկային գործունեությամբ անշրջանցելի վաստակ է թողել Զապել Եսայանը: «Հայոց մեծագույն գրագիտուհին» (ինչպես ճշմարտացիորեն բնորոշել է նրան Արշակ Չոպանյանը), ցավալիորեն, հայ իրականության մեջ իր կատարած կենսաշահ առաքելությանը համահարգ հռչակ և վայելում չունի. ճիշտ է առանձին գնահատություններով հանդես եկան Ս. Արզումանյանը, ավելի ուշ՝ Զ. Եսայանի փոքր կտավի ստեղծագործություններին ադրադարձավ նաև գրականագետ Ս. Գրիգորյանը, բայց այսօր էլ Զ. Եսայան արձակագիրը, հումանիստն ու հասարակական գործիչը ընթերցողին ներկայանալու կարիք ունիծ՝ հիմք ընդունելով ոչ միայն նրա՝ հանճարի տաղանդը, այլ նաև պատմության բախտորոշ ժամանակաշրջանների (Մեծ Եղեռն, Խորհրդային Հայաստան, Ստալինյան բռնաճնշումներ) հետ ուղղակիորեն առերեսումը և նաև այն հանգամանքը, որ խորհրդային գաղափարաբանության հրամայակով հեղինակը միտումնավոր մնացել էր չուսումնասիրված:

Բազմաժանր է Զ. Եսայանի գրական ժառանգությունը՝ ակնարկ ու պատմվածք, վեպ ու վիպակ, նորավեպ, արձակ բանաստեղծություն, որոնք, գրական մեծ արժեք ունենալով հանդերձ, արդարացնում են գրողի մեծագույն ձգտումը՝ գրականությունը դարձնել պայքարի միջոց: Գրական ասպարեզում անդրանիկ քայլերը կատարելու ժամանակ նրա նորընձյուղ ստեղծագործական միտքը սպունգի նման կլանեց Տյուսաբի նախազգուշացումը՝ «Էրիկ մարդ գրագետը ազատ է միջակ ըլլալ, բայց ո՛չ կին գրագետը» [3, 150]: Եվ սկզբնավորվեց նրա գրական ուղին՝ միջակություններ մերժող բացառիկ արժեքահենությամբ, կյանքի պատկերների ներկայացման նրբին գեղագիտական մոտեցմամբ, լեզվի՝ «թեթև ու փափուկ թերխաշությամբ»: Ակնառու է Եսայանի ստեղծագործությունների առանցքում ինքնակենսագրական տարրի առկայությունը՝ գեղարվեստա-

կան շղարշի տակ, սակայն փաստագրական նշանակությամբ առանձնանում է «Սիլիհտարի պարտեզները»: Վեպը Զ. Եսայանի գլուխգործոցն է. այն հանճարեղ վիպագրուհու մանկության և պատանեկության՝ լուսանկարչական ճշգրտության հասնող վերհուշն է և մեծարժեք նյութ է տալիս Եսայան- մարդու, Եսայան-գրողի և գործչի կերտվածքի ձևավորման վրա ներգործած ազգային, հասարակական, ընտանեկան հարաբերությունների վերհանման տեսանկյունից:

Եսայանը կարոտի անթաքույց հրայրքով է գրում իր մանկության և պատանեկության խորհրդանիշ Սիլիհտարի անզուգական պարտեզների մասին. «Իմ կյանքի ընթացքին տեսած եմ շատ երկրներ և վայելած եմ բնության բազմատեսակ գեղեցկություններ, բայց Սիլիհտարի պարտեզներու հիշատակը մնացած է անջնջելի» [3, 21],– խոստովանում է գրագիտուհին:

Պատահական չէ ինքնակենսագրավեպի՝ վիպագրուհու կողմից «Սիլիհտարի պարտեզները» անվանադրումը. իր մանկության ողջ շլացումը՝ մանկական երևակայությամբ հարուստ հասկացողությամբ իմաստավորված, հոգու առաջին փթթուն պոռթկումները՝ բոցավառված վարդաբույրով, արքայական պտուղների արևշատությամբ, և բնության բազմերես գեղեցկության յուրացման նրա ազնիվ ճիգերը՝ երազի, լույսի, երանգի ու բույրի արբեցումով, շղթայված էին Սիլիհտարի պարտեզներին:

Ուշարժան է վիպագրուհու՝ հուշագրության ներկայացման գեղարվեստական ժանրի ընտրությունը՝ գերազանցապես գիտակցելով ժանրի առանձահատուկ հնարավորությունները. «Ազգային գրականության մեջ ինքնակենսագրական և հուշագրական աղերսները ներկայացնում են ժողովրդի հավաքական կյանքը, դժվարին, ողբերգական իրադարձությունները, կերպարները, որոնց մեջ հաճախ կարելի է որսալ հեղինակին ու նրա մտերիմ միջավայրը» [1, 107] դիտարկման մեջ ես-ի և մենք-ի փոխհարաբերության ուղիղ համեմատականությունը ակնհայտ է նաև «Սիլիհտարի պարտեզները» վեպում, քանի որ իր կյանքի դրվագների ներկայացմամբ ներկայացվում է նաև ժամանակի ամփոփ տարեգրությունը:

«Սիլիհտարի պարտեզները» գրելու ժամանակահատվածը համընկնում է ստալինյան հետապնդումներին նախորդող շրջանին և, ըստ էության, հեղինակը երկար է պատրաստվել այն գրելուն (ինքնակենսագրական ժանրին դիմելու նախափորձեր կատարել է ավելի վաղ՝ ընթերցողին ներկայացնելով «Մանկության հիշողություններ», «Հակոբ մորեղբայրս»

պատմվածքները)։ «Մամուլի տակ է և շուտով լույս կը տեսնե «Սիլիհտարի պարտեզները», որ իմ մանկության romance (ընդգծումը՝ Տ. Ղ.-ի) հիշողություններն են» [2, 308],– գրում է Եսայանը Հակոբ Օշականին ուղղված նամակում՝ «romance» բառով ակնարկելով երկի քնարականությունը։ Կենսագրավեպը, կարելի է ասել, առանձնանում է նրբահյուս արվեստով և քնարականությամբ։ Այն բաղկացած է երկու գրքերից՝ Ա և Բ։ Յուրաքանչյուր գիրք ներկայացնում է առանձին մանրապատումների ամբողջություն, որոնց կառուցվածքային միավորները ժամանակակից գրականգիտության տեսանկյունից սխալ կլինի նովելներ որակելը, և ավելի մոտ է պատմվածքին։ Վեպի դիպաշարն ամբողջանում է առանձին մանրապատումների սյուժեների համապատկերում, և յուրաքանչյուր հուշապատում ունի իր խորագիրը, իսկ հերոսներն անցնում են մանրապատումից մանրապատում։ «Սիլիհտարի պարտեզները» շարադրելիս Զապել Եսայանը դիմում է հիշողությանը, բացում իր հոգեաշխարհի դռները, ընթերցողին ներս հրավիրում՝ շարժապատկերի նման ծանոթացնում իր մանկությանը։ Պատմվող դեպքերի մի մասին ականատես չի եղել, ծանոթ է միջնորդավորված՝ տան մեծերից լսածների համաձայն, մի մասի կրողն էլ ինքն է՝ որպես իրադարձությունների կենտրոնում գտնվող հերոս։ «Մեր ընտանիքը» հուշապատումի մեջ ներկայացված սերնդաբանությունը՝ ընտանիքի սերման ակունքի, նշանակալի անցքերի բնութագրությամբ, պատկերացում է տալիս հեղինակի կյանքում ընտանիքի ունեցած ազդեցության ու դերի մասին, մյուս կողմից՝ դառնում է պատմական ժամանակաշրջանի ճանաչողության նյութ. «Այն ժամանակ, ենիչերները ահ ու սարսափի մեջ կը պահեին մայրաքաղաքի ազգաբնակչությունը։ Ենիչերները մասնավորաբար սանձարձակ էին Սթամպուլի և Ոսկեջյուրի հույն թաղերուն մեջ։ Մեծ մորս ընտանիքը արդեն իսկ իրենց ազդեցությունը կորսնցուցած, դեվլեթ դյուշկինի, և հետևաբար անպաշտպան ընտանիք, իրենց աղջիկը Լուսիկը, մինչև տասնըչորս տարեկան հասակը պահեր են տանը չորս պատերուն մեջ, որովհետև վախցեր են, որ որևէ ենիչերի ուշադրությունը կը դարձնե անոր» [3, 8]։ Տատի՝ Լուսիկի հոգեբանության խոր գծերը լուսաբանելու այս հատվածից իրազեկ ենք դառնում ժամանակի պատմական անցքերին, բարքերին ու ազգային կացութավիճակին։ Յուրատիպ քննությամբ պետք է դիտել Լուսիկի կերպարը՝ որպես հեղինակի ընտանիքի դաստիարակության կրողի, հնի և նորի բախման պատճառի։ Հեղինակը բարեգորով ջերմությամբ է գրում «տուտու»-ի (Լուսիկին այդպես էին կոչում) մասին, չի քննադատում նրա խստաբարո վարքը, ընդդիմության դեպքում էլ զուսպ է ու հաշվենկատ, և

զգալի է հեղինակի կապվածությունը տուտուին առավել շատ, քան մորը: Ուշագրավ է հայ գրականության մեջ տատի դերի ընդգծումն ու որպես ընտանիքի հովանավորի ներկայացումը, որը հատկապես լայն ընդգրկում ունի Մահարու, Թոթովենցի ստեղծագործություններում: Սնոտի ավանդապահությամբ ու բազմաչարչար անցյալի ահերով ապրող Լուսիկի համար «փիսություն կըլլար» տանը ծաղիկներ դնելը, աններելի հանցանք՝ որդու օտարուհու հետ ամուսնանալը, ընտանիքի անդամների շռայլությունն ու զվարթությունը: Հեղինակը, կարծես, առանց հիշողությունը լարելու, իր բազմանդամ ընտանիքի անդամների նիստուկացը, շարժումները, նրանց հետ կապված չնչին մանրուքները հիշում է առանձին ջերմությամբ: Տպավորիչ են աշուղի տաղանդով օժտված Շիրին նախապապի և նրա եղբոր հետ կապված արկածահարույց դեպքերը, մորաքույրերի կերպարները, ընտանիքի «մոլորված զավակի»՝ Խաչիկ մորեղբոր արգելված դիպվածը և վերջապես իր կյանքի ոգեշունչ-կերպարի՝ հոր շրջահայացությունն ու ազնվությունը ներկայացնող պատառիկները՝ «Մեր ընտանիքը», «Տունը», «Խաչիկ մորեղբայրս», «Գեշ օրեր»» բաժիններից:

Առանձին հատվածներում («Անի քաղաք նստեր կուլա…», «Դպրոցը») երևում են դեռևս մանկուց նրա մեջ բռնության ու անազնվության դեմ սաղմնավորվող ընդվզման ազնիվ ծիլերը: Զապելը դպրոցում խորապես վրդովվում է՝ գիտակցելով անհավասար և խտրական պայմանները, անզիջում ընդդիմանում է ուսուցչի դեմ՝ ազնիվ-տկարին պաշտպանելու համար, ազդվում է, երբ բակի տղաները տանջում են թիթեղագործին՝ «յահուդի» լինելու պատճառով. «Այն հետևողական դիմադրությունը, որ ցույց կուտայի դպրոցական րեժիմին, չէր կարող աննկատելի մնալ: Թե՛ տունը և թե՛ դպրոցը կը պախարակեին ինձ այդ մասին» [3, 124] տողերով է գնահատում իր ազնիվ ընդդիմության արձագանքը շրջապատի կողմից, և միայն հայրն էր, որ սատարում էր իրեն՝ ոչ միայն հույսը չկտրելով, այլ մեծ ապագա նախանշելով:

«Մանչ ըլլայի» մանրապատումի մեջ մերկացվում է սուլթանների բռնապետական գործունեությունը, պատկերվում նրանց անօրենության տակ հածող մարդկանց վիճակը, ներկայացնում ժողովրդական ատելություն սուլթանների հանդեպ: Եվ այստեղ է շարժվում փոքրիկ աղջկա սիրտը, լցվում անհագ վրեժխնդրությամբ, մանկուց սաղմնավորվում է վեհ գաղափարախոսությամբ ազատատենչությունը՝ «Մանչ ըլլայի՛ և ըլլայի չերքեզ, էշքեա, խաչաճճի, լեռը ապաստանող ավազակ… Եվ արդարություն գործադրեի ու այդ ընելու համար կը մեռնեի հեշտանքով» [3, 63]:

Թերթելով հուշապատումի էջերը, դժվար չէ պատկերացում ունենալ, որ նրա տաղանդի առաջին ծիլերն ընձյուղվում էին մանկուց: «Ազատն Աստված այն օրից և այբուբեն» հուշապատումում Զապելը նկարագրում է, թե ինչպես Մ. Նալբանդյանի «Ազատություն» բանաստեղծությունը բերանացի գիտեր, երբ ընդամենը չորս տարեկան էր: Զապելը սերտել էր այն՝ զարմացնելով և արցունքներ քամելով հոր աչքերից. «Դուրսը աշնանային վերջալույսը կը բոցավառեր երկինքը. իմ տեսողության հեռավոր կետին վրա նոճի մը մեղմորեն կօրորվեր: Հանկարծ թոթով լեզվով սկսա արտասանել.

«Ազատն Աստված այն օրից,

Երբ հաճեցավ շունչ փչել…» [3, 35]:

Նույն տարվա ձմռանը սովորեց նաև կարդալ: Դպրոցական տարիներին («Դպրոցը») դասընկերներից առանձնանում էր իր շարադրություններով, հաճախ էլ քննադատում ուսուցչուհուն՝ նրա հետ համաձայն չլինելով առանձնապես շարադրությունների վերնագրերի հարցում: Հումորով է խոսում լիրիկական զգացումներ առաջացնող, ռոմանտիկ պատկերներ ստեղծող, երկարաշունչ, մակդիրներով հարուստ շարադրությունների մասին, որոնք դասընկերներն էին՝ արժանանալով ուսուցչուհու գովեստին, Զապելի՝ ներողամիտ քմծիծաղին. «Այդ շարադրությունները կը մարզեին աշակերտուհիները կեղծ ռոմանթիզմի մեջ և պիտակված էին «ա՛հ»-երով և «օ՛հ»-երով, բնության շաբլոն նկարագրություններով ու թխված էին գերադրական ածականներով: Այդ բոլորը ինձ չէին հրապուրեր և մազաչափ չէին ազդեր իմ վրաս» [3, 123]:

Հետագայում նրա մոտ տեսնում ենք նույն մերժողական տրամադրությունները լիրիկ արվեստի վերաբերյալ: Զապել Եսայանի համար գրականությունը արվեստ չէր արվեստի համար. եթե որոշ ժամանակ անգամ տուրք է տվել այս տեսակետին, ապա «կարճ ատեն» հետո դարձյալ վերադառնում է այն համոզմանը, որ գրականությունը պետք է դարձնել պայքարի միջոց: Նրա գրական հայացքի ուղղությունը, հակառակ համընդհանուր հիացումին, այլ հորիզոններ էր հատում: Օրինակ՝ Կ. Պոլսի լայն շրջանակներին սիրելի գրագիտուհի Սիպիլը չէր գրավում Զապելին, քանի որ ըստ նրա՝ «ժանյակներու մեծանուն բանաստեղծուհին չնչին և անկարևոր նյութերով կը զբաղի» [3, 150]:

Զ. Եսայանի համոզմամբ գրականությունը զարդանախշ, ժամանց կամ գեղեցիկ ծաղիկ չէ, գրականությունը արդարության համար պայքարի զենք է: Եվ պատահական չէ, որ նրա համակրանքը ավելի շատ

դեպի Ս. Տյուսաբն էր, ում խորհուրդներն էլ մեծապես ազդեցություն են գործել իր գրական հայացքների ձևավորման վրա։

«Սիլիհտարի պարտեզները» ինքնակենսագրավեպի առանձին օղակներից հյուսված ամբողջական շղթայի մանրապատումները իրար փոխլրացման գործառույթ ունեն՝ անկախ մասնավոր վերնագրեր կրելուց։ Հաճախ մի մանրապատման հերոսը մեզ ուղեկցում է նաև այլ մանրապատումներում՝ թռուցիկ հիշատակվում կամ դառնում իրադարձությունների առանցքային հերոս։ Դիպաշարի միասնականությամբ ներկայացվող հուշապատումների շղթան ունի նույն նպատակադրումը՝ բացահայտել հեղինակի ներանձնային ապրումները, վարքագծի ձևավորման գործում հերոսի ներդրումը, վեպի իրական ժամանակը՝ անշուշտ պատմական համընդգրկուն առանցքով։ Զ. Եսայանի հերոսները գրողական երևակայության արդյունք-հղացումներ չեն, նրանք իրական կյանքից վերցված հերոսներ են՝ իրական հասցեներով, մարդկային պարզ ու շիտակ նկարագրերով՝ հյուսված հեղինակ-գեղագետի բազմագույն թրբաթելերով։

Պատկերակերտման արվեստով, հորդուն քնարականությամբ, հիշողության բացված պատուհանից քննվող երևույթների՝ խորքային գնահատականներով և յուրատիպ վերլուծություններով առանձնացող «Սիլիհտարի պարտեզները» վեպը «հայոց մեծագույն գրագիտուհու» կյանքի պատմության գրավոր հուշարձանն է։ Հիրավի, գնահատելով Եսայանի ավանդն ու դերը՝ Հակոբ Օշականը ճիշտ բնորոշում է տվել նրան. «Զապել Եսայանի գործը ընդարձակ է, քան ամբողջ արդիւնքը մեր բոլոր կին գրողներուն»։

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Դավթյան Ն., Պետրոս Հաճյան. կյանքը և գործը, Ստեփանակերտ, 2019, էջ 107։

2. Եսայան Զ., Նամակներ, ԵՊՀ հրատ., Երևան, 1977։

3. Եսայան Զ., Սիլիհտարի պարտեզները, Երևան, 2018, էջ 163։

Биографический роман Запел Есаяна «Силихтарские сады»

Каграманян Татевик
АрГУ, Армянский язык и литература, 3-ий курс

Резюме

***Ключевые слова**: биографический роман, Силихтар, западно-армянская литература, миниатюра (рассказ), мемуары*

В этой статье мы обращаемся к произведению одного из крупнейших представителей западноармянской литературы, «Силихтарские сады» Запелы Есаяна, как к автобиографическому документу, имеющему большое значение. Художественные размышления о жизни писательницы послужили основой для раскрытия ее жизненного, творческого пути и общественной деятельности. Статья актуальна тем, что знакомит армянского читателя с Запелом Есаяном.При написании статьи мы в значительной степени прибегали к биографическому и аналитическому “методу.

Zapel Yesayan’s Biography “Silichtar Gardens”

Ghahramanyan Tatevik
ASU, Armenian language and literature, 3rd course

Summary

***Key words:** biographical novel, Silichtar, Western Armenian literature, short story, memoir*

In this article, we refer to one of the greatest representatives of Western Armenian literature, Zapel Yesayan's Silichtar Gardens, as an autobiographical document of significant significance. The artistic reflections of the novelist's life were the basis for revealing her life, creative way, social activity. The article is topical because of Zapel Yesayan's deep introduction to the Armenian reader. While writing the article, we largely resorted to biographical-analytical methods.

Լոռու մարզի Շնող համայնքի միկրոտեղանունները

Չերչինյան Թեհմինա
ՎՊՀ, Հայոց լեզու և գրականություն, 3-րդ կուրս
Գիտական դեկավար՝ բ. գ. թ., դոցենտ ***Լ. Պետրոսյան***

Հանգուցային բառեր. *աշխարհագրական անուն, ձևույթաբանական, իմաստաբանական ուսումնասիրություն, անձնանուն, կենդանանուն, բառիմաստ, բազմաբառ և մենաբառ անվանումներ*

Լեզվի բառապաշարում կարևոր նշանակություն ունեն տեղանունները, որոնց ձևույթաբանական, իմաստաբանական ուսումնասիրությունը բացահայտում է տվյալ տեղանքի բնակչության լեզվամտածողությունը: Իբրև հատուկ անունները սովորաբար կառուցվածքային փոփոխության հազվադեպ են ենթարկվում, քան անձնանունները, որոնք հաճախ են փոխարինվում օտարաբանություններով և փոխառություններով: Տեղանունները ժողովրդի պատմական վկայականներն են, որոնց միջոցով բացահայտվում է, թե տվյալ տարածքում ովքեր են ապրել և ինչ ազդեցություններ են ունեցել:

Ցավոք, ինչպես անձնանունների, այնպես էլ հաճախ տեղանունների հարցում հայ ժողովուրդը հաճախ է դիմել փոխառությունների, և հայկական տեղանունները մոռացվել են ու փոխարինվել թուրքերեն, պարսկերեն ու արաբերեն բառերով: Այս բացը լրացնելու նպատակով էլ փորձում ենք բանահյուսական որոնողական մեթոդներով պարզել մեր բնակավայրի՝ Լոռու մարզի Շնող համայնքի հայկական տեղանունները՝ փորձելով ներկա սերնդի շուրթերից հեռացնել օտարաբանությունները: Բառիմաստի սահմանային փոփոխությունները հատուկ են տեղանվանական բառապաշարին, որն ընդգրկում է բնակավայրերի, վարչական միավորներ անվանումներ [1, 15]:

Շնող համայնքի տեղանունների մեջ բազմաբառ են հանդամասերը (146 անուն), որոնցից սույն ուսումնասիրության մեջ քննել ենք առավել հայտնիները, որոնք, ըստ բառաբաղադրիչների արտահայտության, լինում են մենաբառ, երկբառ և բազմաբառ:

Միկրոտեղանունները իրենց հերթին կազմությամբ դասակարգվում են ածանցավոր, բարդ և բարդածանցավոր տեսակներով:

Կազմությամբ ածանցավոր տեղանուններից են՝ *Մնձնուտը, Կկալկուտը Վարդուտը, Ճմարկուտը, Լորուտը, Հացուտը, Շեվուտը, Քամոտը, Փուլքը, Ծակերը, Չալերը, Սալերքը*:

Ներկայացված անվանումները բացահայտում են տվյալ վայրը՝ ըստ բնաշխարհի, ինչպես՝ *Մնձնուտ, Լորուտ, Հացուտ, Վարդուտ, Կկալկուտ, Հմարկուտ* անվանումներ ունեցող վայրերում աճում են *սնձնի, կակալքի* (ընկուզենի), *համարի, լորենի, հացենի* և *վարդենի*: Շեվուտ տեղանվան արմատը՝ շիվ, կարծում ենք, ծագել է գրաբարյան *շիղ, շիւղ, շեղ* բառային տարբերակներից՝ ***ղ*** – ***ւ*** հերթագայությամբ, քանի որ տվյալ անունը կրող վայրում աճում են այդ անունը կրող բարակ ճյուղերով բույսեր՝ «festuca altissima»: Ներկայացված տեղանուններում որպես ածանց են գումարվել ***ուտ*** և ***կուտ*** վերջածանցները: *Քամուտ* հանդամասում անընդհատ քամի է, այս դեպքում տեղանունը կազմվել է ածականակերտ -***ուտ*** ածանցով, որի արդյունքում հատկանիշն առարկայացել է և փոխակերպվել հատուկ գոյականի: *Փուլք* հանդամասում ծանրության ուժի ազդեցությամբ լեռնալանջերով զանգվածային սահաշարժեր են լինում: Այս դեպքում ածանցի արժեքով է կիրառվել –***ք*** գրաբարյան ծագումով բառակազմական ձևույթը: Այս շարքում հետաքրքիր են ժամանակակից հոգնակիակերտով կազմությունները՝ *Ծակեր, Չալեր*: Առաջին դեպքում մանր անցքերով քարաժայռեր են, երկրորդ դեպքում՝ տարբեր բուսատեսակներով հարուստ դաշտեր: Շնողում ***չալ*** բառով բնութագրվում են «վրան կետեր՝ բծեր ունեցող, խատուտիկ» առարկաները: Բերված օրինակներից պարզ է դառնում, որ ինչպես գրաբարյան, այնպես էլ ժամանակակից հոգնակիակերտները գործածվում են որպես ածանցներ: ***Սալերք*** տեղանվան մեջ էլ կատարվել է այս երկու հոգնակիակերտների համակցում: *Սալ* նշանակում է «քար»: ***Սալերքը*** հարուստ է մեծ-մեծ, հարթ քարերով:

Կազմությամբ համադրական բարդ տեղանուններից են՝ *Գեղատեղը, Մրգևլաձորը, Մոշճակատը, Ընկռավաքարը, Արջագլուխը, Վահանաբերդը, Կրապետաքարը*: *Գեղատեղ* բառաբարդմամբ անվանվում է այն տեղը, որտեղ հիմնականում բնակվում է գյուղի բնակչությունը: *Մրգևլաձորը* ձոր է, որտեղ աճում են սերկևլենիներ: *Մոշճակատը* սար է՝ պատված մոշի թփերով: Կազմությամբ բարդ տեղանունները բացահայտում են նաև կենդանական աշխարհը, ինչպես՝ *Ընկռավաքարը, Արջագլուխը* որոնց առաջին բաղադրիչից պարզ է դառնում, որ Շնողում կան ագռավներ, արջեր և գայլեր: Ագռավաքար տեղանունը հայերենում տարածված է. պաշտոնապես այսպես է անվանվում Արագածի հարավարևմտյան լանջի լեռնագագաթներից մեկը: Անվանումը հայտնի է նաև «Սասնա ծռեր» էպոսից: *Արջագլուխը* նույնպես լեռնագագաթ է՝ նման արջի գլխի: Այս շարքում պաշտպանական նշանակություն ունի *Վահանաբերդ* կիկլոպյան ամրոցը, որը գտնվում է Շնող գյուղի արևմտյան եզրին՝ «Բերդատեղի

մատ» անտառապատ վայրում: Այս շարքում սրբավայրի նշանակությամբ տեղանուն է *Կրապետաքարը*՝ կազմված անձնանուն սերող հիմքով:

Միկրոտեղանունները հիմնականում առանձին հանդես չեն գալիս. դրանք շարահյուսական տարբեր հարաբերություններով կապակցվում են հասարակ անունների՝ որոնք էլ բացահայտում են տվյալ տեղանվան ինչ լինելը:

«**Ածական + գոյական**» ձևաբանական արտահայտությամբ են կազմվել *Կոտրած բեմը, Չալ քարը, Վենձ ուրթատեղը, Կեռ ֆողերը, Քարի ձորը, Միջի մատը, Միջի ձոր, Դժարքի մատը* և այլ տեղանուններ, որոնց որոշիչ լրացումն արտահայտվել է դերբայ, ածական և գոյական խոսքի մասերով, որոնք բնութագրում են *բեմ, քար, ուրթատեղ, ֆողեր, ձոր, մատ* գոյականները: Այս շարքում հետաքրքիր կիրառություն ունի *քար* գոյականը, որը մի դեպքում հանդես է եկել որպես որոշյալ, մյուս դեպքում՝ որպես որոշիչ՝ արտահայտված սեռական հոլովով: Սեռական հոլովաձևով որոշչի իմաստ է արտահայտում նաև *մեջ* բառը՝ տեղային հարաբերությամբ: Որոշչային իմաստի ինքնատիպ արտահայտություն է *Դժարքի մատը*, որտեղ *դժար* հնչյունի անկումով տեղանվանվան առաջին բաղադրիչը կիրառվել է գոյականաբար՝ ստանալով ***ք*** ածանց և ***ի*** հոլովական ցուցիչ: Հատուկ անուններում կրկնակի կիրառություն ունի նաև *չալ* ածականը, որը մենաբառ կառույցներում գործածվում է հոգնակիակերտ մասնիկով, որպես դաշտավայրի անուն, իսկ բաղադրյալ կառույցում՝ որպես *քար* գոյականի բնութագրիչ հատկանիշ: Պատմական հնչյունափոխության մի քանի արտահայտություն ենք տեսնում *մեծ* բառի *վենձ* տարբերակում (հնչյունի հավելում, խուլի ձայնեղացում), որը հատուկ է Շնողի խոսվածքին: Բարբառային հնչյունափոխության տեսակ է նաև *հ* հնչյունի *ֆ* հնչյունով արտասանությունը, վերջինս նույնպես հատկանշական է Շնողի խոսվածքին:

▪ «**Գոյական + գոյական**» արտահայտությամբ են կազմվել *Խեչի դռղը, Ձորի գեղը, Գոմերի ձորը, Ջրացի ձորը, Բերդատեղի մատը, Կխտարի մատը, Մուկուչի ուրթատեղը, Նիկոլի ուրթատեղը, Մաշնանց կկալկուտը, Բազի քինթը,* և այլ տեղանուններ, որոնց լրացումները հատուկ և հասարակ գոյականներ են՝ անձնանիշ, իրանիշ կամ կենդանանիշ: Հատկացյալներն այստեղ նույնպես *ձոր, մատ, ուրթատեղ, գեղ* գոյականներն են և միայն մի դեպքում՝ *քինթ* գոյականը, որ լրացրել է *բազի* գոյականին: *Բազի քինթը* բազեի կտուցի նման ժայռ է: Անվանման առաջին բաղադրիչում բառավերջի ***է*** ձայնավորը սղվել է, և երկրորդ բաղադրիչում հավելվել է ***և*** բաղադրիչը: *Խեչի դռղը* հատկանվան առաջին բաղադրիչը հնչյունա-

փոխության ենթարկված *խաչ* գոյականն է: Այսպես է անվանվել այն սարը, որի կատարին մատուռ է կառուցված: Շնողի տեղանուններում հաճախ են հանդիպում սրբատեղիների անունները: Ինչպես բոլոր հայերի, այնպես էլ շնողնեցիների համար աստվածատուր նպատակ է որդի ունենալը, որի համար էլ նրանք ուխտատեղի են կառուցել ու անվանել *Տղատու խեչի ձորը*: Լրացում և լրացյալ հարաբերություններով է հատկանուններում գործածվում *ձոր* գոյականը *Ջորի գեղը* և *Գումերի ձոր, Ջղացի ձոր* հատկանուններում: *Ջղացի* բառաձևը կազմվել է ջաղաց գոյականից՝ *ա* հնչյունի *ը*-ի հնչյունափոխությամբ: Բաղադրյալ հատուկ անուններում որպես լրացյալ է գործածվում *մատ* գոյականը՝ «բլուր, լեռան դուրս ցցված մաս» նշանակությամբ: Նշենք, որ «Հայոց լեզվի բարբառային բառարանում» բառը նշված իմաստով վկայակոչված է իբրև Զեյթունի և Չարսանջակի բարբառներին հատուկ բառ [2, 30], սակայն Շնողի տեղանուններում այս բառը նույնպես տարածված է: Այսպես *մատ* բաղադրիչով են կազմվել նաև *Բերդատեղի մատը, Գիտարի մատը* հատկանունները, որոնցից առաջինը հուշում է հնավայրի մասին, իսկ երկրորդը՝ կենդանական աշխարհի: Շնողում կխտար նշանակում է «վիթ, եղնիկ»: Այս շարքում հետաքրքիր են նաև անձնանուններով կազմությունները, դրանցից երկուսը անուններ են, մեկը՝ ազգանվան հիմք, ինչպես՝ *Մուկուչի ուրթատեղը, Նիկոլի ուրթատեղը, Մաշնանց կկալկուտը*: Այսպիսով Շնողի տեղանուններին նույնպես բնորոշ են մարդկանց անուններից և մականուններից ածանցված անունները [3, 138]:

Տեղանունների կառուցվածքների և դրանց բաղադրիչների իմաստաբանական քննությունը կարևոր է «….պատմական Հայաստանի տեղանքի անունների ծագումնաբանության» ուսումնասիրության տեսակետից, որի արդյունքում պարզ են դառնում տեղանունների ձևավորման սոցիալ-քաղաքական, ժողովրդի գաղափարական, լեզվաբանական առանձնահատկությունները, որոնցով էլ պայմանավորվում է էթնո-գենետիկական բնույթը [4, 83]:

Լոռու մարզի Շնող համայնքի տեղանվանահիմքերի ու տեղանվանակերտ ածանցների մեջ իրենց կայուն տեղն ունեն «տեղ» իմաստային դաշտին պատկանող միավորներն ու ցուցիչները՝ *գեղ, ձոր, դռջ, մատ, ուրթատեղ* և այլ նշանակություններով, որոնք, ժամանակակից գրական լեզվում հիմնականում չունենալով անկախ գործածություն, գործածվում են որպես անվանական հարադրության բաղադրիչ: Շնող համայնքի տեղանունների մեջ նույնպես հաճախադեպ են մարդու մարմնի մասերի անուններ նշանակող տեղանվանական միավորները: Այս մասին Էդ.

Մուրզաևը գրում է. «Տարբեր լեզուներում և լեզվատարածքներում տեղանվանակերտ փոխաբերություն տերմինների մեջ գործածության հաճախականությամբ աչքի են ընկնում մարդու և կենդանիների մարմնի մասերն անվանող բառերը» [5, 127]:

Ուսումնասիրելով Շնող համայնքի միկրոտեղանունները պարզ դարձավ, որ դրանք լեզվական փոխակերպման և փոխանցման եղանակով կազմված անվանադրումներ են, որոնք, չնայած հատուկ անուն լինելու հանգամանքին, արտահայտում են որոշակի իմաստ՝ բնութագրելով տվյալ տեղանունը՝ ըստ իր առանձնահատկության:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Կիրակոսյան Հ., Մարդու մարմնի մաս նշանակող բառանվանումներով կազմված տեղանունները իրանական լեզուներում, Լեզու եվ լեզվաբանություն, 2 (17) 2017:
2. Հայոց լեզվի բարբառային բառարան, հ. Դ, Երևան, 2007:
3. Դիլբարյան Ն., Տեղանք և բնակավայրեր նշանակող բառերը հայերենի տեղանուններում: http://ysu.am/files/16N_Dilbaryan.pdf Հասանելի է 29.06.2021:
4. Капанцян Г., Историко-лингвистические роботы, т. 2, Ереван, 1975:
5. Мурзаев М., Очерки топонимики, Москва, 1974:

Микротопонимы деревни Шнох лорийской области

Черчинян Техмина
ВГУ, Армянский язык и литература, 3-ий курс

Резюме

Ключевые слова: *географическое название; морфологическое и семантическое исследование; имя собственное; название животного; значение слова; однословные и мнословные названия*

Географические названия (топонимы) имеют большое значение в словарном запасе языка. Морфологическое и семантическое изучение топонимов раскрывает языковое мышление населения данной местности. К сожалению, армянский народ часто заимствовал как личные, так и географические названия, поэтому многие армянские географические названия были забыты и заменены турецкими, персидскими и арабскими заимствованиями. Чтобы восполнить этот пробел, мы стремимся выяснить древнеармянские топонимы нашего поселения, села Шнох Лорийской области, используя методы фольклорных исследований.

Среди топонимов Шноха встречаются многословные названия луг (146 наименований). В данном исследовании изучаются названия с армянскими компонентами, которые могут быть однословными, двухсловными и многословными в зависимости от количества словесных компонентов.

Среди корней и топонимических суффиксов топонимов Шнох в Лорийской области важную роль играют единицы и индикаторы со смысловым значением «место», такие как «գեղ», «ձոր», «ղռշ», «մատ», «ուրթատեղ» и т. д.. Эти слова обычно не используются отдельно в современном литературном языке, а используются как компоненты для именительного спряжения. Топонимические единицы, обозначающие части человеческого тела, также широко используются в Шнохе.

Прилагательные, которые использовались либо как существительные, либо как прилагательные и описывали названия местностей по цвету, естественной форме и т. д., также часто используются в топонимах.

Micro Toponyms of Shnogh Village, Lori Region

Cherchinyan Tehmina
VSU, Armenian language and literature, 3rd course

Summary

Key words: *geographical name; morphological and semantic study; personal name; animal name; word meaning; multi-word and one-word names.*

Geographical names (toponyms) are of great importance in the vocabulary of a language. The morphological and semantic study of toponyms reveals the linguistic thinking of the population of a given area. Unfortunately, the Armenian people have often borrowed both personal and geographical names, thus, a lot of Armenian geographical names were forgotten and replaced by Turkish, Persian, and Arabic borrowings. In order to fill this gap, we are striving to find out old Armenian toponyms of our settlement, Shnogh Village in the Lori Region using folklore research methods.

Among the toponyms of Shnogh, there are multi-word names of pieces of grassland (146 names). This study touches upon the names with Armenian components, which can be one-word, two-word and multi-word according to the number of word components.

Among the roots and toponymic suffixes of the toponyms of Shnogh, Lori Region, the units and indicators with a semantic meaning of "place", like "գեղ", "ձոր", "դոշ", "մատ", "ուրթատեղ", etc., play an important role. These words are not usually used independently in modern literary language and are used as components for nominative conjugation. Toponymic units denoting human body parts are also common in Shnogh.

Adjectives, which were used either as a noun or an adjective, describing a location name by color, natural shape, etc., are also common in toponyms.

Ընթացիկ իրականության և այլիրականության փոխլրացնող միասնությունը Զորայր Խալափյանի «Մեռնող հառնող» վեպում

Քալաշյան Մարինե
ՎՊՀ, Հայոց լեզու և գրականություն, մագիստրատուրա, 1-ին կուրս
Գիտական ղեկավար՝ բ. գ. թ., դոցենտ ***Վ. Փիլոյան***

Հանգուցային բառեր. *գեղարվեստական իրականություն, ընթացիկ իրականություն, այլիրականություն, փոխլրացնող միասնություն, առասպելական բնույթ, կառուցվածքային կաղապար, վերահիմաստավորում, միջոց-նպատակ հարաբերակցություն*

Եթե գեղարվեստական իրականությունը արտագրական իրականության վերահիմաստավորումն է և արտահայտումը գեղարվեստական միջոցներով, այսինքն՝ որոշակի պայմանականություն, ապա պատմական, առասպելական կամ էպոսային իրականությունը վեպի ժանրում պայմանականություն է պայմանականության մեջ, այսինքն՝ գեղարվեստական իրականության դրսևորում՝ որոշակի հստակ չափանիշներով: Գեղարվեստական իրականության տիրույթում ընթացիկ իրականությունից դուրս գտնվող այս իրականությունները (պատմական, առասպելական և այլն) ձևավորում են որոշակի այլիրականություն, որը հակադրվում է ընթացիկ իրականությանը: Ընթացիկ իրականություն ասելով՝ այստեղ հասկանում ենք ոչ թե արտագրական, այլ գեղարվեստական իրողություն, այսինքն՝ գեղարվեստական իրականության այն դրսևորումը, որի կառուցման համար չկան հարաբերականորեն կայուն պայմանաձևեր, հետևաբար՝ այլիրականությունը դառնում է գեղարվեստական իրականության այն դրսևորումը, որի կառուցման հիմքում կան որոշակի պարտադիր պայմաններ (օրինակ՝ պատմական բնույթ ունեցող այլիրականություն կառուցելու համար անհրաժեշտ է որևէ պատմական ժամանակաշրջանի, անցքի կամ կերպարի առկայություն և այլն): Գեղարվեստական ստեղծագործության մեջ այս իրականությունների հարաբերակցության երեք տարբերակ կարելի է առանձնացնել. երբ ամբողջ ստեղծագործությունը կառուցվում է այլիրականության տիրույթում (պատմավեպերի մեծ մասը), երբ ամբողջ ստեղծագործությունը կառուցվում է ընթացիկ իրականության տիրույթում, և երբ այս երկու իրականությունները պատկերվում են զուգահեռ: Վերջին դեպքում ընթացիկ իրականության և այլիրականության միջև ձևավորվում է փոխլրացնող հարաբերություն,

այսինքն՝ ստեղծագործության մեջ դրանք գտնվում են, այսպես ասած, երկխոսության մեջ. փոխադարձաբար լրացնում և ծառայում են միմյանց: Իրականությունների նմանօրինակ հարաբերակցությամբ է կառուցված «Մեռնող հառնող» վեպը: Այստեղ այլիրականությունը ունի առասպելական, բանահյուսական բնույթ: Ամբողջ ստեղծագործությունը հենց այս իրականությունների փոխադարձ անցումն է պատկերում, մասնավորապես՝ այլիրականությունից անցումը ընթացիկ իրականության, որը կատարվում է ժողովրդական մտածողության հիշողության շնորհիվ. «Այդ նույն ճանապարհով անցել էր մրջյունը, մողեսը, թագավորը, թագավորի տղան, գառնուկ ախպերը, հուրիփերիներ, հրեղեն ձիեր, կտրիճ մարդիկ, կույր գուսաններ: Հիմա գնում էր այդ մարդը:» [2, 200]: Այս երկու եզրերի հակադրությունը կարելի է տեսնել ստեղծագործության հենց սկզբում, որտեղ ընթացիկ իրականությունը պատկերում է Մաժանին՝ տարված իր գործով, իսկ այլիրականությունը՝ Մաժանի մատյանում գրված կամ գրվելիք իրողությունները: Այստեղ առասպելական բնույթ ունեցող հատվածները հիմնականում կառուցվում են */Ասում է..../* կաղապարով.

«Ասում է.

Յոթն աղբյուրից ջուր բեր, գիշերը միախորհուրդ մերկացեք, շեմին կռնակ կռնակի լողացեք, իրար վրա ջուր ցանելով. չբերության դեմ միջոցը դա է» [2, 197],

«Ասում է.

Արևը իրիկնամուտին իջնում ու մտնում է գետնի տակ, մնում է ու ելնում առավոտյան, չի մեռնում: Իսկ նա, ասում է, պահվում է հատիկի մեջ, եթե բացես՝ չես տեսնի: Իսկ եթե ինքը ելնի, կտեսնես, որ կանաչ է» [2, 225]:

Առասպելական մտածողության արտահայտություն է նաև շրջապատող աշխարհի անձնավորումը, որը արտահայտվում է բնության երևույթների, կենդանիների խորհրդածությունների պատկերմամբ. «Ես գետ եմ, գալիս եմ լեռներից, բարձրից դեպի ցած՝ ձորերով, հովիտներով, ուր հունս թեքվում՝ հնազանդ թեքվում եմ նաև ես: ....Կողքիցս պատռած տանում են՝ քչանում եմ, ներծծվում եմ հողի մեջ, սպառվում եմ՝ չեմ ափսոսում» [2, 193], «Ծաղիկ ճակատով եզը գնաց դեպի ձորը: Ու՞ր, հարցրեց գութանի առաջին լծի՝ ամոլի լրջախոհ եզը: Ծարավ եմ, ասաց երրորդ լծի եզը: Ջահել էր, կարծում էր՝ կանցնի սարալանջն այն կողմ, գլուխը կախ արածելով հեռանա՝ կազատվի լծից» [2, 207-208]:

Պիտի նշել, որ վեպի առասպելական բնույթը այս հատվածներով չի սահմանափակվում.ամբողջ ստեղծագործությունը մեռնող-հառնող աստ-

վածության առասպելի վերաիմաստավորումն է տարբեր հայեցակետերով։

Ընթացիկ իրականության և այլիրականության ժամանակային ընդգրկում ունեցող հակադրությունից բացի այստեղ կա նաև նույնաբնույթ և այս հակադրությունից ածանցված մեկ այլ հակադրություն, որը ունի տարածական ընդգրկում. գյուղական իրականությունը հակադրվում է քաղաքային իրականությանը։ Գյուղական իրականությունը կազմող պատկեր-դրվագները, որոնք ունեն առանձին սյուժետային գծեր և միմյանց են կապվում Տավրոսի կերպարի միջոցով, ունեն բանահյուսական լիցքավորում։ Գյուղական իրականությունը դառնում է այլիրականության որոշակի արտահայտություն. այստեղ ապրում է առասպելը, քաղաքային իրականությունը ընթացիկ իրականության արտահայտությունն է. այստեղ վերաիմաստավորվում է առասպելը։ Այդ պատկեր-դրվագների բանահյուսական բնույթը արտահայտվում է դրվագներում՝ բանահյուսական տարբեր ժանրերի առկայությամբ։ Հանդիպում են խաղիկների («Այն այգուց.

– Սևուկ աղջիկ, սևուկ աղջիկ մոտ արի, խոստացել ես մի պաչիկ, ե՞րբ պիտի տաս։

Այս այգուց.

– Ախ վախ տղա, խելառ տղա, այդքան բարձր մի պոռա, պաչիկդ առ ու գնա, թող քեզ մեկ մարդ չտեսնի» [2, 215])), խաղերի («Ահեկի բարդիներով առատ գյուղակում մեկի տանը փռել էին նախշուն կարպետ և չորս աղջիկ ծնկաձալ նստել, քարկտիկ էին խաղում» [2, 254]), սովորույթների («Երեկոյան մեծ ու փոքր շարվել էին սեղանի շուրջ, և տատը ճաշ էր լցնում կավե պնակներում. քարջիկը ամենափոքրին, թևը քիչ մեծին, մյուս թևը՝ մյուս ավելի մեծին, կրծքի մսոտ կտորը՝ տղամարդուն, մյուս կտորը՝ մյուս աշխատող տղամարդուն, ազդրամիսը տան աղջկան, որին պիտի տանեն, մյուս ազդրամիսը հյուրին, տուտուռուզը տանտիրուհի տիկնոջը, գլուխը պապին, իսկ տատը քար ուտի քացախ ուտի՝ չորուկ տոտիկները» [2, 219]), անեծքների («– Գերեզմանին փուշ ու տատասկ բուսնի, հիվանդությունը տնից անպակաս լինի, ի՞նչ է ասել, ես ե՞րբ եմ հայհոյել, ասողի տան տեղը վարեն կանեփ ցանեն, հերն ու մերը շները քաշ տան» [2, 284]) օրինակներ։

Հետաքրքրական են այն դեպքերը, երբ բանահյուսական ժանրերին հատուկ հատկանիշները կաղապար են դառնում պատկեր-դրվագների տարբեր հատվածների կառուցման համար, այսինքն՝ ներտեքստայնություն է ձևավորվում ոչ միայն պատրաստի միավորներով, այլև կառուց-

վածքային կաղապարներով. «Բելին քնել էր մեջքը պատին, բերանը բացվել էր, կարծես աչքերը փակ զարմացել էր տեսած երազից: Իսկ երազում ցերեկվա կաչաղակն էր: Կաչաղակը տանձի ծառին, տանձի ծառին, տանձի ծառը այգու ծերին» [2, 205], «Ուր հասավ հարցրեց, ուր հարցրեց, ասացին՝ այստեղ էր, գնաց:

– Ու՞ր:

Ասացին՝ Համբարձումի տուն: Հոբոբը գնաց Համբարձումի տուն: Ասացին, այո, այստեղ էր, գնաց Կարճ Ղուկասի տուն: Կարճ Ղուկասը տանն էր.- Աքլորի, աղվեսի, արջի պատմությունն արեցի, լսեց ու գնաց, ուրիշ պատմություն ես չգիտեմ» [2, 210-211], «Տան տիկինը տղամարդու ձայն լսեց, լուսամուտը կիսաբաց արեց, ասաց.

– Ո՞վ ես, ի՞նչ ես, ու՞ր ես եկել, այլի հո՛:

– Աղջիկներիդ տեսնելու, այլի հո՛:

– Աղջիկ չունեմ, այլի հո՛:

– Տեսնում եմ, տեսնում եմ, այլի հո՛....» [2, 216]:

Այս դրվագները իրար և հետագա շարադրանքին կապող կերպարը՝ Տավրոսը, որը դրսևորվում է երկու իրականությունների մեջ էլ, ենթարկվում է այդ իրականություններից յուրաքանչյուրի պայմանականությանը. «Այնքան հեշտ, ինչքան Տավրոսը անցնում է գավառից մի ուրիշ գավառ, նա հնադարից անցնում է մեր ժամանակները» [1, 135]. համապատասխան հատվածներում Տավրոսի կերպարը նույնպես ստանում է առասպելական երանգավորում:

Անցում կատարելով ընթացիկ իրականությանը՝ գործ ենք ունենում առասպելականի վերաիմաստավորման հետ: Վերաիմաստավորումը կատարվում է տարբեր ուղիներով՝ կերպարների, առասպելական պատկերների զուգահեռմամբ և այլն:

Կերպարների միջոցով առասպելականի վերաիմաստավորումը կատարվում է ընթացիկ իրականության ոլորտին պատկանող կերպարներին դիցաբանական կերպարներին հատուկ հատկանշական գծերի հաղորդումով. վեպի կերպարները կրում են նաև համապատասխան նախահիմք կերպարի անունը (Վանատուր, Անահիտ, Աստղիկ, Արուսյակ, Տիրայր և այլն) [կերպարային այսօրինակ զուգահեռների մասին տե՛ս նաև 1, 135, 3, 38]:

Կերպարային զուգահեռներից բացի տարվում են նաև պատկերային զուգահեռներ: Հետաքրքրական են այն դեպքերը, երբ այլիրականության տիրույթից որևէ պատկեր կրկնվում է ընթացիկ իրականության տիրույթում՝ վերաիմաստավորված և ենթարկված համապատասխան պայմա-

նականություններին (օրինակ՝ Անահիտ աստվածուհու լոգանքի պատկերը և զբոսավարուհի Անահիտի լոգանքի պատկերը)։

Չնայած նրան, որ ստեղծագործությունը կառուցված է այլիրականությունից ընթացիկ իրականություն անցման վրա, կան նաև դրվագներ, որտեղ երևում է՝ ինչպես է ընթացիկ իրականությունից անցում կատարվում այլիրականությանը՝ տվյալ դեպքում՝ առասպելականին։ Այսինքն՝ ընթացիկ իրականության որևէ իրողություն առասպելականի ձևափոխման կամ ձևավորման հիմք է դառնում։ Օրինակ՝ քարտաշը պատմում է աշխարհաստեղծման առասպելը՝ հիմքում դնելով իր ներկա մասնագիտությունը. «Սկզբում միայն մարդն էր և ուրիշ ոչ ոք չկար։ Նա քարի վրա թռչուն նկարեց և նետեց երկինք. քարը թև առավ, դարձավ թռչուն և մնաց երկնքում։ Նա քարի վրա ձուկ նկարեց և նետեց ծովի մեջ. քարը լողաց, դարձավ ձուկ և մնաց ջրում։ .... Քարի վրա նա կին նկարեց, գիշերը գիրկն առավ նրան, սիրեց ու գուրգուրեց, և քանի որ գիշերը երկար էր ու նա շա՛տ էր միայնակ՝ նրա սիրուց ու գուրգուրանքից քարը դարձավ կին» [2, 321-322]։ Նման անցմամբ է բնորոշվում վեպում կիսաաստվածների ծննդյան առասպելը. «Կիսաաստվածների ծնունդը անտիկ աշխարհում համարյա կենցաղային երևույթ էր։ Ամուսինը մեկնում էր պատերազմ կամ օտար երկիր, ուշանում էր երկար տարիներ, իսկ կինը նրա բացակայությամբ զավակներ էր ունենում և այս ապօրինի ծնունդը սրբագործվում էր առասպելով։ Երբ դու այստեղ չէիր, քո կինը լողանում էր գետում, աստված սպիտակ նժույգի կերպարանքով ելավ ջրից և գետեզերքի եղեգնուտում սիրեց նրան։ Ոչ թե օտար մի տղամարդ, որ վիրավորական լինի, այլ աստված։ Ուստի, սա քո զավակն է, որ քո կինը ծնել է այսինչ աստծուց։ Աստվածությունն ընտրվում էր ըստ ճաշակի։ Հայրը որդուն բերում էր տուն և նա իրենն էր ու հասարակությանը, բայց ավելի շատ՝ առասպելինը» [2, 332]։

Ինչպես կարելի է նկատել, այս վեպում այլիրականության և ընթացիկ իրականության միջև առկա է միջոց-նպատակ հարաբերակցությունը. այլիրականությունը գերազանցապես միջոց է ընթացիկ իրականության համար, միջոցի՝ նպատակին ծառայելը իրացվում է առասպելականի վերաիմաստավորմամբ։

Այսպիսով՝ ընթացիկ իրականության և այլիրականության փոխլրացնող միասնությունը վեպի կառուցման համար դառնում է յուրօրինակ պայմանաձև, որտեղ անցումները մի իրականությունից մյուս իրականություն ձևավորում են պատումի և բովանդակային նպատակադրման առանցքը։

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Եղիազարյան Ա., Կյանք, որ պատմում է իր մասին, ՍԳ, 1979, թիվ 6։
2. Խալափյան Զ., Մեռնող հառնող, Երևան, «Հայաստան» հրատ., 1975, 532 էջ։
3. Սարինյան Մ., Առասպելաբանությունը Զորայր Խալափյանի արձակում, Լրաբեր հասարակական գիտությունների, 1988, թիվ 9։

Взаимодополняющее единство текущей реальности и иной реальности в романе Зорайра Халафяна «Умирающий оживающий»

Калашян Марине

ВГУ, Армянский язык и литература,
Магистратура, 1-й курс

Резюме

Ключевие слова: *художественная реальность, текущая реальность, иной реальность, взаимодополняющее единство, мифическая натура, структурный шаблон, переосмысление, соотношение средств и целе*

В статье изучили роман Зорайра Халафяна «Умирающий оживающий», как взаимодополняющее единство текущей реальности и иной реальности, где текущая реальность есть проявление художественной реальности, для построения которой нет относительно устойчивых условий, а иной реальность проявление художественной реальности, в основе которой есть определенные условия. Представили мифологическую натуру иной реальности, показав средства ее выражения и пути переосмысления в сфере текущей реальности. Мы рассмотрели контраст между иной реальностью и текущей реальностью как фактор, определяющий своеобразие повествования.

The Complementary Unity of Current Reality and another Reality in Zorayr Khalapyan's Novel "Dying Rising"

Kalashyan Marine
VSU, Armenian Language and Literature, MA, 1st course

Summary

Key words: *artistic reality, current reality, another reality, complementary unity, mythical nature, structural template, reinterpretation, means-end ratio*

The article examines Zorayr Khalapyan's novel "Dying Rising" as a complementary unity of the current reality to another reality, where the current reality is the manifestation of artistic reality, for the construction of which there are no relatively stable conditions, and another reality is the construction of artistic reality clear conditions. We have presented the mythical nature of another reality, showing the means of its expressionand and the ways of reinterpretation in the realm of current reality. We have examined the contrast between another reality and the current reality as a factor determining the peculiarity of storytelling.

ՌՈՒՍԱՑ ԼԵԶՈՒ ԵՎ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

РУССКИЙ ЯЗЫК И ЛИТЕРАТУРА

RUSSIAN LANGUAGE AND LITERATURE

Колоративы и их функции в воссоздании художественной картины мира

Григорян Сюзанна
ВГУ, Русский язык и литература, магистратура, 2-й курс
Научный руководитель: к. ф. н., доцент ***С. Бабаян***

Ключевые слова*: художественный текст, адъективные цветообозначения, первичные и вторичные колоративы, лексема, цветовая символика, метафоры и сравнения на основе цвета.*

Одним из значимых фрагментов языковой картины мира является цветовая картина мира, поскольку всё, что воспринимает человек при помощи органов зрения, окрашено в разные цвета. При этом в русском языке существует большая группа языковых единиц, называющих разнообразные оттенки цвета – колоризмы, т.е. языковые единицы, называющие цвет или оттенок цвета.

Словарный запас языка пополняется наименованиями различных оттенков. Постоянное обогащение языка новыми цветовыми выражениями ставит нелегкую задачу для переводчиков, так как нужно учитывать не только семантику определенного наименования цвета, но и его роль в культуре того или иного народа. Использование колоризмов в творчестве писателей является важнейшим экспрессивным средством и несет большую идейно-художественную и эмоциональную нагрузку. Данные языковые единицы имеют различные названия: цветообозначения, цветонаименования, цветослова, цветолексемы, колоративы и др.

Наибольшее распространение получили термины цветообозначения и колоративы. Термин цветообозначения употребляется в значениях: 1) процесс номинации цвета; 2) языковая единица, обозначающая цвет. Термин колоратив является однозначным.

Колоратив – это слово или словосочетание, обозначающее цвет. По своей частеречной принадлежности колоративы преимущественно являются прилагательными (*белый, васильковый, индиго*), а также могут состоять из нескольких слов (*цвета морской волны*).

Колоративы – развитая, постоянно пополняющаяся лексико-семантическая группа слов, которая на протяжении длительного периода времени привлекает пристальное внимание лингвистов. Цветовые прилагательные

изучаются в самых различных аспектах: психолингвистическом, этнолингвистическом, историческом, сопоставительном, когнитивном и т. д.

Колоративы делятся на две группы в зависимости от значения:

- собственно колоративы (*черный, малиновый, телесный* и т. д.)
- *дополнительные характеристики цвета* (*яркий, бледный, насыщенный* и др.).

Собственно колоративы состоят из двух групп в зависимости от характера лексического значения.

Это а) *первичные колоративы* – с основным значением цвета (*красный, оранжевый, зеленый, голубой, синий, фиолетовый* и др.);

Например: «Пассажиры умирают от смеха, темная ночь закрывает поля, из паровозной трубы вылетают вертлявые искры, и тонкие семафоры в светящихся *зеленых* очках щепетильно проносятся мимо, глядя поверх поезда» [3; 27],

б) *вторичные колоративы*, имеющие переносное значение цвета (*фиалковый, малиновый, персиковый, кирпичный, абрикосовый*, *апельсиновый* и др.)

Например: « Голова ее была в чепце интенсивно *абрикосового* цвета, который был в какой-то моде в каком-то году…»[3; 13].

«Его могучая шея была несколько раз обернута старым шерстяным шарфом, ноги были в лаковых штиблетах с замшевым верхом *апельсинного* цвета» [3; 29].

Прилагательные, обозначающие дополнительные характеристики цвета, реализуют это значение в контекстуальной близости с собственно колоративами или словами, в структуре лексического значения которых есть 12 сем цвета (темная синева неба). Взятые отдельно, они или теряют свое цветовое значение, или становятся синонимичными собственно названиям цвета [5; 224].

Колоративы представляют собой весьма распространенное и функционально значимое явление, поскольку цвет сопровождает нас всюду, и окружающий мир мы, как правило, воспринимаем во всей его цветовой гамме. Естественно поэтому, что это явление отражено в лексике русского языка и, как следствие, активно изучается лингвистами.

Все множество адъективных колоративов можно условно разделить на два структурных подмножества, в одно из которых входят *простые колоративы*, во второе – *сложные*. Простые колоративы являются одноосновными лексемами, как, например, *красный, зеленый, бирюзовый,*

янтарный, вердепешевый и т. п. Простые *адъективные колоративы* изучены и описаны достаточно полно, и почти все они представлены в словарях русского языка.

Что же касается сложных колоративов, то они могут состоять не только из нескольких основ (например: *багрячно-красный, темно-зеленый, светло-голубой, темно-коричневые, кроваво-красный* и подобные), но также и из нескольких слов (таких, как *цвета слоновой кости, цвета воронового крыла, цвета давленой малины, цвет гибискус сирийский*). Таким образом, мы видим, что понятие сложного колоратива не всегда тождественно понятию сложного слова [10].

Например: «Над пианино висела репродукция картины Беклина «Остров мертвых» в раме фантази *темно-зеленого* полированного дуба под стеклом» [3; 62].

«На окнах висели темные коричневые занавеси с блямбами, и в квартире преобладали *темно-коричневые* тона» [3; 62].

Сложными адъективными колоративами являются цветообозначения, состоящие из двух и более основ, пишущихся через дефис и включающих колоративный элемент (*бело-красный, желтовато-серый, бутылочно-зеленый, нежно-голубой, иссиня-зеленый, черный-пречерный, белый-белый, бело-сине-красный* и подобные). Их количество значительно больше, чем количество простых колоративов, и, конечно же, не все они фиксируются в лексикографических справочниках.

Колоративы, представляющие собой синтаксические конструкции, как правило, состоят из существительного с детерминирующими его прилагательными, типа: *цвета морской волны, цвета мокрого асфальта, цвет Нила, цвета кофе с молоком*. Обычно они сопровождаются словом цвет и только опосредованно указывают на характер этого цвета. Будем называть их *опосредованными сложными колоративами* (далее – ОСК), потому что они не называют сам цвет, но указывают на него через посредство предмета, имеющего такой цвет, а поэтому человек должен сначала представить себе предмет, и лишь после этого он сможет понять, о каком цвете идет речь.

Указанные колоративы вообще не фиксируются в словарях, несмотря на то, что некоторые из них широко распространены, общеизвестны и представляют собой уже не столько свободное словосочетание, сколько единую и неделимую фразеологическую единицу. Об этом свидетельствует, в частности, то, что невозможно заменить элементы этих словосочета-

ний семантически близкими или однокорневыми, при сохранении общего значения. Нельзя вместо цвет морской волны сказать цвет океанской волны, хотя в океане вода по цвету практически не отличается от морской, тем не менее это будет уже новое цветообозначение.

Базовыми колоративами мы считаем названия цветов, являющихся доминантами одиннадцати синонимических рядов. Все базовые цветообозначения делятся на те, которые называют основные цвета спектра (*красный, оранжевый, жёлтый, зелёный, голубой, синий, фиолетовый*), ахроматические цвета (*белый, черный, серый*), и колоратив, обозначающий смешанный цвет, т. е. *коричневый*.

Отдельную группу составляют колоративы с затемнённой, или утраченной, внутренней формой. При этом данные колоративы не являются доминантами синонимических рядов, в которые они входят. Речь идёт о цветовых прилагательных *алый, багровый, багряный, бурый, дикий, карий, кубовый, лиловый, палевый, пунцовый, пюсовый, рдяный, рудой и рудый, румяный, русый, рыжий, седой, сивый, сизый, тёмный, червленый, червонный, шарлаховый, шаровый, ярый*.

Например: «Здесь Эллочка потеряла прекрасную черную косу и перекрасила волосы в *рыжий* цвет» [3; 166].

«Ему казалось, что дело, по которому он пришел, настолько незначительно, что из-за него совестно беспокоить такого видного седого гражданина, каким был Ипполит Матвеевич» [3; 10].

Отсутствует внутренняя форма и у аналитических цветовых прилагательных *беж, бордо, индиго, маренго, массака, перванш, сомо, сомон, терракот, ультрамарин, фрез, хаки, электрик*. Неизменяемые прилагательные имеют определённые особенности. Аналитические прилагательные, как правило, употребляются в постпозиции.

Следующая группа – это колоративы, соотнесённые с предметами, типа *абрикосовый, антрацитный, лилейный, лососевый, морковный* и т. п. Таких цветовых прилагательных в русском языке абсолютное большинство: *абрикосовый, агатовый, аквамариновый, алебастровый, аметистовый, апельсиновый, аспидный, бирюзовый, болотный, бронзовый, брусничный, бутылочный, васильковый, вишнёвый, вороной, восковой, гороховый, горчичный, гранатовый* (с разными предметами-эталонами в основе цветовой номинации например, по Большому толковому словарю русского языка – это цвет граната – мякоти плода такого дерева [4; 225], согласно словарю русского языка С. Н. Ю. Шведовой – цвета граната –

драгоценного камня, *грязный, дымчатый, желтковый, желточный, жемчужный, защитный, землистый, земляничный, златой, золотистый, золотой, изумрудный, канареечный, кармазинный, карминный, карминовый, каштановый, киноварый, кипенный, кирпичный, клубничный, клюквенный, кобальтовый, коралловый, кофейный, кремовый, кровавый, кровяной, кумачный, кумачовый, лазоревый, лазуревый, лазурный, латунный, лилейный, лимонный, малахитовый, малиновый, медный, медовый, меловой, миндальный, молочный, морковный, мучнистый, мышастый, мышиный, небесный, огневой, огненный, огнистый, оливковый, оловянный, опаловый, оранжевый, ореховый, охристый, охровый, охряный, пепельный, перламутровый, персиковый, песочный, пламенный, померанцевый, порфирный, пшеничный, ржавый, розовый, рубиновый, рябиновый, салатный, салатовый, сапфирный, сапфировый, сахарный, свекольный, свинцовый, серебристый, серебряный, сиреневый, смолистый, смоляной, снежный, соломенный, стальной, табачный, телесный, травянистый, травяной, угольный, фиалковый, фисташковый, чернильный, шафранный, шафрановый, шоколадный, яичный, янтарный.* [7, 256].

Например: «По темным углам зачумленной дворницкой вспыхивал и дрожал *изумрудный* весенний свет. *Бриллиантовый* дым держался под потолком. *Жемчужные* бусы катились по столу и прыгали по полу» [3; 37].

«С одной стороны висела *лазурная* вывеска: "Одесская бубличная артель Московские баранки"» [3; 61].

«Он держал в одной, вывернутой наизнанку руке сказочный рог изобилия, из которого лавиной валили *охряные* московские баранки, выдававшиеся по нужде и за одесские бублики»[3; 61].

8. Pantene Pro-V Repair and Protect Shampoo and Conditioner "Think again" Commercial https://www.youtube.com/watch?v=_VkZna8NxEg (Available 12.12.2021)
9. Say Goodbye to Frizz with Dove! https://www.youtube.com/watch?v=TDTzw_wsdFA (Available 28.01.2022)
10. The Business Traveler: model jislain Duval in Style on the Move / Boss https://www.youtube.com/watch?v=PKcpR6wXGvA (Available 04.02.2022)
11. The Rolex Lady-Datejust https://www.youtube.com/watch?v=AXPgpxYrWRk (Available 28.01.2022)
12. Top 10 Best Luxury Watches for Men you can buy in 2021 https://www.youtube.com/watch?v=PKcpR6wXGvA (Available 04.02.2022)
13. Tummy Stuffer: Kids Toys TV Commercial https://www.youtube.com/watch?v=PWUCFXI5CII (Available 19.02.2022)
14. Types of Advertising https://courses.lumenlearning.com/suny-marketing-spring2016/chapter/reading-advertising/ (Available 15.10.2021)
15. Wubble Bubble Ball: The First Ever! Original Wubble Ad by Hutten Miller https://www.youtube.com/watch?v=i2UAzduRseY (Available 19.02.2022)

Հեռուստատեսային գովազդներում համոզելու ռազմավարության սեռային և տարիքային առանձնահատկությունները

Սարգսյան Տաթևիկ
ՎՊՀ, Անգլերեն լեզու և գրականություն,
մագիստրատուրա, 2-րդ կուրս

Ամփոփում

Հանգուցային բառեր. *հեռուստատեսային գովազդ, համոզիչ գովազդ, լեզվական տեխնիկա, համոզելու ռազմավարություն, սեռային և տարիքային առանձնահատկություն, արդյունավետ համոզում*

Գովազդը նպատակաուղղված հաղորդակցություն է, որը նպատակ ունի որոշակի ազդեցություն ունենալ իր նպատակային լսարանի վրա: Սույն հոդվածի նպատակն է կոնկրետ գովազդային օրինակների միջոցով ներկայացնել հեռուստատեսային գովազդի այն լեզվական առանձնահատկությունները, որոնք կարող են նպաստել արդյունավետ համոզմանը:

Հոդվածում ներկայացվում են այն հատուկ լեզվական միջոցները, որոնք իրենց նպատակային լսարանին ավելի արդյունավետ կերպով համոզելու համար կիրառվում են կանանց և տղամարդկանց համար նախատեսված գովազդներում: Փորձ է արվել նաև հակիրճ ներկայացնել երեխաների համար նախատեսված գովազդների լեզվական առանձնահատկությունները:

Гендерные и возрастные особенности стратегий убеждения в телерекламе

Саргсян Татеви
ВГУ, Английский язык и литература,
Магистратура, 2-ой курс

Резюме

Ключевые слова: *телереклама, убеждающая реклама, языковые приемы, стратегии убеждения, половые и возрастные особенности, эффективное убеждение*

Реклама – это целенаправленная коммуникация, направленная на оказание определенного влияния на свою целевую аудиторию. Цель данной статьи представить на конкретных рекламных примерах лингвистические особенности телевизионных рекламных роликов, которые могут способствовать эффективному убеждению.

В этой статье представлены конкретные языковые средства, используемые в рекламе для женщин и мужчин для более эффективного убеждения целевой аудитории. Также была предпринята попытка кратко представить лингвистические особенности рекламы для детей.

ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ

ИСТОРИЯ

HISTORY

«Առաջին համաշխարհային պատերազմ» թեմայի դասավանդման առանձնահատկությունները

Արզանյան Հայկուշ
ԳՊՀ, Պատմություն, 4-րդ կուրս
Գիտական դեկավար՝ ասիստենտ Գ. Շաբունց

Հանգուցային բառեր. *Առաջին համաշխարհային պատերազմ, թեմայի դասավանդման առանձնահատկություն, գիտություն, դպրոց, մեթոդներ*

«Համաշխարհային պատմություն» առարկայի դասավանդման համար կարևոր նշանակություն կունենա «Առաջին համաշխարհային պատերազմ» թեմայի դասավանդման առանձնահատկությունների բացահայտումը: Աշխատանքը նպատակ ունի ներկայացնելու «Առաջին Համաշխարհային պատերազմ» թեմայի ուսուցման կազմակերպման առանձնահատկությունները թե՛ հիմնական, և թե՛ ավագ դպրոցում, վերանայելու թեմայի դասավանդման մեթոդաբանությունը, թեմայի մատուցման հայեցակարգային մոտեցումները՝ նպաստելով աշակերտների կողմից թեմայի ավելի խորը յուրացմանը: Աշխատանքը կարող է օգտակար լինել դպրոցում թեմայի դասավանդման համար:

Ինչպես գիտենք 20-րդ դարը լի էր մի շարք իրադարձություններով, որը իր հետքը թողեց մարդկության և ընդհանրապես աշխարհի զարգացման հետագա ընթացքի վրա: Դրանցից էր Առաջին աշխարհամարտը, որը սկսվել էր 1914 թվականի հուլիսի 28-ին և շարունակվել մինչև 1918 թվականի նոյեմբերի 11-ը: Այսօր էլ աշխարհը պաշտպանված չէ Երրորդ համաշխարհային պատերազմի վտանգից: Եվ հետազոտման անհրաժեշտությունը պայմանավորված է նաև հենց այս հանգամանքով: Այս առումով կարևոր ենք համարում հիմնական և ավագ դպրոցում դասընթացի ուսուցումը կազմակերպել այնպես, որ սովորողները հասկանան թե ինչ աղետալի հետևանքներ կարող է ունենալ նման արյունոտ և խոշորամասշտաբ պատերազմները մարդկության պատմության մեջ: Թեմայի դասավանդման առանձնահատկությունները բացահայտելու համար, պետք է՝ ուսումնասիրել «Առաջին Համաշխարհային պատերազմ» թեմայի դասավանդման նպատակները, խնդիրները և ակնկալվող արդյունքները, ներկայացնել աշակերտների կողմից պատճառահետևանքային կապերի և օրինաչափությունների ճանաչման գործընթացը, վերլուծել «Առաջին Համաշխարհային պատերազմ» թեմայի

բարդ, դժվարություն ներկայացնող հարցերը, դրանց յուրացման առանձնահատկությունները, դասի արդյունավետության բարձրացման ուղիները, բացահայտել թեմայի դասավանդման առանձնահատկությունները հիմնական և ավագ դպրոցում:

«Առաջին Համաշխարհային պատերազմ» թեմայի ուսուցման նպատակները, խնդիրները և աշակերտներին ներկայացվող պահանջները սահմանված են «Համաշխարհային պատմություն» առարկայի հիմնական և ավագ դպրոցի չափորոշիչներում և ծրագրերում:

Հաշվի առնելով «Համաշխարհային պատմություն» առարկայի հիմնական և ավագ դպրոցի չափորոշիչները և ծրագրերը առանձնացրել եմ հետևյալ կրթական, դաստիարակչական և զարգացնող նպատակները.

- սովորողներին հաղորդել ամբողջական և համակարգված գիտելիքներ Առաջին աշխարհամարտի, որպես համամարդկային հիմնախնդիրներից մեկի (պատճառներ, առիթ, սկիզբ, ընթացք, ավարտ, արդյունք) մասին,
- աճող սերնդին ոչ միայն հաղորդել նման խոշոր պատերազմի մասին տեղեկություններ, այլ նաև ձևավորել ազգային և համամարդկային նման աղետալի հիմնախնդիրների լուծման համար պայքարելու վճռականություն,
- Սովորողներին զինել նոր և նորագույն ժամանակների համաշխարհային և հայոց պատմության գիտելիքներով, որոնց միջով կարմիր թելի պես պետք է անցնի ազատության, անկախության, պետականության ստեղծման և ամրպանդման համար պայքարին սեփական մասնակցությունը բերելու գաղափարը, քանի որ Առաջին աշխարհամարտում իրենց անգնահատելի դերն են խաղացել նաև հայերը, որի վառ ապացույցն է 1918 թ. մայիսի 28-ը:
- Բացահայտել պատմամշակութային գործիչների՝ պատմություն կերտողների կյանքն ու գործը: Տալ նրանց համակողմանի բնութագիրը և մարդկային նկարագիրը: Հասկանալի դարձնել, որ պատմական այդ գործիչներն են իրականացնում պատմության ընթացքը:
- Նպաստել մարդասիրության և սոցիալական արդարության ոգով տոգորված ժամանակակից ազատ ու գիտակից անհատի և քաղաքացու ձևավորմանը:
- Ձևավորել գիտակից վերաբերմունք համամարդկային նման գլոբալ հիմնախնդիրների, բնական աղետների, մարդկության ճակատագրի և ապագայի նկատմամբ:

- Զարգացնել սովորողների զգայական ընկալման, մտավոր և հուզական ճանաչողության բոլոր տեսակներն ու կամային որակները:
- Եվ վերջապես ձևավորել պատմական դեպքերը, երևույթները համեմատելու, համադրելու, վերլուծելու, գնահատելու, վերացարկելու, ընդհանրացնելու և կանխատեսումներ կատարելու կարողությունները:

Նպատակին հնարավոր է հասնել բազմաթիվ խնդիրներ իրականացնելու ճանապարհով:

Թեմայի ուսուցման կարևորագույն խնդիրներն են՝

- Նպաստել համամարդկային հիմնախնդիրների հիմնավոր յուրացմանը,
- Խորացնել Համաշխարհային պատերազմի վերաբերյալ սովորողների պատկերացումներն ու գիտելիքները,
- Թե՛ հիմնական և թե՛ ավագ դպրոցում խորացնել Համաշխարհային պատերազմների վերաբերյալ ընդհանրական պատկերացումները ու գիտելիքները, և ձևավորել պայքարի միասնական մոտեցում նման խոշոր և մարդկությանը զպառնացող աղետների դեմ,
- օգնել գոյություն ունեցող բացասական կարծրատիպերի հաղթահարմանը,
- ձևավորել պատմական արդարության վերականգնման, յուրաքանչյուր ժողովրդի՝ իր պատմական հայրենիքում անվտանգ ապրելու և զարգանալու իրավունքի համար պայքարելու գիտակցություն:

Շատ հաճախ այս կամ այն երևույթների պատճառները սովորողները տեսնում են միայն այս կամ այն խոշոր պատմական անհատականության գործունեության մեջ: Դրա համար պատմության դասավանդման հիմնական խնդիրներից մեկն է հանդիսանում դպրոցականներին սովորեցնել պատմական ցանկացած երևույթի պատճառը տեսնելու նյութական արտադրության, հասարակական տարբեր խավերի, ժողովրդական լայն զանգվածների գործունեության և այլ սոցիալ–տնտեսական ու քաղաքական շահերի մեջ: Այստեղ շատ կարևոր է, որ սովորողները կարողանան տարբերել իրադարձությունների, երևույթների, գործընթացների պատճառներն առիթից, քանի որ դրանք միմյանցից տարբեր հասկացություններ են: Օրինակ Առաջին համաշխարհային պատերազմի պատճառները միջիմպերիալիստական հակասություններն էին, իսկ առիթը հանդիսացավ Ավստրո-Հունգարիայի թագաժառանգ Ֆրանց

Ֆերդինանտի և նրա կնոջ սպանությունը Սարաևոյում սերբ ազգայնական «Երիտասարդ Բոսնիա» կազմակերպության անդամ Գավրիլո Պրինցիպի կողմից 1914 թ. հունիսի 28-ին:

Սովորողների գիտակցության մեջ արտադրողական միջոցների որոշիչ դերի ձևավորումը անհնարին է առանց պատճառահետևանքային կապերի շղթայի ընկալման ու յուրացման: Այս շղթայի ամեն մի օղակ հանդիսանում է նախորդի հետևանքը և հաջորդի պատճառը: Դպրոցականների կողմից պատճառահետևանքային կապերի գիտակցված ընկալման համար անհրաժեշտ է հետևյալը.

1) նրանց մոտ ստեղծել վառ պատկերացումներ այդ շղթայի յուրաքանչյուր օղակի վերաբերյալ,
2) ապահովել այդ օղակների միջև եղած պատճառահետևանքային կապը,
3) միասնական պատճառահետևանքային կապերը ընդհանրացված վերլուծել [1, 117-121]:

Պատմական նյութին, պատմական գիտելիքին տեղյալ լինելու համար, որպեսզի սովորողները կարողանան բացատրել դրանց օրինաչափությունները և պատճառահետևանքային կապերը պետք է՝

- Տեղյակ լինեն, որ Առաջին Համաշխարհային պատերազմ թեմայի դասավանդման ժամանակ ուսուցիչները պատճառահետևանքային փաստարկներ են կազմում, թե ինչու և ինչպես է տեղի ունեցել անցյալում տվյալ իրադարձությունը:
- Տեղյակ լինեն, որ բերված փաստարկները ենթակա են քննարկման, քանի որ այդ պատճառահետևանքային փաստերը կախված են ընկալման տարբեր մոդուլներից:
- Սովորողները նույնպես իրենց հերթին պետք է կարողանան կազմել պատճառահետևանքային փաստարկներ՝ վերլուծական տարբերակումներով և աստիճանակարգմամբ, նաև պետք է կարողանան վերլուծել և գնահատել ոչ միայն իրենց ուսուցիչների, այլ նաև այլոց կազմած տարբեր փաստարկներ թեմայի շուրջ:


Իսկ ահա սովորողների պատճառահետևանքային տրամաբանությունը զարգացնող ռազմավարությունները հետևյալն են՝

- Սովորողներին հանձնարարել, որ անձամբ իրենք ստեղծեն աշխարհամարտի մասին այնպիսի իրադարձությունների մոդելներ և դիագրամներ, որոնք ցույց կտան պատերազմի պատճառահետևանքային շղթաները, դրանց կապերը և արդյունքները:
- Սովորողներին հանձնարարել որպեսզի նրանք ստանձնեն օրինակ

1914-1917 թթ. ընթացքում Նիկոլայ II-ի դերը, ստեղծել որոշումների կայացման պահերի վերարտադրման համատեքստ և որոշումներ կայացնել ու կանխատեսումներ անել դրանց հնարավոր ազդեցությունների վերաբերյալ:


- Սովորողներին հանձնարարել այլընտրանքային պատմության վերլուծություն, որպեսզի քննեն և ամրապնդեն իրադարձությունների տարբեր բաղադրիչների միջև եղած կապերի վերաբերյալ սեփական ընկալումը: Այս ամենը հնարավորություն է տալիս սովորողին զարգացնել պատճառահետևանքային մտածողությունը և միջոց են պատմական նյութի ընկալմումն ավելի խորացնելուն:

Պատճառահետևանքային կապերի բացահայտումը շատ ավելի արդյունավետ է, եթե այն տրվում է սխեմայի ձևով: VIII դասարանում թեմայի դասավանդման ժամանակ կարելի է օգտագործել «Ձկան կմախքը» մեթոդական հնարը: Ձկան կմախքի վրա ներկայացնելով պատերազմի պատճառները, փաստերը, առիթը, արդյունքը, իսկ ձկան պոչուկի վրա կարող է ներկայացվել պատերազմի ավարտը և արդյունքը:



Իսկ ավագ դպրոցում ուսուցիչը պատճառահետևանքային կապերի բացահայտման նպատակով կարող է օգտագործել սկզբնաղբյուրների, փաստաթղթերի հետ աշխատանքը: Ուսումնասիրելով ժամանակաշրջանի մի քանի սկզբնաղբյուրներ և փաստաթղթեր աշակերտները պետք է

հիմնավոր փաստարկներով ներկայացնեն պատերազմի սկսման պատճառները: Ուսուցիչը կարող է նախնական հարցեր ձևակերպել և աշակերտներին առաջարկել այդ հարցերի պատասխանները գտնել սկզբնաղբյուրում: Աշխատանքի ավարտին ուսուցիչը կարող է սովորողների հետ միասին լրացնել «Պատճառահետևանքային շղթա» սխեման:



Դասի ընթացքում սովորողների մոտ կարող է հարց առաջանալ նաև, թե ինչու՞ է 20-րդ դարի սկզբի նման խոշոր իրադարձությունը կոչվում Առաջին համաշխարհային պատերազմ: Սկզբից ուսուցիչը պետք է բացատրի, որ դա տեղի ունեցած բոլոր պատերազմներից ամենամեծն էր, և այդ պատերազմի ընթացքում աշխարհը բաժանված է եղել 2 հակադիր գոտիների, որոնք կարծես թե վճռում էին իրենց ազգի լինելիության խնդիրը: Այնուհետև պետք է բացատրի նաև, որ մինչև *Երկրորդ համաշխարհային պատերազմի* սկիզբը այն պարզապես կոչել են Համաշխարհային պատերազմ կամ Մեծ պատերազմ և այնուհետև միայն կոչվել է Առաջին համաշխարհային պատերազմ, տարբերակվելու համար:

Շատերը չգիտեն նաև, թե, ի՞նչը կարող էր լինել պատճառը այդ պատերազմի սկսման, որը մարդկային ուժի զգալի կորուստներ է պատճառել: Այս հարցին պատասխանելու համար, ուսուցիչը կարող է պատերազմի պատճառների մասին խոսել կիրառելով մի շարք մեթոդներ, որոնցից ավելի արդյունավետ կլինի աղյուսակի կազմումը, որտեղ գրված կլինեն պատճառների, նպատակների, մասնակիցների և արդյունքների մասին:

Պատճառ	Նպատակ	Մասնակիցներ	Սկիզբ	Ավարտ	Արդյունք

Դպրոցականների պատմական կրթության, տարածապատկերային մտածողության, պատկերացումների առաջացման և զարգացման խնդրում շատ մեծ դեր են կատարում պատմական քարտեզները: Քարտեզները օգնում են՝

- բացահայտել աշխարհագրական միջավայրը, որտեղ տեղի են ունեցել ուսումնասիրվող փաստերը, որով բացահայտվում է բնության կատարած խոշոր դերը հասարակական կյանքում:
- բացահայտել պատմական երևույթների տարածքային ընդգրկվածությունն ու տևողությունը, որով պայմաններ են ստեղծվում տնտեսական, քաղաքական, ռազմական ու մշակութային կապերի և հակասությունների պարզաբանման համար [1, 137]:

Այդ է պատճառը, որ ուսուցիչը թեման հանձնարարելուց պետք է պարտադիր իր ձեռքի տակ ունենա թեմային առընչվող քարտեզներ: Սակայն մեկ դասի ընթացքում կարելի է կիրառել երեք քարտեզից ոչ ավելի, քանի որ այդ դեպքում սովորողները կշփոթեն աշխարհագրական տարածքները, պատմական գործընթացները, երևույթներն ու իրադարձությունները:

Շատերի համար չափազանց դժվար է նաև թեմայի հետ կապված տարեթվերի և ժամանակագրության հիշելը, որոնք նրանց համար սպասվածից շատ են: Դրա համար ուսուցիչը պետք է սովորողների հետ միասին առանձնացնի Առաջին աշխարհամարտի տարեթվերը, ըստ գլխավոր, հիմնական և հենակետային նշանակության: Որպես գլխավոր տարեթվեր կարելի է առանձնացնել 1914 թ. հուլիսի 28-ը և 1918 թ. նոյեմբերի 11-ը, որպես պատերազմի սկսման և ավարտի տարեթվեր: Որպես հիմնական տարեթիվ կարելի է նշել 1914 թ. հունիսի 28-ը, երբ սպանվեց Ավստրո-Հունգարիայի գահաժառանգը, իսկ որպես հենակետային տարեթիվ՝ 1914 թ. օգոստոսի 12-ը, երբ Ավստրիան պատերազմի մեջ ներքաշվեց Ցերի և Կոլուբարայի ճակատամարտերով [2,137]:

Թեմայի ուսումնասիրության ժամանակ ուսուցիչը պետք է քայլեր ձեռնարկի նաև դասի արդյունավետությունը բարձրացնելու ուղղությամբ: Իսկ պատմության ժամանակակից դասի արդյունավետության բարձրացումը ենթադրում է մի շարք ուղիների գործադրում: Այդ ուղիների գործադրման շնորհիվ կարող ենք ասել, որ դասի բարձր որակը երաշխավորված է:

Առաջին ուղին, որ շատ կարևոր է. ուսուցչի պրոֆեսիոնալ պատրաստվածությունն է և մասնագիտական բարձր որակները: Ուսուցիչը նախ պետք է սիրի իր մասնագիտությունը, սիրի աշակերտներին, խորա-

պես իմանա իր կողմից դասավանդող ուսումնական առարկայի գիտական գիտելիքների մանրամասները, հարակից առարկաների հիմունքները: Ունենա մանկավարժական, հոգեբանական, մեթոդական հարուստ գիտելիքներ, լինի համակողմանի և ներդաշնակ զարգացած, դաստիարակված, և լայն մտահորիզոն ունեցող անձնավորություն:

Երկրորդ ուղին դասի նպատակների, խնդիրների ճիշտ որոշումն է. Օրինակ, թե տվյալ դասին կրթական, դաստիարակչական և զարգացման ի՞նչ խնդիրներ են լուծվելու, որպեսզի դրանք այս կամ այն չափով նպաստեն սովորողների համակողմանի և ներդաշնակ զարգացմանը [3, 213]:

Երրորդ ուղին դասի ընթացքում սովորողների գործունեության կազմակերպումն է: Այստեղ զարգացնում են սովորողների ճանաչողական, ստեղծագործական ունակությունները և կարողությունները: Պետք է հասնել նրան, որ սովորողները թե՛ դասի ընթացքում, և թե՛ դասից դուրս կարողանան ինքնուրույնաբար դատել, կատարել տեսական ու գործնական առաջադրանքներ, կարողանան ուսումնական նյութի մեջ տեսնել գլխավորը, հիմնականը, խնդիրը, հասկանալ հասկացությունների իմաստը:

Չորրորդ ուղին ուսուցման գործընթացը կազմակերպող դիդակտիկան նոր համակարգերի խելացիորեն գործադրումն է: Դա նշանակում է՝ իմանալ, թե դասի որ փուլում կիրառել պրոբլեմային, ծրագրավորված կամ անհատականացված ուսուցման տարրերը, ինչպես ընտրել դրանց օպտիմալ տարբերակները, դրանք ինչպես զուգակցել ուսումնասիրվող նյութի բովանդակությանը, կրթական, դաստիարակչական, զարգացնող խնդիրներին, կիրառվող ուսուցման մեթոդներին, տվյալ դասի ուղղվածությանը, որպեսզի սովորղների ճանաչողական գործունեությունը շարունակաբար էլ ավելի կատերալագործվի [3, 214]:

Եվ վերջապես *հինգերորդ ուղին* դասի ընթացքում դիտազննական պարագաների, ուսուցման տեխնիկական միջոցների ճիշտ,տեղը-տեղին օգտագործումն է, ուսուցչի ճիշտ հաղորդակցումը աշակերտների հետ:

Այսպիսով, ուսումնասիրության ընթացքում հանգեցինք հետևյալ եզրակացություններին.

1. «Առաջին Համաշխարհային պատերազմ» թեմայի դասավանդման արդյունավետությունը կախված է առաջադրված այն բոլոր նպատակներից և խնդիրներից, որոնք թեման ուսումնասիրելուց հետո պետք է պարզաբանվեն:

2. Որպեսզի թեման աշակերտների կողմից հասկանալի և պարզ

լինի, ապա պետք է թեմայի դասավանդումը իրականցվի նախապես որոշված մեթոդների և հնարների միջոցով, որոնց կիրառումից հետո արդեն սովորողները կարող են ինքնուրույն պարզել «Առաջին համաշխարհային պատերազմ» թեմայի պատճառահետևանքային շղթան:

3. «Առաջին Համաշխարհային պատերազմ» թեման աչքի է ընկնում իր դժվարությամբ: Թեմայի հետ կապված կան որոշ բարդ և դժվարամատչելի փաստեր, որոնք աշակերտները կարող են հասկանալ միայն ուսուցչի կողմից կազմակերպվող մեթոդների և հնարների շնորհիվ:

4. Արդի կրթական համակարգում ինչպես նկատում ենք կա աշակերտակենտրոն մոտեցում, սակայն դասի արդյունավետությունն ապահովելու համար կարելի է որոշ չափով փոփոխություններ կատարել: Դասը պետք է լինի նաև ուսուցչակենտրոն, քանի որ պրոֆեսիոնալ, բազմագիտակ, գիտական հարուստ պաշարներով և կարողություններով օժտված ուսուցչից է կախված դասի արդյունավետությունը:

Այսպիսով, շատ կարևոր է անդրադառնալ «Առաջին Համաշխարհային պատերազմ» թեմայի առանձնահատկություններին, որի միջոցով կարող ենք զարգացնել և ամրապնդել աշակերտների գիտելիքները և ապահովել դասի արդյունավետությունը, որը ուսուցչի կարևորագույն նպատակներից մեկն է:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Պապոյան Հ. Գ., Պատմության դասավանդման մեթոդիկա, Երևան, 2013:
2. Ստեփանյան Ա., Սաֆրաստյան Ռ., Նազարյան Ա., Համաշխարհային պատմություն, Նոր դարեր, դասագիրք հանրակրթական հիմնական դպրոցի համար, 8-րդ դասարան, Երևան, 2013:
3. Ամիրջանյան Յու., Սահակյան Ա., «Մանկավարժություն» ուսումնական ձեռնարկ, Երևան, 2005:

Особенности преподавания темы Первой мировой войны

Арзанян Айкуш
ГУГ, История, 4-ый курс

Резюме

Ключевые слова: *Первая мировая война, предметная особенность преподавания, наука, школа*

Выявление специфики преподавания предмета «Первая мировая война» будет иметь важное значение для преподавания «Всемирной истории». Цель работы – представить особенности организации преподавания темы «Первая мировая война» и в основной, и в средней школах, рассмотреть методику преподавания темы и необходимые подходы к теме, способствуя более глубокому усвоению учащимися темы. Работа может быть полезна для преподавания темы в школе.

Peculiarities of teaching the theme of the First World War

Arzanyan Haykush
GSU, History, 4th course

Summary

Key words: *World War I, subject teaching feature, science, school*

For teaching World history it will be important to reveal the peculiarities of the First World War. The goal of the work is to introduce the peculiarities of teaching the First World War theme both at elementary and high school, review the methods of teaching the theme, to promote students' deeper mastery of the topic. The work may be useful for teaching the theme at school.

ԱՄՆ-ի միջամտությունը Հարավսլավական ճգնաժամին, դիվանագիտական ճակատում

Դերձյան Էրիկ
ՎՊՀ, Պատմություն, մագիստրատուրա, 2-րդ կուրս
Գիտական ղեկավար՝ պ. գ. թ, դոցենտ Լ. Կոստանդյան

Հանգուցային բառեր. *պատերազմ, Իզեթբեկովիչ, Սարաևո, խորվաթներ, սերբեր, մահմեդականներ, քրիստոնյաններ*

Բոսնիա և Հերցեգովինայի պատերազմն ամենադաժանն էր Հարավսլավիայի փլուզմանը ուղեկցող հակամարտություններից, և այս հոդվածը ուսումնասիրում է միջազգային ներգրավվածությունը այդ պատերազմին, ներառյալ գործընթաց, որը հանգեցրեց Դեյթոնի խաղաղության համաձայնագրի ստորագրմանը։

Սարաևոն և Սերեբրենիցան շարունակում էին մնալ բռնի հակամարտությունը կանխելու և դադարեցնելու միջազգային ձախողման խորհրդանիշները։ Դրանք դիտվում էին Եվրոպայի և ՄԱԿ-ի «նվաստացման» և տեղում խաղաղապահ ուժերի ձախողման խորհրդանիշներ։

Չորս պատերազմները՝ Սլովենիան (1991 թ. հունիսի 27 - հուլիսի 7), Խորվաթիան(1991-1995 թթ.), Բոսնիա-Հերցեգովինան(1992-1995 թթ.), և Կոսովոն(1998-1999 թթ.) հանգեցրեցին Հարավսլավիայի փլուզմանը [1, 4]։ Այս չորս պատերազմներից՝ Բոսնիա-Հերցեգովինայում տեղի ունեցած պատերազմը անհամեմատ ամենաարյունալին էր, 3 անգամ ավելի շատ սպանվածներով, քան բոլոր պատերազմներում սպանվածները միասին վերցրած։ Երբ Հարավսլավիան առաջացավ XX դ. սկզբին (1918 թ.), Հաբսբուրգների և Օսմանյան կայսրությունների ավերակներից, այն բաղկացած էր ոչ միայն բազմաթիվ ինքնորոշվող էթնոկրոնական համայնքներից, այլև այդ համայնքները հաճախ միախառնվում էի, որը հետագայում դարձավ Հարավսլավիայի փլուզման գլխավոր պատճառներից մեկը։ Գրեթե իր ամբողջ գոյության պատմության մեջ երկրում տեղի էր ունենում ազգամիջյան խնդիրներ։

Նշենք, որ իր ստեղծման առաջին տարիներին Հարավսլավիան ցնցվում էր ուղղափառ սերբերի և կաթոլիկ խորվաթների միջև հակամարտությունից։ Այս հակամարտությունը ընդհատումներով գոյատևեց մինչև Հարավսլավիայի փլուզումը։ Հարավսլավիայի կոմունիստ առաջնորդները, ինչպես և ԽՍՀՄ-ի կոմունիստական վարչակարգը, բռնապե-

տական ռեժիմով էին կառավարում երկիրը, և միայն 1990 թ. Հարավսլավիայում տեղի ունեցան առաջին ազատ ընտրությունները:

Այս ծանր պայմաններում, երբ Հարավսլավիայում արդեն սրվել էին ազգամիջյան բախումները, երբ իրար ետևից Հարավսլավիայի 6 հանրապետություններում սկսվել էին քաղաքացիական և ազգամիջյան բախումները, քաղաքակիրթ աշխարհը փորձում էր կանգնեցնել այս արյունալի պայքարը: Նշենք որ Հարավսլավիայում տեղի ունեցած դեպքերը, ամենաարյունալին հանդիսացան ողջ Եվրոպայում Երկրորդ համաշխարհայինից (1939-1945 թթ.) հետո: Հիմա հերթականությամբ կներկայացնենք, այն բոլոր պլանները որոնք ներկայացվել են Հարավսլավիայում տեղի ունեցող իրադարձությունները կանխելու, և առանց զոհերի խաղաղությամբ լուծելու այս երկարատև պայքարը:

Քարինգթոն-Կուտիլեյրոի ծրագիր

Քարինգթոն-Կուտիլեյրո խաղաղության ծրագիրը, որն անվանվել է իր հեղինակների՝ Լորդ Քարինգթոնի և Պորտուգալիայի դեսպան Խոսե Կուտիլեյրոյի[1] անունով, արդյունք է Եվրոպական Միության խաղաղության համաժողովի, որը տեղի ունեցավ 1992 թ. փետրվարին՝ փորձելով կանխել Բոսնիա և Հերցեգովինայի ներքաշումը պատերազմի մեջ [2, 10]: Այն առաջարկում էր էթնիկ իշխանությունը բաշխել բոլոր վարչական մակարդակներում և կենտրոնական իշխանությունը փոխանցել տեղական էթնիկ համայնքներին:

Քանի որ Խորվաթիայում մարտերը սրվել էին, և Բոսնիան գրեթե քաղաքացիական պատերազմի եզրին էր, Բաղինտերի հանձնաժողովը հայտարարեց, որ Բոսնիայի անկախությունը պետք է պարզել հանրաքվեի միջոցով: Սկսվեց մրցակցային հանրաքվեների փուլ:

Այս ամենից հետո Բոսնիայի սերբերը նոյեմբերին կազմակերպեցին առաջին քվեարկությունը՝ հաստատելով իրենց մտադրությունը մնալու Հարավսլավիայի կազմում:

Տեղում իրավիճակը հանգուցալուծվելուն պես եվրոպացիները

[1] Խոսե Կուտիլեյրո- Խոսե Կուտիլեյրո (նոյեմբերի 20, 1934 - մայիսի 17, 2020) պորտուգալացի դիվանագետ և գրող էր: Եղել է Եվրոպայի խորհրդի ներկայացուցիչ, Արևմտաեվրոպական միության գլխավոր քարտուղար և ՄԱԿ-ի մարդու իրավունքների հանձնակատարի բանագնացը Բոսնիա և Հերցեգովինայում և Սերբիայում: Կուտիլեյրոն 1992 թվականի փետրվարին համահեղինակեց Կարինգթոն-Կուտիլեյրո պլանը, որը երբեմն հայտնի է որպես Լիսաբոնյան համաձայնագիր, որը փորձում էր կանխել Բոսնիա և Հերցեգովինայի պատերազմը: (https://star-wiki.ru)

պորտուգալացի դիվանագետ Խոսե Կուտիլեյրոի նախագահությամբ հրավիրվեցին համաժողով, որը, թվում էր առաջընթաց էր գրանցում և կհանգեցներ Հարավսլավիայում և հատկապես Բոսնիայում տիրող իրավիճակի հանգուցալուծմանը: Քարինգթոն-Կուտիլեյրո պլանը հիմք հանդիսացավ հաջորդող 4 պլանների համար:

Քարինգթոն-Կուտիլեյրո ծրագիրը ստորագրվել է Բոսնիայում գտնվող բոլոր երեք ազգային համայնքների ղեկավարների կողմից՝ Լիսաբոնում՝ 1992 թ. մարտի 18-ին [3, 10]:

Այս պլանը «Կոնսոցիալական» առաջարկ էր, որտեղ նշվում էին՝

1) Բոսնիան կլիներ անկախ, առանց իր սահմանների փոփոխության
2) Երկիրը կբաժանվեր «կանտոնների», որոնցից յուրաքանչյուրում գերիշխելու էր էթնոկրոնական համայնքներից մեկը կամ մյուսը,
3) Երեք համայնքների միջև իշխանության բաշխում էր տեղի ունենալու՝ թույլ կենտրոնական կառավարության միջոցով:
4) Բոսնիայի 109 համայնքները պետք է հատկացվեին 3 համայնքներից մեկին կամ մյուսին, ըստ ազգային մեծամասնության, տվյալ համայնքում:
5) Միջնորդները հայտարարեցին, որ բաշխումը «հիմնված կլինի ազգային սկզբունքների վրա, որը նշել են առաջին կետում, հաշվի առնելով տնտեսական, աշխարհագրական, և այլ չափանիշներ», սակայն այս առաջարկները չեն կատարվել, և հիմնականում հետևել են նոր ավարտված մարդահամարի արդյունքներին:
6) Մուսուլմանական և սերբական կանտոնները պետք է զբաղեցնեին տարածքի 44%-ը, իսկ խորվաթական կանտոնը պետք է զբաղեցներ մնացած 12%-ը:

Գործարքը ինչքան էլ խաղաղասիրական նկատառումներ ուներ, այնուամենայնիվ, ծրագիրը չիրականացավ, և փլուզվեց, նախքան այն ամբողջությամբ մշակվելը և իրագործվելը, երբ նախագահ Իզետբեկովիչը հետ կանչեց իր ստորագրությունը: կարճ ժամանակ անց իր նա հանդիպում ունեցավ ԱՄՆ դեսպան Ուորեն Զիմերմանի հետ և հայտարարեց, որ ինքը դեմ է ստորագրված ծրագրին և «Բոսնիայի բաժանմանը»: Զիմերմանը հետագայում հերքել է այն կեղծ լուրերը, թե իբր ինքն է խորհուրդ տվել Իզետբեկովիչին, որպեսզի հրաժարվի այս ծրագրից, խոստանալով, որ ԱՄՆ-ը կճանաչի Բոսնիա-Հերցեգովինայի ամբողջական պետությունը: Այս համաձայնագիրը մերժելուց հետո Բոսնիան սկսեց անջատողական գործողությունները Հարավսլավիայից, մեծ մասշտաբներ ընդունեց:

Շատ տարիներ անց՝ Խոսե Կուտիլեյրոն, ով մասնակցում էր Ռադովան Կարաջիչի դատավարությանը, ասաց, որ 1992 թվականին բոսնիացիները սկզբում ընդունեցին, իսկ հետո մերժեցին երկիրը երեք միավորների վերակազմակերպման ծրագիրը, ինչը կարող էր կանխել հետագա հակամարտությունը [3]: Կուտիլեյրոն, ով ստիպված էր ցուցմունք տալ տրիբունալի կողմից Կարաջիչի պաշտպանական խնդրանքից հետո, ասաց, որ առաջարկվող «Լիսաբոնյան համաձայնագրի» ձախողումը «իսկական ողբերգություն» էր: Կուտիլեյրոն նշեց, որ Դեյտոնի խաղաղության համաձայնագիրը, որն ավարտեց պատերազմը երեք տարի անց, «գրեթե նույնն էր» [3] և կարելի էր բազմաթիվ կյանքեր փրկել:[3] Կուտիլեյրոն նշում էր, որ այս ծրագրի չընդունումը, հիմնականում վնաս հասցրեց Բոսնիայում ապրող մահմեդական ազգաբնակչությանը: Պետք է նշել, որ բոսնիացիները, խորվաթները և սերբերն իսկզբանե ստորագրել են համաձայնագիրը, որը ստեղծել են Կուտիլեյրոն և բրիտանացի լորդ Քարինգթոնը, սակայն մի քանի օր անց բոսնիացիները փոխել են իրենց դիրքորոշումը, ասելով, որ չեն ընդունի Բոսնիայի բաժանումը էթնիկական հողի վրա: Կուտիլեյրոն ասել է, որ իրական Բոսնիան տարբերվում է իր ուզածից: Իզետբեգովիչի հրաժարվելը նպաստեց պատերազմի երկարացմանը նույնքան, որքան «Մեծ Սերբիայի» և խորվաթական հեգեմոնիայի մասին երազանքները»:

Այսպիսով՝ նշենք, որ Քարինգթոն-Կուտիլեյրո պլանը հիմք հանդիսացավ, մյուս ծրագրերի ստեղծման և փորձարկման համար:

Վեստ-Օուենի պլան

Քարինգթոն-Կուտիլեյրո պլանի փլուզմամբ և Բոսնիայի լայնածավալ պատերազմի սկսմամբ՝ ՄԱԿ-ը ձեռնարկեց մեծ մարդասիրական օգնություն: Սա դարձավ աշխարհի ամենամեծ մարդասիրական գործողությունը, և ներառում էր օդային փոխադրում դեպի շրջափակված Սարաևո քաղաք: Այդ օգնությունը ամենամեծն էր Բեռլինի հետո: Իր հումանիտար գործողությունը տեղում անկարգություններից պաշտպանելու համար ՄԱԿ-ի անվտանգության խորհուրդը ընդլայնեց իր խաղաղապահ գործողությունը Խորվաթիայից մինչև Բոսնիա:

ՄԱԿ-ի մարդասիրական ջանքերը հաջողություն ունեցան: Բոսնիայում տեղի ունեցող պատերազմը, այն պատերազմներից էր, որտեղ գրեթե ոչ ոք չէր մահանում, ոչ սովից, ոչ ցրտահարությունից:

Հազարավոր մահերը, ավելի քան երկու միլիոն փախստականները և տեղահանվածները, սովը, բռնաբարությունները, խոշտանգումները և ազ-

գամիջյան ատելությունը պատուհաս էին նախկին Հարավսլավիայի համար: Ռազմական գործողություններն սկսվելուց ի վեր 1991 թ. հակամարտությունը գնալով ավելի էր սրվում, քանի որ իրավիճակը արագորեն դուրս էր գալիս վերահսկողությունից, չնայած միջազգային ջանքերը՝ այստարածաշրջաններում խաղաղություն վերականգնելու համար [4, 347]:

Երբ պատերազմը սաստկացավ, սկսվեց խաղաղության նոր նախաձեռնություն, որտեղ ԱՄՆ նախկին պետքարտուղար Սայրուս Վենսը ներկայացնում էր ՄԱԿ-ը, իսկ Միացյալ Թագավորության նախկին արտգործնախարար լորդ Դեյվիդ Օուենը՝ Եվրոպական Միությունը:

Միջազգային միջնորդներ Սայրուս Վենսը և լորդ Դեյվիդ Օուենը, փորձելով հասնել բանակցային քաղաքական կարգավորման Բոսնիայի ապագայի շուրջ, շարունակում են խաղաղ բանակցությունները՝ որի արդյունքում՝ պատերազմող խմբակցությունները կարող էին դիվանագիտական ճանապարհով լուծել իրենց վեճերը և հասնել փոխզիջումային լուծման: Եվրոպական Միության բանագնաց լորդ Դեյվիդ Օուենը բանակցությունների ասպարեզ մտավ, որպես Լոնդոնի կոնֆերանսի ղեկավար կոմիտեի համանախագահ՝ համատեղ ջանքեր գործադրելով ՄԱԿ-ի ներկայացուցիչ Սայրուս Վենսի հետ [4, 347]: Վենսի և Օուենի համատեղ պլանը ներառում էր մուսուլմանների, խորվաթների և սերբերի երեք լայնորեն տարբերվող տեսակետները, Բոսնիա և Հերցեգովինայի միավորման խնդիրը, ինչը հիմնարար նշանակություն ուներ հակամարտության վերջնական փոխզիջումային լուծման համար: Այս ծրագիրը ուներ նույն կոնսոցիալական տրամաբանությունը, ինչ Քարրինգտոն-Կուտիլեյրո ծրագիրը, և ուներ նույն ձևաչափը՝ բանակցություններին ներգրավել Սերբիային և Խորվաթիային, ինչպես նաև բոսնիացի սերբերին և խորվաթներին: Այս ծրագիրը իր մեջ ընդգրկում էր հետևյալ կետերը՝

1) Վարչատարածքային բաժանում, որի համաձայն երկիրը պետք բաժանվեր 10 կանտոնների:
2) Բոսնիացի սերբերը, որոնք տնօրինում էին Բոսնիայի տարածքի մոտ 70 %-ը, պետք է վերահսկեին սեփական կանտոնները:
3) Բոսնիա և Հերցեգովինան պետք է բաժանվեր 10 կիսաինքնավար գավառների՝ ապակենտրոնացված երկրում, որոնք պետք է կառավարվեին սահմանադրական սկզբունքներով:

Սակայն այս ծրագրին հակադրվեցին Բոսնիայի սերբերը: Նրանք

Վենսին և Օուենին մեղադրեցին Բոսնիան «քայքայելու» մեջ, ինչպես նաև մեղադրեցին որ նրանք բանակցել են Միլոշևիչի և Կարաջիչի հետ [4, 350]։

Բոսնիա Հերցեգովինայի համար Վենս-Օուեն Ժնևի խաղաղության ծրագրի լայնածավալ աջակցությունը բարձրացավ Հարավսլավիայի ճգնաժամը արդյունավետորեն կարգավորելու Եվրոպական համայնքի և ՄԱԿ-ի ձախողված ջանքերի մոխիրներից։ Քանի որ իրավիճակը դուրս էր եկել վերահսկողությունից, ՄԱԿ-ն ավելի ու ավելի էր պաշտպանում Վենս-Օուենի դիվանագիտության և հաշտեցման օրակարգը՝ որպես հակամարտությունը կարգավորելու լավագույն հույս։

Այսպիսով՝ այս ծրագիրը ևս չիրագործվեց, քանի որ Բոսնիայում գտնվող ազգային փոքրամասնությունները նորից դժգոհ էին ինչ որ բանից, յուրաքանչյուր փոքրամասնություն փորձում էր այնպիսի ծրագիր ընդունել որ համապատասխաներ իր ազգային շահերին։

Օուեն-Ստոլտենբերգի պլան

Օուեն Ստոլտենբերգի պլանը (նաև հայտնի է որպես Բոսնիա և Հերցեգովինայի Հանրապետությունների Համադաշնության Միություն կամ մոդել) Բոսնիայի պատերազմում խաղաղ միավորման հասնելու փորձ էր։ Այն ներկայացվել է Եվրոպական Միության միջնորդ Դեյվիդ Օուենի և ՄԱԿ-ի հատուկ բանագնաց Թորվալդ Ստոլտենբերգի կողմից 1993 թվականի ամռանը՝ Վենս Օուենի ծրագրի ձախողումից հետո։ Ծրագիրը հիմնականում հիմնված էր Բոսնիայի և Հերցեգովինայի բաժանման սերբ-խորվաթական առաջարկների վրա, որոնք Սլոբոդան Միլոշևիչը և Ֆրանիո Թուջմանը ներկայացրել էին 1993 թ. հունիսին և ներառում էր սերբական կողմին առավել լայնածավալ տարածքային զիջումներ։ Ըստ նրանց գաղափարի տարածքի 51%-ը պետք է ստանային սերբերը, 32 %-ը՝ բոսնիացիները, իսկ 17 %-ը՝ խորվաթները։ Օուենը, որին միացել էր Նորվեգիայի նախկին արտգործնախարար Թորվալդ Ստոլտենբերգը, առաջարկել էր «Երեք հանրապետությունների միություն» [5]։ Օուեն-Ստոլտենբերգի պլանը հակառակում էր Վենս-Օուենի խաղաղության ծրագրի տրամաբանությանը։ Անբաժանելի երկրի համար պայմանավորվածություն առաջարկելու և էթնիկ զտումները շրջելու փոխարեն, շեշտը դրվելու էր գործարքի ստեղծման վրա, որն ավելի հեշտ կլիներ իրականացնել տեղում։ Խորվաթներին և սերբերին հատկացնելով տարածքներ, որոնք հեշտությամբ կարող էին անջատվել Բոսնիայից, Օուեն Ստոլտենբերգի պլանն ընդունեց, որ երեք համայնքները այլևս չեն պատրաստվում միասին ապրել։ Այն բաժանումը, որ իրականություն էր

տեղում, կհաստատվեր համաձայնությամբ: Դա հաստատվել է կողմերի կողմից, այդ թվում՝ մուսուլման-սերբական հռչակագրում, որը նախատեսում է երկու տարի անց հանրաքվե անցկացնել: Բայց խորվաթների և սերբերի համար դրա մեջ ինչ որ տարօրինակ բան կար: Առաջարկվող գործարքի պայմանների համաձայն՝ սերբերը պետք է զիջեն իրենց ունեցած տարածքի գրեթե մեկ քառորդը: Ավելին, եթե խորվաթները կամ սերբերը դուրս գային Միությունից, նրանք կկորցնեն իրենց բաժնեմասը Սարաևոյի խառը թաղամասում, որը Բոսնիայի թագի գոհարն է

Ծրագրի հիմնական կետերն էին՝

1) Սերբերին կհատկացվի մեկ մեծ տարածք՝ ներառյալ ամբողջ սահմանը Սերբիայի հետ, խորվաթներին հատկացվելու էր երկու փոքր տարածք՝ երկուսն էլ կից Խորվաթիայի Հանրապետությանը, իսկ մահմեդականներին տրամադրվելու էին ճանապարհային կապեր՝ իրենց տարածքի հիմնական մասը կապելու մեկուսացված մուսուլմանական քաղաքների հետ: Երկրի կենտրոնում գտնվող Սարաևոյի մեծ շրջանը կծառայեր որպես ընդհանուր մայրաքաղաք:
2) Մահմեդականները պետք է տիրեին Բոսնիայի տարածքի 33%-ից մի փոքր ավելին, ներառյալ մուտքը Սավա գետի հյուսիսում և Ադրիատիկ ծովի հարավում, խորվաթները կկազմեն տարածքի գրեթե 18%-ը, իսկ սերբերը 49%-ը:
3) Կենտրոնական կառավարությունը խնդիրներ կունենա միայն միջազգային առևտրի և արտաքին քաղաքականության ոլորտներում:
4) Յուրաքանչյուր հանրապետություն պետք է ունենար իր սահմանադրությունը, որը գործում էր միայն իր տարածքում:
5) Կենտրոնական կառավարությունը կարող էր վերահսկել ներքին գործերը, բայց երկիրը պետք է համաչափ հավասարակշռված լիներ էթնիկ կազմով [7]:

Նախագահներ Միլոշևիչը և Թուջմանը ինչպես նաև բոսնիացի սերբերի և խորվաթների ներկայացուցիչները համաձայնել էին առաջարկին: Ընդամենը երկու օր անց, սակայն, Իզետբեգովիչը լրատվամիջոցներին ասաց, որ ինքը «անձնապես հակված չէ» ընդունել փաթեթը, որն այնուհետ մերժվել է մահմեդականների ժողովի կողմից և պատերազմը շարունակվել է:

Դեյտոնի համաձայնագիր

1992 թվականի փետրվարի 29-ից մարտի 1-ը՝ նախկին Հարավսլավիայի փլուզման ժամանակ, Բոսնիա և Հերցեգովինայում անցկացվեց անկախության հանրաքվե։ Բոսնիայի սերբ բնակչության ճնշող մեծամասնությունը բոյկոտել է հանրաքվեն։ Միաժամանակ ընտրողների 99,7 %-ը «կողմ» է քվեարկել, մնացածը՝ «դեմ» երկրի անկախության հռչակմանը։ Այսպիսով, Բոսնիա և Հերցեգովինան հռչակեց անկախություն, բայց հետագա տարիներին ստիպված եղավ դրա համար վճարել արյունալի հակամարտությամբ։ Անկախության հռչակումից հետո բոսնիացի սերբերը Հարավսլավիայի իշխանությունների աջակցությամբ երկրում սկսեցին էթնիկ զտումներ։ Հատուկ ստեղծված համակենտրոնացման ճամբարներում բոսնիացիները ենթարկվել են տարբեր խոշտանգումների, բռնաբարությունների ու սպանությունների։

Պատերազմը խլեց ավելի քան 300 հազար մարդու կյանք, որոնց մեծ մասը խաղաղ բնակիչներ էին։ Ավելի քան 2 միլիոն բոսնիացիներ լքել են իրենց տները։ Բացի Սարաևոյից, որը շրջափակված էր սերբական ուժերի կողմից, ցեղասպանություն և ջարդեր են իրականացվել Բոսնիայի և Հերցեգովինայի այնպիսի քաղաքներում, ինչպիսիք են Պրիեդորը, Բիելինան, Զվորնիկը, Վիշեհրադը, Սրեբրենիցան, Ֆոչան։ Բոսնիացիները, ովքեր պաշտպանում էին անկախ Բոսնիա և Հերցեգովինան երկրի արևմուտքում և հարավում խորվաթներից և արևելքում և հյուսիսում սերբերից, կարևոր հաղթանակներ տարան լավ զինված հակառակորդների դեմ:

Ստեղծված ծանր իրավիճակում ամեն ինչ արվում էր որպեսզի կանխվի այս արյունալի հակամարտությունը։ Ինչպես վերը նշեցինք այս հակամարտությունը լուծելու համար ներկայացվեցին տարբեր ծրագրեր որպեսզի կանխեն այս հակամարտությունը, սակայն բոլոր ծրագրերը մերժվեցին։ Սակայն վերջնականապես պատերազմը ավարտին հասցվեց Դեյտոնի համաձայնագրով։

Դեյտոնի համաձայնագիրը, պատերազմող կողմերի առանձնացման և տարածքների անջատման մասին նախաստորագրվել է 1995 թվականի նոյեմբերի 21-ին՝ ԱՄՆ-ում՝ երկար բանակցություններից հետո։ Նախաձեռնվել է Ռայթ-Պատերսոն ռազմաօդային բազայում՝ Դեյթոն քաղաքի մոտ՝ Բոսնիա և Հերցեգովինայի նախագահ Ա. Իզետբեգովիչի, Խորվաթիայի նախագահ Ֆ. Թուջմանի, Սերբիայի նախագահ Ս. Միլոշևիչի կողմից:

ԱՄՆ-ը, Ռուսաստանը, Մեծ Բրիտանիան, Գերմանիան և Ֆրանսիան հանդես են եկել որպես Դեյտոնյան համաձայնագրի երաշխավորներ։

Դեյթոնի համաձայնագիրը ներառում է «Բոսնիա և Հերցեգովինայում խաղաղության ընդհանուր շրջանակային համաձայնագիրը» և դրա 12 հավելվածները, որոնցից գլխավորները վերաբերում են տարածքային խնդիրներին, Բոսնիա և Հերցեգովինայի պետական կառուցվածքի հարցերին և էթնիկ հակամարտության կարգավորման ռազմական ասպեկտներին։ Դեյտոնյան համաձայնագրով՝

1) Բոսնիա և Հերցեգովինան, մնալով մեկ պետություն՝ մայրաքաղաք Սարաևոյով, բաժանվեց 2 մասի՝ Բոսնիա և Հերցեգովինայի մահմեդական-խորվաթական դաշնություն (Դաշնության տարածքի 51%-ը) և Սերբական Հանրապետություն (Սերպսկա) 49% և և Բրչկոյի ինքնավար շրջան։
2) Բոսնիա և Հերցեգովինայի ֆեդերացիան պետք է բաղկացած լիներ 10 կանտոններից։
3) Երկրի «բաղադրիչները» դարձան բոսնիացիները, խորվաթները և սերբերը, որոնք 3,5 տարի կռվել են միմյանց հետ։
4) Բոսնիա և Հերցեգովինայում պետական իշխանության բարձրագույն մարմինը՝ նախագահությունը, որը բաղկացած է 3 հոգուց՝ որոնք ներկայացնում էին Բոսնիայի 3 ազգությունները՝ բոսնիացիներ, խորվաթներ և սերբեր։
5) Սարաևոն իրեն հարող սերբական շրջաններով մնաց մահմեդական գոտում։
6) Բրչկո շրջանի վարչական պատկանելության հարցը փոխանցվել է Արբիտրաժային հանձնաժողովին (1999 թ. մարտին այն հայտարարվել է չեզոք գոտի)։
7) Արտաքին, դրամավարկային, ներգաղթային քաղաքականությունը, արտաքին առևտուրը, Բոսնիա և Հերցեգովինայի միջազգային պարտավորությունների ֆինանսավորումը և ներքին տրանսպորտային կապերի ապահովումը փոխանցվեցին կենտրոնական իշխանությունների իրավասությանը։
8) Հիմնարար օրենքների կատարման նկատմամբ վերահսկողությունը վստահվել է 9 հոգուց բաղկացած Սահմանադրական դատարանին (4 հոգի պետք է ընտրված լիներ Դաշնությունից, 2-ը՝Սերբական հանրապետությունից (Սրպսկա), մնացածը նշանակված էին Մարդու իրավունքների եվրոպական դատարանի

նախագահի կողմից, ովքեր Բոսնիայի և Հերցեգովինայի և նրա հարևան պետությունների քաղաքացիներ չեն):

9) Ամբողջ Բոսնիաում և Հերցեգովինայում դրամավարկային քաղաքականության կառավարումը վստահվել է Կենտրոնական բանկին:

10) Դեյթոնի համաձայնագրի համաձայն, Բոսնիա և Հերցեգովինայի տարածքում ռազմական հակամարտությունը լուծելու համար ստեղծվել է Համաձայնագրի իրականացման բազմազգ ուժեր, որը բաղկացած է ՆԱՏՕ-ի 14 երկրների (բացառությամբ Իսլանդիայի և Լյուքսեմբուրգի) և 10 երկրների ռազմական կոնտինգենտներից: Այս դաշինքի անդամների ընդհանուր թիվը կազմում էր 83,5 հազար մարդ, որից 37 հազար ամերիկացի, 14 հազար բրիտանացի, 4 հազար գերմանացի զինվորականներ: Այս կառույցի կազմում գործում էր նաև ռուսական 1,5 հազար հոգանոց բրիգադը):

11) Դեյթոնյան համաձայնագրով հակամարտող կողմերի վրա պարտավորություն է դրվել դադարեցնել ռազմական գործողությունները 30 օրվա ընթացքում և 120 օրվա ընթացքում բոլոր ծանր զինատեսակները դուրս բերել հատուկ նշված հավաքակետեր:

Մինչև 1996 թվականի վերջը Դեյթոնյան համաձայնագրի համաձայն բոլոր հանձնարարված առաջադրանքները ավարտվեցին. Բոսնիա և Հերցեգովինայում ռազմական գործողությունները դադարեցվեցին, զորքերը դուրս բերվեցին բաժանման գոտիներ, անցկացվեցին ընտրություններ, ձևավորվեցին և սկսեցին գործել կենտրոնական իշխանությունները [5]:

Երկար տարիներ բանավեճ է եղել, թե արդյոք Դեյթոնի համաձայնագիրը արդար է բոլոր կողմերի համար:

«Սա անարդար խաղաղության համաձայնագիր է, բայց ավելի արդար է, քան պատերազմի շարունակությունը: Ներկա իրավիճակում և աշխարհում, որտեղ մենք ապրում ենք, անհնար է ավելի լավ համաձայնության հասնել» [7] – ասել է Ալիյա Իզետբեգովիչը (Բոսնիա և Հերցեգովինայի հանրապետության նախագահ՝ 1990-1996 թթ., Բոսնիայի և Հերցեգովինայի Նախագահության անդամ 1996-2000 թթ.): [9]

Դեյթոնի խաղաղության համաձայնագիրը, որը շատ հարցերում կապել է Բոսնիա և Հերցեգովինայի ձեռքերը, հիմնականում դիտվում է որպես «ժամկետանց» կամ «թարմացման կարիք ունեցող» փաստաթուղթ:

Թերևս միակ դրական արդյունքը Դեյթոնի խաղաղության համաձայնագրի, որի անարդյունավետությունն ակնհայտ էր ստորագրման օրվանից, այն էր, որ այն ավարտեց պատերազմը և կանխեց հետագա կորուստները:

«Եռագլուխ» կառույցը Բոսնիա և Հերցեգովինան դարձրել է աշխարհի ամենաբարդ քաղաքական համակարգ ունեցող երկիրը:

Այսպիսով՝ ինչպես տեսանք բոլոր համաձայնագրերը կարճ ժամանակում գրվեցին, բայց այդպես էլ գոյություն չունեցան, քանի որ բոլոր ծրագրերը անհաջող էին: Պատերազմը այնքան արյունալի էր, որ բոլոր երկրները այդ թվում հակամարտող կողմերը կարճ ժամանակամիջոցում համաձայնեցին կնքելոը Դեյթոնի համաձայնագիրը:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. David Harland «Never again. International in Bosnia and Hercegovina», 2017, page 4
2. Peace Plans Offered Before and During The Bosnian War - Carrington–Cutileiro (liquisearch.com)
3. «Bosniaks Could Have Stopped Years of Bloodshed», Saraevo, 02.22.2013 https://balkaninsight.com/
4. Bosnia-Hercegovina-Vance-Owen Agenda For A Peaceful Settlement: Did the U.N. Do Too Little, Too Late, to Support This Endeavor?-NOTE, 1993, page 347
5. OWEN-Stoltenberg-Plan (https://second.wiki/)
6. Всемирная история «Дейтнские соглашения»(https://w.histrf.ru/)
7. Лейла Биоградлтджа, Айнлур Асгарли «26 лет Дейтонскому соглашению, положившему конец кровопролитной войне в БиГ», Дейтонское соглашение было парафировано 21 ноября 1995 года после длительных переговоров в США, Сараево, (21.11.2021)
8. https://etnowiki.ru/
9. https://ru.wikipedia.org/

Вмешательство США в югославский кризис на дипломатическом фронте

Дердзян Эрик
ВГУ, История, Магистратура, 2-ой курс

Резюме

Ключевые слова: *война, Изетбекович, Сарао, хорваты, сербы, мусульмане*

Итак, как мы видели, все договоры были написаны в короткие сроки, но не реализованы, потому что все планы были неудачными. Война была настолько кровопролитной, что все страны, в том числе и противоборствующие стороны, договорились в коротки сроки подписать Дейтонский договор.

US intervention in the Yugoslav crisis on the diplomatic front

Derdzyan Eric
VSU, History, MA the 2nd course

Summary

Key words: *war, Izetbegovic, Sarao, Croats, Serbs, Muslims*

In conclusion, as we have seen, all the agreements were reached in a short period of time, but they were not implemented, since all the plans were unsuccessful. The war was so bloody that all the countries, including warring parties, agreed to sign “Deiton’s” treaty within a short period of time.

Հնագիտական պեղումները Տաշիր-Ձորագետում: Որնակից դիմաց

Ծատինյան Ալլա
ՎՊՀ, Պատմություն, 3-րդ կուրս
Գիտական ղեկավար՝ պ. գ. թ. Բ. Վարդանյան

Հանգուցային բառեր. *Տաշիր-Ձորագետ, Վանաձոր, Դիմաց թաղամաս, Թագավորանիստ, Մաշտոցի բլուր, դամբարանադաշտեր*

Ներածություն

Հայկական լեռնաշխարհը և նրան հարակից տարածաշրջանները մ. թ. ա 4-րդ հազարամյակի կեսից անցում է կատարում հետաքրքիր, նոր հնագիտական մշակույթի մի ժամանակաշրջան, որը հայտնի է կուրա-րաքսյան (վաղ բրոնզի դար) անվամբ (այս մշակույթի առանձին ճյուղեր հանդիպում են Սիրիայում, Պաղեստինում, Իրանի հյուսիսարևմտյան շրջաններում և Հյուսիսարևելյան Կովկասում) [2, 9-10]:

Պատմական Տաշիր-Ձորագետը կամ ներկայիս Լոռու մարզը թեև հնավայրերով հարուստ է, սակայն տարածաշրջանը հանդիսանում է սակավ ուսումնասիրած շրջաններից: Հայտնաբերված նյութերը կամ փոքրաթվավալ հնագիտական պեղումների արդյունք են կամ գտնվել են պատահականորեն: Սակայն տարածաշրջանի համար բացառիկ մեծարժեք է ներկայացնում Լոռի Բերդի սիստեմատիկ հնագիտական պեղումները:

Ե. Բայբուրդյանի վկայությամբ Նիկողայոս Մառը Որնակից (Ակներից) 1893 թվականին հայտնաբերել է Շրեշ բլուրի տիպի խեցեղեն [1, 296]:

Լոռու մարզի Ալավերդի համայնքում 1934 թվականին ակումբի շինարարության ժամանակ հայտնաբերվել է վաղբրոնզեդարյան կտցավոր կացին (ՀՊՊԹ 759/6) նման կտցավոր կացին նաև գտնվել է Գյումրիում, որը այժմ պահպանվում է Գյումրու երկրագիտական թանգարանում: [2, 14-15]:

Եղեգնուտ գյուղում 1958 թվականին պատահական բացված դամբարանում հայտնաբերվել են խեցեղենի բեկորներ (ՀՊՊԹ2054/18), վարդագույն և գորշ փայլեցրած մակերեսներով [2, 10]:

Դիմաց թաղամասը

Պատմական Տաշիր-Զորագետի հնագիտական ուսումնասիրությունն ամբոջացնելու գործում բացառիկ՝ մեծ արժեք է ներկայացնում Վանաձոր համայնքի հնագիտական ժառանգությունը:


Վանաձոր համայնքը ՀՀ Լոռու մարզի մարզկենտրոնն է, որը հանդիսանում է Հայաստանի Հանրապետության երրորդ խոշորագույն քաղաքը: Քաղաքը ծովի մակերևույթից բարձր է 1353 մետր, շրջափակված Փամբակ և Բազում լեռներով: Վանաձորի թաղամասերից է Դիմաց թաղամասը, որտեղ հայտնաբերվել է Հայաստանի և տարածաշրջանի հնագիտական ամենակարևոր դամբարաններից մեկը: Վանաձոր համայնքի հնավայրերը լինելով սակավ ուսումնասիրված, սակայն բացառիկ մեծ արժեք են ներկայացնում, այստեղ հնագիտական պեղումներ կատարվել են շատ կարճ ժամանակով և այդ է պատճառը, որ չենք կարող ասել, որ Վանաձոր համայնքը ամբողջովին հնագիտորեն ուսումնասիրված է:

Սույն հետազոտության հիմքում ընկած է թաղամասում հնագիտական պեղումների կամ պատահական գտնված հնագիտական առարկաները, որոնք հավաքագրվել և ուսումնասիրվել են:


Աշխատանքի նպատակն է՝ ամբողջացնել Դիմաց թաղամասի հնագույն պատմությունը՝ ըստ հնագիտական հուշարձանների տվյալների:

Դիմաց թաղամասի պատմահնագիտական ժառանգությունը. Տաշիր-Զորագետի վաղ բրոնզի դարաշրջանը լավագույն կերպով արտահայտված է Վանաձոր համայնքի ողջ տարածքում: Տարբեր շրջափուլերի հուշարձաններով առավել աչքի է ընկնում Դիմաց թաղամասը,որը ողողված է Տանձուտ և Փամբակ գետերով: 1935 թվականի հունիսին Դիմաց թաղմասում հողային աշխատանքներ կատարելու ընթացքում բացվում է երեք քարակղային դամբարան, այնուհետև պեղումների ընթացքում բացվում են նույնատիպ ևս երկուսը [3, 56]:

Ըստ Կ. Ղաֆադարյանի, այս դամբարանը (նկար 1) չի ունեցել արտաքին նշաններ, դամբարանում եղել են 36 մեծ և փոքր կավե ամաններ (կավե ամանները եղել են տարբեր չափերի), որոնցից մի քանիսի մեջ գտնվել են կենդանիների ոսկորներ: Հատկանշական է, որ այս դամբարանի պարունակությունը՝ կծկված վիճակում՝ ձախ կողմի վրա պառկեցված տղամարդու կմախքի ներքևի հատվածում, հայտնաբերվել է նաև եզան կմախք, ինչպես նաև մեկ դաշույն և մեկ բրոնզե ապարանջան:




Նկար 1. Կ.Ղաֆադարյան,1941 թ.



Նկար 2. Կ.Ղաֆադարյան, 1941 թ.

Երկրորդ դամբարանի (նկար 2) հյուսիսարևելյան մասում դրված են եղել սև կավե 8 մեծ և փոքր կավե ամաններ, որոնցից մի քանիսի հատակին եղել են կենդանիների ոսկորներ: Մարդակյին կմախքը պառկեցրած է եղել ձախ կողքի վրա՝ կուչ եկած վիճակում՝ գլուխը հարավարևելյան պատի մոտ: Կմախքի բազկոսկորի մոտ հայտնաբերվել է նաև մեկ բրոնզյա ապարանջան, որը ժանգից քայքայվելու պատճառով բաժանված է եղել երկու մասի [3, 57]:

Երրորդ դամբարանում (նկար 3) հայտնաբերվել է չորս կմախք, իսկ կմախքներից ազատ մնացող տեղերում դրված են եղել սև կավից շինած 23 մեծ և փոքր ամաններ, որոնցիցի մի քանիսի մեջ եղել են անասունների ոսկորներ: Հյուսիսից դեպի հարավ ձախ կողքի վրա պառկեցրած են եղել մեծահասակների կմախքներ, որոնց մոտ ոչ մի իր չի գտնվել: Արևելքից դեպի արևմուտք ձախ կողքի վրա, կուչ եկած վիճակով դարձյալ ձախ կողքի վրա պառկեցրած է եղել մեկ կին, այս կնոջ հարավային կողմում՝ այսինքն գրկում, պառկեցված է եղել երեխայի կմախք: Կինը ունեցել է բազմաթիվ զարդարանքներ՝ 134 սարդիոնե, 38 կարմի մասսայից պատրաստած, 169 ծարիրե և 36 բրոնզե ուլունքներ, երկու ծարիրե մեդալիոններ՝ խաչի և սվաստիկայի նշաններով: [3, 58]:



Նկար 3. Կ. Ղաֆադարյան, 1941 թ.



Նկար 4. Ծարիրե մեդալիոններից մեկը (@ԼՓԵԹ, ՕԱՏԻՆՅԱՆ)

Լոռի-Փամբակի երկրագիտական թանգարանում[8] ցուցադրում է 1935 Կ. Ղաֆադարյանի կողմից պեղված այս մեդալիոններից մեկը (ԼՓԵԹ 6): Այս մեդալիոնի կենտրոնում դրոշմված է մեկ ելուստ, որը համընկնում է խաչի կենտրոնին, երիզին դրոշմված են նեղ, զուգահեռ գծեր:

№4 դամբարանից հայտնաբերված հնագիտական նյութը բացառիկ մեծ արժեք է ներկայացնում, այտեղից պեղվել է տերևաձև նիզակի պոչ՝ թեթևակի երկթեք շեղբով, երկար ու գլանաձև պոչուկով, որն ավարտվում է միջանցիկ անցք ունեցող քառանկյուն ծայրամասով: Ըստ երևույթին պոչն ամբողջությամբ վերցվել է փայտե կոթի մեջ և ծայրում գամվել է:


Դիմաց թաղամասից հայտնաբերված այս նիզակի մասին իրենց նշանակալի կարծիքն են արտահայտել նշանավոր հնագետներ Ս. Եսայանը և Ա. Մարտիրոսյանը: Հնագետ Ս. Եսայանի կարծիքով այս տիպի զենքերը՝ մասնավորապես տերևաձև նիզակները կարելի է ասել, որ գործածության մեջ է եղել մինչև մ.թ.ա. 2-րդ հազարամյակի:

Հնագետ Հ. Մարտիրոսյանը, համեմատելով Վանաձորի այս նիզակը, ցույց է տալիս սրա արխայիկ լինելու բնույթը, նշելով, որ այսպիսի նիզակները մ.թ.ա. 3-րդ հազարամյակի երկրորդ կեսի արտադրանք են:

Դիմաց թաղմասում է գտնվում Հայաստանի ամենանշանակալի հնավայրերից մեկը՝ Թագավորանիստը:

---

[8] Մեր շնորհակալությունն ենք հայտնում Լոռի - Փամբակի երկրագիտական թանգարանի տնօրենությանը և աշխատակիցներին հետազոտությանը աջակցելու համար:





Նկար 5, 6. Տերևաձև նիզակը, դաշույնները որոնք պահվում են ԼՓԵԹ-ում: (@ԼՓԵԹ, ՕԱՏԻՑԱՆ)

1893 թվականին Թագավորանիստում հնագիտական պեղումներ է իրականացրել անվանի հնագետ Նիկողայոս Մառը, հետազոտելով հիմնահողային դամբարան, որը բացվել էր պատահականորեն: Այս դամբարանը պարունակել է կրկնաթաղում:

82 ամյա Յուրիկ Սարիբեկյանը, պատմեց Դիմաց թաղամասում գտնվող Թագավորանիստ հնավայրի մասին: Ըստ բանախոսի, հնավայրը անվանվել է Թագավորանիստ, որովհետև այն եղել է Բագրատունյաց արքայատոհմի հանգստավայրը և այդտեղ են արքաները կազմակերպել իրենց ամառային հանգիստը:

1938 թվականին այս նույն հնավայրում՝ Թագավորանիստում, Ե. Բայբուրդյանը և Կ. Ղաֆանդարյանը կատարում են մասնակի պեղումներ՝ արդյունքում նրանք գետնի երեսից հավաքում են վաղբրոնզեդարյան և ավելի ուշ շրջափուլերին պատկանող խեցեղեն: Ավելի ուշ Թագավորանիստում 1949 թ. և 1959 թ. Ե. Մոմջյանը և Է.Խանզադյանը այտեղ կատարում են հետախուզական պեղումներ:

Թագավորանիստից հայտնաբերված խեցեղենը կարելի է դասակարգել մի քանի խմբերի՝ կարասներ, գավաթներ, թասեր, կճուճներ, քրեղաններ:

1959 թ. երբ Թագավորանիստում հնագետ Է. Խանզադյանը հետախուզական պեղումներ է իրականացրել, տարածքից հավաքվել են վաղբրոնզեդարյան հետաքրքիր խեցանոթի բեկոր, որի վրա եղել են օձի և թռչնի պատկերներ [5, 21]:

Հ. Մարտիրոսյանը համեմատելով Գեղարքունիքի մարզում ժայռապատկերների և խեցեղենի վրա պատկերագրությունը, նշում է, որ հայկական բանահյուսության մեջ նախնադարից մինչ ուշ միջնադար մշտապես

օձերը և թռչունները պայքարել են արևի համար[4, 22]:

Թագավորանիստից հայտնաբերվել են նաև քարե գործիքներ, քերիչներ, որոնց մի մասը ցուցադրվում են Լոռի-Փամբակի երկրագիտական թանգարանում:



Նկար 7. Թագավորանիստից հայտնաբերված արտրիքը:(@Լ.ՓԵԹ,ՕԱՏԻՆՅԱՆ)

Թագավորանիստից երկու կմ հարավ գտնվում է **Մաշտոցի բլուր** հնավայրը՝ դամբարանադաշտով: Վանաձորի 8-րդ միջնակարգ դպրոցի շրջակայքում հայտնաբերվել են վաղբրոնզեդարյան խեցեղենի նմուշներ: Դրանք դուրս ճկված շուրթով, եռմասան հորինվածքով լայնաբերան կավամաններ են: Լոռի-Փամբակի երկրագիտական թանգարանում է պահպանվում Մաշտոցի Բլուրից հայտնաբերված ձագարը, որը շատ հետաքրքիր է իր տեսակով:



Նկար 8. Մաշտոցի բլուրից հայտնաբերված ձագարը (@Լ.ՓԵԹ)

Վերոհիշյալ ձագարը զարդարված է ռելիեֆ շեղանկյուններից սկիզբ առնող պարույրներով:

Ե. Մոմջյանը Դիմաց թաղամասի *Յաթաղներ* կոչվող տարածքում հայտնբերել է վաղ բրոնզեդարյան բնակատեղիի հետքեր:

Վանաձորի Դիմաց թաղամասի հնագիտական հարուստ ժառանգությունը փաստում է Լոռի-Փամբակի երկրագիտական թանգարանում պահպանվող հնագիտական իրերը, որոնք հնագիտական պեղումների կամ պատահական՝ հողային աշխատանքերի ժամանակ հայտնաբերվել է, սակայն հանձնվել է թանգարանին:



9


10


11

Նկար 9. Դիմաց թաղամասից հայտնաբերված քամիչ: (@Ծատինյան)

Նկար 10. Օբսիդիանե հարվածիչ: (@Ծատինյան)

Նկար 11. Հետաքրքիր զարդանախշերով զարդարված՝ Դիմաց թաղամասից հայտնաբերված սափոր (@Ծատինյան)

Դիմաց թաղամասի հնավայրերից մեկում՝ Մաշտոցի Բլուրից հայտնաբերվել են միջին բրոնզեդարյան կենդանակերպ սափորներ:

Այս սափորների պարանոցին կա անձրևը պատկերող ուղղահայաց գծային զարդանախշեր, որոնք ըստ իս խորհրդանշում են երկինքը, հողը պատկերող շախմատաձև զարդանախշերը՝երկիրը, ալիքաձև զարդանախշերը ջրային աշխարհը, իսկ ալիքներրից կախված շեղանկյունները՝ անդրշիրիմյան կյանքը:

Այսպիսով՝ Վանաձորի Դիմաց թաղամասում փոքրածավալ հնագի-

տական պեղումների և թաղամասից տարբեր տարիերին պատահականորեն հայտնաբերված գտածոները փաստում են, որ Վանաձորի Դիմաց թաղամասը ունի բավականին մեծ արժեք ներկայացնող՝ հարուստ հնագիտական ժառանգություն: Ըստ այդմ Դիմաց թաղամասը մշակութային շերտը կարող ենք վստահաբար ասել,որ ստերիլ չէ այդ մասին են վկայում այն փաստերը, որը վերոհիշյալ հնագիտական հուշարձանները հիմնականում բնակեցվել են տարբեր ժամանակաշրջաններում:

Դիմաց թաղամասի հարուստ հնագիտական ժառանգությունը ապացուցում է այն իրողության մասին,որ թաղամասը տարածաշրջանում ունեցել է մեր կողմից ուսումնասիրիվող ժամանակաշրջանում հեղինակություն վայելող, հարուստ բնակավայր, քանի որ թաղամասից հայտնաբերվել են արվեսի արժեք ներկայացնող կավամաններ,բեկորներ:

Պետք է փաստել նաև,որ Դիմաց թաղամասում գտնվող հնավայրերի դիրքը բավականին բարենսպաստ է եղել այտեղ պետք է չմոռանալ մի փաստ, որ Դիմաց թաղամասում են գտնվել նշանակալի գետեր՝ Փամբակը և Տանձուտը:

Քննության առնելով Դիմաց թաղամասից հայտնաբերված վերոհիշյալ հնագիտական գտածոները կարող ենք ասել,որ Դիմաց թաղամասի հնավայրերում իրենց կենսագործունեությունն են վարել ցեղապետեր, քրմեր, զիվորներ ինչի մասին են վկայում թաղամասից հայտնաբերված հնագիտական ժառանգությունը:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Բայբուրդյան Ե., Հայաստանի գունազարդ կերամիկայի պրոբլեմը, «ՀԽՍՀ Պատմության և գրականության ինստիտուտի Տեղեկագիր», գիրք 2,Երևան, 1937, էջ 296
2. Դեվեջյան Ս., Հնագիտական հետազոտությունները Տաշիր-Ձորագետում, Երևան, 2001, էջ 9-19, 21-25:
3. Ղաֆանդարյան Կ., Դամբարանների պեղումները Կիրովականում, 1941, ԳԱ Տեղեկագիր, №3-4, էջ 56-69:
4. Մարտիրոսյան Հ., Հայաստանի նախնադարյան նշանագրերը և նրանց ուրարտա-հայկական կրկնակները, Երևան, 1973, էջ 20-23:
5. Խանզադյան Է., Հետախուզական պեղումներ Կիրովականի մերձակայքում, 1962, Տեղեկագիր, №10, էջ 21:

Археологические раскопки в Ташир-дзорагет. Из Ворнака до Лори Берд

Цатинян Алла
ВГУ, История, 3 й курс

Резюме

Ключевые слова: *Ташир-Дзорагет, Ванадзор, мавзолеи, Димацкий район, Тагаваранист, холм Маштоца*

Небольшие археологические раскопки в Димацком районе Ванадзора, случайно открытые в разные годы из Ванадзорского района, доказывают, что Димацский район Ванадзора имеет богатое археологическое наследие, представляющее большую ценность. в разные периоды.

Богатое археологическое наследие противоположного района свидетельствует о том, что в изучаемый нами период в районе существовало богатое, престижное поселение, так как в районе были найдены гончарные сосуды и фрагменты произведений искусства.

Следует отметить, что расположение древних памятников в Димацком районе было весьма благоприятным.Не следует забывать и о том, что в Димацком районе протекали значительные реки Памбак и Тандзут.

Изучая вышеупомянутые археологические находки из района Димац, можно сказать, что племенные вожди, священники и воины вели свою деятельность на древних стоянках района Димац, о чем свидетельствует обнаруженное в районе археологическое наследие.

Archaeological Diges in Tashir-Dzoraget. From Vornak to Lori Berd

Tsatinian Alla
VSU, History, 3nd course

Summary

Key words: *Tashir-Dzoraget, Vanadzor, museums, Dimats region, Tagavoranist, Mashtots Blur*

Small archaeological excavations in the Dimats region of Vanadzor, accidentally discovered in different years from the Vanadzor region, prove that the Dimats region of Vanadzor has a rich archaeological heritage of great value. in different periods.

The rich archaeological heritage of the opposite region indicates that during the period we are studying, a rich, prestigious settlement existed in the region, since pottery vessels and fragments of works of art were found in the region.

It should be noted that the location of ancient monuments in the Dimatsky region was very favorable. It should not be forgotten that significant rivers Pambak and Tandzut flowed in the Dimatsky region.

Studying the aforementioned archaeological finds from the Dimac region, it can be said that tribal leaders, priests and warriors carried out their activities in the ancient sites of the Dimac region, as evidenced by the archaeological heritage found in the region.

Երիտթուրքերի հեղաշրջման արձագանքը «Մշակ» օրաթերթում

Հայրապետյան Մելինե
ՎՊՀ, Պատմություն, մագիստրատուրա, 1-ին կուրս
*Գիտական ղեկավար՝ պ. գ. թ., դոցենտ **Մ. Բրուտյան***

***Հանգուցային բառեր**. Երիտասարդ թուրքեր, սուլթան, հեղաշրջում, Օսմանյան կայսրություն, հռետորներ, բարեփոխումներ, սահմանադրություն*

XIX դ. վերջին և XX դ. սկզբին Օսմանյան կայսրությունը շարունակում էր անկում ապրել տնտեսական և քաղաքական ճգնաժամերի պատճառով: Թուրք առաջադիմականների նպատակն էր կանխել կայսրության փլուզումը: Վերջիններիս ճնշման տակ Աբդուլ Համիդ II-ը,որոշում է գնալ զիջումների և 1908 թ. հուլիսի 24-ին (հին տոմարով՝հուլիսի 11-ին) վերականգնում է Սահմանադրությունն ու նշանակում՝նոր խորհրդարանական ընտրություններ [1, 600-602]:

Երիտթուրքերի հեղաշրջումը XX-րդ դարի կարևոր պատմաքաղաքական իրադարձություններից էր, որը կտրուկ փոխեց համաշխարհային պատմության համատեքստում հատկապես հայ ժողովրդի մի հատվածի ճակատագրի ընթացքը: Ուստի, թեմայի ուսումնասիրումը հայ հասարակական մտքի ասպարեզում մշտապես արդիական է:

Թիֆլիսում գործող «Մշակ» օրաթերթը անտարբեր չի անցել ժամանակի կարևորագույն իրադարձության կողքով և թեմայի առնչությամբ մանրամասն տեղեկատվություն է հաղորդել իր էջերում:

Սույն զեկույցի նպատակն է ներկայացնել արևելահայ մամուլի ժամանակի կարևորագույն օրգաններից մեկի վերաբերմունքն ու արձագանքը արևմտահայ եղբայրների կյանքում կատարվող նշանակալի փոփոխություններին և ամբողջացնել ժամանակի մասին ունեցած պատկերացումները թիֆլիսահայ մամուլի դիտանկյունից

Մի քանի հաջորդական համարներում «Թիւրքական Սահմանադրութեան նախօրեակին» վերտառությամբ հատուկ բաժնում զետեղված են թեմային առնչվող կարևոր անցքերի նկարագրություններ: Հոդվածաշարը ունի նաև վերլուծական մաս, որը ստորագրված է՝Ա. Քալանթարի անունով:

Թերթի 151-րդ համարում ներկայացվում է Պոլսից ստացված տեղեկությունները կայսրության ներքին խմորումների մասին: Հաղորդվում է, որ մեծ վեզիրը բոլոր վալիներին հեռագրել է ու կարգադրել ապահովել

կայսրության բարօրությունն ու հպատակների խաղաղությունը [3, 1-2]:

«Սալոնիկում յուլիսի 10-ին քաղաքային կենտրոնական հրապարակի վրա միտինգներ սկսվեցին»,– գրում է «Մշակ»-ը, ապա մանրամասնում՝ հռետորները երիտասարդ թուրքերն են «զինուրականներ և ոչ զինուրականներ»: Վերջիններս կայսրության բոլոր բնակիչներին հասանելի լինելու համար զանազան լեզուներով ճառեր արտասանելով «հրաւիրում են ժողուրդը աջակցելու Սահմանադրական կարգը» և արժանանում ամբոխի ծափահարություններին: Դատելով «Մշակ»-ի հաղորդումներից, տեղի ոստիկանական ու ժանդարմական ուժերը չեն միջամտում, քանի որ իրավիճակը դեռ վերահսկելի է՝ «կարգը չի խախտւել»:

Այնուհետև թերթում անդրադարձ է կատարվում «թիւրքական զինուրական ապստամբութեանը» Մակեդոնիայում, որը գնալով թափ է ստանում: Այնտեղ երիտթուրքերի շարժման ջանքերով մեծ թափ են առել դասալքությունները.« Բանը հասել է նրան,որ իրենց դիրքերը լքել են նշանաւոր հրամանատարներ՝Հասան բեյը,Նուրի բեյը,Սալահ-Էդդին բեյը և ուրիշներ»: Բարձր Դուռը հեռագրով առաջարկել է նրանց վերադառնալ դիրք և մինչև անգամ աստիճանի բարձրացում խոստացել: «Բայց սպաները մերժել են»:Դժվար չէ կռահել իրավիճակը կայսրության ներսում լուրջ է, հակառակ դեպքում կառավարությունը իրավիճակը լիցքաթափելու համար քրեորեն պատժելի արարք գործած դասալիքներին չէր խոստանա կոչումի բարձրացում:

Սակայն բարձր Դռան ջանքերը չեն պսակվում հաջողությամբ և հեղափոխական շարժումը կայսրությունում զարգանում է անասելի արագությամբ.Բանը հասնում է նրան, որ «Օխրիդում բնակիչները որոշեցին վճարել հարկերը ոչ թե կառավարութեան, այլ երիտասարդ թիւրքերի կոմիտէտին»: Կանոնավոր զորքը, փաստորեն, այլևս իրավիճակի տերը չէ: Այնուհետև կարդում ենք.«Ջուր Օսման փաշան գործ է դնում ամեն տեսակ խստութիւններ,որպէսզի բռնէ խռովարարներ: Շարժման գլխաւոր հերոսները թաքնվում են սարերում»[2, 2]: «Մշակ»-ի նկարագրած այս երևույթը ինչ-որ առումով հիշեցնում է հայդուկային պայքարի որոշ դրվագներին:

Հաջորդ համարում շարունակվում է դեպքերի մանրակրկիտ տեղեկատվական հաղորդումները: Համարը սկսվում է Ա.Քալանթարի վերլուծականով: Հոդվածագիրը նշում է՝ շարժման յուրահատկությունը այն է,որ դրա կենտրոնը այս անգամ Պոլիսը չէ, այլ Մոնաստիրն ու Սալոնիկը: Հավանաբար ապակենտրոն շարժման այս նորամուծությունն էլ հետագայում կդառնա դրա հաջողության պատճառը: Իշխանական ամբողջ լծակ-

ները մայրաքաղաքամերձ շրջաններում կենտրոնացրած սուլթանի համար շարժման այս ձևը անսպասելի էր ու Քալանթարը փաստում է. «բացվեցին ճակատագրական ճեղքումները այն բռնակալական վահանի վրա, որ թիւրքական հին ռեժիմ անունն էր կրում»: Այնոհետև նա փոքրիկ պատմական էքսկուրս է կատարում դեպի ոչ վաղ անցյալ և մատնանշում Բարձր Դռան կողմից մեկ հայերի,մյուս դեպքում Արաբիայի կամ Մակեդոնիայի շարժումների ճնշման հանգամանքը, որը սակայն հող էր պատրաստում ավելի ցասումնալից պայքարի համար: «Եվ ահա, Սահմանադրական շարժումը համակել է բոլորին, իսկ զորքը՝ սուլթանի երբեմնի ուժն ու հենարանը, հրաժարվում են ճնշել շարժումը» [3, 1-2]:

Դժվար չէ կռահել, որ թերթը գալիք աղետներին անտեղյակ, ողջունում է երիտթուրքերի շարժումը: «Մշակ»-ի գրեթե բոլոր համարներում Քալանթարը ուղիղ կամ անուղղակի մեղադրում է Բարձր Դռանը Օսմանյան կայսրության քաղաքական վերածնությունը ձգձգելու մեջ:

Սակայն մյուս կողմից, լրագիրը ի դերև է հանում կայսերական կառավարող շրջանների անհեռատես անտարբերությունը կատարվողի հանդեպ.«Միմիայն հատ-հատ անձնաւորութիւններ հասկանում էին դրութեան լրջութիւնը: Շուտով՝շարժումը սկսվելուց յետոյ և առանց հաջողութեան մատնացոյց էին անում Սահմանադրութիւն շնորհելու անհրաժեշտութեան վրա»:

Ապա թերթը ընթերցողներին է ներկայացնում Պոլսից ստացված որոշ հետաքրքրական մանրամասներ մինիստրների խորհրդի վերջին նիստի մասին.«Մինիստրները խորհուրդ են տուել սուլթանին գնալ զիջումների: Բայց սուլթանը զայրացած անուանել է նրանց դաւաճաններ: Սուլթանը յայտնել է, որ հաւատում է միայն ուժին» [3, 2]:

154-րդ համարում կարդում ենք.«Բնակչութեան շրջանում կազմակերպվել են հայրենասիրական,հակա-ազատամիտ խմբակներ՝ ընդդեմ շովինիստ թիւրք երիտասարդների» [5, 1]:

Այնուհետև ներկայացված է երիտթուրքերի բողոքը ուղղված օտար պետություններին, որոնք ըստ տարածվող լուրերի մտադիր են միջամտել կայսրության ներքաղաքական հարցերին: Նրանց հարգանք են պահանջում իրենց ազգային արժանապատվության հանդեպ:Երիտթուրքերը երկրորդ թռուցիկում ենթադրուրամ են,թե «հին թիւրքերը» անկարգություններով կփորձեն վնասել իրենց սկսած ծրագիրը,բայց ևս մեկ անգամ հաստատում են իրենց «խաղաղ նպատակները»:

«Մշակ»-ը մի հոդվածում զարմանալի վստահությամբ հավաստիացնում է ընթերցողին, որ երիտթուրքերի շարժումը զուտ առաջադիմական

մի շարժում է և ոչ մի վտանգ չի ներկայացնում օտարազգիների և մասնավորապես կայսրության քրիստոնյա ազգությունների համար: «Հին թիւրքերը հիմք ունեն վախեցնելու Եւրոպային այդ շարժումով, բայց նա պետք է հաւատայ երիտասարդ թիւրքերի անկեղծութեանը»:

Մեկ այլ հոդվածում թերթը ներկայացնում է Եվրոպական մամուլի վերաբերմունքը երիտթուրքերի շարժմանը. «Եւրոպայում նրանց վերաբերվում են իբրև ազատական հայացքների տեր բարեփոխիչների»: Չի կարելի բացառել, որ եվրոպական մամուլի այս և նմանատիպ այլ բնորոշումները մեծ ազդեցություն են թողել «Մշակ»-ի խմբագրակազմի դիրքորոշման ձևավորման վրա: Հաջորդիվ, կարդում ենք մեկ այլ հավաստիացում, թե հռետորական մեծ ձիրքի պատճառով երիտթուրքերը շահել են թե հայերի, թե հույների ու կայսրության մյուս քրիստոնյաների համակրանքը: Միանգամայն բնական ու հավանական է այդ համակրանքը, որովհետև շարժման պարագլուխները իբրև թիրախ ընտրել էին ազատության ու հավասարության լոզունգներ. Մի բան, որի կարիքը ունեին հատկապես կայսրության ոչ մահմեդական բնակիչները: Սակայն տարված տիրող էյֆորիայի շղարշով, «Մշակ»-ը ևս չի արձանագրում այս հանգամանքը:

157-րդ համարում կարդում ենք, որ Պոլսի բարձր պաշտոնյաների շրջանում իրարանցում է սկսվել: Շատ փաշաներ հապճեպորեն վաճառում են իրենց տները,հողերը՝մտադիր լինելով գաղթել: Դժվար չէ կռահել, որ վերջիններիս համար արդեն եզրագծվում էին գալիք քաղաքական տեղաշարժերը: Սակայն երիտթուրքերը «նաւերով երթևեկում են Բոսֆորի վրա, մոտենում շոգենաւերին, դիտում բոլոր ճանապարհորդներին՝ կասկածելիներին ափ վերադարձնելով» [7, 2-3]:

155-րդ համարում Քալանթարը իր ավանդական վերլուծականում միասնության ու համախմբման կոչ է անում ու հայտնում իր դիրքորոշումը: Ըստ նրա սխալ են բոլոր այն արմատականները, ովքեր ձգտում են տապալել սուլթանին ու հանրապետական սահմանադրություն հաստատել: Նա դատապարտելի է համարում նաև քաղաքացիական պահանջներին դասակարգային կռվի իմիտացիա հաղորդելը. «Քաղաքական գործողները այժմ պետք է ժողովեն ոյժեր,ոչ թե ջլատեն:» [6, 2]:

Այնուհետև,թերթը հայտնում է հուլիսի 10-ի մինիստրների խորհրդի նիստում Սահմանադրության շնորհման մասին. «Նիստը շարունակվեց 3-ից մինչև 11 ժամը կեսօրից յետոյ:Որոշվեց Սահմանադրութիւն շնորհել… նիստի առիթով պտտում են ամեն տեսակ լուրեր… Յուլիսի 11-ին երիտասարդ թիւրքերը գրաւեցին կառավարական շինութիւնը և հրապարակեցին Սահմանադրութեան ներմուծումը» [3, 1]:

Սրան հետևում է Քալանթարի վերլուծականը: Հոդվածագիրը հաճելիորեն զարմացած է իրեն հասած նորությունից. «Սուլթանը, որ մի քանի օր առաջ ամենախիստ ու ամենագունաւոր կերպով շարունակում էր իր միապետական իշխանութիւնը, յանկարծ հրաման է արձակել Սահմանադրութեան հարցով: Անհաւատալին իրողութիւն է դարձել: Թիւրքիան սահմանադրական երկիր է դառնում»:

Քալանթարը չի թաքցնում, որ շատերի պես իր համար ևս անսպասելի էր եղելությունը, թեև իրավիճակը կայսրությունում լարված էր, սակայն բոլորը սպասում էին համառ ու քայքայիչ պայքարի, բայց ոչ երբեք սուլթանի կողմից նման մի զիջման: Այնուհանդերձ ողջունելով կատարվածը, նա չի շտապում միանշանակ գնահատական տալ. «Մեզ յայտնի չէ, թէ ի՞նչ է այն սահմանադրութիւնը,որ տրված է՝արդեոք իսկական Սահմանադրութիւն է, թէ միայն մի հեռաւոր նմանութիւն»:

«Ակներև է, որ մենք կանգնած ենք խոշոր երևույթների ու խոշորագոյն եղելութիւնների առաջ,- եզրահանգում է Քալանթարը, ապա ավելացնում,– Եթե արդարև ճիշտ է Սահմանդրութեան հաստատումը, շնորհավորում ենք մեր հարևան պետութեան քաղաքացիներին… և մեր թիւրքահայ եղբայրակիցներին»:

Հոդվածը ավարտվում է պատմական դառը փորձի շեշտադրմամբ. «Մենք այնքան շատ ենք խաբված եղել թիւրքական պետութեան կողմից, որ չենք հաւատում մեր կարդացած հեռագիրներին, բայց յուսանք որ բազմամեայ տառապանքներից յետոյ, լոյսի մի նշոյլ է թափանցում դէպի նահատակների երկիր» [2, 2]: Քալանթարի այս հոդվածում իրար պարբերաբար հաջորդելու են գալիս լավատեսական հավատն ու իրատեսությունը:

Հաջորդիվ «Թիւրքական Սահմանադրութեան նախօրեակին» խորագրի տակ կրկին տեղ են գտել Պոլսից, Վիեննայից, Բեռլինից հասած թղթակցությունները: Մասնավորապես ներկայացվում է հուլիսի 11-ի Սահմանադրության շնորհումից առաջացած ոգևորության պատկերը, ինչպես երիտթուրք մտավորականության, այնպես և ազգաբնակչության շրջանում:

«Թիւրքական լրագիրների խմբագրատների և տպարանների վրա բարձրացուած են դրոշակներ: Երեկոյան կկազմակերպվի հրավառութիւն: Յուլիսի 12-ին ամնիստիա է սպասվում քաղաքական յանցավորների համար»:

«Մշակ»-ը, սակայն, չի մոռանում ընդգծել, որ սուլթանին չի պատկանում կամավոր ռեֆորմներ շնորհելու պատիվը: Թերթը հիշեցնում է, որ սա առաջին հերթին երիտթուրքերի համառ պայքարի արդյունքն էր,

ապա հայտնում. «Բորսան Սահմանադրութեան հրապարակման պատճառով նշանաւոր կերպով բարձրացրեց արժէթղթերի կուրսը» [4, 2]:

Ներքևում Բեռլինից ստացված հոդվածում՝ հղում անելով միջազգային մամուլին, մտահոգություններ են նշմարվում,մասնավորապես գրված է. «Սահմանադրութիւնը առ այժմ լոկ ձևական բնաւորութիւն ունի և ներքին իմաստ տալու կարիք ունի, յետոյ միայն կարելի է վճռել այն հարցը, թէ նա ինչ նշանակութիւն ունի Թիւրքիայի համար» [3, 1]:

Հաջորդիվ ներկայացվում է հուլիսի 13-ին ստացված նորությունները ու մայրաքաղաքում տիրող իրավիճակը. «…Տրամադրութիւնն առ այժմ ճնշուած է, միայն յուլիսի 12-ին Ստամբուլում եղան Սահմանադրութեան համակրական մի քանի փողոցային ցոյցեր»: Այնուհետև կրկին շեշտվում է, որ լավատեղյակ շրջաններում սուլթանի քայլը համարվում է «մանեովր՝զորքը հանգստացնելու նպատակով…» [3, 2]:

Թերթի հուլիսի 16-ի՝ 153-րդ համարում կրկին կարդում ենք Քալանթարի վերլուծականը. «…Սակայն պէտք է նկատենք, որ սխալ և կործանիչ ճանապարհի վրա կանգնած կը լինի Բարձր Դուռը,եթե ղեկավարվի ոչ անկեղծ ցանկութեամբ՝շնորհելու իսկական բարիքներ իր ժողովրդին, այլ աչքի առաջ կունենայ դիպլոմատիական հաշիւներ»: Անշուշտ, Քալանթարը ճիշտ էր գնահատում կայսրության ներքաղաքական իրադրությունը և վստահ էր, որ նոր հուզումներից խուսափելու համար անհրաժեշտ է կյանքի կոչել տրված խոստումները: Նույն համարում ներկայացվում է հուլիսի 14-ին Պոլսից ստացած թղթակցությունը, որտեղ պատմվում է նոր մեծ վեզիրի ու օտար պետությունների ներկայացուցիչների հանդիպումը: Այս հանդիպման ընթացքում պարբերաբար ցուցաբարները ներս էին խուժում Բարձր Դուռ, բացականչություններ անում ի պատիվ սուլթանի և ողջունում սահմանադրությունը: Հաղորդվում է նաև, որ ոստիկանության հսկողությունը թուլացած է, իսկ թուրքական լրագիրները այլևս հրաժարվում են ենթարկվել ցենզուրային՝ մատնացույց անելով սահմանադրության՝ մամուլի ազատության դրույթը: «Մշակ»-ի այս համարից կարելի է ենթադրել, որ ազատության որոշ նշույլներ կայսրությունում արդեն նշմարվում են:

Հաջորդիվ, թերթի համարում տեղ է գտել երիտթուրքերի պարագլուխներից մեկի հայտարարությունը Փարիզից: Վերջինս իր խոսքում բացատրում է կուսակցության նպատակները. «…Մենք չենք ուզում տապալել ներկայումս գոյութիւն ունեցող կազմը: Միայն աստիճանաբար կարելի է ստեղծել պարլամենտական կազմ» [4, 1-2]:

Ապա հետևում է պաշտոնական հաղորդագրությունը՝սուլթանի

կամքն է ամեն մանրամասնությամբ կատարել Սահմանադրությունը: Նոր ընտրությունների եռանդագին կազմակերպումից հետո նոյեմբերի 1-ին կբացվի նոր պառլամենտը: Ապա վերջնական արձանագրվում է՝ 1876 թ.-ի սահմանադրությունը վերականգնված է առանց փոփոխությունների:

Ներքնում Պոլսից ստացած լավատեսական լուրերն են հրապարակվում՝ հուլիսի 15-ին «կեցցե սուլթանը» վանկարկումներով ցույցեր, գաղտնի ոստիկանության ու ցենզուրայի վերացում և այլն [5, 2]:

Քալանթարը հաջորդ համարում մեկ այլ հարց է բարձրացնում՝մեկ շաբաթ է անցել այն օրից,ինչ ընդունվեց Սահմանադրություն,բայց Անդրկովկասում ապրող թուրքահպատակ հայերը դեռ անտեղյակ են՝ կարող են արդյոք վերադառնալ հայրենիք,թե ոչ: «Վերադարձ դէպի հայրենիք՝ սա տարիներ շարունակ արգելված պտուղ է եղել»,– գրում է վերջինս [6, 2]: Ակնհայտ է հոդվածագրի առաջնային մոտիվը Օսմանյան կայսրության տարածքում բնակվող հայերի դրության մեջ դրական տեղաշարժեր տեսնելն է:

Հաջորդ հոդվածը իրենից ներկայացնում է պատմական ակնարկ թուրքական սահմանդրության վերաբերյալ՝ սկսած 1876 թվականից:

163-րդ համարը չափազանց հետաքրքրական է, ամբողջ թերթը լցված է օսմանյան իրականությանն առնչվող նյութերով: Բացի ավանդական դարձած վերլուծականներից և ամենօրյա լրատվությունից, այս համարում տեսնում ենք արժեքավոր հոդված «Սուլթանի անձնական կյանքը» վերտառությամբ:

Այստեղ զանազան հետաքրքրաշարժ մանրամասնություններ են հաղորդվում սուլթանի երիկամների քրոնիկ բորբոքման, անքնության, եվրոպացի աստղերի հանդեպ ցուցաբերած հետաքրքրության, մշտական բնակարան չունենալու, միշտ մենակ ճաշելու, երաժշտական ճաշակի, մթությունից ունեցած վախերի և այլնի մասին [8, 4]: Նույն համարում կարդում ենք. «Սուլթանը ուրբաթ օր՝ յուլիսի 25-ին, դուրս է եկել փողոցներ և… Կառքի մեջ բարձրացած՝ նա ցանկացել է ճառ արտասանել, սակայն խառնամբոխը իր ոգևորված բացականչութիւններով արգելք է հանդիսացել: Աբդուլ Համիդը խիստ դժգոհ է եղել ու երկչոտ՝ իր ճանապարհի ամբողջ ընթացքում»:

Այս հոդվածը վկայում է, որ սահմանադրության շնորհումից հետո սուլթանի հեղինակությունը աճել է և նրա անձի շուրջ ձևավորվել է ոչ բացասական հետաքրքրություն:

Թերթի հաջորդ համարում գրված է. «Պոլսից հեռագրական տեղեկու-

թիւն է ստացվել,որ այնտեղ անյաջող մահափորձ են կատարել սուլթանի կեանքի դեմ… Սուլթանին փրկել է այն սաղավարտը, որ նա կրում է օրուգիշեր: Անյայտ եկւորը կալանաւորվել է: Ենթադրում է, որ նա վարձկան մարդասպան է»:

Սրան հաջորդում է կույր լավատեսական մի հոդված: Հոդվածը կոչված է«Երազ թե՞ իրականություն» և ստորագրված է Խ.Ազատ անվամբ:

Հոդվածում կարդում ենք. «Թիւրքիան սահմանադրական երկիր է այլևս: «Կեցցեն երիտասարդ թիւրքերը» - համերաշխ գոչում են այժմ թէ հնչակեան և թէ դաշնակցական կուսակիցները: Թիւրքիայում գրկախառնվում են ոչ միայն հնչակեանն ու դաշնակցականն, այլ՝ հայն ու թուրքը, քրիստոնեան ու մահմեդականը»:

«Այո՛, խիստ հետաքրքրական ու երջանիկ ժամանակներում ենք ապրում,– եզրափակում է հոդվածագիրը,– որչափ էլ յոռետես լինենք, որչափ էլ վերապահութեամբ մոտենանք դեպքերին, այնուամենայնիվ չենք կարող չը հաւատալ, որ մի յեղաշրջում տեղի ունեցաւ… Ո՛չ, կատարված դեպքերը երազ չեն, այլ փայլուն իրականութիւն» [8, 3]:

Հիշատակված վերջին համարներում ակնհայտ է լավատեսական հետքը, որը փոխարինելու է գալիս ի սկզբանե «Մշակ»-ի խմբագրակազմի մեջ արմատացած անվստահությանը: Դրանով էլ պայմանավորված՝ թուլանում է նաև իրատեսական վերլուծականը:

Այնուահանդերձ, բնական է այս ոգևորությունը, որ հատուկ է ժամանակի գրեթե բոլոր գործիչներին: Անկախ դրանից «Մշակ»-ը ահռելի աշխատանք է կատարել այս իրադարձության լուսաբանման ուղղությամբ և դարձել հարուստ աղբյուր նաև հետագա ուսումնասիրողների համար:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Բայբուրդյան Վահան, Օսմանյան Կայսրության պատմություն, Երևան, 2011:
2. «Մշակ» – 1908 թ. Թիֆլիս, հուլիսի 13, թիվ 151:
3. «Մշակ» – 1908 թ. Թիֆլիս, հուլիսի 15, թիվ 152:
4. «Մշակ» – 1908 թ. Թիֆլիս, հուլիսի 16, թիվ 153:
5. «Մշակ» – 1908 թ. Թիֆլիս, հուլիսի 17, թիվ 154:
6. «Մշակ» – 1908 թ. Թիֆլիս, հուլիսի 18, թիվ 155:
7. «Մշակ» – 1908 թ. Թիֆլիս, հուլիսի 20, թիվ 157:
8. «Մշակ» – 1908 թ. Թիֆլիս, հուլիսի 29, թիվ 163:

Отклик переворота младотурков в газете «Мшак»

Айрапетян Мелине
ВГУ, История, магистратура, 1-й курс

Резюме

Ключевые слова: *Младотурки, султан, переворот, Османская империя, риторика,реформы, Конституция*

В конце XIX в. и в начале XX в. Османская империя продалжала разваливаться из-за экономического и политического кризиса.Целью турецких прогрессистов было предотвратить развал империи.Под давление антиправительственных выступлений последних, Абдул Амид II решает пойти на уступки и 24 июля 1908 г. восстанавливает в стране Конституцию и назначает новые парламентские выборы. Османская империя вступает в исторический этап новых событий.

Цель этого доклада- предстовить отношение и отклик одного из важного органа, того времени восточноармянской прессы «Мшак» о значительных изменениях в жизни братьев западных армян.

The Reaction of the Young Turks' Coup in "Mshak" Daily

Hayrapetyan Meline
VSU, History, MA, 1st course

Summary

Key words: *Young turks, coup, Ottoman Empire, rhetoric, reformes, Constitution*

At the end of the 19 century and at the beginning of the 20th century, the Ottoman Empire continued to collapse due to economic and political crises. The goal of the Turkish progressives was to prevent the collapse of the empire. Abdul Hamid II, under the pressure of the anti-government speeches, decided to make concessions. On July 24 (July 11 in the old calendar) the country restored the Constitution and called new parliamentary elections. The Ottoman Empire is entering a period of new historical realities.

The purpose of this report is to present the attitude and response of "Mshak", one of the most important organs of the Eastern Armenian press of the time, to the significant changes taking place in the lives of the Western Armenian brothers

Ռուսա I-ի արշավանքները

Հարությունյան Լենա
ՎՊՀ, Պատմություն, 4-րդ կուրս
*Գիտական ղեկավար՝ պ. գ. թ., դոցենտ **Ա. Մելիքյան***

Հանգուցային բառեր. *Ռուսա I, Ուրարտու, Ասորեստան, Մուսասիր, Սարգոն II, արշավանք, կիմմերներ*

Ուրարտական թագավոր Ռուսա I-ը գահ բարձրանալով երկրի համար անբարենպաստ պայմաններում և ջանում էր վերականգնել Ուրարտական պետության հզորությունը: Սարդուրի II-ի պարտություններից հետո բնական էր, որ Ուրարտուի հետ թույլ կապերով կապված մի շարք շրջաններ պետք է այլևս կապված չզգային պետության հետ և անջատվեին: Ուստի նա մտահոգված էր պետության սահմանների ամրացման խնդրով և փորձում էր նորից միացնել այն երկրամասերը, որոնք նախկինում մտնում էին Ուրարտուի մեջ, ինչպես նաև նոր տարածքներ նվաճել: Ռուսա I-ը իր վերամիավորման քաղաքականությունն իրագործեց մի շարք արշավանքների միջոցով:

Սույն աշխատանքի շրջանակներում կփորձենք ներկայացնել Ռուսա I-ի արշավանքներն ու դրանց հեևանքները:

Ուրարտական պետությունը Սարդուրի Արգիշտիորդուց հետո ի զորու չգտնվեց յուրացնելու նվաճված տարածքները: Ռուսա I-ը նման պայմաններում պետք է փորձեր վերականգնել կամ գոնե պահպանել ունեցածը: Տերության դիրքերի սասանումը Ասորեստանի դեմ պայքարում պատճառ դարձավ, որ հյուսիսի զգալի մասը դուրս գա նրա վերահսկողությունից: Դրա վկայությունը տեսնում ենք ասորեստանյան հետախուզական նամակներից մեկում, ուր խոսվում է «ջախջախված Ուրարտուի» մասին: Այդ նույն աղբյուրում հիշվում են էթունացիները (թերևս՝ էթիունցիները), որոնք թալանել էին ուրարտական քաղաքներից մեկը՝ տանելով ընտանի կենդանիներին, Ասորեստանյան մեկ այլ աղբյուր վկայում է էթիունյան երկու հաջողված ռազմարշավների և երրորդն իրագործելու նպատակով համախմբվելու մասին: Դրան դիմագրավելու համար Ռուսան տեքստում՝ Ուրսա ստիպված էր կրկին ռազմերթի ելնել նրանց դեմ [1, 71]:

Ռուսա Սարդուրիորդու հյուսիսային արշավանքների մասին պահպանվել է երկու արձանագրություն՝ Նոր Բայազետի և Ծովինարի արձա-

նագրությունները: Նոր Բայազետ քաղաքի բարձր ժայռի բերդի մի անկյունաքարի վրա պահպանվել է սեպաձև արձանագրություն հետևյալ բովանդակությամբ. «Ռուսան՝ Սարդուրիի որդին ասում է. Վելիքուխի երկրի թագավորին նվաճեցի, ստրուկ դարձրի, նրան երկրից հանեցի, կուսակալ դրեցի այնտեղ, կառուցեցի Խալդի աստծո դարպասները և հզոր ամրոց, քաղաքի անունը սահմանեցի Խալդի աստծո անունով» [10, 89]:

Ծովինարի արձանագրություններից պարզ է դառնում, որ Սևանա լճի ավազանում, Ռուսա I-ը ջանում է ոչ միայն ամրանդել Ուրարտուի նախկին դիրքերը, այլև նոր երկրներ նվաճել: Նա կրկին հնազանդեցնում է լճի արևմտյան և հարավային ափերին ընկած երկրները՝Ադահունի, Ուելիկուխի, Լուերուխի, Արկուկի, որոնք Ուրարտուի տիրապետությանն էին ենթարկվել դեռևս Սարդուրի II-ի թագավորության օրոք, այնուհետև, հպատակեցնում լճից այն կողմ, այսինքն նրա արևելյան ափերի երկարությամբ ձգված բարձրացիր լեռներում ընկած 19 այլ երկրներ: Ծովինարի արձանագրության տվյալներից երևում է, որ ուրարտական թագավորը հաճախակի լինում էր Սևանի ավազանի նվաճված երկրներում ոչ միայն հարկահանության, այլև պաշտպանական ամրոցներ կառուցելու նպատակով [4, 320]՝ «Ես եկա տուրքի տարում, կառուցեցի այս բերդերը …Թեյշեբա աստծո շքեղ (՞) ամրոցը, որը ես կառուցեցի, հաստատեցի (նրա համար) անունը՝ «Թեյշեբա աստծո քաղաք» [9, 329]: Ինչպես տեսնում ենք Ռուսան այս բերդը նվիրել է Թեյշեբա աստծուն, որովհետև Թեյշեբան ջրի տարերքի պաշտպանն էր և սիմվոլը [5, 198]:

Ռուսա I-ի հիմնադրած ամրոցների մնացորդներ հայտնաբերվել են Սևանա լճի արևմտյան ափերի մոտակայքում՝ այժմյան Գավառ քաղաքի վրա գերիշխող ժայռի վրա («Խալդի աստծու քաղաք») և հարավային ափին՝ Վանեվան և Ծովինար գյուղերի միջև («Թեյշեբա աստծու քաղաք»): Ուրարտուն հիմնավորապես էր հաստատվում այս հեռավոր լեռնային շրջաններում [4, 320]:

Նվաճելով այս տարածքները Ռուսան իրականցնում է վարչական բարեփոխում՝ ընդարձակ սահմաններով փոխարքայությունները մանրատում է, որի արդյունքում էապես սահմանափակվեցին նոր վարչական միավորների՝ մարզերի կառավարիչների իրավունքները, ինչպես նաև նրանց տրամադրության տակ եղած միջոցներն ու հնարավորությունները: Ռուսա Սարդուրորդու համար կարող էին օրինակ ծառայել Թիգլաթպալասար III-ի իրականացրած բարեփոխումները: Դրանք նպատակ ունեին վերջ տալու փոխարքայությունների կիսանկախ գոյությանը: Ռուսայի քայլերի արդյունքում էր, որ նախկին 9-10 փոխարքայությու-

ների փոխարեն ձևավորվեցին մի քանի տասնյակ մարզեր: Իր՝ Ռուսայի կողմից երկու նոր մարզեր կազմավորվեցին Սևանա լճի ավազանում: Դրանցից մեկը ձևավորվեց լճի արևմտյան ափերին՝ Վելիքուխի երկրի տարածքում: Այստեղ հաստատվեց մարզպետ, իսկ մարզկենտրոն դարձավ Վելիքուխիի վերակառուցված ամրոցներից մեկը, որն անվանվեց «Խալդիի քաղաք»: Երկրորդ մարզը ձևավորվեց լճից հարավ-արևմուտք ձգվող տարածքներում, իսկ Ծովինարի կիկլոպյան ամրոցը դարձավ մարզկենտրոն՝ անվանվելով «Թեյշեբայի»: Հաշվի առնելով «Թեյշեբայի քաղաք»-ից մինչև «Խալդիի քաղաք» (Գավառ) ընկած հեռավորությունը 51 կմ, կարելի է կարծել, որ այս մարզերն ունեցել են բավական համեստ սահմաններ [1, 75]:

Ուրարտական մարզերի մասին է խոսվում նաև Սարգոն II-ի «8-րդ տարվա արշավանք»-ի նկարագրության ժամանակ: «Լուվրի աղյուսակ»-ում հիշատակվում են 7 մարզեր, որոնից երկուսը (Ուայահս, Արմարիլի) հայտնի են ասորեստանյան արքունի գրագրությունից: Մնացյալը տեղորոշվում են Ուրմիա լճի հյուսիս-արևելյան, հյուսիսային և հյուսիս-արևմտյան ափերին զբաղեցնելով Ուրմիա լիճը թափվող գետահովիտների տարածքը՝ երկրագործության համար պիտանի: Սարգոնյան մյուս արձանագրություններում նշվում է ուրարտական 8 մարզերի մասին: 8-րդը՝ Ուիշդիշը, սակայն, անցել էր Մանայի թագավորությանը, որի տիրապետության տակ էր այն գտնվում դեռևս մինչև Ռուսա Սարդուրդու գահակալությունը [1, 75]:

Ռուսա Սարդուրիորդու վարչական բարեփոխման նպատակը հավանաբար երկրի կառավարումն ավելի դյուրին դարձնելն էր, նրա կողմից նշանակված կառավարիչները ավելի հեշտորեն կենթարկվեին կենտրոնական իշխանությանը:

Երկրի ներքին դրության կարգավորումը և հյուսիսում ձեռնարկված նվաճումները նկատելիորեն ամրապնդում են Ուրարտուի ռազմական հզորությունը, նրա քաղաքականությունը Ասորեստանի նկատմամբ նորից սկսում է ակտիվանալ: Ռուսա I-ի համար անհանդուրժելի իրավիճակ էր ստեղծվել տերության հետ ավանդաբար կապված Մուսասիրի իշխանությունում: Վերջինիս արքան, որը կրում էր Ուրզանա գահանունը Ասորեստանի դրածոն էր և հարկատու նրան: Ռուսան ստիպված էր շատ խնդիրներ լուծել նորից [2, 279]:

Ռուսայի քաղաքականության որոշակի աշխուժացմանը օգնում էր Ասորեստանում ստեղծված նոր իրավիճակը: Մ.թ.ա. 727 թվականին Ասորեստանում գահ է բարձրանում Սալմանասար V-ը (Թիգլաթպալա-

սարի հաջորդը), որն առաջին հերթին զբաղվում է երկրի ներքին գործերով, ինչպես նաև Բաբելոնի խնդրով: Երկրի ներսում նա փորձում է իր հիմնական հենարանը դարձնել բանակը՝ ի հեճուկս մեծատոհմիկ ազնվականության ու քրմության: Վերացնելով տաճարների արտոնությունները, նա շարունակում է այդ գիծը նաև Բաբելոնիայի սրբազան քաղաքներում՝ Նիպպուրում, Սիպպարում և Բաբելոնում: Սալմանասար V-ի այսպիսի քաղաքականությունը մեծ դժգոհություն է առաջացնում ոչ միայն Ասորեստանում, այլև Բաբելոնում, որի պահպանած ինքնուրույնության նշույլներին նա վերջ էր տվել: Այդ դժգոհությունը, ի վերջո, հանգեցնում է դավադրության, որի հասունացմանը նպաստում էր մ. թ. ա. 725 թվականին Սալմանասարի սկսած ծանր պատերազմը Իսրայելի դեմ: Չնայած հենց նույն տարում տարած հաղթանակին՝ ասորեստանյան զորքը պաշարելով Սամարիան չկարողացավ գրավել այն: Պաշարումը տևեց երեք տարի, որի ընթացքում ասորեստանյան բանակը հսկայական զոհեր տվեց: Այդպիսի լարված պայմաններում Ասորեստանում ապստամբություն է ծագում, և Սալմանասարի դեմ կազմակերպված դավադրությունը մ.թ.ա. 722 թվականին ավարտվում է սպանությամբ: Ն.Վ. Հարությունյանի կարծիքով այս ժամանակներին է վերաբերում Ռուսա II-ի քաղաքականության աշխուժացումը և ռազմական որոշ հաջողությունները հարավում [4, 321]: Քննարկվող դարաշրջանին են պատկանում Մուսասիրը կամ երկրի քրմապետ-արքային հիշատակվող ասորեստանյան արխիվի քսան տեքստեր՝ գերազանցապես արքունիք առաքված զեկուցագրեր, որոնցից տասներկուսը վերաբերում են բուն ուրարտա-մուսասիրյան հարաբերություններին: Այս խմբի առաջին զեկույցը՝ ասորեստանցի Աշշուր-ռեծուվայի հեղինակությամբ, բավական հետաքրքիր է. ուրարտական արքան պատրաստվում էր մուսասիրյան արշավանքին, որն արտաքուստ իրագործվելու էր իբրև արքայի ուղևորության դեպի Մուսասիրի Խալդի աստծո տաճար: Ռազմական նախապատրաստություններն ընթանում էին Մուսասիրին սահմանակից ուրարտական Ուեսի (Ուայախս, Վախսի) մարզում, ուր սկսել էին կենտրոնանալ զորքերը: Ընդ որում, խոսքը վերաբերում է բավական նշանակալից խմբավորմանը՝ տերությանը ենթակա երկրների զորամիավորումներով համալրված հինգ մարզային գնդերի: Շուտով, մայրաքաղաքից Ուեսի մեկնեց նաև արքան: Նամակների բովանդակությունից պարզ է դառնում, որ ուրարտական մարզպետները, որոնք Խալդի աստծո տաճարում պաշտոն են ունեցել տեղյակ են եղել արքայի Ուեսիից Մուսասիր շարժվելու մասին [2, 279-280]: Ուրարաուի սահմանամերձ շրջաններում ծավալված

այս աշխուժությունն առաջացրեց ասորեստանցիների մտահոգությունը և Ասորեստանյան արքան պահանջում է նոր մանրամասներ պարզել Ռուսայի մտադրությունների ուրարտական կողմի հնարավոր գործողությունների մասին [3, 6]:

Այնուհետև ասորեստանյան արքան Ուրզանայից պահանջեց խափանել Ռուսայի մուտքը Մուսասիր, ինչին Ուրզանան պատասխանեց շատ հստակ. Մուսասիրը չուներ նման հնարավորություն: Հետագայում ասորեստանյան արքունիքը կրկնեց իր պահանջը՝ Ուրզանային ստիպելու դիմել կոնկրետ քայլերի: Ենթարկվելով ասորեստանցիներին Ուրզանայի գլխավորությամբ՝ մուսասիրյան ուժերը հարձակվեցին քաղաքում գտնվող ուրարտական զորքերի վրա: Անակնկալի եկած ուրարտական մարզպետներին չհաջողվեց դիմադրություն կազմակերպել, տեղի ունեցած մարտերում ողջ զորախումբը ջախջախվեց, սպանվեց նաև Ուեսիի մարզպետ Սեթինուն: Մուսասիրի ուղղությամբ առաջացող Ռուսան քաղաքին մոտեցավ այն ժամանակ, երբ ուրարտական առաջապահն արդեն ջախջախվել էր: Արքային ոչինչ չէր մնում անել քան պաշարել Մուսասիրը: Մինչդեռ Ուրզանան փորձեց զարգացնել հաջողությունը՝ այս անգամ գրոհելով ուրարտական արքայի բանակատեղին: Մուսասիրյան զորքերի գրոհները հաջողությամբ կասեցվեցին, ուրարտական գերազանցող ուժերն անցան հակահարձակման, որը եզրահանգվեց քաղաքի նվաճումով: Ուրզանային սակայն Մուսասիրում չգտան: Ասորեստանյան արխիվում պահպանվել է «արքունի սենեկապետին» ուղղված լեռնային Զագրոսի ցեղապետներից Սանիյեի հայտնած տեղեկությունը, ըստ որի «Ուրզանան լքել է քաղաքը»: Մուսասիրի արքան զգալի խումբ մերձավորներով կարողացել էր խուսափել գերի ընկնելաց՝ փորձելով ամենակարճ ճանապարհով՝ Անդարութուի լեռնանցքով փախչել Ասորեստան սակայն Ուրզանային չհաջողվեց անցնել Ասորեստան: Ուրարտական զորքերը մարզպետ Կակկադանուի գլխավորությամբ հետապնդում էին նրան: Տեղի ունեցած մարտերից մեկի ժամանակ մուսասիրյան ուժերը ջախջախվեցին, իսկ Ուրզանան գերեվարվեց [2, 281]: Մուսասիրյան արքան, որ տարվել էր Ուեսի, իր այլ կողմնակիցների հետ, հնարավոր է, ենթարկվեց մահապատժի: Այս առումով կարևոր է ուրարտական արքայի թողած Թոփուզավայի տեքստի վերընթերցումը, որը վկայում է Ուրզանայի վախճանի մասին: Թոփուզավայի արձանագրության շարունակության համաձայն, Մուսուսիրի նվաճումից հետո Ուրզանա անունով մեկ այլ անձնավորություն Ռասայի կողմից հաստատվում է տեղի մարզպետ, այնուհետ նաև երկրի արքա: Կամ մուսասիրցի նորանշանակ մարզպետն օծվեց

երկրի արքա՝ ընդունելով նույն Ուրզանա գահանունը [3, 7]:

Թոփուզավայի ասսուրա-ուրարտական երկլեզվյան արձանագրություն համաձայն, Ռուսա I-ը դեռևս շարունակում է պահպանել իր դիրքերը անառիկ լեռներում ընկած և անմատչելի անտառներով ծածկված, ստրատեգիական խոշոր նշանակություն ունեցող Արդինի-Մուսասիրում: Այստեղ ուրարտական թագավորը նախ ծավալում է պաշտամունքային բնույթի զանազան կառույցների շինարարություն, այնուհետև իր բանակը համալրելով Մուսասիրի թագավոր Ուրզանայի տրամադրած օժանդակ զորքերով ու մարտակառքերով, շարժվում է դեպի «Ասորեստանի լեռները», ուր մեծ կորուստներ է պատճառում թշնամուն: Հասնելով Թոփուզավայի շրջակայքը պատժել է Զիբարի դիմացի 2 ուրարտական շրջանների և Շաթթերայի (Շաթրա) կառավարիչներին. վերջինիս հավանաբար վստահված էր Քելյաշինի, Բերդե Բուքի լեռնանցքների և Ուշնուի արևմտյան շրջանների պաշտպանությունը: Իր այդ հաղթանակի պատվին Ռուսան Մուսասիրում զոհեր է մատուցում և տոնախմբություններ կազմակերպում տեղի բնակիչների համար [4, 321]:

Այսպիսով Ռուսան արշավանք է իրականացրել դեպի Մուսասիր, որն ավարտվել է հաջողությամբ: Արշավանքից հետո այստեղ հաստատել է Ուրարտական ազդեցությունը: Այս արշավանքը կարևոր նշանակություն ուներ, քանի որ Մուսասիրը Ուրարտուի համար պաշտպանական ամրոցի դեր էր խաղում, կարևոր էր նաև նրա կրոնական նշանակությունը:

Ռուսա I-ը բախվեց արտաքին լուրջ վտանգի առջև, երբ հյուսիսային Սևծովյան տարածաշրջանի տափաստաններից կիմմերների հեծելազորային ջոկատները ներխուժեցին Անդրկովկաս:

Կիմմերների հնագույն սկզբնական բնակավայրը ընկած է եղել հյուսիս-սևծովյան շրջանում: Սակայն եղած տեղեկությունների հիման վրա առայժմ հնարավոր չէ ավելի հստակ սահմաններ նշել: Կիմմերները եղել են քոչվոր ցեղեր, լայնորեն զբաղվել են ձիաբուծությամբ և մարտեր են մղել հեծելազորով: Սրանով էլ բացատրվում է նրանց մեծ շարժունակությունը և մարտական սկզբնական խոշոր հաջողությունները: Եղած աղբյուրների համադրությունը ցույց է տալիս, որ կիմմերները մ. թ. ա. VIII դ. վերջին տասնամյակներում սկյութների ճնշման տակ թողնում են իրենց սկզբնական բնակատեղին և շարժվում հարավ՝ Առաջավոր Ասիա [6, 74]: Կիմերները սկսեցին մեծ դեր խաղալ Մերձավոր Արևելքի երկրների քաղաքական կյանքում: Ռուսա I-ը փորձում է կասեցնել կիմերների առաջխաղացումը, որնք հաստատվել էին Մեծ Հայքի Գուգարք նա-

հանգում և նրա հարակից շրջաններում: Կիմմերների մասին տեղեկություններ են հաղորդում ասորեստանյան աղբյուրները: Ասորեստանյան պետական բարձրաստիճան անձնավորություններից մեկին ուղղված նամակում խոսվում է Ուրարտու մուտք գործած կիմմերների առաջնորդի մասին: Սա ամենավաղ վկայությունն է Մանա երկրում կիմմերների զորաջոկատների առկայության մասին: Հայտնի են արքայազն Սինաքերիբի կողմից Սարգոնին հասցեագրված զեկույցները, որոնք վկայում են Ուրարտուի և կիմմերների միջև տեղի ունեցած առաջին ռազմական ընդհարումների՝ կիմմերների դեմ ուրարտական արքա Ռուսայի անհաջող արշավանքի մասին: «Ուրարտական թագավորը հենց որ գնաց Գամիր երկրի դեմ, նրա զորքը ամբողջությամբ ջախջախվեց: Նա, ինքը, և նրա մարգերի կառավարիչները իրենց զորքով պահ են մտել... երկու մարզերի կառավարիչներ սպանված են...ես գրել եմ ամրոցների կայազորներին, որոնք սահմանի վրա են, լուրեր հաղորդել ուրարտական թագավորի մասին: Հենց որ նա գնաց Գամիր երկիրը, նրա զորքը ամբողջովին ջախջախվեց: Նրա երեք մեծատոհմիկներ, իրենց զորքերի հետ միասին, ջախջախվել են: Նա, ինքը, փախել է և մտել իր երկիրը...» [4, 322]: Ինչպես երևում է Ռուսա I-ը կիմերների դեմ արշավանքում անհաջողության է մատնվում: Այնուհետև ասորեստանյան աղբյուրները հայտնում են՝ «Կիմմերացին այս, դուրս եկավ Մաննա երկրից և Ուրարտու մուտք գործեց… Ուեսիի մարզի կառավարչի սուրհանդակը ներկայացավ Ուրզանային..., ասելով հետևյալը՝ «Զորքերը... թող գան». պուլիացիների և սուրիացիների առթիվ ամբողջ Ուրարտու երկիրը սարսափում է [4, 322]: Հավանաբար, մոտավորապես նույն ժամանակ կիմմերները արշավանք են իրականացրել Մանայի տարածքով՝ հարձակվել Ուրարտուի հարավ-արևելյան Ուեսի շրջանի վրա:

Ռուսայի Գամիր երկրի դեմ անհաջող արշավանքի արդյունքում պետության ծայրամասերում խմորումներ եղան: Դա ցույց է տալիս, որ ուրարտական բանակի պարտությունը երկրում խառնաշփոթ է առաջացրել և օգտվելով կենտրոնական պետական իշխանության ժամանակավոր թուլացումից ծայրամասային տարածքները սկսել են առանձնանալ: Այս մասին հաղորդում է Աշշուրիսուայի հաղորդագրությունը [10, 99]: Սարգոնի գաղտնի միջամտությամբ կենտրոնական իշխանության դեմ ոտքի են կանգնում բազմաթիվ դժգոհ տարրեր, այդ թվում մարզերի կառավարիչներ, բարձրաստիճան զինվորական պաշտոնյաներ և այլն: Ահա թե ինչ է հայտնում Սարգոնին Ուրարտուի ներքին վիճակի մասին նրա գործունյա հետախույզ Աշշուրրիսուան «Ուրարտուի հինգ մարզային

կառավարիչներ մուտք են գործել Ուեսի... այժմ նրանք ոտքի են հանել տեղական ուժերը: Նրանց զորքը կլինի ուժեղ: Թագավորը դուրս է եկել Տուրուպշա քաղաքից և գնացել Կանիուն:

Մեկ այլ նամակում գրված է. «Մաննայեցիները ուրարտական թագավորի բնակատեղիներում, ծովափնյա մարզում, ապստամբել են, զայրացել են և բարձրացել սարերը: Աբալուկունուն (այլ դեպքում՝ Աբլիուկնու)՝ Մուսասիրի մարզային կառավարիչը և Տուննաուևը՝ Կար-Սիպարի մարզային կառավարիչը՝ պահակային ծառայության համար ուղևորվել են Մաննա երկրի սահմանները: Ուրարտական թագավորը Տուրուշպայում է, զոհեր է մատուցում, բոլոր մարգերի կառավարիչները նրա մոտ են» [4, 323]:

Թագավորության ծայրամասերում տեղի ունեցած ապստամբություններից բացի Ուրարտուի կենտրոնում ևս տեղի ունեցավ ապստամբություն, որն առաջացել էր ուրարտական կուսակալությունների առանձին կառավարիչների միջև իշխանության համար պայքարի արդյունքում՝ ուղեկցվելով տեղական վարչակազմի պետական իշխանության դեմ պայքարով: Ապստամբության ղեկավարը ուրարտական հրամանատար Կակկադանուն էր [10, 99]:

Ռուսան քայլեր է ձեռնարկում այս ապստամբությունները ճնշելու: Եթե նրան ոչ բոլոր դեպքերում է հաջողվում հնազանդության մեջ պահել ծայրամասային, առանձնապես հարավում ընկած մարզերը, ապա կենտրոնական մարզերում ծագած ապստամբությունները նա շուտով ճնշում է և կարգ ու կանոն հաստատում երկրում: Աշշուրբիսուայի հետախուզական նամակներում ասվում է՝ «...Լուր ուրարտական թագավորի մասին. ինչ որ ես գրել էի նախկինում՝ այդ այդպես է: Նրանց մոտ եղել է մեծ կոտորած: Այժմ նրա երկիրը հանդարտվել է: Նրա մեծատոհմիկներից յուրաքանչյուրը գնացել է իր երկիրը: Կակկադանուն, նրա տուրտանը (զորավարը) ձերբակալված է: Ինքը՝ ուրարտական թագավորը գտնվում է Ուազաուն մարզում...

«Քսան հրամանատարներ նրա հետ միասին, որոնք խոսել են թագավորի դեմ, ձերբակալված են»: Այժմ ուրարտական թագավորը մտել է Տուրուշպա և հրամայել նրանց խեղդամահ անել: Մնացած մարդիկ, որոնք հանդես են եկել նրանց հետ, հրամանատարների հետ միասին, ավագների հետ միասին սպանված են: Ուրծինեն՝ երկրորդ տուրտանը, Աբլիուկնուի եղբայրը, ձերբակալված է Տուրուշպայում... [4, 323]:

Կիմերները նշանակալից ռազմական ուժ ունեին սակայն նրանք անմիջապես չսովորեցին ամրոցներ գրավել, իսկ ամրոցները ուրարտա-

կան պետության ողնաշարն էին: Գործ ունենալով կիմերների հետ՝ Ռուսա I-ը նրանց հոսքը ուղղեց հիմնականում դեպի Փոքր Ասիա [7, 59]: Նրանց առաջխաղացմանը կասեցնելուն ուղղված ռազմերթին մեծաքանակ զորք է մասնակցել, ռազմական գործողությունների ժամանակ ուրարտական նահանգապետերի և զորքի մի մասը ոչնչացվել են մի մասը գերվել, անհաջող արշավանքի արդյունքում ապստամբություններ սկսվեցին, որոնց մի մասը հրահրված էր Ասորեստանի կողմից: Ռուսայի արշավանքի ժամանակը համարվում է մ.թ.ա. 714 թվականը [8, 19]:

Այսպիսով Ռուսա I-ը զենքի ու ճնշման միջոցով վերամիավորեց երկիրը՝ իրականացնելով մի շարք արշավանքներ: Նա վերականգնեց Ուրարտուի հզորությունը և անգամ ջանքեր գործադրեց թուլացնելու Ասորեստանը, սակայն կիմմերների ներխուժումը ծանր հետևանքներ ունեցավ տերության համար: Նրանց հետ ռազմական բախումները թուլացրին Ուրարտուն և պատճառ հանդիսացան անջատողական ձգտումների, որոնց մի մասը հրահրված էր Ասորեստանի արքա Սարգոն II-ի կողմից:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Գրեկյան Ե. Հ., Բիայնիլի Ուրարտու Պետություն և հասարակություն, Երևան, 2016, 425 էջ:
2. Գրեկյան Ե. Հ., Դրվագներ ուրարտա–մուծածիրյան հարաբերությունների պատմությունից,ՄՄԱԵԺ, Հ. 24, Երևան, 2005, էջ 277-294:
3. Գրեկյան Ե. Հ., Երկու Ուրզանա՞, ՄԱ, Հ. 2, Երևան, 2005, էջ 5-11:
4. Հարությունյան Ն. Վ., Ուրարտուն մ. թ. ա. VIII դարի վերջին և VII դարում, Հայ ժողովրդի պատմություն ՀՍՍՀ ԳԱ, Հ. 1, Երևան, 1971, էջ 319-344:
5. Ղափանցյան Գ. Ա., Ուրարտուի պատմություն, Երևան, 1940, 249 էջ:
6. Ջահուկյան Գ. Բ., Կիմերների և կիմերերենի պրոբլեմը արդի գիտության մեջ, Պատմա-բանասիրական հանդես, Հ. 4, 1977, էջ 73-82:
7. Дьяконов И. М., Урарту, Фригия, Лидия, ИДМ, II, Москва, 1983, 574 стр.
8. Иванчик А. И., Киммерийцы и Урарту накануне восьмого похода Саргона II, ВДИ, № 3, Москва, 1990, с. 3-19.
9. Меликишвили Г.А.,Урартские клинообразные надписи, Москва, 1960, 508 стр.
10. Пиотровский Б. Б., Ванское Царство (Урарту), Москва, 1959, 282 стр.

Походы Руси I

Арутюнян Лена
ВГУ, История, 4-ый курс

Резюме

Ключевые слова: Руса I, Урарту, Ассирия, Мусасир, Саргон II, поход, киммерийцы

Руса I старался соблюдать баланс между сложившимися сложными политическими условиями ситуации и даже иногда выступал против Ассирии. Он пытался воссоединить страну с помощью оружия и давления. Можно сказать, что ему удалось. Его беспокоили границы государства и он пытался вновь соединить те земли, которые ранее входили в состав Урарту, а также завоевывал новые территории.

Rusa i's Campaign

Harutyunyan Lena
VSU, History, 4th course

Summary

Key words: *Rusa I, Urartu, Assyria, Musasir, Sargon II, campaign, Cimmerians*

Rusa I tried to maintain a balance between the existing complex political conditions of the situation and even sometimes opposed Assyria. Rusa I tried to reunite the country through weapons and pressure. We can say that he succeeded. He was concerned about the borders of the state and he tried to reconnect those lands that were previously part of Urartu, and also conquered new territories.

«Արցախյան ազատագրական պատերազմ» թեմայի դասավանդումը

Մաթևոսյան Հրանուշ
ԳՊՀ, Պատմություն, 4-րդ կուրս
Գիտական ղեկավար՝ ասիստենտ, ***Գ. Շաբունց***

Հանգուցային բառեր. *«Արցախյան ազատագրական պատերազմ», նպատակ, դասավանդում, դժվարություն ներկայացնող հարցեր, պատճառահետևանքային կապեր*

Արդի աշխարհում գիտության և տեխնիկայի աննախադեպ զարգացումը հանգեցրել է փոփոխության հասարակական կյանքի բոլոր ոլորտներում, այդ թվում նաև կրթության ոլորտում: Նոր դարը, նոր հազարամյակը նոր պահանջներ են դնում կրթության ողջ բնագավառի առջև: Ներկայումս կրթության ամենաբարդ և հրատապ խնդիրներից մեկն էլ հիմնարար գիտելիքներով զինված, ազատ, ինքնուրույն հասարակության մեջ լիովին ներառված և ստեղծագործ անհատների պատրաստումն ու դաստիարակումն է:

Առկա մարտահրավերները նոր խնդիրներ դրեցին նաև պատմական կրթության առջև: Գաղտնիք չէ, որ պետության ու հասարակության զարգացման տարբեր փուլերում փոխվել է պատմության ուսուցման նպատակը, բովանդակությունը և ուսուցման ձևերն ու մեթոդները:

Ինչպես նախկինում, այնպես էլ այժմ պատմության դասավանդման մեջ մեծ կարևորություն է ներկայացնում ի՞նչ սովորեցնել, ինչպե՞ս սովորեցնել, ինչո՞ւ սովորեցնել հարցերի պատասխանները: Պատմության ուսուցման հիմնական գործոնները կապվածեն այս հարցերի պատասխանների հետ:

Նոր իրողությունը, համեմատաբար նոր երևույթները պատմության առանձին թեմաների դասավանդման մեջ լրացուցիչ հետազոտությունների անհրաժեշտություն առաջացրին, որոնք կօգնեն ուսուցիչներին առանձին թեմաների դասավանդումը առավել հեշտ կազմակերպելու և կնպաստեն կրթության որակի բարձրացմանը ու պատմական ակտիվ մտածողության ձևավորմանը:

Պատմության առանձին թեմաների դասավանդման համար մշակված ուսումնական նյութերի, ձեռնարկների կազմումը տարբեր ժամա-

նակներում եղել և մնում է պատմության դասավանդման մեթոդիկայի ուշադրության կենտրոնում: Սակայն այդ տեսակ աշխատանքներն ու ձեռնարկները խիստ սակավ են:

Այս առումով «Հայոց պատմություն» առարկայի դասավանդման համար կարևոր նշանակություն կունենա «Արցախյան ազատագրական պատերազմ» թեմայի դասավանդման առանձնահատկությունների բացահայտումը: Հետազոտման անհրաժեշտությունը հատկապես պայմանավորված է 2020 թ. սեպտեմբերի 27-ին սկսած 44 օրյա հայ-ադրբեջանական պատերազմով և դրա հետևանքներով: Բանն այն է, որ 90-ականներին հայ ժողովուրդը կարողացավ հաղթանակ տանել և ստեղծել Արցախի Հանրապետությունը, բայց չկարողացավ հասնել Արցախի ժողովրդի ինքնորոշման իրավունքի ճանաչմանը: Հայոց պատմության փառավոր էջերում տեղ գտած Արցախյան առաջին ազատամարտով ամեն ինչ չվերջացավ և Ադրբեջանը պատերազմ սանձազերծեց Արցախի Հանրապետության դեմ և հայ ժողովուրդը Արցախյան երկրորդ պատերազմում կորցրեց Արցախի զգալի մասը: Ստեղծված իրավիճակում էլ «Արցախյան ազատագրական պատերազմ» թեմայի դասավանդումը պատմության դասերին վերանայման կարիք ունի իր մեթոդաբանությամբ, թեմայի մատուցման հայեցակարգային մոտեցումներով, բարոյագիտությամբ, պատմական փաստերի արձարծման ծավալով:Հենց այս հանգամանքներով պայմանավորված էլ հարցի ուսումնասիրությունը բավական արդիական է:

Աշխատանքը մեծ արժեք է ձեռք բերում այն պատճառով, որ պատմության դասավանդման մեթոդիկայում առ այսօր ուսումնասիրված չէ «Արցախյան ազատագրական պատերազմ» թեմայի դասավանդման հետ կապված հիմնահարցերը: Թեմայի վերաբերյալ ուսումնասիրությունների բացակայության պատճառով նշված աշխատանքը ունի գիտական արժեք ու կարող է օգտակար լինել ուսուցիչների համար դասավանդման ընթացքում:

Աշխատանքընպատակ ունի ներկայացնելու «Արցախյան ազատագրական պատերազմ» թեմայի ուսուցման կազմակերպման առանձնահատկություններըթե՛ հիմնական, և թե՛ ավագ դպրոցում,վերանայելու թեմայի դասավանդման մեթոդաբանությունը, թեմայի մատուցման հայեցակարգային մոտեցումները՝ նպաստելով աշակերտների կողմից թեմայի ավելի խորը յուրացմանը:

Պատմության դասավանդման մեթոդիկայում կարևոր տեղ է զբաղեց-

նում դասի նպատակների սահմանումը: Այն դասի գլխավոր բովանդակության յուրացումն է և հիմնական աշխարհայացքային գաղափարը:

Նպատակը ընդհանուր գիտական հասկացությամբ նշանակում է գործունեության արդյունքների մտավոր կռահում [1, 100-101]:

Պատմության յուրաքանչյուր դաս պետք է ուղղված լինի սովորեցնել, դաստիարակել, զարգացնել եռաստիճան նպատակի հասանելիությանը:

Կրթական նպատակներ, ինչպիսի՞ կարևորագույն գիտելիքներ են ձևավորվում, ի՞նչը դասի բովանդակությունից պետք է յուրացնի սովորողը, ընդգծվում են նաև կրկնությունները, ամրապնդումը և գիտելիքների խորացումը, իսկ կրթական գործառույթների իրականացումը կախված է դասավանդման նպատակների և խնդիրների ճիշտ մշակումից, որն իր հերթին ապահովում է:

- դպրոցականների պատմական մտածողության զարգացում ուսումնական ձեռնարկների նյութերի բազայի հիմքի վրա,
- հենվելով ժամանակակից աշխարհի զարգացման միտումների վրա սովորողների մոտ պատմական հասկացությունների ձևավորում,
- ժամանակակից պատմական մտածողության և գիտակցության ձևավորում,
- ազգային և համաշխարհային մշակութային արժեքների գնահատում,
- հասարակության զարգացման հիմնական տեսությունների և համակարգերի հետ սովորողների ծանոթացում [2, 17]:

Դաստիարակչական նպատակներ, ի՞նչ ներդրում ունի դասը սովորողների մարդկային, հայրենասիրական, զգացմունքային և բարոյական որակների (բարություն, ազնվություն, նպատակամղվածություն, աշխատասիրություն և այլն) դաստիարակության խնդրում, որն իրականացվում է ինչպես ուսումնական նյութի բովանդակության ճանաչողության բացահայտման, այնպես էլ ողջ ուսումնական գործունեության և ուսուցիչ-սովորող փոխհարաբերությունների գործընթացում:

Զարգացնող նպատակներ, ինչպիսի՞ հմտություններ են զարգանում նյութի ուսուցման հիմքի վրա (պլանի կազմում, տրամաբանական հաջորդականությամբ նյութի յուրացում, հարցերի ձևակերպում և այլն Զարգացնող նպատակներ են սովորեցնել առանձին փաստերի հիմքի վրա վերստեղծել իրադարձությունների ընդհանուր պատկերը [3, 197-203]:

Ելնելով վերը նշվածից, և կարևորելով թեմայի նորովի ուսուցումը,

վերաիմաստավորումը, միասնական մեթոդաբանության կիրառման անհրաժեշտությունը՝ ճիշտ կլինի «Արցախյան ազատագրական պատերազմ» թեմայի ուսուցման համար գլխավոր նպատակները, խնդիրները և ակնկալվող արդյունքները սահմանել այսպես.

Թեմայի ուսուցման նպատակներ

- Սովորողներին ամբողջական ու համակարգված գիտելիքներ հաղորդել Արցախյան ազատամատի՝ որպես Հայաստանի ազգային հիմնախնդիրներից մեկի (պատճառներ, պատերզմի իրականացում, հետևանքներ, պատմական դասեր) մասին,
- Աճող սերնդին ոչ միայն հաղորդել Արցախյան ազատագրական պատերազմի մասին ամբողջական գիտելիքներ, այլ նաև նրանց մոտ ձևավորել ազգային ու համամարդկային հիմնախնդիրների լուծման համար պայքարելու վճռականություն, ինչպես նաև ցույց տալ դրանց ուղիները,
- Պարզաբանել սովորողներին, որ Արցախյան ազատամարտի իրականացումը գոյության խնդիր էր, իսկ այսօր Արցախի պահպանումը և կորցրած տարածքների հետ բերումը՝ անվտանգության, խնդիր:

«Արցախյան ազատագրական պատերազմ» թեմայի ուսուցման նպատակները կարևոր են ինչպես ուսուցչի, այնպես էլ սովորողների համար: Թեմայի ուսուցման նպատակները նպատակաուղղված են մի շարք խնդիրների լուծմանը:

Թեմայի ուսուցման խնդիրներ

- Նպաստել ազգային հիմնախնդիրների հիմնավոր յուրացմանը,
- Խորացնել «Արցախյան ազատագրական պատերազմ» թեմայի վերաբերյալ սովորողների պատկերացումներն ու գիտելիքները,
- Օգնել թեմայի վերաբերյալ ձևավորված բացասական երևույթների հաղթահարմանը,
- Հայաստանում և Սփյուռքում ձևավորել «Արցախյան ազատագրական պատերազմ»-ի վերաբերյալ ընդհանրական պատկերացում և պայքարի միասնական մոտեցում
- Ձևավորել պատմական արդարության վերականգնման, հայ ժողովրդի՝ իր պատմական հայրենիքում անվտանգ ապրելու և զարգանալու իրավունքի համար պայքարելու գիտակցություն, ինչպես նաև հաղթանակը պահպանելու կարողություն:

Թեմայի ուսուցման ակնկալվող արդյունքներ

- Նոր գիտելիքներ ստանալու և ադրբեջանական կեղծարարության քաղաքականությանը հակադարձելու կարողությունների ապահովումը,
- «Արցախյան ազատագրական պատերազմ» թեմայի ճշգրիտ ընկալման, նրա տեղի ու դերի գնահատման ու արժևորման որակի բարձրացումը,
- Գոյություն ունեցող դժվարությունների հաղթահարումը,
- Արցախյան ազատամարտի վերաբերյալ ամբողջական պատկերացում ձևավորելը,
- Հայության տարբեր հատվածների միասնության ամրապնդումը [4]:

Սովորողների համար շատ կարոր նշանակություն ունեն պատճառահետևանքային կապերի ուսուցումը: Նրանց կողմից պատճառահետևանքային կապերի իմացությունը հենվում է գիտելիքների աստիճանական զարգացման նպատմական փաստերի միջև հաջորդական կապերի հաստատման վրա:

Պատճառահետևանքային կապերի ընկալումը սովորողների կողմից Արցախյան ազատագրական պատերազմ թեմայի դասավանդման ընթացքում շատ կարևոր է, քանի որ նպաստում է թեմայի գիտակցված ընկալմանը սովորողների կողմից: Թեմայի ընկալման և ամրապնդման միջոց է համապատասխան բառապաշարի ու կարողությունների զարգացումը, իսկ վերջինիս զարգացման արդյունավետ միջոց է սովորողների՝ համաշխարհային պատմության մասին ունեցած գիտելիքների հետ զուգահեռներ անցկացնելը: Այլ կերպ ասած, որպեսզի սովորողը կարողանա հեշտ յուրացնել «Արցախյան ազատագրական պատերազմ» թեմային առնչվող հասկացություններն ու բառապաշարը, ապա անհրաժեշտ է նրան այդ ամենը բացատրել առավել հեշտ յուրացվող թեմաների շրջանակում: Երբ արդեն սկսվել է հասկացութային ու լեզվաբանական գիտելիքների զարգացումը, դրա համադրումն անծանոթ պատմական համատեքստերին, պարզապես ուսուցչի կողմից արդյունավետ մոդելավորման ու ներկայացման խնդիր է:

Ստորև ներկայացնում ենք սովորողների պատճառահետևանքային տրամաբանությունը զարգացնող մի շարք ռազմավարություններ.

- Սովորողներին հանձնարարել դասի իրադարձությունների վերա-

բերյալստեղծել այնպիսի դիագրամներ ու մոդելներ, որոնք տեսանելի կերպով ցույց կտան պատճառահետևանքային շղթաները, դրանց կապերը և արդյունքները։

- Սովորողներին տալ պատճառների ցուցակ կամ պատճառները ներկայացնող քարտեր և խնդրել բացատրել դրանք՝ ինչպես առանձին-առանձին, այնպես էլ միասին վերցրած։
- Միաժամանակ «Արցախյան ազատագրական պատերազմ» թեմայի պատճառներն առանձնացնելուն զուգահեռ, սովորողների հանձնարարել ցույց տալ, թե այդ պատճառներն ինչ հետևանքների հանգեցրին։
- Սովորողներին հանձնարարել ընտրել թեմայից որևէ հատված և ինքնուրույն բացատրել այդ հատվածի տարբեր տարրերը՝ իրարից առանձնացնելու և վերակազմելու միջոցով։
- Սովորողներին հանձնարարել «Արցախյան ազատագրական պատերազմ» թեմայի շրջանակներում ընտրել մի անհատի, որը Արցախի հարցում կարևոր որոշումներ է կայացրել և ստանձնել այդ անհատի դերը, ստեղծել որոշումների կայացման, պահերի վերարտադրման համատեքստ և որոշումներ կայացնել ու կանխատեսումներ անել դրանց հնարավոր ազդեցությունների վերաբերյալ։
- Սովորողներին հանձնարարել այլընտրանքային («Ինչ կլիներ, եթե…) պատմության վերլուծություն իրականացնել, որպեսզի քննեն ու ամրապնդեն իրադարձությունների տարբեր բաղադրիչների միջև եղած կապերի վերաբերյալ սեփական ընկալումը («Ինչ կլիներ, եթե «Արցախյան ազատագրական պատերազմ» տեղի չունենար», «Ինչ կլիներ, եթե Արցախը անկախություն չհռչակեր 1991 թ.-ին» և այլն) [4]։

Վերոնշյալ ուսումնական ռազմավարությունները օգնում են, որպեսզի սովորողների մոտ ձևավորվի ու զարգանա վերլուծություններ անելու կարողությունը, քանի որ միայն դասի պատճառահետևանքային կապերի ընկալումն է, որ թույլ կտա յուրացնել դասը։ Նշված միջոցներն օգնում են դասանյութի խորացմանն ու ամրապնդմանն։

«Արցախյան ազատագրական պատերազմ» թեմայի պատճառահետևանքային կապերի յուրացման համար կարևոր նշանակություն ունեն նաև դասի ընթացքում կիրառվող մեթոդները և մեթոդական հնար-

ները: Ուսուցման մեթոդը ուսուցչի և սովորողի փոխկապակցված համատեղ գործունեության եղանակն է, որն ուղղված է կրթության բովանդակության յուրացմանը:

Ավագ դպրոցում ուսուցիչը պատճառահետևանքային կապերի բացահայտման նպատակով կարող է օգտագործել «Պատմության առեղծվածի բացահայտում» մեթոդը:

Սովորողներին տրվում է խուզարկուի դերը: Նրանք պետք է ինքնուրույն կամ խմբով բացահայտեն Արցախյան պատերազմի պատճառները: Ուսուցիչը կարող է տալ մի շարք աջակցող հարցեր, որոնք կօգնեն մանրամասնել տեղի ունեցած իրադարձության պատճառներն ու հետևանքները: Հարցերին պատասխանելու համար սովորողներին տրամադրեք նաև պատմական աղբյուրներ և փաստաթղթեր:

Ուսուցիչը կարող է այս ռազմավարությունը վերածել դասարանային առաջադրանքի, որտեղ բոլոր սովորողները միասին են վերլուծում իրադարձությունը:

Այս տեսակ մեթոդների, հնարների ու խաղերի միջոցով սովորողները սկսում են ավելի ուշադիր լինել պատմական իրադարձությունների պատճառահետևանքային կապերին:

«Արցախյան ազատագրական պատերազմ» թեմայի ուսուցումը դպրոցում ունի մի շարք առանձնահատկություններ, քանի որ կարևոր է ուսուցումը կազմակերպել այնպես, որպեսզի երևան թեմայի բարդ, դժվարություն ներկայացնող հարցերը, ինչպես նաև նշվի դրանց յուրացման առանձնահատկությունները: Վերջին տարիներին իրականացված կրթական բարեփոխումներն ու նորագույն մեթոդները թույլ են տալիս իրականացնել թեմայի յուրացման արդյունավետ ուսուցում:

Կարևոր է թեմայի ուսուցումը կազմակերպել այնպես, որպեսզի սովորողները հասկանան «Արցախյան ազատագրական պատերազմ»-ի իրականացման պատճառները: Որպեսզի սովորողները ճիշտ հասկանան թեման և այն ամրապնդվի նրանց մոտ, անհրաժեշտ է արդեն իսկ ունեցած գիտելիքների հիման վրա բացատրել, թե ա. ինչո՞ւ տեղի ունեցավ ազատագրական պատերազմը, այն բ. ի՞նչ հետևանք ունեցավ, գ. աշխարհագրական ի՞նչ դիրքում էին գտնվում Հայաստանը, Արցախը և Ադրբեջանի հանրապետությունը: Որպեսզի սովորողների կողմից յուրացվի և ամրապնդվի թեման կարևոր է ուսուցչի դերը և նրա կողմից թեմայի արդյունավետության բարձրացմանն ուղղված քայլերը: Օրինակ

թեմայի բարդ, դժվարություն ներկայացնող հարցերից է սովորողների կողմից պատկերացում ունենալը, թե ինչ աշխարհագրական դիրքում էին գտնվում Հայաստանը, Արցախը և Ադրբեջանը: Կարևոր է, որ սովորողը հասկանա, որ սրանք ոչ թե զուտ տեղանուններ են, այլ իրենցից ներկայացնումեն աշխարհագրական շրջաններ: Որպեսզի սա ճիշտ յուրացվի աշակերտների կողմից, ուսուցիչը կարող է օգտագործել քարտեզ, որը կօգնի սովորողների գործնական կարողությունների զարգացմանը: Քարտեզի միջոցով սովորողները ուսուցչի օգնությամբ կբացահայտեն այն աշխարհագրական միջավայրը, որտեղ տեղի են ունեցել ուսումնասիրվող փաստերը: Ուսուցիչը կարող է կիրառել քարտեզ-սխեմաներ, որոնք օգնում են բացահայտելու ուսումնասիրվող իրադարձությունների և երևույթների միջև եղած ներքին կապերը: Դրանք ֆիզիկաաշխարհագրական հիմքի վրա ստեղծված քարտեզներ են, որոնք վերարտադրում են մանրամասնորեն, ամրապնդված և ընդհանրացված տեսքով մեկ իրադարձություն կամ երևույթ, օրինակ որպես այդպիսին կարող են լինել այն ճակատամարտերը, որոնք մղվել են «Արցախյան ազատագրական պատերազմ»-ի ընթացքում:

«Արցախյան ազատագրական պատերազմ» թեմայի բարդ, դժվարություն ներկայացնող հարցերից է նաև այն, որ սովորողները կարող են դժվարությամբ հասկանալ կամ ընդհանրապես չընկալել, թե ինչու Արցախը հայտվեց Խորհրդային Ադրբեջանի կազմում, ինչ նոր փոփոխություններ եղան, որ սկսեց Արցախյան շարժումը և ինչու տեղի ունեցավ պատերազմ: Այս ամենը հասկանալու համար անհրաժեշտ է, որպեսզի սովորողները այդ ամենը փորձեն հասկանալ համաշխարհային պատմության համատեքստում: Այսինքն կապ հաստատելով համաշխարհային պատմության հետ և ապահովելով հայոց պատմության հետ միասնական կապը, սովորողները պետք է հասկանան, թե ուժերի ինչ նոր դասավորություն տեղի ունեցավ տարածաշրջանում, ինչ սկզբունքով Արցախը հայտնվեց Ադրբեջանի կազմում: Ուսուցիչը ապահովելով թեմայի պատճառահետևանքային կապը, պետք է բացատրի, որ 1988 թ.-ին Արցախյան շարժման ծավալումը Խորհրդային միությունում իրականացվող Վերակառուցման քաղաքականության արդյունք էր, որ Արցախյան ազատամարտը տեղի ունեցավ Ադրբեջանից առանձնացման և Հայաստանին միացման համար: Թեմայի ուսուցման ընթացքում կարելի է կիրառել նաև Ֆիլմի վերլուծության մեթոդը, որը կարող է լինել «Արցախյան ազատա-

գրական պատերազմին» առնչվող փաստագրական ֆիլմ, իսկ դիտումից հետ կարելի է կազմակերպել քննարկում։

Տարբեր են պատմության դասավանդման առանձնահատկությունները հիմնական և ավագ դպրոցում, քանի որ թե՛ հիմնական, թե՛ ավագ դպրոցում սովորողներն ունեն կարողությունների և հմտությունների տարբեր մակարդակներ։ Տարբեր են նաև սովորողներին ներկայացվող պահանջները։ Եթե հիմնական դպրոցի սովորողին տրվում են ավելի քիչ պահանջներ, ապա ավագ դպրոցում հակառակն է։ Թե՛ հիմնական, թե՛ ավագ դպրոցի սովորողները պետք է լինեն հայրենասեր, քանի որ նրանց համար ձևակերպված արժեքները գերազանցապես ազգային բնույթ ունեն։ Այսպես օրինակ չափորոշչի ներածական հատվածում հանդիպում ենք հետևյալ ձևակերպմանը.

Պատմական կրթության հիմքում դնել ազգային առանձնահատուկ նպատակները, որոնք բխում են Հայաստանի, հայ ժողովրդի բազմադարյան հարուստ փորձից, ներկա իրավիճակից և զարգացման հեռանկարներից։ Միաժամանակ հաշվի առնել համաշխարհային պատմական փոձն ու համամարդկային արժեքները [8]։

Կարևոր է «Արցախյան ազատագրական պատերազմ թեմայի» դասավանդումը հիմնական և ավագ դպրոցում։ Թեմայի դասավանումը ունի մի շարք առանձնահատկություններ։ Եթե թեմայի վերաբերյալ հիմնական դպրոցի աշակերտին ավելի քիչ պահանջներ են ներկայացվում, ապա ավագ դպրոցականին՝ հակառակը։ Հիմնական դպրոցից դեպի ավագ դպրոց ավելանում են «Արցախյան ազատագրական պատերազմ» թեմայի ծավալները

«Արցախյան ազատագրական պատերազմ» թեմայի դասավանդումը հիմնական և ավագ դպրոցում կարելի է իրականացնել օգտագործելով պատմական փաստաթղթերը, որոնք կոչված են խորացնելու, որոշակիացնելու և սովորողների կողմից յուրացվող գիտելիքներին տալու կենդանի պատկեր, հասկանալու պատմական դարաշրջանի առանձնահատկությունները և ծանոթանալու նրա ուսումնասիրման մեթոդների տարբերին, որոնք կիրառվում են պատմական գիտության մեջ։ Սովորողների աշխատանքը փաստաթղթերի հետ աստիճանաբար դժվարանում է հաշվի առնելով նրանց տարիքային առանձնահատկությունները, ճանաչողական հնարավորությունները և նախապատրաստվածության աստիճանը։

Այսպիսով «Արցախյան ազատագրական պատերազմ» թեմայի դասավանդման առանձնահատկություններին անդրադառնալը շատ կարևոր է, քանի որ արդի կրթական պահանջների հիման վրա կարելի է ապահովել թեմայի արդյունավետ դասավանդումը, ապահովելով նաև թեմայի արդիականությունը:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Методика обучения истории в средней школе, Пособние для учителей Ч 2, М., 1978.
2. Васильев Л. С., Что такое государство? Преподавание истории в школе, №2, 1996.
3. Պապոյան Հ. Գ., Պատմության դասավանդման մեթոդիկան դպրոցում, Երևան, 2013:
4. «Համաշխարհային պատմություն» առարկայի ավագ դպրոցի չափորոշիչ և ծրագիր, Երևան, 2009
6. Ղուկասյան Ա., Գյուլբուդաղյան Ա., Հայոց պատմություն 6-7 ուսուցչի ձեռնարկ,Եր.,2007:
7. Ամիրջանյան Յու., Սահակյան Ա., Մանկավարժություն, 2005:
8. Հայոց պատմության ավագ դպրոցի չափորոշիչ, Երևան, 2009:

Преподование темы Арцахской освободительной войны

Матевосян Грануш
ГУГ, История, 4-ый курс

Резюме

Ключевые слова: *Арсахская освободительная война, учение, цель, причинно-следетвенные связи, вопросы трудности*

Арцахская освободительная война-одна из славных страниц армянского народа. Учитывая недавнюю армяно-азербайджанскую войнуб а также исползуя образовательные инновации, мы считаем важным правильно преподавать тему в школе. В етой статье мы покажем, как преподовать эту тему в школе чтобы, ученики могли в будущем бороться с азербайджанской подделкой.

Teaching the topic of the Artsakh liberation war

Matevosyan Hranush
GSU, History, 4th course

Summary

Key words*-Artsakh liberation war, purpose, teaching, purpose, causal relationships, issues of difficulty*

The Artsakh liberation was is one of the glorious pages of the Armenian people. Taking into account the recent Armenian-Azerbaijani war as well as using educational innovations, we consider it possible to teach the topic correctly. In this article we will show you how to teach etiquette in school so that students can fight against Azerbaijani counter-feiting in the future.

Թուրքիայում լույս տեսնող հայկական «Ժամանակ» օրաթերթի խմբագրական քաղաքականությունը

Մկրտչյան Միլենա
ԵՊՀ, PR և հաղորդակցային տեխնոլոգիաներ, մագիստրատուրա 2-րդ կուրս
Գիտական ղեկավար՝ բ. գ. թ., դոցենտ ***Գ. Աբրահամյան***

Հանգուցային բառեր. *ժուռնալիստիկա, խմբագրական քաղաքականություն, հայ մամուլի պատմություն, «Ժամանակ» օրաթերթ, Թուրքիա, Սփյուռք*

Խմբագրական քաղաքականությունը սկզբունքների, կանոնակարգերի, էթիկական նորմերի ամբողջություն է՝ խմբագրակազմի աշխատանքի հիմքը և ուղենիշը: Քննելով հայկական և հայալեզու ԶԼՄ-ների գործունեությունը Սփյուռքում՝ անհրաժեշտ է արձանագրել այն էական առանձնահատկությունները, որոնք առկա են սփյուռքահայ մեդիադաշտում: Սփյուռքի հայկական ԶԼՄ-ները լսարանին օպերատիվ տեղեկատվություն, բազմաժանր և թեմատիկ լայն ընդգրկմամբ նյութեր հաղորդելուց զատ՝ ունեն կարևորագույն առաքելություն հայապահպանության հարցում և, հատկապես, հայոց լեզվի և մշակույթի պահպանման տեսանկյունից:

Բոլոր ժամանակներում օրհասական և առանցքային են եղել Թուրքիայում լույս տեսող հայկական պարբերականների առջև ծառացած մարտահրավերները և գոյության պահպանման վտանգը: Այդ փոքրաթիվ պարբերականները կարևոր դեր և նշանակություն ունեն, ինչպես հայկական համայնքի մշակութային, լեզվական, ազգային, կրոնական արժեքների և ավանդույթների պահպանման տեսանկյունից, այնպես էլ հասարակական-քաղաքական առումով:

Թուրքիայում, հատկապես մինչև Հայոց Ցեղասպանությունը, արևմտահայության քաղաքական, մշակութային և տնտեսական վերնախավը կենտրոնացած է եղել Կոստանդնուպոլսում *(ներկայիս՝ Ստամբուլ)*: Այս առանցքային հանգամանքը բացատրում է այն, որ տասնամյակներ շարունակ Թուրքիայում հայկական և հայալեզու պարբերականները լույս են տեսել հենց Ստամբուլում: Խոսքը երեք հայկական պարբերականների մասին է՝ «Մարմարա», «Ժամանակ» և «Ակօս» [1]:

«Ժամանակ» օրաթերթը Թուրքիայում լույս տեսնող հայկական պարբերականներից ամենահինն է, որը 1908 թվականից առանց ընդհատում-

ների հրատարակվում է Պոլսում: Երիտթուրքերի հեղափոխությունից երեք ամիս անց՝ 1908 թվականի հոկտեմբերի 28-ին, Միսակ և Սարգիս Գոչունյան եղբայրները հիմնադրում են «Ժամանակ» օրաթերթը: Թերթը լույս է տեսնում միայն հայերեն (արևմտահայերեն): Բաղկացած է չորս էջից: Հիմնադրման օրվանից հայկական թերթի գլխավոր խմբագիրներն են եղել Գոչունյան ընտանիքի ներկայացուցիչները: Թերթի հիմնադիր, խմբագրապետ, գրող և հրապարակախոս Միսակ Գոչունյանը հանդես էր գալիս Քասիմ գրական կեղծանունով: Նա մեծ ավանդ ուներ, ինչպես «Ժամանակ» թերթի ամուր հիմքերի ստեղծման գործում, այնպես էլ պոլսահայության հանրային կյանքում:



Նկար 1. «Ժամանակ» օրաթերթի տարբերանշանը

«Ժամանակ» օրաթերթի ուշադրության առանցքում Թուրքիայի հայ համայնքի և ամբողջ հայության խնդիրներն են և առօրյան: Լայն է օրաթերթի բովանդակային և թեմատիկ ընդգրկումը՝ ներքին և արտաքին քաղաքականություն, հասարակություն, կրթություն, մշակույթ, տնտեսություն, ազգային-եկեղեցական կյանք և այլն:

Թուրքիայում հրատարակվող հայկական պարբերականները գոյության ողջ ընթացքում կանգնած են եղել բազմաթիվ խնդիրների առջև: Արևմտահայ մտավորականության ջանքերի և ազդեցության շնորհիվ հնարավոր է եղել պահպանել երկրում տպագիր մամուլի գոյությունը՝ հաղթահարելով ֆինանսական և քաղաքական խոչընդոտները:

«Ժամանակ» օրաթերթի բացառիկության վկայությունն այն է, որ գործելով Օսմանյան կայսրության կենտրոնում՝ Կոստանդնուպոլսում, թերթը շարունակել է լույս տեսնել հայ ժողովրդի համար դժվարին ժամանակահատվածներում, այդ թվում՝ Հայոց ցեղասպանության տարիներին: Ուշագրավ է նաև պոլսահայ մամուլի ամենաերկարակյաց պարբերականի՝ քաղաքական բռնաճնշումներին դիմազրավելու և առանց ընդհատումների հրատարակվելու պատմությունը:

Ուսումնասիրության առանցքում են «Ժամանակ» քաղաքական-ժողովրդական օրաթերթում տեղ գտած հոդվածները, նորությունները, հրապարակախոսական ակնարկները և մի շարք այլ հրապարակումներ: Այս ամենը ժամանակի ընթացքում ձեռք է բերել աղբյուրագիտական կարևոր նշանակություն: Դրանց վերլուծությունը, ուսումնասիրությունը, համեմատությունը և համադրումը պատմական փաստերի և հրապարակումների հետ օգնում են հասկանալ տվյալ ժամանակաշրջանում ներքաղաքական անցուդարձը և հայերի կացության պատկերը:

«Ժամանակ» օրաթերթի ուշադրության առանցքում մշտապես հայկական համայնքի հիմնահարցերն էին և հայերի առջև ծառացած օրհասական խնդիրները: «Ժամանակ»-ի էջերում անդրադարձներ էին արվում Կիլիկիայի հայերի իրավունքներին, Ադանայի ջարդերին և այլն: Ահագնացող վտանգի մասին մտավախություններ «Ժամանակի» էջերում նկատվում են դեռ 1909 թվականից: Օրինակ՝ 1909 թվականի մայիսի 5-18-ի համարում [2] տպագրվել են «Ատանայի եւ շրջակայից ջարդը» ականատեսի վկայությունները, «Ահռելի Պատկեր. Հայ կին մը վեց տեղէն մորթուած Մարաշի մէջ» նյութը, նույն թվականին լույս տեսած մեկ այլ համարում՝ «Ինչո՞ւ կջարդեն հայերը» հրապարակումը [3] և այսպես շարունակ:

Ֆիզիկական ակնհայտ սպառնալիքից՝ ջարդերից և բռնաճնշումներից բացի՝ սոցիալական, տնտեսական և հասարակական մի շարք այլ խնդիրներ ևս ուղեկցում էին հայերին: Հայերին սպառնացող ներքաղաքական խնդիրներից մեկը հողազրկումն էր, որի վերաբերյալ մի շարք անդրադարձներ տեսնում ենք «Ժամանակի» էջերում: 1910 թվականի հուլիսի 8-ին լույս տեսած համարում տեղ է գտել հողային խնդրի վերաբերյալ Ա. Գալփաքճեանի հոդվածը՝ «Տեսութիւն մը Թիւրքիոյ կալուածական օրէնքներուն վրայ» վերնագրով [4]: Հեղինակը հոդվածը սկսում է այսպես. *«Հայոց սեփական հողերու հարցը, այս պահուս, ազգային խնդիրներու օրակարգին մէջ առաջին տեղը կը գրաւէ կամ պէտք է որ գրաւէ…»:* Եթե Պոլսում ազգային և կրոնական հաստատությունների սեփական կալվածքներն էին գրավում, ապա գավառներում անհատների հողերն էին խլում: Այդ ամենն արվում էր պաշտոնապես և օրենքով: Քանի որ թիրախավորված էին հենց հայերի հողերը, հեղինակը մտավախություն է հայտնում, թե հնարավոր է՝ այս հափշտակությունների պատճառը հայերի հանդեպ թշնամանքն է, որը նոր չէ և գալիս է դեռ հին ռեժիմի՝ հայերի հանդեպ ոտնձգությունների ժամանակներից: Ըստ Գալփաքճեանի՝ այդ ժամանակ ոչ այնքան կարևոր էր որոնել հողաբրկման

այս խնդրի պատճառը, առիթը, որքան այն, որ այդ բոլոր հափշտակությունները լինում են օրինական ձևակերպումներով: Թուրքիայի կալվածային և անշարժ գույքերի օրենքի մասին հեղինակը գրում է. «*Անիկա այնքան մութ ու մանուածապատ ուղիներ ունի, որ առաջնորդած է և տեղ տեղ կրնայ միշտ առաջնորդել անիրաւ յափշտակութիւններու, ինչպէս նաեվ օրինաւոր գրաւումներու….*»:

«Ժամանակը» հիշում և հիշեցնում էր Օսմանյան կայսրությունում հայերի դերի մասին: 1909 թվականի հունիսի 8-21-ի համարում [5], ի պատասխան թուրք պաշտոնակից Սիբերը Սաիգայի, ով նշում էր, որ «*հայերը իբր գերի ծախու կը հանուէին*», «Ժամանակի» խմբագրակազմը հրապարակեց «Հայերը իբր գերի ծախուած են երբեք» խմբագրականը: Կուռ շարադրանքով, բովանդակային կարևոր շեշտադրումներով այս խմբագրականը, մեկն է այն հրապարակումներից, որում հիշատակվում են պատմական իրողություններ՝ ակնհայտ դարձնելով հայերին անվանարկող պնդումները. « *Օրինակը թարմ է: Ատանայի սրտաճմլիկ աղէտին մէջ կրնան քանի մը աւազակներ կիներ ու անչափահասներ առեւանգած ըլլալ անխղճաբար և զանոնք նոյնքան անխիղճ անձանց ծախու հանած ըլլալ: Միթէ ապագայ պատմագիրը այս բարբարոսութեան վրայ յենլով պիտի գրէ թե Հայերը իբր գերի՞ կը ծախուէին: Մնաց որ մեր պաշտօնակիցին տեսութիւնները բոլորովին հակասական են պատմության հետ: Օսմանեան պատմութեան մօտէն տեղեակ եղողներ և կամ ժողովուրդին բերնին մէջ դեռ թարմ մնացած պատմութիւններու ունկնդրողներ գիտեն որ Հայերը երբեք ստրկական դիրքը մը չեն ունեցած Օսմանեան Սուլթաններու հովանիին տակ….»:*

Հատկանշական է նույն հոդվածի հետևյալ հատվածը ևս. « *…. Մեր Թուրք հայրենակիցներն ալ կը խոստովանին թէ Հայերը ո՛չ միայն բթամիտ եղած չեն, այլ և իրենց արտակարգ սրամտութեան երեսէն է որ յաճախ հալածանքի ենթարկուած են: Ճարտարապետութիւնը ամբողջ Օսմ. երկրին մէջ միմիայն Հայուն յատուկ էր և այսօր պարծանքով կրնանք ըսել թէ Անատօլուի ամէն կողմը կառուցուած հոյակապ ու հնութեան տեսակէտով արժէքաւոր բոլոր շէնքերը Հայ մը ունին իրենց ճարտարապետ: Պետութեան համար կարեւոր ռազմանիւթերու պատրաստութիւնը Հայերու յատուկ էր, վառօդապետութիւնը որդւոց որդի Տատեան ընտանիքին, ճարտարապետութիւնը Պալեան ընտանիքին մենաշնորհն էր հարիւրաւոր տարիներէ ի վեր: Երկրին մէջ բացուած պետական գործարաններու տնօրէններն ու վարիչները Հայերն էին միշտ, ինչպէս նաեւ պետական գանձը մատակարարողը….»:*

1913 թվականին՝ Քասիմի վաղաժամ մահվանից հետո, Սարգիս Գոչունյանը ստանձնում է թերթի հրատարակման ամբողջ պատասխանատվությունը: Հենց նա էլ զբաղեցնում է «Ժամանակ» օրաթերթի խմբագրի պաշտոնը հայության համար ամենածանր և ողբերգական ժամանակաշրջանում: Դժվարին այս ժամանակահատվածում օրաթերթը լույս էր տեսնում երկու էջով: Հատկանշական են հատկապես 1915 թվականին լույս տեսա «Ժամանակի» համարները, որոնք օգնում են հասկանալ տվյալ ժամանակի տեղեկատվական քաղաքականությունը: Որպես օրինակ նշենք 1915 թվականի հունվարի 9-22-ի համարում տպագրված ««Գունաւոր գիրքերը» և Դիւանագիտական խաղերը» խորագրով հոդվածը [6]: «Նոր քաղաքագէտ» կեղծանվամբ հանդես եկող հեղինակը հոդվածը սկսում է այսպես. «*Բաւական երկար ատենէ ի վեր արդէն գիտէինք կամ վարժուած էինք գիտնալու, թե ԺԹ և Ի դարերու «քաղաքակրթութիւնները» պատերազմական արուեստին մէջ մտցուցած շատ մը նորութիւններուն հետ, դիւանագիտութեան մէջ ալ մտցուցին կարգ մը ձեւակերպութիւններ: Ասոնց մէջ, ինչպէս տեսանք մանաւանդ սա վերջին պատերազմի միջոցին, ամէնէն գլխաւորն է՝ սուրը պատեանէն հանելով աջ ու ձախ նախճիրներու սկսելէն վերջ, ի լուր աշխարհի պոռալ իմէ. «Իր կամքէն անկախ պատճառներով է, որ ստիպուած է զէնքի դիմելու»: Եւրոպական դիւանագիտութիւնը՝ այս ձեւակերպութիւնը կ՛անուանէ «պատասխանատուութիւնը մերժել»….*»: Այսպիսով հեղինակը ակնարկում է տվյալ ժամանակաշրջանում գերտերությունների, պատերազմող կողմերի դիվանագիտական հայտարարությունները պատերազմի և, մասնավորապես, Թուրքիայի մասնակցության մասին: Որքան էլ դժվար էին ժամանակները հայալեզու և հայկական պարբերականի գոյատևման և տպագրման համար, միևնույնն է «Ժամանակի»-ի հեղինակները հնարավորինս փորձում էին անկեղծ լինել ընթերցողի հետ՝ զերծ մնալով բացահայտ դիրքորոշումներ արտահայտելուց: Հոդվածում բազմիցս ակնարկվում է, որ կատարվող իրադարձությունների և վարվող քաղաքականության մասին տեղեկատվության բացակայությունն անորոշ մթնոլորտ է ստեղծում, և մամուլը այս պայմաններում չի կարող, բացի եղած տեղեկությունից, այլ պատկեր ներկայացնել: Նկատի ունենալով տվյալ ժամանակահատվածում առկա տեղեկատվական հոսքերը և հրապարակումները օսմանյան մամուլում, հեղինակը նշում է. «*…օսմանեան մամուլը այս պահուս բացարձակապէս անկարող է գիտնալու, թէ անգլիական և ռուսական նարնջագոյն ու սպիտակ տետրակներուն մէջ յիշատակուած պաշտօնաթուղթերուն պարունակութեանը օսմանեան*

կառավարութեան կողմէ ժամանակին ի՞նչ պատասխան տրուած է: Եվ զորչափ այս անգիտութիւնը կայ ու կը մնայ՝ օսմանեան մամուլն ալ մասնակի կերպով միայն պիտի կրնայ պաշտպանել կառավարութիւնը և հայրենիքը…»: Թերթի էջերում նկատվում է, որ խմբագրությունը կանխազգում է մոտալուտ աղետի հավանականությունը: Իհարկե, հատկապես այս տարիներին գրաքննությունը չափազանց խիստ է իրականացվել, սակայն թերթի խմբագրակազմի անդամները, թղթակիցները և աշխատակիցները կարողացել են ինչ-որ չափով փոխանցել տեղեկություններ՝ երկրի և հայության ընդհանուր պատկերը, վարվող տեղեկատվական քաղաքականությունը հասկանալի դարձնելու համար:

«Ժամանակին» թղթակցել են նշանավոր հայ գործիչները՝ Գրիգոր Զոհրապը, Զապել Եսայանը, Ռուբեն Սևակը, Երվանդ Օտյանը, Արշակ Չոպանյանը, Վահան Թեքեյանը, Դանիել Վարուժանը, Հակոբ Օշականը, Վազգեն Շուշանյանը, Լևոն Զավեն Սյուրմելյանը, Զահրատը, Հովհաննես Թումանյանը և այլք: Հետաքրքրական է, որ Երվանդ Օտյանը, դերզորյան աքսորը վերապրելուց և կոտորածներից փրկվելուց հետո, վերադարձել է Պոլիս և շարունակել է թղթակցել «Ժամանակ»-ին [7], հեղինակել՝ «Անիծեալ տարիներ»-ը (1914-1919): «Ժամանակը» շարունակեց իր գոյությունը նաև Ցեղասպանությունից հետո, երբ թղթակիցներից և հեղինակներից շատերը կամ սպանված էին, կամ աքսորված:

1923 թվականից ի վեր, երբ ստեղծվեց Թուրքիայի Հանրապետությունը, «Ժամանակ» օրաթերթը անցավ իր զարգացման պատմության երկրորդ փուլին: Փոքրամասնությունների իրավունքները հստակ ամրագրված էին Լոզանի պայմանագրով [8]. պայմանագրի ողջ Երրորդ բաժինը *(հոդվածներ 37-45)* վերաբերում է Թուրքիայի ոչ-մուսուլման փոքրամասնություններին: Ընդ որում, այդ բաժնի առաջին հոդվածը [9] սահմանում է, որ փոքրամասնություններին վերաբերող հոդվածներին տրվել է հիմնարար օրենքի ուժ, այսինքն դրանք անբեկանելի և անփոփոխելի են, և ոչ մի օրենք, ոչ մի կանոնակարգ կամ պաշտոնական գործողություն չպետք է հակասի, միջամտի կամ գերակայի այդ դրույթներին: Այս բաժնում սահմանված է նաև, որ վերջիններս ունեն մայրենի լեզվով հաղորդակցվելու իրավունք, ինչպես մասնավոր հարաբերություններում, առևտրում, կրոնական կյանքում, այնպես էլ մամուլում:

Այս ժամանակաշրջանում «Ժամանակի» էջերում տեղ էին գտնում նյութեր փոքրամասնության իրավունքների, հայկական համայնքի մասին, ուշադրություն էր դարձվում հայապահպանության խնդիրներին: Օրաթերթում կային խորագրեր և սյունակներ, որոնցում բացի Թուր-

քիայի, Հայաստանի և ամբողջ հայության մասին կարևոր նորություններից բաղկացած լրահոսից՝ տեղ էին գտնում տարբեր, հետաքրքրական նյութեր: Օրինակ՝ «Հայ կյանք» խորագրի ներքո տպագրվում էին տեղեկություններ տարբեր երկրներում հաջողության հասած, պարգևատրված հայորդիների մասին և այլն: Հատկանշական են նաև «Պատմության հետքերի վրա», «Անցյալի հուշեր» խորագրերը: Տպագրվում են նաև թեմատիկ տարբեր ուղղություններով ծավալուն նյութեր և խմբագրականներ:

Բովանդակային լայնացող շրջանակը ներառում է մարզական նորություններ, որոնցում առաջնային տեղ է հատկացվում տարբեր մարզաձևերում Թուրքիայի և աշխարհի առաջնություններում հաջողություններ և հաղթանակներ գրանցած հայորդիներին: «Ժամանակ» օրաթերթը ներկայացնում է նաև համայքնի մշակութային օրակարգը՝ տեղեկացնելով և լուսաբանելով ներկայացումների, համերգների, ցուցահանդեսների մասին: Այնուամենայնիվ, հիմնադրումից ի վեր «Ժամանակ»-ի այցեքարտային և գլխավոր բաղկացուցիչը շարունակում է մնալ գրականությունը, գրական մեջբերումները և անդրադարձները:

Պարբերաթերթի պատմության երրորդ փուլի մեկնարկը համընկնում է Հայաստանի անկախության հռչակման հետ: Մինչ այսօր «Ժամանակը» առանձին սյունակներով և պարբերականությամբ անդրադառնում է Հայաստանի հասարակական, մշակութային, եկեղեցական առօրյային, լուսաբանում՝ քաղաքական կարևոր իրադարձությունները: Հայ Առաքելական Եկեղեցու անցուդարձը ևս տեղ է գտնում թերթում: Այսպիսով, կարող ենք արձանագրել, որ Թուրքիայում լույս տեսնող հայկական «Ժամանակ» օրաթերթի խմբագրակազմը էականորեն ընդլայնել է բովանդակային շրջանակը, որում կարևոր տեղ են զբաղեցնում Հայաստանի Հանրապետությունը, հայրենիքին վերաբերող թեմաները և հայ-թուրքական հարաբերությունները: Սակայն նոր թափ են ստացել ավանդական մամուլի խնդիրները՝ տպագրության հարցեր, էջերի քանակ, գունավոր էջեր ունենալու հնարավորություն, գովազդատուների և ընթերցողների համար գրավչության ապահովում և այլն:

21-րդ դարի սկզբին համացանցի և տեղեկատվական տեխնոլոգիաների արագընթաց զարգացումը նպաստեց էլեկտրոնային ՋԼՄ-ների զարգացմանը, ինչպես նաև ավանդական մամուլին հնարավորություն ընձեռնվեց ստեղծելու էլեկտրոնային պարբերականներ: «Ժամանակ» օրաթերթը քայլեց ժամանակին համընթաց և ներկայացրեց նույնանուն կայքէջը [10]: Այսպիսով, «Ժամանակ» օրաթերթի ընթերցողների շրջանակը ընդլայնվեց՝ տարածության և ժամանակի սահմանափակումները

հաղթահարելու շնորհիվ: Այսօր «Ժամանակ» օրաթերթի ընթերցողը շարունակում է գլխավորապես մնալ Թուրքիայի հայությունը, սակայն այն արդեն նաև հիմնական աղբյուրներից է, որի միջոցով թե՛ Հայաստանի Հանրապետությունում և թե՛ արտերկրում, Սփյուռքում բնակվող հայերը տեղեկանում են Թուրքիայում հայկական համայնքի անցուդարձի մասին, ինչպես նաև՝ հետևում քաղաքական լուսաբանումներին:

«Ժամանակ» օրաթերթի խմբագիր Արա Գոչունյանը նշել է. «Թերթը միշտ հաջողել է՝ Թուրքիայի Հանրապետության քաղաքացի լինելու հանգամանքից բխած պատասխանատվությունները և հայկական արմատներով պայմանավորված զգայունությունը, հավասարակշռության մեջ դնելու գործում: «Ժամանակը» հասարակության նկատմամբ պատասխանատվությունները միշտ գերադասող, հասարակությանը արկածախնդրություններից զերծ պահելու առաջնահերթությունը որդեգրած թերթ է» [11]:

Ուսումնասիրելով Թուրքիայի «Ժամանակ» օրաթերթի պատմությունը, գործունեությունը, խմբագրական քաղաքականության հիմնական սկզբունքները և զարգացումները, կարևորում ենք նաև ֆինանսական բաղկացուցիչը: «Ժամանակ» օրաթերթի խմբագիր Արա Գոչունյանը նշում է. «Առաջին օրվանից թերթն անկախ թերթ է եղել, հովանավոր չի ունեցել, կուսակցական թերթ չի եղել, միակ հենարանը եղել է իր ընթերցողը, ժողովուրդը» [12]:

2021 թվականի հոկտեմբերին 28-ին լույս տեսած «Ժամանակ» օրաթերթի խմբագրականում [13] Գոչունյանն ահազանգ հնչեցրեց առ այն, որ հիմնադրման 114-րդ տարին օրաթերթը թևակոխում է անդունդի եզրին՝ կանգնած բազում խնդիրների առջև: «Ժամանակ» օրաթերթի ներկայիս ճգնաժամը պայմանավորված է հիմնական երեք գործոններով՝ պոլսահայության ներհամայնքային տարաձայնությունները, կորոնավիրուսյան համավարակի ազդեցությունը և տպագիր մամուլի բազմաթիվ խնդիրները: «Ժամանակ» օրաթերթի՝ խնդիրներին դիմագրավելու ընթացքը լուսաբանելու և հայության կողմից աջակցություն հասցեագրելու նպատակով՝ օրաթերթի ճգնաժամին անդրադարձ է կատարվել նաև Լոս Անջելեսի «Ասպարեզ» օրաթերթում [14]:

«Ժամանակ» օրաթերթը համահայկական հաղորդակցության համար մեծ կարևորություն ունեցող հարթակ է: Քաղաքական-ժողովրդական այս օրաթերթն ունի պատմական կարևոր արխիվ. այն և՛ Օսմանյան կայսրության, և՛ Թուրքիայի Հանրապետության ականատեսն է, տարբեր ժամանակաշրջաններում պոլսահայության առօրյայի, կենսակերպի և որպի-

սության մասին պատմող յուրատեսակ աղբյուր է: «Ժամանակ» քաղաքական-ժողովրդական օրաթերթը հիմնադրումից ի վեր հրատարակվել է հայության համար պատմական կարևոր, դժվարին, վտանգներով և արհավիրքներով լի ժամանակաշրջաններում: Իրականացված խմբագրական քաղաքականության շնորհիվ խմբագրակազմը կարողացել է պահպանել հայալեզու այս պարբերականի գոյությունը Թուրքիայում:

Ամփոփելով նշենք, որ «Ժամանակ» օրաթերթը տասնամյակների ընթացքում ընդլայնել է թեմատիկ շրջանակը՝ ձևավորելով յուրատեսակ օրակարգ և բավարարելով հայության՝ հնարավորինս անկողմնակալ տեղեկատվություն ստանալու պահանջը: Առանձնացնենք բովանդակային հետևյալ հիմնական ուղղությունները՝

- հասարակական-քաղաքական,
- գրական-մշակութային,
- ազգային-կրոնական:

Հայկական օրաթերթը այլընտրանքային տեղեկատվության ստացման միջոց է պոլսահայության համար: Խմբագրական քաղաքականության առաջնային սկզբունքներն են՝ ընթերցողին հնարավորինս ամբողջական, հավաստի և անաչառ լրատվություն տրամադրելը: Մշտապես եղել են թերթի գործունեությունը սահմանափակող և ճնշող բազմաթիվ հանգամանքներ, որոնք պայմանավորված են՝ Թուրքիայում հրատարակվելու հանգամանքով: Դրանք շարունակում են արդիական մնալ և խորանալ՝ նաև համայնքի ներսում առկա տարաձայնությունների պատճառով:

«Ժամանակը» յուրատեսակ կապող օղակի դեր ունի Հայաստանի և պոլսահայության միջև: Օրաթերթի որդեգրած կարևորագույն սկզբունքը և նպատակն է նաև՝ պահպանել հայկական ավանդույթները և արժեքները, ներդրում ունենալ հայապահպանության գործում: Առանձնահատուկ ուշադրության կենտրոնում է հայոց լեզուն, լեզվի պահպանման, զարգացման և տարածման խնդիրները:

Հայ մամուլի պատմության մեջ «Ժամանակ» օրաթերթը բացառիկ է Թուրքիայի և պոլսահայ իրականության տարեգրության, անցած երկարամյա ուղու իմաստով: «Ժամանակ» օրաթերթն արժևորվում է նաև որպես սփյուռքահայ մամուլի ներկայացուցիչ՝ թողած ժառանգության, յուրատեսակ ձեռագրի և հետագծի իմաստով: Այն այսօր շարունակում է տպագրվել՝ պահպանելով սկզբունքներն ու ավանդույթները, լուսաբանելով Հայաստանի, Թուրքիայի և պոլսահայության կյանքում կարևոր իրադարձությունները և անցուդարձը՝ ձևավորելով կարծիք և հավատարիմ մնալով հայապահպանության առաքելությանը:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Աբրահամյան Գ., «Սփյուռքահայ մամուլի պատմություն», Երևան, 2017:
2. «Ժամանակ» ժողովրդական օրաթերթ, Կ. Պոլիս, 5-18 մայիս, 1909թ.:
3. «Ժամանակ» ժողովրդական օրաթերթ, Կ. Պոլիս, 4-15 մայիս, 1909թ.:
4. «Տեսութիւն մը Թիւրքիոյ կալուածական օրէնքներուն վրայ», «Ժամանակ» ժողովրդական օրաթերթ, Կ. Պոլիս, 8-21 յուլիս, 1910թ.:
5. «Հայերը իբր գերի ծախուած են երբեք», «Ժամանակ» ժողովրդական օրաթերթ, Կ. Պոլիս, 8-21 յունիս, 1909թ.:
6. ««Գունաւոր գիրքերը» և Դիւանագիտական խաղերը», «Ժամանակ» ժողովրդական օրաթերթ, Կ. Պոլիս, 9-22 յունուար, 1915թ.:
7. Գ. Աբրահամյան, «Սփյուռքահայ մամուլի պատմություն», Երևան, 2017:
8. Լոզանի պայմանագիր, https://wwi.lib.byu.edu/index.php/Treaty_of Lausanne (10.01.2022):
9. Treaty of Lausanne, https://wwi.lib.byu.edu/index.php/Treaty_of_ Lausanne (10.01.2022), Section III, Protection of Minorities, Article 37;
10. http://www.jamanak.com/ (19.01.2022):
11. «ԺԱՄԱՆԱԿ-ի ժամանակը», https://youtu.be/b5RvA5GqDrM (10.01.2022):
12. «Պոլսահայ լսարանի հայացքը դեպի հայրենիք թեքելու զգայականություն ունենք. «Ժամանակ»-ը կբոլորի 110 ամյակը», «Արմենպրես» լրատվական գործակալություն, 2017:
13. «Ժամանակ» օրաթերթ, 2021թ. հոկտեմբեր 28:
14. «Ժամանակ» օրաթերթ, 2022թ. հունվար 14:

Редакционная политика армянской ежедневной газеты «Жаманак», издающаяся в турции

Мкртчян Милена
ЕГУ, PR и коммуникационные технологии, Магистратура 2-й курс

Резюме

Ключевые слова: *журналистика, редакционная политика, история армянской прессы, газета «Жаманак», Турция, Диаспора*

Ежедневная газета «Жаманак» – старейшее армянское издание, которое с 1908 года непрерывно издается в Стамбуле. Общественно-политическая газета «Жаманак» издается в исторически трудные периоды для проживающих в Турции армян. Благодаря проводимой редакционной политике удалось сохранить существование армяноязычного издания в Турции.

В статье особое внимание уделено работе газеты в годы Геноцида армян. Описаны проблемы, с которыми сталкивается газета в современном этапе истории.

Editorial Policy of Armenian "Zhamanak" Daily Published in Turkey

Mkrtchyan Milena
YSU, PR & Communication Techniques, MA the 2nd course

Summary

Key words: *journalism, editorial policy, history of the armenian press, "Zhamanak" daily, Turkey, Diaspora*

The daily newspaper "Zhamanak" is the oldest Armenian publication, which has been published continuously in Istanbul since 1908. The socio-political newspaper "Zhamanak" is published in historically difficult periods for the Armenians living in Turkey. Due to the ongoing editorial policy, it was possible to maintain the existence of the Armenian-language edition in Turkey.

The article focuses on the activity of the newspaper during the years of the Armenian Genocide. The obsticles, that the newspaper has faced in the contemporary period, are mentioned too.

Հայաստանի մանդատը ստանձնելու հարցը Փարիզի խաղաղության կոնֆերանսում

Շահբազյան Միրանուշ
ՎՊՀ, Պատմություն, մագիստրատուրա, 2-րդ կուրս
*Գիտական ղեկավար՝ պ.գ.թ. դոցենտ **Յու. Ղույյան***

Հանգուցային բառեր. *Վուդրո Վիլսոն, Տասի խորհուրդ, Հարբորդի առաքելություն, ԱՄՆ Սենատ*

Փարիզի կոնֆերանսում Հայաստանը չճանաչվեց որպես հաշտությունը ստորագրող պետություն: Այդ դիրքորոշման փոփոխությանն ուղղված Հայկական պատվիրակության ջանքերը հաջողություն չունեցան: Անտանտի պետությունները դա պարզաբանում էին Հայաստանի՝ միջազգային իրավունքի սուբյեկտ չհանդիսանալու հանգամանքով: Այդ կապակցությամբ Փարիզի խաղաղության կոնֆերանսում ԱՄՆ-ը ներկայացնող Վ. Վիլսոնը հայկական պատվիրակությանն անեղծորեն ասաց. «Հաշտության վեհաժողովի պատվիակների մեջ ամեն տեղ ես ամենուրեք առավել անկեղծ համակրանք եմ տեսնում հայերի հանդեպ... Տեխնիկապես շատ դժվար է ներկայացուցչություն հատկացնել քաղաքական միավորների որոնք, դեռ չեն ընդունվել պետությունների ընտանիք» [1, 15-20]: Այնուհետև Վիլսոնը հասկացրել էր, որ Հայ Դատը կոնֆերանսում առաջ է մղվելու այնպես, որը համազոր է լինելու հայկական պատվիրակության մասնակցելուն [6, 180]: Դա չընկճեց հայկական պատվիրակությանը. պատվիրակությունը մեծածավալ աշխատանք կատարեց խաղաղության կոնֆերանսում Հայկական հարցն առաջ մղելու համար: Դեռևս 1918 թ. դեկտեմբերին Հայաստանի Անկախության Ամերիկյան Կոմիտեն, որը գլխավորում էր Գերմանիայում ԱՄՆ-ի նախկին դեսպան Հեների Քաբոտ Լոջը, ԱՄՆ-ի Սենատին մի բանաձև ներկայացրեց, որով պահանջում էր հիմնադրել Հայկական պետություն Արևմտահայաստանի, Արևելահայաստանի և Հյուսիսային Պարսկաստանի մի մասի ընդգրկմամբ, որն արժանացել էր նախագահ Վիլսոնի հավանությանը [5, 185]:

1919 թ. հունվարի 21-ին՝ Փարիզում՝ խաղաղության բանակցությունների ընթացքում Ամերիկյան պատվիրակության տարածքային, տնտեսական և քաղաքական հետախուզության բաժինը նախագահ Վիլսոնին զեկույց ներկայացրեց Հայաստանի մասին, որտեղ նշված էր, որ պետք է հիմնել Հայաստան պետություն և այն Ազգերի լիգայի անունից դնել

մանդատատեր տերության ներքո, և որ Հայաստան պետության սահմանները պետք է լինեն «Անտիտավրոսի լեռները Արևմուտքում և Տավրոսի լեռնաշղթան հարավում...» [5, 190]:

1919 թ. փետրվարի 7-ին Անգլիան իր արմատական դիրքորոշումը ներկայացրեց թուրքական հարցի լուծման վերաբերյալ, որը մեծամասամբ վերաբերում էր Հայաստանին: Այդ հուշագրում ասվում է.

«1. Անջատել Օսմանյան կայսրության ոչ թուրքական մասերը [2, 45]:

2. Անջատել, ի լրումն, այն երկրները, որտեղ փորձը ցույց է տվել, որ փորքրամասնությունների անվտանգությունը չի կարող երաշխավորվել թուրքական կառավարումը շարունակելու դեպքում: Այս կետը վերաբերում էր Հայաստանին, որտեղ թուրքերը և քրդերը միասին վերցրած մեծամասնություն էին կազմում:

3. Չափավորել ինքնորոշման սկզբունքը, դրանում հայերը և հրեաները «պատմական պատճառներով» ուշադրության արժանի պահանջներ ունեին՝ անկախ թվաքանակի համեմատությունից:

4. Անջատված տարածաշրջանները հանձնել հովանավորող՝ մանդատի տեր պետության ղեկավարությանը:

5. Պահպանել Անատոլիան իբրև թուրքական պետություն, նրա արևելյան սահմանները հաստատելով այն գծի երկայնքով, որտեղ թուրքական խիտ տարրը տեղի էր տալիս քրդական, թուրքական, հայկական և հունական խառը բնակչությանը: Այսպիսով, հյուսիսից հարավ Սամսուն-Կեսարիա-Մելեֆկե գիծը կընդգրկվեր Անատոլիական Թուրքիայի մեջ, մինչդեռ Կերասունդ-Սվազ-Մերսին գիծը՝ ոչ:

6. Կազմակերպել առանձին պետություն Կերասունդ-Սվաս-Մերսին գծի մյուս կողմն ընկած այն հողերում, որտեղ օսմանյան կառավարությունը չէր կամենում և ի վիճակի չէր կատարելու իր պարտավորությունները: Նոր երկրին, մոտավորապես Կիլիկիային և արևելյան վեց վիլայեթներին պետք է տրվեր իր պատմական անունը՝ «Հայաստան»:

7. Հայաստանի սահմանները անցկացնել հարավում՝ Միջերգրական ծովի ափին գտնվող Ալեքսանդրետից մինչև Դիարբեքիր և Տիգրիս գետով մինչև Պարսկաստանի սահմանը, արևելքում՝ պարսկական սահմանով և հյուսիսում՝ Սև ծովի երկայնքով միմչև Տրապիզոնի և Սյուրմենի միջև ընկած մի կետ:

8. Հաշտության վեհաժողովի վրա պարտականություն դնել՝ ապահովելու անդորրը Հայաստանում և խթանելու պետության զարգացումը»:

1919 թ. հունվարի 29-ին՝ Հաշտության վեհաժողովի բացվելուց հետո ստեղծվեց Տասի խորհուրդ, որի մեջ մտնում էին Անգլիայի, Ֆրանսիայի,

Իտալիայի, ԱՄՆ-ի, Ճապոնիայի ղեկավարներն ու արտգործնախարարները: Անգլիան քննարկման ներկայացրեց բանաձևի նախագիծ, որով նախատեսվում էր Հայաստանի ամբողջական անջատումը Օսմանյան կայսրությունից [3, 180]:

Այն հաջորդ օրն իսկ ընդունվեց դաշնակիցների Գերագույն խորհրդի կողմից:

Ճշմարտությունը պահանջում է ասել, որ Ֆրանսիան դեմ էր դեպի Կիլիկիա Հայաստան պետության ծավալմանը, քանի որ ինքն էր հավակնում տիրել նրան Սիրիայի հետ միասին: Ֆրանսիան դրդում էր Սիրիային Հաշտության համաժողովից պահանջել Կիլիկիան: Այդ հանգամանքը բացահայտվեց Հայաստանի Անկախության Ամերիկյան Կոմիտեի կողմից: Կիլիկիայի պատճառով Ֆրանսիան սառն էր վերաբերում Հայկական Հարցին:

Հունաստանը Հայկական հարցին վերաբերում էր նվիրվածությամբ: Այն Հայաստանի մասին կիսում էր վիլսոնյան համակրանքը: Կոնֆերանսի 3-րդ և 4-րդ նիստերում Հունաստանի վարչապետ Վենիզելոսը նշեց, որ Հայաստանի մեջ պետք է ներառվեն Կիլիկիան, հայկական 6 վիլայեթները, Ռուսահայաստանը և նույնիսկ հունաբնակ Տրապիզոնի վիլայեթը [7, 194]:

Հայաստան պետության ստեղծման հարցում իտալացիները համակարծիք էին ամերիկացիներին, անգլիացիներին և հույներին: Առաջին համաշխարհային պատերազմի ընթացքում Հռոմի քաղաքագլուխ և նախկին վարչապետ Լուիջի Լուազտինի գլխավորությամբ ստեղծվել էր Հայաստանի Անկախության Իտալական Կոմիտեն:

Հայաստանը, թերևս, խաղաղության կոնֆերանսի պաշտոնական մասնակից չդարձավ, բայց Հայկական միասնական պատվիրակությունը Նուբարի և Ահարոնյանի ղեկավարությամբ մեծ աշխատանք կատարեց Հայկական հարցի լուծման տեսանկյունից: Կոնֆերանսին 1919 թ. փետրվարի 12-ին ներկայացրած հուշագիրը խորությամբ վերլուծած տեղեկագրություն էր Հայաստանի մասին: Հուշագրում հատկապես նշվում էր, որ արդարացի չէ, երբ տերությունները և թուրքերը նշում են Հայաստանին հատկացվող տարածքներում հայերի փոքրամասնություն լինելու հանգամանքը և դրանից բխեցնում քաղաքական հայավնաս եզրակացություններ, անգամ որոշումներ:

Հայկական միացյալ պատվիրակության պահանջներն էին.

1. Ճանաչում հայկական անկախ պետության, որ պիտի բաղկացած լիներ՝ Վանի, Բիթլիսի, Դիարբեքիրի, Խարբերդի, Սեբաստիայի, Կարինի

և Տրապիզոնի 7 վիլայեթներից՝ դուրս ձգելով Տիգրիսի Հարավակողմը և Օրդու-Սեբաստիա գծից դեպի արևմուտք գտնվող շրջանները. Կիլիկիայի չորս սանջակները՝ Մարաշ, Սիս, Ջեբել-Թերեքեթ և Ադանա՝ Ալեքսանդրետով հանդերձ. Կովկասի Հայկական Հանրապետությունը՝ Երևանի ամբողջ նահանգը, Թիֆլիսի նահանգի Հարավային մասը, Ելիզավետպոլի նահանգի հարավ-արևմտյան մասը, Կարսի նահանգը՝ բացառությամբ Արդահանից հյուսիս գտնվող շրջանի:

2. Հայկական պետությունը պետք է դրվեր դաշնակից պետության և Միացյալ Նահանգների կամ Ազգերի Լիգայի հոգածության տակ:

3. Հաշտության կոնֆերանսի կողմից պետք է մասնավոր մանդատ տրվի պետություններից մեկին, որն իր օժանդակությամբ պիտի ընծայի Հայաստանին՝ փոխանցման մի ժամանակաշրջանի համար: Այդ պաշտոնն ստանձնող պետության ընտրությունը պիտի լինի Համախորհուրդ Հայկական Համագումարի հետ, որ այժմ գումարված է Փարիզում և որը ներկայացնում է ամբողջ Հայ ազգը: Մանդատի տևողությունը լինելու է առնվազն 20 տարով:

4. Հատուցում ջարդերի, հափշտակությունների և ավերումների, պատճառած վնասների համար:

5. Մանդատ առնող պետությունը պետք է ստիպի թուրքերին՝ պարպել Հայկական Հողերը, ձեռնարկի բնակչության ընդհանուր զինաթափություն, պատժի ջարդարարներին ու հայերի վերաբերմամբ անիրավություն գործողներին, երկրից հեռացնի կարգը խանգարող տարրերին, իրենց տեղերն ուղարկի մուհաջիրներին և այլն: Հայկական ծագում ունեցող յուրաքանչյուր անհատ, որ հաստատվել է կամ բնիկ դարձել օտար երկրում, պետք է լինի ազատ հինգ տարվա ընթացքում ընտրելու նոր հպատակություն, թե իր և թե իր անչափահաս զավակների անունով և դառնա հայ քաղաքացի՝ նախապես գրավոր կերպով տեղեկացնելով երկու երկրների ձեռնհաս իշխանություններին» [6, 526]:

1919 թ. մայիսի 14-ին Փարիզի խաղաղության կոնֆերանսը որոշում ընդունեց Հայաստանի մանդատը ԱՄՆ-ին տալու մասին [6, 530]:

Այդ որոշման 22-րդ հոդվածը սահմանում էր, որ մանդատային կառավարում իրականացվում է այն գաղութների և տարածքների նկատմամբ, որոնք պատերազմի հետևանքով դադարել են լինել մինչ այդ իրենց կառավարող պետությունների տիրապետության տակ և որոնք բնակեցված են իրենց ինքնուրույն ղեկավարելու դեռևս անընդունակ ժողովրդով:

Երբ խաղաղության կոնֆերանսն ընդունեց վերոհիշյալ որոշումը,

ԱՄՆ-ի նախագահ Վիլսոնը Հայաստան ուղարկեց մի հանձնախումբ գեներալ Հարբորդի գլխավորությամբ՝ հրահանգավորելով. «Մենք ցանկանում ենք, որպեսզի դուք տեղում հետազոտեք քաղաքական, ռազմական, աշխարհագրական, վարչական, տնտեսական և այլ պայմանները, որոնք կարող էին ներկայացնել իսկական հետաքրքրություն Ամերիկայի համար» [6, 200]: ԱՄՆ-ի ղեկավար շրջանների կարծիքն այն էր, որ իրենց երկիրը պետք է վերցնի Հայաստանի մանդատը, սակայն նրանք գծում էին այն Հայաստանի սահմանները, որն ընդգրկում էր մոտ 100.000 կմ տարածք և ելք ուներ դեպի Սև, Կասպից և Միջերկրական ծովերը: Այսպիսի սահմանագծմանը համաձայն չէր Անգլիան, որը ցանկանում էր ԱՄՆ-ին պարտադրել Հայաստանի մանդատը նրա այդ պահին գոյություն ունեցած սահմաններում:

Սրան զուգահեռ նաև նախագահ Վիլսոնը 1919 թ. օգոստոսի 21-ին Թուրքիայի կառավարությանը նոտա հղեց հետևյալ բովանդակությամբ. «... եթե անմիջական և արդյունավետ միջոցներ ձեռք չառնվեն կանխելու ջարդերը կամ նման սարսափներ, որոնք կատարվում են թուրքերի, քրդերի և այլ մուսուլմանների կողմից հայերի նկատմամբ Կովկասում կամ այլուր, ապա ներկայիս Օսմանյան կայսրության թուրքական շրջանների ինքնիշխանության ապահովմանը վերաբերող բոլոր որոշումները, ըստ Վերսալի խաղաղության պայմանագրի 12-րդ հոդվածի, ետ կվերցնեն, և դա առաջ կբերի թուրքական կայսրության լիակատար քայքայում և խաղաղության պայմանագրի լիակատար փոփոխություն: Եթե թուրքերը պատճառաբանեն, թե նման պատահարների վրա իրենք հսկողություն չունեն, ապա կմատնանշվի, որ եթե նրանք հույս ունեն կայսրության որևէ շրջանի նկատմամբ ինքնիշխանություն կիրառել, ապա պետք է ցույց տան, որ ոչ միայն կամենում են, այլև, ավելին, ի վիճակի են ետ պահել իրենց ազգակիցներին և կրոնակիցներին գազանություններ գործելուց» [5, 208]:

ԱՄՆ-ի ռազմական դեպարտամենտը 1919 թ. օգոստոսի 25-ի դրությամբ Թուրքահայաստանում ռազմական նախապատրաստությունների մասին անգամ քննարկումներ չէր անցկացրել: Սա հավաստվում է 1919 թ. օգոստոսի 25-ին Անգլիայի արտաքին գործերի նախարար Քերզոնին ԱՄՆ-ում Անգլիայի դեսպան Լինդսեյի հղած նամակով:

Մինչդեռ Հայաստանում դաշնակից տերությունների գերագույն կոմիսար, ամերիկյան գնդապետ Ուիլյամ Հասկելը 1919 թ. օգոստոսի 29-ին դաշնակիցների խորհրդին տանգնապալի հեռագիր էր ուղարկել, որտեղ նշված էր, որ «... բացարձակապես անհրաժեշտ է զորքեր ուղարկել

Հայաստան՝ փոխարինելու էվակուացվող բրիտանական զորքերին՝ փրկելու համար բնակչությանը կործանումից»: Հասկելի նամակից 2 օր հետո Անգլիայի վարչապետ Բալֆուրը նույն երկրի արտաքին գործերի նախարար Քերզոնին խոստովանեց, որ «...այն ամենը, ինչ բրիտանացիները կարող են անել, բողոքելն է, որ ոչ նրանց բանակի և ոչ էլ գանձարանի վիճակը թույլ չի տալիս իրենց միակ գումարտակը պահել Կովկասում, թեև ամեն մի հայկական պարանոց պիտի կտրվի իրենց հեռանալու պատճառով» [5, 210]:

Ինչպես տեսնում ենք, Մեծ Բրիտանիան ևս քաջատեղյակ էր հայերի կացությանը, լիովին տիրապետում էր տիրող իրավիճակի մասին տեղեկատվությանը, բայց համապատասխան ուժեր չուներ կամ չէր ցանկանում կենտրոնացնել այս տարածաշրջանում հայերին կոտորածներից փրկելու համար, քանի որ տվյալ պահին դա չէր բխում իր դիվանագիտական և տնտեսական շահերից:

Հայաստանի մանդատի ստանձնման հնարավորությունների ուսումնասիրման ամերիկյան հանձնաժողովը՝ գեներալ Հարբորդի ղեկավարությամբ արդեն 1919 թ. հոկտեմբերի 17-ին ներկայացրեց իր եզրակացությունը, որի համաձայն՝ թուրքերի կողմից կովկասյան հայերին սպառնացող կոտորածի վտանգ չկար, իսկ ինչ վերաբերում է Հայաստանի մանդատի ընդունմանը ԱՄՆ-ի կողմից, ապա հնարավոր է միայն ԱՄՆ-ին Կ. Պոլսի և նեղուցների, Անատոլիայի և Հայաստանի միասնական մանդատ տրամադրելու դեպքում [5, 219]:

1919 թ. հոկտեմբերի 14-18-ը Անդրկովկասում բրիտանական գերագույն կոմիսար Ուորդրոպը եղավ Հայաստանում, այցելեց նրա ղեկավարությանը, շրջագայեց երկրում և հոկտեմբերի 19-ին Քերզոնին հեռագրեց. «Հայաստանն ամենից առավել բաղձում է, որպեսզի մանդատը տրվի Մեծ Բրիտանիային, եթե դա ձախողվի Մեծ Բրիտանիային և Ամերիկային համատեղ, եթե մենք չկարողանանք վերցնել այն, միայն՝ Ամերիկային: Բոլոր դեպքերում, մանդատն իրականացնողները պետք է լինեն բրիտանացիները» [5, 220]:

Հայաստանի մանդատատիրոջ փնտրտուքի ճանապարհին կատարվեց ուշագրավ հայտնություն. 1919 թ. նոյեմբերի 20-ի ստորագրությամբ, բայց դեկտեմբերի 10-ին խաղաղության կոնֆերանսին ներկայացվեց մի հուշագիր, ստորագրված ողջ հայության անունից, Փարիզում վերջինիս ներկայացուցիչ Հ. Օհանջանյանի և քուրդ Շերիֆ փաշայի կողմից, որով հայտնվեց, որ հայերն ու քրդերը ունեն նույն բաղձանքներն ու շահերը և պահանջում են ազատություն Թուրքիայից մեկ մանդատատեր պետու-

թյան հովանու ներքո Միացյալ անկախ Հայաստան և Քուրդիստան ստեղծելու համար: Սա կարող էր պայմանավորված լինել նրանով, որ տվյալ շրջանում հայերը հաճախակի էին համագործակցության եզրեր փնտրում քրդերի հետ, իսկ քուրդ փաշաները պահանջ էին ներկայացնում, որ կօգնեն հայերին, եթե նրանք հայկական հարցի հետ միասին գերտերություններին ներկայացնեն նաև քրդերի շահերը:

Շուտով ստացվեց Հայաստանի մանդատի ընդունման հարցը տեղում ուսումնասիրած ամերիկյան առաքելության ղեկավար, գեներալ Հարբորդի ամփոփում-զեկուցագիրը: Այն տրվեց ԱՄՆ-ի նախագահին, կառավարությանը, Կոնգրեսին, հրապարակվեց մամուլում, ուղարկվեց եվրոպական տերություններին, դաշնակիցների խորհուրդ և միջազգային լայն ու հակասական քննարկումների առարկա դարձավ:

Զեկուցագիրը բաղկացած էր 13 հատորներից: Հայաստանի ամերիկյան մանդատի արժեքը գնահատված էր 756 միլիոն դոլար 5 տարվա համար, որի վերջում մանդատն ինքնաբավ կդառնար: Նախապես 59.000 ամերիկյան զինվոր էր պահանջվում Հայաստանը արտաքին հնարավոր ներխուժումից պաշտպանելու համար, որը որոշ դեպքերի զարգացման դեպքում (ակնարկվում էր թուրք-բոլշևիկյան ագրեսիան) կհասներ մինչև 200.000-ի: Այս ամենը միայն Հայաստանի համար, ըստ զեկուցագրի շատ էր համարվում: Այնտեղ առաջարկվում էր այդ մանդատի մեջ, Հայաստանից բացի ներառել նաև Կ. Պոլիսն իր նեղուցներով, Անատոլիան և Անդրկովկասը, իսկ Եվրոպական Թուրքիան հանել թուրքական հսկողության տակից: Զեկուցագիրը ձեռնպահ էր մնացել որևէ հատուկ հանձնարարությունից՝ ԱՄՆ-ը մանդատը պետք է ընդունի, թե՞ ոչ:

Նշվում էր, որ Անգլիան հավասարապես կարող էր ԱՄՆ-ի հետ վարել մանդատը, բայց, միաժամանակ, կարծիք էր հայտնվում, որ բրիտանական համատեղությունը մանդատակրությանը հայերին կարող է ձեռք չտալ. «Այն մշտական հավանականության առումով, որ բրիտանական քաղաքականությունը կուլ է գնում մուսուլմանական շահերին» [5, 221]:

1920 թ. մայիսի 24-ին նախագահ Վուդրո Վիլսոնը նամակ հղեց ԱՄՆ-ի Կոնգրեսի զույգ պալատներին ԱՄՆ-ի կողմից Հայաստանի մանդատը ընդունելու մասին՝ հայտարարելով. «Ի պատասխան Սան Ռեմոյի խորհրդի խնդրագրի, հորդորում և պահանջում եմ Կոնգրեսին անհետաձգելիորեն թույլատրել ընդունելու Հայաստանի մանդատը...» [5, 223]:

Հարցը նախ քննարկվեց ԱՄՆ-ի Կոնգրեսի Արտաքին Հարաբերությունների հանձնախմբում, որն էլ 1920 թ. մայիսի 27-ին 11 կողմ և 4 դեմ ձայների հարաբերությամբ մերժեց նախագահ Վիլսոնի առաջարկու-

թյունը ԱՄՆ-ի կողմից Հայաստանի մանդատն ընդունելու վերաբերյալ և իր այդ որոշումն ուղարկեց ԱՄՆ-ի Սենատ վերջնական քննարկման համար: Այդ հանձնախումբը, փաստորեն, վճռորոշեց Սենատի կողմից Հայաստանի մանդատի ընդունման տապալումը: Հանձնախմբի այդ որոշման բովանդակությունը հետևյալն էր. «Վճռված է Սենատի կողմից: Կոնգրեսը սույնով հարգանոք հրաժարվում է թույլատրել ընդունելու Հայաստանի մանդատը, ինչպես առաջարկված է նախագահի 1920 թ. մայիսի 24-ի նամակում» [4, 35]:

Այս որոշման օգտին քվեարկել էին 10 հանրապետական և 1 դեմոկրատ սենատորներ, իսկ դեմ քվեարկած բոլոր 4 սենատորներն էլ դեմոկրատներ էին:

Ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ Հայաստանի մանդատի չընդունումը ԱՄՆ-ի Կոնգրեսի Սենատի կողմից ուներ օբյեկտիվ պատճառներ՝

1. Առաջին համաշխարհային պատերազմի արդյունքում Մեծ Բրիտանիան տիրացավ Ասիայի օգտակար հանածոներով, հատկապես՝ նավթով և գյուղատնտեսության համար բերրի հողերով հարուստ հիմնական տարածքներին: Մեծ Բրիտանիան նաև տիրացել էր Հայաստանին ու Անդրկովկասին՝ Բաքվի նավթային հարուստ պաշարներն օգտագործելու համար, բայց քաջատեղյակ լինելով 1918-1919 թթ. արագորեն ձևավորված թուրք-բոլշևիկյան ահռելի ուժ ունեցող դաշինքի կողմից Անդրկովկասը զավթելու անխուսափելիության մասին, 1919 թ. ընթացքում լքեց Անդրկովկասն ու Հայաստանը և վերջինիս մանդատային կառավարումն առաջարկեց ԱՄՆ-ին՝ քաջ գիտակցելով դրա անհնարինությունը վերջինիս համար: Եթե ԱՄՆ-ը ընդուներ Հայաստանի մանդատը և ամբողջ Անդրկովկասի մանդատը, այն 6 ամիս հետո պարտավորված էր լինելու դիմակայել Հայաստանի վրա թուրք-բոլշևիկյան հարձակմանը, որի արդյունքում 1920 թ. դեկտեմբերին ՀՀ-ը բռնազավթվեց վերջիններիս կողմից և 1921 թ. մարտի 21-ի՝ Մոսկվայի, ապա նույն թվականի հոկտեմբերի 13-ի Կարսի պայմանագրերով բաժանվեց նրանց միջև [6, 533]:

Գերտերությունները իբրև մտահոգված էին Հայաստանի ճակատագրով, սակայն նրանք չէին ցանկանում գործնական քայլեր ձեռնարկել: Հայաստանի մանդատը ստանձնելու հարցում ԱՄՆ-ի միակ գործնական քայլը գեներալ Հարբորդի առաքելությունն էր Հայաստանում, որը հայտնեց, որ «Հայերի համար՝ թուրքերի կողմից, կոտորածի սպառնալիք չկա»:

Հայերը մեծ հույսեր էին կապում Փարիզի խաղաղության կոնֆերանսի հետ, սակայն անգամ հայկական պատվիրակություններին թույլ չտվեցին մասնակցել կոնֆերանսին, որին հրավիրված էին Նիկարագուայի, Հոնդուրասի և այլ երկրների ներկայացուցիչներ, որոնք ոչ կռվել էին, ոչ էլ զոհեր ունեցել:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Գալոյան Գ., Հայաստանը և Մեծ տերությունները 1917-1923 թթ., Երևան, 1999:
2. Եսայան Ա., Հայաստանի միջազգային իրավական դրությունը, Երևան, 1967:
3. Հայոց պատմություն, ակադ. հրատ., հ. 4, Երևան, 2010:
4. Հովհաննիսյան Ռ.Գ., «Հայաստանի Հանրապետություն», Երևան, 2005:
5. Սահակյան Ա. Ցավալի պայմանագրեր, Երևան, 2007:
6. Վրացյան Ս., Հայաստանի Հանրապետություն, Երևան, 1993:

Вопрос о мандате Армении на Парижской мирной конференции

Шахбазян Сирануш
ВГУ, История, Магистратура, 2-ой курс

Резюме

Ключевые слова: *Вудро Вильсон, Совет десяти, миссия Харборда, Сенат США*

Сверхдержавы, казалось, были обеспокоены судьбой Армении, но они не желали предпринимать никаких практических шагов. Единственным практическим шагом США в принятии на себя мандата Армении была миссия генерала Харборда в Армении, которая сообщила, что «нет угрозы резни, угрожающей кавказским армянам со стороны турок».

Армяне возлагали большие надежды на Парижскую мирную конференцию, но даже армянские делегации не были допущены к участию в конференции, а были приглашены представители Никарагуа, Гондураса и других стран, которые ни воевали, ни жертвовали.

The Case of the Mandate of Armenians at Paris Peace Conference

Shahbazyan Siranush
VSU, History, MA the 2nd course

Summery

Key words: *Vodrow Vilson, Council of ten, Harbord Mission, U.S. Senate*

The superpowers seemed to be concerned about the fate of Armenia, but they were unwilling to take any practical steps. The only practical step taken by the US in assuming the mandate of Armenia was the mission of General Harbord to Armenia, which reported that “there is no threat of massacre threatening the Caucasian Armenians by the Turks”.

The Armenians had high hopes for Paris Peace Conference, but even the Armenian delegations were not allowed to participate in the conference, and representatives of Nicaragua, Honduras and other countries were invited, who neither fought nor sacrificed.

1927թ. մարտ-ապրիլ ամիսներին Չինաստանի «արյունոտ» իրադարձությունների լուսաբանումը հյուսիսկովկասյան «Մուրճ-մանգաղ» պարբերականի էջերում

Չոփուրյան Լուսինե
ՎՊՀ, Պատմություն, մագիստրատուրա 2-րդ կուրս
*Գիտական դեկավար՝պ. գ. թ., դոցենտ **Մ. Աղաջանյան***

Հանգուցային բառեր. *Հյուսիսային Կովկաս, Գոմինդան, Չան Կայշի, «Մուրճ-մանգաղ», Ազգային հեղափոխական բանակ (ԱՀԲ), Չինաստանի Կոմունիստական Կուսակցություն, քաղաքացիական պատերազմ, իմպերիալիստական երկրներ*

Հյուսիսային Կովկասում խորհրդային կարգերի հաստատումից հետո հայ բոլշևիկները և նրանց կողմից ստեղծված կառույցները երկրամասի հնաբնակ ու գաղթական հայության շրջանում խորհրդային գաղափարներ տարածելու նպատակով ակտիվ քարոզչություն սկսեցին: Այդ նպատակին ծառայեցվեցին երկրամասում վերաբացված հայկական թերթերը՝ «Բանվորի ձայն», «Բանվորի կարիք»՝ Արմավիրում, «Կարմիր աստղ»՝ Եկատերինոդարում (Կրասնոդար), «Մուրճ-մանգաղ»՝ Նոր Նախիջևանում և այլն[1, 73-74]: Վերջինս հանդիսանում էր ՀամԿ(բ)Կ Հյուսիսային Կովկասի երկրամասային և Դոնի կոմիտեների Հայկական բյուրոների, հետագայում նաև՝ Մյասնիկյանի շրջանային խորհրդի գործկոմի օրգանը: «Մուրճ-մանգաղ» հայալեզու շաբաթաթերթը հրատարակվեց 1925-31 թթ. (խմբագիրներ՝ Ազատ Վշտունի, Ն. Զարգարյան, Մ. Գրիգորյան, Ա. Թումանյան, Վ. Ծովյան)՝ լուսաբանելով ոչ միայն Հյուսիսային Կովկասի հայության գործունեությունը, այլև կոմկուսի գաղափարախոսություն շրջանակներում երկրամասի բնակչությանը հաղորդելով միջազգային-քաղաքական բնույթի լուրեր, այդ թվում՝ կոմինտերնի հաջողությունների մասին Արևմտյան երկրներում և Չինաստանում [2]:

1920-ականների կեսերից Չինաստանի ողջ տարածքում մոլեգնող քաղաքացիական պատերազմը, Չինաստանի Կոմունիստական Կուսակցության (ՉԿԿ) և Գոմինդանի միջև անհամաձայնությունները, ինչպես նաև իմպերիալիստական երկրների էքսպանսիան այդ երկրի տարածքում գտնվում էին համաշխարհային մամուլի ուշադրության կենտրոնում: Չինաստանում տեղի ունեցող իրադարձությունների լուսաբանումից անմասն չմնաց նաև «Մուրճ-մանգաղ»-ի խմբագրությունը: Պարբերականի «Շաբաթվա քաղաքական անցքեր» խորագրի ներքո մանրամասն

լուսաբանվում են Չինաստանում հեղափոխության ընթացքի վերաբերյալ տարբեր պաշտոնական աղբյուրներից ստացվող տեղեկությունները: 1927 թ. սկսած, պայմանավորված Գոմինդանի կազմի մեջ չին կումունիստների ներգրավումով և Հյուսիսի միլիտարիստական խմբավորումների դեմ մղվող պայքարի ուժգնացմամբ, թերթը՝ «Անցքերը Չինաստանում» առանձին խորագրի ներքո սկսեց ներկայացնել Չինաստանից ստացվող հրատապ լուրերը [3, 1-2]: Հարավային բանակի առաջխաղացումների մասին Տասսի, շանհայան պարբերականների և Չինաստանում լույս տեսնող այլ թերթերից ստացվող տեղեկությունները տեղ են գտնում «Մուրճ-մանգաղի» տարբեր համարների առաջին էջերում: Խորհրդային շրջանային մարմնի օրգան հանդիսացող այս թերթը իր բաժանորդագիրներին չէր կարող օբյեկտիվորեն ներկայացնել Չինաստանում տեղի ունեցող քաղաքացիական պատերազմի իրական պատկերը և այն քայքայիչ գործունեությունը, որ Գոմինդանի շարքերում վարում էին կոմինտերնի խորհրդականներ Բորոդինը, Վոյտինսկին, Բլյուխերը և այլոք: Փոխարենը՝ պարբերաբար հաղորդվում էին լուրեր Ազգային հեղափոխական բանակի (ԱՀԲ) հաջող մարտերի մասին և այդ հաղթանակներում կարևորվում էր կոմունիստների մասնակցությունը: Թերթի խմբագրությունը առիթը բաց չի թողնում Չինաստանում ժողովրդական ուժերի կրած անհաջողություններում մեղադրել իմպերիալիստական երկրներին: Մասնավորապես, 1927 թ. մարտի 13-ի համարում թերթը գրում է, որ «*Ազգային հեղափոխան բանակի մոտենալը Շանխային և հակահեղափոխական Սուն-Չուան-Փանի բանակի լիակատար պարտությունն ու կազմալուծումը մեծ անհանգստություն է պատճառել յեվրոպական իմպերիալիստներին: Անգլիական զորաբանակի թիվը հասնում է 10-15 հազարի, վորը կազմ ու պատրաստ սպասում է խառնվելու քաղաքացիական կռվին: Բացի անգլիացիներից, Շանխայում դեսանտ են հանել նաև Ճապոնիան, Ֆրանսիան, Իտալիան և Ամերիկան*» [4, 1-2]:

«Կանտոնցիները մոտենում են Շանխային», «Մեծ գործադուլ է սպասվում» և «ԽՍՀՄ-ն Չինաստանի բարեկամն է» առանձին վերնագրերի ներքո պարբերականի նույն համարում տարբեր աղբյուրներից ստացված հաղորդագրություններ ենք կարդում Շանհայում ու նրա մերձակայքում ընթացող մարտերի և սպասվելիք գործադուլի վերաբերյալ: Տպագրվում է անգամ Շանհայում տարածված թռուցիկների բովանդակությունը. «*1) Պատրաստել նոր ընդհանուր գործադուլ, վորին պիտի մասնակցեն բանվորները, ուսանողները, առևտրականները և այլն 2) Կազմել ժողովրդական պատգամավորների կոմիտե, վորը պիտի*

վերցնի իշխանությունը և 3) Աջակցել ազգային հեղափոխական բանակին և ազգային կառավարության» [4, 3]:

Շանհայը 1920-ականների կեսերին Չինաստանի գլխավոր նավահանգստային քաղաքն էր՝ 1,5 միլիոն բնակչությամբ: Օտարերկրյա կապիտալն այստեղ ծաղկում էր ապրում, բրիտանացիներն իրենց համարում էին Յանցզիի ափամերձ հարուստ շրջանների սեփականատերեր: Սոցիալական պառակտումն արտահայտվում էր ոչ միայն քաղաքի չինական և օտարերկրյա բնակիչների թաղամասերի, այլև բուն չինական հասարակության տարբեր բևեռների միջև: Դա մի ժամանակաշրջան էր, երբ, օգտվելով ուժեղ կենտրոնացված իշխանության բացակայությունից, Շանհայի կապիտալիստներն ստեղծեցին իրենց անկախ կազմակերպությունները, տիրացան բանկերին ու ձեռնարկություններին, ստեղծեցին մաֆիոզ կլաններ [5, 18-20]: Տիրել Շանհային նշանակում էր տիրել ողջ Չինաստանին, այդ է պատճառը, որ ԱՀԲ զորքերը 1927 թ. մարտին մոտեցել էին Շանհայի մատույցներին և պատրաստվում էին գրավել քաղաքը: Մարտի 21-ին Շանհայում ժողովրդական ապստամբություն է բռնկվում, որն ավարտվում է գործադուլավորների հաղթանակով: Մարտի 22-ին չին բանվորների կողմից արդեն ազատագրված թաղամասեր են մտնում ԱՀԲ-ի ջոկատները, բարեբախտաբար, օտարերկրյա մեծաքանակ զորքերի հետ բախումներ տեղի չեն ունենում [6, 133-134]:

«Մուրճ-մանգաղի» 1927թ. մարտի 27-ի համարը մի քանի հոդվածներով անդրադառնում է վերը նշված իրադարձություններին՝ այն ներկայացնելով, գլխավորապես, չին կոմունիստների հաղթանակ իմպերիալիստական կլանների դեմ: Ընդ որում, որպես տեղեկատվական աղբյուր պարբերականը հենվում է բացառապես պաշտոնական լուրերին՝ հղում կատարելով ժամանակի արտասահմանյան այնպիսի հայտնի թերթերին ինչպիսիք են «Դեյլի-Մեյլ», «Դեյլի Նյուզ», «Մանչեսթեր Գարդիան», «Վեստմինսթեր Գազեթ» պարբերականները: «Մուրճ-մանգաղի» նույն համարում զուգահեռաբար ներկայացվում է մարտի 21-ին տեղի ունեցած շանհայան ժողովրդական ապստամբության արձագանքները արևմտյան մամուլում, անգլիական կառավարության ձեռնարկած քայլերն ու կոչերը, և պաշտոնական Մոսկվայի պատասխանն ու ռուսական առաջատար լրագրերի արձագանքները: «Անգլիական մամուլի ձայնը» վերնագրի ներքո թերթը մեջբերում է. «*Մեկնաբանելով Շանհայի գրավումն ազգային զորքերի կողմից, ռեակցիոն «Դեյլի-Մեյլ» լրագիրը գրում է.-«Ամենամեծ վտանգը բայշևիկներն են, վորոնք կանտոնցիներին գրգռում են անգլիացիների դեմ*»»: Անմիջապես, «Արձագանքում են» վերնագրի տակ թերթը

հրապարակում է Մոսկվայի արձագանքը. «*Մոսկվայի բանվորները մեծ ուրախությամբ իմացան Շանհայի գրավման լուրը…*» [7, 1]:

Հյուսիսկովկասյան պարբերականի ապրիլ-մայիսյան համարներում ոչինչ չի ասվում Գոմինդանի շարքերում տեղի ունեցած պառակտման և այդ կուսակցության շարքերում կոմինտերնի քայքայիչ գործունեության մասին: Պատճառը ոչ միայն խորհրդային գրաքննությունն ու սոցիալիստական գաղափարախոսությանը նվիրված լինելն է, այլև այդ մասին տեղեկատվության բացակայությունը, քանզի նման գործընթացները գաղտնի էին կատարվում: Դեռևս մարտի 10-17-ը Ուհանում անցկացված Գոմինդանի Կենտկոմի 3-րդ համաժողովի արդյունքում կանտոնյան բանակի գեներալ Չան Կայշին զրկվել էր կուսակցական բոլոր բարձր պաշտոններից, այդ թվում՝ Քաղխորհրդի Կենտրոնական Գործադիր Կոմիտեի նախագահի պաշտոնից: Բորոդինը գեներալ Չեն Ցզյանին գաղտնի հրամայել էր առաջին իսկ հնարավորության դեպքում ձերբակալել Չանին [6]: Այս մասին թերթը լռում է, փոխարենը 1927 թ. ապրիլի 3-ի համարում «Արյան բաղնիք Նանկինում» ընդհանուր վերնագրի ներքո հաղորդվում է անգլիական ռազմաօդային ուժերի կողմից Նանկինի ռմբակոծության և 7000-ից ավել զոհերի ու վիրավորների մասին: Թերթը մեջբերում է Չան Կայշիի վրդովմունքը կատարվածի հանդեպ, որը նա հայտնել է օտարերկրյա լրագրողներին. «*Մարտի 28-ին Չան Կայ-Շին զրույց արեց օտարյերկրյա լրագրների թղթակիցների հետ: Զրույցի վերջում նա հայտարարեց, թե Նանկինի ռմբակոծումը շատ մեծ զայրույթ է առաջ բերել չին ժողովրդական մասսաների մեջ*» [8, 1]:

1927 թ. մարտ-ապրիլ ամիսներին քաղաքացիական պատերազմի շրջանակներում ապրիլի 12-ին Շանհայում Գոմինդանի չանկայշինյան թևի կողմից նախադեպը չունեցող հաշվեհարդար է տեղի ունենում տեղի բոլշևիկների նկատմամբ: Գոմինդանի պառակտման արդյունքում ներկուսակցական պայքարում Կայշին դիմում է իր «հին բարեկամներ» «Կանաչ կլան» մաֆիայի աջակցությանը, բացի դրանից, համագործակցելով շանհայան հարուստ բիզնեսմենների հետ, երեք միլլիոն դոլարի օժանդակություն ստանում նրանցից: Շանհայական մաֆիայի միջնորդությանբ Չան Կայշին ստացավ իմպերիալիստական երկրների աջակցությունը և քաղաքում սկսեց հաշվեհարդարը կոմկուսի կողմնակիցների ու անհնազանդների հետ: Ներքին թշնամու դեմ պայքարի պատրվակով ապրիլի 12-ին Կայշին իրական մարդկային սպանդ սանձազերեց Շանհայում ու հարակից շրջաններում, զնդակահարվեցին հազարավոր կոմունիստներ [5, 20]: Այդ օրերի իրադարձությունների մասին հետագայում

Կայշին սառնասրտորեն գրում է. «Պետք է խոստովանեմ, որ բազմաթիվ անմեղ զոհեր եղան...: Մենք շատ թանկ վճարեցինք դրա համար, բայց միայն դրանից հետո կարելի էր ասել, որ մենք իրադրության տերերը դարձանք Շանհայում» [9, 78-79]:

Ապրիլյան այս իրադարձությունների ֆոնին տեսնում ենք «Մուրճ-մանգաղի» արձագանքն անմիջապես ապրիլի 17-ի համարում: «Ընկնավորի ջղաձգությունները» հոդվածում հեղինակը Պեկինի և Շանհայի արյունահեղությունների համար մեղադրում է առաջին հերթին Անգլիայի կառավարության ղեկավար Չեմբեռլենին, ասելով, որ. «*Մինիստեր Չեմբեռլենի մինիստրական կաբինետը ինտրիգների, ստոր դավադրությունների, կեղտոտ մեքենայությունների և պրովակացիաների մի մութ վորջ է դարձել: Պրովակացիաների շարքումը ամենացինիկը Պեկինի և Շանհայի խորհրդային դիվանագիտական ներկայացուցչության անձեռնամխելիության խախտումն էր, վորը կատարեց Մանջուրիայի հակահեղափոխական գեներալ Չժան-Ցո-Լինը, գլխավորապես անգլիական կառավարության թելադրանքով*» [10, 1]: Արդեն թերթի երկրորդ էջում մեղադրանքներ են հնչում գեներալ Չան Կայշիի հասցեին, ում թերթը մեղադրում է հեղափոխության գաղափարներին և սեփական ազգին դավաճանելու մեջ: Թավ, խոշոր տառերով կարդում ենք հետևյալ վերնագրերը. «ՉԱՆ-ԿԱՅ-ՇԻՆ-ՉԻՆ ՊՐՈԼԵՏԱՐԻԱՏԻ ԴԱՀԻՃ», «ՉԺԱՆ-ՑԶՈԼԻՆՅԱՆ ՀՐՈՍԱԿՆԵՐԻ ՉԼՍՎԱԾ ՀԱՆԴԳՆՈՒԹՅՈՒՆԸ», «ՀԱՐՁԱԿՈՒՄ ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ԴԵՊԱՆՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ՇԵՆՔԵՐԻ ՎՐԱ ՄԵՐ ԲՈՂՈՔԻ ՆՈՏԱՆ ՊԵԿԻՆԻՆ», «ԻՄՊԵՐԻԱԼԻՍՏՆԵՐԻ ՊՐՈՎԱԿԱՑԻԱՆ- ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԽԱՂԱՂ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆ ԱՆԽԱԽՏ Ե ՄՆՈՒՄ» «ՉԱՆ ԿԱՅՇԻՆ ԴԱՎԱՃԱՆԵՑ» [10, 2]: Թերթի նշված համարի այլ բաժիններում ևս քննադատական հոդվածներ են հրապարակվում ապրիլյան դեպքերի կապակցությամբ՝ «Կանայք Չինաստանի մասին», «Կաշվեգործները չինական դեպքերի մասին» վերնագրերով [10, 4], իսկ գրական անկյուն բաժնում հրապարակվում է Աթոյան ազգանունով հեղինակի «Չին կոմսոմոլին» բանաստեղծությունը [10, 6]: Թերթը հայտնում է, որ մինչև ստեղծված իրադրության հանգուցալուծումը և իր կողմից դրված պահանջների կատարումը, խորհրդային կառավարությունը առժամանակ ետ է կանչում Չինաստանի հյուպատոսարանի իր աշխատակիցներին:

Շաբաթաթերթի հաջորդ համարում՝ ապրիլի 12-ի արյունոտ դեպքերի հետ կապված տպագրվում է Չան Կայշիի որդու մեղադրական

խոսքն՝ ուղղված հորը. «*Չան-Կայ-Շին յեղել է իմ հայրն ու բարեկամը, իսկ հիմա իմ թշնամին է*» [11, 1]:

1925-1931 թթ. Հյուսիսային Կովկասում հրատարակվող կուսակցական օրգան հանդիսացող «Մուրճ-մանգաղ» պարբերականը գրեթե միակ հասարակական-քաղաքական հայալեզու թերթն էր տարածաշրջանում: Կոմունիստական գրաքննության պայմաններում թերթի խմբագրությունը կարողանում էր արտասահմանյան մամուլից բխող հրատապ տեղեկատվություն ստանալ ու տպագրել իր էջերում: Չինաստանի քաղաքացիական պատերազմի շարունակական լուսաբանումը ասվածի վառ ապացույցն է: Պարբերականը արևմտյան լրագրերից ստացված Չինաստանին վերաբերող հաղորդագրությունները ընդունում է որպես փաստ, իսկ դրան զուգահեռ ներկայացնում կոմունիստական կուսակցության դիրքորոշումը՝ հղում կատարելով խորհրդային պարբերականներին, միևնույն ժամանակ, կովկասահայությանը իրազեկ պահելով ԱՀԲ հետագա առաջխաղացումների, իմպերիալիստների դեմ չին բանվոր դասակարգի պայքարի ընթացքի մասին:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Մինասյան Է., Մայիլյան Բ., Մխոյան Հ., Հյուսիսային Կովկասի հայկական համայնքները 20-րդ դարում. Պատմություն եվ մարտահրավերներ, Երևան, 2018, ԵՊՀ հրատ., 152 էջ, https://artsakhlib.am/
2. Акопян В. З. Национальные районы и их официальный язык (Армянские районы Северного Кавказа в 20-е годы), հոդված-http://ru.hayazg.info/
3. «Մուրճ-մանգաղ», 1927 թ., համար 76, հունիսի 19:
4. «Մուրճ-մանգաղ», 1927 թ., համար 57, մարտի 13:
5. Воронцов В., Судьба китайского Бонапарта, Москва, Политиздат 1989, 336 с.
6. Панцов А., Жизнь замечательных людей. Чан Кайши, Москва, Молодая гвардия 2019, 512 с.
7. «Մուրճ-մանգաղ», 1927թ., համար 59, մարտի 27:
8. «Մուրճ-մանգաղ», 1927թ., համար 60, ապրիլի 3:
9. Цзян Чжунчжен, Советская Россия в Китае, Москва, Посев 2009, 440 с.
10. «Մուրճ-մանգաղ», 1927թ., համար 62, ապրիլի 17:
11. «Մուրճ-մանգաղ», 1927թ., համար 63, ապրիլի 24:

Освещение китайских «кровавых» событий в марте-апреле 1927 г. на страницах газеты Северного Кавказа «Мурч-Мангах»

Чопурян Лусинэ
ВГУ, История, Магистратура, 2-й курс

Резюме

Ключевые слова: *Северный Кавказ, Гоминдан, Чан Кайши, «Мурч-мангах», Кавказ, Гоминдан, Чан Кайши, «Мурч-Мангах», Национально-революционная армия (НРА), Коммунистическая Партия Китая, гражданская война, империалистические страны*

После установления советской власти на Северном Кавказе армянские большевики и созданные ими структуры начали активную кампанию по распространению советских идей среди древних и изгнанных армян региона. Этой цели служили вновь открытые в регионе армянские газеты, в том числе периодическое издание «Мурч-Мангах». Последний был органом исполнительного бюро Донского комитета Северного Кавказа, позже Мясникянского областного совета. Еженедельник на армянском языке «Мурч-Мангах» издавался в 1925-31 гг. (редакторы: Азат Вштуни, Н. Заргарян, М. Григорян, А. Туманян, В. Цовян) освещая не только деятельность армян Северного Кавказа, но и донося до населения региона международно-политические новости в рамках идеологии Коммунистической партии, в частности, об успехах Коминтерна в Китае. В условиях коммунистической цензуры редакция газеты могла получать и публиковать на своих страницах срочную информацию из иностранной прессы. Непрекращающееся освещение гражданской войны в Китае является ярким тому подтверждением. Газета принимает за факты новости о Китае из западных газет и в то же время излагает позицию Коммунистической партии, ссылаясь на советскую периодику, при этом информируя кавказских армян о дальнейших походах воиск НРА, борьбе китайского рабочего класса против империалисов.

Coverage of the Chinese "Bloody" Events in March-April 1927 on the Pages of the Newspaper of the North Caucasus "Murch-Mangah"

Chopuryan Lusine
VSU, History, MA the 2nd course

Summery

Key words: *North Caucasus, Kuomintang, Chiang Kai-shek, Murch-mangah, National Revolutionary Army (NRA), Communist Party of China, civil war, imperialist countries*

After the establishment of Soviet power in the North Caucasus, the Armenian bolsheviks and the structures they created began an active campaign to spread Soviet ideas among the ancient and exiled Armenians of the region. This goal was served by the newly opened Armenian newspapers in the region, including the periodical Murch-Mangah. The latter was an organ of the executive bureau of the Don Committee of the North Caucasus, later the Myasnikyan Regional Council. The weekly in Armenian "Murch-Mangah" was published in 1925-31. (editors: Azat Vshtuni, N. Zargaryan, M. Grigoryan, A. Tumanyan, V. Tsovyan) covering not only the activities of the Armenians of the North Caucasus, but also bringing international political news to the population of the region within the framework of the ideology of the Communist Party, in particular, about successes of the Comintern in China. Under the conditions of communist censorship, the editorial office of the newspaper could receive and publish on its pages urgent information from the foreign press. The ongoing coverage of the Chinese Civil War is a stark example of this. The newspaper takes the news about China from Western newspapers as facts and at the same time sets out the position of the Communist Party, referring to Soviet periodicals, while informing the Caucasian Armenians about the further campaigns of the NRA troops, the struggle of the Chinese working class against the imperialists.

Թուրքական դիվանագիտությունը առաջին աշխարհամարտի նախօրյակին

Պապյան Իվետա
ՎՊՀ, Պատմություն, 4-րդ կուրս
*Գիտական դեկավար՝ պ. գ. թ. դոցենտ **Յու. Ղուլյան***

Հանգուցային բառեր. *Իտալա-թուրքական պատերազմ, հաշտություն, բալկանյան պատերազմ, Էնվեր փաշա, թուրք–գերմանական դաշնակցություն*

1911 թ. երիտթուրքական վարչակարգը մխրճվեց արտաքին քաղաքական լուրջ ճգնաժամի մեջ: Իտալիան անթաքույց ձգտում էր դրսևորում Օսմանյան կայսրությունից խլելու նրա աֆրիկյան վերջին տիրույթները՝ Տրիպոլիտանիան և Կիրենաիկան: 1911 թ. սեպտեմբերի 27–ին սկսվեց իտալա-թուրքական պատերազմ: Քանի որ Եգիպտոսը անգլիացիների բերանով հայտարարեց իր չեզոքության մասին, ուստի նա թույլ չտվեց, որ թուրքական զորքերը ցամաքով անցնեն Տրիպոլի: Ընդամենը յոթ հազարանոց տեղական թուրքական զորամասը ստիպված էր կռվել նորագույն զենքերով հիանալի զինված իտալական 56-հազարանոց բանակի դեմ: Իսկ Միջերկրական ծովում տիրապետում էր իտալական նավատորմը: Իտալացիները ռազմական ավիացիայի պատմության մեջ առաջին անգամ այդ պատերազմում օգտագործեցին ինքնաթիռներ [1, 626]:

Զգտելով ստիպել հակառակորդին, որ նա կնքի խաղաղություն, Իտալիան ռմբակոծման ենթարկեց Օսմանյան կայսրության նավահանգիստները՝ Բեյրութը և Իզմիրը: Իտալական զորքերը նաև ռազմակալման ենթարկեցին Դոդեկանեզյան կղզիները և ռմբակոծեցին Դարդանելի շրջանում թուրքական ամրությունները [4, 130]:

Պատերազմում թուրքերի կրած ջախջախիչ պարտությունները Ստամբուլում առաջ բերեցին կառավարական ճգնաժամ: 1911 թ. Նոյեմբերին ստեղծված «Ազատություն և համաձայնություն» («Հյուրրիեթ վե իթթիլյաֆ») կուսակցությունը բուռն քարոզչություն էր ծավալել իթթիհադականների դեմ: Ազատականների այդ նոր կուսակցության շարքերում կային նաև ոչ մահմեդականներ, այդ թվում նաև հայեր: Նրանց բոլորին միավորում էր մեկ ընդհանուր նպատակ՝ իթթիհադականների վարչակարգի տապալումը: Ակտիվ ընդդիմությունը ներկայացված էր նաև

«Փրկարար սպաներ» (Halaskar) խմբով, որը սերտ կապերի մեջ էր «Ազատություն և Համաձայնություն» կուսակցության հետ: «Փրկարար սպաների» նպատակը ևս նույնն էր. Ոչնչացնել իթթիհադականների իշխանությունը և ընտրությունների միջոցով ձևավորել «լեգիտիմ կառավարություն»: Ընդդիմադիր կուսակցությունների թվում էր նաև «Ահրար»-ը: Այդ միացյալ ուժերին հաջողվեց 1912 թ. Հուլիսին պետական հեղաշրջման միջոցով տապալել երիտթուրքերին:

1912 թ. օգոստոսին իթթիլյաֆականներին հաջողվեց ցրել նաև խորհրդարանը, որտեղ մեծամասնությունը պատկանում էր իթթիհադականներին [4, 132]:

Այսպիսով, երիտթուրքերը կրեցին պարտություն և ստիպված էին հեռանալ իշխանության ղեկի մոտից: 1912 թ. օգոստոսին նրանք Ստամբուլում գումարեցին կուսակցության հերթական համագումար, իրենց հետագա անելիքները որոշելու համար, որից հետո նրանց Կենտրոնական կոմիտեն կրկին տեղափոխվեց Սալոնիկ:

Օգտվելով այն հանգամանքից, որ Անգլիան ու Ֆրանսիան զբաղված են իտալա-թուրքական պատերազմով, իսկ Թուրքիայի վիճակն անբարենպաստ է, Կ. Պոլսի ռուսական դեսպան Չարիկովը Թուրքիայի առաջ կրկին բարձրացնում է Ռուսաստանին ձեռնտու պայմաններով վերանայելու նեղուցների հարցը: Ըստ Չարիկովի դեմարշի, նեղուցները պետք է բաց լինեն ռուսական ռազմանավերի համար: Նա առաջարկում էր նաև ստեղծել Բալկանյան պետությունների ֆեդերացիա՝ Թուրքիայի մասնակցությամբ: Այդ առաջարկները ձախողվում են Անգլիայի և Ֆրանսիայի ճնշման տակ, 1912-ին Չարիկովին ետ են կանչում: Նրա տեղը նշանակվում է Գիրսը [1, 627]:

Իտալա-թուրքական հաշտությունը կնքելու օրը սկսվեց առաջին բալկանյան պատերազմը մի կողմից Օսմանյան կայսրության և, մյուս կողմից, բալկանյան հարևան պետությունների՝ Բուլղարիայի, Հունաստանի, Սերբիայի և Չեռնոգորիայի կոալիցիայի միջև: Այդ պատերազմի համար առիթ ծառայեց այն, որ սուլթանական կառավարությունը հրաժարվեց ինքնավարություն տալ Մակեդոնիային և Թրակիային: Այդպիսով, անկախ բալկանյան կոալիցիայի պետությունների նպատակներից, այդ պատերազմը պայքար էր թուրքական տիրապետության տակ մնացած բալկանյան ժողովուրդների ազատագրության համար: Իթիլյաֆականները օգտվեցին ռազմական իրավիճակից, որպեսզի բռնություններ

կիրառեն իրենց քաղաքական հակառակորդների նկատմամբ: Զերբակալվեցին երիտթուրքերի ակտիվ շատ գործիչներ: Միաժամանակ փորձ կատարվեց ապահովելու տերությունների աջակցությունը, բայց այս անգամ դա ապարդյուն եղավ: Թուրքերը մի շարք խոշոր պարտություններ կրեցին դաշնակիցների զորքերի դեմ մղած մարտերում, իսկ այդ զորքերը շարժվում էին դեպի Ստամբուլ: Թուրքերին հաջողվեց բուլղարական զորամասերին կանգնեցնել միայն Չաթալջիի մոտ [2, 217]:

Ինչպես հայտնի է, Բալկանյան պատերազմների ժամանակ Ռուսաստանի նախաձեռնությամբ Հայկական հարցը կրկին բարձրացավ մակերես: Դա մեծագույն անհանգստություն պատճառեց երիտթուրքական կառավարությանը, մանավանդ որ այդ հարցը մեջտեղ էր հանվել և եռանդուն աջակցություն էր գտնում Թուրքիայի դարավոր թշնամու՝ Ռուսաստանի կողմից [1, 634]:

Բալկանյան պատերազմից հետո առավել քան երբևէ, Թուրքիան վճռականորեն իր հայացքը Արևմուտքից դարձնում էր դեպի Արևելք: Ամենուրեք տիրող մտայնություն էր դարձել «Անատոլիան վտանգի մեջ է» կարգախոսը: Իթթիհադի ականավոր գաղափարախոսներից մեկը՝ Աբդուլլա Ջևդեթը այդ առիթով գրում էր. «Մի խաբվեք, մեր մտահոգությունը եվրոպական Թուրքիայի նկատմամբ չի նշանակում, որ մենք չպետք է անհանգստանանք Անատոլիայի համար: Անատոլիան՝ դա մեր կյանքի յուրաքանչյուր մասնիկի աղբյուրն է: Դա մեր սիրտն է, գլուխը և այն օդը, որ մենք շնչում ենք»: Կասկածից վեր է, որ դա նաև քողարկված նախազգուշացում էր այն մասին, որ պետք է զգուշանալ Հայկական հարցից [1, 636]:

Չնայած նրան, որ իթթիհադականները հետևողականորեն պայքարում էին ընդդիմության դեմ, սակայն այն շարունակում էր գոյություն ունենալ, իսկ երբեմն նույնիսկ դիմում էր կտրուկ քայլերի:

1913 թ. վերջից Օսմանյան կայսրությունում հաստատվեց երիտթուրքական եռիշխանապետության (տրիումվիրատի) դիկտատուրա: Նա էր վճռում օսմանյան պետության ներքին և արտաքին քաղաքականության բոլոր հիմնական հարցերը: Կառավարման սանձերը գտնվում էին «Միասնություն և առաջադիմություն» կուսակցության երեք առավել արմատական գործիչների՝ Էնվերի, Թալաաթի և Ջեմալի ձեռքերում: Երիտթուրքերի ճնշման ներքո ռազմական մինիստր, մարշալ ԱՀմեդ Իզզեթ փաշան ստիպված էր հրաժարական տալ: Այդ կարևոր պաշտոնում

նշանակվեց Էնվերը։ հատկանշական է, որ այդ մասին սուլթան Մեհմեդ V–ը տեղեկացավ առավոտյան թերթերից, մինչդեռ նրա իրավասության մեջ էր մտնում բարձրագույն պետական պաշտոնյաների նշանակումը և նրանց ազատումը պաշտոնից։ Սուլթանը պարզապես ապշած էր։ «Դա հնարավոր չէ, չէ՞ որ նա դեռ շատ երիտասարդ է,- բացականչել էր նա։ Էնվեր փաշան զբաղեցրեց նաև բանակի գլխավոր շտաբի պետի պաշտոնը, դրանով իսկ ամբողջապես իր ձեռքերում կենտրոնացնելով ռազմական իշխանությունը։ Նրա ազդեցությունը պալատում ու կառավարության մեջ սրընթաց կերպով աճում էր։ Քիչ ավելի ուշ նա ստացավ բրիգադային գեներալի աստիճան և փաշայի տիտղոս։ 1914 թ. Ամուսնանալով սուլթանի եղբոր՝ իշխանազուն Սուլեյման էֆենդիի աղջկա՝ Նաջիե Սուլթանի հետ, դրանով իսկ Էնվեր փաշան ստացավ «դամադ» կոչումը, որը կրում էին սուլթանի փեսաները։ Փաստորեն տրիումվիրատի կազմում Էնվերը դարձավ առաջին դմքը [4, 366]։

Արտաքին քաղաքականության բնագավառում Էնվերը անվերապահորեն կողմնորոշվում էր դեպի Գերմանիան, մեծ համարում ունենալով գերմանական բանակի Հասրաթյան և ռազմական կառույցների նկատմամբ [2, 220]։

Եռիշխանապետության անդամ Թալաաթ փաշան բացի «Միասնություն և առաջադիմություն» կուսակցության կենտրոնական կոմիտեի նախագահի պաշտոնից զբաղեցնում էր նաև ներքին գործերի մինիստրի պաշտոնը։ Երիտթուրքական եռիշխանապետության երրորդ անդամ Ջեմալ փաշան հանդիսանում էր Ստամբուլի ոստիկանության պետը, իսկ 1914 թվականից սկսած զբաղեցնում էր ծովային մինիստրի պաշտոնը [1, 637]։

Այսպիսով, պետության բոլոր ուժային կառույցները գտնվում էին եռիշխանապետության անդամների ձեռքերում։

Իթթիհադական եռիշխանապետությանը հաջողվել էր ստեղծել համախոհների մի կուռ թիմ, որը կարող էր առանց որևէ դժվարության ընդունել իթթիհադական վերնախավի համար ձեռնտու ցանկացած որոշում [1, 628]։

Ինչ վերաբերում է սուլթանին և նրա ընտանիքին, ապա նրանք հեռացված էին քաղաքականության մեջ որևէ մասնակցություն ունենալուց։ Ընդ որում, իթթիհադը զգոն հսկողության տակ էր պահում սուլթանի ընտանիքի անդամներին, նույնիսկ սահմանափակելով նրանց տեղա-

շարժը։ Սուլթանի շրջապատի մեջ ներդրված էին երիտթուրքերի մարդկանցից շատերը, որոնց շնորհիվ Իթթիհադը լրիվ տեղյակ էր պալատում տեղի ունեցող անցուդարձին [2,219]։

Առաջին համաշխարհային պատերազմին նախորդող շրջանում եիտթուրքական պարագլուխները գիտակցում էին, որ անհրաժեշտ է դաշինքի մեջ գտնվել որևէ մեծ պետության հետ։ Այդ նպատակով 1914 թ. մայիսին Թալաաթ փաշան մեկնեց Պետերբուրգ, որպեսզի պաշտոնապես առաջարկի թուրք-ռուսական դաշինք։ Իսկ հունիսին Ջեմալ փաշան այց կատարեց Փարիզ, որտեղ առաջարկեց դաշինք Թուրքիայի և Եռյակ Համաձայնության (Անտանտի) միջև։ Սակայն երկու մայրաքաղաքներում էլ առաջարկը մերժվեց այն համարելով ոչ անկեղծ, քանի որ արդեն 1913 թ. դեկտեմբերից Թուրքիայում գործում էր գերմանական ռազմական միսիան գեներալ Լիման ֆոն Սանդերսի գլխավորությամբ։ Անկախ դրանից, Անատանտի պետությունները ակներև կերպով տեսնում էին, որ թուրք–գերմանական համագործակցությունը այլևս դարձել է անշրջելի։

Դեռևս 1914 թ. հուլիսին, երբ ծագեց Սարաևոյի միջադեպը (որն առաջ եկավ Սարաևոյում ավստրիական գահաժառանգ էրցհերցոգ Ֆրանց Ֆերդինանդի սպանության հետևանքով) Թուրքիայի ռազմական մինիստր Էնվեր փաշան դիմեց գերմանական կայսեր Վիլհելմ II-ին թուրք-գերմանական դաշինք կնքելու առաջարկով։ Երիտթուրքական ղեկավարները ենթադրում էին, որ Եռյակ դաչինքը ռազմական առումով մեծապես գերազանցում է Անտանտի պետություններին, ուստի կանխավ եձգտում էին ապահովել Թուրքիայի մասնակցությունը հասունացող համաշխարհային պատերազմին՝ Կենտրոնական Եվրոպայի պետությունների կազմում։ Երիտթուրքական պարագլուխները հուլիսի 20-ին նեղ շրջանով գումարեցին խորհրդակցություն, որին մասնակցում էին մեծ վեզիր Սայիդ Հալիմ-փաշան, ներքին գործերի մինիստր Թալաաթը և ռազմական մինիստր Էնվեր փաշան։ Որոշում ընդունվեց ամեն կերպ աշխատել մտնել Եռյակ դաշինքի մեջ։ Նույն օրը, գիշերով, Էնվերն ու Թալաաթը այցելեցին Ստամբուլում գերմանական դեսպան Վանգենհայմին, նրան հայտնելով, որ Թուրքիան ցանկություն ունի միանալ Կենտրոնական Եվրոպայի պետությունների խմբավորմանը [1,639]։

Դա մի շրջան էր, երբ պատերազմի նախապատրաստվող բոլոր պետություններն աշխատում էին ձեռք բերել հնարավորին չափ շատ դաշնակիցներ։ Ուստի պատահական չէ, որ երիտթուրքերի առաջարկին

Բեռլինը անմիջապես տվեց դրական պատասխան[3,130]։

Հուլիսի 28-ի գիշերը, մեծ վեզիր Սայիդ Հալիմ-փաշան գերմանական դեսպանատանը հանդիպում ունեցավ Վանգենհայմի հետ և նրան փոխանցեց կառավարության դիմումը Գերմանիային՝ Ռուսաստանի դեմ պաշտպանողական-հարձակողական դաշինք կնքելու պաշտոնական առաջարկով։ Նրանում համաձայնություն էր հայտնվում պատերազմի ժամանակ գերմանական ռազմական միսիային ենթարկել թուրքական բանակի մեկ քառորդը [3, 132]։

1914 թ. Օգոստոսի 2-ին խիստ գաղտնի իրադրության պայմաններում Ստամբուլում կնքվեց թուրք–գերմանական դաշնակցային պայմանագիր։ Թուրքական կողմից այն ստորագրեց մեծ վեզիր Սայիդ Հալիմ–փաշան, գերմանական կողմից՝ դեսպան Վանգենհայմը։ Պայմանագրի ստորագրման ժամանակ ներկա էին Էնվերը և Թալիաթը։ Կողմերը պայմանավորվում էին, որ պայմանագիրը կմնա գաղտնի և այն կարող է հրապարակվել միայն պայմանավորվող երկու կողմերի միջև համաձայնությունից հետո [3, 116]։

Դաշնակցային այդ պայմանագրով Թուրքիան իր վրա պարտավորություն էր վերցնում անհապաղ պատերազմի մեջ մտնել Կենտրոնական տերությունների կողմում։ Օգոստոսի 3-ին գերմանա–թուրքական դաշինքին միացավ նաև Ավստրո-Հունգարիան։

Նույն օրը՝ օգոստոսի 2-ին, Թուրքիան հայտարարեց պատերազմում իր «խստիվ չեզոքության» մասին։ Սակայն դա լոկ ծխածածկույտ էր Անտանտի պետություններին ապակողմնորոշելու համար։ «…Մենք մեզ չեզոք հայտարարեցինք միայն ժամանակ շահելու համար. մենք սպասում էինք այն պահին, երբ մեր զորահավաքը կավարտվի և մենք կկարողանանք մասնակցություն ունենալ պատերազմին»,– խոստովանել է Ջեմալ փաշան [1, 641]։

Այսպիսով, Առաջին համաշխարհային պատերազմի նախօրեին Օսմանյան կայսրության միջազգային դրությունը կտրուկ բարդացել էր։ Անհաջողությունները 1911-1912 թվականների պատերազմում Իտալիայի հետ խարխլեց երիտթուրքերի հեղինակությունը։ Սրանից օգտվեցին «Ազատություն և Համաձայնություն» կուսակցության մեջ միավորված նրանց հակառակորդները։ 1912 թվականի հուլիսին նրանց հաջողվեց հեռացնել երիտթուրքերին և զավթել իշխանությունը։ Հույս ունենալով փոխհատուցել իրենց կորուստները Բալկաններում այլ տարածքային

նվաճումներով, նրանք հանդես էին գալիս բոլոր «թյուրքերին» ենթարկելու թուրքական սուլթանի իշխանության տակ՝ նշելով տարբեր մահմեդական ժողովուրդների անունները, որոնք ապրում էին հսկայական տարածքի տարբեր շրջաններում՝ Բոսֆորից մինչև Ալթայ: Արտաքին քաղաքականության հարցերում երիտթուրքական շրջանակներում կար միայն թվացյալ միասնություն, բայց իրականում կային տարբեր խմբեր, որոնք պաշտպանում էին ֆրանսիական, գերմանական և բրիտանական կողմնորոշումը:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Բայբուրդյան Վ. Ա., Օսմանյան կայսրության պատմություն, Երևան, 2011:
2. Հասրաթյան Մ. Ա., Օրեշկովա Ֆ., Պետրոսյան Յու. Ա., Թուրքիայի պատմության ուրվագծեր, Երևան, 1986:
3. Հարությունյան Ա. Հ., Առաջին համաշխարհային պատերազմի ռազմադիվանագիտական պատմությունից, Երևան, 1983:
4. Սիմոնյան Հր. Ռ., Թուրք ազգային բուրժուազիայի գաղափարաբանությունը և քաղաքականությունը, Երևան, 1986:
5. Готлиб В., Тайная дипломатия во время Первой мировой войны. Москва, 1950.

Турецкая депломатия во время Первой мировой войны

Папян Ивета

ВГУ, История, 4-ый курс

Резюме

Ключевые слова. *Итало-турецкая война, примирение, Балканская война, Энвер паша, турецко-немецкая Федерация*

Накануне первой мировой войны резко осложнилось международное положение Османской империи. Неудачи в войне 1911-1912 гг. с Италией подорвали престиж младотурок. Этим воспользовались их противники, объединившиеся в партию «Свобода и согласие». В июле 1912 г. им удалось отстранить младотурок и захватить власть. Надеясь возместить потери на Балканах другими территориальными захватами, они выступали за подчинение власти турецкого султана всех «тюрок», называя так различные мусульманские народы, проживавшие в разных районах обширной территории от Босфора до Алтая. В вопросах внешней политики в младотурецких кругах было кажущееся единство, а в действительности существовали различные группировки-сторонники французской германской и английской ориентации.

Turkish Diplomacy on the Eve of World War I

Papyan Iveta

VSU, History, 4th course

Summary

Keywords. *Italo-Turkish war, reconciliation, Balkan War, Enver Pasha, Turkish-German Federation*

On the eve of the First World War, the international situation of the Ottoman Empire became sharply complicated. The failures in the war of 1911-1912 with Italy undermined the prestige of the Young Turks. This was taken advantage of by their opponents, who united in the Freedom and Consent party. In July 1912, they managed to oust the Young Turks and seize power. Hoping to compensate for the losses in the Balkans with other territorial seizures, they advocated the subordination of all "Turks" to the power of the Turkish Sultan, calling various Muslim peoples who lived in different areas of the vast territory from the Bosphorus to the Altai. In matters of foreign policy, there was an apparent unity in the Young Turk circles, but in reality there were various groups-supporters of the French German and English orientation.

«Կանանց հարցը» 19-րդ դարի 50-60-ական թվականների արեվելահայ մամուլում

Ստեփանյան Տաթևիկ
ՎՊՀ, Պատմություն, մագիստրատուրա, 2-րդ կուրս
*Գիտական ղեկավար՝ պ. գ. թ., դոցենտ **Մ. Բրուտյան***

Հասարակության մեջ կնոջ տեղի և դերի մասին հակասական տեսակետները ժամանակակից ամենաժողովրդավարական երկրներում անգամ բանավեճերի առիթ են հանդիսանում: Կանանց իրավունքների մասին բարձրաձայնվում է մամուլում, հեռուստատեսությամբ, բազմաթիվ հասարակական կազմակերպությունների մակարդակով, այնինչ, Եվրոպայում և ԱՄՆ-ում կանայք ընտրական իրավունք ձեռք են բերել միայն անցյալ դարի սկզբներին, իսկ ՄԱԿ-ի համակարգում կանանց նկատմամբ խտրականության բոլոր ձևերի վերացման մասին կոնվենցիան ընդունվել է 1981 թ.:

Կարևորելով մամուլի դերը հասարակական մտքի զարգացման գործում՝ անհրաժեշտ ենք համարում անդրադառնալ կանանց և աղջիկների իրավունքների մասին 19-րդ դարի 50-60-ական թվականներին արևելահայ մամուլում տեղ գտած հոդվածներին: Ուսումնասիրությունների շրջանակն ընդգրկում է նշված ժամանակաընթացքում հրատարակվող արևելահայ հասարակական-քաղաքական պարբերականները:

XIX դարի երկրորդ կեսին Ռուսաստանում աշխուժանում է հասարակական-քաղաքական կյանքը: Հատկապես 60-ական թվականներին գրաքննության մեղմացումը և մամուլի էջերում հրապարակայնության հնարավորությունը նպաստավոր պայմաններ են ստեղծում նաև հայ հասարակական հոսանքների կազմավորման համար: Այդ օրերին հայ իրականության մեջ ձևավորվում են լիբերալ, հեղափոխական-դեմոկրատական, կղերաֆեոդալական և ազգային պահպանողական հոսանքները: Մամուլի միջոցով տարածում են գտնում հասարակական հիմնախնդիրների հետ կապված առաջադեմ գաղափարներ ու մտքեր, որոնց թվում էլ՝ կանանց իրավունքների հարցը: Ուշագրավ է այն փաստը, որ «կանանց հարցը» արևելահայ մամուլի էջերում բարձրացվեց տղամարդ մտավորականների կողմից՝ որպես ազգային շարժման, ազգի ապագայի կերտման պատասխանատվության ըմբռնում, հետևաբար՝ կանանց կրթության,

աշխատանքի, հասարակական կյանքին մասնակցելու իրավունքների ճանաչման հիմնախնդիր: Կանանց կրթության անհրաժեշտությունն ընդունում էին ժամանակի հասարակական-քաղաքական հոսանքների գրեթե բոլոր առաջադեմ գործիչները, գտնելով, որ առանց դրա հնարավոր չէ ապահովել ազգի առաջընթացն ու զարգացումը: Նշված հիմնախնդիրների բարձրացումը լուրջ ջանքեր էր պահանջում, քանի որ ընտանիքում կնոջ տեղի ու դերի մասին հասարակության կողմից ստեղծվել էին որոշակի արմատացած նախապաշարումներ և կարծրատիպեր. այս հարցը արծարծվել է ժամանակի գրեթե բոլոր պարբերականների էջերում: Սակայն, եթե 1850-ական թվականներին հայ մտավորականները, հասարակական գործիչները կարևորում էին կնոջ կրթության խնդիրը՝ տեսնելով նրան միայն երեխաներին դաստիարակելու և իր ամուսնու կողքին բանիմաց կնոջ դերում, ապա ավելի ուշ՝ 60-ականներից, սկսեցին ներկայացնել նաև հասարակական գործունեություն ծավալող կնոջ կերպար՝ շարունակելով ուշադրության կենտրոնում պահել նրանց լուսավորության և կրթության հարցը:

Լիբերալ-բուրժուական և հեղափոխական-դեմոկրատական հոսանքներին հարող «Հյուսիսափայլն» իր հրատարակություններում անդրադառնում է կնոջ բարոյական վարքի գնահատմանը, նրա մեծարմանը՝ որպես մայր և ամուսին: Խմբագիր Ս. Նազարյանը հռետորական հարց է տալիս. «*Արդեօք ի՞նչ կարող է լինել մի նազելի կին մարդուց առաւել հրապուրող և զմայլեցուցիչ…*», -և ինքն էլ պատասխանում հարցին. «*ով տեսել է ու չէ հասկացել և չէ զգում այս բոլորը, նա կամ մարդ չէ, կամ բնաւին մայր չէ ունեցել և երբէք սիրած կամ սիրված չէ*» [1, 493]: Պարբերականի վաղ շրջանի, մասնավորապես, 1858-1861 թթ. համարներում ընդգծվում է կնոջ դերը ընտանիքում, կարևորվում է երեխաների դաստիարակության մեջ նրա ավանդը, սակայն, որպես սոցիալական անկախ էակ դեռևս չի ընդգծվում կնոջ անհատականությունը: «Հյուսիսափայլի» 1861 թ. 7-11-րդ համարներում խմբագիր Ս. Նազարյանը հանդես է գալիս «Սէր եւ ամուսնութիւն» հոդվածաշարով, որտեղ կնոջը դերը ստորադասվում է տղամարդուն: Նկատելի է հեղինակի պահպանողական մտածելակերպը հասարակությունում կանանց ունեցած դերակատարման հարցում: Հաջորդ տարիների հրատարակություններում՝ 1862-64 թթ., Ս. Նազարյանն այս հարցի շուրջ առաջ է քաշում առավել լիբերալ պահանջներ. նա ընդունում է կանանց իրավունքը տղամարդկանց հետ հավասար մաս-

նակցելու հասարակական կյանքին: Այս առումով ուշագրավ է 1862 թ. տպագրված «Կին մարդու բաղդաւորութիինը» ընդարձակ հոդվածը: Հոդվածը թարգմանված է գերմաներենից (Հուլիանե Բուրովի հրապարակախոսություններից), ուր կնոջ «բաղդաւորութեան» կարևոր նախապայման է համարվում անկախությունը, ինքնուրույնությունն ու ուժեղ կամքը, իսկ այդ ամենի գրավականը՝ կրթությունն է: Ս. Նազարյանը համակարծիք է Բուրովի հետ այն հարցում, որ կինը պետք է ուսյալ լինի, բայց այստեղ նորից ի հայտ է գալիս հակասություն հեղինակի լիբերալ հայացքների և արմատացած կարծրատիպերի միջև: Նա կնոջ ուսումը կարևորում է ոչ թե հասարակական գործունեություն ծավալելու, այլ զավակների ճիշտ դաստիարակության համար. «*Ոչ մինի ձեռքը կապած չէ, ասպարեզ մտանել տղամարդի հետ ճարտարութեան, գիտութեան, վաճառականութեան և վաստակասիրութեան մասին, բայց հարազատ կանացի բաղդաւորութիւնը չէ դրած այս կողմումը*» [2, 70]: Գիտակցելով, որ իր մտքերը կարող են բացասաբար ընկալվել ընթերցողի կողմից՝ «Ընտանեկան կեանք» հոդվածաշարում Ս.Նազարյանը պարզաբանում է սեփական պատկերացումները ընտանիքում կնոջ դերի մասին, ասելով, որ առաջին դերը պատկանում է տղամարդուն, և որ այդ իրավունքը նրան տալիս է կնոջ նկատմամբ ֆիզիկական ու մտավոր առավելություն ունենալու հանգամանքը [3, 13]:

Հասարակության մեջ կանանց դերի ու նշանակության գնահատման հարցում առավել առաջադեմ են «Հյուսիսափայլի» թղթակից Մ. Նալբանդյանի գաղափարները, ով «Հիշատակարանի» շրջանակներում ոչ միայն բարձրացնում է կանանց գրագիտության հարցը, այլև կրթության միջոցով կարևորում նրանց ազատության, ինքնուրույնության և հասարակական կյանքին լիարժեք անդամակցության հարցերը [4, 177]:

Ժամանակագրական հաջորդականությամբ «Հյուսիսափայլին» անմիջապես հաջորդում է Թիֆլիսում հրատարակվող «Հայկական աշխարհ» (1865-1879 թթ.) թերթը, որի համարներում ևս կարևորվում է կանանց կրթության հարցը, այս դեպքում նշելով նաև այդ հարցին ուղղված գործնական քայլերը: Պարբերականի խմբագիրը մանկավարժ, հետագայում հոգևորական կոչում ստացած Խ. Ստեփանեն էր, ով ձգտում էր ամսագիրը հեռու պահել ընդգծված կուսակցական պատկանելիությունից: Լիբերալ-լուսավորական ուղղվածությամբ «Հայկական աշխարհը» տարբեր խորագրերի ներքո անդրադառնում է լուսավորության տարածման

խնդրին, հիշատակում արդեն գործող կամ նորաբաց օրիորդաց դպրոցների ու վարժարանների մասին: Պարբերականի խմբագիր Խորեն Ստեփանեն անմիջական մասնակցություն ուներ ազգային-լուսավորչական շարժմանը: Նրա ջանքերով Թիֆլիսում հիմնադրվում է Մարիամյան ուսումնարանը և դրա մասնաճյուղը՝ առաջին երկսեռ դպրոցը Հավլաբարում [5, 227]: Պարբերականի 1869 թ. առաջին համարում «Ծանուցումք» հայտարարությամբ խմբագրությունը տեղեկացնում է ուսումնարանի ընդունելության կարգի, վարձավճարների և այլ կազմակերպչական հարցերի հետ կապված մանրամասնություններ [6, 2]: Հետագա համարներում ևս տարբեր ծանուցումների միջոցով պարբերականը անդրադառնում է աղջիկների համար բացված ուսումնարանների և օրիորդաց դպրոցների աշխատանքին ու կրթական ծրագրերին: Ի տարբերություն «Հյուսիսափայլի»՝ «Հայկական աշխարհը» հանդես է գալիս կանանց կրթության հետագա կիրառման գործնական քայլերով՝ հավանական համարելով նաև նրանց մասնակցությունը հասարակական-քաղաքական կյանքին: Այս առումով ուշագրավ է պարբերականի 1869 թ. համարներից մեկում զետեղված Գր. Արծրունու հոդվածը՝ վերնագրված «Կանանց աշխատանք Ֆռանսիայում» [7, 146-147]: Հեղինակը, հղում կատարելով ֆրանսիայի օրենսդիր պալատի 1867 թ. նիստում աղջիկների կրթության մասին պարոն Ժյուլ Սիմոնի (Jules Simon) ճառին, ինչպես նաև ժամանակի բելգիացի գրող Լէ Հարդի դե Բոլիեոյի (Le Hardy de Beauliey) կանանց դաստիարակության մասին մի աշխատության, նախ ներկայացնում է նշված հեղինակների հայացքները կանանց կրթության վերաբերյալ, այնուհետև, զուգահեռաբար հայտնում նաև իր տեսակետներն ու անհամաձայնությունները: Գր. Արծրունին, ով աչքի էր ընկնում լիբերալ-առաջադիմական գաղափարներով և հետագայում այդ գաղափարները զարգացնում է իր խմբագրած «Մշակ» թերթի շրջանակներում, չի համաձայնում Ժյուլ Սիմոնի և Բոլիեոյի այն տեսակետների հետ, որ կնոջ կրթությունը անհրաժեշտ է միայն մոր պարտականություններն ավելի «պատշաճ ու գրագետ կատարելու համար»:

19-րդ դարի 60-ականներին արևելահայ իրականության մեջ Գր. Արծրունին առաջիններից էր, ով կնոջը կարողանում է պատկերացնել նաև ընտանիքից դուրս՝ հասարակական ակտիվ կյանք ծավալելիս: Ըստ Գր. Արծրունու՝ եթե կինն իրավունք ունի կրթության, ապա իրավունք ունի նաև այդ կրթությունից օգտվելու: «Հայկական աշխարհ»-ում

«կանանց հարցի» հետ կապված առաջադեմ գաղափարների բարձրակետը Գր. Արծրունու հետևյալ տողերն են. «…*Բայց ամեն մի կին չէ կարող մայր լինել: …կան կանայք որոնք չեն համընկնում ընտանեկան կեանքին: Միթե հասարակութիւնը պիտի արգելէ նոցա տղամարդի պէս ուսում առնել, պիտի արգելէ նոցա իւրանց հաց գտնել այն արվեստի կամ պարապմունքի միջոցով, որի ընդունակութիւնը նոքա իւրանց մէջ զգում են*» [7, 149]:

Հետագայում, Գր. Արծրունին հղկում է կանանց իրավահավասարության հարցում իր ազատական հայացքները, որոնք իրենց արտացոլումն են գտնում վերջինիս սեփական պարբերականի էջերում:

Ի տարբերություն նույն ժամանակաշրջանում լույս տեսնող, կղերաֆեոդալական հոսանքը ներկայացնող «Մեղու Հայաստանի» և «Ճռաքաղ» պարբերականների, որոնց քննարկման շրջանակներում տեղ չեն գտել կանանց վերաբերող հարցերը, «Մասյաց Աղավնի» պարբերականը՝ ի դեմս հոգևորական և պահպանողական հայացքների տեր Գր. Այվազովսկու, անդրադառնում է կանանց հարցին, կնոջ կրթությունը կարևորելով միայն գրագետ կենցաղավարության դիրքերից: Թերթի 1861 թ. 18-րդ համարում հոդվածագիրը կարևորում է կնոջ կրթության անհրաժեշտությունը, միևնույն ժամանակ, առաջարկում հստակեցնել ուսման այն սահմանը, որն անհրաժեշտ է կնոջն ընտանիքում: «*Թէպէտեւ դժուար է օրիորդական ուսմանց չափ մը եւ աստիճան մը որոշել, եւ ըսել թէ մինչեւ այս ուսմունքը պետք է սովրին եւ ոչ աւելի, բայց մենք փորձեմք այնպիսի չափ մը որոշել, որ հարկաւոր եղած էն ոչ պակաս երեւնայ՝ ոչ աւելի*» [8, 206]: Այս հոդվածն ամբողջացնում է ժամանակի հայ հասարակական մտքի սահմանափակ ու ավանդապաշտ հայացքները Արևելյան Հայաստանում: Հոդվածի հեղինակը կանանց ու աղջիկների համար պարտադիր է համարում իմանալ կենցաղավարության հետ կապված բազմաթիվ հմտություններ, բավարար մաթեմատիկական գիտելիքներ՝ պարզ հաշվարկներ կատարելու համար, տիրապետել ազգային լեզվին, սեփական ազգի համառոտ պատմությանը, քրիստոնեական ուսմունքին, իսկ, օրինակ, երաժշտություն կամ լեզուներ իմանալը հեղինակը ոչ միայն չի կարևորում, այլև համարում է վնասակար, ծախսատար ու ավելորդ ժամանակի կորուստ կանանց համար: Գր. Այվազովսկին, բերելով Եվրոպայի օրինակը, անդրադառնում է նաև այն հարցին, թե ինչպես պետք է կազմակերպվի կանանց կրթությունը. հատուկ աղջիկների համար

նախատեսված դպրոցներում, գործնական հմտություններ պարունակող դասագրքերի միջոցով, որոնք պետք է լինեն «պարզ, համատոտ ու հասանելի» կանանց համար [8, 207]:

«Մասյաց աղավնու» էջերը ողողված են ազգի կրթության ու ճիշտ դաստիարակության մասին հոդվածներով, խրատական ճառերով, Խալիբյան վարժարանի և այլ կրթական կառույցների մասին տեղեկություններով, սակայն դրանք բոլորը վերաբերում են արական սեռին: Աղջիկների համար նախատեսված ուսումնարանների մասին ոչ մի խոսք չկա ամսագրի համարներում, բացի վերը նշված երկու հոդվածներից: «*Ամենևին չարիք յանուսումնութենէ…*» առաջադեմ կարգախոսի տակ, ցավոք 19-րդ դարի 60-ականների արևելահայ այս պարբերականի խմբագիրն ու հոդվածագիրները հասկանում էին միայն արական սեռի կրթությունը՝ աննշան դեր հատկացնելով աղջիկների ուսմանը:

19-րդ դարի 60-ականներին Թիֆլիսում հրատարակվող «Կռունկ Հայոց աշխարհին» բարոյական, բանասիրական, նկարագրական և վիճակագրական ամսագիրը հավատարիմ մնալով իր ենթավերնագրին, այն է՝ «ազգային և բարոյական լուսավորության հանդես», իր էջերում հետևողականորեն անդրադարձել է ազգի բարոյական կրթության ու լուսավորության հարցերին: Ազգային-պահպանողական ուղղվածություն ունեցող պարբերականի խմբագիր Մ. Աղաբեկյանի մշակած կրթական ծրագրերում քննարկվում են ոչ միայն հայերի կրթական խնդիրներն ընդհանրապես, այլ հստակ տարանջատվում է կրթական երկու համակարգ՝ հոգևոր և ազգային, որոնց ուսուցումը վերապահվում է կրոնական և ազգային գործիչներին: «Ազգային և հոգևոր» հոդվածաշարի էջերում հեղինակն անդրադառնում է հայ ազգի ակունքներին, պատմական ակնարկ կատարում կրթության համակարգին, որը գոյություն ուներ Հայաստանում Հայկազունիների, Արշակունիների օրոք, ու զուգահեռներ տանում իր ժամանակաշրջանի հետ: Հեղինակն ափսոսանք է հայտնում, որ այն հոգևոր-ազգային ներդաշնակությունն ու իմացությունը, որով օժտված են եղել հայերը վաղ ժամանակներում, այժմ բացակայում է: Նա հավասարապես անհանգստանում է թե՛ տղաների, և թե՛ աղջիկների կրթության համար: «*Ներկա ժամանակումս մեր Հայոց աշխարհիս որդւոց մէջ ոչ Հայաստանեայց Եկեղեցւոյն հրահանգները ըստ բաւականին քարոզած է, և ոչ՝ մեր հայրենական բարբառը առհասարակ տարածած է…որպեսզի մեր մէջ մեր ձեռամբ հաստատած ազգային և հոգևոր դաստիարակութեան եղա-*

նակուը բաւականանանք մեր տղայոց և դստերոց համար, և չթողունք, որ մեր պատանիքն ու օրիորդքը կամ այլ և այլ երկիրներումը կամ այլակրօն և այլաբարբառ անձանց մատակարարած դաստիարակութեամբը կրթուին» [9, 175]:

Մտորելով այն երջանիկ ժամանակների մասին, երբ հայ ազգը «*անմահացած էր Հայերի անունով և քրիստոնեական եռանդով*»՝ թերթի խմբագիրը մեկ այլ ընդարձակ հոդվածով 5-րդ դարի հայ կնոջը համեմատում է իր ժամանակի կանանց հետ: Առաջադեմ գաղափարներով տոգորված, հոգևոր կրթություն ստացած Մ. Աղաբեկյանն այս հոդվածով հերքում է հասարակության մեջ ընդունված թյուր կարծիքը, իբր՝ 5-րդ դարի հայ կինը մասնակցություն չի ունեցել երկրի հասարակական-քաղաքական կյանքին. «*Նա ունեցել է, բայց ոչ թե այժմեան մի քանի նորասէր կանանց նման միայն զբօսարաններումը և փափկութեան գոգումը, այլ քրիստոնէութեան, ազգութեան և ողջախոհութեան փշոտ, դժուարակոխ և միանգամայն երանաւետ ասպարիզումը, իբրև ամոլ իրա մարդու հետ պաշտպանելով իրա եկեղեցին և հավատը ընդդեմ ամենայն բռնութեանց և խորամանկութեանց*»,-պատասխանում է Աղաբեկյանը [10, 277]: Հեղինակը ցավով է նշում, որ շատերը դրամներ են ծախսում օտար լեզու սովորելու համար՝ չիմանալով մայրենին: Այս առումով նա առանձնացնում է գյուղաբնակ կանանց, ովքեր գոնե մայրենի լեզվով ճիշտ խոսել գիտեն: Ժամանակակից կանանց հեղինակը խորհուրդ է տալիս ուսումնասիրել 5-րդ դարի կնոջ կյանքը, քննել, թե ինչ կրթություն են ստացել նրանք և ինչ պայմաններում, քանզի «*մեր ապաբաղդութիւնից տեղ տեղ կրթութեան և լուսաւորութեան պատրւակաւ աւելի մոտենում են անկրթութեանը և խաւրին*» [10]: Եվ վերջապես, մի փոքրիկ պարբերության մեջ հոդվածագիրը ամփոփում է սեփական դատողություններն ու կարծիքը կանանց կրթության մասին, որը, թերևս, կաղապարված լինելով հոգևորականի պահպանողականությամբ ու ժամանակի հրամայականով, արտահայտում է կանանց կրթության վերաբերյալ 19-րդ դարի կեսին արևելահայ մտավորականության համապարփակ պատկերացումները: «*Մեր կարծիքով դաստիարակուած կամ կրթուած կարող է կոչուիլ այն Հայ կինը, որ ունենա ամենաջերմ աստուածապաշտութիւն, հայրենական լեզուին և կրօնի վարդապետութեանցը լաւ տեղեկութիւն, հաւատարմութիւն իրան մարդուն և հասկացութիւն ամուսնական սուրբ իրաւանց, տանտիկինութիւն ձեռագործութեամբ, չափաւոր կեցութեամբ և մաքրու-*

թեամբ հանդերձ և երաժշտութիւն ընտիր երգերի մեջ»,– այս կերպ է պատկերացնում կնոջ դերը հասարակության մեջ հեղինակը [10, 278]: Ինչպես ժամանակի արևելահայ պարբերականներից շատերի էջերում, այստեղ ևս կանանց կրթությունը սահմանափակվում է մայրենի լեզվին գրագետ տիրապետությամբ, հայոց պատմության բավարար իմացությամբ, որի հիմնական նպատակը զավակների հայեցի դաստիարակությունն է:

Այսպիսով, 19-րդ դարի 50-60-ականներին ազգային կրթության կարևորման ու դպրոցաշինության պայմաններում արևելահայ պարբերականները կարևորել են կանանց և աղջիկների սովորելու իրավունքը, հանդես եկել օրիորդաց դպրոցների խրախուսման ու տարածման օգտին, կարևորել են կնոջ դերը հասարակության մեջ, զուգահեռներ են անցկացրել արևմտյան երկրներում կանանց հարցի դրսևորման հետ: Այնուամենայնիվ, հիշյալ ժամանակաշրջանի պարբերականները, ունենալով հիմնականում հոգևոր կրթություն ստացած հոդվածագիրներ ու խմբագիրներ, կանանց հարցը դիտարկում են միայն մատաղ սերունդների հայեցի դաստիարակության, ամուսնական օրիակելի կյանքի վարման համատեքստում, արժանի տեղ չհատկացնելով կնոջը հասարակական-քաղաքական գործունեության մեջ:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Հիւսիսափայլ, 1858թ., համար 1, հունվար:
2. Հիւսիսափայլ, 1862թ., համար 2, փետրվար:
3. Հիւսիսափայլ, 1864թ., համար 2, հունվար:
4. Հովհաննիսյան Ա., Նալբանդյանը և նրա ժամանակը, Երևան, Հայպետհրատ 1955-56, գիրք 1, 355 էջ:
5. Հայ պարբերական մամուլի պատմություն XVIII-XIX դարեր, Գահիրէ 2006, հատոր 1, 701 էջ:
6. Հայկական աշխարհ, 1869 թ., համար 1-2, հունվար-փետրվար:
7. Հայկական աշխարհ, 1869 թ., համար 4-5, ապրիլ-մայիս:
8. Մասեաց աղաւնի, 1861թ., համար 18, սեպտեմբերի 15:
9. Կոռունկ Հայոց աշխարհին, 1860 թ., համար 3, մարտ:
10. Կոռունկ Հայոց աշխարհին, 1860 թ., համար 4, ապրիլ:

«Женский вопрос» в 50-60-е гг. XIX века в восточно-армянской прессе

Степанян Татевик
ВГУ, История, 2-ой курс

Резюме

Ключевые слова: *восточноармянская пресса, женский вопрос, «Северное сияние», «Армянский мир», «Масяц Агавни», «Журавль Армении», образование, просветительство, общественно-политическая деятельность.*

Зарождение периодической печати сыграло неоценимую роль в развитии армянской общественно-политической мысли. Уже во второй половине XIX века благодаря печати в армянской действительности получили распространение идеи Просвещения, в контексте которых был поднят женский вопрос. В рамках статьи мы затронули вопросы женского образования, равноправия и полноценного участия в общественной жизни через освещение восточной прессы 50-х и 60-х годов XIX века.

Во второй половине 19 века, особенно в 50-х и 60-х годах, в условиях народного просвещения и школьного строительства восточноармянская пресса затронула такие темы, как право женщин и девушек на учебу, пропагандировала и продвигала женские школы, роль женщины в обществе, проводила параллели с западными странами. Тем не мение периодические издания указанного периода, имея в основном хорошо образованных, но духовных авторов статей и редакторов, рассматривают женский вопрос только в контексте армянского воспитание подрастающего поколения, не отводя женщинам достойного места в общественно-политической деятельности.

"Women's Question" in the 50-60s. XIX Century in the Eastern Armenian Press

Stepanyan Tatevik
VSU, History, MA the 2nd course

Summery

Keywords: *Eastern Armenian press, women's issue, "Northern Lights", "Armenian World", "Masyats Aghavni", "Crane of Armenia", education, enlightenment, social and political activity.*

The birth of the periodical press played an invaluable role in the development of Armenian social and political thought. Already in the second half of the 19th century, thanks to the press, the ideas of the Enlightenment spread in Armenian reality, in the context of which the women's issue was raised. Within the framework of the article, we touched upon the issues of women's education, equality and full participation in public life through the coverage of the Eastern press in the 50s and 60s of the XIX century.

In the second half of the 19th century, especially in the 50s and 60s, in the conditions of public education and school building, the Eastern Armenian press touched upon such topics as the right of women and girls to study, promoted and promoted women's schools, the role of women in society, conducted parallels with Western countries. However, the periodicals of this period, having mostly well-educated, but spiritual authors of articles and editors, consider the women's issue only in the context of the Armenian upbringing of the younger generation, not giving women a worthy place in social and political activities.

Անգրագիտության վերացմանն ուղղված քայլերը Զանգեզուրում՝ ըստ «Կարմիր ռաշպար» թերթի հրապարակումների (1923-1925 թթ.)

Վարդանյան Ալինա
ԳՊՀ, Պատմություն, 4-րդ կուրս
*Գիտական ղեկավար՝ պ.գ.թ., դոցենտ **Հ. Մուքիասյան***

Հանգուցային բառեր. *«Կարմիր ռաշպար» թերթ, Զանգեզուր, կրթություն, անգրագիտություն, դպրոց*

Հայ մամուլի նշանավոր պարբերականներից է «Կարմիր ռաշպար» գավառական շաբաթաթերթը, որը հրատարակվել է 1921-1930 թթ. Գորիսում: Այն փոխարինել է «Խորհրդային Զանգեզուր» թերթին և արդեն 1922 թ. հուլիսի 23-ից հանդես էր գալիս որպես «Կարմիր ռաշպար», որը Զանգեզուրի աշխատավորության առաջին թերթն է եղել: Թերթի խմբագիրն է եղել Գառնիկ Ղազարյանը՝ բոլշևիկյան հեղափոխական շարժման առաջին ջատագովներից [1, 22]: Բազմաթիվ համարներում ներկայացված են կարևոր նշանակություն ունեցող փաստեր, որոնց միջոցով ընդհանուր առմամբ պատկերացնում ենք, թե խորհրդային կարգերից հետո ինչ աշխարհաքաղաքական փոփոխություններ առաջ եկավ, Խորհրդային Միությունն ինչ խթանիչ քայլեր ձեռնարկեց տնտեսության զարգացման համար: Թերթը, գտնվելով մարքսիստական գաղափարների ազդեցության ներքո, հիմնականում քարոզել է սոցիալիզմի գաղափարները և հակադրության մեջ մտել կապիտալիստական կարգերի հետ: Ժողովրդական կրթության համակարգը կազմակերպելու համար Վ. Լենինը զարգացրել էր մարքսիզմի հիմնախնդիրների ելակետային դրույթները, մշակել էր հասարակության կրթության կազմակերպման ծրագրեր, որոնք պիտի անգրագիտության դեմ պայքարի հիմնասյուն լինեին: Հոկտեմբերյան հեղափոխության հաղթանակի երկրորդ օրը՝ 1917 թ. նոյեմբերի 8-ին, Խորհուրդների համառուսաստանյան երկրորդ համագումարում ձևավորվել էր ՌՍԴԽՀ-ի լուսավորության ժողովրդական կոմիսարիատ՝ Ա. Վ. Լունչարսկու գլխավորությամբ: Արդեն նոյեմբերի 9-ին Լենինի հանձնարարությամբ ստեղծվել էր լուսավորության պետական հանձնաժողով, որը պիտի կազմակերպեր լայն մասսաների լուսավորության և դաստիարակության խնդիրները [2,29]: Իշխանության եկած

բոլշևիկների նպատակների հենքում դրված էր կոմունիզմի հաստատումը, կոմունիստական հզոր տնտեսության ստեղծումը, որը, ինչպես հայտարարվում էր լուրջ մրցակից կհանդիսանար եվրոպական երկրների համար և նույնիսկ կգերազանցի իր առաջընթացով: Այս ամենը իրականացնելու համար բոլշևիկները պետք էր իրենց գաղափարախոսությունը պրոպագանդեին հասարակության մեջ, որը պետք էր նստվածք տար և բոլորը դառնային այդ գաղափարախոսության կրողը: «Կարմիր ռաշպար» թերթի համարներում ներկայացվում էր Զանգեզուրի կենտրոն Գորիսը, որը իր բնական կտրտվածության պատճառով հնարավորություն չէր ունեցել կապ հաստատել կենտրոնական շրջանների հետ և, դրա պատճառով Զանգեզուրը ետ էր մնացել մնացած գավառներից: 1923 թ. օգոստոսի 13-ին Գորիսում տեղի էր ունեցել մանկավարժական դասընթացների հանդիսավոր բացում, որի ընթացքում, իրենց ելույթներով հանդես էին եկել Բ. Ղարագյոզյանը, լուսբաժնի վարիչ Գառնիկ Ղազարյանը, կարմիր բանակի ներկայացուցիչ Ստեփանյանը, պատկոմական շտաբի պետ Երվանդ Խալեյանը, որոնք հույս էին հայտնում, որ այստեղ հավաքված ուսուցչությունն իր բոլորը ուժերը կներդնի հասարակության մեջ լուսավորության տարածմանը: Խալեյանը իր ելույթում ներկայացնում էր, որ հին դպրոցում (մինչ հեղափոխությունը) ուսուցիչները սովորեցնում էին «Հայր մեր», որը թաքնված էր կեղծիքի տակ, իսկ այժմ սովորում են աշխատանք և գիտություն [3, 3]: Խալերյանի ելույթի ենթատեքստը կայանում էր նրանում, որ մինչ հեղափոխությունը եկեղեցին էր կրթական գործը ղեկավարում և, ըստ կոմունիստների, դա բացասաբար էր անդրադառնում կրթության ընդհանուր որակի վրա և թույլ չէր տրվում որպեսզի գիտությունը զարգանա: Այս շրջանից էլ անընդհատ իշխանությունն անվստահություն էր հայտնում եկեղեցու նկատմամբ և փորձում էր թույլ չտար խառնվել աշխարհիկ կյանքին և նույնիսկ մարդկանց մեջ աթեիզմ էր տարածում: Խորհրդային իշխանությունների կողմից եկեղեցուն առաջին հարվածը հասցրվեց 1918 թ. հունվարին Լենինի կողմից ղեկավարած ժողկոմխորհի ընդունված որոշումով, ըստ որի եկեղեցին անջատվում է պետությունից և դպրոցը եկեղեցուց, որը խորհրդային տարիներին համարվում էր պատմական որոշում [2, 30]: Հիմնականում այս որոշումը կապված էր նրա հետ, որ եկեղեցին կարևոր ուշադրությունը սևեռում էր դեպի կրոնական առարկաները, որը բացասաբար էր անդրադառնում կրթության ընդհանուր մակարդակի վրա: Այս շրջանում բոլշևիկները բացասաբար էին տրամադրված եկեղեցու նկատմամբ և

փորձում էին ճնշել և այդ ամենն անում էին եկեղեցուն պատկանող սեփականության բռնագրավմամբ: Թերթի համարներում բազմաթիվ հոդվածներ նվիրված են կրթական կյանքին, որտեղ ներկայացվում է, թե ինչ մակարդակի վրա էր գտնվում կրթությունը, ինչպես էր Խորհրդային Միությունը իրականացնում քայլեր, որոնք ուղղված էին լուսավորության տարածմանը և անգրագիտության դեմ պայքարին: Թերթում խոսվում է ընդհանուր և պարտադիր կրթական համակարգ ստեղծելու մասին, որտեղ կսովորեն բոլորը և կրթությունը կդառնա հավասար բոլորի համար: Սկզբնական շրջանում միության համար առաջնակարգ հարցը անգրագիտության վերացումն էր, քանի որ փորձում էր տնտեսապես առաջ անցնել մրցակից երկրներից, սակայն դրա համար պետք էր ունենալ կրթական բարձր որակ, որը այդ ժամանակ կարելի է ասել գոյություն չուներ, քանի որ անգրագետների թիվը չափազանց մեծ էր: Այդ նպատակով սկսեցին բացվել ուսումնական հաստատություններ, որտեղ սովորում էին ինչպես փոքրերը, այնպես էլ մեծահասակները և հիմնականում այս միջոցներով փորձում էին մարդկանց սովորեցնել տարրական գիտելիքներ: Խորհրդային կարգերի հաստատումից հետո Հայաստանում որպես առաջնակարգ խնդիր էր դրված քաղաքական և այբուբենական անգրագիտության վերացումը և, ըստ այդմ, բոլորը պետք է իմանային, որ առանց ընդհանուր գրագիտության՝ չկա քաղաքական գրագիտություն: Այս ամենի հիման վրա Զանգեզուրի Գավկոմը որոշում էր կայացրել, որ մինչև 1924 թ. փետրվար ամիսը կուսակցության բոլոր անդամներն ու թեկնածուները պետք է գրագետ դառնային: Առաջին հերթին այդ գործը պետք է իրականացնեին շրջանայինի կազմակերպիչները, հետո կոմբջիջների քարտուղարները և ապա գիտակից կուսակցականները, որոնք պետք է աշխատեին իրենց վրա և կրթվեին: Բոլորը պետք է լարեին իրենց ուժերը այս նպատակին հասնելու համար, քանի որ նրանք կռվել են զանազան «հակահեղափոխական ուժերի» դեմ և այս անգամ էլ նրանք հաջողությամբ պետք է կռվեին անգրագիտության դեմ: Եվ ինչպես նշվում է, անգրագիտությունն ամենաառաջին խանգարիչն էր Խորհրդային Միության զարգացման համար և բոլորը պետք է միտված լինեն դեպի գրագիտությունը: Այս քայլերի իրականացումը պայմանավորված էր անգրագիտության համատարած լինելու հետ և նույնիսկ պաշտոնյանները ունեին այդ խնդիրը՝ կրթվելու [3, 1]: «Կարմիր ռաշպար» թերթի համարներում խոսվում է, թե Զանգեզուրի գավառում ինչ քայլեր էին իրականացվում կրթական կյանքի բարելավման համար: Սկզբանական շրջանում Զանգե-

զուր գավառում կրթական կյանքը կազմակերպելու համար դժվարություն էր առաջացել դպրոցների առկայության հետ կապված, քանի որ ուսումնական հաստատությունները շատ քիչ թիվ էին կազմում: Բայց այդ հարցերը լուծվում էին տարբեր անհատների կողմից նվիրաբերված միջոցների շնորհիվ, որը խրախուսվում էր պետության կողմից: Այդ միջոցներով կառուցվում և վերանորոգվում էին նոր դպրոցներ: Առաջնակարգ ուշադրությունը տրվեց դպրոցին, որպեսզի մատաղ սերնդին դաստիարակեն կոմունիստական գաղափարներով և նրանց դարձնեն կոմունիզմի նվիրյալներ: Կոմունիստական հզոր տնտեսություն ստեղծելու համար բացվում էին նոր տիպի դպրոցներ բանվորների ու գյուղացիների համար: Այս դպրոցների բացումը նպատակ էր հետապնդում իրականացնել արդյունաբերության և գյուղատնտեսության զարգացում և, դա հնարավոր էր միայն որակյալ մասնագետներ պատրաստելու շնորհիվ: Զանգեզուրում համատարած անգրագիտության խնդիրը ևս լուրջ էր ու պահանջում էր մեծ ջանքեր: Հիմնական խնդիրները կապված էին մասնագետների՝ ուսուցիչների պակասի հետ, որոնք պետք է իրականացնեին հասարակության մեջ կրթական մակարդակի բարձրացում և լուսավորության տարածում: Շինարական աշխատանքները կապված դպրոցաշինության հետ շարունակվում էին ու ոչ բոլոր գյուղերն էին ապահովված դպրոցով: Այդպիսի գյուղերից էր Խոզնավարը, որտեղ գյուղացիները մտահոգված էին դպրոց չունենալու համար և այդ նպատակով դիմել էին 1924 թ. լուսժողկոմ՝ Ասքանազ Մռավյանին, որն անտարբեր չէր մոտեցել այս կարևոր խնդրին և տրամադրել էր 350 ռուբլի գումար: Գումար էր ուղարկվել Բաքվի գյուղացիների միությունից՝ 150 ռուբլի: Ստացված գումարների հաշվին սկսվեց դպրոցի շինարարությունը [3, 3]: Այս ամենը ցույց է տալիս, որ հասարակությունը ևս մտահոգված էր կրթական աշխատանքներով և փորձում էր իր ներդրումն ունենալ կրթության բնագավառում: Ուսումնական տարիների վերաբերյալ ամեն տարի խորհրդային շրջանում իրականացվում էր ամփոփում՝ հասկանալու տարվա կատարված աշխատանքների արդյունքները: Այդպիսի ուսումնական ամփոփման էր անդրադարձել «Կարմիր ռաշպար» թերթը, որտեղ ներկայացվում է Խոտ գյուղը: Ըստ կատարված վերջնական ամփոմփան ներկայացվել էր, որ գյուղի դպրոցն իր վրա դրված պլանները արդյունավետ կատարել էր: Վերջում կազմակերպվել էր փոքրիկ միջոցառում, որտեղ երեխաները արտասանել էին իրենց սովորած բանաստեղծությունները [2, 3]: Այս ամփոփումների կազմակերպումն ուներ կարևոր միտում՝ հասկանալու,

թե ինչ արդյունքի են հասել և արդյոք կա դրական տեղաշարժ կրթության բնագավառում:

Հասարակության շրջանում լուսավորության տարածման նպատակով հարկավոր էր ունենալ դպրոցներ, որտեղ կիրականցվեր այդ աշխատանքները, սակայն դպրոցական շինություններ ունենալու հարցը մնում էր օդում կախված, քանի որ իշխանությունը չուներ բավարար ռեսուրսներ մեծ թվով դպրոցներ կառուցելու համար, և այս խնդիրը բացասական էր ազդում դպրոցների կանոնավոր աշխատանքների կազմակերպման վրա: Սա տեսանելի էր Զանգեզուրում, քանի որ կային բնակավայրեր, որոնք զրկված էին դպրոցից: Այդ խնդիրների լուծման նպատակով ստեղծվել էին դպրոցական խորհուրդներ, որոնց առաջ դրված էին պահանջներ, որպեսզի նրանք կարողանան առկա խնդիրները որոշակի չափով լուծեն և զբաղվեն դպրոցական շենքերի, դրանց կահավորման խնդիրներով [3, 3]: Այսպիսով, կրթական աշխատանքները կազմակերպելու համար անհրաժեշտ էին շենքեր, սակայն սկզբնական շրջանում ֆինանսական խնդիրների պատճառով տարբեր շինություններ պետականացվում էին և ժամանակավորապես օգտագործվում իբրև դպրոցներ, կամ նվիրաբերություններ էին կատարվում անհատների կողմից և կառուցվում էին նոր դպրոցներ:

Կրթական աշխատաքները կազմակերպելու համար իրականացվում էին վերապատրաստումներ, որի միջոցով ուսուցիչները կարողանում էին ձեռք բերել մեթոդական նոր հնարավորություններ, ծանոթանում էին ժամանակակից պահանջներին, որը կիրառում էին դասն ավելի արդյունավետ անցկացնելու համար: Խորհրդային Միության շրջանում ուսուցիչները պարտավոր են եղել սոցիալիզմի գաղափարները տարածել դպրոցում ու աշակերտներին դարձնեին այդ գաղափարախոսության կրողը: Այսինքն ուսուցիչները պետք է վարեին ակտիվ հասարակական կյանք, որը ամրագրված էր կոմկուսի կանոնադրության մեջ: Թերթը ներկայացնում էր, որ ԼԿԵՄ-ի Կենտկոմը ընդունել էր նոր կանոնադրություն գյուղական ուսուցիչներին ՌԼԿԵՄ-ի մեջ ընդգրկելու համար: Ըստ կայացված որոշման՝ բանվորական կամ գյուղական ծագում ունեցող ուսուցիչները, որոնք ունեցել են ակտիվ հասարակական մասնակցություն և մոտ են գտնվել կուսակցության գաղափարախոսությանը, ընդգրկվում էին կոմսոմոլների մեջ: Եվ ինչպես թերթում է նշվում շատ մեծ կարևորություն էր տրվում, երբ ուսուցիչը արտադպրոցական ակտիվություն է ցուցաբերում և ընդգրկված է Լենկոմերիտմիության շարքերում:

Այս դեպքում ուսուցիչը մեծ դերակատարում էր ունենում գյուղի հասարակական կյանքի ակտիվության վրա [3, 2]: Այս ամենը փաստում է, որ իշխանությունը մեծ ազդեցություն էր թողնում դպրոցի վրա և փորձում էր ուսուցիչներին ընդգրկել իր շարքերում, որպեսզի կարողանար պետական-կուսակցական գաղափարախոսությունը նրանց միջոցով տարածել դպրոցում: Անգրագիտության վերացման համար Խորհրդային Հայաստանը հստակ իր առաջ պլան էր դրել 5 տարի ժամանակով: Ըստ այդ ծրագրի ենթադրվում էր 1926 թ. սովորեցնել՝ 30 հազար հոգու, 1927-1928 թթ.՝ 45 հազար հոգու, 1929 թ.՝ 60 հազար, իսկ 1930 թ.՝ 12 հազար հոգու: Ըստ ստացված տվյալների՝ ամբողջ Խորհրդային Հայաստանում հաշվում էր 192 հազար անգրագետ ու այդ տարի գործելու էր 200 նոր դպրոցներ կիսագրագետների համար [3, 4]: Այս ամենը պարզ ներկայացնում է, որ պետությունը հստակ իր առաջ պլան էր դրել անգրագիտությունը վերացնելու համար և հստակ ձևով ուներ տվյալներ, թե քանի տոկոսն էին կազմում անգրագետները: Թերթում համեմատականներ են կատարվում, թե խորհրդային իշխանությունից առաջ ինչպիսի իրավիճակ էր տիրում և ինչպիսի դրական տեղաշարժեր տեղի ունեցան ԽՍՀՄ-ի ձևավորումից հետո: Թերթը ներկայացնում է, թե ցարական ժամանակաշրջանում լուսավորության գործը Զանգեզուրում ինչպես էր կազմակերպվում: Ներկայացվում է, որ այս շրջանում Զանգեզուրում գոյություն է ունեցել ընդամենը 27 դպրոց: Կառավարությունը չի մտածել գործուն քայլեր կատարելու կրթական ասպարեզում, փորձել ծայրագավառներում դպրոցներ բացել: Այսպիսի անտարբեր վերաբերմունքի արդյունքում մարդիկ գրի սևը սպիտակից չէին տարբերում և մեծամասամբ սովորում էին միայն ունևորների երեխաները [3, 2]: Այս համեմատականները նպատակ էին հետապնդում անվանարկել նախկին համակարգը և միաժամանակ արմատավորել սոցիալիզմի գաղափարաբանությունը հասարակության մեջ: Այդ նպատակային քայլերը չէին կարող անարդյունք մնալ:

Այսպիսով, «Կարմիր ռաշպար» թերթի համարների ուսումնասիրությունից պարզ երևում է, որ Հայաստանում խորհդային իշխանության հաստատումից հետո, ծայրագավառներում՝ այդ թվում Զանգեզուրի գավառում սկսվում է ակտիվանալ կրրթական կյանքը, և այս առումով կարևոր ուշադրություն է սևեռվում դեպի դպրոցը: Գործուն քայլեր էին կատարվում անգրագիտությունը վերացնելու նպատակով: Այդ աշխատանքները տարիների ընթացքում դրական արդյունք ունեցան:

«Կարմիր ռաշպար» թերթը լույս է տեսել է 1921-1930 թթ., Գորիսում: Թերթում տպագրված հոդվածները վերաբերվում են կրթական կյանքին, անգրագիտության դեմ պայքարին և բոլշևիկների կողմից իրականացվող քայլերին: Թերթում ներկայացվում է Զանգեզուրի գավառում կազմակերպվող կրթական աշխատանքները, դպրոցների գործունեությունը և առկա խնդիրները: Թերթի համարներում ներկայացվում էր, որ սկզբնական շրջանում կար մասնագետների, դպրոցական շինությունների առկայության անհրաժեշտություն: Թերթը կարևոր տեղեկություններ է պարունակում գավառում կազմակերպվող կրթական աշխատանքների, այդ թվում՝ անգրագիտության վերացմանն ուղղված քայլերի վերաբերյալ: Այդ առումով այն արժանահավատ աղբյուր է:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Ամիրբեկյան Վ. Մ., «Սովետական տեղական մամուլը», Երևան, Հայկական ՍՍՌ գիտությունների ակադեմիայի հրատարկչ. 1964, էջ 22-23:
2. Ղազանջյան Վ. Հ., «Սովետական կուլտուրայի առաջին քայլերը», Երևան, «Հայպետհրատ.», 1964, էջ 29-30:
3. «Կարմիր ռաշպար», Գորիս, 1923 թ. №21, №30, 1924 թ., №22, 1925 թ., №21, 1925 թ., №26, №27, №32:

Меры по ликвидации неграмотности в Зангезуре по публикациям газеты «Кармир Рашпар» (1923-1925 гг.)

Варданян Алина
ГСУ, Факультет гуманитарных, История, 4-ый курс

Резюме

Ключевые слова: *«Кармир Рашпар» газета, Зангезур, образование, неграмотность, школа.*

Газета «Кармир Рашпар» издавалась в 1921-1930 годах в Горисе. Публикуемые в газете статьи касаются просветительской жизни, борьбы с неграмотностью, шагов, предпринятых большевиками. В газете представлены просветительские мероприятия, организованные в Зангезурском велаяте, деятельность школ, существующие проблемы. В номерах газеты было показано, что на первых порах была потребность в специалистах, школьных зданиях. Газета содержит важную информацию об организованной в крае образовательной деятельности, в том числе о мерах по ликвидации неграмотности. В этом смысле это достоверный источник.

Measures to eliminate illiteracy in Zangezur, according to the publications of "Karmir Rashpar" newspaper (1923-1925)

Vardanyan Alina
GSU, Faculty of Humanities, History, 4th course

Summary

Key words: *"Karmir Rashpar"newspaper, Zangezur, education, illiteracy, school*

"Karmir Rashpar" newspaper was published in 1921-1930 in Goris. The articles published in the newspaper refer to the educational life, the struggle against illiteracy, and the steps taken by the Bolsheviks. The newspaper presents the educational activities organized in Zangezur province, the activities of schools, the existing problems. The issues of the newspaper presented that in the beginning there was a need for specialists, school buildings. The newspaper contains important information about the educational activities organized in the province, including the steps taken to eliminate illiteracy. In that sense, it is a credible source.

1890-ական թթ. հայկական կոտորածների արձագանքները «Մուրճ» պարբերականում

Վարդանյան Վարդուհի
ՎՊՀ, Պատմություն, մագիստրատուրա, 1-ին կուրս
*Գիտական ղեկավար՝ պ. գ. թ., դոցենտ **Մ. Բրուտյան***

Հանգուցային բառեր. *Օսմանյան կայսրություն, կոտորածներ, թուրքական ուժեր, Աբդուլ Համիդ, Զեքի փաշա*

Օսմանյան կայսրությունում 19-րդ դարի երկրորդ կեսին շարունակվում էր դաժան քաղաքականությունը ոչ մահմեդական ժողովուրդների և հատկապես հայերի նկատմամբ: Այս հալածանքները հատկապես սուր բնույթ ստացավ երբ իշխանության եկավ Աբդուլ Համիդը (1876-1909): Օսմանյան կայսրությունը, որ երեք ամսում երեք սուլթան էր փոխել, գտնվում էր ծանր վիճակում: Աբդուլ Համիդ 2-ի կառավարման տարիները բնութագրվում են հատկապես ոչ մահմեդականների հանդեպ հալածանքների ուժեղացմամբ: Առօրյա կյանքում սովորական դարձան պաշտոնյաների կամայականությունները: Զանգվածային կոտորածները գագաթնակետին հասավ 1894-1896 թթ.: Սա թուրքական կառավարության կողմից հայերի հանդեպ իրագործած ցեղասպանական քաղաքականության առաջին փորձն էր: 1890-ական թթ. իրադարձությունների վերաբերյալ զգալի նյութեր են պարունակում ժամանակի հայ մամուլը, այդ թվում «Մուրճ» ամսագիրը: Այն հրատարակվել է Թիֆլիսում Ավետիք Արասխանյանի ջանքերով: Արևմտահայերի ճակատագրի նկատմամբ «Մուրճ» ամսագիրը հանդես բերեց սրտացավ մոտեցում: Ա. Արասխանյանը որդեգրեց «Նրանց ճակատագիրը նաև մեր ճակատագիրն է սկզբունքը»: Եվ իր ընթերցողին խոստացավ «Այժմ, երբ այդ ուսումնասիրութիւնը շուտով յանգելու է իւր վախճանին, «Մուրճ-ը կաշխատի, հնարաւոր եղածին չափ, ամեն ամիս հաշիւ տալ Տաճկա-Հայաստանի ընթացիկ կեանքի դէպքերից: Եւ որ նոյն մեր աշխատակիցը կը մնայ մերձաւորագոյն անձը այդ բաժնի համար,-կարօտ չէ յայտարարութեան» [1, 1489]: Մուրճ պարբերականում հոդվածներ են տպագրվում տարբեր թեմաներով և լուսաբանվում էր նաև 1890-ական թթ հայերի նկատմամբ իրականացված զանգվածային կոտորածները, ինչպես նաև հայ ժողովրդի ծանր վիճակը Օսմանյան կայսրությունում: Առաջին խոշոր ջարդերը, որ իրականացվեցին Սասունում էր 1894 թ.: «Սասնոյ դէպքերը» հոդվածում

խմբագիրը նկարագրում է Սասունի անառիկ դիրքը ինչպես նաև Սասունի ժողովրդին, որ ամեն քայլի գնում էին ինքապաշտպանություն կազմակերպելու համար. «Բաղեշոյ կուսակալութեան տրւած զեկոյցներէն կառավարոթիւնը տեղեկացել էր թէ օտարական զանազան անձնաւորութիւնք կը պահւեն Սասնոյ մէջ, որոնք կաշխատեն ժողովուրդը գրգռել ընդդէմ կառավարութեան և արտասհմանէն զէնքեր կը տեղափոխեն այնտեղ և թէ արդէն Անտոք սարին մէջ կազմւած է հայ հրոսակային խումբ մի որ մշտական յարձակումներով սարսափ կազդէր շրջակայ քիւրդերի վերայ» [2, 1497]:

Օսմանյան կառավարությունը երկյուղում էր, որ ընդվզումների դեպքում սասունցիներին կհետևի նաև Արևմտյան Հայաստանի հայության զգալի մասը, ուստի անհրաժեշտ է համարում, որ «ապստամբութիւնը խեղդւի դեռ իւր օրորոցի մէջ»: «Սասունը իւր անառիկ դիրքով անմատչելի սարերով և արիւնռուշտ ժողովրդով միշտ գլխաւոր վտանգ մը է Օսմանյան կայսրութեան, որոյ ըմբոստ օրինակին կրնան հետևել դրացի գաւառացիք, ուրեմն հարկ անհրաժեշտ է որ ապստանբութիւնը խեղդւի դեռ իւր օրորոցի մէջ, այն ինչ դեռ նոքա բոլորովին անպատրաստ են» [2, 1497]:

Աներևակայելի արագությամբ բոլոր շրջանների կուսակալության զորքերը շարժվում են դեպի Մուշ և Սասուն: «Տեղացիք տեսան այդ փոթորկաբեր ամպերը, որ կը կուտակւէին իրենց ազատ սարերու վերայ, չորս կողմէն դիմող լրաբերները սարսափելի տեղեկութիւններ կը հսցնէին, նրանք անգիտակից չէին թշնամու բազմութեան վերայ, սակայն ուրախ սրտով կը սպասէին այդ «Մեծ Ռուսին» ինչպէս իրենք կանւանէին առանց մտքէ անցնելու թէ իրենք ալ կարող էին ուրիշին որս լինելի դեռ րտերը չհնձած, ուրեմն մէկ օրւայ իսկ պաշար չունենալով, առանց վառօդի և գնդակի մեծ պաշարի, բոբիկ ոտներով, մէկ շապիկ հագին, ապաւինելով իրենց անառիկ սարերուն, իրենց քաջ բազուկներուն ու որոտացող շէշխաններուն և երկսայրի նաչախներուն» [2, 1497-1498]:

Այստեղ էր, որ քրդերը կուտակել էին 43000-անոց զորք, որը Օսմանյան կառավարությունից զենք և ռազմամթերք էր ստացել, թուրքերի թիվը 12.300 էր, իսկ Հայերի թիվը՝ Տալվորիկից 304, Գելիգուզանից 741, Շենիկից 208, Սեմալից 160, Իշխանաձորից 180, Հեթինքից 34, Աղբիից 120, Ալիից 208: 1894 թ. հուլիսի 27-ին «Բադրկանցիք նախայարձակ լինելով կըթալանեն Շէնիկի ոչխարները, հայերը հետապնդելով կը խլեն իրենց աւարը, կայրեն Կուրտըկ ամարանոցի բոլոր քիւրդ վրաններ և ահագին քանակութեամբ ոչխար և տաւար կըբերեն, երկար, արիւնահեղ կռւում 2

հայ 34 քիւրդ սպանւածներ» [2, 1498]:

Թուրք-քրդական ուժերը 1894 թ. օգոստոսի 3-ին հարձակվեցին Տալվորիկի, Իշխանաձորի, Աղբիի և Անդոկի վրա: Սասունցիները սկսեցին դիմադրություն կազմակերպել: Կատաղի և անհավասար էին ուժերը և կռվում ընկան 200 սասունցի: Սասունցիների համառ դիմադրությունը և հակառակորդի կորուստները պատճառ են դառնում, որ քրդերը թուրքական հրամանատարությունից պահանջեն բանակցություն՝ ցանկանալով վերջ տալ կռվին: Օգոստոսի 15-ին «Զեքի փաշան հաջորդ օրը անձամբ 500 հեծեալներով կուգայ Անտոքի ստորոտը ու կը պահանջէ որ մի քանի անձինք գան բանակցութեան ռազմամթերքի, հայի բացարձակ զգալիութիւնը կը ստիպեն գոռոզ Սասնցուն զիջանել բանակցութեան, կընտրուին 184 հրացանաձիգներ և կիջնեն դաշտ խօսակցութեան պահոն Գրգօն, որ կը դիտէ Անտոքի սարէն այս ամենը, կը տեսնէ զարմայմամբ, որ պուրակներու միջից Գունդագունդ բանակներ կը պարփակեն գնացողները, և հրացանի որոտմամբ կազդարարէ նոցա. բայց էլ ուշ էր» [2, 1501]: Ինչպես նախկինում այս անգամ էլ թուրք հրամանատարությունը դավադրաբար կոտորեց սասունցիներին, որից հետո թուրք և քուրդ միացյալ ուժերը հարձակվեցին իշխան Գրգոյի մարտիկների վրա, վերջիններս մի քանի օր միայն կարողացան դիմադրել: «Անհնար լինելով այլ ևս կենալ անօթի և մերկ, Գրգօն կըյանձնէ Անտոքի պաշտպանութիւնը կանանց և ինքը մնացեալ քաջերով, բոբիկ, մերկ անօթի, ուժասպառ, առանց վառօդի, առանց գնդակի, կիջնի Խուլփ ու Խիյանք գաւառը՝ հայ և պարէն և ըստ կարելւոյն ռազմամթերք առնելու նպատակաւ, կանցի կէփի, կը հասնի Հեղին» [2, 1502]: 1894 թ. օգոստոսի 23-ին հարձակումը, որ տևեց 24 ժամ Սասունի կանայք էին դիմադրում բայց ուժաթափ էին եղել և անկարող էին ահեղ թշնամուն երկար դիմադրել և քաշվեցին Կեփի: Անդոկը գրավվում է, ողջ մնացածները անխնա թրատվում են, մանուկների դիակները ճոճվում են նիզակների վրա, կանանց անպատվում են, իսկ Գրգոյի հարսը՝ Շաքեն կռվի մեջ հերոսուհի էր, որ կանգնում է բարձր ժայռի վրա և այնտեղից դիմում է հայ կանանց և աղջիկներին. «Սասունցի կանայք, ձեզ կը մնայ արդ որոշել, թէ լաւ կը համարիք գերի գնալ քիւրդին, ընդունել Մուհամմէտի պիղծ օրէնք, թէ ուրանալ մեր անեղծ սրբութիւնը ի պատասւանս ամբողջ Հայութեան, թէ.. կը հետևիք իմ օրինակին», [2, 1502] և երեխային գրկած նետվում է բարձր ժայռից ցած, նրա օրինակին հետևում են շատ-շատերը: Սա խոսում է հայ կնոջ բարձր արժանիքի և ինքնասիրության մասին, որ գերի ընկնելու և իր պատիվը չկորցնելու համար ինքնասպան են լինում: Թուրք և քուրդ ջոկատները

դաժան հաշվեհարդար տեսան սասունցիների հետ՝ կողոպտեցին և ավերեցին գյուղերը կոտորելով բնակչության մի մասին: Ինչպես կարդում ենք «Մուրճ»-ի թղթակից գնդապետ Հակոբ Դավթյան Լազարյանը, որն իր տեղեկությունները հավաքել էր սասունցի ականատեսից, կողոպտվել է 74 մեծ ու փոքր գյուղ: Միայն տղամարդկանցից սպանվում է 12 850 հոգի: Աբդուլ Համիդի որդեգրած հայաջինջ քաղաքականության առաջին կազմակերպված դրսևորումը՝ 1894 թ. Սասունի ջարդերը, անարձագանք չմնացին: Սասունի կոտորածից հետո նորից արթնացավ Հայկական խնդիրը, բայց այնպիսի ուժգնությամբ, որ նույնիսկ Բեռլինի կոնգրեսի ժամանակ հայկական խնդիրն այդպիսի արձագանք չէր գտեր [3, 158]: Անկարելի է ճիշտ և ստույգ տալ զոհերի թիվը, սակայն այրված և քանդված գյուղերի թվին նայելով պետք է ասենք թե շատ հարյուրների կհասներ: 23 գյուղ դարձած էր հրո ճարագ, այդքանից էլ շատ ավելին կողոպտված ու ավերված էր: Զեքի փաշան հեռագրով լուր ուղարկեց սուլթանին իր զորքի քաջության մասին և դրա փոխարեն միապետի շնորհակալանքին արժանացավ և որ սուլթանը նրան մի բարձր պաշտոն էր շնորհում: Էրզրումի անգլիական հյուպատոսն այդ պատահարների լուրը ստանալուց հետո փորձեց կոտորածների վայր գնալ և իր աչքով տեսնել տեղի ունեցողը, սակայն ճանապարհին նրան հենց Մուշում բռնեցին և արգելեցին գնալ: Եվ պատճառաբանեցին, որ չեն կարող երաշխավորել նրա ապահովությունը: Եվ երբ հյուպատոսը փորձեց տեսնել հայ եպիսկոպոսին որին ճանաչում էր, և այդ լսած լուրերը քննարկել նրա հետ, բայց իմացավ որ մի քանի ամիս է ինչ ձերբակալված է: Բելգիական «Independence Belge» նշանավոր օրաթերթը, որ այս դեպքերին կասկածանքով էր վերաբերում իր ստացած տեղեկություններից հետո ասում է հետևյալը. «Երզնկայի զինվորական հրամանատար Զեքի փաշան մի քանի մղոն ճանապարհ է անցել և հասել Սասուն, և զորքի առաջ կարդացել է Կ.Պոլսից եկած մի հրովարտակ, որ հրամայում էր հայերին ջարդել և արմատից ջնջել ի սեր սուլթանի և կառավարության»: Մեզ հասած տեղեկությունները- ասում է լրագիրը ամենահաստատ աղբյուրներից են և այնքան սոսկալի են, որ մարդ ամաչում է դրա մասին խոսել: Կանայք և աղջիկներ հարյուրներով բռնաբարվեցին և մորթվեցին հինգից տաս հազար հոգի կոտորվեցին: Եթե այս տեղեկությունները բուն հայերից ստացած լինեինք կարող է կասկածեինք: Այնուհետև լրագիրը իր եզրահանգումն է ասում. «Այս բոլորը պարզ ապացուցանում են թէ տաճիկ կառավարութեան վախճանը հասել է, պետք է վերջ տալ այն վարչութեան, որ իր ձեռքին գործիք է շինել աշխարհիս ամենաբարբարոս

տարրերը, որոնք աւելի վատ են քան Աֆրիկայի հարաւային մասի ամենավայրենի ցեղերը» [3, 158]: 1895 թ. հունվարին Սասուն ժամանեց հայկական ջարդերի պատճառներն ու հանգամանքները քննող կառավարական հանձնաժողով, որի կազմում էին Ռուսաստանի, Մեծ Բրիտանիայի Ֆրանսիայի ներկայացուցիչները [4, 824]: Թուրքական կառավարությունն ամեն միջոցի դիմում էր խաթարելու Սասունի կոտորածի քննությունը: Անգամ արգելեց օտար թղթակիցների մուտքն Արևմտյան Հայաստան: Այդպես էր, որ սուլթանը փորձում էր խեղդել յուրաքանչյուր անաչառ արձագանք Սասունի կոտորածի մասին [3, 133]: Կ. Պոլսի մեծ տերությունների դեսպանները կազմեցին բարենորոգումների ծրագիր (1895 մայիս), որի հիմքը Բեռլինի 61 հոդվածն էր: Մայիսյան բարենորոգումների այս ծրագիրը պետք է հանձնվեր սուլթանին: Եվ սա շատ հարմար առիթ էր, որ մեծ տերությունները կարողանան խառնվել Օսմանյան կայսրության ներքին գործերին, ուստի հայությանը չէր մնում ոչինչ, քան բողոքի ձայն բարձրացնել: Նրանք ընտրեցին խաղաղ ցույցի ճանապարհը՝ փորձելով այս ճանապարհով սուլթանին հիշեցնել բարենորոգումների մասին: Ըստ Մուրճի թղթակից Ստ. Խաչ-Պապյանի հաղորդմամբ, ցույցի ժամանակ տեղի ունեցած ընդհարման ընթացքում սպանվում են մի քանի ոստիկաններ, և սպաներ: Հայերից զոհվում են շուրջ 40 հոգի, ապա հետևում են ձերբակալությունները: Փողոցներում շրջում էին զինվորները ու ոստիկանները մարդկանց մոտ վախի մթնոլորտ ստեղծելու համար [5, 1306-1307]: Մինչ տերությունները հայերի վիճակը բարելավելու վերաբերյալ բարենորոգման ծրագիր են ներկայացնում Աբդուլ Համիդին, վերջինս շարունակում է իր սկսած գործը՝ փորձելով ավարտին հասցնել և վերջնականապես լուծել Հայկական հարցը: Կ. Պոլսի հայկական մեծ ցույցից անմիջապես հետո Օսմանյան կայսրության ամբողջ տարածքում սկսվում են անզեն հայերի զանգվածային կոտորածները. «Պոլսէն մինչև Տրապիզոն, Կարինէն մինչև Մարաշ և Սեբաստիա, կոտորածը, մեծ հրդեհու պէս, ծաւալեցաւ ճարակեցաւ բոլոր Տաճկահայաստանի և Կիլիկիայի նահանգները: Թիւրքի սուրը խտիր չի դներ սեռի և տարիքի մէջ. երեխան իր մօր գիրկը կը խողխողուի. մայրը իր զաւակի առջև կը մորթի, զաւակը իր հօր ներկայութենը կը յօշոտի» [6, 1516]: Տրապիզոնում 1895 թ. սեպտեմբերի 26-ին զանգվածային կոտորածների սկիզբը դրվեց: Մուրճը իր «Հայերի կոտորածները Տաճկաստանում» հոդվածում, հայտնում է ջարդերի մանրամասները. կոտորածը տևել է երկու ժամ, որին հետևել է հայերի ունեցվածքի կողոպուտը: Մարդիկ փախչում էին բայց ոչ բոլորին հաջողվեց փրկվել, քանի որ ջարդարարները

հարձակվում էին քաղաքի տարբեր մասերից: Տրապիզոնի կոտորածը և ավերումը տարածվեցին նրա շրջակա հայկական գյուղերի վրա: 1895 թ. հոկտեմբերի 7-ին հայերի կոտորածը սկսվում է Դերջանի գավառում: Հիմնականում կենդանի են մնում այն հայերը, ովքեր համաձայնում են կրոնափոխ լինել: Երկու օր անց՝ 1895 թ. հոկտեմբերի 9-ին, կոտորածներ են սկսվում Երզնկայում. առիթը հայերի կողմից Կիրիլ Խոջա անունով մի թուրքի սպանությունն էր, որը «Մահմէդականների մէջ վայելում էր մեծ յարգանք: Այդ սպանութիւնը նշան եղաւ նոր գազանութիւնների» [6, 1500]: Կոտորածը Երզնկայում վերսկսվում է հոկտեմբերի 21-ին, սպանվում է 260 հայ: Հոկտեմբերի 13-ին Բարբերդի հայությունը կոտորածի ազդանշան էր: Մահմեդականները հարձակվում են բնակչության վրա, այրում են դպրոցներ տներ: «Այրուող շինութիւների մէջ եղածներից ով փորձում էր փախչել՝ տղամարդիկ և կանայք, որոնք ընկնում էին ավազակների ձեռքը այրւում էին և ցից հանւում: Բազմաթիւ կանայք լլկւեցան և յետոյ սպանւեցան» [6, 1499]: Այսպիսով, «Մուրճ» թերթը այս խնդրին տվել է յուրովի մեկնաբանություն՝ ներկայացնելով հայկական կոտորածները, և այլ երկրների դիրքորոշումները և իրականացրած գործողությունները: Իսկ Աբդուլ Համիդյան ջարդերը իրավամբ հայ ժողովրդի ցեղասպանության սկիզբն են: Սուլթանը այս քայլով փորձում է վերջնականապես լուծել Հայկական հարցը, ինչպես նաև ազատել Արևմտյան Հայաստանը բեռ դարձած և իր համար վտանգ ներկայացնող հայերից: Եվ դրա համար ինչպես տեսանք դիմեցին ամեն մի քայլի: Իսկ մեծ տերությունների խուսանավող քաղաքականությունն էլ հնարավորություն տվեց Օսմանյան կայսրությանը իրագործելու իր դիվային ծրագիրը: Զարդարարների անպատժելիությունն էլ հետագայում հիմք հանդիսացավ 1915 թ. ցեղասպանությունն իրագործելու համար:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Մուրճ, Թիֆլիս, Թիվ 12,1889 թ.:
2. Մուրճ, Թիֆլիս, Թիվ 10, 1894 թ.:
3. Մուրճ, Թիֆլիս, Թիվ 1, 1895 թ.:
4. Մուրճ, Թիֆլիս, Թիվ 6, 1895 թ.:
5. Մուրճ, Թիֆլիս, Թիվ 9-10, 1895 թ.:
6. Մուրճ, Թիֆլիս, Թիվ 11, 1895 թ.:

Статьи об Армянских погромах 1890-ых годов на страницах журнала «Мурч»

Варданян Вардуи
ВГУ, История, Магистратура, 1-й курс

Резюме

Ключевые слова. *Османская империя, резня, Турецко-Курдские силы, Абдул Хамид, Зеки паша*

На страницах журнала Мурч было аздано множество материалов, посвященных армянским погромам 1890-ых гг. Опубликованные в «Мурче» фактические материалы являют собой огромную ценность, поскольку они воссоздают обьективную картину потерь армянского населения, в частности, Харбердской губернии и 59 деревень.

The Coverage of 1890s Armenian Massagres in "Murch"

Vardanyan Varduhi
VSU, History, MA, 1st course

Summary

Key words. *Ottoman Empire, massacres, Turkish-Kurdish, Forces, Abdul-Hamid, Zeki pasha*

Armenian periodicals comprise a lot of documents and materials about the Armenian massacres. "Murch" magazine, initited by Avetis Araskhanyan in Tiflis, covered Sasoun massacres, the ensuing peaceful protests and barbaric acts during those demonstrations, the reaction of European countries, May reforms and the massacres that started in 1895.There is also detailed information about the Armenian massacres in Kharberd region and its 59 villages (1 October, 1895-15 January, 1896).The appendix of the article comprises the list of destroyed villages in Sasoun.

ԻՐԱՎԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

ЮРИСПРУДЕНЦИЯ

JURISPRUDENCE

Տուգանքը՝ որպես պատժի հիմնական տեսակ

Դավթյան Սարգիս
ՎՊՀ, Իրավագիտություն, 4-րդ կուրս
*Գիտական դեկավար՝ **Է. Գյունաշյան***

Հանգուցային բառեր. *քրեական օրենսգիրք,պատիժ, հանցագործություն, տուգանք, հանցավոր արարք, քրեական օրենք*

Սույն հոդվածի նպատակն է ուսումնասիրել Տուգանքը որպես պատժի հիմնական տեսակ, վեր հանել առկա խնդիրները և առաջարկել նոր լուծումներ:

Դեռևս Հուստինիանոսի «Դեգիստներ»-ում առկա էր հռոմեական իրավունքի այն դրույթը համաձայն որի՝ ոչ ոք չի կարող պատժվել իր մտքերի համար: Այս դրույթը իր արտացոլումն է գտել հանցագործության հասկացության մեջ:

Քրեական օրենսգրքի Հոդված 18-ի համաձայն՝ Հանցագործություն է համարվում մեղավորությամբ կատարված՝ հանրության համար վտանգավոր այն արարքը, որը նախատեսված է սույն օրենսգրքով: Հանցագործություն չի համարվում այն գործողությունը կամ անգործությունը, որը թեև ձևականորեն պարունակում է սույն օրենսգրքով նախատեսված որևէ արարքի հատկանիշներ, սակայն իր նվազ կարևորության պատճառով հասարակական վտանգավորություն չի ներկայացնում, այսինքն՝ ֆիզիկական կամ իրավաբանական անձին, հասարակությանը կամ պետությանը էական վնաս չի պատճառել և չէր կարող պատճառել [1]:

Հանցագործության օրենսդրական հասկացությունը թույլ է տալիս եզրակացնել, որ օրենսդիրը հանցագործություն է համարում արարքը քրեկան պատասխանատվության հիմքում ընկած են ոչ թե անձի հակահասարակական հատկությունները, նրա գաղափարները, հայացքները, այլ կոնկրետ հանցավոր արարքը: Անձը քրեական պատասխանատվության կարող է ենթարկվել միայն այն դեպքում,երբ նրա մտադրությունները, գաղափարները դրսևորվել են կոնկրետ արարքի մեջ՝ առարկայացել են այդ արարքում [2, 75]: Պատիժ նշանակելու համար անհրաժեշտ է որպեսզի անձը կատարած լինի հանցագործություն որը նշված է քրեական օրեսգրքում որպես հակաիրավական արարք և միայն այդ դեպքում անձը կարող է ենթարկվել պատասխանատվության: Այսինքն Հանցավոր արաքն առաջ է բերում դրանում մեղավորի քրեական պատասխանատ-

վությունը: ՀՀ քրեական օրենսգքրի հոդված 48-ի երկրորդ մասի համաձայն՝ պատիժը կիառվում է արդարությունը վերականգնելու, պատիժ ենթարկված անձին ուղղելու, ինչպես նաև հանցագործությունները կանխելու նպատակով [1] : Քրեական օրենքը նախատեսում է խստությամբ, բնույթով և հանցագործի նկատմամբ ներգործության առանձնահատկություններով տարաբնույթ պատժատեսակներ: Պատժի տեսակների բազմազանությունը հնարավորություն է տալիս դատարանին հաշվի առնել հանցագործության և հանցագործի վտանգավորության աստիճանը, դրանով իսկ նշանակել արդարացի պատիժ ,որն առավելագույնս կնպաստի ինչպես դատապարտյալի ուղղմանը,այնպես էլ սոցիալական արդարության վերականգմանը և նոր հանցագործությունների կանխմանը:

Քրեական օրենսգրքի հոդված 49-ը նախատեսում է պատժի հետևյալ տեսակները՝

1) Տուգանք 2) որոշակի պաշտոններ զբաղեցնելու կամ որոշակի գործունեությամբ զբաղվելու իրավունքից զրկելը 3) հանրային աշխատանքներ 4) հատուկ կամ զինվորական կոչումից, կարգից, աստիճանից կամ որակավորման դասից զրկելը 5) գույքի բռնագրավումը 6) կալանք 7) կարգապահական գումարտակում պահելը 8) ազատազրկումը որոշակի ժամկետով 9) ցմահ ազատազրկում [1]: Ըստ նշանակման կարգի և իրավաբանական՝ պատժի համակարգը կազմող բոլոր պատժատեսակները քրեական օրենսգրքի հոդված 50-ի համաձայն, բաժանվում են երեք խմբի՝ հիմնական և լրացուցիչ պատիժներ, ինչպես նաև պատիժներ, որոնք կարող են նշանակվել և որպես հիմնական և որպես լրացուցիչ [2, 387]: Հիմնական պատժի տեսակներն են՝ տուգանքը, կալանքը, ազատազրկումը որոշակի ժամկետով, ցմահ ազատազրկումը: ՀՀ քրեական օրենսգրքի հոդված 51-ի համաձայն՝ տուգանքը դրամական տուժանք է, որը նշանակվում է ոչ մեծ և միջին ծանրության հանցանքների համար ՀՀ քրեական օրենսգրքի հատուկ մասով նախատեսված դեպքերում և սահմաններում՝ պատիժ նշանակելու պահին Հայաստանի Հանրապետությունում օրենքով սահմանված նվազագույն աշխատավարձի երեսնապատիկից երեքհազարապատիկի չափով [1]:

Ըստ Քրեական իրավունք ընդհանուր մասի՝ տուգանքը դատապարտյալի գույքային իրավունքները սահմանափակող, անզգուշությամբ, ինչպես նաև շահադիտական դրդումներով կատարվող դիտավորյալ հանցանքների դեմ պայքարի գործում առավել նպատակահարմար և արդյունավետ պատժատեսակ է: Քրեաիրավական տեսանկյունից տու-

գանքը որոշակի ծավալով գույքային սահմանափակման բնույթ ունեցող քրեական պատասխանատվության միջոց է [2, 392] ։

ՀՀ քրեական օրենսգրքի համապատասխան տուգանքը կարող է նշանակվել միայն որպես հիմնական պատիժ։ Տուգանքը ՝ որպես հիմնական պատիժ նշանակվում է, երբ այն ուղղակիորեն նախատեսված է քրեական օրենսգրքի հատուկ մասի հոդվածի սանկցիայում, ինչպես նաև օրենքով նախատեսվածից ավելիի մեղմ պատիժ նշանակելիս, պատժի չկրած մասն ավելի մեղմ պատժատեսակով փոխարինելիս [1]։ Տուգանքը որպես քրեական պատիժ տարբերվում է նույնանուն վարչական տույժից նրանով, որ նշանակվում է բացառապես հանցագործության համար, դատարանի դատավճռով և առաջացնում է դատվածություն։ Տուգանք պատժատեսակը կարող է նշանակվել գրեթե բոլոր ոչ ծանր և միջին ծանրության հանցագործությունների համար թե չափահասների և թե անչափահասների նկատմամբ։ Ընդ որում տուգանք նախատեսող սանկցիաների ճնշող մեծամասնությունը նախատեսված է գույքային բնույթի հանցագործությունների համար, երբ հանցագործը ձգտում է ուրիշի հաշվին որևէ նյութական շահ ստանալ։ Այս պարագայում տուգանքի կիրառումը ոչ միայն զրկում է նրան շահ ստանալու հնարավորությունից, այլև որոշակի չափով սահմանափակում է նրա անձնական շահերը։ Տուգանքը արդյունավետ պատիժ է նաև անզգույշ հանցագործությունների դեմ պայքարի գործում, երբ հաճախ անհրաժեշտություն չկա հանցագործին մեկուսացնել հասարակությունից [2, 394]։ Տուգանքը հանդիսանալով որպես հիմնական պատժատեսակ և համադրելով հիմնական պատժի տեսակների հետ ինչպիսին են ՝ կալանքը, որոշակի ժամակետով ազատազրկումը և ցմահ ազատազրկումը, կարելի է նկատել որ մնացած հիմնական պատժի տեսակները իրենց մեջ ներառում են անձի ազատության սահմանափակման որոշակի պայման՝ որպես անձի կատարած արարքի հանդեպ պետության կողմից ավելի խիստ պատժատեսակներ՝ որոնք հանցագործություն կատարած անձին ուղղման հստակ ազդակներ ունեն, իսկ տուգանքը որպես պատժի համակարգի ինքնուրույն պատժատեսակ պետք է հասնի դատապարտյալի ուղղման նպատակին, սակայն հաշվի առնելով այն հանգամանքը, որ տվյալ պատժատեսակը հիմնականում կիռավում է ֆինանսական հանցագործություն կատարած անձանց նկատմամբ՝ չի կարող ուղղման նպատակ ունենա իր մեջ որպես պատժի հիմնական տեսակ, քանի որ հանցագործություն կատարած անձը պետք է գիտակցի և հասկանա և ուղղման ուղին ընտրի՝ քանի որ արդարադատությունը դա է պահանջում, այդ իսկ պատճառով հաշվի առնելով վերո-

նշյալը կարելի է հանգել այն եզրակացությանը, որ տուգանքը որպես պատժի հիմնական տեսակ ոչ արդյունավետ է և ավելին հանգեցնում է այնպիսի մի իրավիճակի, որ հանցագործություն կատարած անձը հայտնվում է ավելի վաթար ֆինանսական իրավիճակում և նրան նման կերպով ուղղելը սխալ է և հարկավոր է որպեսզի տուգանքը դուրս բերվի հիմնական պատժի տեսակներից և ներառվի որպես լրացուցիչ պատժի տեսակ՝ ինչպիսին է օրինակ ՝ գույքի բռնագրավումը, Քանի որ անձը չի կարող կատարած լինելով ֆինանսական հանցագործություն նման միջոցով գիտակցի և հասկանա իր արարքի լրջությունը և հրաժարվի ևս մեկ անգամ կատարել նմանատիպ արարք։

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Հայաստանի Հանրապետության Քրեական օրենսգիրք (Ընդունված է 2003 թվականի ապրիլի 18-ին)։
2. Առաքելյան Սերգեյ, Գաբուզյան Արա, Խաչիկ Հարություն, Ղազինյան Գագիկ, Հայաստանի Հանրապետության Քրեական իրավունք Ընդհանուր մաս, ԵՊՀ հրատարակություն, Երևան, 2012, 540 էջ։

Штраф как основной вид наказания

Давтян Саргис
ВГУ, Юриспруденция, 4-ый курс

Резюме

***Ключевые слова**: уголовный кодекс, наказание, преступление, штраф, закон, уголовное деяние*

Эта работа посвящена штрафу, как основному виду наказания, выявлению основной проблемы, которая является препятствием в осуществлении правосудия и не исполняет положений, предусмотренных в качестве основного вида наказания. Это: лицо, совершившее преступление, должно осознать, как исправить себя после совершенного им преступления, как восстановить нарушенные в результате преступления общественные отношения. Именно поэтому необходимо, чтобы штраф как основной вид наказания был упразднён и стал дополнительным.

Fine as a Primary Way of Punishment

Davtyan Sargis
VSU, Jurisprudence, 4th course

Summary

***Key words**: criminal code, punishment, crime, fine, law, criminal act*

This work is dedicated to fine, as a primary way of punishment. To find out the primary issue that blocks administrating justice and which does not correspond to the primary goal of the primary punishment that is: The person who committed a criminal act should understand and straighten himself after the commitment of a criminal act, and also public relations which where trampled of a criminal act should be recovered. Because of that fine should be removed as a primary way of punishment and become an additional way of punishment.

Փաստաբանական գաղտնիքը: Փաստաբանական գաղտնիքի դերը արդարադատության համակարգում

Հայրապետյան Աննա
ՎՊՀ, Իրավագիտություն, 4-րդ կուրս
Գիտական դեկավար՝ ***Է. Գյունաշյան***

Հանգույցային բառեր. *փաստաբան, փաստաբանական գաղտնիք, օպերատիվ-հետախուզական գործունեություն, ներքին դիտում, նամակագրության, փոստային, հեռագրական և այլ հաղորդումների վերահսկում, հեռախոսային խոսակցությունների վերահսկում*

ՀՀ Սահմանադրությունը սահմանում է, յուրաքանչյուրի իրավաբանական օգնություն ստանալու իրավունքը: Իրավաբանական օգնություն ապահովելու նպատակով երաշխավորում է անկախության, ինքնակառավարման և փաստաբանների իրավահավասարության վրա հիմնված փաստաբանության գործունեությունը: Փաստաբանների կարգավիճակը, իրավունքները և պարտականությունները սահմանվում են օրենքով [4]: Պաշտպան ունենալու իրավունքը՝ որպես հանցագործություն կատարելու մեջ մեղադրվող յուրաքանչյուր անձի նվազագույն իրավունք, ամրագրված է նաև մի շարք միջազգային փաստաթղթերում: ՀՀ քր. դատ. օր-ի 68-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ պաշտպան է այն փաստաբանը, որը քրեական գործով վարույթի ընթացքում ներկայացնում է կասկածյալի կամ մեղադրյալի օրինական շահերը և նրանց ցույց է տալիս իրավաբանական օգնություն՝ օրենքով չարգելված բոլոր միջոցներով: Պաշտպանի դատավարական գործունեության նպատակները սահմանված են ՀՀ քր. դատ. օր-ի 73-րդ հոդվածի 1-ին մասում, որի համաձայն՝ պաշտպանի նպատակներն են կասկածյալին կամ մեղադրյալին իրավաբանական օգնություն ցույց տալու, նրա օրինական շահերը պաշտպանելու համար պարզելու մեղադրանքը հերքող, կասկածյալի կամ մեղադրյալի պատասխանատվությունը բացառող կամ պատիժը և դատավարական հարկադրանքի միջոցները մեղմացնող հանգամանքները [5, 2, 185]: Նշված նպատակների իրականացման համար պաշտպանի խնդիրներն են՝ իր պաշտպանյալի հետ մշակելու պաշտպանության իրականացման ռազմավարությունը, որոշելու անհրաժեշտ դատավարական

գործողությունների իրականացման և ապացույցների ձեռքբերման մեթոդներն ու միջոցները և այլն: Այդ նպատակների իրականացման համար պաշտպանին քրեադատավարական օրենսդրությունը օժտել է իրավունքներով:

Քրեադատավարական հարաբերություններում ոչ միայն սահմանվում են պաշտպանի վարքագծի թույլատրելի չափը, այլև որոշ դեպքերում նախատեսում են նրա վարքագծի պարտադիր չափը, այսինքն՝ վերածվում են դատավարական պարտականությունների, որոնց ոչ պատշաճ կատարումը հանգեցնում է կասկածյալի, մեղադրյալի իրավունքների ոտնահարմանը: Այսպիսով, ըստ ՀՀ քր. դատ. օր. 73-րդ հոդվածի՝

1) կատարել պաշտպանյալի շահերին հակասող որևէ գործողություն
2) հակառակ պաշտպանյալի դիրքորոշման՝ ընդունել դեպքի հետ նրա առնչությունը և մեղավորությունը դրա կատարման մեջ.
3) առանց պաշտպանյալի հանձնարարության՝

- հայտարարել հանցանքի կատարման մեջ նրա մեղավորության մասին.
- հայտարարել տուժողի հետ պաշտպանյալի հաշտվելու մասին.
- ընդունել քաղաքացիական հայցը.
- հետ վերցնել պաշտպանյալի ներկայացրած բողոքը:
- ինքնակամ դադարեցնել իր լիազորությունները որպես այդպիսին, խոչընդոտել այլ պաշտպան հրավիրելուն կամ քրեական գործով վարույթին վերջինիս մասնակցելուն.
- քրեական գործով վարույթին մասնակցելու իր լիազորությունները վերավստահել այլ անձի.
- հրապարակել այն տեղեկությունները, որոնք իրեն հայտնի են դարձել իրավաբանական օգնություն ցույց ընթացքում, եթե դրանք կարող են օգտագործվել պաշտպանյալի շահերի դեմ՝ բացառությամբ օրենքով նախատեսված դեպքերի [5]:

Այսպիսով՝ պաշտպանության իրականացման ընթացքում պաշտպանին հասանելի դարձած տեղեկությունների հրապարակման անթույլատրելիությունը կասկածյալի, մեղադրյալի պաշտպանության իրականացման էական երաշխիք է հանդիսանում: Այն միաժամանակ նպաստում է անձի սահմանադրական այլ իրավունքների իրականացմանը: Փաստաբանական գաղտնիքի հիմքում ընկած է Սահմանադրության 31-

րդ հոդվածով սահմանված՝ մասնավոր և ընտանեկան կյանքի, պատվի ու բարի համբավի անձեռնմխելիությունը:

Փաստաբանական գաղտնիքի պահպանման տեսանկյունից կարևոր երաշխիք է հանդիսանում ՀՀ քր. դատ. օր 86-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետը, ըստ որի՝ որպես վկա չեն կարող կանչվել և հարցաքննվել՝ «փաստաբանները՝ պարզելու համար տեղեկություններ, որոնք նրանց կարող են հայտնի լինել կապված իրավաբանական օգնության դիմելու կամ նման օգնություն ցույց տալու հետ» [5]: «Փաստաբանության մասին» ՀՀ օրենքի 25-րդ հոդված համաձայն՝

1. Փաստաբանական գաղտնիք են համարվում այն տեղեկությունները և ապացույցները, որոնք իրավաբանական օգնություն հայցող անձը փոխանցել է փաստաբանին, փաստաբանի տված խորհրդատվության բովանդակությունն ու բնույթը, ինչպես նաև այն տեղեկությունները և ապացույցները (նյութերը, կրիչները), որոնք փաստաբանը փաստաբանական գործունեության իրականացման ընթացքում ձեռք է բերել ինքնուրույն:

2. Փաստաբանը, փաստաբանի մոտ աշխատող ոչ փաստաբանը, ինչպես նաև փաստաբանների պալատի աշխատողն իրավունք չունի հրապարակելու փաստաբանական գաղտնիքը, բացառությամբ սույն հոդվածով նախատեսված դեպքերի:

3. Փաստաբանը կարող է հրապարակել փաստաբանական գաղտնիքը, եթե՝

1) առկա է վստահորդի համաձայնությունը.

2) դա անհրաժեշտ է նրա և վստահորդի միջև ծագած դատական վեճում կամ կարգապահական վարույթում պահանջները հիմնավորելու կամ իր պաշտպանության համար:

3) դա անհրաժեշտ է «Փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով նախատեսված և փաստաբանական գաղտնիք հանդիսացող տեղեկատվությունը նախապատրաստվող փողերի լվացման կամ ահաբեկչության ֆինանսավորման վերաբերյալ կասկածի կամ այդ օրենքով սահմանված լիազոր մարմնի հարցման հիման վրա այդ օրենքով սահմանված դեպքերում և կարգով լիազոր մարմնին տրամադրելու համար, բացառությամբ այնպիսի տեղեկատվության, որը ստացվել է հաճախորդից և այլ աղբյուրներից՝ դատական, վարչական, արբիտրաժային կամ միջնոր-

դային վարույթում հաճախորդին պաշտպանելու կամ նրա շահերը ներկայացնելու հետ կապված օրենքով փաստաբանին վերապահված գործունեությունն իրականացնելիս, ինչպես նաև իրավական խորհրդատվություն տրամադրելիս, բացառությամբ այն դեպքերի, երբ հաճախորդը խորհրդատվություն է ստանում փողերի լվացման կամ ահաբեկչության ֆինանսավորման նպատակով:

4. Փաստաբանը հրապարակում է փաստաբանական գաղտնիքը, եթե առկա է Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքով նախատեսված՝ հաստատապես հայտնի նախապատրաստվող ծանր կամ առանձնապես ծանր հանցագործության մասին տեղեկատվություն:

5. Փաստաբանական գաղտնիքի պահպանման պարտականությունը չի սահմանափակվում ժամանակի մեջ և տարածվում է նաև փաստաբանական գործունեության արտոնագրի գործողությունը կասեցված կամ դադարեցված անձի նկատմամբ [1,249, 6]:

ՀՀ ներպետական օրենսդրությունը փաստաբանական գաղտնիքի պահպանման տեսանկյունից բավականին լուրջ երաշխիքներ է ստեղծել, սակայն փաստաբանական գաղտնիքի տեսանկյունից մտահոգիչ ռիսկեր են պարունակում «Օպերատիվ-հետախուզական գործունեության մասին» ՀՀ օրենքով նախատեսված կարգավորումները: Օրենքի 31-րդ հոդվածի 7-րդ մասն սպառիչ թվարկում է այն օպերատիվ-հետախուզական միջոցառումների ցանկը, որոնց անցկացումն արգելվում է, երբ անձը, որի նկատմամբ իրականացվելու է այդ միջոցառումը, հաղորդակցվում է իր փաստաբանի հետ:

Այդ միջոցառումներն են՝

1) ներքին դիտումը,
2) նամակագրության, փոստային, հեռագրական և այլ հաղորդումների վերահսկումը
3) հեռախոսային խոսակցությունների վերահսկումը:

Ըստ որի անհապաղ ոչնչացման են ենթակա վերոնշյալ օպերատիվ-հետախուզական միջոցառումների անցկացման ընթացքում օպերատիվ-հետախուզական միջոցառումների անցկացման նպատակից անկախ պատճառով ստացված փաստաբանական գաղտնիք պարունակող տեղեկությունները [7]:

Փաստաբանական գաղտնիքի վերաբերյալ առկա են նաև մի շարք միջազգային փաստաթղթեր:

Եվրոպական խորհրդի Նախարարների կոմիտեի՝ «Փաստաբանի մասնագիտական գործունեության ազատության մասին» 2000թ. հոկտեմբերի 25-ի թիվ N° Rec(2000) 21 հանձնարարականի 1-ին սկզբունքի 1-ին կետի համաձայն՝ հարկավոր է ձեռնարկել բոլոր անհրաժեշտ միջոցները, որպեսզի հարգվի, պաշտպանվի և խթանվի փաստաբանի մասնագիտական գործունեության ազատությունը առանց խտրականության և իշխանությունների կամ հասարակության կողմից անհիրավաչափ միջամտության, հատկապես Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայի համապատասխան դրույթների լույսի ներքո:

Նույն սկզբունքի 4-րդ կետի համաձայն՝ փաստաբանները չպետք է տուժեն հետևանքներից կամ ենթարկվեն ցանկացած պատժամիջոցների կամ ճնշումների վտանգի, երբ գործում են իրենց մասնագիտական չափանիշներին համապատասխան:

Փաստաբանական գաղտնիքի պահպանման տեսանկյունից ռիսկայնությունն արտահայտվում է հետևյալում՝ օրենքով փաստաբանական գաղտնիքը պաշտպանվում է ընդամենը երեք տեսակի օպերատիվ-հետախուզական միջոցառումներից: Եվ հարց է առաջանում ինչու՞ չի արգելվում այնպիսի ՕՀՄ-ների անցկացումը, ինչպիսիք են իրերի և փաստաթղթերի հետազոտումը, արտաքին դիտումը, օպերատիվ ներդրումը, երբ այդ ժամանակ վստահորդը հաղորդակցվում է իր փաստաբանի հետ: Թվարկված ՕՀՄ-ների իրականացումը նույնպես լուրջ սպառնալիք կարող է ներկայացնել փաստաբանական գաղտնիքի պահպանման համար:

«Օպերատիվ-հետախուզական գործունեության մասին» ՀՀ օրենքի 20-րդ հոդվածի համաձայն՝ «Իրերի և փաստաթղթերի հետազոտումը դրանց զննումն է, հատկանիշների և բովանդակության բացահայտումը՝ տեխնիկական միջոցների կիրառմամբ կամ առանց դրանց, ինչպես նաև հետազոտման արդյունքների ամրագրումը տեսանկարահանման, ձայնագրման, լուսանկարահանման, էլեկտրոնային և այլ կրիչների միջոցով կամ առանց դրանց: Հետազոտման ընթացքում դրանից հետո ապահովվում է օբյեկտների և դրանց վրա եղած հետքերի պահպանությունը» [7]:

Հարցն այն է, որ փաստաբան-վստահորդ փոխհարաբերությունները ենթադրում են նաև որոշակի փաստաթղթաշրջանառություն, որը նույնպես բովանդակում է (կարող է բովանդակել) փաստաբանական գաղտնիք

կազմող տեղեկություններ: Օրենքով արգելող նորմի բացակայության պայմաններում, օրինակ, փաստաբան-վստահորդ հանդիպման պահին վստահորդի մոտից կարող են վերցնել (առգրավվել) տվյալ պահին փաստաբանի կողմից վստահորդին հանձնված, փաստաբանական գաղտնիք պարունակող փաստաթղթերը և հետազոտվել օպերատիվ ծառայությունների կողմից, ինչն ուղղակիորեն խաթարում է փաստաբանական գաղտնիքի պահպանման էությունը [3]: «Օպերատիվ-հետախուզական գործունեության մասին» ՀՀ օրենքի 21-րդ հոդվածի համաձայն՝ «Արտաքին դիտումը, առանց բնակարանի անձեռնմխելիության խախտման, անձանց հետևելը կամ առանձին դեպքերի և իրադարձությունների ընթացքի վերահսկումն է բաց տարածությունում կամ հասարակական վայրերում՝ հատուկ և այլ տեխնիկական միջոցների կիրառմամբ կամ առանց դրանց, ինչպես նաև դիտման արդյունքների ամրագրումը տեսանկարահանման, լուսանկարահանման, էլեկտրոնային և այլ կրիչների միջոցով կամ առանց դրանց» [7]:

Փաստաբան-վստահորդ հանդիպումները կարող են տեղի ունենալ ինչպես փակ, այնպես էլ՝ բաց տարածություններում: Բաց տարածությունում կամ հասարակական վայրերում փաստաբան-վստահորդ հանդիպումների կազմակերպումն ամենևին չի նշանակում, որ նրանց հանդիպման թեման ու բովանդակությունը կարող են հասանելի լինել երրորդ անձանց կամ դառնալ այլ անձանց սեփականությունը: Այսպիսով, փաստաբանական գաղտնիքի պահպանման համատեքստում «ներքին դիտում» ՕՀՄ-ին զուգահեռ պետք է արգելել նաև «արտաքին դիտում» ՕՀՄ-ի իրականացումը, քանի որ «արտաքին դիտում» ՕՀՄ-ի իրականացմամբ նույնպես խախտվում է (կարող է խախտվել) փաստաբանի և վստահորդի կոնֆիդենցյալ հաղորդակցության սկզբունքը [3]: «Օպերատիվ-հետախուզական գործունեության մասին» ՀՀ օրենքի 27-րդ հոդվածի համաձայն՝ «Օպերատիվ ներդրումը օպերատիվ-հետախուզական գործունեություն իրականացնող մարմինների հաստիքային գաղտնի աշխատակիցների, ինչպես նաև այդ մարմինների հետ գաղտնի հիմունքներով համագործակցող անձանց գաղտնի ներդրումն է որոշակի մարմիններում, կազմակերպություններում կամ խմբավորումներում»: Օպերատիվ ներդրման պարագայում չափազանց մեծ է փաստաբանական գաղտնիք հանդիսացող տեղեկությունների բացահայտման, հրապարակ-

ման և որպես ապացույց օգտագործելու հնարավորության ռիսկը [7]։

Այսպիսով՝ ամփոփելով ամբողջը կարող ենք եզրակացնել, որ «Օպերատիվ-հետախուզական գործունեության մասին» ՀՀ օրենքի 31-րդ հոդվածի 7-րդ մասով պետք է արգելվի նաև «իրերի և փաստաթղթերի հետազոտում», «արտաքին դիտում» և «օպերատիվ ներդրում» ՕՀՄ-ների իրականացումը։

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Գ. Ղազինյան «Հայաստանի Հանրապետության քրեական դատավարություն»։ Ընդհանուր մաս, Երևանի համալսարանի հրատարակչություն, Երևան, 2004, էջ 415։
2. Հեղինակային խումբ «Հայաստանի Հանրապետության քրեական դատավարություն»։ Մաս 1, «Լուսաբաց» հրատարակչություն, Երևան-2017թ., էջ 630։
3. Վ.Սուքիասյան «Փաստաբանական գաղտնիքի քրեադատավարական պաշտպանությունը մարդու իրավունքների եվրոպական դատարանի նախադեպային իրավունքում»։ «ՀՀ դատական միություն» հրատարակչություն, Երևան-2020։
4. ՀՀ Սահմանադրություն https://www.arlis.am
5. ՀՀ քրեական դատավարության օրենսգիրք- https://www.arlis.am/
6. «Փաստաբանության մասին» ՀՀ օրենք- https://www.arlis.am/
7. «Օպերատիվ -հետախուզական գործունեության մասին» ՀՀ օրենք- https://www.arlis.am/

Адвокатская тайна. Роль адвокатской тайны в системе правосудия

Айрапетян Анна
ВГУ, Юриспруденция, 4-ый курс

Резюме

Ключевые слова: *адвокат, адвокатская тайна, оперативно-розыскная деятельность, внутренний просмотр, переписка, почтовая, контроль над телеграфным и другими видами программ, контроль над телефонными разговорами*

Адвокатская тайна имеет важное значение при осуществлении адвокатской деятельности. Для защиты, сохранения и урегулирования адвокатской секретности были приняты ряд правовых документов, договоров, резолюций, конвенций и т.д. Внутренним законодательством РА созданы достаточно серьёзные гарантии с точки зрения адвокатской тайны, но с точки зрения адвокатской тайны, положения Закона РА «Об оперативно-розыскной деятельности», которым посвящена данная работа, содержат тревожные риски.

Lawyer Secrecy. The Role of Attorney Secrecy in the Justice System

Hayrapetyan Anna
VSU, Jurisprudence, 4th course

Summary

Key words: *lawyer, attorney-client privilege, investigative activities, internal review, correspondence, postal, control of telegraphic and other types of programs, control of telephone conversations*

Attorney-client privilege is important in the implementation of the advocacy. A number of legal instruments, treaties, resolutions, conventions, etc., have been adopted to protect, preserve and regulate the secrecy of lawyers.

Internal legislation of the Republic of Armenia has created sufficiently serious guarantees from the point of view of attorney-client confidentiality, but from the point of view of attorney-client confidentiality, the provisions of the Law of RA "On Operative-Investigative Activity", to which this work is devoted, contain alarming risks.

Ագրեսիայի հանցագործությունը և 2020 թ. աղրբեջանական ագրեսիան

Մարտիրոսյան Կարեն
ԱրՊՀ, Իրավագիտություն, 3-րդ կուրս,
*Գիտական ղեկավար՝ ի. գ. թ., **Տ. Գևորգյան***

Հանգուցային բառեր. *ագրեսիա, միջազգային իրավունք, միջազգային քրեական իրավունք, հանցակազմ, աղրբեջանական ագրեսիա, միջազգային և քրեական պատասխանատվություն*

Առաջին համաշխարհային պատերազմը պաշտոնապես ավարտվել է 1919 թ. հունիսի 28-ին՝ Վերսալյան հաշտության պայմանագրի կնքումով: Այդ պայմանագրի 227-րդ հոդվածով դաշնակիցները հանրային մեղադրանք առաջադրեցին գերմանական կայսերը՝ Վիլհելմ II-ին՝ «միջազգային բարոյականությունը ոտնահարելու համար» [6]: Ըստ էության, այս հոդվածով առաջին անգամ պատմականորեն արձանագրվեց ագրեսիայի հանցագործությունը և դրա համար իրավական պատասխանատվության ենթարկելու անհրաժեշտությունը: Սակայն, ինչպես ցույց տվեց ժամանակը, Վերսալյան պայմանագրի 227-րդ հոդվածն այդպես էլ մնաց թղթի վրա, բացի այդ չափազանց անորոշ էր «միջազգային բարոյականություն» հասկացությունը:

1928 թ. կնքվեց Բրայան-Քելոգ դաշնագիրը, որով ևս մեկ անգամ վերհաստատվեց քաղաքական վեճերի խաղաղ կարգավորման անհրաժեշտությունը, պատերազմական գործողություններ վարելու անթույլատրելիությունը և պատերազմը միջազգային հարաբերություններում որպես լեգիտիմ գործիք դիտարկելու բացառումը: Փաստորեն, 1928 թ. Փարիզյան դաշնագրով և ապա նաև Նյուրնբերգյան դատավարությամբ հետզհետե ընդգծվեց խաղաղության դեմ ուղղված հանցագործությունը որպես միջազգային հանցագործություն ընկալելու միտումը, ինչպես նաև որոշակիացվեց խաղաղության դեմ ուղղված հանցագործության հանցակազմը՝ չնայած հանցագործության հատկանիշների՝ միայն մասամբ բացահայտված լինելու հանգամանքին: Մինչ այդ շրջանառվում էր նաև տրամագծորեն հակառակ՝ «արդար պատերազմի» հայեցակարգը, ըստ որի՝ պատերազմներն, այդ թվում՝ ագրեսիվ, թույլատրելի են և օրինա-

կան, քանի որ պատերազմը պայքար է ազգերի միջև: Բարեբախտաբար, այս հայեցակարգը լայն տարածում և պաշտպանություն չգտավ:

1974 թ. դեկտեմբերի 14-ի ՄԱԿ-ի Գլխավոր վեհաժողովի XXIX նստաշրջանի թիվ 3314 բանաձևը տվեց ագրեսիայի սահմանումը. «Ագրեսիա է պետության կողմից այլ պետության ինքնիշխանության, տարածքային անձեռնմխելիության կամ քաղաքական անկախության դեմ ռազմական ուժի գործադրումը կամ ՄԱԿ-ի կանոնադրությանն անհարիր որևէ այլ գործողություն»:

Վերջապես, 1998 թ. ընդունվեց Միջազգային քրեական դատարանի Հռոմի ստատուտը, որը կոչված էր արդարադատություն իրականացնել այն անձանց նկատմամբ, ովքեր կատարել են մարդկության դեմ ուղղված հանցագործություններ՝ ագրեսիա, ցեղասպանություն, ռազմական հանցագործություններ:

Այսպիսով, 21-րդ դարասկզբին միջազգային-իրավաքաղաքական միտքը և դրան համապատասխան ընդունված միջազգային իրավունքի ակտերն արձանագրեցին, որ ագրեսիվ պատերազմը մարդկության դեմ ուղղված ծանրագույն հանցագործություն է:

Այնուամենայնիվ, ագրեսիայի հանցագործության ընկալման հարցում գոյություն ունեին տարաձայնություններ, որոնք պայմանավորված էին հետևյալ հարցադրումներով.

1. Ըստ միջազգային իրավունքի՝ ինչպե՞ս պետք է որոշվի ագրեսիայի հանցակազմի առկայությունը:
2. Ո՞վ պետք է պատասխանատվություն կրի ագրեսիայի հանցագործություն կատարելու համար [8, 310-311]:

Առաջին հարցադրման կապակցությամբ կա երկու տեսակետ: Առաջին տեսակետի կողմնակիցները գտնում են, որ ագրեսիայի հանցագործության որոշարկումը պայմանավորված է հետևյալ գործողությունների կատարմամբ՝ ագրեսիվ պատերազմի ծրագրում, նախապատրաստում, սանձազերծում և վարում, որոնք էլ կազմում են հանցակազմի օբյեկտիվ կողմը: Երկրորդ տեսակետի կողմնակիցների կարծիքով անհրաժեշտ է որոշակիացնել՝ պետության կոնկրետ որ գործողությունները պետք է մեկնաբանվեն որպես ագրեսիա:

Հռոմի ստատուտը սահմանում է ագրեսիայի առանձին հանցագործությունները [5]: Դրանք են՝

- մեկ այլ պետության տարածք զինված ուժերի ներխուժումը կամ հարձակումը կամ ցանկացած ռազմական օկուպացիա,
- պետության զինված ուժերի կողմից այլ պետության տարածք ռմբակոծելը,
- պետության նավահանգիստները կամ ափերը շրջափակելը,
- այլ պետության ցամաքային, ծովային կամ օդային ուժերի վրա հարձակվելը,
- միջազգային պայմանագրերի խախտմամբ այլ պետության զինված ուժերն օգտագործելը,
- ագրեսիվ գործողության համար տարածք տրամադրելը,
- վարձկանների կամ այլ խմբավորումների ագրեսիվ գործողություններն ուղղորդելը:

Ընդ որում, այս գործողություններից յուրաքանչյուրը պետք է գնահատել որպես ագրեսիայի ինքնուրույն և այլընտրանքային դրսևորում: Միևնույն ժամանակ, վերոնշյալ գործողությունները չեն կարող որակվել որպես ագրեսիա, եթե ՄԱԿ-ի անվտանգության խորհրդի կողմից պատերազմ վարելը թույլատրված է և եթե պատերազմական գործողությունները բխում են ՄԱԿ-ի կանոնադրության 51-րդ հոդվածով նախատեսված անհատական կամ կոլեկտիվ ինքնապաշտպանությունից: Բացի այդ, ՄԱԿ-ի բանաձևով տրված ագրեսիայի սահմանումն ավելի շատ ագրեսիայի վերացական արգելք է, քանի որ «անուղղակի ագրեսիայի» դրսևորումները (օրինակ՝ ներպետական բնույթի ռազմական բախումներում արտաքին միջամտությունը) սկսեցին չդիտվել որպես ագրեսիա:

Այժմ անդրադառնանք ագրեսիայի հանցագործության հանցակազմին: Հանցակազմով պաշտպանվում են պետության անկախությունը, ինքնիշխանությունն ու տարածքային ամբողջականությունը: Ի տարբերություն մարդկության դեմ հանցագործության և ցեղասպանության, որոնց դեպքում պաշտպանության տակ են առնված որոշակի խումբ անձինք, ապա ագրեսիայի հանցագործության դեպքում խոսքը պետությունների մասին է [2, 214]:

Հանցագործության օբեկտը: Ագրեսիայի հանցագործության օբյեկտ են հանդիսանում մարդկության խաղաղ գոյության պայմաններն ապահովող հասարակական հարաբերությունները [1, 1012]: Իսկ խաղաղությունն իրավական դրություն է, որը բնութագրվում է պատերազմի

բացակայությամբ: Ընդ որում, էական չէ՝ պատերազմական գործողությունները դե-յուրե հայտարարված են, թե՝ ոչ, քանի որ խաղաղությունը, որպես միջազգային իրավունքի նորմերով պաշտպանվող բարիք, իրենից ներկայացնում է այնպիսի իրավական դրություն, որի պարագայում պետությունների (պետությունների խմբերի) միջև դե-ֆակտո բացակայում են ռազմական գործողությունները: Միջազգային հանցագործությունների մեծամասնության առանձնահատկությունն այն է, որ դրանք բազմաօբյեկտ են: Այդպիսի օբյեկտի դերում կարող են հանդես գալ մասնավորապես մարդու կյանքն ու առողջությունը, սեփականությունը և այլն:

Հանցագործության օբյեկտիվ կողմը: Ագրեսիայի հանցագործության օբյեկտիվ կողմը, ինչպես նշվեց, ենթադրում է հետևյալ չորս արարքներից որևէ մեկի կատարումը՝ ագրեսիվ պատերազմ ծրագրելը, (պատերազմի մոբիլիզացիոն և կազմակերպա-տեխնիկական ծրագրերի մշակում և այլն [1, 1013]), նախապատրաստելը (պատերազմի համար անհրաժեշտ պայմանների ստեղծում), սանձազերծելը (պատերազմ սկսելու նպատակով ռազմական և դիվանագիտական բնույթի գործողություններ կատարում), վարելը (այլ պետության դեմ ռազմական գործողությունների կատարում): Ագրեսիվ պատերազմի ծրագրում ասելով՝ պետք է հասկանալ մտավոր բնույթի յուրաքանչյուր գործողության կատարում, որը նպատակ է հետապնդում հասնել այդպիսի պատերազմի նպատակներին: Ինչ վերաբերում է ագրեսիվ պատերազմ սանձազերծելուն, ապա այն, իր հերթին, պետք է նպատակ հետապնդի ռազմական գործողությունների հետագա շարունակման:

Հանցագործության սուբյեկտը: Այստեղ պետք է տարբերակել «ագրեսիայի հանցագործության սուբյեկտ» և «ագրեսիայի համար պատասխանատվության սուբյեկտ» հասկացությունները, քանի որ պետությունը, որպես այդպիսին, կարող է կատարել ագրեսիայի հանցագործություն, սակայն չի կարող ենթարկվել միջազգային քրեական պատասխանատվության՝ կրելով միջազգային-իրավական պատասխանատվություն: Այդ պատասխանատվությունը սահմանափակվում է վնասը հատուցելու ավանդական պարտավորության և այլ պրևենտիվ բնույթի գործողություններ կատարելու շրջանակներում: Ինչպես ճշմարտացիորեն նկատել է Ա. Կիբալնիկը. «Նշված միջոցները կրում են պատժողական բնույթ, բայց դրանք քրեական չեն (այսօրվա դրությամբ)» [7, 74]: Հետևաբար, հանցա-

գործության սուբյեկտ կարող են լինել պետության այն պաշտոնատար անձինք, ովքեր իրենց լիազորությունների շրջանակներում պատերազմ են ծրագրել, նախապատրաստել, սանձազերծել կամ վարել: Այսինքն՝ ագրեսիայի հանցագործության կարևորագույն հատկանիշներից մեկն այն է, երբ տվյալ հանցագործության համար քրեական պատասխանատվության ենթակա անձը ինչպես ի պաշտոնե, այնպես էլ դե-ֆակտո ունեցել է ղեկավար դերակատարություն և պետական ստորաբաժանումների վրա ազդելու հնարավորություն [2, 217]:

Հանցագործության սուբյեկտիվ կողմը: Վերջինս բնութագրվում է ուղղակի դիտավորությամբ, որը ներառում է նաև ՄԱԿ-ի կանոնադրության ակնհայտ ոտնահարումը: Կան որոշակի չափանիշներ, որոնք թույլ են տալիս պարզել՝ արդյոք ոտնահարվել է ՄԱԿ-ի կանոնադրությունը, թե՝ ոչ: Այդ չափանիշները երեքն են՝ ոտնահարման բնույթը, ծանրությունը և մասշտաբը: Ոտնահարման բնույթը կախված է նրանից, թե ինչ տիպի գործողություններ են կատարվել (օկուպացիա, ռմբակոծություն և այլն): Ոտնահարման ծանրությունը կախված է ռազմական գործողությունների ուժգնությունից (քանի անգամ է ռմբակոծվել ագրեսիայի զոհ պետության տարածքը և այլն): Ոտնահարման մասշտաբը տարածքային չափանիշն է՝ տուժողների թվաքանակը, ազդեցության ենթարկված տարածքը և այլն: Հենց այս երեք չափանիշների համակցությունն է թույլ տալիս խոսել բացահայտ ոտնահարման մասին [2, 216-217]:

Ընդ որում, Արցախի հանրապետության (այսուհետ՝ ԱՀ) և ՀՀ քրեական օրենսգրքերը «Խաղաղության և մարդկության անվտանգության դեմ ուղղված հանցագործությունները» համանուն գլուխներում նախատեսում են ագրեսիվ պատերազմը և ագրեսիվ պատերազմի հրապարակային կոչերը [3; 4]: Վերջինիս օբյեկտիվ կողմը դրսևորվում է, նախահարձակ լինելու ու պատերազմ սանձազերծելու անհրաժեշտությունը հիմնավորելու նպատակով, անձանց անորոշ շրջանակին գրավոր կամ բանավոր դիմելու մեջ:

2020 թ. աղրբեջանական ագրեսիան և Աղրբեջանի կողմից կատարած ագրեսիայի հանցագործության ստուգման մեթոդաբանությունը: Այժմ, երբ բացահայտել ենք ագրեսիայի հանցագործության հիմնական հատկանիշներն ու հանցակազմի կառուցվածքը, համառոտ անդրադարձ կատարենք Աղրբեջանի կողմից 2020թ. սեպտեմբերի 27-ին սանձազերծված պատե-

րազմին: Ադրբեջանի զինված ուժերն անտեսել են խաղաղ միջոցներով միջազգային վեճերի, տվյալ դեպքում՝ Լեռնային Ղարաբաղի հիմնախնդրի կարգավորմանը հասնելու համար կիրառվող բանակցային ձևաչափը, ոտնահարել արգրեսիայի դրսևորման, անպաշտպան բնակավայրերի վրա հարձակվելու և ռմբակոծելու արգելքը, ռազմական գործողություններին անմիջականորեն չմասնակցող անձանց նկատմամբ մարդասիրական վերաբերմունքի պահանջը՝ բոլոր տեսակի զորամիավորումների, վարձկանների ու ահաբեկիչների, ականանետային-հրթիռահրետանային համակարգերի և անօդաչու թռչող սարքերի, կրակի ռեակտիվ համակարգերի կիրառմամբ լայնածավալ հարձակման անցնելով ու թիրախավորելով ոչ միայն ԱՀ ՊԲ հենակետերն ու ռազմական նշանակության օբյեկտները, այլև՝ խոր թիկունքում տեղակայված քաղաքացիական բնակավայրերը [11]: Պատերազմի ողջ ընթացքում Ադրբեջանի կողմից ատելության շարժառիթով իրականացվել են պատերազմական հանցագործություններ, կիրառվել պատերազմ վարելու համար արգելված միջոցներ:

Արդյո՞ք Ադրբեջանը ագրեսոր պետություն է: Այս հարցն ունի իր տրամաբանական պատասխանը, որը հենվում է ստուգման որոշակի մեթոդաբանության վրա:

Actus reus: Ադրբեջանն իրականացրել է Հռոմի ստատուտի 8 բիս հոդվածի 2-րդ մասով նախատեսված ագրեսիվ գործողությունները՝ ներխուժելով իր ինքնորոշման արդար իրավունքն իրացրած ԱՀ տարածք, որը 20-րդ դարի վերջին տասնամյակներին կրել է մի շարք զրկանքներ և միայն իր գոյությունը պահպանելու և նոր ցեղասպանություն թույլ չտալու համար է ներքաշվել 1991թ. Ադրբեջանի կողմից սանձազերծված լայնածավալ պատերազմի մեջ: Այն հանգամանքը, որ ԱՀ-ը միջազգայնորեն ճանաչված սուբյեկտ չէ, միանշանակ հիմք չի հանդիսանում, որ Ադրբեջանի վարած քաղաքականությունն ու ռազմական գործողությունները չորակվեն որպես ագրեսիա՝ ինքնորոշման իրավունքն իրացրած ԱՀ-ի դեմ՝ ագրեսիայի՝ համապատասխանաբար հոգեբանական ու ֆիզիկական ասպեկտներով: ՄԱԿ-ի Գլխավոր ասամբլեայի 1974թ. բանաձևը հստակ տալիս է ագրեսիայի հասկացության սահմանումը և վերահաստատում պետությունների պարտավորությունը՝ զինված ուժ չկիրառելու՝ ժողովուրդներին ինքնորոշման իրավունքից, ազատությունից և անկա-

խությունից զրկելու նպատակով: Իսկ ԱՀ-ի տարածքների պատմականորեն հայկական լինելու հարցն այլ հարց է: Բնականաբար, մեր աշխատանքի նպատակը դա «ապացուցելը չէ»:

Վերադառնալով ագրեսիվ գործողություններին՝ պետք է ասել, որ Ադրբեջանը ոչ միայն ներխուժել է ԱՀ ու օկուպացրել նրա տարածքների մեծ մասը, ռմբակոծել ռազմական ու քաղաքացիական օբյեկտները, այլև՝ ներգրավել ռազմական գործողություններում հիմնականում Սիրիայից ու Լիբիայից բերված զինյալ վարձկանների՝ ուղղորդելով վերջիններիս ագրեսիվ գործողությունները [10]: Բացի այդ, բոլորովին գաղտնիք չէ, որ պատերազմին անմիջականորեն ներգրավված էր Թուրքիան: Ադրբեջանի զինված ուժերը գործադրվել են ԱՀ ինքնիշխանության, տարածքային ամբողջականության և քաղաքական անկախության դեմ, ըստ բնույթի, ծանրության և մասշտաբի՝ բացահայտ ոտնահարել ՄԱԿ-ի կանոնադրությունը: Ադրբեջանի ռազմաքաղաքական ղեկավարությունը նախապես ծրագրել, նախապատրաստել, սանձազերծել ու վարել է 2020 թ. 44-օրյա պատերազմը, որում ղեկավար դիրք են ունեցել Ադրբեջանի իշխանությունները և ռազմական վերնախավը՝ նախագահ Իլհամ Ալիևի գլխավորությամբ:

Mens rea: Ագրեսիայի հանցագործության կոնտեքստուալ հատկանիշներն են՝ պետության կողմից ուժի գործադրումը այլ պետության ինքնիշխանության նկատմամբ, ՄԱԿ-ի կանոնադրության բացահայտ ոտնահարումը, հանցագործի ղեկավար դիրքը: Այս հատկանիշների և ագրեսիայի առանձին գործողությունների նկատմամբ Ադրբեջանը ցուցաբերել է ուղղակի դիտավորություն: Հանցագործությունը բացառող հանգամանքների մասին խոսք գնալ չի կարող, քանի որ Ադրբեջանի ռազմական գործողությունները չեն բխել ՄԱԿ-ի կանոնադրության 51-րդ հոդվածով նախատեսված անհատական կամ կոլեկտիվ ինքնապաշտպանությունից:

Հետևությունը մեկն է՝ Ադրբեջանն ագրեսոր պետություն է և վերջինիս անպատժելիությունը հետագայում հանգեցնելու է այլ միջազգային հանցագործությունների: Դրանք կանխելու համար միջազգային իրավունքի նորմերով բոլոր այն անձինք, ովքեր ղեկակավ դիրք են ունեցել ագրեսիվ պատերազմում և հնարավորություն ունեցել կառավարելու պետական և ռազմական ստորաբաժանումները, միջազգային իրավունքի նորմերով պետք է ենթարկվեն քրեական պատասխանատվության, ինչը,

սակայն, չի նշանակում, որ Ադրբեջանը, որպես պետություն, չպետք է ենթարկվի միջազգային պատասխանատվության: Միջազգային տրիբունալների որոշումներում ևս խաղաղության և մարդկության անվտանգության դեմ ուղղված հանցագործությունների սուբյեկտ է ճանաչվում այդպիսի յուրաքանչյուր անձ [9]: Քրեական պատասխանատվության ենթարկելու արդյունավետ միջոց կարող է լինել այդ անձանց անձեռնմխելիությունից զրկելը, որը քրեական հետապնդում հարուցելուն խոչընդոտող հանգամանք է: (Հռոմի ստատուտ հոդվ. 27, մաս 2):

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Ղազինյան Գ. Ս. խմբ.: Հայաստանի Հանրապետության քրեական իրավունք: Հատուկ մաս վեցերորդ հրատրակություն՝ փոփոխություններով և լրացումներով. /Երևանի պետ. համալս. –Եր.: ԵՊՀ հրատ., 2012 – 1040 էջ:
2. Պետրոսյան Գ. Շ.: ՈՒսումնական ձեռնարկ: -Եր., ԵՊՀ հրատ., 2021, 340 էջ:
3. ԱՀ քրեական օրենսգիրք, հոդվ. 410-411:
4. ՀՀ քրեական օրենսգիրք, հոդվ. 384-385:
5. Հռոմի ստատուտ, 8 բիս հոդված, 2-րդ մաս:
6. Վերսալի պայմանագիր, 227-րդ հոդված:
7. Кибальник А. Г. Преступление и ответственность в международном уголовном праве. – Ставрополь, 2002. – С. 74.
8. Ferertz B. Can Agression be Deterred by Law // Pace International Law Review. – 1999.- P. 310-311.
9. Prosecutor v. Kayishema and Ruzindana. Case № ICTR-95-1. 21 May 1999. - § 175; Prosecutor v. Alfred Musema. Case № ITCR-96- 13-T. – 27 January 2000. § 264.
10. Международный конфликт: …число наемников в Карабахе https://m.gazeta.ru (03.11.2020).
11. ՀՀ դատախազության հաղորդագրություն, www.prosecutor.am (04.10.2020):

Преступление агрессии и азербайджанская агрессия в 2020г.

Мартиросян Карен
АрГУ, Юриспруденция, 3-ий курс

Резюме

Ключевые слова: *агрессия, международное право, международное уголовное право, состав преступления, азербайджанская агрессия, международная и уголовная ответственность*

Изучение признаков преступления агрессии является одной из целей работы. Определенной методикой расследования преступления агрессии был показан, что в 2020г. Азербайджан развязал агрессивную войну, за последствия которой азербайджанское государство и лица, сыгравшие в этих действиях руководящую роль, должны быть привлечены к международной и уголовной ответственности.

Crime of Aggression and Azerbaijani Aggression in 2020

Martirosyan Karen
ASU, Jurisprudence, 3rd course

Summary

Key words: *aggression, international law, international criminal law, composition of the crime, Azerbaijani aggression, international and criminal responsibility*

The study of sings of the crime of aggression is one of the main purposes of the work. Methodology for investigating the crime of aggression was shown that in 2020 Azerbaijan unleashed an aggressive war, for the consequence of which the Azerbaijani state and the leaders of these actions should be brought to international and criminal responsibility.

Օսմանյան կայսրությունում սոցիալ-իրավական բարեփոխումների անցկացման անհրաժեշտությունը 19-րդ դարում

Մելիքյան Հարություն
ՎՊՀ, Իրավագիտություն, 4-րդ կուրս
Գիտական ղեկավար՝ պ. գ. թ. ***Ա. Գոհարիկյան***

Հանգուցային բառեր. *Օսմանյան կայսրություն, թանզիմաթ, հրովարտակ, սոցիալ-իրավական բարեփոխում, իրավահավասարություն, պանօսմանիզմ*

19-րդ դ. սկզբին Օսմանյան կայսրությունը հետամնաց գյուղատնտեսական երկիր էր, որը գտնվում էր սոցիալ-տնտեսական և քաղաքական ճգնաժամի մեջ: Դա պայմանավորված էր 18-րդ դ. վերջին ռուս-թուրքական պատերազմներում Թուրքիայի կրած պարտություններով, Բալկաններում և Մերձավոր Արևելքում եվրոպական տերություններին ռազմաստրատեգիական նշանակության հենակետեր զիջելով և Թուրքիայի նկատմամբ վերջիններիս քաղաքական ու տնտեսական ազդեցության աճով [2, 115]: Ճգնաժամի խորացմանը Թուրքիային սպառնում էր տարածաշրջանում իր երբեմնի խաղացած ազդեցության և դիրքերի լիակատար կորստով: Ծանր էր նաև Օսմանյան կայսրության ֆինանսատնտեսական դրությունը: 18-րդ դ. վերջին և 19-րդ դ. սկզբներին Օսմանյան կայսրության կրած ռազմական անհաջողությունները, բալկանյան տարածքների զգալի մասի կորուստը, 1821 թ. հույների ապստամբությունն ու 1822 թ. անկախացումը, զինվորական ապստամբությունները, ինչպես նաև, դրանց ճնշելուն ուղղված միջոցառումները հանգեցրել էին գանձարանի դատարկմանը [1, 407]: Կայսրության բյուջեն ուներ համալրման երկու ավանդական աղբյուրներ՝ պատերազմների միջոցով ձեռք բերված ռազմավարն ու հարկերը [1, 303]: 18-րդ դարասկզբից կրած ռազմական և տարածքային կորուստները կազմալուծել էին օսմանյան բանակը: Այդ պատճառով էլ օսմանյան կառավարության համար ստեղծված ռազմաքաղաքական և սեցիալ-տնտեսական դժվարին իրավիճակից միակ ելքը մնում էր կայսրության քրիստոնյա բնակչության հարկային բեռի ծանրացումը: Արդեն 19-րդ դ. սկզբից, հարկերը դարձել էին գանձարանը լցնելու գրեթե միակ աղբյուրը: Բայց ծանրացող հարկերը, զանազան հալածանքներն ու կամայականությունները կայսրու-

թյան ոչ մահմեդական բնակչությանը կանգնեցրել էին տնտեսական քայքայման եզրին [3, 27-30]:

Օսմանյան բանակ կարող էին զինվորագրվել միայն մահմեդականները: Առհասարակ, թուրք-մահմեդականները առավել շատ հակված էին դառնալ կառավարիչներ, զինվորականներ, հողագործներ, բայց ոչ առևտրականներ, գործարարներ կամ ֆինանսիստներ: Կայսրության ծավալապաշտական քաղաքականության պայմաններում պատերազմները հսկայական եկամուտ էին բերում պետությանը, այդ թվում նաև բանակ զորակոչված բնակչությանը, որին բաժին էր հասնում ավարի ու թալանի մի մասը: Այս հանգամանքը շոշափելի հետևանքներ էր թողել Օսմանյան կայսրության տնտեսության և նրա մահմեդական բնակչության զգալի մասի տնտեսական ապահովվածության վրա, քանի որ դրանք ուղղակիորեն կախված էին բանակի ռազմական հաջողություններից [5, 109-110]:

Միանգամայն այլ էր Օսմանյան կայսրության այլադավան բնակչության տնտեսական դրությունն ու դրա հեռանկարը: Կայսրության ավանդական իրավահարաբերությունների պայմաններում օսմանյան բանակի դռների փակ էին ոչ մահմեդական ազգաբնակչության առջև, իսկ նրանց կեցությունն էլ պայմանավորված չէր ռազմավարից: Դա նախադրյալներ էր ստեղծել վերջիններիս համար՝ կայսրության ներքին տնտեսական կյանքում աշխուժանալու, առևտրա-տնտեսական հարաբերություններում աստիճանաբար ազդեցիկ և վճռորոշ տեղեր զբաղեցնելու և ամրապնդվելու համար: Սրանով պայմանավորված՝ կայսրության ներքին և արտաքին առևտրատնտեսական հարաբերություններում, հատկապես կայսրության առևտրական հանգույցների վրա տեղակայված բնակավայրերի և նավահանգիստների բնակիչները՝ հայերը, հույներն ու հրեաները, 19-րդ դ. առաջին քառորդին վճռորոշ դիրք զբաղեցրին՝ ձևավորելով տեղի բուրժուազիան: Վերջիններս կարճ ժամանակամիջոցում, շնորհիվ իր ձեռներեցության կարողացավ նյութական բարվոք վիճակի հասնել, թեպետ գոյություն ունեցող իրավակարգի շրջանակներում շարունակում էին մնալ ճնշված և իրավազուրկ [1, 468]: Կայսրության տնտեսական կյանքում օսմանահպատակ բայց այլադավան բուժուազիայի օրավուր աճող դերի ու նրա իրավական դրության վերոնշյալ անհամապատասխանությունից ակնհայտ էր դառնում, որ կայսրության ավանդական իրավակարգն իրեն բնորոշ կրոնական արմատականությամբ, նոր պայմաններում այլևս չէր կարողանալու ապահովել հասարակական հարաբերություններում ծառացող խնդիրը: «...Պետք էր Թուրքիան ավելի առաք

մղել հառաջադիմության ճամփուն մեջ...» [4, 54]: Այդ իսկ պատճառով Օսմանյան կայսրության սոցիալ-տնտեսական և իրավական հարաբերությունների բարեփոխման հարցը դառնում էր օրակարգի առաջնահերթ խնդիրը.

Օսմանյան կայսրությունում բարեփոխումների իրականացման հարցում բացի ներքին ազդակներից, կարևոր դեր են խաղացել նաև արտաքին գործոնները: 19-րդ դ. սկզբից Օսմանյան կայսրության միջազգային դիրքերի շարունակական թուլացումը պատեհ առիթ էր ընձեռում եվրոպական տերություններին ուժեղացնելու նրա վրա ճնշումները, իրենց տնտեսական և քաղաքական ազդեցությունը ընդլայնելու համար: Օսմանյան կայսրության նկատմամբ Ռուսաստանի տարածքային հավակնությունները եվրոպական տերություններն օգտագործեցին Սուլթանի փրկիչների դերով հանդես գալու համար: Միևնույն ժամանակ, Օսմանյան կայսրության տարածքում ստվար քրիստոնեական բնակչության առկայությունը առիթ էր ընձեռում նրանց ներկայանալու որպես քրիստոնեական և համամարդկային արժեքների պահապաններ, որոնց համար անընդունելի կլիներ Օսմանյան կայսրության հասարակական և իրավական հարաբերությունների հետամնացությունն ու քրիստոնեա բնակչության իրավազուրկ ու հալածական վիճակը: Օսմանյան կայսրությանը «հյուսիսային վտանգից» պաշպանելու դիմաց նրա խնամակալները ներկայացող Անգլիան և Ֆրանսիան Օսմանյան կայսրության ներքին արմատական բարեփոխումների պահանջ էին դնում: Սուլթան Մեջիթի կառավարությունը ստիպված էր տեղի տալ և բարեփոխումներ իրականացնելու հանձնառություն ստանձնել: «Եվրոպայի հանրային կարծիքը շահելու համար, անհրաժեշտ էր ընկերական երաշխիքներ տալ և Թուրքիո ժողովուրդներուն քաղաքական գոյությունը ապահովել» [4, 54]:

Օսմանյան կառավարող շրջանները դրանցում իրենց քաղաքական շահախնդրություններն էին դնում. առնել իրականացնելու այնպիսին, որոնք կպահպանին կայսրության տարածքային ամբողջականությունը, կզսպեն հպատակ ազգերի անկախության ձգտումները, կապահովեն կայսրության պաշտպանությունը արտաքին՝ մասնավորապես Ռուսաստանի սպառնալիքներից: Ակնհայտ է, որ կրոնական հետամնաց այս պետությունն առանց արտաքին միջամտության ինքնուրույն չէր կարող հաղթահարել կենսական այս խնդիրները:

Մասնագիտական գրականության մեջ 19-րդ դ. սուլթանական բարեփոխումները կամ ինչպես կոչվում էին, թանզիմաթները (թարգմանաբար՝ ռեֆորմներ) պայմանականորեն բաժանվել են երկու փուլի. առաջինն

ընդգրկում է 1839-1853 թթ.: Այն սկսվում է Գյուլհանեի (Հաթթը շերիֆի) հրովարտակով և ավարտվում է Ղրիմի պատերազմի նախօրեին: Իսկ երկրորդ շրջանն ընդգրկում է 1856-ից 1876, սկսվում է Ղրիմի պատերազմից հետո ընդունված Հաթթը հյումայունով և շարունակվում մինչև 1876 թ. Սահմանադրության ընդունումը [7, 102]:

Գյուլհանեի հաթթը շերիֆի հրամանգրում առաջին անգամ կայսրության մահմեդական և ոչ մահմեդական բնակչությունը ներկայացվում էին, որպես Օսմանյան կայսրության հպատակներ: Սուլթանը հայտարարում էր բոլոր հպատակների կյանքի, գույքի և պատվի պաշտպանությունը, բարեփոխումներ էին նախատեսվում հարկահավաքության բնագավառում: Այն կազմակերպվելու էր կանոնակարգված և առանց կամայականությունների, հարկի չափը որոշվելու էր ըստ հարկվողի գույքային վիճակի, նվազելու էին զինվորական ծառայության ժամկետները, կարգավորվելու էր զորահավաքը, զինվորագրվելու իրավունք էին ստանում նաև ոչ մահմեդականները, թարմացվելու էր օրենսդրությունը, արգելվելու էր պաշտոնների վաճառքը և վերացվելու էր կաշառակերությունը [6, 82]:

Նախատեսվում էր քայլեր ձեռնարկվել դատարանների անկախության և ապաքաղաքականացման ուղղությամբ: Դատարան կարող էին դիմել բոլորը, առանց խտրականության: Աշխարհիկ դատարանների ստեղծումը, սակայն չվերացրեց կրոնական դատարանների գոյությունը, այլ ուղղակի սահմանապակեց վերջիններիս լիազորությունների շրջանակը [8, 132-133]: Բարեփոխումներով նախատեսվում էին դրույթներ, որոնցով այլադավանները վարչական և դատաիրավական պաշտոններ ստանձնելու դեպքում պետք է օգտվեին մուսուլմաններին հավասար իրավունքներից: Բոլոր թուրքահպատակներին թույլատրվում էր զբաղեցնել պետական պաշտոններ, ուսուցանել քաղաքացիական և ռազմական դպրոցներում: Հրովարտակի երկրորդ փուլում հռչակում էր նաև խառը դատարանների ստեղծումը: Հայտարարվում էր ոչ միայն իրավունքների, այլ նաև պարտականությունների հավասարություն, օրինակ՝ զինծառայության բնագավառում [8, 75, 82-83]:

Նախատեսված բարեփոխումների ծրագրի կարևոր կետերց էր համայնքների՝ միլեթների վերակազմավորումը: Դա մի կողմից համապատասխանում էր եվրոպական վարչաիրավական սկզբունքներին, մյուս կողմից՝ պետք է նպաստեր օսմանիզմի դոկտրինայի իրականացմանը: Սրա հետ մեկտեղ ստեղծվելու էր հարկահավաքման նոր կարգ. եթե նախկինում համայնքային հարկերը հավաքվում էին տեղի քրիստոնյա համայնքային ղեկավարության կողմից, նոր կարգով այդ գործառույթը

պետք է իրականացներ հատուկ հարկահավք մարմինը:

Այսպիսով, թանզիմաթները միջնադարյան թեոկրատիկ պետություն հանդիսացող Օսմանյան կայսրության եվրոպական եղանակով վերակազմավորման առաջին փորձերն էին, որոնք բացի ներքին տնտեսական զարգացման, քաղաքական կայունության և հասարակության օսմանականացման նպատակներին, ունեին նաև Եվրոպական տերությունների հետ սիրախաղի նշանակություն: Օսմանիզմի նպատակին կայսրությունը փորձում էր հասնել կայսրության հասարակության բոլոր ազգային և կրոնական շերտերի համար քաղաքացիական և իրավական հավասարության սկզբունքների քարոզչության միջոցով: Թվում է, դրանց համապատասխան էլ իրականացվում էին վարչական ձեռնարկումները: Սակայն հասկանալի է, որ բարեփոխումների անկատարության պայմաններում վարչական ռեֆորմները ընդամենը հանգեցնելու էին քրիստոնեական, հատկապես հայկական, համեմատաբար ինքնավար համայնքների քայքայմանը: Այլ խոսքով՝ թանզիմաթով հռչակված վարչական վերափոխումներն ընդամենը նպաստելու էին օսմանիզմի քաղաքականության իրագործմանը՝ առանց գավառահայությանը որևէ բան տալու:

Թանզիմաթների հեղինակները հակված էին կայսրության տարածքային ամբողջականության պահպանման գաղափարին, ինչը նաև կազմում էր օսմանիզմի դոկտրինայի կարևորագույն մասը: Սակայն դա պետք է իրականացվեր կայսրության ղեկավարման գործում օսմանների առաջնային դերը ապահովելով, քանի որ, հակառակ դեպքում, ըստ օսմանյան ղեկավար շրջանակների, կառաջանար քաոս և քաղաքացիական պատերազմների անվերջանալի շղթա:

Օսմանյան կայսրության կառավարող շրջանները պետության հիմքերը ամրապնդելու նպատակով, քարոզում էին մուսուլմանների և քրիստոնյաների միացյալ հասարակության ստեղծման գաղափարները, իսկ խառը դատարանների և քաղաքացիական օրենսդրության ստեղծումը համարում էին ազգերին միացնող միջոցներ, որոնք կկասեցնեին ազգամիջյան հակասությունները և դրանցից բխող պետականակործան վտանգները: Սակայն փաստը մնում է այն, որ հրապարակելով թանզիմաթները, Օսմանյան կայսրության կառավարող շրջանները իրենք իրենց դնում էին փակուղային իրավիճակում, քանզի իրենք էլ հասկանում էին, որ իրական հավասարություն տալ քրիստոնյաներին՝ կնշանակեր վտանգել մուսուլմանների գերիշխանությունը՝ Օսմանյան պետության այդ ավանդական հիմքերի հիմքը: Բնավ պատահական չէր, որ մուսուլման հոգևորականությունը, թանզիմաթների մեջ տեսնելով պետության

աշխարհիկացման ռիսկեր, այն գնահատեց որպես հակահալամական քայլ [4, 56]: Ուստի նա մուսուլմանական բնակչության շրջանում դժգոհություն և ատելություն էր բորբոքում տնտեսական-արտադրական և առևտրային հիմանական օղակները իրենց ձեռքում կենտրոնացրած գյավուրների (անհավատների) նկատմամբ: Օսմանյան կայսրության մուսուլման բնակչության իրավագիտակցության մեջ դարերով արմատացած կրոնական մոլեռանդությունը բթացնում էր մահմեդական ազգաբնակչության ցանկությունը՝ ընկալելու քրիստոնյաների և մահմեդականների հավասարության սկզբունքների առաջադիմությունը: Դա այն հիմնապատճառներից մեկն էր, որը գործնականում ձախողեց թանզիմաթների ձախողումը: Ինչպես նկատում է Հ. Սիրունին, «Թանզիմաթի հետագա կյանքը ցույց տվավ, որ ան իրապես խորթ էր երկրին, որրան զանգվածներու մտայնության, նույնքան վարիչներու ներքին համոզման» [4, 56]: Ավելի հակիրճ, բայց առավել ամբողջական մեկնաբանություն է տվել 1867 թ. Թանզիմաթի երկրորդ փուլի հեղինակ Ֆուադ փաշան, որի խոսքերով՝ «Հնարավոր չէր իրականացնել բարքերի բարեփոխումներ» [8, 240]:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Բայբուրդյան Վ., Օսմանյան կայսրության պատմություն, Երևան, 2011, 716 էջ:
2. Հարությունյան Գ., Արևմտահայության կացությունը և Հայկական հարցի միջազգայնացումը (1850-1870-ական թթ.), Երևան, 2009, 262 էջ:
3. Ներսիսյան Մ., Օսմանյան պետության «քաղաքակրթական միսիայի» մասին, Պատմա-բանասիրական հանթես, 1998, թիվ 1-2, էջ 27-44:
4. Սիրունի Հ., Թանզիմաթ և հայեր, Պատմա-բանասիրական հանդես, 1966, թիվ 4, էջ 53-66:
5. Benton L., Law and Colonial Cultures: Legal Regimes in World History, 1400–1900, Cambridge University Press, 2001, 285 p..
6. William L & Martin Bunton, A History of the Modern Middle East: 4th Edition, Westview Press: 2009, 618 p..
7. Новичев А.Д., История Турции нового времени, том 3, Ленинград, 1973, 222 ст.
8. Новичев А. Д., История Турции, том IV, Новов время, Ленинград, 1978, 280 ст.

Необходимость социально-правовых реформ в османской империи в XIX веке

Меликян Арутюн
ВГУ, Факультет социальных наук,
Юриспруденция, 4 курс

Резюме

Ключевые слова: *Османская империя, танзимат, манифест, социально-правовая реформа, правовое равенство, панисламизм*

В начале XIX века Османская империя была отсталой сельскохозяйственной страной, которая находилась в социальном и право-политическом кризисе. Пути преодоления кризиса правящие круги видели в объединении мусульман и христиан, проживающих на территории империи под влиянием идеологии османизма. На эти цели были направлены имперские манифесты, принятые в 1839-1976 годах, которые имели как внутриполитические, так и внешнеполитические значения.

Necessity of Social and Legal Reforms in the Ottoman Empire in the 19th Century

Melikyan Harutyun
VSU, Faculty of Social Sciences,
Jurisprudence, 4th course

Summary

Key words: *Ottoman Empire, Tanzimat, Manifesto, Social and Legal Reform, Legal Equality, Pan-Islamism*

At the beginning of the 19th century, the Ottoman Empire was a backward agricultural country that was in social and political crisis. The way to overcome the crisis was seen by the ruling circles as the unification of Muslims and Christians living in the empire under the influence of the Ottoman ideology. Imperial manifests adopted in 1839-1976, which had both domestic and foreign policy significance, were sent to this end.

Ադրբեջանի պատերազմական հանցագործությունները Արցախյան երրորդ պատերազմում

Սարգսյան Արա
ԱրՊՀ, Իրավագիտություն, 2-րդ կուրս
Գիտական ղեկավար՝ իրավունքի ամբիոնի ավագ դասախոս Ս. Զաքարյան

Հանգուցային բառեր. *Ադրբեջանի Հանրապետություն, Արցախի Հանրապետություն, հարձակում, հանցագործություն, միջազգային մարդասիրական իրավունք, Ժնևի կոնվենցիա, արգելված, խախտում*

Վերջին ժամանակներում վիճահարույց ու խնդրահարույց հանգամանքներից են Հարավային Կովկասում Ադրբեջանի ու Թուրքիայի կողմից իրականացրած հանցագործությունները, որոնք վտանգ են ներկայացնում ոչ միայն հայերի, այլև տարածաշրջանի մյուս ազգերի ու պետությունների համար: Գերտերությունների շահերի բախումը Հարավային Կովկասում ունի իր հին արմատները: Դեռևս մինչև 20-րդ դարի սկիզբը տվյալ տարածաշրջանում անընդհատ իշխանության հաստատման շահով էին շարժվում տվյալ ժամանակաշրջանի իշխող խոշոր պետությունները: Պատմական փաստերը վկայում են, որ հայերն ու Հայաստանը լուրջ խոչընդոտ են հանդիսանում Թուրքիայի վաղեմի երազանքի՝ Մեծ Թուրանի ստեղծման ճանապարհին: Եվ Թուրքիան այս անգամ իր զավթողական ու ցեղասպան քաղաքականությունը իրականացրեց ոչ միայն Ադրբեջանի «ձեռքերով», այլ նրա հետ մեկտեղ՝ որպես դաշնակից իսլամական պետություն:

Միջազգային հանրության կողմից Ադրբեջանի ռազմական հանցագործությունների(օրինակ՝ պայմանական հրադադարի խախտումներ, սահմանային ագրեսիաներ և այլն) չդատապարտված լինելու հանգամանքը հաջորդ տարիների ընթացքում ավելի սաստկացրեց այդ երկրի ռազմատենչ նկրտումները: Դրա կիզակետը դարձավ 2020թ. սեպտեմբերի 27-ին Արցախի դեմ լայնածավալ պատերազմի սանձազերծումը՝ Թուրքիայի աջակցությամբ ու ամինջական մասնակցությամբ, միջազգային ահաբեկիչների ներգրավմամբ: Այսպիսով, Ադրբեջանը շարունակելով իր «մեծ եղբայր»՝ Թուրքիայի ցեղասպան քաղաքականությունը՝ սկսած Բաքվի, Սումգայիթի, Շուշիի, Խոջալուի, Մարաղայի ջարդերից, Արցախյան առաջին պատերազմից ու ապրիլյան քառօրյա պատերազմից, էլ

ավելի սաստկացնելով իր վայրագություններն ու հանցագործությունները, սանձազերծեց այս պատերազմը: Արցախյան 2-րդ պատերազմը տևեց 44 օր, որի ընթացքում Ադրբեջանի Հանրապետության զինված ուժերի(այսուհետ՝ ԶՈՒ), նրանց թուրք դաշնակիցների և սիրիացի վարձկանների կողմից պատերազմական հանցագործությունների բազմաթիվ դեպքեր են արձանագրվել: Իրավիճակը ներկայացնենք հետևյալ փաստերով ու վկայություններով:

Քաղաքացիական անձանց և քաղաքացիական ենթակառուցվածքների թիրախավորված հարձակումները պատերազմական հանցագործություններ են համաձայն Ժնևի կոնվենցիայի: 1949 թ. Օգոստոսի 12-ի Ժնևի կոնվենցիայի 1-ին լրացուցիչ արձանագրության 48-րդ, 51-րդ և 52-րդ հոդվածները պաշտպանում են քաղաքացիական բնակչության կյանքն ու քաղաքացիական օբյեկտները [1]:

Վերոնշյալ հոդվածները իրենց մեջ պարունակում են միջազգային մարդասիրական իրավունքի (այսուհետ՝ ՄՄԻ) տարբերակման ու համաչափության սկզբունքները, որոնց էությունը կայանում է նրանում, որ զինված ընդհարման մեջ գտնվող կողմերը պետք է տարբերակեն քաղաքացիական բնակչությանը կոմբատանտերից(ընդհարման անմիջական մասնակցողները), իսկ քաղաքացիական օբյեկտները՝ ռազմականից: Պատերազմի առաջին օրվանից համատարած հրթիռակոծման և ռմբակոծման է ենթարկվել 150 հազար բնակչություն ունեցող Արցախի Հանրապետությունը: Մինչև պատերազմի ավարտը հայկական կողմից սպանվել է 50 և վիրավորվել 148 քաղաքացիական անձ: Ադրբեջանը թիրախավորել է նաև Շուշիի Մշակույթի պալատը, Ստեփանակերտի էլեկտրական ցանցի շենքը, էլեկտրական ենթակայանները: Մինչև նոյեմբերի 9-ը առնվազն 71 դպրոց և 14 մանկապարտեզ վնասվել են հրթիռակոծման հետևանքով: Դրանք չհաշված՝ Ադրբեջանի վերահսկողության տակ անցած բնակավայրերի 23,978 դպրոցական տարիքի և 4,036 նախադպրոցական տարիքի երեխաներ զրկվել են կրթության իրավունքից [2]: Քաղաքացիական անձանց և քաղաքացիական ենթակառուցվածքների թիրախավորումներ եղել են նաև ՀՀ տարածքում՝ Դավիթ Բեկում և Վարդենիսում: Հարձակումների են ենթարկվել նաև լրագրողները: Մարտունիում վիրավորվում ստացան հայ և ֆրանսիացի լրագրողներ: Հրթիռակոծության հետևանքով խոցվեց Մարտակերտ ուղևորվող 10 լրագրողների տեղափոխող ավտոմեքենան: Երկու ռուս լրագրող և նրանց գիդը վիրա-

վորում ստացան Շուշիի Սուրբ Ղազանչեցոց եկեղեցու 2-րդ հրթիռակոծման հետևանքով [3]: 1949 թ. Օգոստոսի 12-ի Ժնևի կոնվենցիայի 1-ին լրացուցիչ արձանագրության 79-րդ հոդվածի համաձայն՝ հակամարտությունների գոտիներում մասնագիտական աշխատանք իրականացնող լրագրողները պետք է համարվեն քաղաքացիական անձ և պաշտպանվեն այդ կոնվենցիաներով և սույն արձանագրությամբ, պայմանով, որ նրանք չեն ձեռնարկի որևէ գործողություն, որը բացասական կանդրադառնա իրենց քաղաքացիական անձի կարգավիճակի վրա [4]: Այսիսով, կարող ենք արձանագրել, որ հետևյալ հոդվածները պաշտպանում են ինչպես քաղաքացիական բնակչությանը(այդ թվում նաև լրագրողներին), այպես էլ քաղաքացիական օբյեկտները՝ հարձակումներից:

Ինչպես տեսնում ենք՝ Ադրբեջանի կողմից թիրախավորվել են ինչպես քաղաքացիական անձինք, այնպես էլ օտարերկրյա քաղաքացիներ ու լրագրողներ: Ադրբեջանի կողմից խախտվել են միջազգային մարդասիրական իրավունքի նորմերով նախատեսված դրույթները: Հիմնականում բնակչության թիրախավորումները եղել են դիտավորյալ, քանի որ ռազմական օբյեկտները եղել են բնակավայրերից շատ հեռու, իսկ Ադրբեջանը օգտագործել է ճշգրիտ խոցման զինատեսակներ: Միջազգային մարդասիրական իրավունքի սկզբունքների տեսնանկյունից թիրախավորված օբյեկտների խոցման ժամանակ Ադրբեջանը հիմնականում չի պահպանել համաչափության ու տարբերակման սկզբունքը, իսկ նախազգուշացման սկզբունքի մասին խոսել անգամ պետք չէ: Թեկուզ վերոնշյալ հոդվածները պաշտպանում են քաղաքացիական անձանց ու քաղաքացիական օբյեկտները, այսուամենայնիվ կարող ենք փաստել, որ Ադրբեջանը և Թուրքիան՝ լինելով նշված կոնվենցիաները վավերացնող պետություններ՝ բազմիցս խախտել են միջազգայնորեն ընդունված ու ճանաչված նորմերը:

Ադրբեջանի Հանրապետության կողմից թիրախավորվել են նաև բուժհաստատություններ: Ադրբեջանի կողմից օդային հարվածներ հասցվեցին Ստեփանակերտի ծննդատանը: Նույն հաստատությունը խոցվեց նաև «Սմերչ» տիպի հրթիռով: Ավելի վաղ հրթիռակոծվեց Մարտակերտի ռազմական հոսպիտալը, որտեղ բուժում էին ստանում նաև քաղաքացիական անձինք [5]: Պատերազմի ընթացքում զոհվել են 80 զինվորական բժիշկներ, բուժակներ ու սանհրահանգիչներ: Հակառակորդը խոցում էր նաև սանիտարական տրանսպորտներ, որի մեջ տեղափոխվում էին վիրավորներ [6]:

1949 թ. օգոստոսի 12-ի Ժնևի 1-ին կոնվենցիայի 19-րդ, 4-րդ կոնվենցիայի 18-րդ և 21-րդ, 1-ին լրացուցիչ արձանագրության 12-րդ, 15-րդ և 21-րդ հոդվածները պաշտպանում են բուժհիմնարկները և բուժսպասարկում իրականացնող մոբիլ միավորները, քաղաքացիական հիվանդանոցները, որոնք կազմակերպված են վիրավորներին և հիվանդներին, թույլերին խնամելու և ծննդօգնության նպատակով [7]: Եվ հենց այս հոդվածներում նշված կատեգորիաները որևէ հանգամանքներում չպետք է լինեն հարձակման օբյեկտ:

Վերոնշյալ կենվենցիաների դրույթների խախտումը ոչ միայն միջազգային հումանիտար իրավունքի նորմերի խախտում է, այլև անմարդկային վերաբերմունք մարդկանց, առավել ևս վիրավորների ու բուժում ստացողների նկատմամբ: Հարկ է նշել, որ միջազգային մարդասիրական իրավունքը պաշտպանում է այն անձանց, ովքեր չեն մասնակցում կամ դադարել են մասնակցել ռազմական գործողություններին, հետևաբար վիրավորներն ու հիվանդները նույնպես համարվում են այդպիսիք ու չպետք է ենթարկվեն հարձակման:

Փաստավորված է նաև այն հանգամանքը, որ Ադրբեջանի Հանրապետության կողմից կիրառվել են նաև կասետային զինատեսակներ: Դրանց արտադրությունը, պահուստավորումը, փոխանցումն ու կիրառումը արգելված է «Կասետային զինատեսակների մասին» 2008 թ. կոնվենցիայով [8]: Արցախի մայրաքաղաքը ռմբակոծվել է իսրայելական արտադրության կասետային ռումբերով, որի մասին փաստում են արված լուսանկարները [9]: Կասետային զենքեր կիրառվել են նաև Արցախի Հանրապետության այլ բնակավայրերում: Հոկտեմբերի 31-ին մամուլում հրապարկվեց մի լուսանկար, որտեղ երևում է, թե ինչպես են Ադրբեջանի Հանրապետության ԶՈՒ-ը սպիտակ ֆոսֆոր կիրառում Արցախի անտառների վրա [10]: Ավելի ուշ դրանք կիրառվեցին նաև քաղաքացիական օբյեկտների վրա: Պատերազմի ավարտից հետո մամուլում հրապարակվեցին հրկիզող զինատեսակներից վիրավորված զինծառայողների լուսանկարներ [11]: Հրկիզող զենքերի կիրառումը արգելված է «Հրկիզող զենքերի օգտագործման արգելքի կամ սահմանափակման մասին» արձանագրությամբ [12]:

Միջազգային իրավունքը արգելում է նաև հրկիզող և կասետային զինատեսակների օգտագործումը: Այդպիսի զինատեսակների կիրառումը մեծ վտանգ է քաղաքացիական բնակչության համար, որը անընդունելի է

համարվում միջազգային հանրության համար: Ինչպես արդեն նշվեց, Ստեփանակերտում չկային ռազմական օբյեկտներ, բայց այսուամենայնիվ խաղաղ բնակչության նկատմամբ կիրառվել են արգելված տիպի զինատեսակներ: Այդպիսի զինատեսակները բնակչության համար մեծ վտանգ են ներկայացնում: Բացի զինված ուժերին վնասներ պատճառելու նպատակ հետապնդելուց, դրանց օգտագործումը նաև խնդիր ունի առաջացնել մասսայական անտառային հրդեհներ ու տվյալ տարածքում ստեղծել բնապահպանական աղետի իրական վտանգներ: Ո՛չ Ադրբեջանը, ո՛չ Հայաստանը չեն ստորագրել վերոնշյալ կոնվենցիաները, որոնք արգելում են այսպիսի զինատեսակների օգտագործումը, հետևաբար կողմերի վրա այս առումով բացարձակ արգելք չկա, բացառությամբ սովորութային միջազգային մարդասիրական իրավունքի, ըստ որի նման զինատեսակները ավելորդ տառապանք են պատճառում, և դրանք չպետք է կիրառել անկախ այն հանգամանքից քաղաքացիական անձ են, թե՞ զինված ընդհարմանը անմիջական մասնակցող անձինք:

1949 թ. օգոստոսի 12-ի Ժնևի 3-րդ կոնվենցիան արգելում է ռազմագերիների նկատմամբ վատ վերաբերմունքն ու պաշտպանում նրանց: Ռազմագերիների հետ պետք է մշտապես վարվել մարդասիրաբար, ցանկացած հանգամանքներում ռազմագերիներն ունեն իրենց անձի և պատվի նկատմամբ հարգանքի իրավունք, և գերության մեջ պահող տերությունը պարտավոր է մինչև հայրենադարձությունը վարվել նրանց նկատմամբ մարդասիրաբար, ինչպես նաև պահպանել նրանց իրավունքները՝ բժշկական օգնություն ցուցաբերել, սնունդ ու հագուստ տրամադրել և այլն, այսինքն ապահովել ռազմագերիների կյանքի նվազագույն կենսապայմանները [13]:

Հոկտեմբերի 11-ին Արցախի Հանրապետության Մարդու իրավունքների պաշտպանի(այսուհետ՝ ՄԻՊ) գրասենյակը հայտնեց, որ առնվազն 4 քաղաքացիական անձ է սպանվել ադրբեջանական դիվերսիոն խմբերի՝ Հադրութ ներթափանցման ժամանակ: Մեկ այլ քաղաքացիական անձ սպանվել է Մարտունիում [14]: Սոցիալական ցանցում շրջանառվում էր 2 տեսանյութ, որտեղ ադրբեջանական զինվորականները գերեվարում են զինվորական հագուստով 2 հոգու և գնդակահարում նրանց Հադրութի հրապարակում: Ադրբեջանի Հանրապետության իշխանությունները պնդում են, որ դրանք կեղծ են, սակայն բրիտանական լրատվամիջոցները հաստատեցին դրանց իսկությունը [15]: Հոկտեմբերի 30-ին հայտնվեց մի

տեսանյութ, որտեղ հստակ երևում է 19 հայ զինծառայողի մարմին, որոնց գնդակահարել էին Զանգելանում(Կովսական) [16]: Զինադադարից հետո տելեգրամյան ալիքներում հրապարակվեցին մի շարք տեսանյութեր, որտեղ հայ ռազմագերիներն ու գերիները ստորացվում, խոշտանգվում, անդամահատվում, սպանվում կամ գլխատվում են:

Ինչպես արդեն նշեցինք, 1949 թ. օգոստոսի 12-ի Ժնևի 3-րդ կոնվենցիան պաշտպանում է ռազմագերիներին՝ հատկապես բռնի գործողություններից կամ հարկադրանքից և վիրավորանքներից ու հանրային հետաքրքրությունից: Քաղաքացիական անձինք ռազմագերի չեն համարվում, հետևաբար նրանց պաշտպանությունը էլ ավելի խիստ է նախատեսված: Ըստ 2020 թ. նոյեմբերի 9-ի եռակողմ հայտարարության, ինչպես նաև 1949 թ. օգոստոսի 12-ի Ժնևի 3-րդ կոնվենցիայի՝ ռազմական գործողություններից հետո գերիները պետք է վերադառնան հայրենիք, սակայն Ադրբեջանի Հանրապետությունը խախտելով այդ դրույթները՝ չի հայրենադարձրել բոլոր ռազմագերիներին: ՀՀ իշխանությունները անդրադարձել են այս վայրագություններին, սակայն դրանք այդքան էլ արդյունավետ չէին: Դրա փոխարեն ադրբեջանցի զինծառայողները խրախուսվում են հրամանատարների և իշխանության կողմից: Քաղաքակիրթ աշխարհը պետք է արձագանքի ու դատապարտի ռազմագերիների ու գերեվարված քաղաքացիական անձանց նկատմամբ իրականացվող հանցագործությունները: Անկախ թշնամական հարաբերություններից պետք չէ նման անմարդկային վերաբերմունք ցուցաբերել մարդկանց նկատմամբ:

Արցախի Հանրապետության դեմ ռազմական ագրեսիայի հետևանքով Ադրբեջանի Հանրապետության վերահսկողության տակ են մնացել մեծամասամբ հայոց պատմության և մշակույթի առնվազն 1456 նշանավոր անշարժ հուշարձաններ, այդ թվում՝ 161 վանքեր և եկեղեցիներ, 591 խաչքարեր, 345 տապանաքարեր ու մակագրված քարեր, 108 գերեզմանատներ, 43 բերդեր ու ամրոցներ, Տիգրանակերտի, Ազոխի, Նոր Կարմիրավանի, Միրիկի, Կերենի հնավայրերն ու բազմաթիվ բերդեր, ամրոցներ, սրբավայրեր և այլ հուշարձաններ: Ադրբեջանի վերահսկողության տակ են անցել նաև 8 պետական թանգարաններ՝ 19311 ցուցանմուշներով, ինչպես նաև Շուշիի գորգերի ու Հայկական դրամի մասնավոր թանգարանները: Ադրբեջանի Հանրապետության կողմից Արցախի հայկական մշակութային ժառանգության վերաբերյալ ապատեղեկատվության միտում-

նավոր տարածման և մշակութային կոթողների «ալբանիզացնելու» քաղաքականությունը ևս ոչնչացման սպառնալիքի տակ է դնում Արցախի Հանրապետության տարածքում հայկական մշակութային ժառանգությունը:

Հոկտեմբերի 8-ին հրթիռակոծվել է Շուշիի Սուրբ Ամենափրկիչ Ղազանչեցոց եկեղեցին, ինչի հետևանքով փլուզվել է տանիքի մի մասը: Երկրորդ հարվածից վիրավորվեցին ռուս լրագրողը և 10 խաղաղ բնակիչ [17]: Զինված ընդհարումների ժամանակ մշակութային արժեքների պահպանումը հստակ ամրագրված է 1899 և 1907 թվականների Հաագայի կոնվենցիաներով, 1935 թ. ապրիլի 15-ի Վաշինգտոնի դաշնագրով և 1954 թ. «Զինված ընդհարումների դեպքում մշակութային արժեքների պաշտպանության մասին» Հաագայի կոնվենցիայով [18]:

Սույն կոնվենցիաները պաշտպանում են ազգային մշակութային ժառանգությունը: Սակայն Ադրբեջանը այստեղ նույնպես կանգ չառավ և Արցախի տարածքում գտնվող հայկական մշակութային արժեքներն ու օբյեկտները թիրախավորեց: Դրանք ևս դիտավորյալ թիրախավորումներ էին: Չնայած այն հանգամանքին, որ այս հարձակումները փաստավորված են՝ Ադրբեջանը հերքում է դրանք ու հայտարարում, որ դրանց հետևում հայկական կողմն է կանգնած: Հարկ է նշել, որ մինչ օրս էլ շարունակվում են մշակութային արժեքների պղծումն ու ավիրումը:

2020 թ. նոյեմբերի 1-ին հաստատվեց այն փաստը, որ Ադրբեջանն ու Թուրքիան արցախյան պատերազմում ներգրավել են նաև վարձկանների: Հայկական կողմը հայտնել է երկու ահաբեկչի գերեվարելու մասին: Ահաբեկիչը նշել է, որ նրանց ահաբեկչական խմբավորումների ներգրավումն Ադրբեջանի կողմից նպատակ ուներ ապակայունացնել Արցախի ներքին վիճակը՝ ոչ մեկին կենդանի չթողնելու հրամաններ արձակելով: Նա նաև փաստեց, որ նրանց ահաբեկչական խմբավորումների ֆինանսավորումը իրականացվել է Թուրքիայի կողմից, զենքերը՝ նույնպես: Ահաբեկչի խոսքով Թուրքիան ամեն կերպ աջակցում էր Ադրբեջանին, մասնավորապես՝ աջակցում էին հրետանիով և ղեկավարում էին ռազմական գործողությունները, անօդաչու սարքեր էր կիրառում հայերի դեմ [19]: Վարձկանների հավաքագրումը, օգտագործումը, ֆինանսավորումն ու ուսուցումը քրեորեն պատժելի արարքներ են, որոնք ամրագրվել են 1990 թ. «Վարձկանների հավաքագրման, օգտագործման, ֆինանսավորման և ուսուցման դեմ պայքարի» միջազգային կոնվենցիայով, որին կողմ են և՛

Հայաստանը, և՛ Ադրբեջանը [20]: Ընդհանրապես պատերազմի ամբողջ ընթացքում Ադրբեջանի և Թուրքիայի կողմից խախտվել են միջազգային իրավունքի նորմեր, որոնցից է նաև վարձկանների օգտագործումը պատերազմի ժամանակ: Սա ևս մեկ անգամ փաստում է այն մասին, որ խախտումները կատարվել են միջազգային իրավունքի նորմերի ծայրահեղ անարգանի մթնոլորտում: Եվ սրանք դեռ հանցագործությունների մի մասն են:

Այսպիսով, այս ամենի հիման վրա մենք տեսնում ենք, որ Ադրբեջանի ու Թուրքիայի կողմից սանձազերծված պատերազմի ընթացքում և դրանից հետո խախտվեցին միջազգային հումանիտար իրավունքի գրեթե բոլոր նորմերը: Իհարկե պետք է նշել, որ Արդրբեջանը, իրականացնելով վերը նշված հանցագործությունները, մեծամասամբ հերքել ու հերքում է դրանք:

Ադրբեջանական իշխանությունները կոպտորեն խախտում են միջազգային մարդասիրական իրավունքով և 2020 թ. նոյեմբերի 9-ի հայտարարության դրույթներով ստանձնած իրենց հանձնառությունները, որոնք փաստող օրինակ է դեռևս պատանդության մեջ գտնվող հայ ռազմագերիներին և քաղաքացիական անձանց չվերադարձնելու հանգամանքը:

Միավորված ազգերի կազմակերպությունը, Եվրոպայում անվտանգության և համագործակցության կազմակերպությունն ու այլ միջազգային կազմակերպությունները լուրջ քայլել չեն ձեռնարկում այս հանցագործությունները կանխելու և պատժելու համար: Թուրքական և ադրբեջանական կողմերը առիթավորվում են միջազգային հանրության ու կազմակերպությունների կողմից անտարբեր վերաբերմունքից: Հետևաբար, այս հանցագործությունների համար պատասխանատվություն են կրում ինչպես Ադրբեջանն ու Թուրքիան, այնպես էլ միջազգային հանրությունն ու կազմակերպությունները: Նրանք այս ամենի նկատմամբ անտարբեր էին պատերազմի ժամանակ ու դրանից հետո էլ շարունակում են լուռ մնալ: Այս լռությունը պայմանավորված է քաղաքական նկատառումներով և բացասաբար է անդրադառնում հայ ժողովրդի վրա: Միակ պետությունը, որը մշտապես կողմնապահ վերաբերմունք ունի հակամարտության լուծմանը, Թուրքիան է, որը ոչ մի առիթ բաց չի թողնում՝ շեշտելու Ադրբեջանի հետ հարաբերությունների «մեկ ազգ – երկու պետություն» կարգախոսը: Թուրքիան ամեն կերպ աջակցում է Ադրբեջանին, այդ թվում զենքով ու մարդկային ռեսուրսով:

Պետք է նշել, որ պատերազմական հանցագործությունների և մարդկության դեմ ուղղված հանցագործությունների նկատմամբ վաղեմության ժամկետ չի կիրառվում: Հանցագործությունները շարունակվում են մինչ օրս և չեն դատապարտվում: Շատ կարևոր է ագրեսիայի կողմերի՝ ի դեմս Ադրբեջանի և Թուրքիայի կողմից իրականացվող հանցագործությունների դատապարտումը, որպեսզի հետագայում նմանատիպ հանցագործություններ չլինեն, քանի որ անպատժելիությունը ծնում է նոր հանցագործություններ: Միջազգային հանրությունը, կազմակերպություններն ու տերությունները պետք է վճռական գնահատական տան մինչ այսօր շարունակվող Ադրբեջանի ագրեսիվ քաղաքականությանը, միջազգային հումանիտար իրավունքի հանդեպ ծայրահեղ անարգանքին:

Փաստորեն կարելի է եզրահանգել, որ ադրբեջանական նկրտումները, պատերազմական հանցագործությունները չեզոքացնելու լավագույն ուղին է հայության միասնական լինելը, Հայաստան-Արցախ-Սփյուռք ընդհանուր գաղափարախոսությամբ շարժվելը: 2020 թ. սեպտեմբերին Արցախի դեմ սանձազերծված լայնածավալ պատերազմը ու Ադրբեջանի կողմից իրագործված պատերազմական հանցագործությունները ևս մեկ անգամ ապացուցեցին, որ Արցախը որևէ կարգավիճակով երբեք չի կարող լինել Ադրբեջանի իրավասության ներքո: Արցախի ժողովրդի ինքնորոշման իրավունքի, անվտանգության, մշակութային և կրոնական ժառանգության պաշտպանության խնդիրները պատշաճ կերպով պետք է վերահսկվեն ինչպես Հայաստանի, այնպես էլ միջազգային տարբեր կառույցների ու պետությունների կողմից: Հայաստանը և հայ ժողովուրդը պետք է գործադրեն հնարավոր բոլոր ջանքերը՝ լիարժեքորեն վերականգնելու արցախահայության բոլոր իրավունքները՝ իրենց պատմական հայրենիքում ազատ և արժանապատիվ ապրելու համար:

Եզրակացություն

Միջազգային մարդասիրական իրավունքը պաշտպանում է այն անձանց, ովքեր չեն մասնակցում կամ դադարել են մասնակցել զինված ընդհարումներին, ինչպես նաև սահմանափակում են պատերազմելու մեթոդներն ու միջոցները: Այս պայմաններում կիրառվում են սույն աշխատությունում նշված կոնվենցիաները, դրանց լրացուցիչ արձանագրությունները և այլ նորմեր:

ՄՄԻ-ի կիրառումը զինված ընդհարումների ժամանակ առավել

արդյունավետ է, քանի որ այն հատուկ ուղղված է մարդու իրավունքների խախտումների սահմանափակմանը: Պետք է ընդգծել, որ այդ արդյունավետությունը պայմանավորված է նրանով, որ 194 թ. Ժնևի կոնվենցիաները և դրանց լրացուցիչ արձանագրությունները վավերացված են միջազգային հանրության առավել լայն շրջանակների կողմից, քան մարդու իրավունքների վերաբերյալ այլ պայմանագրերի մեծամասնությունը՝ մոտ 194 երկիր վավերացրել են Ժնևի կոնվենցիաները(ըստ ԿԽՄԿ պաշտոնական կայքէջի): Սակայն դա փաստացի երաշխիք չէ, որ վավերացնող կողմերը խստագույնս կպահպանեն նախատեսված նորմերը: ՄՄԻ-ի նորմերի խախտումները տեղի են ունենում ոչ թե այն պատճառով, որ թերի են, այլ այդ նորմերի կատարման ցանկության բացակայությանը պատճառով:

Այս առումով պետք է նշենք, որ ՄՄԻ-ի նորմերի խախտումները կանխելու և հետագայում դրան համար արգելքներ սահմանելու համար անհրաժեշտ է.

1. հսկիչ խմբերի ստեղծում,
2. մշտադիտարկման հանձնաժողովի ստեղծում ՄԱԿ-ի կողմից, որը կարձանագրի տեղի ունեցած խախտումները և դրանք կներկայացնի միջազգային հանրությանը, հանձնաժողովը պետք է կազմված լինի չեզոք պետություններից,
3. հանձնաժողովի կողմից կոնկրետ սանկցիաների կիրառում միջազգայինի իրավունքի նորմերի խախտման համար (սահմանափակումներ, տուգանքներ և այլն), որոնք ուղղված կլինեն անպատժելիության վերացմանը ու հետագայում կնպաստեն խախտումների կանխմանը:

Սրա նպատակը մարդու անօտարելի իրավունքների ու ազատությունների պաշտպանությունն է, քանի որ մարդը բարձրագույն արժեք է: Եվ ի վերջո պետք է հստակ սահմանազատել իրավունքը և քաղաքականությունը: Ոչինչ ու ոչ մի հանգամանք չպիտի խաթարեն իրավունքի և օրենքի գերակայությանը:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

[1] 1949 թ. օգոստոս- 12-ի Ժնևի կոնվենցիաների 1-ին լրացուցիչ արձանագրություն, Հայաստանի իրավական տեղեկատվական համակարգ, URL:https://www.arlis.am/DocumentView.aspx?docID = 81055, (15.12.2021թ.)

[2] ԱՀ ՄԻՊ պաշտոնական կայքէջ, URL:https://www.artsakhombuds.am, (15.12.2021թ.)

[3] EVN Report կայքէջ, URL:https://www.evnreport.com/% D5%B0% D5%A1%D5%B5%D5%A5%D6%80%D5%A5%D5%B6/azerbaijan-war-crimes-arm, (15.12.2021թ.)

[4] 1949 թ. օգոստոս- 12-ի Ժնևի կոնվենցիաների 1-ին լրացուցիչ արձանագրություն, Հայաստանի իրավական տեղեկատվական համակարգ, URL:https://www.arlis.am/DocumentView.aspx?docID =81055, (15.12.2021թ.)

[5] EVN Report կայքէջ, URL:https://www.evnreport.com/%D5%B0% D5%A1%D5%B5%D5%A5%D6%80%D5%A5%D5%B6/azerbaijan-war-crimes-arm, (15.12.2021թ.)

[6] «Արմենպրես» լրատվական գործակալություն URL:https://armenpress.am/arm/news/1047378.html, (15.12.2021թ.)

[7] 1949 թ. օգոստոսի 12-ի Ժնևյան կոնվենցիաներ ու դրանց լրացուցիչ արձանագրություններ, ք. Երևան 2017թ., էջ 32, 216-219, 318-324 (15.12.2021թ.)

[8] Официальный сайт ООН, URL:https://www.un.org/ru/documents/decl_conv/conventions/cluster_munitions.shtml, (15.12.2021թ.)

[9] «Ազատություն» ռադիոկայան, URL:https://www.azatutyun.am/a/30878245.html, (15.12.2021թ.)

[10] «Ազատություն» ռադիոկայան, URL:https://www.azatutyun.am/a/30922716.html, (15.12.2021թ.)

[11] «Ազատություն» ռադիոկայան, URL: https://www.azatutyun.am/a/30986717.html, (15.12.2021թ.)

[12] Официальный сайт ООН, URL:https://www.un.org/ru/documents/decl_conv/conventions/pdf/conweapons.pdf, (15.12.2021թ.)

[13] 1949թ. օգոստոսի 12-ի Ժնևի 3-րդ կոնվենցիա, Հայաստանի իրավական տեղեկատվական համակարգ, URL:https://www.arlis.am/DocumentView.aspx?docID=20875, (15.12.2021թ.)

[14] Արցախի մարդու իրավունքների պաշտպանի թվիթերյան կայք, URL:https://twitter.com/ArtsakhOmbuds/status/1315333462879019011, (15.12.2021թ.)
[15] BBC լրատվական կայքէջ, URL:https://www.bbc.com/news/world-europe-54645254, (15.12.2021թ.)
[16] Հրապարակային հետաքննող Բենջամին Սթրինքի թվիթերյան կայք, URL:https://twitter.com/BenDoBrown/status/1322200787141971971, (15.12.2021թ.)
[17] ԱՀ ՄԻՊ Արտակ Բեգլարյանի ֆեյսբուքյան գրառումից, URL:https://www.facebook.com/100000847389707/posts/3913383665366508/, (15.12.2021թ.)
[18] Զինված ընդհարումների դեպքում մշակութային արժեքների պաշտպանության մասին 1954 թ. Հաագայի կոնվենցիա, Հայաստանի իրավական տեղեկատվական համակարգ, URL:https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=75856, (15.12.2021թ.)
[19] «Ազատություն» ռադիոկայան, URL:https://www.azatutyun.am/a/30924409.html, (15.12.2021թ.)
[20] 1990 թ. Վարձկանների հավաքագրման, օգտագործման, ֆինանսավորման և ուսուցման դեմ պայքարի միջազգային կոնվենցիա, URL:http://www.parliament.am/draft_docs7/K-769_Convention_arm.pdf, (15.12.2021թ.)

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. 1949 թ. օգոստոսի 12-ի Ժնևյան կոնվենցիաներ ու դրանց լրացուցիչ արձանագրություններ, Երևան, 2017, 443 էջ:
2. Հայաստանի իրավական տեղեկատվական համակարգ, www.arlis.am
3. Официальный сайт ООН, https://www.icrc.org/ru

Военные преступления Азербайджана в Третьей Арцахской войне

Саргсян Ара

АрГУ, Юриспруденция, 2-й курс

Резюме

***Ключевые слова**: Азербайджанская Республика, Республика Арцах, агрессия, преступление, международное гуманитарное право, Женевская конвенция, запрещённые, нарушение*

2020 г. 27 сентября Азербайджан и Турция развязали войну, которая принесла огромные бедствия как армянам Арцаха, так и армянам всего мира. Азербайджан вел войну с грубым нарушением практически всех норм международного гуманитарного права. Атаками подвергались мирные жители, использовалось незаконное оружие, проводился культурный геноцид, с заключенными обращались бесчеловечно, в зоне конфликта использовались наёмники.

На протяжении всей войны сообщалось о нарушениях международного гуманитарного права Азербайджаном и Турцией. В международной правовой системе должны быть созданы механизмы, которые будут рассматривать применимость международного права и наказание за его нарушение, чтобы предотвратить их в будущем и обеспечить эффективность применения этих норм.

War Crimes of Azerbaijan in the Third Artsakh War

Sargsyan Ara
ArSU, Jurisprudence, 2nd course

Summary

***Key words**: Republic of Azerbaijan, Republic of Artsakh, aggression, crime, international humanitarian law, Geneva Convention, prohibited, violation*

2020 On September 27, Azerbaijan and Turkey unleashed a war that brought enormous disasters to both the Armenians of Artsakh and the Armenians of the whole world. Azerbaijan waged war in gross violation of practically all norms of international humanitarian law. Civilians were attacked, illegal weapons were used, cultural genocide was carried out, prisoners were treated inhumanly, and mercenaries were used in the conflict zone.

Throughout the war, violations of international humanitarian law were reported by Azerbaijan and Turkey. In the international legal system, mechanisms must be established that will consider the applicability of international law and the punishment for its violation, in order to prevent them in the future and ensure the effective application of these norms.

ՏՆՏԵՍԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

ЭКОНОМИКА

ECONOMY

Բանկային համակարգի վերլուծությունը և զարգացման միտումները Հայաստանի Հանրապետությունում

Աբրահամյան Ռոզա
ԳՊՀ, Ֆինանսներ (ըստ ոլորտի), 2-րդ կուրս
Գիտական ղեկավար՝ տ.գ.թ., դոցենտ ***Գ. Խաչատրյան***

Հանգուցային բառեր. *բանկային համակարգ, ֆինանսական համակարգ, վարկ, ավանդ, բանկերի դիրք, բանկային համակարգի ցուցանիշներ*

Ֆինանսական համակարգի զարգացման և արդյունավետության բարձրացման գործում բացառիկ կարևոր դերակատարություն ունի բանկային համակարգը, որի միջոցով կարգավորվում է տնտեսավարման սուբյեկտների և ազգաբնակչության ազատ դրամական միջոցների, խնայողությունների հավաքագրումը՝ ինչի շնորհիվ տեղի են ունենում բազմաբնույթ վարկային, ավանդային, ներդրումային գործառույթներ:

Անշուշտ, խոսելով ժամանակակից բանկային համակարգի մասին՝ անհրաժեշտ է ընդգծել, որ այն գտնվում է մշտական զարգացման փուլում: Փոխվում է գործունեության ուղղվածությունը և գործառույթների համակարգը, մրցակցության մեթոդները, վերահսկման ու կառավարման մակարդակները: Յուրաքանչյուր երկրի բանկային համակարգ, որի բաղկացուցիչ մասն են հանդիսանում առևտրային բանկերը, ունի զարգացման իր առանձնահատկությունները:

Ընդ որում, կայուն և զարգացող բանկային համակարգը էական դեր ունի տնտեսության առողջ զարգացման գործում: Հայաստանի բանկային համակարգը Հայաստանի ֆինանսական շուկայի խոշորագույն մասնակիցն է, որին բաժին է ընկնում ֆինանսական համակարգի ակտիվների մոտ 92 տոկոսը: ՀՀ բանկային համակարգը երկմակարդակ բանկային համակարգ է, որն ընդգրկում է ՀՀ կենտրոնական բանկը, ՀՀ տարածքում գործող բանկերը, նրանց մասնաճյուղերը, ինչպես նաև օտարերկրյա բանկերի՝ ՀՀ տարածքում գործող մասնաճյուղերն ու ներկայացուցչությունները, գործառնական գրասենյակները (կետերը) [1]:

Անդրադառնանք բանկային համակարգի արդյունավետության վերլուծությանը վերջին տարիներին՝ ներկայացնելով ՀՀ բանկային համակարգն ըստ հաճախորդներին տրված վարկերի, հաճախորդների ընթացիկ հաշիվների և ավանդների, կապիտալի, պարտավորությունների և շահույթի:

Աղյուսակ 1

ՀՀ բանկային համակարգում բանկերի դիրքն ըստ հաճախորդներին տրված վարկերի (2020 թ) [1]

1	ԱՄԵՐԻԱԲԱՆԿ	696մլրդ.
2	ՀԱՅԷԿՈՆԵՍԲԱՆԿ	635մլրդ.
3	Կոնվերս Բանկ	229մլրդ.
4	Ինեկոբանկ	216մլրդ.
5	ՎՏԲ-Հայաստան Բանկ	203մլրդ.
6	Յունիբանկ	156մլրդ.
7	Արդշինբանկ	149մլրդ.
8	ԱՐԱՐԱՏԲԱՆԿ	148մլրդ.
9	Էյչ-Էս-Բի-Սի Բանկ Հայաստան	143մլրդ.
10	ՀԱՅԲԵԿՈՆՈՄԲԱՆԿ	133մլրդ.
11	Արմսվիսբանկ	123մլրդ.
12	Արցախբանկ	118մլրդ.
13	ԵԿՈԿԱԲԱՆԿ	111մլրդ.
14	ԱԿԲԱ ԲԱՆԿ	109մլրդ.
15	ԱյԴի Բանկ	94մլրդ.
16	ԲԻԲԼՈՍ Բանկ Արմենիա	42մլրդ.
17	Մելլաթ Բանկ	19մլրդ.

Աճող անորոշությունների և ռիսկերի պայմաններում՝ 2020 թվականին բանկային համակարգը շարունակել է իրականացնել տնտեսության վարկավորում՝ չնայած վարկավորման աճի տեմպերը նվազել են (տե՛ս աղյուսակ 1)։ Անորոշությունների խոշորացումը, բանկային համակարգի համար ֆինանսական ռեսուրսների ներգրավման հնարավորությունների կրճատումը հանգեցրել են վարկավորման աճի տեմպերի կրճատման։ Բանկային համակարգի ընդհանուր վարկային պորտֆելը 2019 թվականի համեմատությամբ աճել է 489 միլիարդ ՀՀ դրամով, կամ 13.7 տոկոսով [2]։

Նկատենք, որ վարկավորման պահանջը ևս նվազել է՝ տնտեսավարողների մոտ տնտեսության հեռանկարի վերաբերյալ անորոշությունների աճի գործոնով պայմանավորված։

Տնային տնտեսությունների և տնտեսավարող սուբյեկտների եկամուտների նվազման պայմաններում դիտարկվել են վերջիններիս վճարունակության վատթարացում, պարտքի սպասարկման դժվարություններ։ Այս պարագայում ֆինանսական հաստատություններում աճել են վարկային ռիսկով պայմանավորված կորուստների նյութականացումը և

[1] Աղբյուրը՝ ՀՀ Կենտրոնական բանկի պաշտոնական կայքէջ, https://www.cba.am/am/

վարկային պորտֆելում չաշխատող վարկերի տեսակարար կշիռը: Մասնավորապես՝ չաշխատող վարկերի աճը հիմնականում պայմանավորվել է սպառողական վարկային պորտֆելում չաշխատող վարկերի տեսակարար կշռի աճով:

Բանկային համակարգի ընդհանուր վարկային պորտֆելը 2021 թվականի առաջին 9 ամիսների ընթացքում 2020 թվականի 9 ամիսների համեմատ նվազել է 2.9 տոկոսով [3]:

Ֆինանսական կազմակերպություններին հաջողվել է վարկերի վերանայումների և վարկային արձակուրդների արդյունքում, ինչպես նաև պետական աջակցության ծրագրերի շնորհիվ մեղմել և դանդաղեցնել վարկային ռիսկի նյութականացումը: Ֆինանսական կազմակերպությունների կողմից վարկային արձակուրդների տրամադրումը հնարավորություն է ընձեռել զսպելու վարկային ռիսկի արագ նյութականացումը, ինչպես նաև դրա գծով կորուստները տեղափոխելու ապագա ժամանակներ:

Նշենք, որ 2020 թվականի աննախադեպ շոկերի պայմաններում նվազել են նաև հաճախորդների ընթացիկ հաշիվների և ավանդների չափերը (տե՛ս աղյուսակ 2):

Աղյուսակ 2

ՀՀ բանկային համակարգում բանկերի դիրքն ըստ հաճախորդների ընթացիկ հաշիվների և ավանդների 2020 թվականին [2]

1	ՀԱՅԲԻԶՆԵՍԲԱՆԿ	603մլրդ
2	ԱՄԵՐԻԱԲԱՆԿ	598մլրդ
3	ԱԿԲԱ ԲԱՆԿ	296մլրդ
4	ՎՏԲ-Հայաստան Բանկ	261մլրդ
5	Կոնվերս Բանկ	227մլրդ
6	Ինեկոբանկ	220մլրդ
7	Էյչ-Էս-Բի-Սի Բանկ Հայաստան	170մլրդ
8	Յունիբանկ	156մլրդ
9	Արմսվիսբանկ	134մլրդ
10	Արցախբանկ	103մլրդ
11	ՀԱՅԷԿՈՆՈՄԲԱՆԿ	95մլրդ
12	Արդշինբանկ	69մլրդ
13	Այ՛Դի Բանկ	66մլրդ
14	ԲԻԲԼՈՍ Բանկ Արմենիա	57մլրդ
15	ԵՎՈԿԱԲԱՆԿ	17մլրդ
16	ԱՐԱՐԱՏԲԱՆԿ	10մլրդ
17	Մելլաթ Բանկ	5մլրդ


Ավանդների աճի տեմպի նվազման, տարեվերջին ավանդների որոշակի արտահոսքի պարագայում իրացվելիության ցուցանիշների

[2] Աղբյուրը՝ ՀՀ Կենտրոնական բանկի պաշտոնական կայքէջ, https://www.cba.am

նվազումն աննշան է եղել:

Բանկային համակարգի ընդհանուր ընթացիկ հաշիվների մնացորդները և ժամկետային ավանդները 2021թ. առաջին 9 ամիսների ընթացքում աճել են 150 միլիարդ ՀՀ դրամով, կամ 4.2 տոկոսով:

2021 թվականի 9 ամիսներին ընդհանուր ընթացիկ հաշիվների մնացորդները և ժամկետային ավանդները կազմել են 3.721 միլիարդ ՀՀ դրամ, որն ընդհանուր պարտավորությունների 62 տոկոսն է [3]:



Գծապատկեր 1. ՀՀ բանկային համակարգում բանկերի դիրքն ըստ կապիտալի 2020 թվականին [3]


2019 թվականի առաջին կիսամյակի համեմատությամբ 2020 թվականի առաջին կիսամյակում ՀՀ տարածքում գործող տասնյոթ առևտրային բանկերի ընդհանուր կապիտալն աճել է շուրջ 47 միլիարդ դրամով կամ 5.6 տոկոսով [4]: 2021 թվականի առաջին եռամսյակի վերջի դրությամբ Հայաստանի տասնյոթ առևտրային բանկերի ընդհանուր կապիտալը կազմել է 913 միլիարդ դրամ: 2020 թվականի վերջի համեմատ այն աճել է

[3] Աղբյուրը՝ ՀՀ Կենտրոնական բանկի պաշտոնական կայքէջ, https://www.cba.am

շուրջ 17 միլիարդ դրամով կամ 1.8 տոկոսով [5]:

2021 թվականի առաջին 9 ամիսների ընթացքում Հայաստանի բանկային համակարգի ընդհանուր կապիտալը 2020 թվականի 9 ամիսների համեմատ աճել է 46 միլիարդ ՀՀ դրամով, կամ 5 տոկոսով ու կազմել է 927 միլիարդ ՀՀ դրամ [3]:


Բանկային համակարգի կապիտալի համարժեքության և իրացվելիության անհրաժեշտ մակարդակը տարվա ընթացքում պահպանվել է: Վարկավորման արձանագրված աճի և նյութականացված ռիսկերի կլանման պայմաններում կապիտալի համարժեքության ցուցանիշի նվազումը չափավոր է եղել (տե՛ս գծապատկեր 1): Տարեվերջի դրությամբ թե՛ կապիտալի համարժեքությունը և թե՛ իրացվելիությունը շարունակել են պահպանվել նվազագույն շեմերից բարձր մակարդակում:



Գծապատկեր 2. ՀՀ բանկային համակարգում բանկերի դիրքն ըստ պարտավորությունների 2020 թվականին [4]

[4] Աղբյուրը՝ ՀՀ Կենտրոնական բանկի պաշտոնական կայքէջ, https://www.cba.am/

Բանկային համակարգում զգալիորեն ավելացել է նաև պարտավորությունների չափը, ինչը պայմանավորված է համավարակով և ռազմական դրությամբ (տե՛ս գծապատկեր 2)։



Գծապատկեր 3. ՀՀ բանկային համակարգում բանկերի դիրքն ըստ շահույթի 2020 թվականին [5]

Աննախադեպ շոկերի պայմաններում ֆինանսական համակարգը պահպանել է գործունեության անընդհատությունը՝ ի հաշիվ ձևավորված շահույթի և իրացվելիության բարձր ներուժի (տե՛ս գծապատկեր 3)։

2021 թվականի առաջին 9 ամիսների ընթացքում Հայաստանում գործող բանկերի ընդհանուր զուտ շահույթը կազմել է 66.3 միլիարդ ՀՀ դրամ, ինչը 7.7 միլիարդ ՀՀ դրամով կամ 13.2 տոկոսով ավել է 2020 թվականի առաջին 9 ամիսների ընթացքում գրանցած արդյունքից [3]։

[5] Աղբյուրը՝ ՀՀ Կենտրոնական բանկի պաշտոնական կայքէջ, https://www.cba.am

2020 թվականին համավարակը և ռազմական դրությունը մարտահրավերներ են ստեղծվել ՀՀ ֆինանսական համակարգի համար, որոնք էականորեն տարբերվում եմ նախորդ բոլոր ճգնաժամերի մարտահրավերներից։

Ընդ որում համավարակի տարածման կանխարգելման նպատակով իրականացված սահմանափակումների, տարեվերջի ռազմական դրության և դրանց հաջորդած անորոշությունների բարձր մակարդակի պայմաններում արձանագրվել է տնտեսական անկում։

ՀՀ Կենտրոնական բանկը և ՀՀ Կառավարությունը արձագանքել են ստեղծված տնտեսական իրավիճակին՝ իրականացնելով ընդլայնողական մակրոտնտեսական քաղաքականություն։ Կառավարության կողմից իրականացված քաղաքականությունը ներառել է նաև տուժած տնտեսավարողների և խոցելի սոցիալական խմբերի օժանդակությանն ուղղված հասցեական միջոցառումներ։

Հավելենք նաև, որ ռուս-ուկրաինական 2022 թվականի փետրվարի 24-ին սկսված պատերազմի և Ռուսաստանի Դաշնության նկատմամբ կիրառվող պատժամիջոցների ներքո տատանողականություն է առաջացել տարածաշրջանի ֆինանսական շուկաներում։ Անդրադառնալով ռուս-ուկրաինական պատերազմի ազդեցությանը ՀՀ բանկային համակարգի վրա, նշենք, որ ՀՀ բանկերում գործում է SWIFT համակարգը, որը հանդիսանում է ֆինանսական գործառնությունների վերաբերյալ տեղեկատվության փոխանակման միջազգային ստանդարտ։ SWIFT համակարգի անջատումը տարածվում է ՌԴ ոչ բոլոր բանկերի վրա՝ հիմնականում խոշորների։ ՀՀ առևտրային բանկերը իրենց գործարքները կարող են ազատորեն իրանացնել ՌԴ մյուս առևտրային բանկերի հետ, ինչպես նաև ֆինանսական գործարքների վերաբերյալ տեղեկատվությունը փոխանակել այլընտրանքային տեսքով, ինչը նույնպես կարող է ապահովել ֆինանսական գործառնությունների անխափան իրականացումը [6]։

Աշխատանքի շրջանակներում իրականացված վերլուծությունների ու ուսումնասիրությունների արդյունքում արվել են հետևյալ եզրահանգումները՝

- Շատ կարևոր է բանկային համակարգի զարգացման նշանակությունը տնտեսական համակարգի հետագա զարգացման համար, քանի որ բանկային համակարգը իր հարաբերականորեն զարգացման աստիճանով կարող է նպաստել տնտեսական համակարգի մյուս հատվածների գործունեության արդյունավետության բարձրացմանը։

- 2020 թվականին ռազմական դրությունը և համավարակը մարտահրավերներ են ստեղծվել ՀՀ բանկային համակարգի համար, սակայն այն կարողացել է պահպանել իր գործունեության անընդհատությունը:
- ՀՀ Կենտրոնական բանկը և ՀՀ Կառավարությունը արձագանքել են 2020 թվականին ստեղծված տնտեսական իրավիճակին՝ իրականացնելով ընդլայնողական մակրոտնտեսական քաղաքականություն:
- ՀՀ բանկային համակարգի արդիականացման համատեքստում այսօր նկատվում են ակտիվ բարեփոխումներ իրավական և տնտեսական ոլորտում, ինչի արդյունքում, անշուշտ, մեծանում է ներտնտեսական մրցակցային ակտիվության պայմանները:
- Կայուն բանկային համակարգը էական դեր ունի տնտեսության առողջ զարգացման համար: Այդ տեսանկյունից անհրաժեշտ է վստահ լինել, որ բանկային համակարգը ապահով է և կայուն, ունակ է պատշաճ կերպով տնտեսությանը մատուցել հիմնական ֆինանսական ծառայություններ:
- Բանկերը շարունակել են մատուցել բանկային ծառայություններ՝ առաջնությունը տալով էլեկտրոնային ծառայությունների հասանելիությանը:
- ՀՀ բանկային համակարգը զերծ չէ տարաբնույթ ռիսկերից, որոնք իրենց առանձնահատկություններով տարբերվում են աշխարհի զարգացած երկրների բանկային համակարգերում առկա ռիսկերից, որը զգալիորեն պայմանավորված է մեր տնտեսության ինքնատիպությամբ:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Բանկերի և բանկային գործունեության մասին ՀՀ օրենք, https://www.arlis.am/, (Հասանելի է 04.01.2022):
2. Հայաստանի բանկային համակարգի վարկային ներդրումներին նվիրված RUMELS Management Solutions մասնագիտացված խորհրդատվական ընկերության վերլուծություն, https://banks.am/am (Հասանելի է 10.01.2022):
3. Հայաստանի բանկային համակարգի, 2021 թվականի առաջին 9 ամիսների արդյունքների ամփոփում RUMELS Management Solutions մասնագիտացված խորհրդատվական ընկերության վերլուծություն, https://banks.am (Հասանելի է 10.01.2022):
4. Հայաստանի Բանկերի Միության համակարգի գործունեության առաջին կիսամյակի արդյունքների ամփոփում, https://www.uba.am (Հասանելի է 11.01.2022):
5. Հայաստանի բանկերը առաջին եռամսյակում, https://hetq.am (Հասանելի է 12.01.2022):
6. ՀՀ Կենտրոնական բանկի պաշտոնական կայքէջ, բանկերի հաշվետվություններ, https://www.cba.am (Հասանելի է 12.01.2022):

Анализ и тенденции развития банковской системы Республики Армения

Абраамян Роза
ГГУ, Финансы по отраслям, 2-й курс

Резюме

Ключевые слова: *Банковская система,финансовая система, кредит, депозит, положение банков, показатели банковской системы*

В условиях рыночных отношений исключительно важную роль в повышении эффективности экономики играет банковская система. Банковская система Армении является крупнейшим участником финансового рынка Армении, на долю которого приходится около 92% активов финансовая система. В условиях модернизации банковской системы Республики Армения сегодня наблюдаются активные реформы в финансово-экономической сфере, в результате чего, безусловно, повышаются условия внутрихозяйственной конкурентной деятельности.

Banking System Analysis and Development Trends in the Republic of Armenia

Abrahamyan Roza
GSU, Department of Finance, 2nd course

Summary

Key words: *Banking system, financial system, credit, deposit, position of banks, indicators of the banking system*

In the conditions of market relations, the banking system has an exceptionally important role in increasing the efficiency of the economy. The banking system of Armenia is the largest participant in the financial market of Armenia, which accounts for about 92% of the assets of the financial system. In the context of the modernization of the banking system of the Republic of Armenia, today active reforms are observed in the legal-economic sphere, as a result of which, of course, the conditions of intra-economic competitive activity increase.

Զբաղվածության հիմնախնդիրը ու դրա լուծման ուղիները ՀՀ-ում

Բաղիկյան Լիլիա
ԳՊՀ, Տնտեսագիտություն, 2-րդ կուրս
*Գիտական ղեկավար՝տ. գ. թ., դոցենտ **Ս. Ամիրխանյան***

Հանգուցային բառեր. *աշխատանքի շուկա, զբաղվածություն, գործազրկություն, զբաղվածության* ցուցանիշներ, *տնտեսական քաղաքականություն*

Հայաստանի Հանրապետությունում արդիական հիմնախնդիր է զբաղվածության մակարդակի բարձրացումը: Զբաղվածության հիմնախնդրի ուսումնասիրության և վերլուծության հիման վրա ներկայացնենք Հայաստանի Հանրապետությունում զբաղվածության հիմնահարցերը:


Յուրաքանչյուր պետության սոցիալական քաղաքականության ծրագրերը հիմնականում իրենց մեջ ներառում են համալիր միջոցառումներ՝ ուղղված բնակչության կյանքի որակի բարելավմանը, զբաղվածության մակարդակի բարձրացմանը, հաշմանդամություն ունեցող անձանց, երիտասարդների զբաղվածության ապահովմանը, գործազրկության կրճատմանը և այլն: Անշուշտ, կայուն զբաղվածությունն է ամենահուսալի միջոցներից մեկը աղքատությունից դուրս գալու և երկրում տնտեսական աճը խթանելու համար: Սոցիալ-տնտեսական զարգացման գործընթացի համար կենտրոնական դեր ունի աշխատաշուկան:

Աշխատանքի շուկան, հանդիսանալով շուկայական տնտեսական համակարգի առանձին և ինքնուրույն բաղադրիչ, իրենից ներկայացնում է աշխատանքի ամբողջական առաջարկի և ամբողջական պահանջարկի հասարակական հարաբերությունների համակարգ: Այստեղ ձևավորվում և կարգավորվում են մի կողմից վարձու աշխատողների, այսինքն՝ աշխատանք առաջարկողների, մյուս կողմից գործատուների աշխատանքի պահանջարկ ներկայացնողների հարաբերությունները: Միաժամանակ, աշխատանքի շուկայում են սահմանվում աշխատուժի գինը, նրա վարձակալման, աշխատանքային պայմանները, ինչպես նաև աշխատուժի և աշխատատեղերի թվաքանակի հարաբերակցությունը: Աշխատանքի շուկան արտացոլում է զբաղվածության, դրա հիմնական կառուցվածքների (ճյուղային, մասնագիտական, ժողովրդագրական) փոփոխությունների դինամիկան, ինչպես նաև գործազրկության մասշտաբները և դրա փոփոխման միտումները [1, 3]:

Զբաղվածության սոցիալ-տնտեսական էությունը կայանում է նրանում, որ այն ոչ միայն մակրոտնտեսական կարևորագույն ցուցանիշներից մեկն է և եկամտի աղբյուր է հանդիսանում, այլև արտահայտում է հանրօգուտ և համապատասխան որակավորման աշխատանք իրականացնելու մարդկանց սոցիալական պահանջմունքները [2, 99]:

Գործազրկությունը հանգեցնում է լուրջ հետևանքների, որոնք ունենում են բացասական և երկարաժամկետ ազդեցություն տնտեսական աճի վրա: Բարձր գործազրկություն ունեցող տնտեսությունը արդյունավետորեն չի օգտագործում իր առկա սահմանափակ ռեսուրսները, հատկապես աշխատուժի մի մասը, ինչն էլ չարտադրված ապրանքների և ծառայությունների տեսքով է արտահայտվում: Գործազրկության բարձր մակարդակը կարող է հանգեցնել սոցիալ-տնտեսական ապակայունացման, անօթևանության, հիվանդության և հոգեկան սթրեսի, կարող է երկրում առաջացնել քաղաքացիական անկարգություններ:

Ուսումնասիրենք զբաղվածության ցուցանիշների փոփոխությունները և դրանց ունեցած հետևանքները:




Գծապատկեր 1. Զբաղվածության մակարդակը ըստ ՀՀ մարզերի և ք. Երևանի,%*[4]*

Ինչպես երևում է գծապատկեր 1-ից, 2020 թվականին զբաղվածության մակարդակի ամենաբարձր ցուցանիշը եղել է Արմավիրի մարզում, իսկ ամենացածրը՝ Տավուշի մարզում: 2014-2020 թվականների ընթացքում զբաղվածության ցուցանիշի նվազման միտում է գրանցվել Արագածոտնի, Արարատի, Գեղարքունիքի, Լոռվա, Տավուշի, Վայոց ձորի մարզե-

րում: 2014-2020 թվականների ընթացքում Երևանում զբաղվածության մակարդակը տատանվել է 43.8-46,7%-ի միջակայքում, այսպիսով՝ գրանցվել է զբաղվածության մակարդակի 2.9%-ի չափով աճ:


Գործազրկության մակարդակը ըստ մարզերի և ք. Երևանի կարող ենք տեսնել գծապատկեր 2-ում.



Գծապատկեր 2. Գործազրկության մակարդակը ըստ ՀՀ մարզերի և ք. Երևանի,% *[4]*

Ինչպես ցույց է տալիս գծապատկեր 2-ը, 2020 թվականին գործազրկության մակարդակը ամենաբարձրը եղել է Տավուշի մարզում, ամենացածրը՝ Գեղարքունիքի մարզում: 2020 թվականին, նախորդ տարվա համեմատ, գործազրկության մակարդակը նվազել է Արարատի, Արագածոտնի, Կոտայքի, Տավուշի, Վայոց ձորի և Շիրակի մարզերում: 2020 թվականին Երևանում գործազրկության մակարդակը կազմել է 23.6 %, որը, նախորդ տարվա համեմատ, աճել է 0.9 %-ով: Ինչպես տեսնում ենք, Հայաստանի Հանրապետության մարզերի միջև գործազրկության մակարդակների համեմատության արդյունքներում գործազրկության մակարդակները իրարից զգալի կերպով տարբերվում են, ինչը պայմանավորված է Երևանից մարզի ունեցած հեռավորությունից, նաև բարենպաստ բնակլիմայական պայմանների առկայությունից և այլն:


Հայաստանի Հանրապետությունում գենդերային գործոնը և կրթական մակարդակները կապված են աշխատանքի տեղավորման հնարավորությունների հետ:



Գծապատկեր 3. Զբաղվածության մակարդակն ըստ կրթական մակարդակի և սեռի, 2020թ.,% [4]

Դիտելով գծապատկեր 3-ը նկատում ենք, որ 2020 թ.-ին աշխատանքի շուկայում կանայք դեռևս հետ են մնում տղամարդկանցից: Անհրաժեշտ է այնպիսի հասարակություն ձևավորել, որտեղ քայլեր կձեռնարկվեն, որոնք կնպաստեն տղամարդկանցը տրվող նախապատվության և կանանց նկատմամբ խտրականության վերացմանը, հավասար հնարավորությունների ձևավորմանը:


Կարևոր է նաև չսովորող և չաշխատող երիտասարդների մասնաբաժինը երիտասարդների ընդհանուր թվաքանակում:



Գծապատկեր 4. Չսովորող և չաշխատող երիտասարդների մասնաբաժինը երիտասարդների ընդհանուր թվաքանակում տարածաշրջանային երկրներում, 2014-2019 թվականներ

Հայաստանի Հանրապետությունը չսովորող և չաշխատող երիտասարդների թվաքանակի ցուցանիշով (NEET) աշխարհում և տարածաշրջանում զբաղեցնում է բարձր՝ 13-րդ տեղը: Ինչպես ցույց է տալիս գծապատկեր 4-ը, չնայած 2018 թվականից Հայաստանի Հանրապետությունում NEET ցուցանիշը զգալիորեն նվազել է, սակայն համանման երկրների հետ համեմատությամբ և նույնիսկ միջազգային մակարդակով ցուցանիշը դեռևս բարձր է: Այն գրեթե նույնական է Վրաստանի և Թուրքիայի ցուցանիշին՝ 26%, Ադրբեջանի համար ցուցանիշը չի հաշվարկվում, իսկ Իրանի համար հաշվարկվել է միայն 2017 և 2018 թվականներին (2018 թվականի ցուցանիշը փոքր տարբերությամբ մոտ է եղել նույն թվականի Հայաստանի Հանրապետությունում գրանցված ցուցանիշին. չսովորող և չաշխատող երիտասարդների տեսակարար կշիռը Իրանում երիտասարդների ընդհանուր թվաքանակում մոտ 32% է եղել) [3]:

Հայաստանում, ինչպես աշխարհի գրեթե բոլոր երկրներում, զբաղվածության վրա COVID-19-ը շոշափելի բացասական ազդեցություն ունեցավ, սակայն Հայաստանի համար 2020 թվականի մարտահրավերները չսահմանափակվեցին կորոնավիրուսի համավարակի տարածմամբ: Պատերազմական գործողությունները ևս էական ազդեցություն ունեցան զբաղվածության մակարդակի վրա:



Գծապատկեր 5. ՀՀ զբաղվածության վրա COVID-19-ի և պատերազմի ազդեցության դինամիկան [3]

Ինչպես երևում է գծապատկեր 5-ից, կորոնավիրուսը և պատերազմը հանրագումարային ամենամեծ ազդեցությունը ունեցել են 2020 թվականի նոյեմբերին՝ 56%:

Ներկայիս աշխատանքի շուկայի լարվածության մակարդակը ստիպում է ՀՀ կառավարությանը վարել ակտիվ և ճկուն տնտեսական քաղաքականություն,որը կնպաստի նոր աշխատատեղերի ավելացմանը, աշխատուժի մասնագիտական հմտությունների բարելավմանը:

Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից զբաղվածության հիմնահարցերի լուծման համար իրականացվել են հակաճգնաժամային հետևյալ միջոցառումները. փոքր և միջին ձեռնարկությունների զարգացման նպատակով վարկային միջոցներ են տրամադրվել, եկամտային հարկի դրույքաչափերի իջեցում է կատարվել, միկրոձեռնարկատիրությանը հարկերից ազատում, աջակցություն է տրամադրվել սուբսիդիաների տեսքով նոր ստեղծվող ձեռնարկություններին՝ դրանց մրցունակությունը բարձրացնելու նպատակով, որն էլ բերել է զբաղվածության մակարդակի բարձրացմանը:

ՀՀ-ում զբաղվածության հիմնախնդրի լուծմանը ուղղված տնտեսական քաղաքականության մեջ առավել կարևորվում է գյուղատնտեսության ոլորտում զբաղվածության մակարդակի բարձրացումը, բարենպաստ ներդրումային միջավայրի բարելավումը, փոքր ձեռնարկությունների համար բարենպաստ պայմանների ստեղծումը, բիզնես վարելու գրագիտության բարձրացումը, հայրենական ապրանքների արտադրման ընդլայնումը, որոնք իրենց հերթին կկասեցնեն արտագաղթը:

Անշուշտ, համավարակն՝ որպես առաջին շոկային ալիք, ամենամեծ բացասական ազդեցությունն ունեցել է Հայաստանի Հանրապետության զբաղվածության մակարդակի վրա, այնուհետև՝ դրան գումարվել է ռազմական գործողությունները:

Աշխատանքի շրջանակներում իրականացված վերլուծությունների և ուսումնասիրությունների արդյունքում արվել է հետևյալ առաջարկությունները.

- Լավագույն մասնագետների հոսքը դեպի արտասահման կանխելու նպատակով՝ առաջարկում ենք պետության կողմից մշակել այնպիսի ծրագիր, որով արտասահմանյան երկրներում վերապատրաստված մասնագետները, համաձայն նախապես կնքված պայմանագրերի, կվերադառնան և կաշխատեն Հայաստանում գործող կազմակերպություններում:
- Բարձրագույն կրթական հաստատություններում սովորող երիտա-

սարդներին տրամադրել սուբսիդիաներ լավագույն բիզնես գաղափարների իրականացման համար, որոնք կնպաստեն աշխատատեղերի ավելացմանը և կկարողանան իրականացնել տևական գործունեություն:

- Նկատի ունենալով SS ոլորտում մասնագետ կադրերի ներկայիս մեծ պահանջարկը՝ առաջարկում ենք SS ընկերություններին բուհերի հետ մշակել ծրագիր և իրականացնել բուհ-արտադրություն կրթական մոդելով համագործակցության ծրագրեր:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Ղանթաշյան Ռ. Ս., ՀՀ աշխատանքի շուկան և զբաղվածության պետական կարգավորումը, Երևան, 2003, 52 էջ:
2. Մելքումյան Ա., Աշխատանքի շուկան և բնակչության զբաղվածությունը, Երևան, 2006, 328 էջ:
3. Զբաղվածության կարգավորման 2022 թվականի պետական ծրագիրը և միջոցառումների ցանկը հաստատելու մասին, https://www.arlis.am/documentview.aspx?docID=156365 (Հասանելի է 09.02.2022):
4. Հայաստանի Հանրապետության սոցիալ-տնտեսական վիճակը 2014-2020 թթ., https://www.armstat.am (Հասանելի է 10.02.2022):

Проблема занятости и пути ее решения в армении

Бадикян Лилия
ГГУ, Экономика, 2-й курс

Резюме

Ключевые слова: *рынок труда, занятость, безработица, уровень занятости, экономическая политика*

Программы социальной политики каждой страны в основном включают в себя комплексные меры, направленные на повышение качества жизни населения, повышение уровня занятости, сокращение безработицы и т. д. Повышение уровня занятости является актуальным вопросом в Республике Армения. Безусловно, устойчивая занятость является одним из самых надежных способов сокращения бедности и стимулирования экономического роста в стране.

В статье представлены вопросы занятости в Республике Армения на основе исследования-анализа проблемы занятости.

The Problem of Employment and the Ways to Solve it in Armenia

Badikyan Lilia
GSU, Economics, 2nd course

Summary

Key words*: labor market, employment, unemployment, employment rates, economic policy*

The social policy programs of each country mainly include complex measures aimed at improving the quality of life of the population, raising the level of employment, reducing unemployment, etc. Increasing the level of employment is a topical issue in the Republic of Armenia. Of course, sustainable employment is one of the most reliable ways to get out of poverty and stimulate economic growth in the country.

The article presents the issues of employment in the Republic of Armenia on the basis of the study-analysis of the employment problem.

Աշխատաշուկայի վերլուծությունը և զարգացման միտումները Հայաստանի Հանրապետությունում

Հովհաննիսյան Արեգա
ԳՊՀ, Ֆինանսներ (ըստ ոլորտի), 2-րդ կուրս
*Գիտական դեկավար՝ տ. գ. թ., **դոցենտ Գ. Խաչատրյան***

Հանգուցային բառեր. *աշխատաշուկա, աշխատավարձի ցուցանիշ, պետական քաղաքականություն, աշխատուժի միգրացիա, արհմիություն*

Աշխատաշուկան և բնակչության զբաղվածությունը ժամանակակից շուկայական տնտեսական հարաբերությունների համակարգում առանցքային տեղ են զբաղեցնում:

Արդի պայմաններում ընթացող զարգացումների համատեքստում յուրաքանչյուր պետության ուշադրության կենտրոնում է հայտնվում աշխատաշուկան իր հիմնահարցերով հանդերձ: Ընդ որում նկատենք, որ աշխատաշուկայի խնդիրների կարգավորման և բարելավման ուղղված միջոցառումների իրականացման նպատակով պետությունը պետք է վարի այնպիսի քաղաքանություն, որը կապահովի սոցիալական առաջընթաց, բնակչության կենսամակարդակի բարձրացում, գործազրկության մակարդակի կրճատում:

Թեմայի արդիականությունը կայանում է նրանում, որ վերջին ժամանակներում, հատկապես կորոնավիրուսի համավարակի սահմանափակումներով պայմանավորված, ինչպես նաև պատերազմական դրության պայմաններում ի հայտ են եկել մի շարք խնդիրներ աշխատանքի շուկայի հետ կապված: Հիշյալ հիմնահարցերի շրջանակներում առավել կարևոր և արդիական է դառնում ուսումնասիրել աշխատաշուկայի, աշխատավարձի փոփոխման ազդեցության հետևանքները ՀՀ տնտեսության վրա՝ միաժամանակ կարևորելով ոլորտի կարգավորման ուղղված պետության վարած քաղաքականության արդյունավետությունը:

Նկատենք, որ աշխատանքի շուկան բարդ համակարգ է, պարունակում է մի շարք կարևոր բաղադրամասեր, ինչպիսիքն են՝ աշխատանքի շուկայի սուբյեկտները (գործատուներ վարձու աշխատողներ, նրանց արհմիությունները, աշխատանք փնտրողներ, իշխանության պետական մարմիններ), վերջիններիս հարաբերությունները կարգավորող իրավաբանական նորմերը, աշխատանքի շուկայի հիմնական տարրերը և նրանց փոխհարաբերությունը (առաջարկ, պահանջարկ, մրցակցություն, աշխա-

տուժի արժեք և գին), գործազրկությունը և նրա հետ առնչվող սոցիալական վճարները և նպաստները, աշխատանքի շուկայի ենթակառուցվածքները (գովազդային գործակալություններ, աշխատուժի վերապատրաստման ծառայություն և այլն)։ Վերոգրյալից ենթադրելով անհրաժեշտություն է առաջանում ավելի հանգամանորեն ուսումնասիրել և վեր հանել այս համակարգի առկա և արդիական խնդիրները։

Աշխատաշուկայի խնդիրների վերհանման և արդյունավետ տարբերակների քննարկման համատեքստում կարևորվում է նաև միջազգային զեկույցներում տարբեր երկրների աշխատաշուկայի մակարդակների համեմատությունը, որը երբեմն ամսական միջին աշխատավարձի ցուցանիշների արտացոլմամբ է իրականացվում։

Աշխատանքի շուկայի վերլուծության շրջանակներում ըստ առաջատար երկրների ամսական միջին աշխատավարձի ցուցանիշները հարկումից հետո 2020 թվականին ներկայացված են աղյուսակ 1-ում։ Տվյալներից ելնելով կարող ենք եզրակացնել, որ 2020 թվականին՝ չնայած մեծ պանդեմիա համարվող կորոնավիրուսի պայմանների, առաջատար դիրքում է Շվեյցարիան՝ 6,306.04$ ամսական միջին աշխատավարձով, որը 2,121.72$-ով գերազանցում է Լյուքսեմբուրգին՝ 4,184.32$։ Միջազգային համակարգում երրորդ հորիզոնականում է Սինգապուրը՝ 4,044.51$ դրամային արտահայտությամբ։ Ցավոք սրտի, Հայաստանը այս մեծ համաճարակի պայմաններում առնչվեց մի շարք խոչընդոտների հետ և այս ցուցանիշով հայտնվեց ութսունմեկերորդ հորիզոնականում 389.71$ ամսական միջին աշխատավարձով։

Հավելենք նաև, որ Հայաստանը իր ցուցանիշներով գերազանցում է հարևան երկրներին, որտեղ Ադրբեջանը իննսուներորդ հորիզոնականում է՝ 317.14$, Իրանը իննուսուներեքերորդ հորիզոնականում՝ 301.94$, Թուրքիան իննսունութերորդ հորիզոնականում՝ 282.73$ ամսական միջին աշխատավարձերով։

Աղյուսակ 1

Աշխարհի երկրների միջին աշխատավարձի (հարկումից հետո) կառուցվածքային փոփոխությունների ցուցանիշները,2020 թվական [6]


	Երկիր	*Միջին աշխատավարձ հարկումից հետո,$*
1	Շվեյցարիա	6,306.04
2	Լյուքսեմբուրգ	4,184.32
3	Սինգապուր	4,044.51
4	Ավստրալիա	3,614.29
5	Միացյալ Նահանգներ	3,595.95
6	Դանիա	3,504.45
7	Նորվեգիա	3,331.69
8	Իսլանդիա	3,142.00
9	Քաթար	3,102.63
10	Հոնկ Կոնգ	3,074.89
11	Նիդերլանդներ	2,943.24
12	Գերմանիա	2,884.49
13	Իռլանդիա	2,870.00
14	Շվեդիա	2,857.83
15	ԱՄԷ	2,826.00

Համաձայն «Պետական պաշտոններ զբաղեցնող անձանց վարձատրության մասին» օրենքի ՀՀ վարչապետի աշխատավարձը կազմում է 1 միլիոն 256 հազար 660 դրամ, իսկ Ազգային ժողովի նախագահինը՝ 1 միլիոն 190 հազար 520 դրամ: Հայաստանի Հանրապետության նախագահի աշխատավարձը կազմում է 1 միլիոն 322 հազար 800 դրամ [3]:

Պետական պաշտոն և պետական ծառայության պաշտոն զբաղեցնող անձանց բազային աշխատավարձի չափը չի կարող ցածր լինել օրենքով սահմանված նվազագույն ամսական աշխատավարձի անվանական չափի 80 տոկոսից և գերազանցել օրենքով սահմանված նվազագույն ամսական աշխատավարձի անվանական չափի 120 տոկոսը[3]:

Քանի որ ուսումնասիրությունները ցույց են տվել, որ բնակիչների եկամուտների մեջ բավականին մեծ տեսակարար կշիռ է կազմում

վարձու աշխատանքից ստացվող դրամական եկամուտը, ուստի անհրաժեշտություն է առաջանում ուսումնասիրել միջին ամսական անվանական և նվազագույն աշխատավարձերի մակարդակների փոփոխությունը 2017-2020 թվականներին՝ համեմատական եզրեր տանելով սպառողական գների ինդեքսի փոփոխության հետ միևնույն ժամանակահատվածում:




Գծապատկեր 1. Միջին անվանական աշխատավարձի, նվազագույն աշխատավարձի և սպառողական գների ինդեքսի միջև կապը 2017-2020 թվականներին ՀՀ-ում[4]

Գծապատկեր 1-ի տվյալները ցույց են տալիս, որ 2017-2020 թթ. շարունակաբար նկատվում է միջին ամսական անվանական աշխատավարձի ցուցանիշների աճ, իսկ նվազագույն աշխատավարձի փոփոխությունը կատարվում է կտրուկ՝ 2020 թվականին 13 000 դրամով: Նկատենք, որ ՍԳԻ-ն ևս միևնույն և կարճաժամկետ հատվածում ունենում է ակնառու փոփոխություններ, որը վկայում է երկրում գնաճի բարձրացման մասին կամ հակառակը: Այս պարագայում առավելագույն չափով գնաճ նկատվում է 2018 թվականին միջին անվանական աշխատավարձի՝ 6723 դրամի ավելացմանն զուգընթաց: Նաև անդրադարձ կատարենք այն հանգամանքին, որ 2020 թվականին կորոնավիրուսի համավարակի տարածման և սեպտեմբերի 27-ին ՀՀ-ում ռազմական դրության պայմաններում երկրում նկատվում է գնաճային միջավայրի ավելացում: Նշվածների և դրամի արժեզրկման հետևանքով ՀՀ-ում ձևավորվում է սպասվածից բարձր գնաճ՝ ՍԳԻ-ն կազմելով 101,2 տոկոս:

Հարկ է հավելել նաև, որ ՀՀ կառավարությունը, հաշվի առնելով սահ-

մանված 68 000 դրամով քաղաքացին ի զորու չէ բավարարել սեփական ամենապարզունակ կարիքները, կազմել է նախագիծ, որ 2023 թվականի հունվարի 1-ից նվազագույն աշխատավարձը դառնալու է 80 000 դրամ[7]: Ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ 2020 թվականին միջին ամսական անվանական աշխատավարձը աճել է 3,9 տոկոսով, այդ թվում՝ պետական հատվածում 5,3 տոկոսով, մասնավորում՝ 3 տոկոսով: Ուստի կարևորվում է առանձին անդրադարձ կատարել նաև նշված ցուցանիշի փոփոխություններին վերջին 2 տարիների ընթացքում:




Գծապատկեր 2. Միջին ամսական անվանական աշխատավարձը ըստ ամիսների ՀՀ-ում, 2019-2020թվականներին[4]

Գծապատկեր 2-ից երևում է, որ միջին ամսական անվանական աշխատավարձը հասել է իր առավելագույն սահմանին և՛ 2019 թվականի, և՛ 2020 թվականի դեկտեմբեր ամսին և դեկտեմբեր ամսին 2020 թվականի միջին ամսական անվանական աշխատավարձը 2019 թվականի նկատմամբ ունեցել է 1,68 տոկոսային կետով աճ:

2019 թվականին միջին ամսական անվանական աշխատավարձը իր փոքրագույն մակարդակը ունեցել է փետրվար ամսին (172 124 ՀՀ դրամ),

իսկ 2020 թվականին՝ հոկտեմբեր ամսին(181 734 ՀՀ դրամ):

Գծապատկեր 3-ի ամփոփ ցուցանիշներն ուսումնասիրելիս ակնհայտ երևում է, որ միջին ամսական աշխատավարձը 2020 թվականին 2019 թվականի համեմատ ունի աճի միտում, մասնավորապես՝ Գեղարքունիքի (106.5%), Շիրակի (106.3%), Կոտայքի (106.3%) մարզերում: Նկատենք, որ և՛ 2019, և՛ 2020 թվականներին միջին ամսական անվանական աշխատավարձի մակարդակի առավելագույն ցուցանիշը գրանցվել է Սյունիքի մարզում, իսկ նվազագույնը՝ Շիրակի մարզում, որը 2020 թվականին նախորդ տարվա համեմատությամբ ունեցել է 5,2 տոկոսային նիշով աճ Սյունիքի մարզի ցուցանիշի համեմատ:




Գծապատկեր 3. Միջին ամսական անվանական աշխատավարձն ըստ ՀՀ մարզերի, Երևան քաղաքի, 2019-2020 թթ.[4]

Այս ոլորտում աշխատավարձի փոփոխությունը հանգեցնում է նաև զբաղվածության մակարդակի փոփոխության: 2019 թվականին գործազրկության մակարդակը կազմել է 18.3 տոկոս, 2020 թվականին՝ 18.2 տոկոս: Ակնհայտ է, որ համավարակի պայմաններում երկրում զբաղվածության մակարդակը նվազելու է, ըստ որի 2019 թվականին հասել է 48.9 տոկոսի, իսկ 2020 թվականին՝ 47.8 տոկոս:

Ի հավելումն վերոգրյալի, անհրաժեշտություն է առաջանում առանձնակի ուշադրություն դարձնել այն հանգամանքին, որ 2022 թվականի

առաջին կիսամյակին արձանագրվել է մարզերում ավելի մեծ ակտիվություն, որը պայմանավորված է երկու մասով. Երևանում գրասենյակ ունեցող կազմակերպությունները իրենց մասնաճյուղերը ընդլայնում են մարզերում և ընդհանուր հետհամավարակային բումը հասել է մարզային քաղաքներին:

Գծապատկեր 4-ի տվյալներից նկատելի է դառնում, որ ամենաբարձր միջին աշխատավարձը ՀՀ-ում գրանցվել է տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտում՝ 646 563 ՀՀ դրամ, իսկ ամենացածրը՝ հանրային սննդի ոլորտում՝ 91 298 ՀՀ դրամ:



Գծապատկեր 4. Միջին ամսական անվանական աշխատավարձն ըստ տնտեսության ինստիտուցիոնալ հատվածների և տնտեսական գործունեության տեսակների, 2020թ. հունվար-դեկտեմբեր ամիսներին ՀՀ-ում[4]

Գաղտնիք չէ, որ ինչպես աշխարհի մի շարք երկրների, այնպես էլ Հայաստանի աշխատանքի շուկային բնորոշ են մի շարք խնդիրներ, որոնք հիմնականում խորացել են տնտեսական ճգնաժամի հետևանքով:

Նկատենք, որ Հայաստանի աշխատանքի շուկան դեռևս գտնվում է կայացման փուլում, և հետևաբար պետք է հաշվի առնվեն մի շարք գործոններ, ինչպիսիք են հանդիսանում երկրի տնտեսական առանձնահատկությունները, ազգային մենտալիտետը, աշխատավարձի մեծությունը, բնակչության նախասիրությունները և այլն:

Այսպիսով աշխատանքի շուկայի զարգացմանը նպաստող պետական կարգավորման շրջանակներում առաջարկվում է իրականացնել համակարգված միջոցառումներ։

Առաջնային խնդիրներից կարելի է առանձնացնել աշխատանքի շուկայում աշխատուժի ցածր ակտիվության մակարդակը և բարձր որակավորում ունեցող աշխատուժի միգրացիան։ Վերջինս բնութագարվում է և՛ դրական,և՛ բացասական հնարավոր տնտեսական հետևանքներով։ Հայաստանում տնտեսական ակտիվության աճով պայմանավորված միգրանտների վերադարձի պարագայում հնարավոր է գործազրկության և աշխատուժի մասնակցության ցուցանիշների ճշգրտում՝ դրանց փոքրինչ աճի ուղղությամբ։ Այսինքն, ենթադրվում է, որ նրանք կվերադառնան տնտեսական խթաններից ելնելով՝ Հայաստանում աշխատանք փնտրելու նպատակով կամ արդեն իսկ աշխատանք գտած լինելու պարագայում։ Մինչդեռ, եթե միգրանտների վերադարձը պայմանավորված լինի ընդունող երկրում բացասական շոկով, ապա նրանց փաստացի կարգավիճակի փոփոխություն կարող է տեղի չունենալ [1]։

Ուշադրություն դարձնենք նաև այն հանգամանքին, որ էական նշանակություն ունի միգրանտներին ընդունող երկրի քաղաքականությունը։ Դիտարկումները ցույց են տալիս, որ Հայաստանի համար առավել կարևոր նշանակություն է ունենալու Ռուսաստանի Դաշնության՝ որպես հիմնական ընդունողի, միգրացիոն քաղաքականությունը առաջիկա տարիների ընթացքում, որովհետև արտագնա աշխատանքի մեկնածները ներգրավված են շինարարության ոլորտում։ Նրանք իրենց գիտելիքներով ու փորձով կարող են հետագայում կիսվել իրենց հայրենակիցների հետ և ներդնել, ընդհանրապես, արտասահմանյան փորձը մեր երկրում։ Նաև որակավորված կադրերի արտասահման մեկնելը հանգեցնում է երկրում բյուջետային մոտքերի և վճարունակ բնակչության թվի նվազմանը, կատարված և չփոխհատուցվող այն ծախսերը, որոնք իրականացվել են որակավորված կադրեր պատրաստելու նպատակով։ Ի վերջո, հարկ է հավելել, որ ուղեղների արտահոսքը այլ երկներ, զրկում է երկրին այն նորարական գաղափարներից, որը կարող էր կիրառվել հենց մեր երկրում։

Ուստի, զարգացող երկրները, այդ թվում նաև Հայաստանը, պետք է իրականացնեն այնպիսի քաղաքականություն, որ խոչընդոտեն ուղեղների արտահոսքին, ինչպես նաև այնպիսի գրավիչ պայմաններ ստեղծվեն, որ խթանեն այլ երկրների ուղեղների ներհոսքին։ Վերջինիս վառ օրինակն է բժշկության ոլորտը Հայաստանում։ Միջազգային փորձագի-


տական գնահատումներով՝ յուրաքանչյուր բարձր որակավորում ունեցող կադր կարող է գործունեության երկրում առաջացնել բարձր եկամուտներ՝ ընդհում մինչև 1 մլն դոլար՝ ներառյալ ածանցյալ օգուտները [2;424]։

Կարևորենք այն փաստը, որ պետք է բարելավել Հայաստանի աշխատանքային ռեսուրսների որակը՝ ներգրավելով աշխատակիցներին գիտահետազոտական աշխատանքներում, իրականացնելով մասնագիտական վերապատրաստման ծրագրեր և ստեղծելով որակի ապահովման նոր մեխանիզմներ։

Աշխատանքի շուկայում մյուս ակնառու բնութագրիչ են հանդիսանում առաջարկի և պահանջարկի միջև անհամապատասխանությունը, ինչպես նաև կրթական համակարգի ու աշխատանքի շուկայի միջև թույլ կապը։

Այս մոտեցումների շրջանակում անդրադարձ կատարենք նաև ներկայիս՝ ռուս-ուկրանիական պատերազմի ազդեցությանը ՀՀ աշխատաշուկայի զարգացման վրա։ Վերջինս նպաստել է հատկապես ՏՏ ոլորտի մասնագետների Հայաստան գալուն։ Տեղափոխվողների մեծ մասը բավականին մեծ փորձ ունի, որը նպաստում է երկրում տվյալ ոլորտի տնտեսական մեծ աճի, որովհետև մենք ունենք մասնագետների քանակի խնդիր։ Հավելենք նաև, որ ներկայիս իրավիճակում բացի անհատներից Հայաստան են տեղափոխվում կազմակերպություններ նույնպես, որը նոր հնարավորություններ է ընձեռում սկսնակների համար՝ փորձառուներից համապատասխան գիտելիքներ ստանալով։

Հայաստանի Հանրապետությունը կազմել է 2014-2025թթ. հեռանկարային զարգացման ծրագիր, որում մատնանշում է, որ աշխատանքի շուկայի կարգավորման կարևոր տարր պետք է լինի նվազագույն աշխատավարձի քաղաքականությունը, նախատեսվում է նվազագույն աշխատավարձի աճ՝ բացառելով բացասական հետևանքների առաջացումը։ Չնայած նվազագույն աշխատավարձը աղքատության կրճատման հիմնական գործիք չէ, սակայն դրա գործառույթներից մեկը պետք է լինի զբաղված և միևնույն ժամանակ աղքատության գծից ներքև գտնվող քաղաքացիների առկայության բացառումը, որտեղ ըստ ՀՀ ԱՎԿ տվյալների՝ 2012թ. 15-75 տարեկան զբաղվածների 26,1 տոկոսը գտնվում է աղքատության գծից ներքև։ Ընդ որում, երկարաժամկետ կտրվածքում դա պետք է տարածվի ոչ միայն զբաղված անձի վրա, այլև երաշխավորի նվազագույն բարեկեցություն մեկ զբաղված անդամ ունեցող միջին ընտանիքի համար, որտեղ կարևորվում է ընտանիքում 4 անձ՝ ներառյալ 2 երեխա, սակայն զբաղված է ընտանիքի 1 անդամը։



Գծանկար 5. Նվազագույն աշխատավարձի հարաբերակցությունը աղքատության վերին շեմի և միջին աշխատավարձի նկատմամբ (2012-2025 թթ.)[1; 80]

Այսպես, 2013-2014թթ. նախատեսված նվազագույն աշխատավարձի աճի արդյունքում նվազագույն – միջին աշխատավարձ հարաբերակցությունը 2014թ. սկսած կազմելու է շուրջ 40 տոկոս՝ մոտենալով Եվրոպական սոցիալական վերանայված Խարտիայով սահմանված մեծությանը: Նվազագույն աշխատավարձի սահմանափակ աճը կարող է նաև դրական ազդեցություն ունենալ աշխատանքային ռեսուրսների ակտիվացման գործում: Ցանկացած պարագայում նվազագույն աշխատավարձի աճը պետք է համահունչ լինի միջին աշխատավարձի շարժընթացինև հնարավորինս բացառի աշխատուժի պահանջարկի և առաջարկի միջև շուկայական հավասարակշռության խախտումները[1, 80]:

Հավելենք նաև, որ վերոհիշյալ ծրագրում հրատապ խնդիր է դարձել աշխատանքի շուկայի տեղեկատվական համակարգի ապահովումը և մշտադիտարկման ծրագրի բարելավումը, որպեսզի զբաղվածության քաղաքականությունը ավելի արդյունավետ իրագործվի և ապահովվի աշխատատեղ-աշխատողի միջև ամուր կապը: Նշված ամուր կապի համար անհրաժեշտություն է առաջանում նաև ընդունել այպիսի նորմեր, որոնք կկարգավորեն աշխատողի, գործատուի և պետական մարմինների փոխհարաբերությունները:

Հարկ է ընդգծել, որ Հայաստանի Հանրապետության կազմած 2020-2022թթ. պետական միջնաժամկետ ծրագրում առաջիկա տարիներին տնտեսական քաղաքականության հիմնական նպատակը համարում է

Հայաստանի քաղաքացիների բարեկեցության բարձրացումը՝ տնտեսական կյանքում նրանց մասնակցային հնարավորությունների ավելացման միջոցով, ինչը դրսևորվելու է մրցունակ մասնավոր հատվածում աշխատատեղերի և յուրաքանչյուր մարդու աշխատանքային եկամուտների զգալի ավելացման ձևով: Ակնառու է, որ կարևորություն է տրվում մրցունակությանը, որի հիմքում էլ ընկած է արտադրողականությունը: Ցածր արտադրողականությունը հայաստանյան տնտեսության հիմնական ռիսկն է, ուստի առաջիկա նպատակը երկարաժամկետ հատվածում կյանքի կոչելու համար կախված է մեր այն հնարավորությունից, որ կարողանանք մեկ աշխատողի հաշվով թողարկման մակարդակը բարձրացնենք:

Կառավարությունը մշակել և ներկայացրել է առաջիկա հնգամյա պլանների ծրագիր, որում իր ուրույն տեղն ունի աշխատանքի շուկայի ոլորտը: Կանխատեսվում է՝ նվազագույն ամսական աշխատավարձի չափի բարձրացում, որը կնպաստի՝

- աղքատության կրճատմանը,
- նվազագույն և միջին աշխատավարձերի միջև հարաբերակցության նվազմանը,
- բնակչության կենսամակարդակի բարձրացմանը:

Աշխատանքային օրենսդրության, մասնավորապես.

- սոցիալական գործընկերությանը,
- կոլեկտիվ պայմանագրերին,
- արհմիությունների դերին,
- աշխատանքային հարաբերություններում խտրականության արգելմանը,
- հարկադիր աշխատանքին,
- գործադուլին,
- ամենամյա արձակուրդներին, վերաբերող, ինչպես նաև աշխատանքային հարաբերությունների մի շարք այլ կարգավորումների համապատասխանեցում աշխատանքային հարաբերությունների կարգավորման ոլորտում Հայաստանի Հանրապետության կողմից վավերացված միջազգային պայմանագրերի առանձին դրույթներին [1]:

Կառավարությունը դեռ պետք է վերանայի իր հեռանկարային ծրագրերը՝ կապված աշխատաշուկայի հետ ներկայիս իրավիճակը մեղմելու համար: ՌԴ-ից հացահատիկի ներկրման արգելքը պետք է պարտավորեցնի նաև գյուղական տնտեսություններին եղած վարելահողերը ավելի

արդյունավետ և նպատակային օգտագործելու համար։

Այսպիսով աշխատաշուկայի և աշխատավարձի փոխազդեցության հետևանքով առաջացած խնդիրներին ավելի արդյունավետ լուծում տալու համար նպատակահարմար կլինի ուշադրություն դարձնել հետևյալ հանգամանքներին.

- Առաջնային նպատակ պետք է համարել գիտության, տեխնիկայի սերտ կապը աշխատանքի ոլորտի հետ։ Գիտությունը զարգանում է թռիչքաձև, կյանքը սլացքի պես է ընթանում, ուստի պետք է համահունչ հասցնել այս ոլորտներում երկուստեք կարգավորում միևնույն համակարգում։ Չէ՞ որ որակյալ կրթությունը համարվում է բեղմնավոր աշխատանքի արդյունքի գրավականը։
- Կարևորվում է նաև պետության կողմից իրականացվելիք ներդրումային ծրագրեր երկրի՝ համեմատաբար ցածր եկամուտ ունեցող հատվածներում, որը հանգեցնելու է նոր աշխատատեղերի բացմանը և բնակչության կենսամակարդակի բարձրացմանը։ Նմանավանդ օգտվելով առիթից՝ ռուս-ուկրանիական ռազմական գործողությունների հետևանքով սահմանված արտահանման սահմանափակումներից, երկրում պետք է զարկ տալ տեղական արտադրանքի արտադրության ծավալի ընդլայնմանը՝ միաժամանակ նպաստելով գործազրկության նվազմանը։
- Ինչ վերաբերում է միգրացիային, ապա քայլեր պետք է ձեռնարկվեն, որպեսզի ուղեղները շահագրգռված լինեն մեկնել ոչ թե այլ երկիր, այլ հենց Հայաստան։ Ինչպես նաև մեր երկրից արտագաղթելով նպատակ հետապնդեն, որ օտար երկրի փորձը ձեռք բերելով, նորից վերադառնան իրենց երկիր՝ այն շենացնելու։ Շեշտը պետք է դնենք արտաքին միգրացիայի ցուցանիշների նվազեցմանը։
- Պետք է կարևորել նաև ստվերային տնտեսության վերացումը, ազատ մրցունակության ձգտումը, որն էլ կհանգեցնի աղքատության հիմնախնդրի հաղթահարմանը, ուստի նվազագույն աշխատավարձի բարձրացումն էլ իր հերթին կհանգեցնի աղքատության գծից ներքև գտնվող քաղաքացիների բացառումը, որն էլ կտանի տնտսության բարգավաճմանը։

Արված վերլուծությունների շրջանակներում հարկ է ընդգծել, որ աշխատանքի շուկայի կարգավորման քաղաքականության նպատակն է գործազրկության կրճատման և զբաղվածության բարձր մակարդակի ապահովումը, աշխատանքի շուկայում առաջարկի և պահանջարկի հավասարակշռության ապահովումը։ Եվ որքան էլ քայլեր ձեռնարկվեն

այդ ուղղությամբ, միևնույն է լիարժեք չեն աշխատաշուկայի կարգավորման գործիքների և կառուցակարգերի կիրառման համակարգերը, որոնց մշակումն ու իրականացումը պայմանավորված է մի շարք գործոններով, ինչպիսիք են տնտեսական և սոցիալական քաղաքականությունը, ազգային առանձնահատկությունները և այլն։

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Հայաստանի Հանրապետության 2014-2025թթ. հեռանկարային զարգացման ռազմավարական ծրագիր, ընդունված է կառավարության կողմից,2014 թվականի մարտին։
2. Եղիգարյան Ք., Բարձր որակավորում ունեցող աշխատուժի միգրացիայի տնտեսական հետևանքները միջազգային տնտեսության դոնոր և ռեցիպիենտ երկրների համար, ՀՊՏՀ 28-րդ գիտաժողովի նյութեր,բաժանմունք 3-րդ, Երևան, 2021, 156 էջ։
3. ՀՀ-ում նվազագույն աշխատավարձի մասին տեղեկատվություն, URL: www.arlis.am (Հասանելի է 20.12.2021):
4. Աշխատավարձի ցուցանիշ, գործազրկության մակարդակ, URL: www.armstat.am (Հասանելի է 20.12.2021):
5. Աշխատաշուկայում պետական քաղաքականություն, URL: www.gov.am (Հասանելի է 20.12.2021):
6. Աշխատավարձի ցուցանիշներ ըստ միջազգային զեկույցների, URL: www.numbeo.com (Հասանելի է 20.12.2021):
7. ՀՀ Ազգային ժողովի պաշտոնական կայք, URL: www.parliament.am (Հասանելի է 19.03.2022):

Анализ рынка труда и тенденции развития в Республике Армения

Оганнисян Арега
ГГУ, Финансы по отраслям, 2-й курс

Резюме

Ключевые слова: *рынок труда, индекс заработной платы, государственная политика, трудовая миграция, профсоюз*

Рынок труда и занятость населения занимает ключевое место в системе современных рыночных экономических отношений.

Целью политики регулирования рынка труда является снижение уровня безработицы, обеспечение высокого уровня занятости, обеспечение баланса спроса и предложения на рынке труда.

В статье рассматривается современное состояние рынка труда и меры регулирования.

Labor Market Analysis and Development Trends in the Republic of Armenia

Hovhannisyan Arega
GSU, Department of Finance, 2nd course

Summery

Key words: *labor market, wage index, state policy, labor migration, trade union*

Labor market and employment of the population occupies a key place in the system of modern market economic relations.

The goal of the labor market regulation policy is to reduce unemployment, ensure a high level of employment, and ensure a balance of supply and demand in the labor market.

The article discusses the current state of the labor market and regulatory measures.

Պարտադիր կենսաթոշակային ֆոնդերի ակտիվների կառավարման հիմնախնդիրները ՀՀ-ում

Մկրտչյան Տաթև
ՀՊՏՀ, Ֆինանսներ, մագիստրատուրա, 1-ին կուրս
*Գիտական ղեկավար՝ տ. գ. թ., **Ս. Իսրայելյան***

Հանգուցային բառեր. *ֆինանսական ակտիվներ, ներդրումներ, պարտատոմսեր, բաժնետոմսեր, ներդրումային ֆոնդի փայեր, արժույթ, զուտ ակտիվների արժեք*

ՀՀ-ում կուտակային կենսաթոշակային համակարգի զարգացման գործում էական նշանակություն ունի ճիշտ ներդրումային քաղաքականության որդեգրումը, ֆինանսական եկամտաբեր գործիքների ընտրությունը՝ հաշվի առնելով կենսաթոշակային ամենակարևոր նախապայմանը՝ ապահովությունը, հաստատել սիմբիոտիկ համագործակցություն իրական հատվածի հետ՝ խթանելով վերջինիս զարգացումը, որն էլ, իր հերթին, կապահովի եկամտաբերություն կենսաթոշակային ֆոնդերի համար: Կենսաթոշակային ֆոնդի ակտիվները ձևավորվում են պարտադիր (պարտադիր մասնակից են 1974թ.-ի հունվարի 1-ին և դրանից հետո ծնվածները) կամ կամավոր (կամավոր կենսաթոշակային ֆոնդ) կուտակային վճարների և դրանց ներդրման հաշվին:

Թեմայի արդիականությունը: ՀՀ-ում կուտակային կենսաթոշակային համակարգի զարգացման գործում էական նշանակություն ունի ճիշտ ներդրումային քաղաքականության որդեգրումը, ֆինանսական եկամտաբեր գործիքների ընտրությունը՝ հաշվի առնելով կենսաթոշակային ամենակարևոր նախապայմանը՝ ապահովությունը, հաստատել սիմբիոտիկ համագործակցություն իրական հատվածի հետ՝ խթանելով վերջինիս զարգացումը, որն էլ, իր հերթին, կապահովի եկամտաբերություն կենսաթոշակային ֆոնդերի համար: Կենսաթոշակային ֆոնդի ակտիվները ձևավորվում են պարտադիր (պարտադիր մասնակից են 1974 թ.-ի հունվարի 1-ին և դրանից հետո ծնվածները) կամ կամավոր (կամավոր կենսաթոշակային ֆոնդ) կուտակային վճարների և դրանց ներդրման հաշվին: Կենսաթոշակաին ֆոնդերի կառավարման, ինչպես նաև դրանց ներդրումային քաղաքականության հետ կապված առկա են բազմաթիվ հրատապ և լուծում պահանջող հիմնախնդիրներ, որով էլ պայմանավորված է ավարտական աշխատանքի արդիականությունը:

Ուսումնասիրության օբյեկտը և առարկան: Ավարտական աշխատանքի ուսումնասիրության օբյեկտը ՀՀ կենսաթոշակային ֆոնդերն են, առարկան՝ կենսաթոշակային ֆոնդերի ներդրումային քաղաքականությունը և ակտիվների կառավարման հիմնախնդիրները ՀՀ-ում:

Ուսումնասիրության նպատակը և խնդիրները: Աշխատանքի նպատակն է ՀՀ-ում կենսաթոշակային ֆոնդերի ակտիվների կառավարման վերլուծությունը, ներդրումային քաղաքականության հետ կապված հիմնախնդիրների վերհանումը և բարելավման ուղիները: Այդ նպատակի իրականացման համար աշխատանքում առաջադրվել են հետևյալ խնդիրները.

- ուսումնասիրել և վերլուծել կենսաթոշակային ֆոնդերի ակտիվների կառավարման առանձնահատկությունները, ներդրումային քաղաքականության ռազմավարական մոտեցումները,
- իրականացնել կենսաթոշակային ֆոնդերի կառավարման ՀՀ փորձի վերլուծություն,
- վերհանել բոլոր առանցքային նշանակություն ունեցող խնդիրները, որոնք խոչընդոտում են կենսաթոշակային ֆոնդերի արդյունավետ ներդրումային քաղաքականության իրականացմանը,

Ուսումնասիրության տեսական, մեթոդաբանական և տեղեկատվական հիմքերը:

Ուսումնասիրության կատարման համար տեսամեթոդական հիմք են հանդիսացել կենսաթոշակային ֆոնդերի գործունեության հետ կապված գիտական աշխատանքներ, միջազգային գիտահետազոտական կենտրոնների հրապարակումներ, մասնավորապես “Amundi Asset Management Research Center”-ի, ՏՀՋԿ-ի, Համաշխարհային բանկի կողմից հրապարակված վիճակագրական տվյալներ, հաշվետվություններ:


Հայաստանի Հանրապետության կառավարությունը 2010 թ. ձեռնամուխ եղավ ՀՀ-ում կուտակային կենսաթոշակային համակարգի ներդրմանը՝ ապագա կենսաթոշակառուների բարեկեցիկ ծերությունն ապահովելու համար:

Շահառուների բարեկեցությունը պայմանավորված է ոչ միայն իրենց կողմից կատարվող պարբերական վճարներով, այլ նաև կառավարիչների՝ ակտիվների կառավարման արդյունավետությամբ, որի արդյունքում էլ ապահովվում է համապատասխան եկամտաբերություն՝ հաշվի առնելով նաև ֆոնդի ռիսկայնությունը:

ՀՀ-ում գործում են պարտադիր կենսաթոշակային ֆոնդի երկու կառավարիչ՝ «Ամունդի-Ակբա Ասեթ Մենեջմենթ» ՓԲԸ-ը և «Յե-Կվադրատ

Ամպեգա Ասեթ Մենեջմենթ Արմենիա» ՍՊԸ-ը, և մեկ կամավոր կենսաթոշակային ֆոնդի կառավարիչ՝ «Կապիտալ Ասեթ Մենեջմենթ» ՓԲԸ-ը[1]:

Ինչպես երևում է գծապատկեր 1-ից, վերջին հինգ տարիների ընթացքում միջոցների մոտ 96-98 %-ը ներդրվել է պահպանողական ֆոնդերում[2]:



Գծապատկեր 1. Պարտադիր կենսաթոշակային ֆոնդերի ակտիվների մեծությունը 2016թ. դեկտեմբերից մինչև 2020 թ. դեկտեմբեր (հազ. դրամ)[3]

Ուսումնասիրելով «Փայերի վերջին 5 տարվա քանակի փոփոխության հաշվետվությունը[4]»՝ պարզ է դառնում, որ ֆոնդերի 98,6%-ը ընտրվել է ծրագրային մոդուլով, այսինքն մասնակիցները հիմնականում ֆոնդի ընտրություն չեն կատարում, և համակարգը ավտոմատ է ընտրում ֆոնդը:

Դիտարկենք պարտադիր կենսաթոշակային ֆոնդերի կողմից կառավարվող ակտիվների կառուցվածքի փոփոխության դինամիկան ըստ տարիների՝ 2016-2020թթ. համար: Ֆոնդերի ընդհանուր ակիվների կառուցվածքում մեծ տեսակարար կշիռ են կազմում ավադները, պարտա-


[1] https://www.cba.am

[2] https://www.cba.am

[3] Գծապատկերը կազմվել է հեղինակի կողմից՝ համաձայն ՀՀ ԿԲ հարապարակած վիճակագրություն

[4] https://www.cba.am

տոմսերը, կոլեկտիվ ներդրումային գործիքները[5]։




Գծապատկեր 2. «Ցե-Կվադրատ Ամպեգա Ասեթ Մենեջմենթ Արմենիա» ՍՊԸ-ի կողմից կառավարվող ակտիվների կառուցվածքի դինամիկան՝ 2016-2020թթ.[6]

Վերլուծելով պարտադիր կենսաթոշակային ֆոնդերի ներդրման ուղղությունները՝ տեսնում ենք, որ կառավարիչներից «Ցե-Կվադրատ Ամպեգա Ասեթ Մենեջմենթ Արմենիա» ՍՊԸ-ի կողմից կառավարվող «Հավասարակշռված» ֆոնդի, ակտիվների գերակշիռ մասը՝ 63,35% 2016թ.-ին ներդրված էր կոլեկտիվ ներդրումային գործիքներում, պարտատոմսերում՝ 31,67% և ավանդներում՝ 4,80%։

[5] https://www.c-quadrat-ampega.am

[6] Գծապատկերը կազմվել է հեղինակի կողմից՝ https://www.c-quadrat-ampega.am/am/funds-reporting տվյալների հիման վրա



Գծապատկեր 3. «Ամունդի-ԱԿԲԱ Ասեթ Մենեջմենթ» ՓԲԸ-ի կողմից կառավարվող ակտիվների կառուցվածքի դինամիկան՝ 2016-2020թթ.[7]

Ի հակադրության սրա, «Ամունդի-ԱԿԲԱ Ասեթ Մենեջմենթ» ՓԲԸ-ը նույն ժամանակաշրջանում ավելի զգուշավոր էր ներդրման գործիքների ընտրության հարցում, որի արդյունքում միջոցների 47,78%-ը ներդրել էր պարտատոմսերում, 25,39%-ը՝ կոլեկտիվ ներդրումային գործիքներում, իսկ ավանդներում՝ ընդամենը 23,35%[8]:

«Ցե-Կվադրատ Ամպեգա Ասեթ Մենեջմենթ Արմենիա» ՍՊԸ-ը հետագա տարիներին նվազեցրել է կոլեկտիվ ներդրումային գործիքներում միջոցները՝ ընդլայնելով պարտատոմսերի մասնաբաժինը և տեղ հատկացնելով նաև ավանդներին, որի արդյունքում 2020թ.-ին պարտատոմսերի ընդհանուր կշիռը պորտֆելում կազմել էր 39,34%, կոլեկտիվ ներդրումային գործիքներինը՝ 34,86%, իսկ ավանդներինը՝ էականորեն ավելացել և կազմել 25,74%:

[7] Գծապատկերը կազմվել է հեղինակի կողմից՝ https://www.amundi-acba.am տվյալների հիման վրա

[8] https://www.amundi-acba.am

«Ամունդի-ԱԿԲԱ Ասեթ Մենեջմենթ» ՓԲԸ-ի դեպքում գործիքների կշիռների էական փոփոխություն չի նկատվել, և 2020թ. դրությամբ ակտիվների մասնաբաժինը պորտֆելում կազմել է պարտատոմսերի դեպքում՝ 34,38%, կոլեկտիվ ներդրումային գործիքներում կշիռը ավելացել է՝ դառնալով 34,38%, իսկ ավանդներում՝ 25,88%:

«Պահպանողական» ֆոնդերի դեպքում՝ 2 կառավարիչն էլ 2016-2020թթ գրեթե միևնույն համամասնությամբ՝ միջինում 29%, ներդրել են ավանդներում[9], իսկ կոլեկտիվ ներդրումային գործիքներում՝ 28,77%[10], պարտատոմսերին ավելի շատ նախապատվություն է տվել «Ցե-Կվադրատ Ամպեգա Ասեթ Մենեջմենթ Արմենիա» ՍՊԸ-ը՝ 43,61%, իսկ մյուս կառավարիչը՝ 37,56%:

«Կայուն եկամտային» ֆոնդի պարագայում՝ դիտարկվող 5 տարիների ընթացքում «Ցե-Կվադրատ Ամպեգա Ասեթ Մենեջմենթ Արմենիա» ՍՊԸ-ի կողմից ներդրումները պարտատոմսերում կազմել են 36,54%, 33,78 %-ը՝ ավանդներում, իսկ 28,88-ը՝ կոլեկտիվ ներդրումային ֆոնդի փայերում[11]: Ի տարբերություն սրա «Ամունդի-ԱԿԲԱ Ասեթ Մենեջմենթ» ՓԲԸ-ը մեծ պորտֆելի մեջ մեծ տեսակարար կշիռ է հատկացրել պարտատոմսերին՝ 53,12 %,ավանդներին՝ 25,07%, իսկ կոլեկիվ ներդրումային ֆոնդի փայերի առումով կրկին ավելի զգուշավոր է գտնվել, և հատկացումները կազմել են 17,76%[12]:

Կատարված հետազոտությունից կարելի է փաստել, որ «Ցե-Կվադրատ Ամպեգա Ասեթ Մենեջմենթ Արմենիա» ՍՊԸ-ը կիրառում է ակտիվ ներդրումային ռազմավարություն՝ բավականին մեծ կշիռ հատկացնելով ներդրումային ֆոնդի փայերին: Իսկ «Ամունդի-ԱԿԲԱ Ասեթ Մենեջմենթ» ՓԲԸ-ը նախընտրությունը տալիս է պասիվ կառավարմանը՝ նախընտրելով ավանդներում ներդրումները, որոնք համեմատաբր քիչ ռիսկային են և ապահովում են բարձր եկամտաբերություն:

Կայուն եկամտային ֆոնդի ընդհանուր ակտիվները 2020թ. ամփոփ տվյալներով կազմել են 2,973,622 հազ. դրամ, իսկ պարտավորությունները՝ 2,665 հազ. դրամ: Զուտ ակտիվների արժեքը (NAV) կազմում է 2,970,957 հազ. դրամ:

2016 թ. դեկտեմբերից մինչև 2020 թ. ֆոնդերի զուտ ակտիվների

[9] https://www.amundi-acba.am


[10] https://www.c-quadrat-ampega.am

[11] https://www.c-quadrat-ampega.am

[12] https://www.amundi-acba.am

արժեքն աճել է մոտ 9 անգամ, ինչը պայմանավորված է կենսաթոշակային ֆոնդերի մասնակիցների կատարած վճարումների կուտակման ու պարբերաբար մեծացման, ինչպես նաև ներդրված միջոցների արժեքի աճով[13]:

Այժմ դիտարկենք ՀՀ պարտադիր կենսաթոշակային ֆոնդերի ակտիվների բաշխվածությունն ըստ երկրների 2016-2020թթ. (տե՛ս գծապատկեր 4)[14]:



Գծապատկեր 4. Կենսաթոշակային ֆոնդերի ակտիվները՝ ըստ աշխարհագրական բաշխվածության 2016-2020թթ. [15]

Ընդհանուր առմամբ ֆոնդերի ակտիվների գլոբալ աշխարհագրական բաշխվածությամբ առաջին տեղում ՀՀ-ն է՝ կազմելով ընդհանուր ակտիվների 70%-ը, երկրորդում՝ ԱՄՆ-ը՝ «Ամունդի-ԱԿԲԱ Ասեթ Մենեջմենթ» ՓԲԸ-ի ֆոնդերի դեպքում կազմելով 16,33%, իսկ «Յե-Կվադրատ Ամպեգա Ասեթ Մենեջմենթ Արմենիա»ՍՊԸ-ի դեպքում՝ 11.8%, իսկ մնա-


[13] https://databank.cba.am/

[14] Գծապատկերը կազմվել է հեղինակի կողմից՝ https://www.c-quadrat-ampega.am/am/, https://www.amundi-acba.am՝ հաշվետվությունների հիման վրա

[15] Գծապատկերը կազմվել է հեղինակի կողմից՝ https://www.c-quadrat-ampega.am/am, https://www.amundi-acba.am՝ հաշվետվությունների հիման վրա

ցած ակտիվները հիմնականում ներդրվում են ՏՀՋԿ, ԵՄ անդամ հանդիսացող երկրներում:

Ինչ վերաբերում է արժութային կառուցվածքին, ապա բոլոր 6 ֆոնդերի դեպքում էլ ներդրումների գերակշիռ մասը իրականացվել է ՀՀ դրամով:



Գծապատկեր 5. Պարտադիր կենսաթոշակային ֆոնդերի արժութային կառուցվածքը 2016-2020թթ.[16]

Ինչ վերաբերում է ԱՄՆ դոլարով և Եվրոյով ներդրումներին, ապա «Ցե-Կվադրատ Ամպեգա Ասեթ Մենեջմենթ Արմենիա» ՍՊԸ-ի կողմից կառավարվող ֆոնդերում ներառված ակտիվներն իրենց կշռով զիջում են «Ամունդի-ԱԿԲԱ Ասեթ Մենեջմենթ» ՓԲԸ-ի նշված արժույթներով ֆոնդերին, սակայն պետք է փաստենք, որ «Ցե-Կվադրատ Ամպեգա Ասեթ Մենեջմենթ Արմենիա» ՍՊԸ-ի պորտֆելն արժութային դիվերսիֆիկացիայի առումով ավելի հարուստ է:


Բոլոր ֆոնդերի դեպքում բաժնային գործիքներում կատարված ներ-

[16] Գծապատկերը կազմվել է հեղինակի կողմից՝ https://www.c-quadrat-ampega.am/am, https://www.amundi-acba.am՝ հաշվետվությունների հիման վրա

դրումները հիմնականում եվրոպական երկրների ներդրումային ֆոնդերի փայեր են: Դա պայմանավորված է նրանով, որ ՀՀ բաժնետոմսերի շուկան սահմանափակ է, բաժնետիրական ընկերությունների մեծամասնությունը փակ է, և ինստիտուցիոնալ ներդրողների համար բացակայում են գրավիչ բաժնային գործիքները, ֆոնդերին «բարձր կոնցենտրացիայով պորտֆել»-ներից խույս տալու համար մնում է միայն ներդրումներ կատարել արտասահմանյան շուկաներում (ՏՀԶԿ, ԵՄ):

«Յե-Կվադրատ Ամպեգա Ասեթ Մենեջմենթ Արմենիա» ՍՊԸ-ի կողմից միջոցների 50,85%-ը ներդրվել է Իռլանդիայի, իսկ 23,82%-ը՝ Լյուքսեմբուրգի դոլարային ֆոնդերում:

«Ամունդի-ԱԿԲԱ Ասեթ Մենեջմենթ» ՓԲԸ-ի դեպքում միջոցների 60,33%-ը ուղղվել է ԱՄՆ դոլարային ֆոնդեր, իսկ 17,64%-ը և 22,03%-ը համապատասխանաբար Լյուքսեմբուրգի դոլարային և Եվրոյով ֆոնդեր:




Գծապատկեր 6. Օտարերկրյա ֆոնդերի փայերում ներդրումները՝ 2020 թ.-ին[17]

[17] Գծապատկերը կազմված է հեղինակի կողմից՝ պարտադիր կենսաթոշակային ֆոնդերի 2020թ. հաշվետվությունների հիման վրա

Ֆոնդերի փայերի զուտ ակտիվների արժեքները 2 ֆոնդի կառավարիչների մոտ էլ, ըստ էության, գրանցել են աճ: Բոլոր 6 ֆոնդերի մոտ փայերի զուտ ակտիվների արժեքների նվազում է նկատվել 2014թ.-ի վերջին՝ պայմանավորված շուկայական եկամտաբերությունների և արտարժույթի կուրսի աճով, որն էլ հանդիսացել է ակտիվների արժեզրկման պատճառ:

Երկու ֆոնդերի դեպքում էլ 17/03/2020թ. դրությամբ գրանցվել է զուտ ակտիվների արժեքի անկում՝ պայմանավորված COVID-19 համաճարակով, սակայն անկումը շատ կարճ ժամանակահատվածում վերականգնվել է, քանի որ ֆոնդերի ակտիվների մեծ մասը, ինչպես նշվել է, ներդրվել է պետական պարտատոմսերում. վերջինիս գների անկմանը զուգահեռ, տեղի ունեցավ եկամտաբերության աճ:


Նույն թվականին երկրորդ՝ համեմատաբար ավելի քիչ անկումը, պայմանավորված է 44-օրյա պատերազմի ընթացքում պարտատոմսերի եկամտաբերության նվազմամբ, սակայն դա նույնպես շատ արագ վերականգնվեց:



Գծապատկեր 7. Ֆոնդերի զուտ ակտիվների արժեքների դինամիկան, 2016-2020 թթ.[18]

[18] https://cda.am/am/37/information-centre

Այժմ դիտարկենք պարտադիր կենսաթոշակային ֆոնդերի եկամտաբերությունը ստեղծման պահից մինչև 2020թ. վերջ։



Գծապատկեր 8. Պարտադիր կենսաթոշակային ֆոնդերի եկամտաբերությունը 2014-2020 թթ.[19]

Գծապատկեր 8-ում արտացոլված է եկամտաբերության տատանումները, ինչպես նաև մինչև 1 տարի ժամկետայնությամբ ավանդի, 1 և 20 տարեկան պարտատոմսերի եկամտաբերությունները 2014-2020թթ. ընթացքում։ Ֆոնդերի նոր ձևավորման շրջանում ավանդների, պարտատոմսերի եկամտաբերությունը գերազանցել է ֆոնդերի եկամտաբերությանը, սակայն արդեն հետագա տարիներին փայերի եկամտաբերությունը կարողացել է հաղթահարել առանձին ֆինանսական գործիքների եկամտաբերությանը[20]։

Գծապատկեր 8-ից երևում է եկամտաբերության տատանումները տարբեր կառավարիչների ու տարբեր ֆոնդերի պարագայում, ինչը պայմանավորված է կառավարիչների կողմից վարվող ներդրումային քաղաքականության առանձնահատկություններով և ֆոնդերում առկա ակտիվների կառուցվածքով։

Պարտադիր կենսաթոշակային ֆոնդերի ակտիվների և եկամտաբերության վերլուծությունից պարզ է դառնում, որ ֆոնդերի միջոցների գերակշիռ մասը ներդրվում է դրամական միջոցներում և ավանդներում,

[19] Գծապատկերը կազմվել է հեղինակի կողմից https://cda.am/am/77/ partners, ավանդների, պարտատոմսերի եկամտաբերության տվյալների հիման վրա

[20] https://avand.am/hy/business/dram

պետական, կորպորատիվ պարտատոմսերում: Կորպորատիվ պարտատոմսեր թողարկողների գերակշիռ մաս են կազմում ՀՀ բանկերը, իսկ բաժնային գործիքների դեպքում ֆոնդերի ներդրումները հոսում են արտասահմանյան շուկաներ:

ՀՀ Կենսաթոշակային ֆոնդերի ուսումնասիրության և վերլուծության արդյունքում կատարել ենք հետևյալ եզրահանգումները.

1. ՀՀ-ում գործում են 2 պարտադիր և 1 կամավոր կուտակային կենսաթոշակային ֆոնդի կառավարիչներ, ինչպես նաև 6 պարտադիր և 2 կամավոր կենսաթոշակային ֆոնդեր: Ֆոնդերը, գործիքակազմի ընտրության լայն հնարավորություն չունենալով, միջոցները ներդնում են ավանդներում, պարտատոմսերում, միջազգային ներդրումային ֆոնդերի փայերում՝ ապահովելով միջինում 8,7-10,2% եկամտաբերություն:

2. ՀՀ պարտադիր կենսաթոշակային ֆոնդի մասնակիցները միջոցների կառավարում են (ակտիվորեն ֆոնդ ընտրել, ֆոնդը փոխել, և այլն) պասիվ, և մասնակիցների 98,6%-ի խնայողությունների ֆոնդը ընտրվել է ավտոմատ՝ ծրագրային մոդուլի միջոցով:

3. Ավանդներում, կորպորատիվ պարտատոմսերում (ՀՀ առևտրային բանկերի կողմից) ներդրումները հանգեցնում են դրամական միջոցների՝ կրկին բանկային համակարգ վերադարձին, ինչը հակասում է կուտակային բաղադրիչի ներդրման սկզբնական գաղափարին, այն է. դրամական միջոցների հոսք իրական հատված, որն էլ կխթանի տնտեսության ակտիվացմանը, ՀՀ-ում արժեթղթերի շուկայի հնարավորությունների մեծացմանը:

4. ՀՀ պարտադիր կենսաթոշակային ֆոնդերի բաժնային գործիքների 100%-ը ներդրված է օտարերկրյա ֆոնդերի փայերում, ինչի արդյունքում դրամական միջոցները հոսում են արտասահմանյան շուկաներ՝ ՀՀ տնտեսության փոխարեն:

Վերոնշյալ եզրակացությունների հիման վրա՝ կատարվել են հետևյալ առաջարկությունները.

1. Անհրաժեշտ է կապիտալի շուկայի, կենսաթոշակային ֆոնդերի, դրանց ներդրումային քաղաքականության, ակտիվների կառավարման ռիսկերի վերաբերյալ կրթական և իրազեկման աշխատանքներն ավելի ինտենսիվ իրականացնել:

2. Անհրաժեշտ է ՀՀ-ում պետական լծակների գործադրմամբ խթանել ապահովված պարտատոմսերի և արժեթղթավորման ֆոնդի կողմից թողարկված արժեթղթերի ակտիվորեն օգտագործումը կենսաթոշակային ֆոնդերի ներդրումների մեջ: Այս երկու արժեթղթերը հանդիսանում են

կենսաթոշակային ֆոնդերի համար թույլատրելի գործիքներ, սակայն ինչպես տեսանք, կենսաթոշակային ֆոնդերը չեն տեղաբաշխում իրենց ակտիվները դրանցում: Միչդեռ սա կլուծեր առևտրային բանկերի վարկերի իրացվելիության խնդիրը, բանկերը կազատեին իրենց հաշվեկշիռները այս ոչ վարկային ակտիվներից, կունենային լրացուցիչ միջոցներ էլի վարկավորելու տնտեսությունը: ՀՀ արժեթղթերի շուկայում կշրջանառվեին նոր արժեթղթերի տեսակներ, որոնք բանկերի ռիկսերը փոխադրեին ներդրողների վրա՝ պակասեցնելով բանկային համակարգի կողմից ստանձնվող վարկունակության ռիսկը: Պատշաճ վերահսկողության դեպքում, ապահովված պարտատոմսերն ու արժեթղթավորման պրոդուկտները հանդիսանում են բավականին եկամտաբեր ու արդյունավետ ներդրումային գործիք կենսաթոշակային ֆոնդերի համար:

3. Ստորին սահմանափակումներ մտցնել կենսաթոշակային ֆոնդերի ակտիվների որոշակի դասերում ներդրումների հետ կապված ,որի արդյունքում կենսաթոշակային ֆոնդերը պետք է իրենց պորտֆելի որոշակի մասը (օր.՝առնվազն 30%-ը) ներդնեն հատուկ պարտատոմսերում (earmarked bonds): Այս փորձի ներդրումը ՀՀ-ում, կարող է հնարավորություն ստեղծել պետական, մունիցիպալ կառույցների համար՝ ֆինանսավորելու իրական հատվածին առնչվող ծրագրեր՝ միաժամանակ ապահովելով կենսաթոշակային ֆոնդերի համար բարձր եկամտաբերություն:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. «Ներդրումային ֆոնդերի մասին» ՀՀ օրենք, ընդունված՝ 22.12.2010թ.:
2. «Կուտակային կենսաթոշակների մասին» ՀՀ օրենք, ընդունված՝ 21.06.2014թ.:
3. Կանոնակարգ 10/02 «Ներդրումային ֆոնդի կառավարչի գործունեության հիմնական տնտեսական նորմատիվները»:
4. Կանոնակարգ 10/10 «Ներդրումային ֆոնդերի ներդրումային սահմանափակումները»:
5. «Պարտադիր կենսաթոշակային ֆոնդի ընտրություն չկատարած մասնակիցների ֆոնդերի կառավարիչների միջև բաշխման կարգը սահմանելու մասին» ՀՀ ԿԲ որոշում թիվ 310-Ն, 24/12/2013:
6. «ԱՄՈՒՆԴԻ-ԱԿԲԱ ԱՍԵԹ ՄԵՆԵՋՄԵՆԹ» ՓԲԸ-ի կողմից կառավարվող կենսաթոշակային ֆոնդերի 2014-2020թթ. տարեկան և միջանկյալ հաշվետվություններ:
7. «Ցե-Կվադրատ Ամպեգա Ասեթ Մենեջմենթ Արմենիա» ՍՊԸ-ի կողմից կառավարվող կենսաթոշակային ֆոնդերի 2014-2020թթ տարեկան և միջանկյալ հաշվետվություններ:
8. http://capitalfunds.am/ (Հասանելի է 11.01.2021):
9. https://www.amundi-acba.am/ (Հասանելի է 11.01.2021):
10. https://www.c-quadrat-ampega.am/(Հասանելի է 11.01.2021):
11. https://www.cba.am/ (Հասանելի է 11.01.2021):
12. http://cda.am/ (Հասանելի է 11.01.2021):
13. https://amx.am/ (Հասանելի է 11.01.2021):
14. https://abcfinance.am/ (Հասանելի է 11.01.2021):
15. https://www.gov.am/am/ (Հասանելի է 11.01.2021):
16. https://research-center.amundi.com/ (Հասանելի է 11.01.2021):
17. http://www.epension.am/ (Հասանելի է 11.01.2021):
18. http://www.irtek.am/ (Հասանելի է 11.01.2021):
19. https://www.arlis.am/ (Հասանելի է 11.01.2021):

Проблемы управления активами обязательного пенсионного фонда в Армении

Мкртчян Татев
АГЭУ, Финансы, магистратура, 1-й курс

Резюме

Ключевые слова: *финансовые активы, инвестиции, облигации, акции, паи инвестиционных фондов, валюта, стоимость чистых активов*

Для развития накопительной пенсионной системы в Армении существенное значение имеет принятие правильной инвестиционной политики, выбор финансовых прибыльных инструментов, учитывая самое важное пенсионное условие- безопасность, установление симбиотического сотрудничества с реальным сектором, стимулируя его развитие, что, в свою очередь, обеспечит доходность пенсионным фондам. Активы пенсионного фонда формируются за счет обязательных или добровольных накопительных взносов и их внедрения.

Mandatory Pension Fund Asset Management Issues in Armenia

Mkrtchyan Tatev
ASUE, Finance, MA, 1st course

Summary

Key words: *financial assets, investments, bonds, stocks, investment fund shares, currency, net asset value*

For the development of the funded pension system in Armenia, it is essential to adopt the right investment policy, choose financially profitable instruments, taking into account the most important pension precondition-security, to establish symbiotic cooperation with the real sector, stimulating its development, which, in turn, will ensure the profitability of pension funds. The assets of the Pension Funds are formed at the expense of mandatory accumulative contributions and their contribution.

Բազմաբնակավայր համայնքների ֆինանսական ապահովվածության և տնտեսական զարգացման առանձնահատկությունները ՀՀ-ում՝ խոշորացման գործընթացի համատեքստում

Սարգսյան Ալլա
ԳՊՀ, դրամաշրջանառություն և վարկ,
մագիստրատուրա, 1-ին կուրս
Գիտական դեկավար՝ տ.գ.թ., դոցենտ ***Գ. Խաչատրյան***

Հանգուցային բառեր. *Համայնքների խոշորացում, լիազորությունների ապակենտրոնացում, տնտեսական զարգացում, ֆինանսական ապահովվածություն, սեփական եկամուտներ, համաչափ զարգացում*

Երկարաժամկետ հեռանկարում երկրի կայուն սոցիալ-տնտեսական զարգացում և համայնքների համաչափ զարգացում ապահովելու նպատակով մեծ նշանակություն է ձեռք բերել կառավարման գործընթացի կազմակերպումը՝ պետական, տարածքային և տեղական մակարդակներում: Վերջիններիցս յուրաքանչյուրի իրավասությունների ներքո սահմանվում է լիազորությունների որոշակի շրջանակ,որոնց լիարժեք իրացումն ապահովելու նպատակով պահանջվում են ֆինանսական ռեսուրսներ, երկրորդ փուլում միջոցների արդյունավետ բաշխում և նպատակային օգտագործում: Այս համատեքստում առանձնահատուկ նշանակություն է ձեռք բերում խոշորացման գործընթացը, վերջինիս ընթացիկ և հեռանկարային հետևանքների վերհանումն ու վերլուծությունը:

Պետության, որպես ինստիտուցիոնալ կառույց՝ կայուն զարգացման, արդյունավետ կառավարում ապահովելու նպատակով իրականացվում է վարչատարածքային բաժանում, որի հիման վրա հետագայում տեղի է ունենում պետական և տարածքային կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների ձևավորում ու լիազորությունների բաշխում: Օրենսդրական դաշտը, մասնավորապես «ՀՀ վարչատարածքային բաժանումների մասին» ՀՀ օրենքը թույլատրում է իրականացնել համայնքային միավորների միավորում կամ բաժանում՝ ելնելով գործընթացի հետագա արդյունավետության գնահատման ցուցանիշներից ու հնարավոր ռիսկերի կանխորոշման մակարդակից [2]:

2011 թվականից ի վեր ՀՀ Կառավարության «Համայնքների խոշո-

րացման և միջհամայնքային միավորումների ձևավորման հայեցակարգ»-ի որոշման հաստատմամբ Հայաստանի Հանրապետությունում համայնքների խոշորացման գործընթացը, ըստ էության, թևակոխեց նոր, ցուցանիշներով առավել փաստարկված փուլ [3]։

Ներկայումս ՀՀ համայնքների ՏԻ համակարգերին համաձայն «Տեղական ինքնակառավարման մարմինների մասին» ՀՀ օրենքի դրույթների տրվում է լիազորությունների իրականացման լայն շրջանակ՝ համայնքի պարտադիր, որոշ դեպքերում նաև կամավոր խնդիրների լուծումների իրագործման համար [1]։ Լիազորություններին զուգընթաց վերջիններիս տրամադրվում են նաև ֆինանսական ռեսուրսներ, որոնք համայնքային իշխանություններին հասանելի են դառնում կա՛մ սեփական եկամուտների աղբյուրներից մուտքերի կա՛մ պետական բյուջեից տրվող միջբյուջետային փոխանցումների հաշվին։ Այս համատեքստում կարևորվում է դիտարկել խոշորացման գործընթացը համայնքների ֆինանսական ապահովվածության ապահովման տեսանկյունից, հատկապես արդյունքային դիտանկյունից. ի վերջո միավորումը ենթադրում է համայնքային ծախսերի օպտիմալացում թե ռեսուրսների վերաբաշխում, և ինչպիսին է գործընթացի ազդեցությունը համայնքների սեփական եկամուտների ավելացման գործում։

Մինչ խոշորացման գործընթացի կիրարկումը ՀՀ-ում համայնքների թիվը կազմում էր 926, առաջին խոշորացման իրականացումից հետո 2015 թվականին 19 համայնքներ միավորվեցին դառնալով 3 խոշորացված համայնք, 2016 թվականին համապատասխանաբար՝ 103-15, իսկ 2017 թվականին՝ 291-34 [8]։ 2021 թվականի սեպտեմբերի 24-ին Ազգային Ժողովիընդունած նախագծի համաձայն ՏԻՄ ընտրություններին ընդառաջ վերագործարկվել է համայնքների խոշորացման գործընթացը, մասնավորապես նախատեսված է ՀՀ-ում միավորման գործընթացի փուլի ավարտին ևս 441 համայնքների փոխարեն ունենալ 37 խոշորացված համայնք։ Վարչատարածքային վերջնական բաժանման արդյունքում ՀՀ-ում լինելու է 78 համայնք, ներառյալ Երևանը, և չխոշորացվող 6 համայնքները, որտեղ ազգային փոքրամասնությունների թվաքանակը հակասում է միավորման գործընթացի սկզբունքներին [4]։

Հարկ ենք համարում նշել նաև, որ մինչ խոշորացումը ՀՀ 926 համայնքներից 48 տոկոսի դեպքում բնակիչների թվաքանակը չի գերազանցել 1000 բնակիչը, ինչը միաժամանակ ենթադրել է, որ անկախ բնակիչների թվաքանակից համայնքը ունեցել է համայնքային աշխատակից-

ների նվազագույն հաստիքներ, ստացել է պետական բյուջեից ֆինանսական համահարթեցման դոտացիաներ, որոնք հիմնականում ուղղվել են վարչական ապարատի պահպանման ծախսերին: Ինչպես փաստում է ՀՀ Ֆինանսների նախարարության կողմից հրապարակված տվյալները 2019 թվականի դրությամբ բոլոր համայնքների /առանց Երևանի/ հանրագումարային ծախսերի մոտ 1/3-ը ուղղված է եղել աշխատավարձերի վճարմանը [5]: Կարևոր ենք համարում նշել նաև, որ տեղական ինքնակառավարման համակարգը իրենից չի ենթադրում սոցիալական խնդիրների, այդ թվում զբաղվածության ապահովում, այլ իրականում գործառութային տեսանկյունից լայն շրջանակ ընդգրկող համակարգային մարմին է, որի գործունեությունը պետք է նպաստի համայնքի կայուն զարգացման ապահովմանը և համայնքի բնակիչների կենսամակարդակի բարձրացմանը:

Նկատենք նաև, որ կարևոր է ՏԻ համակարգում իրականացվող ծախսերի մասնաբաժնի ավելացումը երկրի համախմբված ծախսերի կազմում, ինչը պետք է դիտվի որպես վարվող պետական քաղաքականության վերանայման արդյունք, վերջինս արտացոլվում էմասնավորապես միջբյուջետային փոխանցումների տեսքով: Ներկայումս ՀՀ համայնքները պետական բյուջեից ստանում են ֆինանսական համահարթեցման ոչ նպատակային տրամադրվող դոտացիաներ, և նպատակային հատկացումներ՝ սուբվենցիաների և սուբսիդիաների տեսքով: Տրամադրվող դոտացիաները, որոնց օգտագործման հստակ ուղղվածություն ի սկզբանե չի սահմանվում համալրում են համայնքային բյուջեի եկամուտների վարչական մասը, հետևաբար չեն կարող օգտագործվել համայնքի զարգացմանն աջակցելու նպատակով, միայն օրենսդրությամբ սահմանված չնչին տոկոսային համամասնությամբ է հնարավոր վարչական մասից փոխանցում կատարել բյուջեի ֆոնդային մասին, որն էլ հետագայում կարող է ուղղվել կապիտալ ծախսերի իրագործմանը: Միաժամանակ նշենք, որ դոտացիաները համայնքային բյուջեների եկամուտների համալրման աղբյուրների ցանկում առաջատար դիրք են զբաղեցնում, զուգահեռաբար համայնքներին հնարավորություն չընձեռելով զարգացման միտված միջին կամ խոշոր ծավալի ծրագրերի իրականացման: Ահա այստեղ է, որ դրսևորվում է համայնքների խոշորացման դրական կողմերից թերևս ամենակարևորը՝ ֆինանսական ռեսուրսների մեկտեղում կամ կենտրոնացում՝ ծավալային տեսանկյունից առավել նշանակալի խնդիրների լուծման համար: Միավորված համայնքների համախմբված բյուջեն հնա-


րավորություն կստեղծի նոր ձևավորված բազմաբնակավայր համայնքում կյանքի կոչել համեմատաբար խոշոր խնդիրների լուծում, ինչը մինչ միավորման գործընթացը համայնքները առանձին-առանձին իրականացնել պարզապես ֆինանսական տեսանկյունից ի զորու չէին: Սակայն, պետք է նաև ի նկատի ունենալ, որ համայնքների միավորման գործընթացի իրական արդյունքները տեսանելի կլինեն գործընթացի մեկնարկից առնվազն 4-5 տարի անց, քանի որ առկա են մի շարք ռիսկեր ևս, որոնց չնայած նախնական գնահատումներին, փաստացի տվյալները նախապես սահմանվածից վստահաբար կունենան շեղումներ:

Խոշորացման գործընթացը բացի համայնքների ֆինանսական և նյութական ռեսուրսների ուժեղացումը առավել երկարաժամկետում նպատակ է հետապնդում նաև պետական մարմինների ու մարզպետարանների որոշ լիազորությունների փոխանցում արդեն իսկ ուժեղացված համայնքներին: Այս համատեքստում կարևորվում է նաև գործընթացի հետագա իրականացումը, խոչընդոտները, որոնք կարող են ի հայտ գալ բազմաբնակավայր համայնքների դեպքում: Ինչպես ցույց է տալիս միջազգային փորձը, վերջին 2 տասնամյակների ընթացքում վարչատարածքային միավորների խոշորացում տեղի է ունեցել շատ երկրներում, որտեղ գործընթացի մեկնարկի հիմնական պատճառ է հանդիսացել ֆինանսական ռեսուրսների սղությունը և ոչ նպատակային օգտագործումը: Այդպիսի երկրների թվին են պատկանում ՀՀ հետ մակրոտնտեսական ցուցանիշներով փոքրիշատե համադրելի հանդիսացող Վրաստանը, Էստոնիան, Լատվիան: Ի տարբերություն վերոնշյալ պետությունների, որտեղ գործընթացը առավել երկար է տևել և փուլային կառուցվածք է ունեցել, ՀՀ-ում ներկայումս տեղի է ունենում խոշորացում՝ առանց փուլային բովանդակության: Այս համատեքստում կարևորվում է նաև բնակիչների արձագանքը գործընթացին, քանի որ առանց բնակիչների մասնակցայնության մակարդակի ապահովման հնարավոր չի լինի ապահովել տեղական ինքնակառավարման համակարգի առջև ծառացած խնդիրների արդյունավետ լուծումներ: Նշենք, որ մինչև 24/09/2021 թվականի նախագծի ընդունումը համայնքներին ընձեռվում էր հնարավորություն հանրաքվեի եղանակով կարծիք արտահայտելու գործընթացի վերաբերյալ, որը հետագայում կարող էր հիմք հանդիսանալ նաև գործընթացի դադարեցման համար, իսկ ներկայիս պայմաններում բնակիչների արձագանքը այլևս որոշիչ դեր չի կարող ունենալ [4]:

Ինչ վերաբերում է խոշորացվող համայնքներում ընդհանուր եկա-

մուտներին, կարող ենք փաստել, որ խոշորացվող կենտրոն համայնքի գործող բյուջեի ընդհանուր եկամուտների հետ համեմատությամբ, նոր ձևավորվող համայնքի բյուջեի ընդհանուր եկամուտները կաճեն՝ ինչպես սեփական եկամուտների /ի հաշիվ հարկային բազայի ընդլայնման, համայնքի բնակչության աճի/, այնպես էլ պաշտոնական դրամաշնորհների ծավալների աճի շնորհիվ: Համայնքների միավորման դեպքում նոր հնարավորություններ կստեղծվեն սուբվենցիոն ծրագրերից օգտվելու և առավել մասշտաբային ծրագրեր իրականացնելու, որպես հիմնական ռիսկ այս պարագայում պետք է դիտարկել ծրագրերի տրամաբանական բաշխումը բազմաբնակավայր համայնքի տարբեր բնակավայրերի միջև, ինչպես նաև ենթակառուցվածքային տեսանկյունից նպատակահարմարությունն ու հասանելիությունը համայնքի ներսում այլ բնակավայրերի բնակիչների համար:


Ինչպես արդեն նշել ենք ՀՀ-ում խոշորացման գործընթացը գործնականում դրսևորվել է 2015 թվականից ի վեր: Ստորև դիտարկենք 2015-2019 թթ. պարբերաշրջաններում, ինչպես է փոփոխվել ՀՀ համայնքների եկամուտների ծավալը և որքան է կազմել սեփական եկամուտների տեսակարար կշիռը համայնքային բյուջեների ընդհանուր եկամուտների կազմում՝



Գծապատկեր 1. ՀՀ համայնքների ընդամենը եկամուտների, այդ թվում սեփական եկամուտների շարժընթացը 2015-2019թթ պարբերաշրջանում[6]

Ինչպես տեսնում ենք գծապատկեր 1-ում 2015-2019 թվականների պարբերաշրջանում համայնքային բյուջեների ընդհանուր եկամուտները դրսևորել են աճի միտում, բացառությամբ 2017 թվականի, և ինչպես ցույց են տալիս պաշտոնական վիճակագրական տվյալները նվազումը եկամուտների կազմում եղել է պաշտոնական դրամաշնորհների ու միջբյուջետային փոխանցումների կրճատման հետևանք, իսկ սեփական եկամուտները դիտարկվող ժամանակահատվածում դրսևորել են բացառապես աճի միտում: Սեփական եկամուտների ավելացումը փաստում է 2 կարևոր հանգամանքների մասին: Առաջին հերթին սեփական եկամուտների տեսակարար կշռի ավելացումը ընդհանուր եկամուտների կազմում արտացոլում է պետական բյուջեից ֆինանսական կախվածության մակարդակի նվազում, ինչն էլ իր հերթին նպաստում է տեղական ինքնակառավարման համակարգի կատարելագործմանը և ինքնուրույնությանը: Եվ երկրորդ փաստարկը այն է, որ սեփական եկամուտների բացարձակ թվային ցուցանիշի աճը ամբողջովին չի արտացոլում, թե արդյոք խոշորացված համայնքների սեփական եկամուտների աճի հաշվին է դրսևորվել եկամուտների ավելացումը թե ոչ և մյուս կարևոր գործոնը բնակիչների թիվն է ըստ վարչատարածքային տեղաբաշխման, քանի որ վերջինս հանդիսանում է սեփական եկամուտների ձևավորման հիմնական աղբյուր տեղական հարկերի հավաքագրման համատեքստում:

Ստորև դիտարկենք թե նույն ժամանակահատվածի կտրվածքով սեփական եկամուտների կազմում ինչպիսի շարժընթաց է դիտվել 2017-2019 թվականների ընթացքում ըստ ՀՀ վարչատարածքային մարզային բաշխման՝



Գծապատկեր 2. ՀՀ համայնքների սեփական եկամուտների շարժընթացը 2017-2019թթ պարբերաշրջանում ըստ մարզային բաշխվածության[6]

Ինչպես տեսնում ենք գծապատկեր 2-ում 2017-2019 թվականների կտրվածքով ՀՀ բոլոր մարզերի համայնքների, այդ թվում Երևան համայնքի եկամուտների կազմում սեփական եկամուտները դրսևորել են աճի միտում: Ցուցանիշի դրական տեղաշարժը նկատելի է հատկապես Արագածոտն, Արարատ, Արմավիր, Կոտայք մարզերի դեպքում, որտեղ համայնքների խոշորացման գործընթացը առավել վաղ էր մեկնարկել: Ինչ վերաբերում է բնակչության տեղաբաշխմանը ըստ ՀՀ մարզերի աճման կարգով ունի հետևյալ պատկերը՝ Վայոց Ձոր, Տավուշ, Արագածոտն, Սյունիք, Լոռի, Գեղարքունիք, Շիրակ, Կոտայք, Արարատ, Արմավիր, Երևան [7]: Այս տեսանկյունից յուրաքանչյուր բնակչին բաժին ընկնող

սեփական եկամուտների ցուցանիշը որոշիչ դերակատարում չի ունենում, քանի որ Կոտայքի մարզը 2019 թվականի տվյալներով բնակչության թվով լինելով 4-րդ հորիզոնականում համայնքային բյուջեի եկամուտների սեփական եկամուտներ ենթաբաժնում գրանցել է առավելագույն արդյունք, իսկ օրինակ Վայոց Ձորի դեպքում տրամաբանությունը պահպանվում է, բնակչության թվով լինելով վերջինը, վերջինիս ցուցանիշը 2019 թվականի դրությամբ սեփական եկամուտների ապահովման շարժընթացում ևս արձանագրել է նվազագույն ցուցանիշը: Վիճակագրական տվյալները ըստ առանձին մարզերի և համայնքների փաստում են, որ խոշորացման արդյունքում նոր ձևավորված համայնքներում զգալիորեն աճել է սեփական եկամուտների ծավալային ավելացման ներուժի օգտագործման հնարավորությունները, որից էլ բխում է շատ ռեսուրսներմասշտաբային ծրագրեր համարժեքությունը և ըստ օրենսդրության սահմանված լիազորությունների լիարժեք իրացումը:

Անդրադարձ կատարելով համայնքների տնտեսական զարգացման չափման ցուցիչներին, կարող ենք նշել, որ գործընթացը նպաստելու է խոշորացված համայնքներում նոր ներդրումների ներգրավմանը, այս մասին է վկայում նաև Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամի (ՀՏՋՀ) պաշտոնական կայքէջում տեղադրված տվյալները, մասնավորապես այն, որ գործընթացն ավարտած որոշ համայնքներ միջազգային դոնոր կազմակերպությունների կողմից արդեն ստացել են գյուղատնտեսական տեխնիկա, ստեղծվել են նոր ենթակառուցվածքներ: Ներկայումս հիմնադրամում իրականացվում են նախապատրաստական աշխատանքներ ԱՄՆ ՄՋ գրասենյակի «14 պիլոտային խոշորացված համայնքների աջակցման ծրագրի» անցկացման համար [9]: Սա առկա ներդրումային ծրագրերից մեկն էր, սակայն դրանք շատ են, քանի որ ներդրումները, ըստ էության ուղղվում են առավել կայուն համայնքներ, որտեղից ներդրողները ակնկալում են ստանալ առավելագույն շահույթ և այս համատեքստում խոշորացումը կարող է երակարաժամկետում հանդիսանալ խթանող հանգամանք, քանզի վերջինիս նպատակներից է առանձին համայնքների մրցակցային առավելությունների մեկտեղումը և արդյունքում միասնական համայնքի արագընթաց տեմպերով զարգացման ապահովումը:

Հաջորդ կարևոր առանձնահատկությունը, որը դրվել է խոշորացման գործընթացի հիմքում, որին անդրադարձանք նաև վերևում վերաբերում է

ռեսուրսների արդյունավետ կառավարմանը համայնքներում, որի դեպքում բնակավայրերում առաջնային պատասխանատուներ են դառնում վարչական ղեկավարները: Սակայն, ընդգծենք այն հանգամանքը նաև, որ համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 500-ից պակաս բնակիչներ ունեցող համայնքները վարչական ղեկավարներ չեն ունենալու, ինչից հետևում է, որ այնուամենայնիվ կլինեն բնակավայրեր, որոնք չունենալով վարչական ղեկավարներ, ովքեր կբարձրաձայնեն համայնքային խնդիրները, մեծ կլինի հավանականությունը, որ կմնան ստվերում և զարգացումն ու առաջընթացը կշրջանցի իրենց բնակավայրերը, ժամանակի ընթացքում առավել խորացնելով միևնույն համայնքի տարբեր բնակավայրերի միջև զարգացման անջրպետը [1]:

Համայնքների խոշորացման գործընթացի դիտարկումը վերջիններիս համաչափ զարգացման տեսանկյունից ամբողջովին չի արտացոլում գործընթացի դրական և բացասական կողմերի նախնական գնահատումները: Առանձին ուսումնասիրության է արժանի արդեն իսկ խոշորացված բազմաբնակավայր համայնքի բնակավայրերի միջև զարգացման ընթացքը, քանի որ առկա են բազմաթիվ ռիսկեր, որոնք հստակորեն չեն կարող սահմանվել, սակայն միաժամանակ պետք է ուշադրություն դարձնել այն ռիսկերին որոնց ի հայտ գալու հավանականությունը բարձր է: Նկատենք նաև, որ տնտեսապես առավել ձեռնտու է ձեռնարկել միջոցառումներ ռիսկերի զսպման միջոցառումների իրականացման, քան դրանց առաջանալու դեպքում հետևանքների մեղմացման համար:

Այս համատեքստում կարևորենք նաև հարկերի հավաքագրման գործընթացի արդյունավետ կազմակերպումը, ինչպես վկայում են ընդհանուր եկամուտների կազմում նախատեսված և փաստացի ցուցանիշների խոշոր շեղումները, վերջիններս հետևանք են հենց տեղական հարկերի թերի հավաքագրման, իսկ այն մարզերը որտեղ սեփական եկամուտների կազմում տարեցտարի դիտվում է առավել լայն միջակայքային աճ, արդյունք է նաև նախկինում կուտակված ապառքների արդյունավետ կառավարման և հավաքագրման:

Աշխատանքի շրջանակներում իրականացված վերլուծությունների ու ուսումնասիրությունների արդյունքում արվել են հետևյալ եզրահանգումները՝

- Արդի պայմաններում, երբ ՀՀ-ում ընթանում է համայնքների խոշո-

րացման գործընթաց, տեղական ինքնակառավարման մարմինները, գործառութային ապակենտրոնացման արդյունքում, ստանալով առավել լայն լիազորությունների շրջանակ, պետք է ապահովված լինեն անհրաժեշտ ֆինանսական ռեսուրսներով, ինչպես նաև ունենալով ինքնուրույնության որոշակի մակարդակ, պետք է նպաստեն համայնքի ընդհանուր եկամուտների կազմում սեփական եկամուտների տեսակարար կշռի աճին,

▪ Առանձնահատուկ ուշադրություն պետք է դարձնել խոշորացման արդյունքում ձևավորված նոր համայնքներում որպես ելակետ լրացուցիչ ֆինանսական միջոցների արդյունավետ և նպատակային օգտագործմանը, միաժամանակ բազմաբնակավայր համայնքների դեպքում չանտեսելով հասանելիության ապահովման ցուցիչը համայնքի մյուս բնակավայրերի բնակիչների համար, որը անուղղակի ազդեցություն կունենա միկրոմակարդակում համայնքի, իսկ մակրոմակարդակում՝ երկրի կայուն սոցիալ-տնտեսական զարգացման վրա,

▪ Միջբյուջետային փոխանցումների համատեքստում անհրաժեշտ է նվազագույնի հասցնել համայնքի ֆինանսական կախվածության մակարդակը պետական համակարգից, մասնավորապես համայնքներին պետական բյուջեի հատկացումների տեսանկյունից կարևորվում է նպատակային հատկացումների, այն է սուբվենցիաների տրամադրման աճը, որը կնպաստի վերահսկողության գործընթացի առավել արդյունավետ կազմակերպմանը, հստակ ուղղվածություն ունեցող կապիտալ ծրագրերի իրականացման ավելացմանը,

▪ Անհրաժեշտ է իրականացնել ուսումնասիրություններ խոշորացված համայնքների ներսում՝ վեր հանելու բնակավայրերի մրցակցային առավելությունները, դրանք մեկտեղելու միասնական համայնքի զարգացումն ապահովելու համար։

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. «Տեղական ինքնակառավարման մասին ՀՀ օրենք», ընդունված 2002 թվականի մայիսի 7-ին:
2. «ՀՀ վարչատարածքային բաժանման մասին» ՀՀ օրենք, ընդունված 1995 թվականի նոյեմբերի 7-ին:
3. «Համայնքների խոշորացման և միջհամայնքային միավորումների ձևավորման հայեցակարգ» ՀՀ Կառավարության արձանագրային որոշման 44 հավելված, ընդունված 2011 թվականի նոյեմբերի 10-ին:
4. «ՀՀ վարչատարածքային բաժանման մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ կատարելու մասին նախագիծ, ընդունված 2021 թվականի սեպտեմբերի 24-ին:
5. https://minfin.am/- ՀՀ Ֆինանսների նախարարության պաշտոնական կայքէջ, հաշվետվություններ:
6. http://www.mtad.am/hy/- ՀՀ Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության պաշտոնական կայքէջ, հաշվետվություններ:
7. https://armstat.am/am/- ՀՀ Վիճակագրական կոմիտե, ՀՀ սոցիալ-տնտեսական վիճակը հրապարակումներ:
8. https://celog.am/- Տեղական ժողովրդավարության դպրոց:
9. http://www.atdf.am/ -Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամի պաշտոնական կայքէջ:

Особенности финансовой безопасности и экономического развития многожилых сообществ в контексте процесса объединения сообществ в РА

Саргсян Алла
ГГУ, Денежное обращение кредит,
Магистратура, 1-й курс

Резюме

Ключевые слова: *объединение сообществ, децентрализация полномочий, экономическое развитие, финансовая безопасность, собственные доходы, пропорциональное развитие*

Для обеспечения сбалансированного социально-экономического развития страны в долгосрочной перспективе большое значение приобрела организация процесса управления на государственном, территориальном и местном уровнях. В компетенции каждого из последних определен объем полномочий, для полноценной реализации которых необходимы финансовые ресурсы, эффективное распределение средств на втором этапе ицелевое использование. В этом контексте особое значение приобретает процесс расширения, выявление и анализ его текущих и перспективных последствий.

The Features of the Financial Security and Economic Development of Multi-Residential Communities in the Context of the Enlargement Process in the RA

Sargsyan Alla
GSU, Money circulation and credit ,
MA, 1st course

Summary

Key words: *enlargement of communities, decentralization of powers, economic development, financial security, own incomes, balanced development*

In order to ensure the balanced socio-economic development of the country in the long term, the organization of the management process at the state, territorial and local levels has become more important. Under the competence of each of the latter, a certain scope of powers is defined, the full implementation of which requires financial resources, efficient distribution of funds in the second stage and targeted use. In this context, the enlargement process acquires special significance, the discovery and analysis of its current and perspective consequences.

ՄԱԹԵՄԱՏԻԿԱ ԵՎ ԻՆՖՈՐՄԱՏԻԿԱ

МАТЕМАТИКА И ИНФОРМАТИКА

MATHEMATICS AND INFORMATICS

Գրիգորյան Սրգինե
Ստեփանակերտի «Գ. Նարեկացի» անվան պետ. համատարմագրված համալսարան
Տարրական մանկավարժություն և մեթոդիկա, 4-րդ կուրս
Գիտական ղեկավար՝ ֆ. մ. գ. թ., դոցենտ ***Լ. Աբրահամյան***

Հանգուցային բառեր. *մասնակի կարգավորություններ, կավար, բազմություն, ենթաբազմություն, հարաբերություն, բույլյան հանրահաշիվ, բույլյան լրացում, բույլյան օղակ*

Հանրահաշվական գործողությունների հատկությունների ուսումնասիրությունից մաթեմատիկոսները եկել են այն եզրակացության, որ հանրահաշվի հիմնական խնդիրը՝ գործողությունների հատկությունների ուսումնասիրությունն է՝ անկախ քննարկվող օբյեկտից, որի համար այն կիրառվում է: Աշխատանքի նպատակն է բացահայտել կրտսեր դպրոցականների մոտ թվաբանական գործողությունների հատուկ դեպքերի ուսումնասիրումը:

Եթե սկզբնական շրջանում հանրահաշիվը եղել է հավասարումների մասին գիտություն, ապա 20-րդ դարում այն վեր է ածվել մի գիտության, որը ուսումնասիրում է գործողություններն ու նրա հատկությունները:

Սովորողներին թվաբանական գործողությունների հետ ծանոթացումը նախապատրաստվում է մաթեմատիկայի առաջին իսկ դասերից գործնական վարժությունների կիրառմամբ, երկու մեծությունների համապատասխանության հայտնաբերմամբ, տրված մեծությունների մասին առանձնացմամբ:

Երեխաների գիտակցության մեջ չորս մաթեմատիկական գործողություններից յուրաքանչյուրը պետք է ամուր հիմնավորվի այն առաջադրանքների հետ, որոնց համար դրանք կիրառվում են: Գործողությունների իմաստը բացահայտվում է հիմնականում գործնական առաջադրանքներով բազմաթիվ առարկաների կիրառմամբ, համապատասխան տեքստային առաջադրանքների համակարգում [1-3]:

Եթե երկու թվերի օգնությամբ բացահայտվում է երրորդ թիվը, բավարարելով որոշակի պայմաններ,ապա այդ պրոցեսը մաթեմատիկայում անվանում են գործողություն:

Ոչ բոլոր ուսուցիչներն են պարզ պատկերացում կազմում այն մասին, որ թվաբանական գործողություններն ու նրանց հատկությունները ավելի լավ են յուրացվում խնդիրների լուցման ժամանակ: Հիմք ընդունելով մաթեմատիկական գործողությունների հատկությունների կարևորությունը անհրաժեշտ է քննարկել, բացահայտել և պարզաբանել մաթեմատիկական գործողությունների հատկությունները: Թեման արդիական է այնքանով, որ առաջին հերթին թվաբանական գործողությունների հատկությունների կիրառումն ու ուսումնասիրումը հանդիսանում է ամենակարևոր թեմաներից մեկը, երկրորդը՝ շատ ուսուցիչներ ուշադրություն չեն դարձնում այդ գործողությունների հատուկ դեպքերի ուսումնասիրմանը:

Բազմապատկում 1-ով և 0-ով

Տարրական դասարաններում ոսուցվում են բազմապատկման և բաժանման հատուկ դեպքերը, քանի որ դրանք չեն կարող ուսուցվել բազմապատկման և բաժանման գործողությունների իմաստի հետ մեկտեղ:

Հատուկ դեպքեր են անվանվում հետևյալ տեսքի արտադրյալները և քանորդները՝

$1 \cdot a, a \cdot 1, 0 \cdot a, a \cdot 0, a : 1, a : a, 0 : a$ և 0-ի վրա բաժանելու անհնար լինելը:

a և b ոչ բացասական թվերի համար արտադրյալը սահմանվում է որպես հավասար գումարելիների գումար և կատարվում է հետևյալ կանոնով՝

$$a \cdot b = \underbrace{b + b + b + b \ldots + b}_{a \text{ անգամ}}, \; a > 1$$

$1 \cdot b = b$

$0 \cdot b = 0$

Քանի որ«Գումարելին կրկնել 1 անգամ», «Գումարելին կրկնել 0 անգամ» իմաստ չունի, ընդհանուր սահմանումն այս դեպքում չի նշվում, այլ ուղղակի այդ դեպքերը ներմուծվում են պայմանավորվածության համաձայն [3-6]: Երեխաներին պետք է բացատրել, որ ցանկացած թիվ բազմապատկելով 1-ով, ստանում ենք այդ նույն թիվը, և ցանկացած թիվ բազմապատկելով 0-ով, ստանում ենք 0.

$1 \cdot b = b$

$0 \cdot b = 0$

Դրա համար պետք է կատարել որոշակի նախապատրաստական

աշխատանք, որի ընթացքում աշակերտներից պահանջվում է հաշվել *1 · 3, 1 · 5, 1 · 6, 1 · 12* տեսքի արտադրյալները՝ ելնելով բազմապատկման գործողության իմաստից։

3 · 1 = 1 + 1 + 1 = 3, նշանակում է՝ *3 · 1 = 3*

6 · 1 = 1 + 1 + 1 + 1 + 1 + 1 = 6, նշանակում է՝ *6 · 1 = 6* և այլն։

Այս կանոնները երեխաները պետք է սովորեն և մտապահեն՝

Ցանկացած թիվ *1*-ով բազմապատկելիս ստացվում է այն թիվը, որը բազմապատկել ենք։

0-ն ցանկացած թվով բազմապատկելիս ստացվում է 0։

Օրինակ, *5 · 0* դեպքը բացատրելու համար բազմապատկման գործողությունը դիտարկում ենք որպես հավասար գումարելիների գումար։ Տրված արտահայտության մեջ երկրորդ արտադրիչը ցույց է տալիս, թե որ թիվն ենք միավորում, իսկ առաջին արտադրիչը՝ քանի անգամ։ Այսպես.

5 · 0 = 0 + 0 + 0 + 0 + 0

Այս մեկնաբանությունից հետո կարելի է օգտվել արտադրյալի տեղափոխական հատկությունից և *0 · b* դեպքը հանգեցնել *b · 0* դեպքին։

Հաճախ դասվարները սխալ են թույլ տալիս և ցանկանում են ցանկացած թիվ 1-ով բազմապատկելու դեպքը ևս բացատրել՝ ելնելով բազմապատկման գործողության իմաստից։ Սխալն այն է, որ նրանք կարծում են, թե տվյալ դեպքում գոյություն ունի մեկ գումարելի՝ *1 · 3 = 3,* բայց գումարում մեկ գումարելի լինել չի կարող։ Որոշ դեպքում էլ ցանկանում են օգտվել բազմապատկման տեղափոխական հատկությունից և *1· b* դեպքը մեկնաբանել *b·1* դեպքի միջոցով։ Առաջին հայացքից թվում է, որ դա ճիշտ է, սակայն իրականում այդպես չէ, որովհետև դեռ չգիտենք, թե *1 · b* արտադրյալը գոյություն ունի, թե ոչ։ Այդ պատճառով էլ չենք կարող ասել, թե այն ենթարկվում է արդյոք բազմապատկման տեղափոխական հատկությանը, թե ոչ։

Միայն ուսուցչի կողմից այդ կանոնը տալուց հետո կարելի է *1· b*-ի նկատմամբ կիրառել արտադրյալի տեղափոխական հատկությունը։

▪ ***Բաժանում 1-ի վրա, 0-ի բաժանումը թվի, թվի բաժանումն ինքն իր վրա***

Ելնելով բազմապատկման և բաժանման գործողությունների միջև եղած կապից՝ մեկնաբանվում է, որ 0-ի վրա բաժանել չի կարելի։ Դա հիմնավորվում է այսպես, 5-ը 0-ի վրա բաժանել՝ նշանակում է գտնել մի

թիվ, որը բազմապատկելով 0-ով, կստացվի 5: Բայց այդպիսի թիվ չկա, որովհետև ցանկացած թիվ 0-ով բազմապատկելիս ստացվում է 0 [6]:

a : a = 1(a ≠ 0), a : 1 = a, 0 : a = 0 դեպքերը բացատրելու համար պետք է օգտվել բազմապատկման և բաժանման բաղադրիչների փոխկապակցվածության կանոնից:

Օրինակ, դիտարկենք *13 : 13* դեպքը:

Որպեսզի ստանանք քանորդը, օգտվում ենք բաժանման գործողության բաղադրիչների և արդյունքի միջև եղած կապից. եթե քանորդը բազմապատկենք բաժանարարով, կստանանք բաժանելին:

Ընտրման եղանակով գտնում ենք, որ քանորդը հավասար է 1-ի: Ուրեմն՝

13 : 13 = 1 և այլն:

Եզրակացություն. ցանկացած թիվ բաժանելով իր վրա՝ ստացվում է *1 (a : a = 1):*

1-ի վրա բաժանման դեպքը քննարկվում է՝ ելնելով բազմապատկման և բաժանմանգործողությունների միջև եղած կապից: Այսպես՝

3 : 1 = 3, որովհետև *1 • 3 = 3,*

6 : 1 = 6, որովհետև *1 • 6 = 6* և այլն:

Քննարկելով մի քանի օրինակներ՝ եզրակացվում է, որ ցանկացած թիվ 1-ի վրա բաժանելիս քանորդում ստացվում է այդ նույն թիվը (a : 1 = a):

Ելնելով բազմապատկման և բաժանման գործողությունների միջև եղած կապից՝ բացատրվում է 0-ի բաժանումը ցանկացած թվի վրա: Այսպես, օրինակ, *0 : 5* օրինակի դեպքում աշակերտները պետք է գտնեն մի թիվ, որը բազմապատկելով 5-ով՝ կստացվի 0: Այդ թիվը կլինի հենց 0-ն: Ուրեմն, *0 : 5 = 0*: Քննարկելով նույնատիպ այլ վարժություններ՝ արվում է ընդհանուր եզրակացություն. 0-ն ցանկացած թվի վրա բաժանելիս ստացվում է *0՝ 0 : a = 0:*

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Антоненко Т.Е. // Начальная школа / Приемы занимательности. - 2009, №5.
2. Аргинская И.И. // Начальная школа / Особенности обучения младших школьников математике. Методические основы личностно ориентированной системы обучения, направленной на общее развитие школьника. - 2005, №18.
3. Аргинская И.И. // Начальная школа / Особенности обучения младших школьников математике. Особенности программы и учебных пособий по математике для начальной школы. - 2005, №19.
4. Аргинская И.И. // Начальная школа / Особенности обучения младших школьников математике. Методические особенности изучения чисел и действий с ними в системе Л.В. Занкова. - 2005, №21.
5. Игнатьева Т.В. / Программы общеобразовательных учреждений. Начальные классы (1-4): Сборник программ / Т.В. Игнатьева, Л.А. Вохмянина, - М.: Просвещение, 2000.
6. Истомина Н.Б. / Методика обучения математике в начальных классах: Учебное пособие для студентов сред.ивысш. пед. учеб. заведений. - М.: Издательский центр "Академия", 2002. - 288с.

Особые случаи умножения или деления

Григорян Аргине
Гос. аккредитованный Университет им. Г. Нарекаци
Элементарная педагогика и методика, 4-ый курс

Резюме

Ключевые слова: *Особые случаи, операции, сложение, умножение, деление, сложение*

Изучая свойства алгебраических операций математики пришли к выводу, что основная задача алгебры состоит в изучении свойств операций независимо от обсуждаемого объекта, для которого она используется. Цель работы - выявить изучение частных случаев арифметических действий у учащихся начальных классов.

Special Cases of Multiplication or Division

Grigoryan Argine
State Accredited University named after G. Narekatsi
Elementary pedagogy and methodology, 4th course

Summary

Keywords*: Special cases, operations, addition, multip;ication, division, addition*

From the study of the properties of algebraic operations, mathematicians have come to the conclusion that the main task of algebra is to study the properties of operations, regardless of the object under discussion for which it is used. The aim of the work is to reveal the study of special cases of arithmetic operations in primary school students.

Մեծ տվյալների վերլուծության համար անհրաժեշտ ալգորիթմների ուսումնասիրությունն ու համեմատական վերլուծությունը

Հովհաննիսյան Նարեկ
ՎՊՀ, Ինֆորմատիկա, մագիստրատուրա, 2-րդ կուրս
Գիտական ղեկավար՝ տ. գ. թ., դոցենտ ***Հ. Օհանյան***

Հանգուցային բառեր. *ռեգրեսիա, ծրագրավորում, կայք, ալգորիթմ, որոշման ծառեր*

Ներկայումս տվյալները դարձել են ցանկացած ընկերության գործունեության գլխավոր հիմքը՝ հաշվի առնելով դրանց կարևորությունը տարբեր գործընթացների արդյունավետության բարձրացման գործում և նրանց ազդեցությունը ընդհանուր բիզնեսի և եկամտի աճի վրա:

Ամեն օր մարդիկ գեներացնում են հսկայական ծավալով տվյալներ: Ամեն անգամ, երբ նրանք բացում են էլեկտրոնային փոստը, օգտագործում բջջային հավելվածները, որևէ ակտիվություն դրսևորում սոցիալական կայքերում կամ առցանց գնումներ կատարում, համապատասխան տեխնոլոգիաները հավաքագրում և մշակում են այդ տվյալները տվյալ կազմակերպության համար:

Գրեթե մեկ տասնամյակ մեծ տվյալները փոխում են կորպորատիվ և տեխնոլոգիական հատվածի գործելակերպը: Մեծ տվյալները դրանք տվյալների և տվյալների բազաների չափազանց մեծ ծավալներ են, որոնք առաջանում են բազմաթիվ եղանակներով և տարբեր աղբյուրներից: Բազմաթիվ կազմակերպություններ ընդունել են հնարավորինս շատ տվյալներ հավաքելու առավելությունները: Սակայն մեծ տվյալների միայն հավաքագրումն ու պահպանումը բավարար չէ, պետք է դրանք նաև կիրառել: Արագ զարգացող տեխնոլոգիաների շնորհիվ, բազմաթիվ կազմակերպություններ կատարում են մեծ տվյալների վերլուծություն՝ տերաբայթներով տվյալները օգտակար գաղափարների վերածելու համար: Ժամանակակից տեխնոլոգիաները հնարավորություն են տալիս մեծ տվյալները մշակել ամպի մեջ:

Մեծ տվյալները կարևոր են, քանի որ նրանք կազմակերպություններին հնարավորություն են տալիս հավաքագրել, պահպանել և կառավարել հսկայական քանակությամբ տվյալներ ճիշտ արագությամբ, ճիշտ ժամանակին ճիշտ պատկերացում կազմելու համար:

Մեծ տվյալները դրանք անընդհատ աճող և բարդ տվյալների հսկա-

յական զանգվածներ են, որոնք ավանդական ծրագրակազմը չի կարող կառավարել: Խոսքը վայրկյանում գոնե հազար տեղեկատվության մասին է: Այս տվյալների բազաների ճիշտ վերլուծությունը կարող է օգնել բիզնեսին ավելի արդյունավետ սպասարկել իր հաճախորդներին՝ առաջարկելով բազմաթիվ առավելություններ և առաջադեմ հեռանկարներ:

Մեծ տվյալների վերլուծությունը կենսականորեն կարևոր է տարբեր երկրների կառավարությունների համար: Մեծ տվյալների հարթակ ստեղծելով՝ կառավարությունները կարող են հասանելիություն ունենալ հսկայական քանակությամբ համապատասխան տեղեկատվության, որը կարող է օգնել բարելավել մարդկանց կյանքի և պետական հատվածի որակը: Տեղեկատվությունն ու վերլուծությունը իրական ժամանակում թույլ են տալիս կառավարությանը բացահայտել շատ կարևոր խնդիրներ, որոնք շուտափույթ լուծման կարիք ունեն: Օրինակ՝ մեծ տվյալների տեխնոլոգիաների միջոցով մենք կարող ենք բարելավել մեր տնտեսության առանցքային ոլորտներից մեկը՝ զբոսաշրջությունը, արդյունաբերությունը՝ կանխատեսելով դրա պահանջարկը: Մասնագետների պնդմամբ, Հայաստանը, այդ գործընթացների կազմակերպման համար ունի բոլոր անհրաժեշտ ռեսուրսները, քանի որ տեխնոլոգիական և ինտերնետային ենթակառուցվածքները լավ զարգացած են մեր երկրում:


Տվյալների ընդհանուր վերլուծությունը իր մեջ ներառում է տվյալների վերափոխման և վերլուծության նոր մեթոդների կիրառում՝ տվյալների մեջ նախկինում անհայտ միտումներն ու օրինաչափությունները բացահայտելու համար: Ստորև ներկայացված ալգորիթմներն այն գործիքներն են, որոնք տվյալագիտությունն օգտագործում է մեծ տվյալների վերլուծությունը կազմակերպելու համար՝ դասակարգելով տվյալները, բացահայտելով նմանությունները և կանխատեսելով միտումները: Այս ալգորիթմները ընկերություններին հնարավորություն են տալիս ստեղծել նոր ծառայություններ և ապրանքներ, որոնք ավելի լավ կհամապատասխանեն իրենց հաճախորդների կարիքներին, կատարել ճիշտ թիրախավորում, ինչպես նաև ստացված վերլուծությունների հիման վրա կայացնել որոշումներ: Մեծ տվյալների վերլուծության համար նման ալգորիթմների կիրառումը արդյունավետ միջոց է մեծ տվյալների արժեքի ստացման համար, այլապես շատ դժվար կլինի իմաստալից տեղեկատվության վերծանումը նման մեծ քանակի ինֆորմացիայի առկայության դեպքում:

Տվյալների վերլուծության համար հատկապես կիրառելի են ներկայացված հետևյալ ալգորիթմները՝

1. Գծային ռեգրեսիա

Գծային ռեգրեսիան օգտագործում է շարունակական քանակական չափանիշների երկու խմբերի փոխհարաբերությունները: Գծային ռեգրեսիայի նպատակն է պարզել փոխհարաբերությունները բանաձևի տեսքով, որը նկարագրում է կախյալ փոփոխականը անկախ փոփոխականի տեսանկյունից: Երբ այս հարաբերությունը քանակականորեն գնահատվի, կախյալ փոփոխականը կարող է կանխատեսվել անկախ փոփոխականի ցանկացած դեպքի համար [4]:

Իր բնույթով գծային ռեգրեսիան դիտարկում է միայն կախյալ և անկախ փոփոխականների գծային հարաբերությունները: Այսինքն՝ ենթադրվում է, որ նրանց միջև կա ուղիղ կապ, որը երբեմն սխալ է: Գծային ռեգրեսիան նաև ենթադրում է, որ դիտարկվող տվյալներն անկախ են միմյանցից: Սա հաճախ, բայց ոչ միշտ է խելամիտ [1]: Գծային ռեգրեսիան վիճակագրական վերլուծության ամենատարածված մեթոդներից մեկն է, որը կիրառելի է բազմաթիվ խնդիրների դեպքում, հատկապես, երբ ակնկալվող արդյունքը գնահատական է, այլ ոչ թե կատեգորիա: Հարմար է միտումներ կանխատեսելու, ինչպես նաև նոր քաղաքականության կամ այլ փոփոխությունների հետևանքները կանխատեսելու համար [5]:



Նկար 1


2. Լոգիստիկ ռեգրեսիա

Լոգիստիկ ռեգրեսիան նման է գծային ռեգրեսիային, բայց այն կենտրոնացած է ոչ թե քանակական, այլ դասակարգման հետ կապված խնդիրների վրա: Այստեղ ելքային փոփոխականի արժեքները դիսկրետ և վերջնական են, այլ ոչ թե անընդհատ, և ունեն անսահման մեծություններ ինչպես գծային ռեգրեսիայի ժամանակ:

Լոգիստիկ ռեգրեսիայի նպատակն է որոշել՝ մուտքային փոփոխականի օրինակը համապատասխանում է կատեգորիային թե ոչ: Լոգիստիկ ռեգրեսիայի արժեքը 0-ի և 1 ի միջակայքում է: 1-ին մոտ ստացված արդյունքները ցույց են տալիս, որ մուտքային փոփոխականն ավելի շատ է համապատասխանում կատեգորիային: 0-ին մոտ արդյունքները ցույց են տալիս, որ մուտքային փոփոխականը, հավանաբար, չի համապատասխանում տվյալ կատեգորիային [4]:

Այս մեթոդը հեշտ է ռեալիզացնել և շատ արդյունավետ է սովորեցնել, բայց եթե դիտարկումների քանակն ավելի քիչ է, քան առանձնահատկությունների քանակը, ապա լոգիստիկ ռեգրեսիան չպետք է օգտագործվի, հակառակ դեպքում դա կարող է հանգեցնել վերաուսուցման:

Լոգիստիկ հետընթացի հիմնական սահմանափակումը կախյալ և անկախ փոփոխականների միջև գծայնության ենթադրությունն է: Այն կարող է օգտագործվել միայն դիսկրետ ֆունկցիաները կանխատեսելու համար: Ոչ գծային խնդիրները հնարավոր չէ լուծել լոգիստիկ ռեգրեսիայով, քանի որ դրանք ունեն գծային որոշման մակերես: Գծային բաժանվող տվյալները հազվադեպ են հանդիպում իրական կյանքում: Դժվար է ստանալ բարդ կապեր `օգտագործելով այս մեթոդը: Ավելի հզոր և կոմպակտ ալգորիթմներ, ինչպիսիք են նեյրոնային ցանցերը, կարող են հեշտությամբ գերազանցել այս ալգորիթմին: Լոգիստիկ ռեգրեսիան օգտագործվում է հիմնականում տվյալ իրադարձության ձախողման և հաջողության հավանականությունը գտնելու համար [5]:



Նկար 2. Լոգիստիկ և գծային ռեգրեսիաների գրաֆիկական օրինակներ

3. Դասակարգման և ռեգրեսիայի ծառերի մեթոդ (Classification and regression tress)


Դասակարգման և ռեգրեսիայի ծառերը օգտագործում են որոշումները տվյալների դասակարգման համար: Որոշման ծառը մեքենայական ուսուցման մոդել է, որն օգտագործվում է նպատակը կանխատեսելու համար՝ առանձնահատկություններից կախված որոշման կանոնները սովորելով:

Այս դասակարգման ծառերը կարող են լինել բավականին մեծ և բարդ: Բարդությունը վերահսկելու մեթոդներից մեկը ծառի ճյուղերը կտրելն է կամ հարցերի մակարդակների նպատակային հեռացնելը՝ ճշգրիտ համապատասխանությունը և աբստրակցիան հավասարակշռելու համար: Այս մոդելի կրկնուսուցումը կանխելու համար պահանջվում է պահպանել հավասարակշռություն ճշգրիտի և աբստրակցիայի միջև:

Ի տարբերություն լոգիստիկ ռեգրեսիայի, որը կենտրոնանում է այո կամ ոչ կատեգորիաների վրա, դասակարգման և ռեգրեսիայի ծառերը կարող են օգտագործվել բազմարժեք կատեգորիաների կանխատեսման համար: Դրանք նաև ավելի հեշտ է պատկերացնել և տեսնել այն վերջնական ուղին, որը բերել է ալգորիթմը որոշակի կատեգորիայի [4]:

Այլ ալգորիթմների համեմատ որոշման ծառերը նախնական մշակման ընթացքում տվյալների պատրաստման համար ավելի քիչ ջանքեր են պահանջում: Ինչպես նաև որոշման ծառերը չեն պահանջում տվյալների նորմալացում և մասշտաբայնացում:

Բայց տվյալների փոքր փոփոխությունը կարող է առաջացնել որոշման ծառի կառուցվածքի շատ մեծ փոփոխություն, որը կբերի անկայունության: Որոշման ծառերի համար երբեմն հաշվարկը կարող է շատ ավելի բարդ լինել՝ համեմատած այլ ալգորիթմների հետ, հետևաբար այն ավելի ժամանակատար է և համեմատաբար թանկ [2]:



Նկար 3. Որոշում կայացնելու ծառի օրինակ


4. KNN ալգորիթմ

KNN -ը նույնպես դասակարգման ալգորիթմ է նախատեսված դասակարգման և ռեգրեսիայի համար: Այն հայտնի է որպես «ծույլ աշակերտ», քանի որ ուսանելու փուլը շատ սահմանափակ է: Ուսուցման գործընթացը բաղկացած է պահվող տվյալների սովորեցնող հավաքածուից: Նոր օրինակների գնահատման ժամանակ գնահատվում է ուսուցման հավաքածուի յուրաքանչյուր տվյալների կետի հեռավորությունը և ընդունվում է կոնսեսուսային որոշում, թե նոր տվյալների օրինակը որ կատեգորիայի մեջ է մտնելու՝ ելնելով ուսուցանող օրինակին նրա մոտիկությունից:

Այս ալգորիթմը կարող է հաշվարկային առումով բավականին թանկ լինել՝ կախված ուսուցանող հավաքածուի չափից և ծավալից: Քանի որ

յուրաքանչյուր նոր օրինակը պետք է համեմատվի վերապատրաստման տվյալների հավաքածուի բոլոր դեպքերի և ստացված հեռավորության հետ, այս գործընթացն ամեն անգամ գործարկելիս կարող է օգտագործել շատ հաշվիչ ռեսուրսներ [4]:

KNN մոդելավորումը չի ներառում սովորելու ժամանակահատվածը, քանի որ տվյալներն ինքնին մոդել են, ուստի ցանկացած պահի կարող են ավելացվել նոր տվյալներ և դրանք չեն ազդի առկա մոդելի վրա: Այս ագորիթմը հաճախ են ընտրում, քանի որ այն հեշտ է օգտագործել, հեշտ է սովորել և արդյունքները մեկնաբանել: Սակայն պետք է հաշվի առնել, որ այն զգայուն է աղմկոտ և բացակայող տվյալների նկատմամբ, ինչպես նաև բոլոր տվյալները պետք է նախապես պատշաճ կերպով մասշտաբայնացվեն (նորմալացվեն և ստանդարտացվեն) [3]:



Նկար 4. KNN ալգորիթմի կիրառման գրաֆիկական օրինակ

5. Բայեսի ալգորիթմ


Բայեսի դասակարգման ալգորիթմը մի շարք պարզ հավանական դասակարգիչների շարք է, որոնք հիմնված են Բայեսի թեորեմի օգտագործման վրա՝ հատկությունների միջև ուժեղ անկախության ենթադրությամբ:

Ալգորիթմը լայնորեն կարող է կիրառվել մեծածավալ տեքստի դասակարգման համար՝ սպամի դուրսբերման նպատակով, ինչպես նաև լայնորեն օգտագործվում է ավտոմատ բժշկական ախտորոշման մեջ:

Այս ալգորիթմը դասակարգիչ կառուցելու պարզ միջոց է: Մոդելը խնդրի օրինակներին հատկացնում է որոշակի դասի պիտակներ, որոնք ներկայացված են հատկությունների արժեքներով, իսկ դասի պիտակները վերցված են սահմանափակ հավաքածուից: Բայեսի բոլոր դասակարգիչները ենթադրում են, որ օրինակի յուրաքանչյուր հատկություն կապված չէ այլ հատկանիշների հետ: Օրինակ, եթե պտուղը կարմիր է, կլոր և մոտ 3 դյույմ տրամագծով, պտուղը կարելի է դատել որպես խնձոր: Չնայած այս հատկությունները փոխադարձաբար կախված են, Բայեսի դասակարգիչը այդ հատկանիշները անկախ է համարում պտղի՝ խնձոր լինելը որոշելու հավանականության մեջ:

Բայեսի դասակարգչի առավելությունն այն է, որ այն պետք է գնահատի միայն անհրաժեշտ պարամետրերը (փոփոխականների միջին և շեղումը) ՝ հիմնվելով փոքր քանակի տվյալների խմբի վրա:

Տեսականորեն, այս մոդելի դասակարգիչը պայմանական հավանականության մոդել է: Այսպիսով, Բայեսի ալգորիթմը նկարագրում է իրադարձության հավանականությունը՝ հիմնվելով իրադարձության հետ կապված պայմանների նախնական իմացության վրա [6]:



Նկար 5. Բայեսի ալգորիթմի դասակարգման մոդելը

Մեծ տվյալների վերլուծության համար նախատեսված լուծումը հստակորեն պետք է հաշվարկված լինի: Թե որ ալգորիթմն է ընտրվում վերջնական վերլուծության կազմակերպման համար, կախված է նախապես սահմանված նպատակներից և խնդիրներից: Թեև մեկ ալգորիթմը կարող է ավելի լավ աշխատել որոշակի նպատակի համար, քան մյուսը, երբեմն շատ օգտակար է մեկից ավելի ալգորիթմների կիրառումը նախընտրելի արդյունքի ստացման համար [5]:

Ստորև աղյուսակում ներկայացված են հիմնական դիտարկված ալգորիթմների կիրառման առանձնահատկությունների համեմատական վերլուծությունը, առավելություններն ու թերությունները՝

	Գծային ռեգրեսիա	Լոգիստիկ ռեգրեսիա	Դասա-կարգման / ռեգրեսիայի ծառերի մեթոդ	KNN ալգորիթմ	Բայեսի ալգորիթմ
Դասակար-գում	-	-	+	+	+
Առավելու-թյուններ	Վերլուծու-թյան մեծ արագություն	Արագ ու մատչելի ինտեգրացիա	Աշխատում է թե գծային, թե ոչ գծային տվյալների հետ	Արդյունավետ կիրառվող ալգորիթմ է ցանկացած քանակի տվյալներ դեպքում	Մեծ արդյունա-վետություն / պարզ ինտեգրացիա
Թերություն-ներ	Հարմար է հիմնականում գծային խնդիրների լուծման համար	Ալգորիթմի արդյունքը դիսկրետ է, այն տալիս է միայն կտրուկ պատասխան՝ առանց դասակարգ-ման	Դասակար-գումը ժամանա-կատար է ու բավականին թանկ	Բավականին զգայուն է բացակայող տվյալների նկատմամբ / ժամանակա-տար է	Ճշգրտության նվազում շատ փոքր քանակի տվյալների դեպքում

Եզրակացություն

Հաշվի առնելով ներկա ժամանակում մեծ տվյալների կարևորությունն ու նրանց վերլուծության համար նախատեսված ալգորիթմների մեծ քանակը, կատարվել է մեծ տվյալների վերլուծության համար նախատեսված հաճախ օգտագործվող ալգորիթմների ուսումնասիրություն, համեմատական վերլուծություն, ուսումնասիրվել են նրանց առավելություններն ու թերությունները, ինտեգրման հնարավորությունները, տարբեր խնդրի դրվածքների դեպքում՝ նրանց կիրառելիության անհրաժեշտությունը:

Ներկայացված ալգորիթմները հանդիսանում են ամենաշատ կիրառելի և տարածված խնդիրների լուծումն ապահովող մոտեցումները, աշխատանքի էությունը, այսպիսով ամեն մի ալգորիթմի վերլուծությունն ընդգրկում է համարժեք խնդրի ներկայացում և դրա լուծման մոտեցում: Նման ալգորիթմները հնարավորություն են տալիս համապատասխան մեծ տվյալների վերլուծության խնդրի դեպքում լուծել այն՝ որևէ ալգորիթմի կամ ալգորիթմների կիրառմամբ, որոնք կապահովեն համարժեք վերլուծություն:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. https://sciencing.com/ (Հասանելի է 18.01.2022):
2. https://dhirajkumarblog.medium.com (Հասանելի է 18.01.2022):
3. https://medium.com (Հասանելի է 18.01.2022):
4. https://tdwi.org/articles (Հասանելի է 18.01.2022):
5. https://datafloq.com (Հասանելի է 18.01.2022):
6. https://medium.com (Հասանելի է 18.01.2022):

Исследование и сравнительный анализ алгоритмов анализа больших данных

Оганесян Нарек
ВГУ, информатика, магистратура, 2-ой курс

Резюме

Ключевые слова: *регрессия, программирование, веб-сайт, алгоритм, дерево определений*

Учитывая важность больших данных в настоящее время и большое количество разработанных алгоритмов для их анализа, изучение часто используемых алгоритмов анализа больших данных, сравнительный анализ, их преимущества и недостатки, возможности интеграции, необходимость их применимости в постановке различных задач велись.

Представленные алгоритмы являются наиболее применимыми и распространенными подходами к решению задач, сутью работы, таким образом, анализ каждого алгоритма включает в себя изложение адекватной задачи и подхода к ее решению.

Такие алгоритмы позволяют решить задачу анализа соответствующих больших данных с помощью некоторого алгоритма или алгоритмов, которые обеспечат адекватный анализ.

Study and Comparative Analysis of Algorithms Required for Big Data Analysis

Hovhannisyan Narek
VSU, Informatics, MA the 2nd course

Summary

Key words*: regression, programming, website, algorithm, tree definitions*

Taking into account the importance of big data at the present time and a large number of algorithms designed for their analysis, a study of frequently used algorithms for big data analysis, comparative analysis, their advantages and disadvantages, integration possibilities, the need for their applicability in setting various tasks were conducted.

The presented algorithms are the most applicable and common approaches to solving problems, the essence of the work, thus, the analysis of each algorithm includes the presentation of an adequate problem and an approach to its solution.

Such algorithms make it possible to solve the problem of analyzing the corresponding big data using some algorithm or algorithms that will provide adequate analysis.

Բեզիեի քառակուսային կորերի մի հատկության մասին

Մանուկյան Ավետիք
ԵՊՀ, Թվային անալիզ և մաթեմատիկական մոդելավորում, Մագիստրատուրա 1-ին կուրս


Հանգուցային բառեր. *Բեզիեի կոր, Բեզիեի քառակուսային կոր*

Բեզիեի կորերը պարամետրական կորեր են: Սրանք օգտագործվում են համակարգչային գրաֆիկայում և դրան առնչվող այլ ոլորտներում: Կորերը իրենց անունը ստացել են ի պատիվ Պիեռ Բեզիեի, ով օգտագործում էր 20-րդ դարի 60-ական թվականներին նախագծելու Ռենո մակնիշի ավտոմեքենաների թափքը: Իրականում այդ կորերի ուսումնասիրությամբ ավելի շուտ զբաղվել է Փոլ Կաստելջաուն, դեռ 1959թ.-ին զարգացնելով Բեզիեի կորերի հետ կապված շատ մեթոդներ, բայց իր գործատուի գաղտնիության համար դրանք չեն հրապարակվել, այդ իսկ պատճառով այդ կորերը ստացել են Բեզիեի անվանումը: Համակարգչային տառատեսակներ և անիմացիաներ ստեղծելիս Բեզիեի կորերը լայն տարածում ունեն: Անիմացիաներում հիմնականում սահուն կադրեր ստանալու համար շատ հարմար գործիքակազմեր են ստեղծվել դրանց շնորհիվ: Ռոբոտաշինության ոլորտում ևս այդ կորերը օգտագործվում են շարժումների նկարագրման համար: Այս աշխատանքում մենք ուսումնասիրել ենք Բեզիեի քառակուսային կորը: Նկատել ենք կապը կորով և նրա ծայրակետերով սահմանափակված պատկերի մակերեսի և այդ կորը պարունակող եռանկյան մակերեսի միջև:

Խնդրի դրվածքը և լուծումը

Դիցուք տրված են երեք իրարից տարբեր P_0, P_1 և P_2 կետեր: Դրանցով անցնող Բեզիեի կորը քառակուսային պարամետրական կոր է(տե՛ս նկար 1.), որի հավասարումը տրված է ստորև [1]՝

$$B(t) = (1-t)^2 P_0 + 2t(1-t)P_1 + t^2 P_2,\ 0 \le t \le 1: \qquad (1)$$



Նկար 1

Դնենք հետևյալ խնդիրը. Կա՞ արդյոք ինչ-որ կապ P_0, P_1 և P_2 կետերով որոշվող քառակուսային Բեզիեի կորի և P_0P_2 հատվածով սահմանափակված պատկերի մակերեսի և P_0, P_1 և P_2 կետերով որոշվող եռանկյան մակերեսի միջև:

Հաշվենք սկզբում P_0, P_1 և P_2 կետերով եռանկյան մակերեսը և նշանակենք այն S_Δ-ով: Ըստ [3]-ի ունենք, որ

$$S_\Delta = \left|\frac{1}{2}\det\begin{bmatrix}1 & x_0 & y_0\\ 1 & x_1 & y_1\\ 1 & x_2 & y_2\end{bmatrix}\right| = \frac{1}{2}(x_0(y_2-y_1)+x_1(y_0-y_2)+x_2(y_1-y_0)): \qquad (2)$$

Այժմ հաշվենք Բեզիեի կորով և P_0P_2-ով սահմանափակված պատկերի մակերեսը, որը կնշանակենք S_B-ով: Դա հաշվելու համար օգտվելու ենք

$$S_B = \frac{1}{2}\int_\Gamma [xdy - ydx]$$

բանաձևից [2], որտեղ Γ կորը մեր տիրույթի եզրն է: Դիցուք $\Gamma = \Gamma_1 + \Gamma_2$, Γ_1-ով նշանակված է P_0P_2 հատվածը, իսկ Γ_2-ով՝ P_0, P_1 և P_2 կետերով որոշվող Բեզիեի կորը՝ (1): Կատարելով հաշվարկները ստանում ենք՝

$$S_B = \frac{1}{3}[x_0(y_2 - y_1) + x_1(y_0 - y_2) + x_2(y_1 - y_0)]:$$

Համեմատելով ստացված արտահայտությունը (2) արտահայտության հետ, հանգում ենք հետևյալ պնդմանը:

Ճիշտ է հետևյալ առնչությունը՝

$$S_B = \frac{2}{3}S_\Delta:$$

Եզրահանգում

Այսպիսով կարողացանք գտնել կապ կորով և նրա ծայրակետերով սահմանափակված պատկերի մակերեսի և այդ կորը պարունակող եռանկյան մակերեսի միջև: Պարզեցինք որ այդ մակերեսների հարաբերությունը հաստատուն թիվ է՝ 2/3-րդ է:

Գրականություն

1. Роджерс Д., Адамс Дж. Математические основы машинной графики. М.: Изд.-во «Мир». 2001. 604с.
2. Никольский С.М. Курс математического анализа. Т.2. М.: Изд.-во «Наука». 1983. 448с.
3. https://people.richland.edu/ (Հասանելի է 15/01/2022):

Об одном свойстве квадратных кривых Безье

Манукян Аветик

ЕГУ, Численный анализ и математическое моделирование,
Магистратура, 1-й курс

Резюме

Ключевые слова: *Кривая Безье, Квадратная кривая Безье.*

В настоящей статье выявляется одно геометрическое свойство квадратичных кривых Безье. Устанавливается связь между площадью фигуры, образованной самой кривой Безье и прямой, соединяющей крайние контрольные точки, и площадью треугольника, содержащего кривую.

About One Property of Square Bezier Curves

Manukyan Avetik

YSU, Numerical analysis and mathematical modeling,
MA, 1st course

Summary

Key words: *Bezier Curve, Quadratic Bezier curve*

This article reveals one geometric property of quadratic Bezier curves. A relationship is established between the area of the figure formed by the Bezier curve itself and the straight line connecting the endpoints of the curve, and the area of the triangle containing the curve.

Սահակյան Ռուզաննա
ԱրՊՀ, Մաթեմատիկա, 3-րդ կուրս
Գիտական դեկավար՝ ֆ.-մ. գ. թ., դոցենտ ***Լ. Աբրահամյան***

Հանգուցային բառեր. *մասնակի կարգավորություններ, կավար, բազմություն, ենթաբազմություն, հարաբերություն, բուլյան հանրահաշիվ, բուլյան լրացում, բուլյան օղակ*

Աշխատանքում ներկայացվել է կավարի և բուլյան հանրահաշվի գաղափարը, ինչը ներկայումս անհրաժեշտ է ժամանակակից թվային սարքավորումներ կառուցելու համար, ծրագրավորման լեզուներում ու սովորաբար կրճատված է որպես bool տեսակ ու բացի այդ այն գոյություն ունի որպես հիմնական տվյալ բոլոր ժամանակակից ծրագրավորման լեզուներում: Բուլյան հանրահաշիվը հիմնային դեր ունի թվային էլեկտրոնիկայի զարգացման մեջ: Այն նաև օգտագործվում է վիճակագրության և բազմությունների տեսության մեջ:

$\alpha \subseteq A \times A$ հարաբերությունը կոչվում է մասնակի կարգ կամ պարզապես կարգ՝ որոշված A բազմության վրա, եթե α-ն բավարարում է առինքնության, փոխանցականության և

$(x, y) \in \alpha, (y, x) \in \alpha \to x = y$ (հակահամաչափության կամ հակասիմետրիկության) պայմաններին [2, 43]:

Եթե α-ն մասնակի կարգ է, ապա սովորաբար α-ի փոխարեն օգտագործվում է "$\leq$" նշանը, իսկ $(x, y) \in \alpha$ պայմանն, այդ դեպքում, գրվում է $x \leq y$ կամ $y \geq x$ և կարդացվում է "x-ը փոքր է կամ հավասար y-ից" կամ "y-ը մեծ է կամ հավասար x-ից", իսկ մասնակի կարգի պայմանները ստանում են ավելի պարզ տեսք.

- $x \leq x$ (առինքնություն կամ ռեֆլեքսիվություն);
- $x \leq y, y \leq x \to x = y$ (հակահամաչափություն կամ հակասիմետրիկություն);
- $x \leq y, y \leq z \to x \leq z$ (փոխանցականություն կամ տրանզիտիվություն):

Լեմմ 1: Միևնույն A բազմության վրա որոշված ցանկացած թվով մասնակի կարգերի հատումը նորից մասնակի կարգ է:

Եթե $x_1 \leq x_2, x_2 \leq x_3, \ldots, x_{n-1} \leq x_n$, ապա համառոտ գրվում է

$x_1 \le x_2 \le x_3, \ldots, x_{n-1} \le x_n$:

A բազմությունն իր վրա որոշված "$\le$" համակարգի հետ մեկտեղ կոչվում է մասնակի կարգավորված բազմություն և նշանակվում է՝ $A(\le)$ կամ համառոտ A-ով:

Եթե $x \le y$ և $x \ne y$, ապա գրվում է $x < y$ կամ $y > x$ և կարդացվում է "x-ը խիստ փոքր է y-ից" կամ "y-ը խիստ մեծ է x-ից": Ոչ դատարկ $H \subseteq A$ ենթաբազմությունը կոչվում է ուռուցիկ A-ում, եթե $a,b \in H, x \in A$ և $a \le x \le b$ պայմաններից բխում է՝ $x \in H$:

$A(\le)$ մասնակի կարգավորված բազմության $B \subseteq A$ ոչ դատարկ ենթաբազմությունը ևս կլինի մասնակի կարգավորված բազմություն՝ նույն մասնակի կարգի նկատմամբ, այսինքն՝ B-ում $x \le y$ այն և միայն այն դեպքում, երբ A-ում $x \le y$, որտեղ $x, y \in B$:

Լեմմա 2: Ցանկացած $B \subseteq A$, $B \ne 0$, ենթաբազմության և $\alpha \subseteq A \times A$ մասնակի կարգի համար

$$\alpha \cap (B \times B) = \beta \subseteq B \times B$$

հարաբերությունը կլինի մասնակի կարգ որոշված B-ի վրա, այսինքն՝ $B \subseteq A$ ենթաբազմության վրա α-ի մակածված հարաբերությունը ևս մասնակի կարգ է:

Դիցուք $A(\le)$ զույգը մասնակի կարգավորված բազմություն է, $X \subseteq A, X \ne 0$ և $a \in A$: a տարրը կոչվում է X-ի վերին (ստորին) եզր, եթե $x \le a$ (համապատասխանաբար՝ $a \le x$) ցանկացած $x \in X$ տարրի համար: a տարրը կոչվում է X-ի վերին (ստորին) ճշգրիտ եզր և նշանակվում է $a = \sup X$ կամ $a = \sup(X)$ ($a = \inf X$ կամ $a = \inf(X)$), եթե

- a-ն վերին (ստորին) եզր է X-ի համար;
- X-ի ցանկացած c վերին (ստորին) եզրի համար $a \le c$ (համապատասխանաբար՝ $c \le a$):

Վերին (ստորին) եզր ունեցող X բազմությունը կոչվում է նաև վերևից (ներքևից) սահմանափակ բազմություն:

Հակահամաչափությունից բխում է, որ վերին և ստորին ճշգրիտ եզրերը որոշվում են միարժեքորեն, եթե դրանք գոյություն ունեն: Եթե $X = \{a_1, \ldots, a_n\}$, ապա նշանակվում է նաև

$$\sup X = \sup\{a_1, \ldots, a_n\}$$
$$\inf X = \inf\{a_1, \ldots, a_n\}:$$

$A(\le)$ մասնակի կարգավորված բազմությունը կոչվում է կավարաձև կարգավորված, եթե $\sup\{a,b\}$-ն և $\inf\{a,b\}$-ն գոյություն ունեն A-ում՝ ցանկացած $a,b\in A$ տարրերի համար: Օրինակ, միևնույն Q բազմության բոլոր ենթաբազմությունների 2^Q համախմբությունը կլինի կավարաձև կարգավորված բազմություն "$\subseteq$" մասնակի կարգի նկատմամբ և նշանակվում է $2^Q(\subseteq)$-ով: Այս "$\subseteq$" հարաբերությունը կոչվում է տեսաբազմային ներդրում: Այստեղ,

$$\sup\{X_1,X_2\}=X_1\cup X_2,\ \inf\{X_1,X_2\}=X_1\cap X_2,\ X_1,X_2\in 2^Q:$$

Այս բանաձևերը ճիշտ են նաև ցանկացած թվով ենթաբազմությունների դեպքում:

Լեմմա 3: Եթե $A(\le)$ զույգը կավարաձև կարգավորված բազմություն է, ապա $\sup X$-ը և $\inf X$-ը գոյություն ունեն ցանկացած ոչ դատարկ $X\subseteq A$ վերջավոր ենթաբազմության համար: Մասնավորապես, վերջավոր կավարաձև կարգավորված բազմությունը սահմանասակ է: Եթե $A(\le)$ զույգը մասնակի կարգավորված բազմություն է և $\sup\{a,b\}$-ն և ($\inf\{a,b\}$-ն) գոյութուն ունի ցանկացած $a,b\in A$ տարրերի համար, ապա $\sup(X)$-ը ($\inf(X)$-ը) գոյություն կունենա ցանկացած ոչ դատարկ $X\subseteq A$ վերջավոր ենթաբազմության համար:

Ապացուցում: Լեմմն ապացուցվում է վերիանգման եղանակով՝ ըստ $|X|=n$ բնական թվի: Եթե $n=1$ կամ $n=2$, ապա պնդումը ճիշտ է: Ենթադրենք պնդումը ճիշտ n-ից փոքր կարգ ունեցող $X\subseteq Q$ ենթաբազմությունների համար: Դիցուք $|X|=n$ և $X=\{x_1,x_2,...,x_n\}$: Տեղի ունեն

$$\sup X=\sup\{\sup\{x_1,...,x_{n-1}\},x_n\}$$

և

$$\inf X=\inf\{\inf\{x_1,...,x_{n-1}\},x_n\}$$

հավասարությունները: Օրինակ, եթե $\sup\{x_1,...,x_{n-1}\}=a$ և $\sup\{a,x_n\}=b$, ապա $x_i\le a\le b$, որտեղ $i=1,...,n-1$ և $x_n\le b$: Հետևաբար, $x_i\le b$, որտեղ $i=1,...,n$, այսինքն՝ b-ն $X\subseteq Q$ ենթաբազմության վերին եզր է: Դիցուք $x_i\le c$, որտեղ $i=1,...,n$: Հետևաբար $a\le c$ և $x_n\le c$, այսինքն c-ն կլինի $\{a,x_n\}\subseteq Q$ ենթաբազմության վերին եզրը, ուստի՝ $b\le c$: Այսպիսով, b-ն $X\subseteq Q$ ենթաբազմության վերին ճշգրիտ եզրն է:

Եթե $A(\le)$ զույգը վերջավոր կավարաձև կարգավորված բազմություն է, ապա $\sup A$-ն կլինի նրա մեծագույն տարրը, իսկ $\inf A$-ն՝ փոքրագույն տարր [2, 44-47]:

Երկու երկտեղ գործողությամբ $Q(+,\cdot)$ համրահաշիվը կոչվում է կավար, եթե նրա կամայական $x, y, z \in Q$ տարրերի համար

$x + x = x,\ \ x \cdot x = x$ (ինքնահամընկնման նույնություններ),

$x + y = y + x,\ x \cdot y = y \cdot x$ (տեղափոխական նույնությունը),

$(x + y) + z = x + (y + z),\ \ (x \cdot y) \cdot z = x \cdot (y \cdot z)$ (զուգորդական նույնություններ),

$x \cdot (x + y) = x,\ \ x + xy = x$ (կլանման նույնություններ) [2, 681]:

$Q(+,\cdot)$ կավարը կոչվում է սահմանափակ, եթե $+$ և $\cdot$ գործողություններն օժտված են միավորներով, որոնք համապատասխանաբար նշանակվում են 0-ով և 1-ով՝

$$x \cdot 1 = x,$$
$$x + 0 = x$$

Ցանկացած $x \in Q$ տարրի համար և, համաձայն կլանման նույնությունների

$$1 + x = 1 + 1 \cdot x = 1,$$
$$0 \cdot x = 0(0 + x) = 0 :$$

Հետևաբար, համապատասխան $Q^{\vee} = Q(\le)$ կավարաձև կարգավորված բազմության մեջ՝ $0 \le x \le 1$ ցանկացած $x \in Q$ տարրի համար, որով էլ հենց պայմանավորված է սահմանափակ կավարի անվանումը: Եվ հակառակը, եթե $Q(\le)$ կավարաձև կարգավորված բազմությունն օժտված է մեծագույն և փոքրագույն տարրերով, ապա համապատասխան $Q^{\wedge} = Q(+,\cdot)$ կավարը կլինի սահմանափակ:

$Q(+,\cdot)$ կավարը կոչվում է բուլյան հանրահաշիվ, եթե նրա համար տեղի ունեն հետևյալ երեք պայմանները.

1) այն բաշխական է;

2) այն սահմանափակ է;

3) նրա յուրաքանչյուր տարր օժտված է բուլյան լրացումով, այսինքն՝ ցանկացած $x \in Q$ տարրի համար գոյություն ունի այնպիսի $x' \in Q$ տարր, որ

$$\begin{cases} x + x' = 1, \\ x \cdot x' = 0, \end{cases}$$

որտեղ x'-ը կոչվում է x-ի բուլյան լրացում [2, 691]:

Այդ դեպքում, համապատասխան $Q^{\vee} = Q(\leq)$ կավարաձև կարգավորված բազմությունը ևս կոչվում է բուլյան: Հետևաբար, եթե $Q(\leq)$ կավարաձև կարգավորված բազմությունը բուլյան է, ապա այդպիսին կլինի նաև $Q(\geq)$ կավարաձև կարգավորված բազմությունը:

Լեմմ 1: Ցանկացած բուլյան հանրահաշվում $0' = 1, 1' = 0$, և տեղի ունեն հետևյալ նույնությունները՝

$$\left.\begin{array}{l} (x')' = x, \\ (x + y)' = x' \cdot y', \\ (x \cdot y)' = x' + y' \end{array}\right\}$$ (Դե Մորգանի նույնություններ (օրենքներ)):

Ապացուցում: Իրոք, երկակի բաշխականության համաձայն, կունենանք՝

$$\begin{aligned} (x + y) + (x' \cdot y') &= (x + x'y') + y = (x + x')(x + y') + y = \\ &= 1(x + y') + y = x + y' + y = x + 1 = 1, \end{aligned}$$

$$(x + y)(x'y') = xx'y' + yx'y' = 0 + 0 = 0:$$

Դե Մորգանի երկրորդ նույնությունն ակնհայտորեն բխում է նրա առաջին նույնությունից և $(x')' = x$ պայմանից:

Լեմմ 2: Կամայական $Q(+,\cdot)$ բուլյան հանրահաշվում տեղի ունեն

$$X\Big(x, Y(y,z)'\Big)' = Y\Big(X(x,y')', X(x,z')'\Big),$$

$$X\Big(Y(x,y)', z\Big)' = Y\Big(X(x',z)', Y(y',z)'\Big)$$

հավասարությունները ցանկացած $x, y, z \in Q$ տարրերի և ցանկացած $X, Y \in \{+,\cdot\}$ գործողությունների համար:

Ապացուցում: Անմիջական ստուգման եղանակով, երբ

$(X,Y) = (+,\cdot)$, $(X,Y) = (\cdot,+)$, $(X,Y) = (+,+)$, $(X,Y) = (\cdot,\cdot)$

Կասենք, որ $Q(+,\cdot)$ սահմանափակ կավարը բավարարում է բուլյան լրացումների գոյության պայմանին , եթե նրա յուրաքանչյուր տարր ունի բուլյան լրացում: Հետևյալ երկու արդյունքները կապված են բուլյան հանրահաշվի սահմանման հետ:

Թեորեմ 1 (Ֆոն Նեյման): Բուլյան լրացումների միակության պայմանին բավարարող ցանկացած սահմանափակ և մոդուլյար կավար կլինի բաշխական, հետևաբար, և բուլյան հանրահաշիվ:

Փոքրագույն (զրոյական) տարրով $Q(\le)$ կավարաձև կարգավորված բազմություն ատոմները կոչվում են նաև համապատասխան $Q^{\wedge} = Q(+,\cdot)$ կավարի ատոմներ:

Զրոյական տարրով կավարը կոչվում է ատոմական, եթե նրա յուրաքանչյուր $x \neq 0$ տարր պարունակում է որևէ a ատոմ, այսինքն՝ $a \le x$: Օրինակ, զրոյական տարրով յուրաքանչյուր վերջավոր կավար ատոմական է:

Թեորեմ 2 (Ուլրդ): Բուլյան լրացումների միակության պայմանին բավարարող ցանկացած սահմանափակ և ատոմական կավար կլինի բաշխական, հետևաբար, և բուլյան հանրահաշիվ [2, 692]:

Օրինակներ:

1) Բազմությունների յուրաքանչյուր հանրահաշիվ հանդիսանում է բուլյան հանրահաշիվ: Մասնավորապես, կամայական A բազմության բոլոր ենթաբազմությունների դասը բուլյան հանրահաշիվ է, որը նշանակվում է 2^A-ով և որի կավարային գործողությունները որոշվում են հետևյալ կերպ՝

$$X + Y = X \cup Y,$$
$$X \cdot Y = X \cap Y,$$
$$X' = \frac{A}{X},$$

որտեղ $X, Y \in 2^A$:

2) Դիցուք p-ն պարզ թիվ է, իսկ N_p-ն բոլոր այն n բնական թվերի բազմությունն է, որոնց համար

$$n = 1 \cdot p_1 \cdot p_2 \cdots p_k (n),$$

որտեղ բոլոր p_i արտադրիչները միմյանցից տարբեր և p-ն չգերազանցող պարզ թվեր են: N_p-ն կլինի բուլյան հանրահաշիվ, եթե որպես $m, n \in N_P$ բնական թվերի գումար վերցնենք նրանց ամենափոքր ընդհանուր բազմապատիկը, իսկ որպես արտադրյալ՝ նրանց ամենամեծ ընդհանուր բաժանարարը:

3) Երկու տարրանի $\{0,1\}$ թվային բազմությունը դառնում է բուլյան հանրահաշիվ, եթե $x, y \in \{0,1\}$ թվերի գումար և արտադրյալ ասելով

հասկանանք $\max\{x,y\}$-ը և $\min\{x,y\}$-ը, իսկ $x'=1-x$: Այս դեպքում ընդունված են նաև հետևյալ հանրահայտ նշանակումները՝

$$x\vee y=\max\{x,y\},$$
$$x\wedge y=\min\{x,y\},$$

որտեղ $x,y\in\{0,1\}$: Այսպիսով հանգում ենք 2-տարրանի բուլյան հանրահաշվի գումարման և բազմապատկման գործողություններին՝

$$0\vee 0=0 \quad 0\wedge 0=0$$
$$0\vee 1=1 \quad 0\wedge 1=0$$
$$1\vee 0=1 \quad 1\wedge 0=0$$
$$1\vee 1=1 \quad 1\wedge 1=1$$

4) Որևէ փորձում հանդիպող բոլոր պատահարների բազմությունը կազմում է բուլյան հանրահաշիվ՝ պատահարների նկատմամբ սահմանվող հայտնի գործողությունների նկատմամբ:

5) Իրական թվերի $[a,b]$ հատվածի բոլոր այն ենթաբազմությունների դասը, որոնք չափելի են Լեբեգի իմաստով, կազմում է բուլյան հանրահաշիվ՝ տեսա-բազմային գործողությունների նկատմամբ: Այստեղ $[a,b]$ հատվածի փոխարեն կարելի է դիտարկել իրական թվերի ցանկացած բազմություն, որը չափելի է Լեբեգի իմաստով: Մյուս կողմից, $[a,b]$ հատվածի բոլոր չափելի ենթաբազմությունների փոխարեն կարելի է դիտարկել նրա բոլոր բուլյան ենթաբազմությունների դասը, որը նույնպես կլինի բուլյան հանրահաշիվ:

6) X տոպոլոգիական տարածության բոլոր այն ենթաբազմությունների դասը, որոնք միաժամանակ բաց են և փակ, կազմում է բուլյան հանրահաշիվ՝ տեսաբազմային գործողությունների նկատմամբ: Այս բուլյան հանրահաշիվը կոչվում է X տոպոլոգիական տարածության բաց-փակ ենթաբազմությունների բուլյան հանրահաշիվ:

Համեմատելով 2-տարրանի բուլյան հանրահաշվի գործողությունները $Z_2(+,\cdot)$ մնացքների օղակի գործողությունների հետ, նկատում ենք հետևյալ կապը՝

$$x\vee y=x+y+xy,$$
$$x\wedge y=x\cdot y,$$
$$x+y=(x\wedge y')\vee(y\wedge x'):$$

Ընդհանուր դեպքում, բուլյան հանրահաշիվները գտնվում են փոխադարձ կապի մեջ, այսպես կոչված, բուլյան օղակների հետ: $Q(+,\cdot)$ օղակը

կոչվում է բուլյան օղակ, եթե այն զուգորդական է, տեղափոխական է, օժտված e միավորով և $x^2 = x$ ցանկացած $x \in Q$ տարրի համար: Բուլյան օղակում $(x+x)^2 = x+x$ պայմանից բխում է $x+x=0$ հավասարությունը:

Բուլյան հանրահաշիվների նկարագրության վերաբերյալ հիմնական արդյունքներն ապացուցվել են Ստոունի կողմից:

Թեորեմ 3: (Ստոուն) 1) Եթե $Q(+,\cdot)$-ը բուլյան հանրահաշիվ է և

$$x \oplus y = xy' + yx',$$

ապա $Q(\oplus,\cdot)$-ը բուլյան օղակ է:

2) Եվ հակառակը, եթե $Q(\oplus,\cdot)$-ը բուլյան օղակ է և

$$x + y = x \oplus y \oplus xy,$$

ապա $Q(+,\cdot)$-ը բուլյան հանրահաշիվ է, որտեղ $x' = e \oplus x$:

Ապացուցում: 1) Անմիջական ստուգման եղանակով: Իրոք,

$$x \oplus y = y \oplus x,$$

$$(x \oplus y) \oplus z = xyz + xy'z' + yx'z' + zx'y' = x \oplus (y \oplus z),$$

$$x \oplus 0 = x,$$

$$x \oplus x = 0,$$

$$x(y \oplus z) = xyz' + xzy' = xy \oplus xz,$$

որտեղ 0-ն բուլյան հանրահաշվի փոքրագույն տարրն է:

2)-ը ևս ապացուցվում է անմիջական ստուգման եղանակով [2, 694]:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Միքայելյան Հ. Ս., Բարձրագույն հանրահաշվի դասընթաց, Երևան, «Էդիթ Պրինտ» հրատ., 2000, 352 էջ:
2. Մովսիսյան Յու. Մ., Բարձրագույն հանրահաշիվ և թվերի տեսություն, Երկրորդ հրատարակչություն, Երևան, «Զանգակ-97» հրատ., 2008, 729 էջ:
3. Մովսիսյան Յու. Մ, Թվերի տեսություն, Երևան, «Զանգակ-97», 2004, 332 էջ:
4. Курош А. Г., Лекции по обшей алгебре, Москва, изд. «Наука», 1977, 431 с.

Решетка и булева алгебра

Саакян Рузанна
АрГУ, Математика, 3-ий курс

Резюме

Ключевые слова: *частичный порядок, решетка, множество, подмножество, соотношение, булева алгебра, булева дополнение, булева кольцо*

В работе была представлена идея решетки и алгебры булева. То, что в настоящее время необходимо для создания современного цифрового оборудования на языках программирования, обычно обозначается сокращенно как bool, а также существует в качестве базовых данных во всех современных языках программирования. Булева алгебра играет ключевую роль в развитии цифровой электроники. Он также используется в статистике и теории множеств.

Lattices and Boolean Algebra

Sahakyan Ruzanna
ASU, Mathematics, 3rd course

Summary

Key words: *partial order, lattice, plurality, subset, proportion, boolean algebra, boolean supplement, boolean ring*

The idea of lattice and Boolean algebra was presented in the work. What is currently needed to create modern digital equipment in programming languages is usually abbreviated as bool, and also exists as a basic data in all modern programming languages. Boolean algebra plays a key role in the development of digital electronics. It is also used in statistics and set theory.

ԿԵՆՍԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՔԻՄԻԱ

БИОЛОГИЯ И ХИМИЯ

BIOLOGY AND CHEMISTRY

Լակտոզայի ցածր պարունակությամբ կաթնաթթվային մթերքի մշակում բուսական հավելումով

Բալայան Էդուարդ
ՀԱԱՀ, Կաթի, կաթնամթերքի, մանկական և ֆունկցիոնալ սննդի տեխնոլոգիա, 5-րդ կուրս
Գիտական ղեկավար՝ տեխն. գ. թ., դոցենտ Ա. Գրիգորյան

Հանգուցային բառեր. *հիպոլակտազիա, կաթնաշաքարի հիդրոլիզ, ֆերմենտային պատրաստուկ, բրոկոլիի խյուս, կաթնաթթվային մթերք*

Կաթնաշաքարի նկատմամբ անտանելությամբ տառապող մարդկանց համար մշակվել է կաթնաթթվային մթերք՝ լակտոզայի ցածր պարունակությամբ: Կաթնաշաքարի պարունակությունը մթերքում նվազեցնելու նպատակով կաթնային հումքում իրականացվել է ֆերմենտատիվ հիդրոլիզ Ha-Lactase 5200 ֆերմենտատիվ պատրաստուկի կիրառմամբ: Որոշվել են հիդրոլիզի անցկացման հիմնական տեխնոլոգիական պարամետրերը: Որպես կենսաբանական ակտիվ նյութերի աղբյուր օգտագործվել է բրոկոլիից պատրաստված խյուսը, որի ավելացման օպտիմալ չափաբաժինը սահմանվել է 10-15 %: Կազմվել է մթերքի պատրաստման համար բաղադրագիր:

Նախաբան

Վերջին ժամանակներում հիպոլակտազիան (լակտոզայի նկատմամբ անտանելիություն) հանդիպում է ոչ միայն երեխաների և տարեցների մոտ, այլ նաև բնակչության այլ տարիքային խմբերի ներկայացուցիչների մոտ, որի պատճառով տարեց-տարի մեծանում են լակտոզայի ցածր պարունակությամբ մթերքների արտադրության ծավալները և ընդլայնվում է դրանց տեսականին [7]:

Թթու կաթնամթերքները՝ պայմանավորված օգտակար հատկություններով և դյուրամարսությամբ, իրենց ուրույն տեղն են զբաղեցնում բնակչության սննդակարգում [2; 3; 1]:

Բնակչության առողջ սննդում առաջնային դերը տրվում է նոր, ըստ կազմի հավասարակշռված, ֆունկցիոնալ բաղադրիչներով հարստացված մթերքների ստեղծմանը:

Ֆունկցիոնալ նշանակության մթերքների ստացման համար օգտագործվում են բարձր կենսաբանական ակտիվությամբ օժտված հումքի տարբեր տեսակներ:

Այդ տեսակետից դժվար է գերագնահատել բուսական ծագման հումքի դերը: Հայտնի է, որ կենսաբանական ակտիվ նյութերի բարձր պարունակությամբ բուսական հավելումների օգտագործումը հնարավորություն է ընձեռում հարստացնելու պատրաստի մթերքի վիտամինային, հանքային և ածխաջրային կազմը [5]:

Ելնելով վերը նշվածից, մեր աշխատանքի նպատակն է եղել բուսական լցոնի ավելացմամբ կաթնաշաքարի ցածր պարունակությամբ կաթնաթթվային մթերքի ստացումը:

Նյութը և մեթոդները

Փորձերը կատարվել են ՀԱԱՀ-ի Անասնաբուծական մթերքների վերամշակման տեխնոլոգիաների ամբիոնում: Լակտոզայի ցածր պարունակությամբ կաթնաթթվային մթերքի պատրաստման համար օգտագործվել է կաթնաշաքարի ցածր պարունակությամբ կաթ: Լակտոզայի պարունակությունը կովի կաթում նվազեցնելու նպատակով կիրառվել է ֆերմենտատիվ հիդրոլիզ: Կաթնաշաքարի հիդրոլիզի համար օգտագործվել է Chr. Hansen ընկերության Ha-lactase 5200 ֆերմենտային պատրաստուկը: Ha-Lactase 5200-ը խիստ մաքրված ստանդարտացված հեղուկ չեզոք β-գալակտոզիդազն է (լակտազա): Արտադրվում է բուսական սուբստրատում խորը ֆերմենտացմամբ՝ խմորասնկերի Kluyveromyces lactis շտամի կիրառմամբ: Կաթում լակտոզայի պարունակությունը որոշել ենք ռեֆրակտոմետրիկ եղանակով՝ ИРФ-464 մակնիշի ռեֆրակտոմետրի օգնությամբ: Կաթնաշաքարի հիդրոլիզի աստիճանը որոշել ենք հաշվարկային եղանակով:

Յոգուրտի պատրաստման համար օգտագործվել է կովի կաթ, որի ֆիզիկաքիմիական ցուցանիշներն են՝ յուղայնությունը 1 %, տիտրվող թթվությունը 18 ^{0}Թ, խտությունը 1029,2 կգ/մ^3, չոր նյութերի պարունակությունը 9,4 %: Խառնուրդում չոր ճարպազերծ կաթնային նյութերի պարունակությունը ստանդարտի պահանջներին համապատասխանեցնելու նպատակով օգտագործվել է չոր յուղազուրկ կաթ:

Որպես մակարդման միկրոֆլորա օգտագործվել է դանիական Hansen ընկերության անմիջական ավելացման յոգուրտային լիոֆիլացված մակարդ DVS YF- L811, որի կազմի մեջ մտնում են Str. Thermophilus և Lbc. delbrueckii supsp. bulgaricus կաթնաթթվային մանրէները:

Որպես կենսաբանական ակտիվ նյութերի աղբյուր օգտագործվել է բրոկոլիի խյուսը: Բրոկոլին ունենալով ցածր կալորիականություն,

առանձնանում է վիտամիններով և հանքայն նյութերով չափազանց հարուստ քիմիական կազմով: Նրա կանոնավոր օգտագործումը նվազեցնում է քաղցկեղի առաջացման ռիսկը, դանդաղեցնում ծերացման գործընթացը, բարձրացնում դիմադրողականությունը ինֆեկցիաների նկատմամբ, ցուցաբերում է իմունախթանող, հակաբորբոքային և հակաօքսիդանտ ազդեցություն [8]: Բրոկոլիից պատրաստված բանջարեղենային խյուսը ավելացնում են յոգուրտին հոսքում՝ փաթեթավորումից առաջ:

Կաթի և կաթնաթթվային մթերքի տիտրվող թթվությունը որոշել ենք տիտրիմետրիկ եղանակով ըստ ԳՕՍՏ 3624-ի, չոր նյութերի զանգվածային բաժինը՝ չորացման եղանակով, ըստ ԳՕՍՏ 3626-ի: Յուղայնությունը որոշել ենք Հերբերի թթվային եղանակով՝ ըստ ԳՈՍՏ 5867–ի, խտությունը արեոմետրի օգնությամբ՝ ըստ ԳՈՍՏ 3625–ի:

Պատրաստի մթերքի նմուշների զգայորոշման ցուցանիշների գնահատումը կատարվել է ըստ 5 բալային համակարգի:


Արդյունքները և վերլուծությունը

Ըստ Ա.Մ.Նոգամերի յոգուրտում առկա կենդանի մանրէները խմորում են կաթնաշաքարի մոտ 30%-ը, այսինքն մոտ 1,6 գ՝ 100 գ մթերքի հաշվով: Հետևաբար, հիպոլակտազիայով տառապող մարդկանց համար նախատեսված յոգուրտի կաթնային խառնուրդում կաթնաշաքարի նախնական հիդրոլիզը պետք է իրականացվի մինչև 3,04-3,52 % լակտոզայի մնացորդային պարունակությունը [6]:

Հաշվի առնելով կաթնաշաքարի պարունակությունը նորմալացված խառնուրդում նախատեսվել է կաթում իրականացնել կաթնաշաքարի հիդրոլիզ մինչև նրա նախնական պարունակության առնվազն 40%-ը:

Ֆերմենտի ներգործությունը և հետևաբար հիդրոլիզի աստիճանը կախված են մի շարք գործոններից, այդ իսկ պատճառով իրականացվել են փորձեր երկու ուղղություններով:


Ուսումնասիրվել է կաթնաշաքարի հիդրոլիզի աստիճանի կախվածությունը ֆերմենտի կոնցենտրացիայից (%) և հիդրոլիզի ջերմաստիճանից: Պաստերիզացված և պաղեցված կաթին ավելացված Ha-Lactase ֆերմենտի քանակը փորձնական տարբերակներում կազմել է. 0,02%; 0,05% և 0,1%: Փորձը կատարվել է 20-ից 50 °C ջերմաստիճանի սահմաններում, 4 ժամվա ընթացքում: Արդյունքները ներկայացված են գծապատկեր 1-ում:



Գծ 1. Կաթում լակտոզայի հիդրոլիզի աստիճանի կախվածությունը ջերմաստիճանից և ֆերմենտի կոնցենտրացիայից

Նկար 1-ում ներկայացված փորձնական տվյալների վերլուծությունը ցույց է տալիս, որ 20-ից մինչև 40 °C ջերմաստիճանի բարձրացման դեպքում կաթնաշաքարի հիդրոլիզի աստիճանը մեծանում է և նկատելիորեն նվազում՝ ջերմաստիճանի հետագա աճով մինչև 50 °C: Կաթնաշաքարի հիցրոլիզի աստիճանը կազմում է 40%, երբ հիդրոլիզի գործընթացը իրականացվում է 40°C ջերմաստիճանում՝ 0,02% ֆերմենտի ավելացմամաբ և 30 ու 50°C ջերմաստիճանում՝ 0,05% ֆերմենտի ավելացմամբ: 20°C ջերմաստիճանում նման արդյունք ստանալուց ֆերմենտի ծախսը մեծանում և հասնում է մոտ մինչև 0,07%:

Հետազոտվել է նաև կաթնաշաքարի հիդրոլիզի աստիճանի կախվածությունը ֆերմենտի կոնցենտրացիայից (%) և գործընթացի տևողությունից (ժ): Լակտոզայի հիդրոլիզի աստիճանի վրա գործընթացի տևողության ազդեցությունը որոշելու համար պաստերիզացված և պաղեցված կաթին (38±1) °C ջերմաստիճանում ավելացվել է 0,02-ից մինչև 0,10% ֆերմենտի պատրաստուկ: Հիդրոլիզի գործընթացն իրականացվել է ջերմաստիճանի հաստատուն արժեքով՝ (38±1) °C: Փորձի արդյունքները ներկայացված են գծապատկեր 2-ում:



Գծ 2. Կաթում լակտոզայի հիդրոլիզի աստիճանի կախվածությունը գործընթացի տևողությունից և ֆերմենտի կոնցենտրացիայից

Վերլուծելով կաթում լակտոզայի հիդրոլիզի աստիճանի փոփոխությունը՝ կախված գործընթացի տևողությունից և ավելացված ֆերմենտի քանակից, հարկ է նշել, որ կաթում լակտոզայի հիդրոլիզի աստիճանը ավելի բարձր է այն նմուշներում, որտեղ ֆերմենտի կոնցենտրացիան և հիդրոլիզի տևողությունը ավելի մեծ են: Հետևաբար կարգավորելով գործընթացի տևողությունը և ֆերմենտի կոնցենտրացիան՝ հնարավոր է ապահովել լակտոզայի հիդրոլիզի պահանջվող աստիճանը:

Այսպիսով, կատարված ուսումնասիրությունների և ստացված արդյունքների վերլուծության հիման վրա հաստատվել են կաթնային հումքում կաթնաշաքարի հիդրոլիզացման գործընթացի օպտիմալ պարամետրերը՝

- Ha-Lactase ֆերմենտի կոնցենտրացիան՝ 0,05±0,01 %;
- հիդրոլիզի գործընթացի ջերմաստիճանը՝ (38±1) ° C;
- լակտոզայի հիդրոլիզի գործընթացի տևողությունը՝ (2,5±0,5) ժ:

Բրոկոլիի խյուսի ավելացման օպտիմալ չափաքանակը որոշելու նպատակով պատրաստվել են բրոկոլիով յոգուրտներ՝ 5, 10, 15, 20, 25% լցոնի ավելացմամբ:

Բարձր զգայորոշման ցուցանիշներ գրանցվել են 10 և 15% խյուսի

ավելացմամբ պատրաստված նմուշներում: Նրանք ունեին մաքուր կաթնաթթվային համ և հոտ՝ բրոկոլիի թույլ կամ չափավոր արտահայտված համով և հոտով: Նմուշները ունեին կանաչավունից բաց կանաչ գույն՝ համաչափ մթերքի ամբողջ ծավալով: Պատրաստի արտադրանքում խյուսի քանակի ավելացման հետ մեկտեղ մթերքը ձեռք է բերել բրոկոլիի վառ (20%-ի դեպքում) կամ սուր (25%-ի դեպքում) արտահայտված համ և հոտ:

Կատարվել են հետազոտություններ պատրաստված յոգուրտի նմուշներում տիտրվող թթվության որոշման ուղղությամբ: Արդյունքները ներկայացված են թիվ 1 աղյուսակում:

Աղյուսակ 1

Կաթնաթթվային մթերքի տիտրվող թթվությունը


Ցուցանիշի անվանումը	Բրոկոլիի խյուսի ավելացման չափաբաժինը, %					
	0	5	10	15	20	25
Մթերքի տիտրվող թթվությունը, °Թ	77±2	80±3	84±2	86±2	89±3	91±3

Ինչպես երևում է աղյուսակի տվյալներից, մթերքի բոլոր նմուշներում թթվությունը գտնվում է նորմայի սահմաններում [4]: Բրոկոլիի խյուսի ավելացվող չափաքանակի աճին զուգընթաց նկատվում է թթվության որոշակի աճ, ինչը կարող է պայմանավորված լինել բրոկոլիում առկա ածխաջրատների դրական ազդեցությամբ կաթնաթթվային մանրէների աճի և զարգացման վրա:

Կաթնաթթվային մթերքի համային ցուցանիշը բարելավելու համար ավելացվել են տարբեր համեմունքներ՝ օրեգանո, հիլ, մշկընկույզ, համեմի սերմ:

Ինչպես երեևում է գծապատկեր 3-ից, բարձր միավորների են արժանացել հիլի և համեմի սերմի ավելացմամբ ստացված նմուշները:

Լակտոզայի ցածր պարունակությամբ մթերքի պատրաստման համար օգտագործվող բաղադրիչների քանակները բերված են աղյուսակ 2-ում:



Գծ 3. Տարբեր համեմունքներով պատրաստված լակտոզայի ցածր պարունակությամբ կաթնաթթվային մթերքի սպառողական գնահատականը:

Աղյուսակ 2

Բաղադրագիր բրոկոլիով յոգուրտի (1 տ մթերքի հաշվով)

Անվանում	**Քանակը (կգ)**
Կաթ	846,9
Բրոկոլիի լցանյութ	150
ՅՉԿ	2
Կայունացուցիչ	1
Համեմունք (հիլ)	0,1

Եզրակացություն

Մշակվել է թթու կաթնամթերք՝ լակտոզայի ցածր պարունակությամբ: ՈՒսումնասիրվել է Ha-lactase 5200 ֆերմենտային պատրաստուկի ազդեցությունը կաթնաշաքարի հիդրոլիզի գործընթացի վրա և հաստատվել են կաթնային հումքում կաթնաշաքարի ֆերմենտատիվ հիդրոլիզի օպտիմալ պարամետրերը՝ ջերմաստիճանը 38±1 °C, տևողությունը 2,5 ± 0,5 ժ, ֆերմենտի կոնցենտրացիան 0,05±0,01 %:

Որպես լցանյութ ընտրվել է բրոկոլիի խյուսը, որի ավելացման օպտիմալ չափաքանակը կազմում է 10-15%: Մթերքի համը և հոտը բարելավելու նպատակով ավելացվել է հիլ՝ 0,01 %-չափով: Հիլը հարուստ է C վիտամինով, հանդիսանում է հակաօքսիդանտ, միզամուղ միջոց,

հանգստացնում է ռևմատիկ բնույթի ցավերը: Այն օգտագործվում է շաքարային դիաբետի բուժման ժամանակ՝ որպես արյան մաքրման և լյարդի տոնայնությունը բարձրացնող միջոց, ինչպես նաև աղիների աշխատանքը բարելավող միջոց:

Համակցված մթերքի արտադրությունը հնարավորություն է ընձեռնում ընդլայնելու թթու կաթնամթերքների տեսականին: Այն ավելի նպատակահարմար է տարեց անձանց համար, որոնք ավելի հաճախ են տառապում լակտազա ֆերմենտի ակտիվության նվազեցմամբ:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Բեգլարյան Ռ. Ա., Բեգլարյան Ա. Ռ. Կաթի և կաթնամթերքիների տեխնոլոգիա (ուսումնական ձեռնարկ). - Երևան, ՀԳԱ, 2003թ. – 177 էջ:
2. Դիլանյան Զ. Ք. Կաթի և կաթնամթերքի տեխնոլոգիա. – Եր.: Հայպետզյուղհրատ, 1962. – 465 էջ:
3. Богатова О. В., Стадникова С.В., Богатов А. И., Соколова О. Я. Технология молочных продуктов лечебно-профилактического питания. – Оренбург, 2009. -180 с.
4. ГОСТ 31981-2013 Межгосударственный стандарт. Йогурты.
5. Кацерикова Н.В. Технология продуктов функционального питания: Учебное пособие. / Кемеровский технологический институт пищевой промышленности. - Кемерово, 2004. - 146 с.
6. Носкова В. И. Разработка технологии йогурта низколактозного маложирного: авофер. дис…. канд. техн. наук: 05.18.04 / В. И. Носкова. – Углич, 2006. – 26 с.
7. Шуляк Т.Л. Обоснование технологических параметров производства низколактозных ферментированных молочных продуктов / Шуляк Т. Л., Гуща Н. Ф., Сопока А.А. // Современные проблемы техники и технологии пищевых производтв: материалы XIX международной научно-практической конференции, часть 1, Барнаул, 22-23 марта 2018 г. / Алтайский государственный технический университет им. И.Ползунова. – Барнаул: АГТУ, 2018. – С. 205-208.
8. «Брокколи», https://www.patee.ru/cookingpedia (12.10.2021).

Разработка низколактозного кисломолочного продукта

Балаян Эдуард
НАУА, Технология молока, молочных продуктов, детского и функционального питания, 5-ый курс

Резюме

Ключевые слова: *гиполактазия, гидролиз молочного сахара, ферментный препарат, пюре из брокколи, кисломолочный продукт*

Разработан кисломолочный продукт с низким содержанием молочного сахара для людей, страдающих непереносимостью лактозы. С целью снижения содержания молочного сахара в готовом продукте был проведен ферментативный гидролиз в молочном сырье с применением ферментного препарата Ha-Lactase 5200. Определены основные технологические параметры гидролиза. В качестве источника биологически активных веществ использовали пюре из брокколи, оптималная доза внесения которого составила 10-15%. Составлена рецептура для производства продукта.

Development of Low-Lactose Fermented Milk Product

Balayan Eduard
ANAU, Milk and Dairy Product, Infant Food and Functional Food Technology, 5th course

Summary

Key words: *hypolactasia, hydrolysis of lactose, enzyme preparation, broccoli puree, fermented milk product*

For people suffering from lactose intolerance is developed a lactic acid product with low lactose content. In aim to reduce lactose content in fermented milk product enzymatic hydrolysis was performed using Ha-lactase 5200 enzyme preparation. The main technological parameters of hydrolysis have been determined. As a source of biologically active substances was used broccoli puree, the optimal dose of wich was set at 10-15%. A recipe for product production is calculated.

Կապան և Քաջարան քաղաքների հարակից էկոհամակարգերի վիճակը հանքարդյունաբերության համատեքստում

Գալստյան Սարե
ՀԱԱՀ, Ագրոէկոլոգիա, 5-րդ կուրս
Գիտական ղեկավար՝ կ. գ. թ. ***Կ. Մարգսյան***

Հանգուցային բառեր: *Տեխնածին գոտի, Ողջի և Խալաջ (Ամանան) գետեր, ռոզման ջուր, ագրոէկոհամակարգ, ծանր մետաղներ, գյուղմշակաբույսեր, աղտոտում*

Ներածություն: Կապանի տարածաշրջանի հանքարդյունաբերությունը միշտ եղել և մնում է Սյունիքի մարզի տնտեսության գերիշխող ուղղությունը, որտեղ տարեկան արտադրանքը կազմում է 8900 տոննա պղնձի և 428 տոննա մոլիբդենի խտանյութ: Տարածաշրջանի 57 հանքավայրերից 33-ը բազմամետաղային են, իսկ 24-ը՝ ոչ մետաղական: Հանքարդյունաբերական արտադրանքը հիմնականում կազմում է մոլիբդենի, պղնձի և ցինկի արտադրությունը: Մետաղական հանքավայրերի և ձեռնարկությունների առաջացրած արտանետումների և տեխնոլոգիական հոսքաջրերի մեջ առավել վտանգավոր են ծանր մետաղները, որոնք անցնելով սնման շղթա, բիոտի և հատկապես մարդու վրա կարող են ունենալ տոքսիկ և անկանխատեսելի ազդեցություններ: Հողում, օդում, ջրում և բույսերի մեջ այդ տարրերի գերազանցումը ՍԹԽ-ի նորմաները լուրջ սպառնալիք կարող են դառնալ մարդու առողջության և նրա սերնդի համար [1, 8]:

Քաջարանի հանքի շահագործումը կատարվում է բաց հանքանյութի ձևով, Կապանինը՝ ընդերքի հանքերից: Քաջարանի հանքային դաշտը գրավում է մոտ 20-22 կմ^2 տարածք, որի հանքաքարում հաշվվում է 70-ից ավելի հանքանյութեր, որոնցից մոտ 40-ը առաջնային են: Ֆաբրիկայում հանքաքարը, ֆլոտացիայի միջոցով մանրացվում է և վերջնական արդյունքում ստացվում է 50 %-ոց մոլիբդենի և 27,5 %-ոց պղնձի պարունակությամբ խտանյութ: Քաջարանի հանքավայրը աշխարհի խոշորագույն 8 հանքերից մեկն է, որտեղ կենտրոնացված է մոլիբդենի համաշխարհային հաշվարկված պաշարների մոտ 6 %-ը (Երկրագնդի մոլիբդենի պաշարի 8 %-ը Հայաստանում է): Քաջարանի հանքավայրում կենտրոնացված է Հայաստանի պղնձի պաշարների մոտ 80 %-ը [7, 8]: Կապանի ընդերքային հանքավայրից տարեկան արդյունահանվում է 400 հազ.

տոննա հանքաքար, իսկ Քաջարանի կոմբինատը մշակում է տարեկան 18 մլն տոննա հանքաքար:

Քաջարանի պղնձամոլիբդենային և Կապանի պղնձահանքային կոմբինատների բացասական ազդեցությունը շրջակա միջավայրում հիմնականում արտահայտվում է օդային և ջրային ավազանի ծանր մետաղներով ու փոշով աղտոտումով: Քաջարանի ՊՄԿ-ի բաց հանքերը, գտնվելով ծովի մակերևույթից ավելի քան 2000 մ բարձրության վրա, մեծ վնաս են հասցնում ավելի ցած գտնվող ագրոցենոզներին և մակերեսային հոսքաջրերին: Հաճախակի կատարվող պայթեցումները օդ են բարձրացնում փոշու հսկայական զանգված, որը քամի օրերին տարածվում է հարակից բուսականության վրա, նստելով բույսերի տերևների մակերեսին, նվազեցնում է ֆոտոսինթեզի ուժգնությունը՝ կրճատելով կենսաբազմազանությունը: Միևնույն ժամանակ, օգտակար ապարների հետ միասին, առաջանում է նաև զգալի քանակությամբ դատարկ ու աղքատ ապարներ, որոնք լցվելով ձորերը՝ աղտոտում են շրջակա միջավայրը: Հետևաբար շահագործվող հանքավայրերի ազդեցությանը գետերի (Ողջի, Աճանան) ջրերի, պոչամբարներից դուրս եկող տեխնոլոգիական հոսքաջրերի, ինչպես նաև այդ ջրերով ոռոգվող հողերի և աճեցվող մշակաբույսերի մեջ ծանր մետաղների վերաբերյալ հավաքական դիտարկումների միջոցով էկոլոգիական վիճակի գնահատումը և բարելավման միջոցառումների մշակումը չափազանց կարևոր է և բխում է հանրապետության արդյունաբերության և գյուղատնտեսության և մասնավորապես Կապանի տարածաշրջանի զարգացման վերաբերյալ մշակված ռազմավարության պահանջներից:

Նյութը և մեթոդը: Ուսումնասիրությունների և դիտարկումների նյութ են հանդիսացել Կապանի տարածաշրջանում գտնվող բնական և ագրոէկոհամակարգերը: Հանքարդյունաբերական ընկերությունների գործունեության ազդեցությունը շրջակա միջավայրի վրա, մասնավորապես՝ Քաջարանի և Կապանի մետաղական հանքավայրերի և հանքահարստացուցիչ կոմբինատների էկոլոգիական ազդեցությունները հարակից էկոհամակարգերի վրա գնահատելու համատեքստում մեր առջև խնդիր ենք դրել

ա) ուսումնասիրել հանքարդյունաբերության հարակից հողատեսքերում ծանր մետաղների պարունակությունը,


բ) ջրային ռեսուրսների աղտոտվածության բնույթը,

գ) բացահայտել հանքավայրերի, ապարային լցակույտերի, տեխնոլոգիական հոսքաջրերի և պոչամբարների ազդեցությունը շրջա-

կա միջավայրի (մթնոլորտ, հող, ջուր, բուսականություն) վրա և ըստ այդմ կատարել առաջարկություններ տարածաշրջանում - էկոլոգիական ռիսկի գործոնները մեղմացնող միջոցառումների վերաբերյալ:

Հիշատակված խնդիրները լուծելու նպատակով իրականացվել են դաշտային դիտարկումներ, հողային, ջրային և բուսականության նմուշառումներ, որոնց մեջ որոշվել է ծանր մետաղների պարունակությունը ատոմային ադսորբցիոն մեթոդով «Հայէկոմոնիտորինգի» և Հ. Պետրոսյանի անվան հողագիտության, ագրոքիմիայի և մելիորացիայի գիտական կենտրոն մասնաճյուղի լաբորատորիաներում AAS.1 սարքի միջոցով, միևնույն ժամանակ համեմատականներ կատարելու համար ուսումնասիրվել է Քաջարանի պղնձամոլիբդենային կոմբինատի հաշվետվություններն ու գրական աղբյուրներում հրատարակված նյութերը [4, 7]:

Արդյունքներ և քննարկում: Ուսումնասիրությունները ցույց են տվել, որ Կապանի տարածաշրջանում գետերն աղտոտվում են բնակավայրերի կոմունալ-կենցաղային կեղտաջրերով, կենցաղային պինդ թափոններով, գյուղատնտեսությունից հետադարձ հոսքերով, հանքարդյունաբերական թափոնաջրերով, բաց հանքերի և պոչամբարների տարածքում տեղումներով ձևավորված մակերևութային հոսքաջրերով (տե՛ս տրամագիր 1):



Տրամագիր 1. Ողջիի ջրավազանի աղտոտման հիմնական աղբյուրները
Աղբյուր՝ Հարավային ՋԿՏ-ի կառավարման պլան

Գետերի միջին և ստորին հոսանքներում՝ մեծ բնակավայրերից ներքև ընկած հատվածներում (Ողջի գետը՝ Քաջարան և Կապան քաղաքներից ներքև), ջրում սննդային ռեժիմի տարրերի պարունակությունը կտրուկ բարձրանում է՝ պայմանավորված քաղաքների կոմունալ-կենցա-

դային կեղտաջրերի հեռացմամբ: Գետերի՝ նշված քաղաքներից ներքև ընկած հատվածներում ջրի որակը լավ (II) դասից նվազում է միջին (III) (Կապանի դեպքում) և վատ (V) (Քաջարանի դեպքում) դասերի՝ ըստ ամոնիում և ֆոսֆատ իոնների [3]:

Գետերի ջրի որակի վրա ճնշում է գործադրում նաև գյուղատնտեսությունը: Ոչ ճիշտ գյուղատնտեսության վարման (պարարտանյութերի և թունաքիմիկատների օգտագործում) արդյունքում աղտոտվում են Ողջիի գետավազանում Արծվանիկ գետի ջրերը: Դաշտերում բարձր չափաբաժնով պարարտացման և թունաքիմիկատներով մշակման արդյունքում, դրանց ավելորդ քանակությունը, լվացվելով ոռոգելի հողատարածքներից, մակերևութային հոսքով թափվում է գետեր՝ աղտոտելով դրանք քիմիական միացություններով:

Հանքարդյունաբերության զարգացման արդյունքում գետերն աղտոտվում են նաև մեծ քանակությամբ ծանր մետաղներով: Մետաղական հանքերի շահագործման արդյունքում, ինչպես նաև գործող կամ արդեն իսկ ռեկուլտիվացված պոչամբարների արտահոսքերից աղտոտվում են Ողջիի գետավազանի Ողջի գետն ու Գեղի, Արծվանիկ, Նորաշենիկ, Կավարտ, Գեղանուշ վտակները:

Հարավային ՋՏԿ-ի Ողջիի գետավազանում Քաջարանի շահագործվող պղնձա-մոլիբդենային կոմբինատի հոսքաջրերի և բաց հանքի տարածքից տեղումներով ձևավորվող մակերևութային հոսքերի ներհոսման արդյունքում Ողջի գետի՝ Քաջարան քաղաքից ներքև ընկած հատվածում ջրի որակը լավ (II) դասից նվազում է միջին (III) և անբավարար (IV) դասերի: Ծանր մետաղներով պայմանավորված նման ցածր որակի ջուրը չի ենթարկվում ինքնամաքրման (շարունակական աղտոտման արդյունքում գետը կորցրել է իր ինքնավերականգնվելու ընդունակությունը) և պահպանվում է Ողջի գետի հոսքով դեպի ներքև, իսկ Կապան քաղաքի օդանավակայանի մոտ ընկած հատվածում՝ Արծվանիկ, Նորաշենիկ և Կավարտ վտակների թափման արդյունքում, էլ ավելի է վատթարանում՝ նվազելով մինչև ջրի վատ (V) որակի դասի: Ըստ ջրաքիմիական մոնիտորինգի տվյալների՝ Ողջիի Արծվանիկ վտակը Արծվանիկի պոչամբարի տարածքում առաջացած ակոսների պատճառով ինտենսիվորեն աղտոտվում է տեղումներով ձևավորվող մակերևութային հոսքաջրերով, ինչպես նաև պոչամբարից զտված ջրերով և արտահոսքերով: Արդյունքում գետի ջրի որակը միջին (III) դասից նվազում է մինչև վատ (V) դասի՝ պայմանավորված տոքսիկ ծանր մետաղներով (կոբալտ, կադմիում, մանգան, մոլիբդեն, ծարիր) և հանքայնացման ռեժիմի տարրերով: Արծվանիկ գետի

միջին և ստորին հոսանքներում, մարդածին ճնշման պայմաններում ամբողջությամբ վնասվել է ջրային էկոհամակարգը. գետի ջրում բացակայում է ջրային կենսաբազմազանությունը (ֆիտոպլանկտոն, զոոպլանկտոն, զոոբենթոս, ձկներ):

Ըստ ջրաքիմիական մոնիտորինգի տվյալների՝ Ողջի գետի Գեղի վտակի՝ Աջաբաջ գյուղի մոտ ընկած հատվածում, ջրի որակը 2013թ. սկսած լավ (II) դասից նվազել է մինչև վատ (V) որակի դասի: Այս հանգամանքը պայմանավորված է «Լեռ-Էքս» ՍՊԸ կողմից ծավալած գործունեությամբ: Չնայած, 2014թ.-ի սեպտեմբեր ամսից «Լեռ-Էքս» ՍՊԸ-ն դադարեցրել է իր գործունեությունը, այնուամենայնիվ, բարձիթողի վիճակում գտնվող Գեղիի պարզարանի հոսքաջրերն անմիջապես Գեղի գետ թափվելուց հետո աղտոտում են այն մանգանով, մոլիբդենով և հանքայնացման ռեժիմի տարրերով: Շնորհիվ բարձր ինքնամաքրման ընդունակության գետի հետագա հոսքում տեղի է ունենում մետաղների նստեցում և մարդածին ճնշման նվազում, որի արդյունքում Նոր Աստղաբերդ բնակավայրից հետո գետի ջրի որակը վերականգնվում է մինչև լավ (II) որակի դասի:

Համաձայն փորձագիտական գնահատականի՝ Ողջիի գետավազանում Քաջարանի, Կապանի և Հանքասարի հանքավայրերի տարածքում մարդածին ճնշման են ենթարկվում նաև համապատասխանաբար՝ Ողջի գետի Ծակքար և Կավարտ վտակները և Գեղի գետի աջակողմյան վտակները, ինչպես նաև Զանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատի հանքարդյունաբերական թափոնների տարածքով հոսող՝ Քաջարան և Փխրուտ գետերի միջև ընկած Ողջի գետի Դարափի աջակողմյան վտակը: Անցնելով հանքարդյունաբերական գոտիներով՝ այս գետերի ջրերը ողողում են հանքավայրի լցակույտերի և պարզարանների հատվածը՝ աղտոտվելով ծանր մետաղներով:

Ողջի գետի որակի մոնիտորինգը իրականացվել է 5 դիտակետով՝ 1.7կմ Քաջա-րանից վերև, 1.8 կմ Քաջարանից ներքև 0.8 կմ Կապանից վերև Կապանի օդանա-վակայանի սահմանի մոտ: Կադմիումի, ցինկի, մանգանի, պղինձի և ֆոսֆատ իոնի կոնցենտրացիաները գետի հոսանքով դեպի ներքև աճում են 10-60%-ով: Պղնձի կոնցենտրացիան Նորաշենիկ գետի գետաբերանում մոտ 13 անգամ փոքր է օդանավակայանի և Քաջարանից ներքև ընկած հատվածի մոտ չափված նույն ցուցանիշից, որը պայմանավորված է նաև գետի ջրի վրա կոմունալ-կենցաղային հոսքաջրերի և գետավազանի հողերի մակերևութային շերտերի էրոզիոն պրոցեսներով [1]:

Հայտնի է, որ հողի քիմիական աղտոտումը հողօգտագործման հետևանքով և քիմիական (օրգանական և անօրգանական նյութերի) կազմի փոփոխությունը հանգեցնում է դրա որակի վատթարացման և վտանգավոր է բիոտի համար [7]: Կապան տարածաշրջանի հողերում ծանր մետաղների բարձր պարունակությունը ոչ միայն արտադրական գործունեության, այլև բարձր ֆոնային պարունակության արդյունք է: Հողերի աղտոտման գնահատման համար ծանր մետաղների փաստացի պարունակությունները համեմատվել են ֆոնային պարունակությունների հետ: Վերջիններիս հաշվարկման համար ֆոնային տեղամաս է ընտրվել քաղաքի հարավարևելյան ծայրամասը, որտեղ տարածված են փոփոխության չենթարկված անդեզիտային պորֆիրիտների վրա զարգացած հողեր:

Կատարված ուսումնասիրությունների արդյունքների վերլուծությունը ցույց է տվել, որ որոշ ծանր մետաղների ֆոնային պարունակությունները գերազանցում են լիթոսֆերային կլարկը. Mo-ի ֆոնը լիթոսֆերային կլարկը գերազանցում է 8.8 անգամ, Cd-ի ֆոնը լիթոսֆերային կլարկը գերազանցում է 5.5, As-ի ֆոնը՝ 4.5, Pb-ի ֆոնը՝ 4.3, Zn-ը՝ 3.2 և Cu-ը՝ 2.7 անգամ: Լիթոսֆերային կլարկի նկատմամբ փոքր գերազանցումներ գրանցվել են նաև Ni-ի (1.5 անգամ) և Sn-ի (1.1 անգամ) համար: Ֆոնային պարունակությունների գերազանցումներ ՍԹԽ-ի նկատմամբ գրանցվել են As-ի համար (3.8 անգամ), ինչպես նաև ոչ նշանակալի գերազանցումներ գրանցվել են Mo, Ni-ի (համապատասխանաբար 1.76 և 1.74 անգամ) և Cu-ի (1.24 անգամ) համար (աղյուսակ 1):

Հողերի սանիտարահիգիենիկ բնութագրի տեսանկյունից էկոլոգիական ռիսկ են ներկայացնում ֆոնային պարունակությունների նկատմամբ գերազանցումներով տարրերը: Կապարը քաղաքի տարածքի հողերի աղտոտման առաջնային տարրն է: Ֆոնը 4.3 անգամ գերազանցում է կլարկը լիթոսֆերայում: Քաղաքի տարածքում առավելագույն կապարային աղտոտվածությունը ունի կետային կառուցվածք և տեղակայված է Ողջի գետի ձախափնյա (քաղաքի հյուսիսային մաս, Կավարտ ավանի շրջանում) և աջափնյա (քաղաքի հարավ) մասերում, ինչպես նաև քաղաքի կենտրոնական հատվածում: Դրանց պարունակությունը փոքր է, սակայն շարունակում է մնալ բարձր՝ քաղաքի արդյունաբերական սուբյեկտների, ավտոտնակների և ավտոճանապարհների հարևանությամբ: Քաղաքի տարածքի հիմնական մասի հողերում կապարի պարունակությունը ֆոնը գերազանցում է 1,3 անգամ:

Աղյուսակ 1

Ծանր մետաղների կլարկը լիթոսֆերայում, ՍԹԽ-ն և Կապանի տարածաշրջանի հողերում դրանց գերազանցումները

Տարրեր	Լիթո-սֆերայի կլարկ	ՍԹԽ	Կապան					
			Ֆոն	Գերազանցում		մգ/կգ (գում.)	Գերազանցում	
	մգ/կգ (գում.)			Կլարկից	ՍԹԽ-ից		ֆոնից	ՍԹԽ-ից
Cu	46.0	100	124	2.7	1.24	410	3.3	4.1
Pb	16.0	100	68	4.3	0.68	237	3.5	2.4
Mo	1.0	5.0	8.8	8.8	1.76	9.7	1.1	1.9
Zn	76.0	300	245	3.2	0.82	231	0.9	0.77
Ni	58.0	50.0	87	1.5	1.74	124	1.4	2.5

Պղինձը քաղաքի տարածքի հողերի աղտոտման նշանակությամբ երկրորդ տարրն է: Ֆոնային պարունակությունը 2.7 անգամ գերազանցում է լիթոսֆերային կլարկը և 1.24 անգամ՝ ՍԹԽ-ը: Քաղաքի տարածքում առավելագույն արժեքներով դաշտը տարածականորեն բաշխվում է Ողջի գետի ձախափնյա մասում (քաղաքի հյուսիսային մասում, Կավարտ ավանի շրջանում), ինչպես նաև քաղաքի կենտրոնական հատվածում: Քաղաքի հիմնական մասի հողերում պղնձի պարունակությունը գերազանցում է ֆոնը 1,3 անգամ:

Նիկելի ֆոնը 1.5 անգամ գերազանցում է լիթոսֆերային կլարկը և 1.74 անգամ հողերի ՍԹԽ-ը: Քաղաքի տարածքում հայտնաբերվել են պարունակությունների երեք մակարդակի դաշտեր: Պարունակությունների երրորդ (III) մակարդակի դաշտը (0.0261-0.0783%) տեղակայվում է քաղաքի հյուսիսում (Ողջի գետի ձախափնյա մասում, Կավարտ ավանի շրջանում), բնութագրվում է կետային ձևակառուցվածքով: Նիկելի պարունակությունների երկրորդ (II) մակարդակի դաշտը (0.0087-0.0261%) ունի տարածման ավելի լայն բաշխում՝ գործնականում զբաղեցնելով քաղաքի ողջ տարածքը: Քաղաքի արևելյան և արևմտյան մասերը զբաղեցված են ֆոնից ցածր (<0.0087%) պարունակությամբ դաշտով:

Հողային ծածկույթին վնաս են հասցնում նաև պոչամբարները և

արտադրական մյուս կոշտ թափոնները: Ըստ կանաչապատման համար բարենպաստության աստիճանի՝ Կապան քաղաքի տարածքը բաժանվում է 2 մասի: Ողջի գետի ձախափնյա լանջերը հիմնականում զուրկ են հողային և բուսական ծածկույթից: Կավարտ գետի ավազանի հողաբուսական ծածկույթին մեծ վնաս են հասցրել Կապանի և Շահումյանի շահագործվող հանքավայրերը: Ողջի գետի, դրա վտակների աջափնյա լանջերը հիմնականում անտառածածկ են, հողային ծածկույթը բարենպաստ է կանաչապատման համար [1]:

Հողում ծանր մետաղների քանակության գերազանցումները անմիջականորեն անդրադառնում են տեղի բուսածածկույթի աճի և զարգացման վրա: Վերջիններս սննդառության պրոցեսում կուտակվում են բույսերում և սննդային շղթայով անցնում մարդու օրգանիզմ՝ թողնելով անցանկալի հետևանքներ:

Կապանի տարածաշրջանի որոշ հատվածներում (Բարաբաթումի ձոր, Սյունիքի գյուղական համայնք, Նորաշենիկ գետի ողողադաշտ) համաձայն ՀՀ ԳԱԱ էկոլոգանոոսֆերային հետազոտությունների կենտրոնի կողմից կատարված ուսումնասիրությունների՝ 17 բուսատեսակներում հայտնաբերվել են ծանր մետաղների պարունակությունների գերազանցումներ: Ուսումնասիրվել են բանջարաբոստանային, հացահատիկային (եգիպտացորեն), յուղատու մշակաբույսեր, տերևավոր բանջարեղեն և պտուղներ [5, 6]:

Հետազոտված բոլոր գյուղատնտեսական մշակաբույսերի (անկախ մշակման տարածքից) մեջ գերակշիռ տարրերը եղել են Cr, Ni և Pb-ը: Cu, Mo և Zn-ի պարունակությունները կազմում են ՍԹԽ մեծությունների մասնաբաժիններ: Sn-ի պարունակություն նշանակալի ցածր են ՍԹԽ-ից:

Բարաբաթում գետի ձորում ուսումնասիրվել է բանջարեղենի երկու և համեմական կանաչու մեկ տեսակ: Ըստ կուտակման գործակցի ինտենսիվության՝ նվազագույնս աղտոտված են սմբուկի պտուղները՝ 4.4 ինտենսիվությամբ: Գումարային աղտոտման մեջ հիմնական մասը բաժին է ընկնում Cr-ին (61%): Ni-ի պարունակությունները գերազանցում են ՍԹԽ-ն 1.6 անգամ: Sn-ի և Cu-ի պարունակությունները տասնյակ անգամ փոքր են ՍԹԽ-ից:

Գումարային առավելագույն աղտոտումը գրանցվել է լոբու համար՝ 18.4 ինտենսիվությամբ, աղտոտման մեջ 50 %-ը բաժին է ընկնում Cr-ին: Ni-ի բաժինը կազմում է 20 %:

Ռեհանի գումարային աղտոտման (14.9 ՍԹԽ) մեջ ևս գերակշռում է

Cr-ը (46.9%): Ni և Pb-ի պարունակությունները համահավասար են (26.5 %):

Հետազոտված մշակաբույսերի աղտոտման մեջ հանքային տարրերի (Cr, Ni, Pb) գերակշռման պատճառն այն է, որ գյուղատնտեսական հողահանդակները գտնվում են բազմաթիվ հանքուղիների թափոնակույտերի ուղղակի հարևանությամբ:

Սյունիք գյուղական համայնքի և Նորաշենիկ գետի ողողադաշտի տնտեսությունների մշակաբույսերում ծանր մետաղների միջինացված պարունակությունները ներկայացված են աղյուսակ 2-ում:

Աղյուսակ 2

Ծանր մետաղների պարունակությունները գյուղատնտեսական մշակաբույսերում (մգ/կգ հում զանգվածում)

Մշակաբույսեր	Սյունիք գյուղական համայնք					Նորաշենիկ գետի ողողադաշտ				
	Cu	Mo	Ni	Pb	Zn	Cu	Mo	Ni	Pb	Zn
Սմբուկ	5.4	0.7	1.2	0.9	6.0	12	1.1	1.4	1.7	8.4
Լոբի	9.8	1.45	2.3	1.7	11.6	16.5	7.5	4.5	2.4	15
Լոլիկ	2.8	0.5	0.8	3.3	3.05	5.8	0.5	1	0.9	3.9
Պղպեղ	7.9	0.9	1.7	1.8	8.9	14.3	1.6	2.1	1.8	7.8
Վարունգ	7.1	0.5	1.4	0.9	4.9	-	-	-	-	-
Դդմիկ	3.5	0.6	0.8	0.8	4.2	14.4	2.2	2.2	2.2	9.6
Ճակնդեղ	3.3	0.45	1.3	0.8	4	9	8	1.4	1.4	5
Կաղամբ	1.3	0.5	0.4	0.5	3.2	7.6	2.5	1.4	1.2	5.9
Կարտոֆիլ	-	-	-	-	-	7.2	1.1	1.1	0.8	4.2
Սոխ	-	-	-	-	-	4.9	0.7	0.8	0.9	4.4
Արևածաղիկ	-	-	-	-	-	22	1.6	6	2.4	24
Եգիպտացորեն	15	9	4.8	3.6	15	16.7	1.5	3.3	2.7	8.3
Սամիթ	6.2	0.8	2.6	1.3	7.25	-	-	-	-	-
Ռեհան	4.4	2.7	1.4	1	5.2	9.8	1	2.5	2.5	9.8
Մաղադանոս	6.8	1.5	2.4	1.7	9.6	-	-	-	-	-
Նեխուր	11	1.9	3.5	3.1	15.4	-	-	-	-	-
Ջներուկ	-	-	-	-	-	1.7	0.2	0.5	0.3	1.7

Սյունիք գյուղական համայնքի տարածքում հետազոտվել են բանջարեղենի յոթ տեսակ (սմբուկ, լոբի, պղպեղ, վարունգ, դդմիկ, ճակնդեղ, կաղամբ), եգիպտացորեն, չորս տեսակի համեմական կանաչի (սամիթ, ռեհան, մաղադանոս, նեխուր): Ըստ ծանր մետաղների կուտակման

ինտենսիվության միջինացված գործակիցների՝ ուսումնասիրված բանջարաբոստանային մշակաբույսերը նվազման կարգով կարելի է դասավորել հետևյալ կերպ. լոբի, պղպեղ, վարունգ, սմբուկ, ճակնդեղ, դդմիկ, լոլիկ, կաղամբ: Ինչպես երևում է շարքից, առավելագույն մեծությունները գրանցվել են լոբու և պղպեղի համար, նվազագույն մեծությունները՝ կաղամբի համար: Եթե մշակաբույսերի հիմնական տեսականու մեջ գերակշռում են երեք հանքային տարրերը (Cr, Ni, Pb), ապա լոբու և պղպեղի գումարային աղտոտման մեջ (առանձին տեղամասերում) մասնակցում են նաև լրացուցիչ տարրեր՝ Cu, Zn և Mo: Համեմական կանաչեղենի դեպքում կարելի է կազմել աղտոտվածության հետևյալ նվազման շարքը. ռեհան, նեխուր, սամիթ, մաղադանոս: Ուսումնասիրված կանաչու բոլոր տեսակներում առաջատար աղտոտիչ տարրերն են Cr, Ni և Pb-ը: Առավելագույն ցուցանիշներ գրանցվել են Cr-ի դեպքում, հատկապես ռեհանի մեջ. ՍԹԽ-ն գերազանցում է 91-ով: Առանձին տեղամասերում տերևավոր բանջարեղենում տարրերի կուտակումը տարբերվում է:

Ծանր մետաղներով աղտոտված են նաև Նորաշենիկ գետի ողողադաշտում տեղակայված ֆերմերային տնտեսությունների տարածքներում աճեցվող մշակաբույսերը: Այս տարածքում հետազոտված բանջարաբոստանային մշակաբույսերի աղտոտվածության գումարային գործակիցների հիման վրա կարելի կազմել հետևյալ շարքը. լոբի, դդմիկ, պղպեղ, սմբուկ, ճակնդեղ, կաղամբ, կարտոֆիլ, լոլիկ, գլուխ սոխ: Ինչպես Սյունիքի գյուղական համայնքում, այստեղ ևս ռեհանը ունի ծանր մետաղների կուտակման բարձր մակարդակ և ցանկալի չէ սննդակարգում օգտագործել: Այս տարածքներում աղտոտման բարձր աստիճանով են բնութագրվում նաև արևածաղկի սերմերը: Բացի Cr, Ni և Pb-ից (89%)՝ աղտոտման մեջ փոքր մաս (11%) ունեն նաև կենսաֆիլ տարրերը՝ Zn, Cu-ը:

Հաշվի առնելով վերոնշյալ տարածքների մշակաբույսերում ծանր մետաղների կուտակման բարձր մակարդակները, էկոտոքսիկոլոգիական ամբողջական գնահատման և մշակաբույսերի էկոլոգիապես անվտանգ տեսականու մշակման համար անհրաժեշտ են տարածաշրջանի բոլոր տնտեսությունների գյուղատնտեսական մշակաբույսերի ցանքերում կիրառել գիտականորեն հիմնավորված միջոցառումների համակարգ, որը կնպաստի ինչպես արտադրության արդյունավետության բարձրացմանը, այնպես էլ էկոլոգիապես անվտանգ սննդամթերքի ստացմանը և այդ ճանապարհով բնակչության առողջ ապրելակերպի ապահովմանը:

Եզրակացություններ և առաջարկություններ

Քաջարանի և Կապանի մետաղահանքերի և հանքահարստացման կոմբինատների էկոլոգիական ազդեցությունների ուսումնասիրությունների հիման վրա հանգել ենք հետևյալ եզրակացությունների.

1. Պոչամբարները զբաղեցնում են հսկայական հողատարածքներ, ինչի պատճառով վերջիններս դուրս են մղվում գյուղատնտեսական հողաշրջանառությունից:
2. Հողերի և ոռոգման ջրերի ծանր մետաղներով աղտոտվածությունը անդրադառնում է մշակաբույսերի որակական ցուցանիշների և սննդակարգում պիտանիության վրա:
3. Տարածաշրջանում ստեղծված էկոլոգիական վիճակը հանդիսանում է տեղի բնակչության շրջանում որոշ անբուժելի հիվանդությունների պատճառ:

Հիմք ընդունելով կատարած հետազոտությունները՝ առաջարկվում է.

1. Հնարավորության սահմաններում կրճատել ջրի ծախսը և «Չաարատ Կապան» ՓԲԸ-ի օրինակով մնացած ձեռնարկություններում ներդնել ջրի շրջանառու համակարգ:
2. Հնարավորության սահմաններում արդյունավետ օգտագործել հանքաքարը, դրանով իսկ նվազեցնելով ապարային լցակույտերի քանակը:
3. Հաշվի առնելով, որ ծանր մետաղների շարժունակությունը մի քանի անգամ նվազում է հիմնային միջավայրում (pH-ը 8,5-9), ուստի հանքավայրերի թթվային դրենաժում մշտապես պետք է ավելացնել կիր (CaO), այն հաշվով, որ ջրի pH-ը թույլ թթվայինից դառնա հիմնային, նոր միայն օգտագործել ոռոգման նպատակներով:
4. Այն հողատարածքները, որոնք ժամանակին ոռոգվել են աղտոտված ջրերով, պետք է պարարտացնել օրգանական պարարտանյութերով (կենսահումուս, կիսափտած գոմաղբ) և հանքային մելիորանտներով (ցեոլիտ, դացիտային տուֆ, բենտոնիտ և այլն):

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Ավագյան Ա. - Կապանի բնապահպանական խնդիրները; Կապանի բնապահպանական տեղեկատվության հասարակական (Օրհուս) կենտրոն, Կապան, 2010, 17 էջ:
2. Գևորգյան Գ. Ա., Դանիելյան Ա. Ա., Գրիգորյան Կ. Վ., Մինասյան Ս. Հ. - Մեղրի-գետ, Ողջի և Արծվանիկ գետերի՝ ծանր մետաղներով և ալյումինով աղտոտվածության աստիճանը; ԵՊՀ գիտական տեղեկագիր, Քիմիա և կենսաբանություն, 2011, 226 (50-53) էջ:
3. Գևորգյան Գ. Ա., Դանիելյան Ա. Ա., Գրիգորյան Կ. Վ., Մինասյան Ս.Հ. - Ողջի գետի և նրա ջրհավաք ավազանի հիմնական գետերի էկոլոգիական գնահատականը հիդրոֆիզիկական և հիդրոքիմիական ցուցանիշներով; Հայաստանի կենսաբանական հանդես, Երևան, 2011, հատոր LXIII, էջ 62-66:
4. Հարությունյան Վ. Ս., Սարգսյան Կ. Շ. - Էկոլոգիական անվտանգություն; Երևան, ՀԱԱՀ, 2018, 478 էջ:
5. ՀՀ Գյուղմթերքի՝ ծանր մետաղներով աղտոտման ռիսկի գնահատում, Քաղաքացիական գործողություններ հանուն անվտանգության և շրջակա միջավայրի, հաշվետվություն; Երևան, 2011, 31 էջ:
6. Беляева О.А., Оганисян Г.Г. - Изучение агробиоценозов горнорудных районов Армении и биотехнологическое восстановление загрязненных почв; Ереван, 2013, с.148.
7. Galstyan M.H., Shirinyan A.V., Harutyunyan S.S., Tamoyan S.J., Sargsyan K.Sh. Assessment and Remediation of Soils Previously Buried under Mine Tailings and Contaminated with Heavy Metals. Annals of Agrarian science, Tbilisi, 2015, Vol.13, №1, p.46-53.
8. http://syunik.mtad.am/

Оценка влияния добывающей промышленности на экосистемы, прилегающие к городам Капан и Каджаран, и на здоровье населения, а также меры по их улучшению

Галстян Саре

НАУА, Агроэкология, 5-ый курс

Резюме

Ключевые слова: *Техногенная зона, реки Вохчи и Халадж, оросительная вода, агроэкосистема, тяжелые металлы, сельскохозяйственные культуры, загрязнение*

Исследования показали, что с увеличением объемов добычи на медно-молибденовых рудниках вблизи городов Капан и Каджаран ухудшились органолептические и химические показатели вод рек Вохчи и Халадж. Кроме того, с ростом горных отвалов и хвостохранилищ увеличилось количество тяжелых металлов в оросительной воде и почвах сельскохозяйственных угодий.

Содержание тяжелых металлов в водах указанных рек и в почвах агроценозов в 9-20 раз превышает допустимую предельную концентрацию. После смешивания со сточными водами горнодобывающей промышленности воды данных рек становятся непригодными для орошения.

Поскольку подвижность тяжелых металлов снижается в несколько раз в щелочной среде (pH 8,5-9), рекомендуется регулярное добавление в кислотный дренаж извести (CaO) с таким расчетом, чтобы довести реакцию водной среды от слабокислой до щелочной. Это делает речные воды пригодными для орошения селхозяйственных культур. В качестве удобрения рекомендуется использование органических удобрений (навоз, биогумус) и природного минерального сырья (цеолит, дацитовый туф, бентонит и др.).

Evaluating the Mining Industry Effect on the Population's Health and Neighboring Eco-Systems of Kapan and Kajaran Cities and Ways of their Improvement

Galstyan Sare

ANAU, Agroecology, 5th course

Summary

Key words: *technogenic zone, Voghji and Khalaj (Achanan) rivers, irrigation water, agroecosystem, heavy metals, agrocrops, pollution*

The research has revealed that along with the increase in the volumes of Kapan-Kajaran coppermolybdenum mines, rock dumps and tailings, the organoleptic and chemical parameters of the water in the Voghchi and Khalaj rivers, as well as the content of heavy metals in irrigation water and in agricultural lands have also increased.

The content of heavy metals in the waters of the mentioned rivers and in the soils of agro-cenoses is 9-20 times higher than the maximum-permissible density. After getting mixed with the effluents from the mining industry the waters of these rivers, are not recommended for the use of irrigation purposes.

Taking into account that the mobility of heavy metals decreases in several times in the alkaline environment (pH 8.5-9), it is recommended that the mining industry constantly add lime (CaO) to the acid drainage of the mines so that the pH of the water would turn from the poor acidic into alkaline (pH 8.5-9). Only after that these waters are recommended for the irrigation of agricultural crops. For the fertilization it is recommended to use organic fertilizers (manure, biohumus) and natural mineral raw materials (zeolite, dacite tuff, bentonite, etc.).

Ոռոգելի հողերի մակերեսից գոլորշիացման հարցի մասին

Դանիելյան Ռազմիկ
ՀԱԱՀ, Շինարարություն, 5-րդ կուրս
Գիտական ղեկավար՝ գ. գ. դ., պրոֆեսոր ***Գ. Եղիազարյան***

Հանգուցային բառեր. *ոռոգելի հողեր, գոլորշիացում, լուծույթի հանքայնացում, օդի հարաբերական խոնավություն*

Համառոտագիր: Աշխատանքում ներկայացված է ոռոգելի հողերի մակերեսից գոլորշիացման տեսության վերաբերյալ դաշտային և լաբորատոր ուսումնասիրությունների արդյունքները: Ստացվել են մաթեմատիկական կախվածություններ, որոնք համահարաբերակցական կապ են հաստատում գոլորշունակության, լուծույթի կոնցենտրացիայի և հարաբերական խոնավության միջև: Ստացված օրինաչափությունները հիմք կարող են հանդիսանալ «հող-բույս-օդ» համակարգի աղաջրային ռեժիմի կանխատեսման և կարգավորման եզրային խնդիրների լուծման համար: Դաշտային հետազոտություններով բացահայտվել են մշակաբույսերի, օդի ջերմաստիճանի, հարաբերական խոնավության փոփոխման օրինաչափությունները միջջրումնային ժամանակամիջոցում և ստացվել է մաթեմատիկական կախվածություն բանջարային մշակաբույսերի գումարային գոլորշիացման դինամիկայի նկարագրման համար:

Ներածություն: Չհագեցած գոտում ջրափոխանակման խնդրի լուծման ժամանակ անհրաժեշտ է ուսումնասիրել հողի մակերեսից գոլորշիացման երևույթը՝ որպես ոռոգվող հողերի ջրային հաշվեկշռի կարևոր բաղկացուցիչ մաս:

Հողի մակերեսից գոլորշիացման մեծության որոշման հիմնախնդիրը տարբեր ժամանակներում մշակվել և զարգացվել է բազմաթիվ հեղինակների կողմից (Ա.Ն. Կոստյակով, 1938, Մ. Ի .Բուդիկո, 1948, Ն. Ն. Իվանով, 1954, Ա. Մ. Ալպատև, 1952, Ա. Ի. Բուդագովսկի, 1964, Ա. Մ. Մխիթարյան, 1972, Ս. Վ. Ներպին, Ն. Վ. Չուրաև, 1965, Ս. Վ. Սանոյան 1979, Գ. Գ. Փախչանյան, 1964, Մ. Գ. Սանոյան, 1981):

Տարաբնույթ գործնական խնդիրների լուծման ժամանակ հաճախ որոշվում է գումարային գոլորշիացման մեծությունը, որն իրենից ներկայացնում է բույսերի կողմից կատարված տրանսպիրացիայի և հողի մակերեսից ֆիզիկական գոլորշիացման գումար: Գումարային գոլորշիացման մեծության որոշման համար, ներկայումս, առաջարկված են մի շարք

բանաձևեր, որոնք հիմնված են «հող-բույս-օդ» համակարգի այս կամ այն ֆիզիկական երևույթների մոդելավորման վրա: Առաջարկված բանաձևերից առավել լայն տարածում են ստացել Ա. Ն. Կոստյակովի (1938), Ն. Ն. Իվանովի (1954), Ա. Մ. Ալպատևի (1952), Մ. Ի. Բուդիկոյի (1948), և Գ. Կ. Լզովի (1960) կողմից ներկայացվող հավասարումները, որոնք համապատասխանաբար ունեն հետևյալ տեսքը՝

$$E = 0.0018(25 + t)^2(100 - r) \quad (1)$$

$$E = a\sum d \quad (2)$$

$$E = b\sum T \quad (3)$$

$$E = 1.88\sum t \quad (4)$$

$$E = K\sum t(1 - \frac{r}{100}) \quad (5)$$

որտեղ E -ն գումարային գոլորշիացումն է, t -ն օդի միջին ամսական ջերմաստիճանը, r-ը միջին ամսական օդի հարաբերական խոնավությունը, $\sum d$-ն վեգետացիոն ժամանակաշրջանում օդի խոնավության միջին տարեկան պակասորդի գումարն է, $\sum T$-ն վեգետացիոն շրջանում 10°C-ից բարձր ջերմաստիճանների գումարն է, $\sum t$-ն միջին օրական ջերմաստիճանների գումարն է վեգետացիոն շրջանում, K -ն մշակաբույսի գործակիցն է, որը որոշվում է փորձնական տվյալներից:

Հաճախ անհրաժեշտություն է առաջանում որոշելու գումարային գոլորշիացման այն մասը, որը կատարվում է հողի մակերեսից կամ, ինչպես անվանում են, ֆիզիկական գոլորշիացման մեծությունը: Այդ նպատակով կիրառում են ջրային հաշվեկշռի հավասարումը հետևյալ տեսքով [4, 5, 7, 8, 1, 2, 3, 6]՝

$$\frac{\partial W}{\partial t} = Q_1 + Q_2 + Q_3 + Q_4 - q_1 - q_2 - q_3 - q_4 - E \quad (6)$$

որտեղ՝ W-ն հողի խոնավությունն է, Q_1-ը մակերեսից մուտք գործող ջրի քանակությունն է, Q_2-ը ուսումնասիրվող հողի շերտից դուրս գտնվող տարածությունից մուտք գործած ջրի քանակն է, Q_3-ը հողի ստորին շերտերից մազանոթների միջոցով ներթափանցած ջրի քանակն է, Q_4-ը ջրի մուտքն է գոլորշու տեսքով, q_1-մակերեսային հոսքն է, q_2-ը ուսումնա-

սիրվող հողի շերտերից տեղի ունեցող արտահոսքն է, q_3-ը խորը տեղադրված ստորին շերտերից տեղի ունեցող արտահոսքն է, q_4-ը արտահոսքն է գոլորշու տեսքով, E -ն գոլորշիացումն է:

Որպեսզի որոշենք գոլորշիացման մեծությունը, անհրաժեշտ է ինտեգրել (6) հավասարումը, որի համար նախապես պետք է տրվեն այդ հավասարման մեջ մտնող փոփոխականների ֆունկցիոնալ կախվածությունները: Ա. Մ. Մխիթարյանը (1974) զարգացնելով Ա. Ի. Բուդագովսկու (1956) կողմից առաջարկված գոլորշացման տեսությունը, նրա մեծության որոշման համար առաջարկել է հետևյալ բանաձևը՝

$$E = E_0 B(W - W_0) \tag{7}$$

Որտեղ B -ն պարամետր է, W_0 -ն թառանման խոնավությունը, E_0-ն գոլորշունակությունը:

Որոշ ընդունելություններից հետո, որոնք վերաբերվում են (7) հավասարման մեջ մտնող անդամներին և նրա ինտեգրելուց հետո ստացվում է (Ա.Մ.Մխիթարյան 1974)

$$\Delta W = (W_H - W_0)\exp\left(-\int_{t0}^{4} bE_0\,dt\right) \tag{8}$$

Արարատյան հարթավայրի պայմաններում հողի մակերեսից գոլորշիացման մեծության որոշման համար կիրառվում է հետևյալ բանաձևը՝

$$E = (r + \bar{A})\exp(-\bar{b}(T_{\text{առ}} - T)^2) \tag{9}$$

Որտեղ՝ $(r + \bar{A})$ հնարավոր առավելագույն գոլորշիացման չափն է, երբ $T_{\text{առ}} = T$, $\bar{b}$-ն օդի հնարավոր միջին ամսեկան առավելագույն ջերմաստիճանն է:

Հողի մակերեսից գոլորշիացման որոշման համար Գարդները (1967) առաջարկում է հետևյալ հավասարումը՝

$$i_\tau = K_n \frac{P_a - P_n - h\tau}{h\tau} \tag{10}$$

որտեղ K_n-ն ջրահաղորդականության գործակիցն է, $h\tau$ -ն չորացվող շերտի խորությունը, P_a-ն խոնավության ճնշումն է մթնոլորտում, i_τ-ն գոլորշու շարժման արագությունը:

Առաջարկվող մոդելի մեջ ենթադրվում է, որ գոլորշու տեղափոխման արագության որոշման ժամանակ բացակայում է տուրբուլենտ կոնվեկտիվ տեղափոխությունը, կամ այն ունի չնչին ազդեցություն:

(10) հավասարման ինտեգրումից հետո կապ է հաստատվել գոլորշիացվող ջրի քանակության և ժամանակի միջև՝

$$h\tau = (2K_a P_a \tau)^{0.5} \tag{11}$$

որտեղ՝ τ-ն ժամանակն է:

Իսկ գոլորշիացման արագությունը, համապատասխանաբար, հակադարձ համեմատական կլինի ժամանակի թվաբանական արմատից:

Նկատի ունենալով, որ հողի մակերեսից գոլորշիացման ժամանակ բոլոր գործոնների ազդեցության հաշվառումը կապված է մի շարք դժվարությունների հետ, անհրաժեշտություն է առաջանում գոլորշիացման երևույթը մոդելավորել և այն ուսումնասիրել լաբորատոր պայմաններում:

Նյութը և մեթոդը: Ս.Վ. Ներպինի և Ն.Վ. Չուրաևի (1965) աշխատանքներում դիտարկված է մազանոթածակոտկեն համակարգի եռաստիճան մոդելը մազանոթների փոքր շառավիղների դեպքում: Համաձայն այդ մոդելի, գոլորշիացումը տեղի է ունենում ոչ միայն գոլորշու դիֆուզիայի շնորհիվ, այլև թաղանթային ջրի գրադիենտի ազդեցության տակ

$$Q = Q_V + Q_f \tag{12}$$

Որտեղ՝ Q -ն ջրի ընդհանուր հոսքն է, Q_V-ն գոլորշու հոսքն է, Q_f-ն թաղանթային ջրի հոսքն է:

Օգտվելով Ֆիկի հավասարումից, (12) հավասարումը ստանում է հետևյալ տեսքը՝

$$Q = -\pi r^2 D grad\rho + 2\pi 3 grad \frac{P}{V_m} \tag{13}$$

Որտեղ՝ D-ն ջրային գոլորշիների դիֆուզիայի գործակիցն է, ρ-ն ջրային գոլորշու մոլյարային խտությունը, p-ն ջրային թաղանթի սեպաճեղքող ճնշումն է, Vm-ը թաղանթի մոլյարային ծավալն է:

(13) հավասարումը ինտեգրելուց հետո Ս. Վ. Ներպինի և Ն. Վ. Չուրաևի կողմից առաջարկվել է հետևյալ հավասարությունը՝

$$Q = \frac{\pi r^2 (p_1 - p_2)}{RTL} + \frac{2\pi r}{3V_m 2L} - \int_{p1}^{P0} h^3 \, dp \tag{14}$$

(14) հավասարությունը դուրս բերելու ընթացքում կատարված է երկու ընդունելություն, դիտվում է, որ մազանոթների շառավիղը բավականին փոքր է և գոլորշիացման գործընթացը կախված չէ ժամանակից:

Իզոթերմ պայմաններում, խոշոր մազանոթներից ջրի գոլորշիացման մեծությունը որոշվում է հետևյալ բանաձևով՝

$$q_1 = \frac{D p_s M F_1 (\varphi_1 - \varphi_0)}{RT(x + x_0)} \qquad (15)$$

Որտեղ՝ D-ն գոլորշու դիֆուզիայի գործակիցն է, F_1-ը խոշոր մազանոթների կտրվածքների ընդհանուր մակերեսն է, x -ը մակերևույթային սահմանային բերված հաստությունն է, p_s-ը T ջերմաստիճանում հագեցած գոլորշու մասնակային ճնշումն է, M ջրի գրամ-մոլեկուլի զանգվածն է, R-ը ունիվերսալ գազային հաստատունն է, φ_1-ը խոշոր մազանոթների մենիսկի վրա առաջացած օդի հարաբերական խոնավությունն է, որը որոշվում է հետևյալ կերպ՝

$$\varphi_1 = exp\left(-\frac{2\sigma M}{\rho RT r_1}\right) \qquad (16)$$

որտեղ ρ-ն ջրի խտությունն է, σ-ն ջրի մակերևույթային լարվածությունը:

Արդյունքներ և քննարկում:

Մազանոթներից տեղի ունեցող գոլորշիացման տեսությունը, որն առաջարկել են Բ. Վ. Դերյագինը, Ս. Վ. Ներպինը, Ն. Վ. Չուրաևը (1964), կիրառելի է նոսր լուծույթների համար: Ինչպես ցույց են տալիս հետագայում Ս. Վ. Սանոյանի (1977) կողմից կատարված բազմաթիվ դաշտային լաբորատոր ուսումնասիրությունները, լուծույթի խտության մեծացումը առաջ է բերում գոլորշիացման նոր առանձնահատկությունների դրսևորման: Հեղինակը գտնում է, որ գոլորշիացման գործընթացի ընթացքում անհրաժեշտ է հաշվի առնել ոչ միայն գոլորշու առանձգականությունը ու մածուցիկությունը, այլ նաև գոլորշիացման արդյունավետ մակերեսի մեծությունը, որը պայմանավորված է լուծույթի մակերևույթում չգոլորշիացող և հիդրատացված իոնների առկայությամբ:

Որպեսզի գործնականում կարողանանք գնահատել արդյունավետ մակերեսի մեծությունը, հեղինակը առաջարկում է նոր α գործակցի գաղափարը, որի մեծությունը որոշվում է հետևյալ կերպ՝

$$\alpha = 1 - 0{,}8\,\frac{C}{C_H} \qquad (17)$$

Որտեղ՝ C-ն լուծույթի խտությունն է, C_H-ը հագեցած լուծույթի խտությունն է: Գոյություն ունեցող մազանոթաձակոտկեն միջավայրի եռաստիճան մոդելը զարգացվել է Ս. Վ. Սանոյանի (1977) կողմից: Այն իրենից ներկայացնում է տարբեր տրամագծի հինգ մազանոթներից բաղկացած

մի համակարգ, որտեղ մազանոթներն ուղղաձիգ և հորիզոնական ուղղություններով գտնվում են հաղորդակցության մեջ:

Այսպիսի մոդելը առավել քան մոտենում է իրական պայմաններին, որի հիման վրա ջրի գոլորշիացման մեծությունը առաջարկվում է որոշել հետևյալ կախվածությունից [17,18,19,15,16,1,2]

$$Q = \frac{DMp_s F(\varphi_1 - \varphi_D)}{RT(a_1 + x_D)} \qquad (18)$$

Հիմք ընդունելով Պուազեյլի հավասարումը, առաջարկվում է որոշելու երկրորդ, երրորդ, չորրորդ ու հինգերորդ մազանոթներից հիդրավլիկական հոսքը՝

$$a_{2-5} = \frac{2\sigma\left(\left(\frac{1}{r_2} - \frac{1}{r_1}\right) - \rho g a_1\right)(F_2 r_2^2 + F_3 r_3^2 + F_4 r_4^2 + F_5 r_5^2)}{8\eta a_1} \qquad (19)$$

Փորձնական արդյունքների մաթեմատիկական մշակումից պարզվում է, որ հարաբերական արագության ($\bar{V}$) և լուծույթի հարաբերական խտության ($\bar{C}$) միջև գոյություն ունի գծային կորելացիոն կապ, ընդ որում կորելացիոն գործակիցը հավասար է 0.98: $\bar{V}$ և $\bar{C}$ մեծությունների միջև ֆունկցիոնալ կախվածությունը ընդհանուր դեպքում ներկայացվում է հետևյալ տեսքով՝

$$\bar{V} = a_D - b_D \bar{C} \qquad (20)$$

Որտեղ՝ a_D և b_D գործակիցներ են և փոփոխվում են հետևյալ սահմաններում՝ a_D = 1.04...1.18, b_D = 0.40...0.52:

Փորձնական արդյունքների վերլուծությունից կորելացիոն կապ է հաստատվել գոլորշիացման հարաբերական արագության ($\bar{V}$) և օդի հարաբերական խոնավության միջև $\bar{\varphi}$:

Ստացված արդյունքներից դժվար չէ կատարել հետևություն այն մասին, որ գոլորշիացման հարաբերական արագության ($\bar{V}$) և օդի հարաբերական խոնավության ($\bar{\varphi}$) միջև հաստատվում է գծային կորելացիոն կախվածություն, որտեղ օդի հարաբերական խոնավությունը փոփոխվում է 16...88%-ի սահմաններում: Այդ կախվածությունը նկարագրվում է հետևյալ հավասարությամբ՝

$$\bar{V} = a_1 - b_1 \bar{\varphi} \qquad (21)$$

Որտեղ՝ a_1 և b_1 -գործակիցներ են, որոշվում են փորձնական ճանապարհով: Համաձայն մեր ուսումնասիրությունների՝ a_1 և b_1 փոփոխվում են համապատասխանաբար հետևյալ սահմաններում 0.66...0.59 և 0.53...0.60:

Նկատի ունենալով (20) և (21) հավասարումները, խոշոր մազանոթներից ջրի հարաբերական գոլորշիացման արագության $\bar{V}$, լուծույթի հարաբերական խտության ($\bar{C}$) և օդի հարաբերական խոնավության $\bar{\varphi}$ միջև ստեղծվում է հետևյալ կախվածությունը՝

$$\bar{V} = 0{,}682 - 0{,}09\bar{C} - (0{,}541 - 0{,}0413\bar{C})\,\bar{\varphi} \qquad (22)$$

կամ ընդհանուր դեպքում

$$\bar{V} = E_0 - A_0\bar{C} - (B_0 - D_0\bar{C})\,\bar{\varphi} \qquad (23)$$

Որտեղ՝ E_0-ն տվյալ պայմաններում լուծույթի մակերևույթից տեղի ունեցող առավելագույն գոլորշիացման չափն է [9,10,11,12,3,13,14]:

Շարունակելով ուսումնասիրել ջրի գոլորշիացումը բարձր խտությամբ լուծույթների մակերևույթից ընդունված մեթոդիկայով, և փորձնական արդյունքների մաթեմատիկական մշակումից ստացվում է հետևյալ օրինաչափությունը՝

$$V_1 = V_0 - \alpha\frac{C}{C_H} \qquad (24)$$

Որտեղ՝ V_1-ը գոլորշիացման արագությունն է, C-ն լուծույթի խտությունը. C_H-ը հագեցած լուծույթի խտությունը, V_0-ն ջրի փոշիացման առավելագույն արագությունն է տվյալ պայմաններում, α-ն գործակից է, որի արժեքը հավասար է 0.8-ի:

Վերլուծելով փորձնական ճանապարհով ստացված արդյունքները, դժվար չէ նկատել, որ լուծույթի խտության և ջրի գոլորշիացման արագության միջև գոյություն ունի ուղիղ գծային կապ, ընդ որում լուծույթի խտության մեծացումը բերում է գոլորշիացման արագության նվազմանը: Այսպիսի արդյունքներ է ստացել նաև Ս.Վ. Սանոյանը (1979), երբ ուսումնասիրում էր գոլորշիացման երևույթի առանձնահատկությունները աղակալված հողերի մակերեսից: Ստացված արդյունքների քննարկումը հնարավորություն տվեց ի հայտ բերելու ջրի գոլորշացման ևս մի կարևոր առանձնահատկություն, այն է, որ ի տարբերություն նոսր լուծույթների, բարձր խտությամբ լուծույթի մակերևույթից ջրի գոլորշիացման արագության V_2 և օդի հարաբերական խոնավության միջև φ հաստատվել է հետևյալ ոչ գծային կորելացիոն օրինաչափությունը՝

$$V_2 = V_0\,tg\left[\frac{\pi}{4}\left(1 - \frac{\varphi}{100}\right)\right] \qquad (25)$$

Որտեղ՝ φ-ն օդի հարաբերական խոնավությունն է: Այսպիսով, կատարված փորձնական և տեսական հետազոտությունները հնարավո-

րություն են տալիս գործնականում կապ հաստատել բարձր խտությամբ լուծույթի մակերևույթից գոլորշիացման արագության լուծույթի խտության և օդի հարաբերական խոնավության միջև՝

$$V = \left(V_{ш.х} - \alpha \frac{C}{C_H}\right) tg\left[\frac{\pi}{4}\left(1 - \frac{\varphi}{100}\right)\right] \qquad (26)$$

Որտեղ՝ $V_{ш.х}$-ը ջրի գոլորշացման առավելագույն արագությունն է, C -ն լուծույթի խտությունն է, C_H -ը հագեցած լուծույթի խտությունն է, α -ն գործակից է, φ -ն օդի հարաբերական խոնավությունը:

Վեգետացիոն ուսումնասիրությունների փորձնական արդյունքների հիման վրա կառուցված օրինաչափությունները լավագույն ձևով մոտարկվում են հետևյալ նորմավորված կորելացիոն հավասարությամբ՝

$$e = \frac{i_D}{\sum_{i=1}^{n} v_i H_i} + \left[\frac{r - r_{եր}}{r_{առավ} - r_{եր}}\right] \frac{i_D \exp(\alpha_i t)}{\sum v_i H_i} \sin(\omega_i t + \varphi_i) \qquad (27)$$

Որտեղ՝ e-ն հաշվի է առնում ջրի այն քանակը, որը կլանում են բույսերը արմատների միջոցով, (օր.$^{-1}$), i_D-ն պոտենցիալ տրանսպիրացիան է. մ/օր, որը սովորաբար որոշվում է Իվանովի բանաձևով հաշվի առնելով Մոլչանովի գործակիցը՝ 0.8, V_i -ն հողի տվյալ շերտում գտնվող բույսի արմատների խտությունն է (ըստ Ի.Ե.Սուդնիցինի), H_i-ն տվյալ շերտում արմատների երկարությունն է (մ), որը որոշվում է Նյումենի մեթոդով (1966), r-ը հողի առկա խոնավությունն է %, $r_{եր}$ – ը նախաջրումնային խոնավությունն է %, $r_{դաշտ}$ –ն դաշտային սահմանային խոնավունակությունն է %, α_i, ω_i, φ_i-ն գործակիցներ են, որոնց մեծությունները որոշվում են փորձնական արդյունքներից (α_i = 1,115...1.653; φ_i = 0.25...0.33; ω_i = 0,15...0,25): (27) հավասարման մեջ մտնող α_i ցուցչի արժեքը գտնելու նպատակով ստացված փորձնական արդյունքները մշակվել են նվազագույն քառակուսիների եղանակով՝

$$\alpha = \frac{\sum_{j=1}^{n} \ln \frac{(e_i \sum_{i=1}^{n} v_i H_i - i_D)(r_{դա} - r_{եր})}{(r - r_{եր}) i_D \sin(\omega_i t + \varphi_i)} t_i}{\sum_{j=1}^{n} t_i^2} \qquad (28)$$

Ընդհանրացնելով նոսր և բարձր խտությամբ լուծույթների մակերևույթներից տեղի ունեցող գոլորշիացման տեսական, դաշտային և լաբորատոր փորձնական ուսումնասիրությունների արդյունքները, հանգում ենք հետևյալ եզրակացության:

Եզրակացություն: Նոսր խտությամբ լուծույթի մակերևույթից ջրի գոլորշիացման արագությունը ուղիղ համեմատական կապի մեջ է գտնվում օդի հարաբերական խոնավության գրադիենտի հետ: Բարձր խտությամբ լուծույթի մակերևույթից գոլորշիացման արագության և օդի հարաբերական խոնավության գրադիենտի միջև հաստատվել է ոչ գծային կախվածություն: Ջրի այն քանակությունը, որը գյուղատնտեսական մշակաբույսերը վերցնում են հողից արմատների միջոցով նորմալ աճի ու զարգացման համար գնահատվել է գումարային գոլորշացման ուժգնության միջոցով, որի մեծությունը փոփոխվում է կախված հողի խոնավությունից, ջերմաստիճանից, մշակաբույսի տեսակից: Համաձայն փորձնական տվյալների՝ ջրումից անմիջապես հետո հողից խոնավությունը հավասար է ԴՍԽ-ի, այնուհետև խոնավության նվազմանը զուգահեռ կրկին նվազում է տրանսպիրացիայի ուժգնությունը: Կախված վեգետացիոն ժամանակաշրջանից, e-ի մեծությունը միչջրումնային ժամանակամիջոցում նվազում է 15..45%-ով:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Абрамов М. М. Передвижение воды в почве при испарении. –Тр. почвенн. ин-та, М.: 1953, т. 41, с. 71-145.
2. Алпатьев А. М. Испаряемость как приближенный показатель потребности сельскохозяйственных культур в воде. –Метрология и гидрология, 1952, N 5, с. 41-46.
3. Алпатьев А. М. Поливной режим сельскохозяйственных культур в южной части Украины. Киев, МСХ, СССР, 1965, 88с.
4. Безбородов Ю. Г., Безбородов А.Г. Орошение сельскохозяйственных культур в аридной зоне. –М., РГАУ-МСХА, 2013. -535с.
5. Будаговский А. И. Испарение почвенной влаги. –М: Наука, 1964. -244с.
6. Будаговский А. И., Лозинская Е. А. Теория суммарного испарения и ее приложения. –Водные ресурсы,1976, с. 34-55.
7. Будаговский А. И., Савина С.С. Испаряемость с поверхности растительного покрова. – Метеорология и гидрология, 1956, N 8, с. 20-23.
8. Егиазарян Г. М., Хачатрян А. Х., Даниелян Р.А. Аналитическая оценка динамики потенциала влажности в зоне аэрации в орошаемых землях. –Агронаука и технология, Ереван, 2021, N 3/75, с. 235-240

9. Лебедева В. К. Испарение жидкости из сообшающихся капиляров и основной закон перемещения влаги в капиллярно пористом теле. – Журнал технической физики. 1956, с. 1064-1069.
10. Леготина С. И., Орленко Л. Р. О расчете турбулентных потоков тепла и влаги по данным градиентных измерений. –труды ГТО, 1978, вып. 402, с. 29-39.
11. Лыков А. В. Теория сушки. –М.: Энергия, 1968. -471ц
12. Лыков А. В. Теория теплопроводности. –М.: Гостехиздат, 1952. -392 с.
13. Лыков А. В. Явления переноса в капиллярно-пористых телах. –М.: Гостехиздат, 1954. -296с.
14. Мхитарян А. М., Акопян А. С., Дагстанян М. Г. Закономерности расхода грунтовых вод на испарение и количественный учет факторов влияющих на испарение и конвективный теплообмен. –Л., Гидрометеоиздат,1972. -179с.
15. Неприн С. В., Саноян С.В. Особенности процесса испарения воды из капиляров почвы. –Известия с.-х. Наук МСХ, Арм ССР, 1976, N 3, с. 73-79
16. Пахчанян Г.Г. Испаряемость и ее изменение с высокой местности. – ДАН Арм ССР, 1964, т. 38, N 1, с. 27-33.
17. Пахчанян Г. Г., Мовсисян М.А. Критическая глубина залегания грунтовых вод и некоторые закономерности движения влаги и солей в почвогрунтах. Труды НИИ почвоведения и агрохимии. –МСХ Арм ССР, Ереван, 1974, с. 287-292.
18. Слейчер Р. Водный режим растений. –Изд. МИР, Москва. -362 с.
19. Струников Э. А. Об изменчивости биоклиматических коэффициентов при расчете водопотребления с.-х. Культур. Гидротехника и мелиорация. 1977, N 12, с. 52-53

Теория испарения с поверхности орошаемых земель

Даниелян Размик
НАУА, Строительство, 5-ый курс

Резюме

Ключевые слова: *орошаемые земли, испарение, минерализация раствора, относительная влажность воздуха*

В работе представлены результаты полевых и лабораторных исследований по теории испарения с поверхности орошаемых земель. Получены математические зависимости, которые устанавливают соотносительную связь между испаряемостью, концентрацией раствора и относительной влажностью. Полученные закономерности могут служить основой для решения пограничных задач прогнозирования и регулирования водно-солевого режима системы «почва-растение-воздух». Полевыми исследованиями выявлена динамика изменения температуры и относительной влажности воздуха в периоды между поливом растений, и выведена математическая зависимость для описания динамики суммарного испарения для овощных культур.

The Theory of Evaporation from the Irrigated Soil Surface

Danielyan Razmik
ANAU, Construction, 5th course

Summary

Key words: *irrigated soils, evaporation, solution mineralization, relative air humidity*

The results of field and laboratory investigations on the theory of evaporation from the irrigated soil surface are introduced in the current research work. Mathematical dependences have been derived which establish correlative relations between evaporation capacity, solution concentration and relative humidity. The obtained patterns can serve as a background for the solution of marginal problems in forecasting and regulating salt-water regime in the “soil-plant-air” system. Upon the field investigation the dynamics of air temperature and relative humidity change in the period of plants irrigation interval has been disclosed and the mathematical dependence for the description of total evaporation dynamics has been derived.

Թռչունների միգրացիայի առեղծվածը: Գաղտնի կողմնացույց թե՞ բնազդի հրաշքը

Մանուկյան Տաթևիկ
ՎՊՀ, Կենսաբանություն, 3-րդ կուրս
*Գիտական ղեկավար՝ կ. գ. թ., դոցենտ **Հ. Գրիգորյան***

Հանգուցային բառեր. *թռչուններ, չու, նախամիգրացիոն վիճակ, կողմնորոշում, մագնիսազգայունություն*

Թռչունները մեր մոլորակի ամենազարմանահրաշ կյանքի դրսևորումներից մեկն են: Նրանք զարդարում են բնական և մշակութային լանդշաֆտները, լրացնելով այդ լանդշաֆտները զանազան ձայներով և գույներով, արդյունքում նրանց տալիս են անկրկնելի յուրահատկություն [1]:

Մարդիկ հնագույն ժամանակներից ուշադրություն էին դարձնում թռչունների պարբերաբար անհետացմանը և հայտնվելուն [2]: Շատ հարցեր են առաջանում, երբ մենք խոսում ենք թռչունների չուի մասին. Ինչու՞ են չվում: Ու՞ր են թռչում: Ի՞նչպես են որոշում ճանապարհը: Ի՞նչպես են որոշում ժամանակը [3]:

Վերոգրյալ հարցերից առաջինի պատասխանը թերևս ամենահեշտն է. թռչունների չուի գլխավոր պատճառը՝ ձմռանը կերի պակասելն է՝ կապված սեզոնային փոփոխությունների հետ: Սակայն մնացած հարցերի պատասխանները ցավոք միանշանակ չեն՝ ինչպես են կարողանում այս կենդանիները որոշել, թե ու՞ր են թռչում, ինչպես են կարողանում գտնել իրենց անհրաժեշտ բնակավայրի ճանապարհը:

Թե ինչպես են կարողանում թռչունները այդպես գործել, մինչև այսօր էլ մնում է գաղտնիք և հանդիսանում է շատ գիտնականների հետազոտության առարկա, չնայած նրան, որ այս երևույթը ուսումնասիրվում է արդեն ավելի քան 100 տարի [5]:

Միգրացիայի ժամանակ թռչունները միանշանակ կողմնորոշվում են արևի, լուսնի, աստղերի, լանդշաֆտերի, մեծապես Երկրի մագնիսական դաշտի և նույնիսկ ջրվեժների աղմուկի միջոցով [4]:

Գիտնականների հետաքրքրությունը այս թեմայի շուրջ տարեց տարի ավելի է մեծանում, որովհետև նոր հետազոտությունների արդյունքները անընդհատ փոխում են առկա պատկերացումները թռչունների կողմնորոշման երևույթի վերաբերյալ: Տարակարծությունները գերակշռում են հատկապես մագնիսական դաշտի միջոցով թռչունների կողմնորոշման հետ կապված հարցերի վերաբերյալ:

Թռչունների կողմնորոշման վերաբերյալ խնդրի լուծումը ապագայում կօգնի ստեղծել նոր անարբանյակ նավիգացիոն համակարգեր, որոնք բավականին արժեքավոր կլինեն գիտության տարբեր բնագավառների համար: Չէ՞ որ թռչունները միշտ գիտեն, թե ուր թռչեն և արբանյակներ դրա համար նրանց անհրաժեշտ չեն [6]:

Կենդանաբանության գրքերում և դպրոցական դասագրքերում ներկայացված են ակնարկներ և տեղեկություններ թռչունների չուի մասին, սակայն վերջիններս մակերեսորեն են նկարագրում երևույթը, որի պատճառներից մեկը թերևս այս թեմայի վերաբերյալ չպարզաբանված տեղեկությունների և ամբողջական պատկերացումների բացակայությունն է:

Հոդվածում տրված են թռչունների չուի հետ կապված շատ հարցերի պատասխաններ, իսկ ամենավիճելի հարցերի վերաբերյալ մեջբերված են ամենաթարմ տեղեկությունները, որոնք փորձում են բացատրել այս թեմայի հետ կապված շատ հարցեր:

«Ինչքան դժվարություններ է հաղթահարում իր երկար ու վտանգավոր ճանապարհին այս կենդանին, միևնույն է, թռչում է՛, թռչում՝ առաջնորդվելով թռչելու հզոր բնազդով»,– ասում էր անգլիացի հայտնի բնագետ Դիկսոնը [3]:

Թռչունների չուն կամ միգրացիան՝ թռչունների տեղաշարժն է՝ կապված էկոլոգիական և սննդային պայմանների կամ բազմացման յուրահատկությունների հետ: Նշված երևույթը ժառանգաբար ամրապնդվում և փոխանցվում է սերնդեսերունդ: Սեզոնային տեղաշարժի բնույթից կախված թռչուններին բաժանում են 3 հիմնական խմբերի՝ նստակյացներ, քոչվորներ, չվողներ [7]:

Հետաքրքրական է այն հարցը, թե ինչպես է առաջացել թռչունների միգրացիան: Այս հարցի վերաբերյալ կան բազմաթիվ իրարամերժ տեսակետներ: Համաձայն տարբեր հիպոթեզների թռչունների միգրացիայի առաջացման վրա մեծ ազդեցություն է գործել սառցե դարաշրջանը: Հետևապես մինչև սառցե դարաշրջանի ի հայտ գալը հերքվում է թռչունների միգրացիայի իրականացման հնարավորությունը [8]:

<u>Թռչունների</u> չվելու ցանկությունն առաջանում է *<u>ֆիզիոլոգիական որոշակի վիճակի</u>* դեպքում: Այդ շրջանում թռչունները հակում են ունենում <u>երամներ</u> կազմելու և որոշակի ուղղությամբ շարժվելու [9]: Այսպիսով անհրաժեշտ է հասկանալ, թե գործոնների ինչ խումբ է ազդում թռչունների վրա և ինչպես է վրա հասնում *որոշակի ֆիզիոլոգիական վիճակ*, որը դրդում է նրանց չվելու: Համաձայն միգրացիոն վիճակի խթանման առաջնային գործոնների մասին հիպոթեզի, գարնանը՝

միգրացիոն վիճակը վրա է հասնում կենսապայմանների բարելավման հետևանքով: Բնադրավայր թռչելուց հետո միգրացիոն վիճակը դադարում է: Վերջինս պայմանավորված է օրգանիզմի էներգետիկ ծախսերի մեծացմամբ՝ կապված բնադրման և փետրափոխության հետ: Աշնանը փետրափոխությունից հետո օրգանիզմի ծախսերը նվազում են և էներգիայի ավելցուկը պայմանավորում է աշնանային միգրացիոն վիճակը: Նկարագրված են շատ փորձեր, որոնցում միգրացիոն վիճակը փորձել են առաջացնել ձմռան կամ ամռան կեսին՝ շատ կերակրումով կամ ընդհակառակը՝ կերի պակասով, ցրտով կամ ջերմաստիճանի բարձրացմամբ, երկար կամ կարճ սննդային օրով, սակայն ամեն ինչ իզուր էր: Ինչ պայմաններում էլ, որ պահեն թռչուններին, նրանց մոտ հստակ ժամանակին սկսում է դրսևորվել միգրացիոն վիճակ, հստակ ժամանակին էլ վերջինս դադարում է: Այսպիսի փորձերը ապացուցում են, որ թռչունների մոտ թռիչքային վիճակ առաջացնում են ոչ թե եղանակային և սննդային գործոնները, այլ անմիջապես այսպես կոչված *չվելու խթանիչները* [10]:

Չվելու ընթացքն ունի որոշ առանձնահատկություններ: Չափերով մեծ թռչունների մեծամասնությունը չվում են երամներով՝ հաճախ կազմելով V-աձև սեպ՝ կազմված 12-20 թռչուններից: Թռչունների միմյանց նկատմամբ այսպիսի դիրքը օգնում է նրանց նվազեցնել էներգետիկ ծախսերը [19]: Երբ երամի առաջնորդը հզոր թևերը թափահարում է վերևից ներքև, արդյունքում նրա հետևում առաջանում է օդի բարձրացնող հոսանք: Առաջնորդից հետ գտնվող թռչունները որպես կանոն երիտասարդ են և ավելի թույլ, հետևաբար այդ օդի հոսանքը նրանց մղում է դեպի առաջ: Այսպես աերոդինամիկ ծանրաբեռնվածության մեծ մասն իր վրա է վերցնում երամի առաջնորդը, ինչպես նաև երամի ուժեղ անդամները, որոնք նույնպես թռչում են երամի առջևից: Թռչունների V-աձև երամը կարող է լինել ասիմետրիկ, կրկնակի, եռակի կամ ունենալ ավելի բարդ կառուցվածք: Թռիչքի ժամանակ թռչունների մի կողմով առաջ ուղղված սեպը կոչվում է «բանալի» [11]:

Հետաքրքրական է նաև այն փաստը, որ թռչունները չուի ընթացքում անգամ հասցնում են քնել: Ամերիկացի գիտնականները [12] իրենց կատարած հետազոտությունների հիման վրա նշում են, որ շատ թռչուններ չվում են գիշերը, ինչը նրանց հնարավորություն է տալիս խուսափել գիշատիչներից, ինչպես նաև արևի տակ չափից շատ տաքանալուց: Հետազոտական խմբի գիտնական Ֆրենկ Մուրը նշում է, որ թռչունների չուն միանշանակ իրենից ենթադրում է քնի կորուստ: Ի վերջո գիտնականները որոշեցին պարզել, թե ինչպես են թռչունները փոխհատուցում

իրենց քնի պակասը: Պարզվել է, որ հետազոտվող կեռնեխները ժամանակ առ ժամանակ փակում են մի աչքը և ընկնում են քնի վիճակի մեջ, որը տևում է ընդամենը մի քանի վայրկյան: Այդ պահին նրանց գլխուղեղի էլեկտրական ակտիվությունը աջ և ձախ կիսագնդերում տարբերվում է: Մասնավորապես, երբ մի կիսագնդում դիտվում են քնային վիճակին բնորոշ ալիքներ, ապա մյուս կիսագունդը պահպանում է առույգ և արթուն ֆիզիոլոգիական վիճակ: Գիտնականների կարծիքով այսպիսի քունը, որը կարելի է կոչել «կես աչք» օգնում է թռչուններին լինել միշտ պատրաստ գիշատիչներից պաշտպանվելու համար [12]:

Միգրացիայի ժամանակ թռչունները կողմնորոշվում են արևի, լուսնի, աստղերի, լանդշաֆտերի, մեծապես Երկրի մագնիսական դաշտի և անգամ ջրվեժների աղմուկի միջոցով [4]:

Արևը և աստղերը որպես կողմնորոշիչներ: Միգրացիա իրականացնող թռչունների համար կարևոր նշանակություն ունի արեգակը, որի միջոցով էլ նրանք որոշում են թռիչքի ուղղությունը: Օրվա ընթացքում արևը անընդհատ փոխում է իր դիրքը երկնակամարում, այդ պատճառով էլ կողմնորոշումը արևի միջոցով հնարավոր է միայն որոշակի ժամանակահատվածում: Հետաքրքիր է, այն փաստը, որ որոշ թռչուններ կարողանում են արևով կողմնորոշվել անգամ ամպամած եղանակին: Պատճառն այն է, որ թռչունները օգտագործում են բևեռացված լույսը, որը միշտ առկա է մթնոլորտում [13]:

Կրամերը և իր օգնականները փորձեր կատարեցին պարզելու համար, թե ինչպես է ազդում արևի դիրքը թռչունների կողմնորոշման վրա [14]: Թռչունները ունակ են անգամ զգալ, թե ինչպես է փոխվում հորիզոնում արևի դիրքը, մասնավորապես՝ 1 ժամում 15^0 –արևի դիրքի փոփոխությունը: Մետյուզը առաջարկել էր արեգակնային աղեղի հիպոթեզը, ըստ որի թռչունները համեմատում են հորիզոնի նկատմամբ արևի բարձրությունը այդ պահին իրենց բարձրության հետ, ընդ որում երբ դեռ գտնվում են իրենց բնակալման տարածքներում: Ըստ գիտնականի վերջինս տեղի է ունենում «ներքին ժամացույցի» միջոցով [14]:

Տեղեկատվության ևս մեկ կարևոր աղբյուր է աստղազարդ երկինքը: Այս դեպքում թռչունները կողմնորոշվում են որոշակի աստղերի և նրանցից կազմված համաստեղությունների միջոցով [13]:

Թռչունների կողմնորոշման վերաբերյալ ավելի խորը գիտելիքներ ստանալու համար գիտնականները սկսեցին հետազոտություններ կատարել աստղադիտարանում: Մասնավորապես, աստղադիտարանում փոխելով աստղերի դիրքը Էմլենը հայտնաբերեց, որ թռչունները թռիչքի

ուղղության կողմնորոշման համար օգտագործում են աստղերի տարբեր խմբեր, որոնք գտնվում են Բևեռային աստղից 35° հեռավորության սահմաններում [14]:

Հոտառական կողմնորոշիչներ: Տարբեր երկրների գիտնականներ ցանկացել են պարզել, թե ինչպես են թռչունները բաց ջրի վրայով թռչելիս կողմնորոշվում, եթե այդտեղ որևէ հստակ կողմնորոշիչներ չկան: Պարզվել է, որ այդ պարագայում փետրավորների համար հոտառությունը դառնում է իր տեսակի մեջ բնական ուղեցույց (նավիգատոր): Փորձերը դրվել են 32 միջերկրածովյան սովորական մրրկահավերի վրա, որոնք բնադրում են իսպանական Մենորկա կղզու տարածքում: Փետրավորների վրա ամրացվել են հատուկ տվիչներ: Հետո մրրկահավերի մի մասին զրկել են հոտառական ունակությունից (ցինկի սուլֆատի միջոցով): Սովորաբար, զգալի ջրային տարածություններ հաղթահարելիս, մրրկահավերը հաջողությամբ կողմնորոշվում են, սակայն հոտառությունից զրկված թռչունները թռչում էին բացառապես անկյունագծով: Այնուամենայնիվ, տարածության մեջ նրանց կողմնորոշումը զգալիորեն բարելավվեց, երբ նրանք սկսեցին տեսնել ափը և կարողացան ճանաչել տեղանքը [15]:

Լսողական կողմնորոշիչներ: Գրիֆինը և Հոպկինսը 500-1000 մ բարձրության վրա չափելով գորտերի կողմից արձակված ձայների ինտենսիվությունը, արտահայտեցին տեսակետ, ըստ որի բնական ձայները (օրինակ՝ գորտերի, միջատների ձայները, ալիքների, ինչպես նաև ծառերի ճյուղերից եկող աղմուկը) որոշ չվող թռչունների համար ծառայում են որպես «բանալի» կողմնորոշիչներ [14]:

Շատ թռչուններ, որպեսզի թռիչքի ժամանակ՝ հատկապես գիշերը չկորցնեն իրար, արձակում են հատուկ ձայներ, գոռում են և անգամ երգում: Ձայնը արտացոլվում է այն առարկաներից, որոնք հանդիպել են թռչնի ճանապարհին և թռչունը այն որսում է նուրբ լսողության միջոցով: Այդ պատճառով էլ մթության մեջ թռչունը չի բախվում ծառերին կամ ժայռերին և հնարավոր է, որ նա որոշում է հողի մակերևույթից իր բարձրությունը [16]:

Մագնիսական կողմնորոշիչներ: Մագնիսական դաշտի ուժագծերը ձգվում են հյուսիսից հարավ և թռչունների համար ծառայում են որպես ուղղորդիչներ, ներգործելով նրանց մագնիսազգայուն սպիտակուցների վրա: Գիտնականները հետազոտելով թռչունների մագնիսազգայուն սպիտակուցների աշխատանքը, ցույց են տվել, որ արտաքին դաշտին նրանք արձագանքում են՝ ի շնորհիվ քվանտային մեխանիկայում հայտնի սպինային էֆեկտների:

Մագնիսազգայունությունը հեշտացնում է կենդանիների կողմնորոշումը, իսկ չվող թռչունները ակտիվորեն կիրառում են այս ունակությունը հեռավոր միգրացիաների ժամանակ: Պարզվել է, որ մագնիսական դաշտը ընկալող առանցքային «անտենան՝ լուսազգայուն կրիպտոքրոմներից կրիպտոքրոմ 4-ն է (Cry4): «Nature» ամսագրում հրատարակված հոդվածի հեղինակները պարզել են, թե ինչպես է աշխատում այս մոլեկուլը [17]: Cry 4-ի գենը ներդրվել է աղիքային ցուպիկի բջջի մեջ, որից հետո անջատվել են մաքուր սպիտակուցի պատրաստուկներ, որոնք նույնատիպ էին թռչունների Cry4 սպիտակուցին: Այսպիսի աշխատանքներ կատարվել են չվող արշալուսիկների և նստակյաց հավերի ու աղավնիների կրիպտոքրոմների հետ: Սա հնարավորություն տվեց դիտարկել, թե ինչպես են փոխվում այն ռեակցիաները, որոնք կատալիզվում են Cry4 սպիտակուցների կողմից՝ կախված դրանց վրա ազդող մագնիսական դաշտի ուժագծերից [17]:

Այս սպիտակուցը գտնվում է թռչունների և որոշ այլ կենդանիների աչքի ցանցաթաղանթում: Կախված մագնիսական դաշտի ազդեցությունից, ֆոտոքիմիական փոխակերպումների ժամանակ վերջինս կարողանում է իրեն տարբեր կերպ դրսևորել: Նրա օգնությամբ, ինչպես կարծում են որոշ հետազոտողներ, թռչունը կարող է ուղիղ իմաստով տեսնել մագնիսական դաշտը [6]:

Cry4-ի աշխատանքի մեխանիզմը ավելի լավ հասկանալու համար գիտնականները իրականացրել են համակարգչային մոդելավորում [17]: Արդյունքները ցույց են տվել, որ ընկնող ֆոտոնների ազդեցության տակ կրիպտոքրոմի մոլեկուլում առաջանում են գրգռված էլեկտրոններ, որոնցից երկուսը կազմում են զույգ: Այս էլեկտրոնների սպինները տատանվում են վայրկյանում միլիոն անգամ հաճախականությամբ՝ դառնալով կա՛մ միաուղղորդված, կա՛մ հակաուղղորդված:

Կախված կողմնորոշման ուղղությունից կատալիզվող ռեակցիան զարգանում է ուղղություններից մեկով: Սակայն ժամանակը, որի ընթացքում սպինները ունեն նույն կամ հակառակ ուղղությունը, որոշվում է մագնիսական դաշտի հարաբերական ուղղությամբ: Այս քվանտային մեխանիզմը ի վերջո որոշում է թռչունների մագնիսազգայունությունը [17]:

Սանկտ-Պետերբուրգի պետական համալսարանի մի խումբ գիտնականներ ստեղծել են փոքր սարք Երկրի մագնիսական դաշտի միջոցով թռչունների կողմնորոշումը ուսումնասիրելու համար [6]: Մեկ գրամից քիչ պակաս կշռող այս սարքը հնարավորություն է տալիս տեղայնորեն «խլացնել» թռչունների մագնիսական կողմնացույցը: Հայտնի է նաև, որ

եթե թռչնի մարմնի վրա ազդեն թույլ փոփոխական մագնիսական դաշտով, ապա կողմնացույցի աշխատանքը կխաթարվի: Բացի այդ հետազոտողների միջազգային խումբը, որտեղ ներգրավված են նաև ՍՊբ-ի պետական համալսարանի գիտնականները, պարզել է, որ մագնիսական տեղադրության մասին ինֆորմացիան փոխանցվում է թռչունների ուղեղին եռվորյակ նյարդի տեսողական ճյուղի միջոցով [6]: Նյարդը առկա է, ֆունկցիան՝ ևս, սակայն ինքը՝ ընկալիչը, դեռևս հայտնաբերված չէ: Ստուգելու համար, թե արդյոք մագնիսական կողմնացույցն իսկապես կապված է աչքերի հետ, այս գիտնականները որոշել են այդ հատվածի վրա ազդել փոփոխական մագնիսական դաշտով, որը տեսականորեն, պետք է խանգարի թռչնի կողմնացույցի աշխատանքին: Այդ նպատակով 22 այգու շահրիկ կոչվող թռչուններին ամրացրել են միկրոգեներատորներ: Մի շարք փորձարկումներից հետո պարզել են, որ թռչունները, որոնք պահվել են հատուկ կլոր վանդակներում, միկրոգեներատորները և՛ միացված, և՛ անջատված վիճակում վարվում էին նույն կերպ: Առանց տեսանելի կողմնորոշիչների, նրանք ցատկում են այն ուղղությամբ, դեպի ուր նրանք կթռչեին, եթե գտնվեին ազատ տարածությունում, այսինքն՝ դեպի հարավ-արևմուտք: Իսկ երբ փոփոխական դաշտը ազդել է թռչնի ամբողջ մարմնի վրա, երբ նրան տեղադրում էին մեծ անշարժ կոճի մեջ, թռչունը ամբողջությամբ կորցնում էր կողմնորոշվելու ընդունակությունը [6]:

Ինչպես նշում է Սանկտ-Պետերբուրգի համալսարանի դոցենտ Յ. Բոյարինովան՝ ով հետազոտության առաջատար հեղինակներից է [6], փորձերի արդյունքը խոսում է այն մասին, որ թռչունները ունեն այլ զգայական համակարգեր, որոնք զգայուն են թույլ, բարձր հաճախականություն ունեցող մագնիսական դաշտերի նկատմամբ, իսկ դա էապես փոխում է մագնիսազգայունության նկատմամբ բիոֆիզիկայում և նեյրոֆիզիոլոգիայում իշխող պատկերացումները:

Մի շարք այլ փորձերով գիտնականները ցանկացել են ուսումնասիրել թռչնի մարմնի այլ մասեր, որտեղ հնարավոր է թաքնված է «կողմնացույցը» [6]: Որոշ հետազոտություններ խոսում են այն մասին, որ դա կարող է լինել կտուցի վերին հատվածը, ինչպես նաև լագենան՝ ներքին ականջի հատվածը: Ինչպես նշել է Կիրիլ Կավոկինը թռչունների մագնիսական կողմնացույցը մինչև այսօր էլ չլուծված հանելուկ է [6]: Սակայն կա հնարավորություն, որ այս ֆունդամենտալ խնդրի լուծումը ապագայում կօգնի ստեղծել նոր անարբանյակ նավիգացիոն համակարգեր, չէ որ թռչունները միշտ գիտեն, թե ուր թռչեն [6]:

Գաղտնի կողմնացույց թե՞ բնազդի հրաշքը

Հետազոտողների մեծամասնությունը ընդունում է Կրամերի «քարտեզի և կողմնացույցի» մասին հիպոթեզը [14]: Թռիչքի ժամանակ կողմնորոշվելու համար թռչնին անհրաժեշտ է ոչ միայն կողմնացույց, որը ինչպես հասկանում ենք թռչունն ունի, այլ նաև քարտեզ: Չնայած նրան, որ այդ քարտեզի էությունը մինչև այսօր էլ դեռ պարզված չէ, այնուամենայնիվ լուսապարբերության հետ կապված մեծաքանակ հետազոտությունների արդյունքները ցույց են տվել, որ թռչունները ունակ են իրենց ստացած ինֆորմացիան ինչ-որ կերպ համադրել գիտակցության մեջ առկա «քարտեզի» հետ [14]:

Անկասկած, թռչունների միգրացիայի իրականացման վրա կարևոր ազդեցություն ունի բնազդը, այսինքն՝ ի ծնե, ժառանգաբար փոխանցվող որոշակի վարք ցուցաբերելու ունակությունը: Թռչունների մոտ բնազդի օրինակ է բնակառուցման գործընթացը. ոչ ոք նրան չի սովորեցնում բույն հյուսել, բայց երբ նա սկսում է կառուցման գործընթացը այն անում է այնպես, ինչպես իր տեսակի բոլոր առանձնյակները: Որոշ թռչունների մոտ առաջինը չվում են երիտասարդ առանձնյակները, այնուհետև ծերերը: Հետևաբար երիտասարդներին ոչ ոք չի սովորեցնում ճանապարհը դեպի ձմեռման վայրը, նրանք ի ծնե ինչ-որ կերպ դա գիտեն: Բազմաթիվ փորձեր հաստատում են թռչունների բնազդով գործելու սկզբունքը: Այդ փորձերից մեկի ժամանակ մինչև աշնանային չուն մի խումբ արագիլների հեռացրել են իրենց բներից և տեղափոխել են այլ տարածք: Այդ նոր տարածքից նրանք ստիպված թռել են այլ ուղղությամբ մինչև որ հասունացել է միգրացիայի ժամանակը: Երբ արդեն եկել է չվելու ժամանակը, նրանք թռել են այն նույն ուղղությամբ, որով միշտ ճամփորդել են, երբ գտնվել են իրենց բնակալման տարածքում: Չվելու ժամանակ թռչունների կողմնորոշման մեխանիզմը ապշեցնող է: Այսպես օրինակ՝ ծիծեռնակը հասնում է Աֆրիկա միայն իրեն ծանոթ մի քանի կողմնորոշիչների միջոցով: Հետաքրքիր է, որ Հունգարիայում բնակվող ծիծեռնակը վերադառնում է չուից ոչ թե Հունգարիայի որևէ շրջան բնադրելու համար, այլ վերադառնում է հենց այն գյուղը և այն տան տանիք՝ որտեղից որ չվել է:

Կարելի է ասել, որ հրաշքի նմանվող այս երևույթները կարելի է բացատրել միայն ներքին խորհրդավոր մի մեխանիզմի աշխատանքով: Գիտնականները այս մեխանիզմը անվանում են խորհրդավոր, որովհետև դեռևս չեն կարողացել մեկնաբանել վերջինիս աշխատանքի էությունը [14]:

Վերջին ժամանակներում կատարված բազմաթիվ հետազոտու-

թյունները ապացուցում են, որ թռչունները միգրացիայի ժամկետները և ուղղությունը որոշում են տարածաժամանակային գենետիկ հատուկ ծրագրով: Վերջինիս առկայությունը ապացուցված է թռչունների 10 ընտանիքներին պատկանող 20 թռչնատեսակների համար [18]: Բնության մեջ դիտվող չուի պատկերը առաջանում է ի շնորհիվ արտաքին միջավայրի և էնդոգեն ծրագրի փոխներգործության հետևանքով ինչպես ֆենոտիպը՝ գենոտիպի հիման վրա: Միանգամայն հնարավոր է, որ թռչունների օրգանիզմում գենետիկորեն ամրագրված է միգրացիոն ուղղությունների տեղադրությունը, այսինքն ինֆորմացիան այն մասին, թե երբ, որտեղից և դեպի ուր պետք է նրանք թռչեն [18]:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Сезонные миграции птиц, WWW.REFERAT911.RU (27.04.2012).
2. http://www.miigaik.ru.
3. Перелёты или сезонные миграции птиц, http://ornithology.su (1979).
4. Как происходит миграция птиц, https://awesomeworld.ru.
5. Навигаторы в перьях, https://rg.ru (08.08.2018).
6. Крошечный прибор для изучения ориентации птиц по магнитному полю Земли, https://naked-science.ru (16.03.2020).
7. Какие птицы мигрируют. В какие теплые края улетают птицы? Сезонные миграции птиц. Причины миграции. Как ориентируются птицы, https://kvakusha.ru.
8. Сезонные миграции птиц, https://revolution.allbest.ru, (28.10.2013).
9. Թռչունների չու, https://hy.wikipedia.org, (11.07.2011):
10. Что ежегодно вызывает перелеты, http://www.ornithology.su, (1968).
11. Клин (орнитология), https://ru.wikipedia.org, (10.10.2021).
12. Птицы во время перелетов спят "наполовину", https://ria.ru (07.11.2008).
13. Почему перелетные птицы возвращаются весной обратно?, https://elementy.ru.
14. Как птицы ориентируются в пространстве. Как птицы ориентируются в полете? Так как же птицы ориентируются в пространстве, https://solydus.ru.
15. Секрет птичьего навигатора |ТБН, https://tbn-tv.com/ptichij-navigator/, (30.08.2017).

16. Перелеты птиц, http://ecosystema.ru.
17. Квантовые эффекты помогают птицам чувствовать направление магнитного поля Земли — Naked Science, https://naked-science.ru (24.06.2021).
18. Пролетные пути и эволюция птиц – Научная библиотека, http://www.f-mx.ru (1990).
19. Миграция птиц, https://ru.wikipedia.org, (22.01.2022).

Тайна миграции птиц.
Секретный компас или чудо инстинкта?

Манукян Татевик
ВГУ, Биология, 3-й курс

Резюме

Ключевые слова: *птицы, миграция, предмиграционное состояние, ориентация, магниторецепция*

В статье даны многие ответы на вопросы, связанные с миграцией птиц, а относительно спорных вопросов приводятся самые свежие научные сведения. Главной задачей миграции является правильная ориентация в среде. В данной статье даны сведения относительно этого вопроса, а также о том, как происходит ориентирование по солнцу и звездам, сенсорным системам слуха и обоняния, и магнитного поля.

The Mystery of Birds Migration.
Secret Compass or the Miracle of Instinct?

Manukyan Tatevik
VSU, Biology, 3rd course

Summary

Key words: *birds, migration, pre-migration state, orientation, magnetoreception*

The article provides answers to many questions related to the migration of birds, and the most mysterious scientific information on the most controversial issues. The main problem of birds during migration is orientation in the environment. The article provides information on this issue, in particular, hints are given on how the orientation takes place by the stars and sun, olfactory-auditory sensory systems, as well as by the magnetic field.

Անանուխի էքստրակտի կիրառությունը հացաթխման արտադրության մեջ

Սոլոմոնյան Արմեն
ՀԱԱՀ, Պարենամթերքի տեխնոլոգիա կրթական ծրագիր,
Խմորման արտադրության տեխնոլոգիա և գինեգործություն, 5-րդ կուրս
Գիտական ղեկավար՝տեխն. գ. թ., դոցենտ ***Ն. Հովհաննիսյան***

Հանգուցային բառեր. *հաց, տեխնոլոգիա, հաճարի ալյուր, անանուխի էքստրակտ, բաղադրագիր*

Նախաբան: Բուսական հումքի բուժիչ հատկությունները պայմանավորված են դրանցում պարունակվող բարդ օրգանական նյութերով, որոնք ֆիզիոլոգիական ազդեցություն ունեն մարդու օրգանիզմի վրա: Սովորաբար դրանք կուտակվում են բույսերի արմատներում, պալարներում, տերևներում և այլն: Բույսերի օգտակար նյութերի քանակը կախված է հումքի հավաքման տարբեր ժամանակահատվածներից: Բույսերի մեջ պարունակվող բուժիչ հատկությունները բաժանվում են ալկալոիդների, գլյուկոզիդների, տաննինների, եթերայուղերի, վիտամինների, ճարպային յուղերի և որոշ այլ խմբերի [1, 3]:

Հայաստանում աճում է շուրջ 3500 բուսատեսակ 150 ընտանիքից, որից մոտ 108 տեսակ հանդիպում է միայն Հայաստանում: Շատ բույսեր անվանում են նույնիսկ հայկական անուններով: Այս բույսերից յուրաքանչյուրից հնարավոր է ստանալ այլընտրանքային կիսապատրաստվածներ, որոնք հետագայում արդյունավետ կերպով կօգտագործվեն հացաթխման արտադրություն:

Հացաբուլկեղենի տեսականու ընդլայնման խնդիրներից մեկը կենսաբանական ակտիվ նյութերի պարունակությունն ավելացնող բնական բաղադրիչների օգտագործումն է, որի պակասը վերջին տարիների առավել նկատվում է: Հացաթխման արտադրության մեջ հիմնականում օգտագործվում է ցորենի հատիկից ստացվող և շատ ավելի քիչ այլ հացահատիկներից ստացվող ալյուրի տեսակներ, մինչ դեռ կան հատիկներ, որոնք շատ հարուստ են միկրո և մակրոտարրերով: Նման հացահատիկներից է նաև հաճարը:

Հացահատիկային մշակաբույսերի շրջանում հաճարը պարունակում է սպիտակուցների ամենամեծ քանակը՝ մինչև 15,87%, ածխաջրերի պարունակությունը՝ 42,5%, ճարպը՝ 3,58%, հանքանյութերը՝ 14,3%, սննդային մանրաթելերը՝ 5,4%: Հաճարը երկաթի, սպիտակուցի և B խմբի

վիտամինների ավելի մեծ պարունակություն ունի, քան ցորենի հատիկը [5]:

Սպիտակուցը, որով բավականին հարուստ է հաճարի հատիկը, պարունակում է մարդու օրգանիզմին անհրաժեշտ անփոխարինելի ամիանաթթուներ: Հացահատիկի մեջ պարունակվող պոլիսախարիդները կարևոր դեր են խաղում օրգանիզմի դիմադրողականության ձևավորման գործում:

Հաճարի կարծր տեսակի ալյուրն ունի սպիտակ գույն, գորշ երանգով: Խմորը դրանից արագ մգվում է, ինչը վկայում է պոլիֆենոլների առկայության մասին: Չնայած հաճարի հատիկի մի շարք առավելություններին, այնուամենայնիվ այն հացաբուլկեղենի արտադրության մեջ օգտագործելը տարածված չէ, քանի որ չի պարունակում սոսնձանյութ: Ինչպես հայտնի է սոսնձանյութը համարվում է հացաթխման արտադրության մեջ «խմոր-կմախք»-ի հիմնական ձևավորող բաղադրիչը [1]:

Հացաթխման արտադրության մեջ մեկ այլ արդի խնդիրներից է հանդիսանում խմորիչների օգտագործման քանակի կրճատմանն ուղղված նոր առաջարկների և տեխնոլոգիաների մշակումը: Եվ նույնքան կարևոր խնդիր է կրճատել նաև արտադրության գործընթացի տևողությունը, որը հատկապես խմորման պրոցեսի համար կազմում է ամբողջ արտադրական գործընթացի 70% [4]:

Նյութը և մեթոդները: Հետազոտության նպատակն է մշակել հացի նոր տեխնոլոգիա, կիրառելով հաճարի ալյուր և անանուխի էքստրակտ, ինչպես նաև ուսումնասիրել այդ բաղադրիչների ազդեցությունը հաճարի ալյուրից ստացված խմորի և հացի տեխնոլոգիական հատկությունների վրա:

Ելնելով սահմանված նպատակից, առաջադրվել են հետևյալ խնդիրները.

- ընտրել բուսական ծագման այնպիսի բաղադրիչ, որը հնարավորություն կտա արագացնել հացի խմորում ընթացող սպիրտային խմորման պրոցեսը,
- մշակել հաճարի ալյուրի օգտագործման հնարավոր եղանակները որակյալ հացի ստացման նպատակով,
- խմորիչների կրճատման նպատակով սահմանել անանուխի էքստրակտի օգտագործման օպտիմալ չափաբաժինը և կիրառման եղանակը,
- մշակել նոր արտադրատեսակի բաղադրագիրը և տեխնոլոգիան,
- ուսումնասիրել արտադրանքի տեխնոլոգիական պարամետրերը:

Հետազոտության ընթացքում օգտագործվել են հումքատեսակներ, որոնք նախատեսվում են հացաթխման արտադրության մեջ և համապատասխանել են բոլոր որակական նորմատիվ պահանջներին: Ցորենի ալյուր բարձր տեսակի՝ ԳՈՍՏ 26574-2017, հաճարի ալյուր ամբողջահատիկ՝ ՏՊ 9293-014-89751414-11, հացաթխման մամլած խմորիչներ[a] ԳՈՍՏ 171-81, կերակրի աղը[a] ՀՍՏ 239 -2005:

Պատրաստի արտադրանքի որակական ցուցանիշներն ուսումնասիրելիս օգտագործվել են ոլորտի համընդհանուր ստանդարտներով կանոնակարգված հետազոտման մեթոդները: Տեխնոլոգիական գործընթացը կատարվել է հացաթխման արտադրությունում գործող տեխնոլոգիական հրահանգին համապատասխան [2]:

Հետազոտություններն անցկացվել են ՀԱԱՀ-ի «Սննդագիտության և կենսատեխնոլոգիաների ԳՀԻ-ի բուսական ծագման հումքի և մթերքի տեխնոլոգիա» բաժնում:

Արդյունքները և վերլուծությունը


Փորձերը կատարվել են ստուգիչ նմուշի և փորձնական հացի պատրաստման, ուսումնասիրության և համեմատական գնահատման հիման վրա: Նմուշները պատրաստվել են առանց խաշխմորի եղանակներով:

Որպես ստուգիչ տարբերակ (նմուշ N1) ընտրվել է հատակաթուխ արտադրատեսակը, որը պատրաստված է ամբողջապես ցորենի բարձր տեսակի ալյուրից և այդ խումբ արտադրատեսակների համար սահմանված ստանդարտ բաղադրագրով: Ուսումնասիրության ընթացքում, որպես խմորիչների կրճատման այլընտրանքային տարբերակ ընտրվել և օգտագործվել է անանուխի էքստրակտ պատրաստված 70% էթիլային սպիրտով:

Առաջին ուսումնասիրության ընթացքում պարտրաստվել է փորձարարական նմուշ ավանդական առանց խաշխմորային եղանակով և առանց էքստրակտի օգտագործման, սակայն պատրաստված 50% հաճարի ալյուրից և 50% ցորենի բարձր տեսակի ալյուրից (նմուշ N2.): Այս նմուշում խմորիչների քանակությունը կիրառվել է նույնքան, որքան նախատեսված է հացի ստանդարտ բաղադրագերում՝ 2,5կգ. ըստ 100 կգ ալյուրի: Երկրորդ փորձարարական նմուշը պատրաստելիս հացի բաղադրակազմում ավելացվել է սպիրտային հիմքով անանուխի էքստրակտ, որը օգտագործվել է ըստ ջրի սահմանված քանակի 15%-ի չափաբաժնով, դուրս բերելով համապատասխան քանակի ջուր (նմուշ N3.): Երկրորդ փորձարարական նմուշի տեխնոլոգիական սխեման և

բաղադրագիրը ներկայացված են սխեմա 1-ում:

Սխեմա 1. Հացի պատրաստման տեխնոլոգիական սխեման և աղադրագիրը
**Կազմվել է հեղինակների կողմից*



Խմորի թխման պարամետրերի վրա անանուխի էքստրակտի ազդեցության ուսումնասիրության արդյունքները ներկայացված են աղյուսակ 1-ում:

Աղյուսակ 1

Անանուխի էքստրակտի ազդեցությունը խմորի թխման պարամետրերի վրա

Ցուցանիշների անվանումը	Պարամետրեր		
	Նմուշ N 1 Ստուգիչ նմուշ	Նմուշ N 2 Հաճարի ալյուր 50%, ցորենի բ/տ ալյուր 50%	Նմուշ N 3 Հաճարի ալյուր 50%, ցորենի բ/տ ալյուր 50% և անանուխի էքստրակտ
Խառնուրդ ալյուրների սոսնձանյութի ձգելիությունը, սմ	13	13	14
Խառնուրդ ալյուրների սոսնձանյութի որակը	Լավ	բավարար	լավ
Խմորման տևողությունը, րոպե	90	98	80
Հասունացման տևողությունը, րոպե	100	120	95
Թխելու տևողությունը, րոպե	25	30	23

Հետազոտությունների արդյունքում նկատվել է նոր արտադրատեսակներից նմուշ N 3-ում զգալիորեն բարելավել են որակական հիմնական ցուցանիշները: Մասնավորապես կրճատվել է խմորման և հասունացման տևողություններն, ինչը տեխնոլոգիական ծախսատարության առումով արդյունավետ է: Դա պայմանավորված է լրացուցիչ հումքատեսակների օգտագործմամբ: Քանի որ էքստրակտը պարունակում են սպիրտային մաս, դա իր հերթին կարող է լրացուցիչ ազդեցություն ունենալ խմորման գործընթացի վրա: Սպիրտային խմորումը խմորի խմորման հիմնական տեսակն է: Դա պայմանավորված է խմորիչ բջիջների ֆերմենտներով, որոնք ամենապարզ շաքարները (մոնոսախարիդները) վերածում են էթիլային սպիրտի և ածխաթթու գազի: Խմորի մեջ խմորիչի ֆերմենտները էքստրակտի մեջ պարունակվող էթիլային սպիրտի հետ միասին ավելի ինտենսիվորեն առաջացնում սպիրտային խմորում: Սա թույլ է տալիս ստանդարտ հացի բաղադրեագրերով նախատեսված 100 կգ. ալյուրի հաշվով օգտագործվող 2,5 կգ. չոր խմորիչը կրճատել 50%-ով և սահմանել 1,25 կգ.: Նմուշ N 2-ում գրեթե ֆիզիկաքիմիական ցուցանիշների փոփոխություն չի նկատվում և որոշ դեպքերում նաև նկատելի է

որակական անկում: Սա պահմանավորված է հաճարի ալյուրի քիմիական կազմությունով և մասնավորապես սոսնձանյութի բացակայությամբ, ինչի պատճառով չնայած, որ ունի բավականին հարուստ միկրո և մակրոտարրեր, այնուամենայնիվ չի ապահովում արտադրանքի սպառողական տեսքը: Էքստրակտի կիրառման եղանակով հնարավոր է եղել միևնույն ժամանակ ստանալ սպառողական հատկանիշներով գրավիչ հաճարի հաց և այդ եղանակով նաև հարստացնել հացի քիմիական կազմությունը, որի հետազոտության արդյունքները կներկայացվեն հետագա աշխատանքներում:

Աղյուսակ 2

Պատրաստի հացի արտադրատեսակների որակի հատկությունների ուսումնասիրություն

Ցուցանիշների անվանումը	Հացի որակի ցուցանիշներ		
	Նմուշ N 1 Ստուգիչ նմուշ	Նմուշ N 2 Հաճարի ալյուր 50%, ցորենի բ/տ ալյուր 50%	Նմուշ N 3 Հաճարի ալյուր 50%, ցորենի բ/տ ալյուր 50% և անանուխի էքստրակտ
Խմորի թթվայնությունը, ^{0}Ն	3,0	3,2	3,1
Խմորի խոնավություն, %	44,0	44,2	44,8
Ծակոտկենություն	72,2	72,0	80,5
Տեսակարար ծավալ, սմ^3/ գ	3,0	2,9	4,0
Չորացում,%	4,0	3,6	3,1
Ելք, կգ	130,5	129,5	135,2

Հետազոտության արդյունքները ցույց են տվել, որ փորձարարական նմուշներն ունեն հավասարաչափ ծակոտկենություն, փափուկ կառուցվածք, հաճելի համ և հոտը:


Աղյուսակ 3

Նմուշների օրգանոլեպտիկ գնահատականակը

**Կազմվել է հեղինակների կողմից*

Ցուցանիշների անվանումը	Հացի որակի ցուցանիշներ		
	Նմուշ N 1 Ստուգիչ նմուշ	**Նմուշ N 2 Հաճարի ալյուր 50%, ցորենի բ/տ ալյուր 50%**	**Նմուշ N 3 Հաճարի ալյուր 50%, ցորենի բ/տ ալյուր 50% և անանուխի էքստրակտ**
Մակերեսը	Առանց ճաքերի	Քիչ ճաքերով	Առանց ճաքերի
Թխվածությունը	Թխված	Թխված	Թխված
Միջուկի ծակոտկենությունն	Հավասարաչափ ծակոտկեն	Քիչ հավասարաչափ ծակոտկեն	Մանր, հավասարաշափ ծակոտկեն, փափուկ կազմության
Համը և հոտը	Համապատասխա-նում է արտադրատեսակին	Համապատասխա-նում է արտադրատեսակին	Համապատասխա-նում է արտադրատեսակին, հաճելի համային հատկություններով

Օրգանոլեպտիկ գնահատման արդյունքների համաձայն նմուշները գնահատվել նաև ըստ բալային համակարգի, որի արդյունքում ստացվել է հետևյալ գծապատկերը՝



Գծ. 1 Արտադրատեսակների բալային գնահատականը

**Կազմվել է հեղինակների կողմից*

Եզրակացություն

Գիտափորձարարական հետազոտությունների արդյունքում ստացվել են հետևյալ եզրահանգումները՝

1. Տեղական հումքից էքստրակտներ օգտագործելով՝ կարող ենք կրճատել հացի մեջ օգտագործվող խմորիչի քանակը, միևնույն ժամանակ արտադրել ֆունկցիոնալ հատկություններով բարձրորակ արտադրանք:
2. Անանուխի էքստրակտը տեխնոլոգիական ազդեցություն է ունեցել արտադրական պրոցեսում, արագացնելով հացի խմորում ընթացքը, որի արդյունքում կրճատվում է հացախման ամենից երկար փուլերից մեկի տևողությունը, ապահովելով նաև ժամանակի խնայողություն:
3. Ապացուցված է, նորագույն տեխնոլոգիաների կիրառմամբ, հաճարի ալյուրի բավականին բարձր չափաբաժնի (50:50 հարաբերակցությամբ) կիրառմամբ հնարավոր է ստանալ որակյալ, սպառողական հատկություններով, ինչպես նաև օգտակար հաց ստանալու նպատակով:
4. Տեխնոլոգիան կարող է ներդրվել արտադրության մեջ, որպես ֆունկցիոնալ նշանակության մթերք և հավելյալ տեխնոլոգիական սարքավորումների և ներդրումների կարիք չի լինի:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Матвеева, Т. В. Физиологически функциональные пищевые ингредиенты для хлебобулочных и кондитерских изделий: монография / Т. В. Матвеева, С. Я. Корячкина. – Орел: ФГБОУ ВПО «Госуниверситет - УНПК», 2012. – 37-52 с.
2. Корячкина С. Я. Контроль хлебопекарного производства: учебное пособие для вузов [Текст] / С. Я. Корячкина, Н. А. Лабутина, Н. А. Березина, Е. В. Хмелева. – Орел: ОрелГТУ, 2010. – 705 с.
3. Куркина А.В. Флавоноиды фармакопейных растений.- Офорт, ГБОУ ВПО СамГМУ Минздравсоцразвития России, 2012.- 290с.
4. Оганисян Н. Г. Использование экстракта мяты в производстве хлеба. Россейский экономический университета им. Г. В. Плеханова.«Церевитиновские чтения 2020» Сборник трудов, г. Москва- 2020, с. 70-76.
5. https://eda-land.ru/pshenica/polbyanaya-muka/.

Применение экстракта мяты в производстве хлеба

Соломонян Армен
НАУА, Факультет технологий продовольствия,
Технология продовольственных продуктов,
Технология бродильного производства и виноделие,
5-ый курс

Резюме

Ключевые слова: *хлеб, технология, полбяная мука, экстракт мяты, рецепт*

В последнее время тенденция здорового образа жизни и правильные пищевые привычки получили столь широкое распространение, что спрос на здоровую пищу среди населения начал стремительно расти, и рынок должен адаптироваться к новым требованиям. Сегодняшний хлебный рынок благодаря улучшению технологий расширяется. Новые, нетрадиционные виды хлеба становятся более распространенными продуктами, а его производство приобретает массовый характер.

Цель исследования-разработать новую технологию хлеба, применяя муку из полбы и экстракт мяты, а также изучить влияние этих ингредиентов на технологические свойства теста и хлеба.

Разработанная технология позволяет расширить ассортимент хлеба на нашем рынке, а также предложить потребителю качественную продукцию с новыми технологическими решениями.

The use of Mint Extract in the Production of Bread

Solomonyan Armen
ANAU, Faculty of Food Technologies
Food Technology, Fermentation Technology and Winemaking,
5th course

Summary

Keyword: *bread, technology, spelt flour, mint extract, recipe*

Recently, the trend of a healthy lifestyle and correct eating habits has become so widespread that the demand for healthy food among the population has begun to grow rapidly, and the market must adapt to new requirements. Today's bread market is expanding thanks to improved technologies. New non-traditional types of bread are becoming more common products, and its production is becoming widespread.

The aim of the study is to develop new technology of bread with the using of spelt flour and mint extract, as well as to study the effect of these ingredients on the technological properties of dough and bread.

The developed technology allows us to expand the range of bread on our market, as well as to offer consumers high-quality products with new technological solutions.

ՀՈԳԵԲԱՆՈՒԹՅՈՒՆ

ПСИХОЛОГИЯ

PSYCHOLOGY

Համացանցից կախվածությունը դեռահասների մոտ և դրա կապն ագրեսիվության հետ

Աթաբեկյան Աննա
ՎՊՀ, Անձի հոգեբանություն, հոգեբանական խորհրդատվություն, Մագիստրատուրա, 3-րդ կուրս
Գիտական ղեկավար՝ հ. գ. թ., դոցենտ ***Վ. Միրզոյան***

Հանգուցային բառեր. *կախվածություն, համացանցից կախվածություն, դեռահաս, ագրեսիվություն*

Վերջին տարիներին արագորեն աճում է համացանցից կախվածություն ունեցողների թիվը:

Համացանցից կախվածությունը, համացանցից օգտվելու մոլուցքի ցանկությունն է, և դրա չափազանց մեծ օգտագործումը՝ շատ ժամանակ անցկացնելով համացանցում:

Ժամանակակից տեխնոլոգիական աշխարհը հնարավոր չէ պատկերացնել առանց համակարգիչների, սմարթֆոնների, պլանշետների և այլ թվային տեխնոլոգիաների, քանի որ համացանցի օգնությամբ ենք լսում երաժշտություն, դիտում ֆիլմեր, իմանում նորություններ, շփվում ընկերների հետ, խաղում խաղեր, նույնիսկ գնումներ կատարում՝ առանց տնից դուրս գալու:

Համացանցն, անկասկած, ընդլայնում է մեր հնարավորությունները՝ ինչպես կրթության, ինքնազարգացման, այնպես էլ հանգստի ու հաճելի հաղորդակցման տեսանկյունից: Սակայն համացանցն իր առավելություններով հանդերձ միաժամանակ ունի նաև իր թերությունները, քանի որ համացանցում առկա է կեղծ և ոչ հավաստի ինֆորմացիա, որը կարող է սխալ կարծիք ձևավորել տվյալ տեղեկատվության վերաբերյալ: Եվ ինչքան մարդը խճճում է իրեն հուզող հարցերի շուրջ համացանցում, այնքան հանդիպում է շատ վտանգների, որոնց պետք է ճիշտ լուծում տալ:

Առավել խոցելի են այս վտանգի համար դեռահասները, որոնց մոտ հետագայում առաջանում է համացանցից կախվածություն:

Համացանցում հաղորդակցումը դեռահասներին հնարավորություն է տալիս գոյատևել իրենց երազների պատկերներով և, առանց այդ պատկերների սահմաններից դուրս գալու իրականացնել այնքան անհրաժեշտ

և ցանկալի հաղորդակցական գործունեություն, որն իրականում անհնարին է թվում:

Հոգեբանական բառարանում համացանցից կախվածությունը բնորոշվում է որպես հոգեկան խանգարում, համացանցին միանալու օբսեսիվ ցանկություն և ժամանակին համացանցից անջատվելու հիվանդագին անկարողություն [1, 4-6]:

Համացանցից կախվածության հիմնադրով զբաղվել է ամերիկացի կլինիկական հոգեբան Քիմբերլի Յանգը և հոգեբույժ Իվան Գոլդբերգը [6]:

Ի. Գոլդբերգը «Ինտերնետային կախվածություն» եզրույթը բացահայտել է 1996 թ.-ին և սահմանել է որպես անգիտակցաբար երկար ժամանակ անցկացնելով այնտեղ:

1994 թ.-ին, ամերիկացի հոգեբույժ, ինտերնետ կախվածության ոլորտի փորձագետ,ինտերնետային կախվածության կենտրոնի տնօրեն (Պիտսբուրգի-Բրեդֆորդի համալսարան), աշխարհում առաջին ինտերնետ կախվածության ախտորոշիչ հարցաշարի հեղինակ Կ.Յանգը այն սահմանեց որպես վարքային և

հուզական կախվածություն:

Ըստ Կ. Յանգի այն բնութագրվում է երեք հիմնական ախտանշաններով.

- ինտերնետում անձի կողմից անցկացրած ժամանակի չափի աստիճանական աճ,
- ինտերնետային գործունեությունը սկսում է փոխարինել իրական կյանքի ձևերին,
- հուզական վիճակի վատթարացում:

Համացանցից կախվածություն ունեցող անձի մոտ այն դրսևորվում է 4 ախտանշաններով՝

1. էլեկտրոնային փոստը անընդհատ ստուգելու անհրաժեշտություն,
2. ինտերնետային տարածք մուտք գործելու անընդհատ սպասում,
3. շրջապատող մարդկանց կողմից բողոքներն այն մասին, որ մարդը կիբերտարածքում չափազանց շատ ժամանակ է ծախսում,
4. շրջապատի մարդկանց բողոքներն այն մասին, որ անձը ավելորդ ծախսեր է կատարում ինտերնետ ռեսուրսների վրա [4, 1]:

Համաձայն Դ. Գրինֆիլդի, համացանցից կախվածությունը բազմաչափ երևույթ է: Այն ներառում է փախուստի դրսևորումներ, այսինքն՝ փախուստ դեպի «վիրտուալ իրականություն» այն մարդկանց, ովքեր ունեն

ցածր ինքնագնահատական, դեպրեսիայի հակվածություն, անապահովության զգացողություն, միայնության կամ հարազատների կողմից չհասկացվածություն, ծանրաբեռնվածություն աշխատանքով, կրթությամբ կամ սոցիալական միջավայրով:

Սրա հետ մեկ տեղ նման անձիք անընդհատ ունենում են նորույթի որոնման, զգացողությունների մշտական խթանման ցանկություն, հուզական կապվածություն (բարձրաձայնելու, կարեկցանքով հասկանալու և ընդունվելու ունակություն՝ դրանով իսկ ազատվելով իրական կյանքի դժվարություններից, և աջակցություն ստանալով): Նշվում է նաև համացանցում աշխատելու համար համակարգչից օգտվելիս «վիրտուոզ» զգալու հաճույքը [2, 5]:

Ըստ Ա. Վ. Կոտլյարովի, կախվածությունը կյանքի յուրահատուկ ճանապարհ է, որը կապված է «իդեալական» իրականության որոնման հետ: Կախվածության օգնությամբ մարդը փախչում է իրականության անհարմարությունից՝ չգիտակցելով, որ հայտնաբերված նոր իրականությունը քայքայում է առողջությունն ու կյանքը [3,1-3]:

Կախվածությունը դեստրուկտիվ վարքի ձև է, որն արտահայտվում է իրականությունից խուսափելու ցանկությամբ՝ փոխելով հոգեկան վիճակը, անընդհատ ուշադրություն դարձնելով այն առարկաներին կամ գործունեությանը, որն ուղեկցվում է բուռն հույզերով:

Շատ թերապևտներ համակարծիք էին, որ ոչ թե ինտերնետը մարդուն կախյալ է դարձնում, այլ կախվածության հակված մարդը գտնում է գործունեություն, որը դառնում է կախվածության առարկա: Մի շարք հեղինակներ գտնում են, որ գոյություն ունի այսպես կոչված կախյալ անձի տեսակ և մարդիկ, ովքեր ունեն այդպիսի հատկություն հայտնվում են վտանգի տակ: Նման մարդկանց բնորոշ են այնպիսի հատկանիշներ, ինչպիսիք են ծայրահեղ անինքնուրույնությունը, մերժելու անկարողությունը, ուրիշների կողմից մերժված լինելու վախը, ինչպես նաև քննադատությունից կամ դժգոհությունից, պատասխանատվություն վերցնելու և որոշումներ կայացնելու ցանկություն չունենալը: Այս ամենը բնութագրում է պասիվ կյանքի դիրքորոշումը, երբ մարդը հրաժարվում է առաջինը շփման մեջ մտնել ուրիշների հետ և ինքնուրույն որոշումներ կայացնել[4]:

Այսօր, երբ ժամանակակից հասարակությունը լուծում է կրթական գործընթացի բարելավման խնդիրը, համացանցը սկսել է կարևոր դեր

խաղալ դեռահասների ուսման գործում՝ բացահայտելով բոլոր տեսակի ռեսուրսներ ձեռքբերելու բազմաթիվ ուղիներ: Տեղեկատվության նման հոսքը, որը գալիս է համաշխարհային ցանցից, ազդում է դեռահասի գիտակցության վրա:

Ըստ Քիմբերլի Յանգի համացանցից կախվածությունը իրենից ներկայացնում է ոչ թե մեկ խանգարում, այլ կլինիկական դրսևորումների սպեկտր: Եվ ըստ դրա հեղինակը առանձնացրեց համացանցից կախվածության հետևյալ տեսակները.

1. Համակարգչային կախվածություն, որն առաջանում է անհատի կամքին հակառակ համակարգչում ցանկացած տեսակի գործունեության նկատմամբ: Դա առաջին հերթին կապված է առցանց խաղերի կախվածության հետ, որով կախվածության մեջ գտնվողները ձգտում են լրացնել իրենց կյանքում ձևավորված անիմաստության լինելու կարծիքը կամ պարզապես ազատվել ձանձրույթից:

2. Համացանցի օբսեսիվ կախվածություն՝ Ֆինանսական կախվածություն, գնումներ առցանց խանութներից և մասնակցություն վիրտուալ աճուրդներին, նաև հաճախակի մասնակցություն աճուրդներին, վիճակախաղերին, խաղարկություններին, ինտերնետային խաղերին:

3. Տեսահոլովակներից կախվածություն՝ համացանցում մեծ թվով ֆիլմերի, հեռուստասերիալների, տարբեր թեմաների տեսանյութեր դիտում:

4. Տեղեկատվության գերծանրաբեռնվածություն՝ օբսեսիվ վեբսերֆինգ, որը ենթադրում է տեղեկատվության անսահմանափակ որոնում, զուրկ ցանկացած նպատակից և իմաստից:

5. Կիբերհաղորդակցական կախվածություն՝ սոցիալական ցանցերում հաղորդակցվելու կախվածություն: Նման կախվածությանը հաճախ հակված են դեռահասներ ում համար կարող է դժվար լինել իրական կյանքում մարդկանց հետ հարաբերություններ հաստատել, ուստի նրանք դա անում են ինտերնետում[4]:

Որպես կախվածություն առաջացնող հիմնական գործոններից մեկն է համակարգչային խաղերը:

Խաղամոլությունը (կամ ինչպես նաև անվանում են համակարգչային խաղերից կախվածություն) այսօր դարձել է ամենալուրջ սոցիալական և հոգեբանական խնդիրներից մեկը՝ զուգահեռ այնպիսի երևույթների հետ, ինչպիսիք են թմրամոլությունը, ալկոհոլիզմը և պահանջում են

համապատասխան միջամտություն և լուծում:

Համակարգչային խաղերը մարդկանց տալիս են նոր բացառիկ հնարավորություն՝ փոխադրվելու պատրանքների և երազանքների աշխարհ: Խաղերը ներգրավվում են համատեղ գործունեության մեջ, խաղացողը դադարում է լինել պասիվ դիտորդ, նա ակտիվորեն ազդում է ընթացիկ իրադարձությունների վրա [7]:

Գոյություն ունեն երկու տեսակի դրդապատճառներ, որոնք դեռահասներին ստիպում են կրկին ու կրկին դիմել համակարգչային խաղերին:

Առաջին տիպի խաղացողները խաղում են հանուն խաղի հաճույքի և արդյունքի: Նրանց գրավում է այլ խաղացողների հետ հնարավոր մրցակցությունը և նվաճման շարժառիթը բավարարելու հավանականությունը: Այս տեսակի մոտիվացիայով խաղը զուգորդվում է գործունեության այլ տեսակների հետ, դեռահասը նորմալ շփվում է ուրիշների հետ, իսկ հանգստի ու ժամանցի ընթացքում դիմում համակարգչային խաղերին:

Երկրորդ տիպի մոտիվացիա ունեցող խաղացողների համար խաղը դառնում է փախուստի ձև: Խաղի կախվածության այս տեսակի դեպքում և խաղի իրականության մեջ մտնելը գրավում է ոչ միայն հոգեբանների, այլ նաև հոգեբույժների ուշադրությունը:

Համակարգչային խաղերի հանդեպ նման տարվածության պատճառը կարող է լինել դեռահասի առօրյա կյանքի խնդիրները հաղթահարելու անկարողությունը, ծնողների և հասակակիցների հետ դժվար փոխհարաբերությունները, այսինքն՝ նման դեպքերում խաղալը սթրեսին արձագանքելու ձև է և իրականությունից խուսափելու միջոց: Կախվածության հետ կապված կարիքների զարգացումը սովորաբար սկսվում է դեռահասությունից և հետագայում շատ մարդկանց մոտ կայուն ձևեր է ունենում:

Այն դեռահասների մոտ, որոնք կախվածություն են ունենում խաղերից, նկատվում են սոցիոֆոբիաներ, օտարության և լքվածության զգացում: Նման դեռահասներին թվում է, որ իրենց չեն հասկանում, նրանց համար դժվար է գտնել զրույցի թեմա կամ ընդհանրապես խոսել: Խաղացողները խաղի մեջ իրենց զգում են ուժեղ, ակտիվ և ինքնավստահ:

Արդյունքում համակարգչային խաղերից կախվածություն ունեցող դեռահասների մոտ զարգանում են բարդույթներ և ագրեսիա, որոնք նրանք ուղղում են արտաքին աշխարհ: Իրենց զգացմունքները ռացիոնալ

արտահայտելու անկարողության պատճառով, նման դեռահասների մոտ հուզական ռեակցիաները ծայրաստիճան ագրեսիվ, ոչ ադեկվատ են լինում, ինչը իր հերթին զարմանք, վախ և ցնցում է առաջացնում մյուսների մոտ:

Ագրեսիվ բովանդակությամբ համակարգչային խաղերը նպաստում են անհատականության ագրեսիվ հակումների, ֆիզիկական ագրեսիայի, ամբոխի ագրեսիայով վարակվելու միտման, ռեգիդության զարգացմանը:

Դեռահասների ագրեսիվության աստիճանը կախված է նախընտրած համակարգչային խաղերի բնույթից: Նրանք, ովքեր խաղում են բռնի համակարգչային խաղեր, ունեն ագրեսիայի ավելի բարձր մակարդակ: Միևնույն ժամանակ, խաղերի ընտրությունը գործնականում չի որոշվում դեռահասների սեռական տարբերություններով:

Դեռահասների մոտ համացանցից կախվածության առաջացման պատճառներն առավել հաճախ կրում են հոգեբանական բնույթ և կախված են դեռահասի անհատականության հոգեբանական առանձնահատկություններից և հակումներից:

Դեռահասների մոտ համացանցից կախվածության առաջացման պատճառներն են.

- Ընտանիքում հաղորդակցման և ջերմ հուզական հարաբերությունների բացակայությունը: Երբ ծնողներին (կամ այլ մերձավոր ազգականներին) չի հետաքրքրում դեռահասի հոգեկան աշխարհի վիճակը, նրանք քիչ են հետաքրքրվում դեռահասի մտքերի և զգացմունքների մասին, այն մասին, թե ինչն է իսկապես անհանգստացնում նրան:
- Հոբբիների, հետաքրքրությունների բացակայությունը: Երբ դեռահասը չունի հոբբիներ, հետաքրքրություններ, որոնք կապված չեն համակարգչի հետ:
- Մեկուսացումը, չարությունը, ավելորդ ագահությունը, վրեժխնդրությունը, ագրեսիվությունը:
- Դեռահասների հակվածությունը արագորեն «կլանել» ամեն ինչ՝ նորն ու հետաքրքիրը:
- Դեռահասի ցանկությունը՝ լինել «հասակակիցների նման», հետևել նրանց հոբբիներին:


Համացանցից կախվածությունը մարդու ներանձնային խնդիրների գերփոխհատուցման հետևանք է [5, 11]:

Դեռահասների մոտ համացանցից կախվածության և ագրեսիվության կապը բացահայտելու նպատակով իրականացրել ենք հետազոտություն: Հետազոտությանը մասնակցել են 11-14 տարեկան 127 դեռահաս: Որպես հետազոտության մեթոդիկաներ ընտրվել էին Քիմբերլի- Յանգի «Ինտերնետային կախվածության ախտորոշում» թեստը և Ա. Բասի և Ա. Դարկի «Ագրեսիայի տիպերի և ցուցանիշների ախտորոշման» մեթոդիկան [8, 9]:

Ըստ Կ. Յանգի մեթոդիկայի արդյունքների դեռահասների 61%-ի մոտ բացահայտվեց համացանցից կախվածության բարձր մակարդակ, 32 %-ի մոտ՝ միջին մակարդակ և դեռահասների 7 %-ի մոտ բացահայտվեց համացանցից կախվածության ցածր մակարդակ:

Ըստ Բաս-Դարկի մեթոդիկայի արդյունքների վերլուծության, դեռահասների 23 %-ի մոտ դրսևորվել է ագրեսիվության բարձր մակարդակ: 31 %-ի մոտ բացահայտվեց ագրեսիվության միջին մակարդակ և դեռահասների 46 %-ի մոտ դրսևորվեց ագրեսիվության ցածր մակարդակ:

Ստորև գծապատկերի տեսքով կներկայացնենք երկու մեթոդիկաների տվյալները:



Գծապատկեր Դեռահասների մոտ համացանցից կախվածության և ագրեսիվության ցուցանիշները

(r=0, 5)

Դեռահասների մոտ համացանցից կախվածության և ագրեսիվության կապը բացահայտելու նպատակով իրականացվել է համահարաբերակցային վերլուծություն, ըստ որի համացանցից կախվածության և ագրեսիվության միջև կա ուղիղ համեմատական կապ (r=0, 5):

Վերը նշվածից կարելի է եզրակացնել, որ կրճատելով համացանցից օգտվելու ժամանակը կարելի է նվազեցնել դեռահասների մոտ ագրեսիվության դրսևորումները: Դա տեղի կունենա այն պատճառով, որ դեռահասը, «կտրվելով» համացանցից, իրական կյանքում կգտնի հետաքրքրություններ, ձեռք կբերի ընկերներ, կկարողանա հաղորդակցվել հասակակիցների և մեծահասակների հետ, ինչը չափազանց կարևոր է դեռահասի համար:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Вересаева О., Психология и интернет на пороге XXI века / Вересаева, О. – Психологическая газета, № 12, 1996. - 4-6 с.:
2. Иванюшкин И. А., Интернет-зависимость: социокультурный контекст (педиатрические аспекты) Институт философии РАН, 119991, Россия, Москва, ул.Волхонка, 14/1, стр. 5 https://cyberleninka.ru (31.07.2021).
3. Котляров А.В. Другие наркотики. - М.: Психотерапия, 2006 - 480 с. ,
4. Понятие и критерии Интернет-зависимости https://studopedia.ru (23.07. 2021).
5. Учебник. Под редакцией члена-корресмондента РАО А. А. Рсана — СПб.: -шрайм-ЕВРО-ЗНАК», 2003. — 48 0 с. — (Серия «Мэтры психологии*). ISBN5-93878-015-2
6. file:///C:/Users/User/Downloads/44945.pdf (25.07.2021).
7. https://booksonline.com (23.07.2021).
8. https://gboy23.minobr63.ru/ (25.08.2021).
9. https://nekrasovspb.ru (25.08.2021).

Интернет-зависимость у подростков и ее связь с агрессивностью

Атабекян Анна
ВГУ, Психология личности и психологическая консультация,
Магистратура, 3-й курс

Резюме

***Ключевые слова**: зависимость, интернет-зависимость, подросток, агрессия.*

В данной статье описывается интернет-зависимость, ее виды, причины и симптомы; обстоятельства, способствующие возникновению проблемы интернет-зависимости у подростков.

Представлены результаты эмпирического исследования, направленного на установление взаимосвязи интернет-зависимости и агрессии у подростков.

С этой целью был использован тест Кимберли-Янг «Диагностика интернет-зависимости» и методика А. Басса и А. Дарка «Диагностика и показатели типов агрессии».

Internet Addiction in Adolescents and its Connection with Aggression

Atabekyan Anna
VSU , Personality Psychology and Psychological Counselling, MA, 3rd course

Summary

***Key words:** addiction, internet addiction, teenager, aggression*

This article describes Internet addiction, its types, causes and symptoms. Circumstances that contribute to Internet addiction in adolescents.

The results of an empirical study of the relationship between Internet addiction and aggression in adolescents are presented. For this purpose the Kimberly – Young "Internet Addiction Diagnosis" test and A. Bass an A. Dark's "Diagnosis of types of Aggression and Indicators" methodology were used.

Հաղորդակցումը որպես սթրեսային իրավիճակների հաղթահարման արդյունավետ միջոց

Արամյան Զուլիա
ՎՊՀ, Անձի հոգեբանություն և հոգեբանական խորհրդատվություն, մագիստրատուրա, 1-ին կուրս
Գիտական ղեկավար՝ հ. գ. թ., դոցենտ ***Վ. Միրզոյան***

Հոդվածում ներկայացված է հաղորդակցման դերն ու նշանակությունը սթրեսային իրավիճակներում ադեկվատ վարք դրսևորելու և հույզերը կառավարելու գործում: Նշվում է, թե ինչպես է սթրեսն ազդում անձի, մասնավորապես՝ հաղորդակցական ոլորտի վրա: Աշխատանքում որպես սթրեսային ուժգին գործոն դիտարկվում է COVID-19-ը և դրա հետևանքները: Մանրամասնորեն քննարկվում է համաճարակային պայմաններում ապրող մարդանց հոգեկան ապրումները, հուզական վիճակը և դրանց հաղթահարման ուղիները: Իրականացվել է հետազոտություն, որի արդյունքում բացահայտվել է հաղորդակցության կապը սթրեսակայունության հետ:

Հանգուցային բառեր. *սթրես, սթրեսակայունություն, հաղորդակցություն, ապրումակցում, հոգեվիճակ*

Անձի ներդաշնակ և համակողմանի զարգացման համար կարևոր է այլ մարդկանց շրջապատում գտնվելը, մարդկանց հետ համատեղ գործունեություն իրականացնելը: Օնտոգենեզի ընթացքում անձը մշտապես գտնվում է տարբեր մարդկանց հետ ակտիվ շփման մեջ, որոնք ապահովում են նրա աճն ու զարգացումը: Հաղորդակցումը բարդ և բազմաֆունկցիոնալ գործընթաց է, որը կարող է միևնույն ժամանակ հանդիսանալ և՛ որպես անհատների համագործակցություն, և՛ որպես գործընթաց, ինֆորմացիայի փոխանցման գործընթաց, և՛ որպես հարաբերություն միմյանց միջև, և՛ որպես փոխներազդում, և՛ որպես ապրումակցման և փոխադարձ հասկացման

Որպես հաղորդակցման սուբյեկտ կարող են հանդես գալ ինչպես անհատներ, այնպես էլ՝ խմբեր: Հաղորդակցումը կարող է ընթանալ խոսքային և ոչ խոսքային ձևերով: Հաղորդակցման ընթացքում տեղեկության 35%-ը փոխանցվում է խոսքային ճանապարհով, իսկ 65%–ը՝ ոչ խոսքային [1, 8]: Հաղորդակցման գործընթացը ոչ բոլորի մոտ է սահուն ընթանում: Ոմանց համար այն լուրջ խնդիր է իրենից ներկայացնում: Հաղոր-

դակցման դժվարությունները կարող են պայմանավորված լինել մի շարք հանգամանքներով: Կարևոր նշանակություն ունի խառնվածքի տիպը, բնավորության գծերը, դաստիարակության ոճը, անձնային հատկությունները, սոցիալականացման աստիճանը, իրադրությունը և այլն սոցիահոգեբանական գործոններ: Ընդհանրապես հաղորդակցումը դադարում է խնդիր լինել, երբ մարդ ինքն իրեն ավելի լավ է ճանաչում, նրա ներքին քննադատը դադարում է լինել այդքան խիստ ու անողոք: Երբ մարդը ընդունում է իրեն այնպիսին, ինչպիսին որ կա, նա դառնում է ինքնավստահ, հետաքրքրասեր և վերջինիս համար ավելի հեշտ է լինում իրականացնելու հաղորդակցման գործընթացը [3]: Հաղորդակցման կարևորությունը նրանում է, որ այն կարող է նվազցնել կամ վերացնել սթրեսայինի գործոնների ազդեցությունը անձի վրա: [4] Սթրեսը մարդու ռեակցիան է այն ներգործություններին, որոնք նրա մոտ առաջ են բերում լարվածություն և առաջանում են լարված իրավիճակներում: Սթրեսային վիճակների առկայության մասին են վկայում սրտանոթային, շնչառական համակարգությունների և վեգետատիվ այլ ցուցանիշների փոփոխությունները: Սթրեսների ժամանակ նկատվում են նաև կենտրոնական նյարդային համակարգի փոփոխություններ: Սթրեսի հետևանքներն են գերհոգնածությունը, վախերը, տագնապայնությունը, դեպրեսիան, հիշողության խանգարումները, այնգամ փսիխոզը: Սթրեսի կազմում է մեր կյանքի անբաժանելի մասը: Հ.Սելյեն գտնում էր, որ «նույնիսկ լիակատար հանգստի վիճակում քնած մարդը որոշակի սթրես է ապրում: Ըստ նրա սթրեսից լիակատար ազատությունը նշանակում է մահ» [1, 11-13]: Սթրեսի առաջացման պատճառները տարբեր են: Ներկայիս ժամանակներում այն մեծամասամբ կապված է համաճարակային և պատերազմական իրավիճակների հետ: Գիտնականների ուսումնասիրությունները ցույց են տվել, որ 1588 չինացի հարցվողների գրեթե մեկ քառորդը (22,8%) ունեցել է հոգեբանական անհանգստության բարձր մակարդակ՝ COVID-19-ի տարածման պայմաններում: COVID-19-ի մասին տեղեկատվությանը հետևելու մեծ հետաքրքրությունն ու ցանկությունը, աշխատանքը համաճարակաբանորեն վտանգավոր հետպայմաններում, շփումները տարբեր խմբերի և անձնանց հետ մարդկանց մոտ դարձավ սթրեսի պատճառ: Համաճարակի պատճառով կտրուկ նվազեց շփումը մարդկանց միջև, խիստ սահմանափակումները հնարավորություն չտվեցին շաբաթներով, անգամ ամիսներով՝ հանդիպել բարեկամներին, հարազատներին, ընկերներին, երբեմն էլ՝ ընտանիքի անգամներին: Մարդիկ հայտնվեցին սոցիալական դեպրիվացիայի պայմաններում, որոնք առա-

ջացրեցին անորոշություն, տագնապ, անհանգիստություն, խուճապ, ապաթիա և այլ բացասական հոգեվիճակներ: Կորոնավիրուսի համաճարակը ոչ միայն մարտահրավեր էր առողջապահության ու տնտեսության համար, այլև՝ լուրջ փորձություն մարդկանց հոգեկանի համար: Այն ազդեց ինչպես մարդկանց ֆիզիկական առողջության վրա, այնպես էլ՝ հոգեկան: Հիվանդությունից հետո շատերը բողոքում էին խուճապի նոպաներից, ոմանց մոտ առաջացավ դեպրեսիա, վախ, տագնապային խանգարումներ, հիշողության խանգարումներ, ուշադրության կենտրոնացման խնդիրներ և այլ ճանաչողական և հուզական ախտանշաններ [5]:

Ինչպես տեսնում ենք սթրեսակայունությունը կապված է հաղորդակցության հետ, ինչից կարելի է հետևություն անել, որ եթե հաղորդակցությունը մարդուն դարձնում է սթրեսակայուն, ապա կարելի է այն դիտարկել որպես արդյունավետ միջոց անձի՝ սթրեսային իրավիճակներում ինքնակարգավորման գործոն: Գոյություն ունեն մի շարք վարժություններ, որոնք հնարավորություն են տալիս զարգացնելու հաղորդակցական ընդունակությունները: Ներկայացնենք դրանցից մի քանիսը.


1. «Ազնիվ խոսակցություն», որի նպատակն է օբյեկտիվորեն գնահատել հաղորդակցման հմտությունները և և ավելի լավ ճանաչել իրեն և ուրիշներին: Վարժությունը կատարվում է խմբի հետ: Մասնակիցներին խնդրում են A4 ֆորմատի թերթիկի վրա գրել իրենց և այլոց դրական և բացասական հատկությունները, որոնք դրսևորվում են հաղորդակցության մեջ: Այնուհետև համեմատվում են իրենց և իրենց մասին խմբի անդամների գրածները:
2. «Մտքի շարունակություն»: Առաջարկվում է միացնել հեռուստացույցը և 30 վայրկյան լսել, որից հետո այն անջատել և 30 վայրկյան շարունակել միտքը:
3. «Լյուիս Քերոլի հանելուկը»: Վարժությունը կատարվում է զույգերով: Մեկը ասում է մի բառ, զուգընկերը՝ մեկ այլ բառ, որից հետո նրանք պետք է գտնեն, թե ինչ նմանություն կա դրանց միջև:
4. «Երկխոսություն հայելու հետ»: Շաբաթական մի քանի անգամ հայելու առջև պետք է կանգնել և սկսել բարձրաձայն մտքերն արտահայտել: 10 րոպե խոսելուց հետո կնկատեք, որ խոսում եք սահուն և անկաշկանդ [6]:

Հետազոտության նպատակն է եղել բացահայտել սթրեսային իրավիճակում ապրող մարդկանց հաղորդասիրության և հաղորդակցության մակարդակը: Հետազոտությանը մասնակցել է 40 իգական սեռի ներկայացուցիչ: Հետազոտություն իրականացնելու նպատակով կիրառել ենք

երկու մեթոդիկաներ՝ Վ. Ֆ. Ռյախոսվսկու «Շփվողականության մակարդակի որոշման» մեթոդիկան և Ն. Վ. Կիրշևայի, Ն. Վ. Ռյաբչիկովայի «Սթրեսակայունության մակարդակը որոշելու» մեթոդիկան:

Վ. Ֆ. Ռյախոսվսկու «Շփվողականության մակարդակի որոշման» մեթոդիկայի արդյունքները ցույց տվեցին, որ մասնակիցների 66%-ի մոտ բարձր է եղել շփվողականության մակարդակը, իսկ 34%-ի մոտ՝ ցածր:

Վերլուծելով սթրեսակայունությունը որոշող մեթոդիկայի արդյունքները, բացահայտեցինք, որ 28%-ի մոտ այն բարձր է, 55%-ի մոտ՝ ցածր, իսկ 17%-ի մոտ միջին մակարդակի:



Դիագրամ 1. Շփվողականության և սթրեսակայունության արդյունքները սթրեսային իրավիճակներում ապրող մարդկանց մոտ

Իրականացնելով համահարաբերակցական վերլուծություն, պարզ դարձավ, որ շփվողականության և սթրեսակայունա միջև կա ուղիղ դրական կապ՝ r=0,4: Այստեղից կարելի հետևություն անել, որ շփվողականությունը զարգացնելով կարելի է անձին դարձնել առավել սթրեսակայուն:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Китаев-Смык Л.А. 'Психология стресса' - Москва: Наука, 1983 - с. 368.
2. https://www.psychologies.ru (15.01.2022թ.).
3. https://studbooks.net (12.01.2022թ.).
4. http://www.ipras.ru (15.12.2021թ.).
5. https://hy.wikipedia.org (12.01.2022թ.).
6. https://argudanmousosh1.ru (29.01.2022թ.).

Общение как средство преодоления и предотвращения стрессовых ситуаций

Арамян Джулия
ВГУ, Психология личности и психологическая консультация
Магистратура, 1-й курс

Резюме

***Ключевые слова**: стресс, стрессоустойчивость, коммуникация, переживание, эмоциональное состояние*

В работе, в частности, обсуждаются психические переживания людей, живущих в условиях войны и эпидемий, возможные способы преодоления стресса, связь между стрессом и коммуникацией.

Communication as a Means of Overcoming and Preventing Stressful Situations

Aramyan Julia
VSU, Personality Psychology and Psychological Counseling specialty
MA, 1st course

Summary

***Key words**: stress, stress tolerance, communication, experience, emotional state*

In particular, the paper discusses the mental experiences of people living in conditions of war and epidemics, possible ways to overcome stress, the relationship between stress and communication.

Հոգեկան առողջությունը մարտական ծառայության պայմաններում

Բազարչյան Թամարա
ՎՊՀ, Անձի հոգեբանություն և հոգեբանական խորհրդատվություն, Մագիստրատուրա, 3 կուրս
Գիտական ղեկավար՝ հ. գ. թ., դոցենտ ***Մ. Մազմանյան***

Հանգույցային բառեր. *հետվնասվածքային սթրեսային խանգարում, հոգեկան առողջություն*

Հոդվածում նկարագրվում է, թե ինչ է իրենից ներկայացնում մարտական հետվնասվածքային սթրեսային խանգարումը, ինչպես նաև հետպատերազմյան շրջանում 2020 թվականի առցախյան պատերազմի մարտական գործողությունների մասնակիցների մոտ հետվնասվածքային սթրեսային խանգարման արտահայտվածության աստիճանը: Դրանց բացահայտման նպատակով օգտագործվել է «Միսիսիպյան հարցարան մարտական հետվնասվածքային սթրեսի որոշման համար» մեթոդիկան: Հոդվածում ներկայացված է այդ հետազոտության արդյունքների քանակական և որակական վերլուծությունը:

Ներածություն: Զինծառայողների հոգեկան վիճակները արտահայտում են մարդու գործունեության առանձնահատկությունները որոշակի հանգամանքների պայմաններում և որոշակի ժամանակահատվածում: Դրանք ուժեղ ազդեցություն ունեն զինծառայողների վրա մարտական իրավիճակում և, որպես հետևանք, մարտական խնդրի կատարման վրա: 44-օրյա պատերազմի թողած հետևանքները մեր իրականության մեջ հոգեբանների համար գերխնդիր են հանդիսանում: Այդ իսկ պատճառով այս թեմայի արդիականությունը դժվար է գերագնահատել:

Ըստ Ա. Մ. Ստոլյարենկոյի, մարդն իրեն որպես անձ առավել արտահայտված և վառ կերպով դրսևորում է էքստրեմալ իրավիճակներում, հատկապես երբ դրանք կյանքի համար վտանգ են ներկայացնում: Ընդ որում դրսևորվում են նրա մոտիվացիայի, բարոյականության և այլ գերակայող որակների գլխավոր առանձնահատկությունները: Նախապատրաստված և անձնապես առողջ աշխատակիցների մոտ դա դրսևորվում է.

- կյանքի կարևորագույն նպատակներին հասնելու վճռականության և անձնապես նշանակալի արժեքների պահպանման մեջ,
- պարտականության և անձնական շահի շարժառիթների միջև երկմտանքների և պայքարի բացակայությամբ,
- առույգ, համարձակ, չնահանջող գործողությունների պատրաստու-

թյան մեջ, զգոնության, զգուշավորության, խելամտության մեջ,

- հավաքվածության և անսպասելի իրավիճակներին պատրաստ լինելու մեջ, ռեակցիայի արագության, ամբողջական ինքնատիրապետման, ռիսկի նկատմամբ կայունության մեջ [3, 174]:

Զինվորական ծառայության ընթացքում հոգեկան առողջությունը կենսագործունեության համալիր, բազմամակարդակ որակ է, որն արտահայտում է հոգեֆիզիկական վիճակի և ինքնազգացողության, դիրքորոշման և վարքի համապատասխանությունը զարգացման մակարդակին, հոգեֆիզիկական հոգնածությանը, հյուծվածությանը, հոգեկանի հարմարվողական-համալիր հնարավորություններին [2, 42]:

Մարտական առաջադրանքների կատարման ժամանակ մարտիկի մոտ պետք է առկա լինի գործունեության արդյունավետ մակարդակ, առաջացող արտաքին և ներքին վտանգները չեզոքացնելու, ծառայողական-մարտական առաջադրանքների կատարման աշխատունակ մակարդակ պահանելու հնարավորություն՝ սովորական և էքստրեմալ պայմաններում: Դա իր հերթին ենթադրում է անվտանգության ապահովման անձնական համակարգը ակտիվացնելու ունակություն՝ որպես քայլերի համալիր, որը մարդուն թույլ կտա կառավարելու մի շարք ներքին և արտաքին ցուցանիշներ, որոնք ապահովում են հավասարակշռությունը միջավայրի հետ՝ մարմնական, էներգետիկ և տեղեկատվական մակարդակում՝ կյանքի նպատակին համապատասխան, այս դեպքում՝ մարտական առաջադրանքի բովանդակությանը համապատասխան:

Յուրահատուկ առանձնահատկություններ են դրսևորվում մարտական պայմաններում մարտիկների ստացած հոգեվնասվածքների արդյունքում: Հոգեբան Վ.Մարգարյանը գտնում է, որ մարտական հոգեվնասվածք ասելով՝ պետք է հասկանալ անձի կողմից մեծ ուժգնությամբ ապրում, որը պայմանավորված է մարտական իրադրության հոգեխոցիչ գործոնների կարճատև կամ երկարատև ներգործությամբ, ինչն էլ հանգեցնում է տարբեր աստիճանի ծանրությամբ հոգեկան խանգարումների: Մարտական իրադրության հիմնական հոգեխոցիչ գործոնը վտանգն է՝ սպառնալիքը կյանքին և ֆիզիկական առողջությանը: Վտանգի ընկալումը ամենաուժեղ հոգեխոցիչ գործոնն է: Այն առաջանում է այլ մարդկանց մահվան և խեղման սարսափելի պատկերների ազդեցությամբ: Մարտում վախի զգացում ապրում է յուրաքանչյուր զինծառայող: Ոմանք կամքի ուժով այն ճնշում են, մինչդեռ մյուսները դա չեն կարողանում անել: Յուրաքանչյուր մարդ ունի իր «դիմացկունության սահմանը»: Մարտական հոգեվնասվածքի առաջացման հավանականությունը մեծապես պայ-

մանավորված է մարդու անհատական անձնային և հոգեֆիզիոլոգիական առանձնահատկություններով [2, 69]:

Այսպիսով՝ մարտական հոգեվնասվածքը մարտական իրադրության ծայրահեղ գործոնների նկատմամբ զինծառայողի ուժեղ ապրումների հետևանքն է: Այն առաջացնում է հոգեկանի ժամանակավոր խանգարում, ինչն էլ իր հերթին հանգեցնում է մարտունակության մասնակի կամ լիովին կորստի [1, 74]:

Տրավմատիկ իրադրության ժամանակ կամ դրանից հետո շատ մարդիկ բարձր տագնապային և դեպրեսիվ վիճակում են հայտնվում: Որոշ անձանց մոտ տագնապը և դեպրեսիան կարող են պահպանվել երկար ժամանակ: Այդ մարդիկ կարող են տառապել սուր սթրեսային խանգարումներով կամ հետտրավմատիկ սթրեսային խանգարումներով, որոնք ծագում են որպես հակազդում հոգեբանական տրավմատիկ իրադրության: Սովորաբար նման իրադրությունը դառնում է տվյալ անձի համար վտանգավոր: Այլ տագնապային խանգարումներից սրանք տարբերվում են նրանով, որ կյանքի համար մեծ վտանգ են ներկայացնում: Համաձայն DSM-IV-ի, եթե վերը նշված տագնապները, վախը և նրան ուղեկցող երևույթները ծագում են անմիջապես տրավմատիկ դեպքից հետո և տևում մեկ ամսից պակաս, ապա այդ երևույթը ախտորոշվում է որպես սուր սթրեսային խանգարում: Եթե այդ ախտանիշները պահպանվում են մեկ ամսից էլ երկար, երբեմն էլ տարիներ, ապա ախտորոշվում է որպես հետտրավմատիկ սթրեսային խանգարումներ: Որոշ դեպքերում սուր սթրեսային խանգարումները վերափոխվում են հետտրավմատիկ սթրեսային խանգարման: Սթրեսի այս երկու տեսակները իրենց դրսևորման և տեսակների տարբերակներով հանդերձ նման են տագնապային խանգարումներին:

Սուր կամ հետտրավմատիկ սթրեսային խանգարումները կարող են ծագել ցանկացած տարիքում, հետևաբար պատերազմական իրադրություններում գտնվող ցանկացած տարիքի անձի դեպքում վերը նշվածը օրինաչափ է:


Խնդրի դրվածք և մեթոդական հիմնավորում: Մեր խնդիրն էր պարզել, թե քանի տոկոս մարտիկների մոտ է հետպարերազմյան շրջանում հետվնասվածքային սթրեսային խանգարում առաջանում, մենք օգտվեցինք «Միսիսիպյան հարցարան մարտական հետվնասվածքային սթրեսի որոշման համար»: հարցարանից: Հարցումները անց են կացվել 25-35 տարեկան պատերզամի մասնակից մարտիկների հետ: Համառոտ ներկայացնենք հարցարանը:

Միսիսիպյան սանդղակը (MS) մշակվել է մարտական վետերանների հետվնասվածքային սթրեսային արձագանքների ծանրությունը գնահատելու համար: Այն այժմ ամենալայն կիրառվող գործիքներից մեկն է հետվնասվածքային սթրեսային խանգարման նշանները չափելու համար: Հարցարանը բաղկացած է 35 պնդումներից, որոնցից յուրաքանչյուրը գնահատվում է հինգ բալանոց սանդղակով: Արդյունքների գնահատումն իրականացվում է միավորների ամփոփմամբ, վերջնական ցուցանիշը հնարավորություն է տալիս բացահայտել փոխանցված տրավմատիկ փորձի ազդեցության աստիճանը: Հարցաթերթում պարունակվող կետերը բաժանվում են 4 կատեգորիայի. 11 կետ ուղղված է ազդեցության ախտանիշների որոշմանը, 11-ը՝ խուսափելու փորձին և 8 հարց՝ կապված ֆիզիոլոգիական գրգռվածության չափանիշի հետ: Մնացած հինգ հարցերն ուղղված են մեղավորության զգացման և սուիցիդալ մտքերի բացահայտմանը [4]:

Արդյունքների վերլուծություն: Հարցումից ստացած պատասխանները ներկայացնենք աղյուսակի և տրամագրի տեսքով:

Աղյուսակ 1. «Միսիսիպյան հարցարան մարտական հետվնասվածքային սթրեսի որոշման համար»-ից ստացած պատասխանները

Հետազոտվողի տարիք	Միավոր	Եզրակացություն
32	87	Հարմարվողականութիան խանգարում
25	83	Հարմարվողականութիան խանգարում
33	78	Հարմարվողականության օպտիմալ մակարդակ
26	75	Հարմարվողականության օպտիմալ մակարդակ
26	78	Հարմարվողականության օպտիմալ մակարդակ
29	73	Հարմարվողականության օպտիմալ մակարդակ
25	66	Հարմարվողականության օպտիմալ մակարդակ
31	69	Հարմարվողականության օպտիմալ մակարդակ
35	65	Հարմարվողականության օպտիմալ մակարդակ
25	97	Հարմարվողականութիան խանգարում
35	76	Հարմարվողականության օպտիմալ մակարդակ
34	72	Հարմարվողականության օպտիմալ մակարդակ
30	97	Հարմարվողականութիան խանգարում
31	72	Հարմարվողականության օպտիմալ մակարդակ
25	112	Հետվնասվածքային սթրեսային խանգարում
35	90	Հարմարվողականութիան խանգարում
30	70	Հարմարվողականության օպտիմալ մակարդակ



Նկար 1. «Միսիսիպյան հարցարան մարտական հետվնասվածքային սթրեսի որոշման համար» պատասխանները տոկոսային հարաբերակցությամբ

Այսպիսով՝ պատերազմական պայմաններում և մարտական հերթապահության ժամանակ զինծառայողների ստացած հոգեբանական վնասվածքների առանձնահատկությունների իմացությունը, նրա հետևանքների բուժման և վերականգնման հիմնախնդիրները պետք է խիստ կարևորվեն են ռազմական հոգեբանության կողմից, ինչպես նաև մարդկային ռեսուրսների արդյունավետ կառավարման և համալրման առումով: Ինչպես տեսնում ենք հետազոտության արդյուքներից մարտական հետվնասվածքային սթրեսային խանգարում հայտնաբերվեց հարցվողներից 6% մոտ: Խորհուրդ է տրվում դիմել համապատասխան մասնագետի բուժում ստանալու նպատակով: Հարմարվողականության խանգարման դեպքում ցանկալի է շտկողական աշխատանք տարվի, որպեսզի ապագայում այդ խանգարումը չվերածվի ավելի լուրջ խնդրի:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Վ.Հ. Մարգարյան, Մարտական գործունեության հոգեբանական հիմքերը, Երևան, 2009թ., 283 էջ
2. АВТОРСКИЙ КОЛЛЕКТИВ, Военная психология, теория, практика, Учебно-методическое пособие
3. Столяренко А. М. Экстремальная психопедагогика : учеб. пособие. М., 2002. 554 с.
4. https://studfile.net (07.12.2021).

Психическое здоровье в условиях военного служения

Базарчян Тамара

ВГУ, Психология личности и психологическая консультация,
Магистратура 3-й курс

Резюме

Ключевые слова: *психическое здоровье, посттравматическое стрессовое расстройство*

В статье описано, что из себя представляет посттравматическое стрессовое расстройство, причины возникновения посттравматического стрессового расстройства у участников военных действий арцахской войны 2020 года. С целью их выявления был использован «Миссисипский опросник для определения военного посттравматического стрессового расстойства». В статье представлены количественные и качественные результаты данного исследования.

Mental Health in Military Service

Bazarchyan Tamara

VSU, Personality Psychology and Pshycological Counseling,
MA, 3rd course

Summary

Key words: *mental health, post-traumatic stress disorder*

The article describes what constitutes post-traumatic stress disorder, causes of post-traumatic stress disorder among veterans who participate in military operations of the Artsakh War of 2020. To identify them has been used «Mississippi questionnaire for the definition of post-traumatic stress disorder». The article presents the quantitative and qualitative results of the study.

Բուժաշխատողների մասնագիտական սթրեսի կառավարման քոփինգ ռազմավարությունները համավարակի պայմաններում

Ղամբարյան Վերա
ՎՊՀ, Անձի հոգեբանություն և հոգեբանական խորհրդատվություն, Մագիստրատուրա, 3- րդ կուրս
Գիտական դեկավար՝ հ. գ. թ., դոցենտ ***Մ. Մազմանյան***

Հանգուցային բառեր. *մասնագիտական սթրես, քոփինգ ռազմավարություններ, սթրեսի կառավարում, COVID-19 համավարակ:*

Նոր կորոնավիրուսային համավարակի պայմաններում բոլոր երկրների առողջապահական համակարգերը բախվեցին լուրջ դժվարությունների: Սուր շնչառական խնդիրներ առաջացնող այս վարակը պաշտոնապես անվանվեց COVID-19: Հիվանդության կտրուկ աճը հանգեցրեց բուժհաստատությունների գլոբալ վերապրոֆիլավորման անհրաժեշտության, COVID-19-ով վարակված պացիենտներին բժշկական օգնություն ցուցաբերելու նպատակով: Բուժաշխատողները հարկադրված եղան աշխատելու ծայրահեղ ծանրաբեռնվածության և վարակվելու բարձր ռիսկի պայմաններում, ինչը մեծացրեց նրանց մոտ մասնագիտական սթրեսի առաջացման հավանականությունը:

Մասնագիտական սթրեսը աշխատակցի լարված վիճակն է, որը առաջանում է բացասական և արտակարգ գործոնների ազդեցությամբ և կապված է իրականացվող մասնագիտական գործունեության հետ [3, 31]:

Բուժաշխատողների սթրեսը պայմանավորված է նրանց մասնագիտության մի շարք առանձնահատկություններով: Առաջին հերթին դա հսկայական պատասխանատվությունն է հիվանդների կյանքի և առողջության համար:

Երկրորդը՝ երկարատև առկայությունն է բացասական հույզերի «դաշտում»՝ տառապանք, ցավ, հուսահատություն, գրգռում և այլն, որոնք այսպես թե այնպես հուզական վարակի մեխանիզմով փոխանցվում են բժշկական անձնակազմին:

Երրորդը՝ աշխատանքի անհավասար գրաֆիկն է գիշերային և ամենօրյա հերթափոխով, ինչը խաթարում է աշխատանքի և հանգստի բնական բիոռիթմերը և բացասաբար է անդրադառնում օրգանիզմի հարմարվողական կարողությունների վրա:

Չորրորդ՝ բժիշկների և միջին բժշկական անձնակազմի աշխատավարձերը ակնհայտորեն չեն համապատասխանում նրանց սոցիալական

պատասխանատվության աստիճանին, ինչը սեփական մասնագիտությունից դժգոհության զգացում է առաջացնում և այս փաստի հետ կապված անձնային սթրեսներ: Սակայն հարկ է նշել, որ սթրեսի նշված վերջին պատճառը որոշիչ չի համարվում:

Բուժաշխատողների սթրեսի ախտանիշները չեն տարբերվում խիստ յուրահատկությամբ և կարող են դրսևորվել տարբեր ձևերով՝ մեղմ հակազդումներից սկսած, ինչպիսին դյուրագրգիռությունն է, հոգնածության աճը, մինչև նևրոտիկ և նույնիսկ հոգեսոմատիկ խանգարումները [4, 146]:

Ներկայումս՝ համավարակի պայմաններում, բուժաշխատողների մոտ առաջացող մասնագիտական սթրեսի, դրա կառավարման ռազմավարությունների ուսումնասիրումը առավել քան արդիական է, քանզի այն հնարավորություն կտա հոգեբաններին տրամադրել նպատակային օգնություն բուժաշխատողների մոտ մասնագիտական սթրեսի մակարդակի նվազեցման կամ դրա հաղթահարման ուղղությամբ:

Մեր հետազոտության նպատակն է եղել բացահայտել համավարակի պայմաններում տարբեր բուժհաստատություններում աշխատող բուժաշխատողների կողմից մասնագիտական սթրեսի կառավարման քոփինգ ռազմավարությունները:

Փորձարարական հետազոտություն ենք իրականացրել Սպիտակի բժշկական կենտրոնում, որը տրամադրում է մասնագիտացված և նեղ մասնագիտացված բուժօգնություն COVID-19-ով վարակված հիվանդների ստացիոնար բուժման համար, և Վանաձորի թիվ 1 համաբուժարանում, որը արտահիվանդանոցային և առավել հասանելի բուժօգնություն է տրամադրում նաև COVID-19-ով վարակված պացիենտներին և ունի առաջնային նշանակություն բնակչության բժշկական օգնության ապահովման մեջ: Ընտրակազմում ընդգրկված են եղել 40 բուժաշխատող, յուրաքանչյուր բուժհաստատությունից 20 հոգի:

Մեր հետազոտության առաջին մասը նվիրված է եղել համավարակի պայմաններում բուժաշխատողների մասնագիտական սթրեսի պատճառների և մակարդակի բացահատմանը, իսկ երկրորդ մասում ուսումնասիրել ենք սթրեսի կառավարման քոփինգ ռազմավարությունները:

Քոփինգ վարքը գիտակցական ակտիվ, կառուցողական ռազմավարություն է, որը առանց իրականությունը աղճատելու թույլ է տալիս սուբյեկտին գիտակցված գործողությունների միջոցով անձնային առանձնահատկություններին ու իրականությանը համապատասխան միջոցների շնորհիվ հաղթահարել սթրեսը [2, 4]:

Տվյալ հետազոտությունը իրականացնելու համար մեր կողմից


ընտրվել է Ռ. Լազարուսի և Ս. Ֆոլկմանի «Հաղթահարող վարքի եղանակներ» հարցարանը, որը նախատեսված է հոգեկան գործունեության տարբեր ոլորտներում դժվարությունների հաղթահարման մեխանիզմների և եղանակների որոշման համար: [1, 93-112]:

Ամփոփելով տվյալ հարցարանի արդյունքները կարող ենք ասել, որ Սպիտակի բժշկական կենտրոնի բուժաշխատողների 80%-ի մոտ գերակշռող քոփինգ ռազմավարություն է համարվում դրական վերագնահատումը, որի դեպքում ցուցաբերվում է իրավիճակին համապատասխան վարք: Հուզական ոլորտում նկատվում է հույսի, հավատի և լավատեսության պահպանում: Կոգնիտիվ ոլորտին բնորոշ են իրավիճակը վերլուծելու փորձերը, ինքն իրեն, իր հարաբերությունների և կյանքի արժեքների վերագնահատումը, մտքերի կենտրոնացումը եզրակացություններ կատարելու, իրավիճակից դրական օգուտ վերցնելու վրա [5]:

Վանաձորի թիվ 1 համաբուժարանում 50%-ի մոտ գերակշռող քոփինգ ռազմավարություններ են համարվում հետևյալները՝

- Ինքնակառավարում, որի դեպքում վարքային ոլորտում նկատվում է գործողությունների նկատմամբ վերահսկողության բարձրացում, սպոնտան դրսևորումների նկատմամբ զսպվածության ցուցաբերում: Հույզերի ոլորտում՝ ինքնատիրապետման, ինքնավստահության և օպտիմիզմի պահպանման համար գիտակցված ջանքերի գործադրում,հույզերի ճնշում: Ճանաչողական ոլորտում՝ մտավոր գործունեության ակտիվացում, մուտք գործող ինֆորմացիայի նկատմամբ ուշադրության բարձրացում, զգուշավորության և ուշադրության բարձրացում, արտաքին ազդակների նկատմամբ զգայունակության բարձրացում:
- Խնդրի լուծման պլանավորում, որի դեպքում վարքային ոլորտում նկատվում է արտաքին իրավիճակի, տեղեկատվության և մարդկանց հետ ակտիվ փոխազդեցություն, խնդիրը լուծելու գիտակցված փորձեր: Հուզական ոլորտում՝ կենտրոնացում և հավասարակշռության պահպանում, ինքնատիրապետման պահպանում: Կոգնիտիվ ոլորտ՝ խնդրի լուծման ուղիներ գտնելու մտավոր ջանքեր, իրավիճակի վերլուծություն, անցյալի փորձի կիրառում:
- Դրական վերագնահատում [5, 839-852]:

Ստացված տվյալները ներկայացրել ենք նաև տրամագրի տեսքով արդյունքներն ավելի ակնառու դարձնելու համար (տրամագիր 1):



Տրամագիր 1. Քոփինգ ռազմավարությունների արտահայտվածության մակարդակը

Ամփոփելով հետազոտության արդյունքները կարող ենք ասել, որ բուժաշխատողների շրջանում մասնագիտական սթրեսներին դիմակայելու արդյունավետ ռազմավարություն է հանդիսանում դրական վերագնահատումը և նշված բուժհաստատություններում հոգեբանական օգնությունը մասնագիտական սթրեսի օպտիմալացման նպատակով կարելի է իրականացնել հիմնվելով հետևյալ արդյունքների վրա։

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Крюкова Т.Л., Куфтяк Е.В. Опросник способов совладания (адаптация методики WCQ) / Журнал практического психолога. - М. : 2007. № 3. - С. 93-112.
2. Крюкова Т.Л. Методы изучения совладающего поведения: три копинг-шкалы.- Кострома: Аван-титул, 2007. - 60с.
3. Мельникова М.Л. Психология стресса: теория и практика: Учебно-методическое пособие. — Екатеринбург: [б. и.], 2018. — 112 с.
4. Щербатых Ю. В Психология стресса и методы коррекции. — СПб.: Питер, 2006. — 256 с.: ил. — (Серия «Учебное пособие»).
5. Folkman S. Personalcontroland stress and coping processes: a theoreticalanalysis/S.Folkman // J. Pers. Soc. Psychol. – 1984. – Vol. 46, N 4. – P.839-852.

Копинг-стратегии по управлению профессионального стресса

медицинскими работниками в условиях пандемии

Гамбарян Вера
ВГУ, Психология личности и психологическая консультация,
Магистратура, 3-й курс

Резюме

Ключевые слова: *профессиональный стресс, копинг-стратегии, управление стрессом, COVID-19 пандемия*

Эта статья посвящена выявлению копинг - стратегий по управлению профессионального стресса медицинскими работниками в условиях пандемии. Рассмотрены особенности профессионального стресса медицинских работников и копинг-поведение как стратегия преодоления стресса: Представлены результаты экспериментального исследования, направленного на выявление копинг-стратегий по управлению стресса у медицинского персонала различных медицинских учреждений.

Coping Strategies of Medical Workers Stress Management under Pandemic Conditions

Ghambaryan Vera
VSU, Personality Psychology and Pshycological Counseling,
MA, 3rd course

Summary

Key words: *occupational stress, copying strategies, stress management, COVID-19 pandemic*

The article is dedicated to the revelation of medical workers stress management coping strategies under pandemic conditions. Peculiarities of professional stress among medical professionals and coping conduct as overcoming stress strategy is obserrved. Experimental research outcomes aimed at coping strategies of professional stress under the pandemic conditions among staff members of various medical institutioins are presented.

Անձի հուզական ոլորտում առաջացած դրսևորումները

Մարգսյան Մնակ
ՎՊՀ, Անձի հոգեբանության և հոգեբանական խորհրդատվություն, Մագիստրատուրա, 3-րդ կուրս
Գիտական ղեկավար՝ հ. գ. թ., դոցենտ ***Ն. Գոստանդյան***

Հանգուցային բառեր. *ճգնաժամ, ներքաղաքական ճգնաժամ, հուզական ոլորտ, տագնապայնություն, ագրեսիա, սթրեսային իրավիճակ, ներշնչվողականություն*

Ուսումնասիրության նպատակն է բացահայտել 2018-2020 թթ. քաղաքական ճգնաժամի և դրան հաջորդած իրադարձությունների հոգեբանական ազդեցությունը մարդկանց հուզական ոլորտի վրա:

Ուսումնասիրության խնդիրները. ելնելով հետազոտության նպատակից, առաջադրել ենք ուսումնասիրության հետևյալ խնդիրները՝

1. ուսումնասիրել հուզական ոլորտի էությունն ու առանձնահատկությունները
2. ներկայացնել ճգնաժամերի ազդեցությունը անձի հուզական ոլորտի վրա
3. նկարագրել 2018-2020 թթ. ՀՀ ներքաղաքական իրադրության ազդեցությունը անձի հուզական ոլորտի վրա:

Կատարելով տեսական հետազոտություն, որն ուղղված էր անձի հուզական ոլորտի ուսումնասիրությանը՝ներքաղաքական ճգնաժամային փուլից հետո, եկանք այն եզրակացության որ մարդու հուզական ոլորտն ունի բարդ և բազմաստիճան կառուցվածք: Նրա դրսևորումները կարող են լինել տարբեր՝ հատկապես ճգնաժամային իրավիճակներում: Այդ դրսևորումներից կարող են լինել ագրեսիվությունը, տագնապայնությունը:

Հույզերի արտաքին արտահայտությունը իրենից ներկայացնում է մի պրոբլեմ, որը միաժամանակ և՛ ֆիզիոլոգիական, և՛ հոգեբանական լուսաբանում է պահանջում: Հարցի բարդությունը կայանում է նրանում, որ անձի ապրումները, ավելի խոր և կարևոր զգացմունքները արտաքնապես հաճախ պակաս ցայտուն են արտահայտվում, քան համեմատաբար ավելի պարզերը:

Որոշ տեսություններում ճանաչողությունը հույզերի կարևոր

ասպեկտն է: Այն գործողությունը, որն առաջին հերթին ազդում է հույզերի վրա՝ զգացողություններն են, որոնք կարող են թվալ չմտածված, բայց մտավոր գործողություններ դեռևս անհրաժեշտ են, հատկապես՝ մեկնաբանման պրոցեսում: Օրինակ՝ գիտակցումը, որ մենք վտանգավոր իրադրությունում ենք և մեր մարմնի նյարդային համակարգի հետագա գրգռումը մեր վախի զգացողության անբաժանելի փորձառությունն է: Ինչևէ, ըստ այլ տեսության հույզերը անջատ են և կարող են նախորդել ճանաչողությանը: Բնորոշվում է վերբալ մեկնաբանություններով, որը նկարարգրում է ներքին վիճակը [2, 96]:

Հույզերն արտահայտում են սուբյեկտի վերաբերմունքը շրջապատող աշխարհի օբյեկտների և սուբյեկտների նշանակելի լինելու նկատմամբ: Այն պահանջմունքների գոյության սուբյեկտիվ ձևն է. հույզերը սուբյեկտի համար ազդակ են հանդիսանում արտաքին օբյեկտների կարևորությունը գնահատելու համար և դրդում են ուղղելու իրենց գործունեության ուղղվածությունը: Հույզերը արտացոլում են սուբյեկտի վերաբերմունքը աշխարհի և ինքն իր նկատմամբ, պահանջմունքների բավարարված կամ անբավարարված լինելը նաև ապագայում դրանց բավարարվածության հնարավոր և անհնարին լինելը:

Ճգնաժամը սուբյեկտի կողմից ապրվող գործընթաց է, և գիտակցելի է: Այն ուղեկցվում է անորոշության, տագնապի, անապահովության զգացումներով, ընկճվածության, կոնֆլիկտայնության ու ֆրուստրացվածության բարձր աստիճաններով, և ենթակա է կանխարգելման ու հաղթահարման: Այս առումով, կարելի է ընդունել այն փաստը, որ ճգնաժամը պարտադիր չէ բեկումնային լինի անձի կյանքում:

Ճգնաժամի նկատմամբ կամ սուբյեկտիվորեն երկարժեք վերաբերմունք: Առաջին հերթին բացասական՝ կապված անցանկալի հետևանքների գիտակցման և տհաճ զգացողության հետ: Երկրորդ հերթին դրական՝ կապված անձնային աճի, կատարելագործման, հաղթանակի հնարավորությունների հետ: Այս երկուսն էլ դիրքորոշումներ են, նախատրամադրվածություններ, որոնք անցյալի փորձի և ներկա վիճակի զուգորդություններ են [1, 123]:

Նշանակալի իրադարձությունները կազմված են առանձին դեպքերից, որոնց հանգուցալուծումը (կուլմինացիան) պայմանավորված է հոգեհուզական լարման աճի կրիտիկական կետով: Այս առումով դեպքերից յուրաքանչյուրը կարող է դառնալ հանգուցակետ՝ ուղեկցվելով ճգնաժա-

մային ապրումներով: Եթե այդ հանգուցակետը բեկումնային է (կրիտիկական), ապա անցումային փուլում առաջանում է նոր որակ՝ նորագոյացում: Հավասարապես հավանական է, որ շրջադարձային կամ բեկումնային պահը լինի ոչ թե լարման աճով պայմանավորված, այլ հակառակը՝ վերականգնողական գործընթացում հուզական լարման իջեցումով կամ թուլացումով: Այս պարագայում կրիտիկական պահ է դառնում ներքաղաքական ճգնաժամի ավարտը ազդարարող իրադարձությունը, որը կարող է ուղեկցվել էքզալտացված հոգեվիճակով՝ բարձրացված տրամադրությունով, բերկրանքով, հիացմունքով ու հաղթական զգացումներով, և ինչու ոչ՝ նաև հուզական սպառումով, դատարկության զգացումով, ապաթիայով կամ անտարբերությամբ և այլն: Նույնքան իրատեսական է, որ դեպքից դեպք անցումն ավարտվի առանց հոգեբանական նորագոյացումների, որը, սակայն, կուղեկցվի անախորժ ու ծանր ապրումներով [2, 98]:

Ճգնաժամ ապրող մարդը կարող է ուշադրություն չդարձնել այդ ընթացքում կատարվող առանձին դեպքերին, նույնիսկ այնպիսիններին, որոնք իսկապես բեկումնային են: Սակայն նույն մարդը մասնավոր դեպքերին կարող է այնպիսի արժեք ու նշանակություն տալ՝ որոնք իր համար հատուկ իրադարձություններ են, և որոնք ունեն համապատասխան ապրումներ: Նա սուբյեկտիվորեն սկսում է դրանց վերագրել շրջադարձային պահին բնորոշ հատկանիշներ: Սրա պատճառները շատ են՝ սկսած հակումներից ու հետաքրքրություններից, ներշնչանքից, վերջացրած ակնկալիքով ու դիրքորոշումներով, բնավորության գծերով ու անձնային առանձնահատկություններով [3, 198]:

Ցանկացած ոլորտում տիրող ճգնաժամը վկայում է, որ գործող մեթոդները բավարար չեն, և փոփոխություններ են անհրաժեշտ: Հետևաբար, ճգնաժամը հնարավորություններ է ստեղծում համակարգն արդիականացնելու համար, սակայն ինչպես ցանկացած փոփոխություն, այն պարունակում է նաև ռիսկեր և վտանգներ:

Ճգնաժամը ի հայտ է բերում թաքնված հակասություններ և անհամաչափություններ: Ճգնաժամի փայլուն օրինակ է հեղափոխությունը: Կարող է դիտվել որպես ֆենոմեն՝ անիրական մի բան, տնտեսական գործոն՝ գործունեության պայման, քաղաքական, սոցիոլոգիական, տնտեսական կատեգորիա: Ճգնաժամերը լինում են տնտեսական, ռազմաքաղաքական, կրոնական, հոգեբանական, մշակութային, էներգետիկական, ներքաղաքական, սոցիալական, ֆինանսական և էկոլոգիական

[4, 122]:

Ներքաղաքական ճգնաժամը հասարակական որևէ կառույցի դժվար անցումային վիճակն է, որն արտահայտվում է գործունեության ընդմիջումով: Քաղաքական ճգնաժամի ժամանակ տեղի է ունենում սոցիալ-քաղաքական հակասությունների սրում, կոնֆլիկտային իրավիճակների ձևավորում, տնտեսական կառավարման թուլացում: Ներքաղաքական ճգնաժամի սրացումը կարող է հանգեցնել քաղաքական ինստիտուտների քայքայմանն ու անիշխանությանը:

Ներքաղաքական ճգնաժամն իրենից ներկայացնում է մի իրավիճակ, երբ քաղաքական ինստիտուտների նկատմամբ կա տոտալ անվստահություն և նրանք չեն կարողանում համարժեք արձագանքել դրան և չեն կարողանում որոշումների կայացման գործընթացը նորմալ, բնականոն ձևով իրականացնել: Քաղաքական ճգնաժամերի գործոններն են. Իշխանության օրինականության կտրուկ անկում, հասարակության մեջ գործող գործընթացները կառավարելու կարողության բացակայությունը, կառավարության հրաժարականը [4, 123]:

Երկարատև սոցիալական ճգնաժամերն ու պայքարը, հանգեցնելով մարդկանց մեծ զանգվածների բարոյազրկման, ուժեղացնում են ներշնչումներ ընդունելու պատրաստակամությունը և պարարտ հող են ստեղծում զանազան արկածախնդիր գործիչների նկրտումների համար: Ճգնաժամի պայմաններում մարդկանց համոզմունքները թուլանում կամ փլուզվում են, առաջանում է անձի ներհոգեկան դատարկության վիճակ և պրոպագանդիստական ազդեցությունների համար մատչելիություն: Այսպիսի իրավիճակներ են ստեղծվում, օրինակ, պատերազմներից հետո, եթե անգամ դրանք տվյալ երկրի համար հաղթական վախճան են ունեցել, հատկապես եթե չեն հանգեցրել մարդկանց սոցիալական սպասումների արդարացման [2, 386]:

Այսօր ՀՀ-ի համար 2018-2020 թթ. բնութագրվում են որպես ներքաղաքական ճգնաժամային շրջափուլ, որի ընթացքում հասարակության տարբեր հատվածներ հոգեբանական առումով ունեցան տարբեր դրսևորումներ:

Ներքաղաքական ճգնաժամային իրադրության պարագայում բարձրանում է անձի տագնապայնության և ագրեսիվության մակարդակները: Տագնապայնությունն իրենից ներկայացնում է որոշակի երկարատևություն ունեցող և բարդ էմոցիոնալ վիճակ, հաճախ նաև վախի նախնական

ձև: Տագնապն առաջանում է, երբ մարդը ենթադրում է, որ ապագայի ինչ-որ իրավիճակ, իրադարձություն կամ հանգամանքներ, կարող են հանգեցնել նրա կյանքի հետաքրքրությունների նկատմամբ դիսթրեսի, անկանխատեսելի և չղեկավարվող վտանգի [5, 39]:

Տագնապայնության պատճառների հասկացման համար էական հասկացություններից մեկը հանդիսանում է աղբյուրի տեղայնացումը: Առանձնացվում են կայուն տագնապայնության երկու տեսակի հիմնական աղբյուրներ.

1. երկարատև արտաքին սթրեսային իրավիճակ, որն առաջանում է տագնապի հաճախակի ապրման հետևանքով,
2. ներքին՝ հոգեբանական կամ հոգեֆիզիոլոգիական պատճառներ [6]:

Ագրեսիան իրենից ներկայացնում է դրդապատճառային վարք, որը շատ հաճախ կարող է վնաս պատճառել մեկ օբյեկտի կամ մարդկանց, ովքեր իրենց մոտ դեպրեսիա, անհարմարություն, լարվածություն, ճնշված վիճակ են առաջացնում [7]: Տվյալ դեպքում պատճառ կարող է լինել քաղաքականությունը:

Ճգնաժամային իրավիճակներում ընդհանրապես մարդկանց ներշնչվողությունն ուժեղանում է: Բայց ներշնչվողության ուժեղացումը հատկապես նկատելի է դառնում այն դեպքում, երբ անձի և իրադրության հարաբերությունները ունենում են մի շարք առանձնահատկություններ: Ներշնչվողությունը, ինչպես նաև կոնֆորմիզմը, մեծ ուժի է հասնում, երբ ճգնաժամային իրադրությունն աչքի է ընկնում անորոշության բարձր աստիճանով: Այսպիսի դեպքերում մարդիկ ապրում են տագնապ կամ նույնիսկ խուճապային վիճակ, որովհետև չեն կարողանում իրադրությունից դուրս գալու խելամիտ ելք գտնել: Դրա հետևանքով խիստ զգայուն են դառնում ներշնչումների նկատմամբ: Ուժեղանում է կոնֆորմիստորեն գործելու հակումը [2, 386]:

Ճգնաժամային իրադրության մեջ ավելի է ուժեղացնում մարդու ներշնչվողությունը: Մեծ խմբրերի հոգեբանությունից, մարդիկ հատկապես ներշնչվող են դառնում մեծ խմբերի կազմում՝ ամբոխ, միտինգներ ու հանրահավաքներ, բազմություններ, որոնք առաջանում են մեծ ներկայացումների, տարերային աղետների ժամանակ և այլն [2, 387]: Այս պարագայում կարելի է ասել, որ դրսևորումներից մեկը եղավ նաև ներշնչվողականության բարձր մակարդակը:

Կատարելով տեսական հետազոտություն, որն ուղղված էր անձի

հուզական ոլորտի ուսումնասիրությանը՝ներքաղքական ճգնաժամային փուլից հետո, եկանք այն եզրակացության որ մարդու հուզական ոլորտն ունի բարդ և բազմաստիճան կառուցվածք: Նրա դրսևորումները կարող են լինել տարբեր՝ հատկապես ճգնաժամային իրավիճակներում: Այդ դրսևորումներից կարող են լինել ագրեսիվությունը, տագնապայնությունը:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Գասպարյան Խ.Վ. «Բժշկական հոգեբանություն», Ուսումնական ձեռնարկ
2. Գիտական հոդվածների ժողովածու, Երևան, Նաիրի, 2018, 412 էջ:
3. Ճգնաժամային իրավիճակներում անձի ամբողջական պահպանման հոգեբանական նախադրյալները, Միջազգային գիտաժողովի նյութեր, Երևան, 2010, 160 էջ:
4. Տեսական և կիրառական հոգեբանության արդի հիմնախնդիրները, միջազգային գիտաժողով, Երևան, 2020:
5. Кларк Д. А., Бек А. Т. «Тревога и беспокойство: когнитивно-поведенческий подход», Диалектика, Киев, 2019._448с.
6. https://core.ac.uk/download/pdf/81248492.pdf 10.06.21
7. https://www.doctors.am/agresia 20.09.21

Возникшие проявление в эмоцианальной сфере человека в связи с внутриполитическим кризисом 2018-2020 гг.

Саргсян Севак

ВГУ, Психология личности и психологическая консультация, Магистратура 3-й курс

Резюме

Ключевые слова: *кризис, внутриполитический кризис, эмоциональная сфера, тревога, агрессия, стрессовая ситуация, вдохновение*

Личность всегда находилась в центре внимания психологов. Они изучали внутренний мир человека в разных ситуациях, будь это мирные условия или кризисные ситуации. Психологическое состояние человека всегда зависело от текущих внутриполитических, семейных и трудовых факторов. Цель исследования – выявить психологическое влияние политического кризиса 2018-2020 годов и его последствий на эмоциональную сферу людей. Проблемы исследования. Исходя из цели исследования, мы выдвинули следующие задачи исследования:

1. Исследовать суть и особенности эмоциональной сферы.
2. Представить влияние кризиса на эмоциональную сферу человека.
3. Описать влияние внутриполитической ситуации в Армении 2018-2020 гг. на эмоциональную сферу человека.

Проводя теоретическое исследование по изучению эмоциональной сферы человека после этапа внутриполитического кризиса, мы пришли к выводу, что эмоциональная сфера человека имеет сложную и многостепенную структуру. Его проявления могут быть различными, особенно в кризисных ситуациях. Среди таких проявлений могут быть агрессия и тревога. Ключевые слова: кризис, внутриполитический кризис, эмоциональная сфера, тревога, агрессия, стрессовые ситуации, вдохновение.

Manifestations in the Emotional Sphere of a Person as a Result of the Internal Political Crisis of 2018-2020

Sargsyan Sevak
VSU, Personality Psychology and Pshycological Counseling,
MA, 3rd course

Summary

Key words: *crisis, internal political crisis, emotional sphere, alarm, aggression, stressful situation, inspiration*

The person has always been in the spotlight of psychologists. They have studied the inner world of a person in different situations, be they peaceful conditions or crisis situations. The psychological state of a person has always depended on the current internal political , family and work factors. The aim of the research is to reveal the psychological impact of the political crisis of 2018-2020 and its aftermath on people's emotional sphere. The research problems. Based on the purpose of the research, we have proposed the following objectives for the study:

1. Research the essence and peculiarities of the emotional sphere.
2. Present the impact of crisis on a person's emotional sphere.
3. Describe the impact of the internal political situation in Armenia of 2018-2020 on the emotional sphere of a person.

Conducting a theoretical research to study the emotional sphere of a person after the stage of internal political crisis, we came to the conclusion that the emotional sphere of a person has a complicated and multistage structure. Its manifestations can be different, especially in crisis situations. Aggression and anxiety can be among those manifestations. Keywords: crisis, internal political crisis, emotional sphere, anxiety, aggression, stressful situations, inspiration.

Սոցցանցերի դրական և բացասական ազդեցությունը դեռահասների հուզական ոլորտի վրա

Սարուխանյան Լինա
ՎՊՀ, Անձի հոգեբանություն և հոգեբանական խորհրդատվություն,
Մագիստրատուրա, 3-րդ կուրս
Գիտական ղեկավար՝ հ. գ. թ. դոցենտ ***Ռ. Ավագիմյան***

Հանգուցային բառեր. *սոցցանցեր, դեռահասներ, դրական ազդեցություն, բացասական ազդեցություն, հուզական ոլորտ, զգացմունքներ*

Այսօր միայն հազվադեպ դեպքերում կարելի է հանդիպել մարդու, ով գրանցված չի սոցիալական ցանցերից գոնե մեկում: Ինտերնետի այս ռեսուրսների միջոցով է, որ մարդիկ արդեն սովորել են շփվել:

Սոցիալական ցանց – նշանակում է օնլայն ծառայություն կամ վեբ կայք, որը նախատեսված է սոցիալական փոխհարաբերությունների վերակառուցման, արտացոլման և կազմակերպման համար:

Եթե դուք չեք չարաշահում սոցիալական ցանցերի օգտագործումը, ապա դրանք, սկզբունքորեն, դրական են ազդում: Դուք կարող եք նորից կապ հաստատել վաղուց կորած մարդկանց հետ, դիտել ընկերների լուսանկարներն ու տեսանյութերը և կիսվել ձեր սեփականով, իրական ժամանակում զրուցել նրանց հետ, ովքեր հեռու են: Կամ հանդիպեք որևէ մեկին ցանկացած երկրից: Սա ընդլայնում է հաղորդակցության շրջանակը, դարձնում այն ավելի հասանելի: Համացանցում մարդը կարող է բարձրացնել իր ինքնագնահատականը, գտնել հետաքրքրող ընկերներ և համախոհներ, կիսվել իր փորձով ինչ-որ մեկի հետ և այլն: Բայց շատ կարևոր է, որ անձի շահերը չսահմանափակվեն միայն սոցիալական ծառայություններով:

Այն փաստը, որ ամենաշատ այցելվող կայքերը սոցիալական ցանցերն են, տարբեր չաթերն ու ֆորումները, հաստատում է ինտերնետում հաղորդակցության նպատակի առաջնայնությունը:

Սոցցանցերը ունեն և «դրական» և «բացասական» կողմեր:

Դրական կողմերը՝

1. Անհրաժեշտ տեղեկատվության արագ որոնում, շփում նրանց հետ, ընկերների, հարազատների, երկրի և աշխարհի տարբեր մասերում գտնվող այլ մարդկանց հետ. Ինքնադրսևորման հնարավորությունը, ստեղծագործական ներուժի իրացումը. դա հիա-

նալի միջոց է շփվելու ոչ միայն անհատների, այլ նաև խմբերի միջև:

2. Հետաքրքիր, հայտնի անձնավորությունների գրառումների ընթերցում, դրանց մեկնաբանում, հարցերի և թեմաների լուսաբանում, որոնք չեն ազդում կամ լռում են ավանդական լրատվամիջոցների կողմից:
3. Աջակցություն նրանց մասնագիտական գործունեության կազմակերպման, ինտերնետում դրա առաջմղման և գովազդման գործում:
4. Սոցցանցերը հիանալի հարթակ են ցանկացած իր գովազդելու համար, քանի որ. սա հսկայական լսարանի լուսաբանում է:
5. Նախքան ինչ-որ բան գնելը, մարդիկ գնում են ֆորումներ և կարդում ապրանքի որակի վերաբերյալ ակնարկներ, դա օգնում է խուսափել բազմաթիվ անախորժություններից:
6. Սոցիալական ցանցերի օգնությամբ դուք կարող եք արագ հավաքել անհրաժեշտ միջոցները հիվանդ մարդկանց բժշկական օգնության համար:
7. Սոցիալական սուր խնդիրների կամ արտակարգ իրավիճակների ցանցում բուռն քննարկումը ստիպում է լրատվամիջոցներին լսել դրանք, փոխանցել այդ տեղեկատվությունը իրենց ուղիներով [1, 431]:

Բացասական կողմերը՝

1. Շատ ես վարժվում ցանցերին և սկսում ես կախված լինել դրանցից, յուրովի, դա մի տեսակ թմրանյութ է. նստած ձեր գլխում «ճիճու», որը անընդհատ հիշեցնում է ձեզ մտնել, ստուգել, պատասխանել, փակցնել, գրել և այլն: Կան մարդիկ, ովքեր արդեն ուղղակի ապրում են այս ցանցերում՝ շփոթելով վիրտուալությունը իրականության հետ, ինչը հանգեցնում է անհատի դեգրադացման:
2. Մարդիկ աշխատանքի և հանգստի փոխարեն շատ ժամանակ են «սպանում»: Ինտերնետում ճամփորդելն առանց որևէ օգուտի, դա ազդում է առողջության վրա՝ տեսողության, նյարդային համակարգի, քնի և այլն; նվազեցնում է աշխատանքի արդյունավետությունը և որակը:
3. Սոցիալական ցանցը, անձնական տեղեկատվության աղբյուր է տարբեր հետախուզական գործակալությունների համար: Մենք, առանց վարանելու, ցանցերում տեղադրում ենք մեր, ինչպես նաև հարազատների ու ընկերների մասին տեղեկություններ, որոնք

կարող են նրանց համար դառնալ փորձանքի: Որոշ ռեսուրսներ այլևս հնարավոր չէ ջնջել ձեր սեփական էջերից ,այն մնում է ցանցի տվյալների բազայում:

4. Ցանցերը չեն փոխարինի կենդանի մարդկային հաղորդակցությանը. էմոցիոնները չեն կարող արտահայտել իրական հույզեր, սենսացիաներ և տրամադրություններ:
5. Պատահում է, որ համար «Մականունները» և լուսանկարները թաքցվում են բոլորովին այլ մարդկանց կողմից և ոչ միշտ բարի նպատակներով: Ցանցերը հնարավորություն են տալիս մարդկանց մանիպուլյացիայի ենթարկել, նրանց ուղեղ մտցնել անվնաս գաղափարներ. սոցիալական մեդիայի հարթակում շատ հեշտ է ինչ-որ մեկի շահերի համար տարբեր խմբեր ստեղծել:
6. Սոցիալական ցանցերն այսօր վերածվում են մարքեթինգային գործիքի, դրանք ավելի շատ են բավարարում գովազդատուների և PR մասնագետների կարիքները, քան ուղղակի օգտագործողները. սոցիալական ցանցերը շատ քիչ են օգտագործվում իրենց նպատակային նպատակների համար. հաճախ դրանք վերածվում են բանավոր աղբի հսկայական աղբի:
7. Սոցցանցերը չեն կարող փոխարինել կամ լինել զանգվածային լրատվության միջոցներ, քանի որ նրանց պակասում է արժանահավատությունը, իրականության օբյեկտիվ արտացոլումը [2, 228]:

Դեռահասների շրջանում սոցցաներից կախվածությունը հասկանալի է. ոչ ոք ձեզ չի ստիպի այնտեղ կապվել տհաճ զրուցակցի հետ, ոչ ոք բարոյականություն չի կարդում և չի սովորեցնում, թե ինչպես ապրել: Հոգնել եք խոսելուց - սեղմեք «խաչը» և ցտեսություն: Իրական կյանքում ամեն ինչ այնքան էլ պարզ չէ: Այս խնդրի մասին նախկինում խոսվել է, հիմա էլ խոսվում է, դեռ երկար է խոսվելու: Դեռահասների վրա աներևակայելի հեշտ է ուրիշների ազդեցության տակ մնալը: Դեռահասները կարող են հեշտությամբ գտնել տասնյակ պրոֆիլներ, որոնց տերերն առաջարկում են անօրինական թմրանյութեր և սեռական ծառայություններ:


Սոցցանցերի օգնությամբ շատ հեշտ է շահարկել մարդկանց հսկայական զանգվածների գիտակցությունն ու տրամադրությունը, հատկապես դեռահասների, ովքեր շատ ենթակա են ազդեցությանը:

Վիրտուալ կյանքը սկսում է փոխարինել իրականին: Ինչու՞ հանդիպել, գնալ ինչ-որ տեղ, եթե կարող ես խոսել կամ տեսնել բոլոր ընկերներիդ լուսանկարները՝ առանց տանից դուրս գալու: Շատերը, երբ մի

անգամ մտել են սոցիալական ցանցեր «կախվածությունեն ձեռք բերել դրանիցից»:

Սոցիալական ցանցերից կախվածության առաջին նշանն այն է, որ դուք պետք է անպայման ստուգեք ձեր էջը: Մարդը ենթագիտակցորեն ապրում է հետաքրքրությամբ, թե արդյոք հաղորդագրություն է հասել, արդյոք պատին ինչ-որ հետաքրքիր բան է հայտնվել, արդյոք ընկերը նոր լուսանկարներ է վերբեռնել և այլն: Եվ նույնիսկ եթե դա ձեզ իսկապես չի հետաքրքրում, դուք դեռ ստուգում եք ձեր էջը: Որպեզի ասելիքս ավեի հստակ լինի կատարել եմ հետազոտություն 14-16 տարեկան դեռահասների հետ: Հարցմանը մասնակցել են շուրջ 30 դեռահաս, որոնք պատասխանել են մեր կողմից կազված հարցաթերթիկին:


Մեր կողմից իրականացված հետազոտության տվյալները փաստում են այն մասին, որ դեռահասների մոտ և՛ հաղորդակցային կախվածությունը (սոցիալական ցանցերից կախվածություն), և՛ խաղային կախվածությունը ներկայացվում է գրեթե հավասարաչափ ցուցանիշներով(ըստ ինտերնետային կախվածության տեսակների՝ խաղային, հաղորդակցային, ճանաչողական), միայն այն տարբերությամբ, որ տղաների ներկայացուցչությունը ավելի մեծ է խաղային կախվածության պարագայում,իսկ աղջիկներն ավելի ընդգրկված են հաղորդակցային կախվածություններում:



	հաղորդակցային	խաղային	ճանաչողական
տղա	21.4	27.9	6.7
աղջիկ	27.6	15.1	1.3


Տրամագիր 1. Դեռահասների սոցիալական ցանցերի կախվածությունը ըստ սեռի

Այն հարցին թե «Դուք օգտվում եք սոցիալական ցանցերից» հարցին աղջիկների 45.9% պատասխանել են այո, իսկ 54.1%՝ ոչ, իսկ տղաների 75.3%՝ այո, իսկ 24.7%՝ ոչ: Այսպսով կարելի է եզրակացնել որ տղաները ավելի շատ են օգտվում սոցիալական ցանցերից (տե՛ս տրամագիր 2):



Տրամագիր 2. Դուք օգտվում եք սոցիալական ցանցերից

Մյուս հարցին, «Ինչ նպատակով եք օգտագործում սոցցանցերը» հարցվածները պատասխանել են հետևյալը՝ շփվելու հարազատների և ընկերների հետ 29%, օնլայն դասընթացների մասնակցություն՝5%, ինֆորմացիայի փնտրում՝29%, տեսանյութերի, նկարների, ֆիլմերի դիտում 27%, գնումներ՝ 5%, երաժշտություն լսել՝5% (տե՛ս տրամագիր 3):



Տրամագիր 3. Ի՞նչ նպատակով եք օգտագործում սոցցանցերը

Այսպիսով, եկանք այն եզրակացության, որ սոցցանցերում ամեն ինչ պարզ է, միմյանց հաղորդագրություններ են ուղարկում, նկարներ, ֆիլմեր և սպասում պատասխաններին: Այս ամենի մեջ չկա մարդկային շփում, չեն տեսնում դիմացինի դեմքի արտահայտությունը, շարժումները, աչքերի շփումը ժեստերի լեզուն, հույզերը: Այս ամենի հետ մեկտեղ նա կորցնում է կյանքում իր տեսակի հետ իրական շփումը:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Ю.Д. Бабаева, А.Е. Войскунский, О.В. Смыслова. Интернет: воздействие на личность. Гуманитарные исследования в Интернете / Под ред. А.Е. Войскунского (Москва: Можайск-Терра, 2000, 431с.)
2. Губанов Д. А. Социальные сети: модели информационного влияния, управления и противоборства / Д. А. Губанов, Д. А. Новиков, А. Г. Чхартишвили. – М.: Изд-во физико-математической литературы, 2010. – 228 с.

Положительное и отрицательное влияние социальных сетей на эмоциональную сферу подростков

Саруханян Лина

ВГУ, Психология личности и психологическая консультация, Магистратура, 3-й курс

Резюме

Ключевые слова: *социальные сети, подростки, положительное влияние, отрицательное влияние, эмоциональная сфера, эмоции*

Таким образом, мы пришли к выводу, что в социальных сетях все просто, они отправляют друг другу сообщения, картинки, фильмы, ждут ответов. Во всем этом нет человеческого контакта, они не видят мимику, движения, зрительный контакт, язык жестов, эмоции другого человека. При всем этом он теряет реальную связь со своим видом в жизни.

Positive and Negative Impact of Social Networks on Teenagers Emotional Sphere

Sarukhanyan Lina

VSU, Personality Psychology and Pshycological Counseling, MA, 3rd course

Summary

Key words: *social networks, teenagers, positive effects, negative influence, emotional sphere, emotions*

Thus, we came to the conclsion that everything is clear is social networks, they send communication, they do not see front facial expression, move ments, eye communication, sign language, emotions. Along with all this, he loses real contact with hi type in life.

Ն/դ տարիքի երեխաների հոգեբանական պատրաստականությունը դպրոցական ուսումնական գործունեությանը և տագնապայնության կապը

Ստեփանյան Լիլիթ
ՎՊՀ, Անձի հոգեբանության և հոգեբանական խորհրդատվություն, Մագիստրատուրա, 3-րդ կուրս
Գիտական ղեկավար՝ հ. գ. թ., դոցենտ ***Հ. Ավագիմյան***

Հանգուցային բառեր. *հոգեբանական պատրաստականություն, տագնապ, տագնապայնություն, տագնապային երեխաներ*

Հոդվածի նպատակն է ուսումնասիրել նախադպրոցական տարիքի երեխաների հոգեբանական պատրաստականությունը դպրոցական ուսումնական գործունեությանը և տագնապայնության կապը դրա հետ:

Վերոնշյալ նպատակի իրագործումը պահանջում է հետևյալ խնդիրների իրագործումը.

- տալ նախադպրոցականի դպրոց հաճախելու հոգեբանական առանձնահատկությունների ընդհանուր նկարագիրը,
- տալ նախադպրոցական տարիքի երեխաների՝ դպրոց հաճախելու հետ կապված, տագնապայնության դրսևորման հոգեբանական առանձնահատկությունների ընդհանուր բնութագիրը,
- տալ հետազոտության մեթոդիկաների և ընտրանքի նկարագրությունը,
- ներկայացնել հետազոտության արդյունքները,
- կատարել ստացված արդյունքների վերլուծություն:

Հետազոտության իրականացման ընթացքում կիրառվել են «Երեխայի դպրոցի պատրաստականության» ախտորոշման Բ. Չեյփի մեթոդիկան և Ռ. Թեմփլի. Վ. Ամենի, Մ. Դորկի Տագնապայնության ախտորոշման մեթոդիկան:

Հետազոտության ընթացքում անդրադարձ է կատարվել նախադպրոցական տարիքի երեխաների հոգեբանական պատրաստականությանը դպրոցական ուսումնական գործունեությանը և այն խնդրին, թե ինչպիսի ազդեցություն է ունենում տագնապայնությունը դրա վրա, քանի որ հաջող ուսումնական գործունեության և երեխայի անհատականության զարգացման համար կարևոր է, որ երեխան դպրոց հաճախիուսումնական գոր-

ծունեության համար անհրաժեշտ հոգեբանական պատրաստականությամբ: Հոգեբանական պատրաստականությունն իրենից ներկայացնում է անհրաժեշտ և բավարար մակարդակ դպրոցական ծրագրերին ու կոլեկտիվ միջավայրին հարմարման համար: Միջավայրի փոփոխության հետ կապված երեխան ունենում է ներքին անհանգստություն, որն էլ տագնապայնության որոշակի մակարդակի առաջացման պատճառ է դառնում:

1.Նախադպրոցականի դպրոց հաճախելու հոգեբանական առանձնահատկությունները: Հոգեբանական որոշակի որակների ձևավորումը համարվում են կարևոր նախադրյալներ նոր սոցիալական միջավայրում նորմալ ընդգրկվելու և կրթական գործունեության ձևավորման համար: Այս խնդրի ուսումնասիրության գործում իր մեծ ներդրումն ունի Լ. Ս. Վիգոտսկին: Նա ուսումնական գործունեությունը չի առանձնացնում զարգացման նախորդ փուլերից, քանի որ հենց նախադպրոցական տարիքում են ձևավորվում ուսումնական գործունեության նախադրյալները. ակտիվ կերպով զարգանում են հոգեբանական ֆունկցիաները և արդյունավետ ուսումնական գործունեությունը պայմանավորված է ոչ այնքան հոգեբանական ֆունկցիաների հետագա զարգացմամբ, որքան այդ ֆունկցիաների կապերի և հարաբերությունների վերակառուցմամբ: Հոգեկան ֆունկցիաների զարգացման մակարդակը միայն հանդես է գալիս որպես նախադրյալ՝ ուսումնական գործունեության իրականացման համար, որի հաջողությունը պայմանավորված է այն հանգամանքով, թե ինչպես են օգտագործվում ուսումնական գործունեության նախադրյալները [3, 7]:

Դպրոցական ուսումնական գործունեությանը հոգեբանական պատրաստականության վերաբերյալ կատարված ուսումնասիրությունների շարքում մեծ է Լ.Ա. Վենգերի դերը, համաձայն որի նախադպրոցական տարիքի երեխայի մոտ չեն կարող լինել «դպրոցականի որակներ»՝ իրենց մաքուր տեսքով, քանի որ ինչպես ցանկացած այլ հոգեկան պրոցեսներ, սա նույնպես կազմավորվում է այն գործունեության ընթացքում, որին դրանք անհրաժեշտ են, և հետևաբար չեն կարող են ձևավորվել առանց նախադպրոցականի կյանքի և գործունեության խախտման: Վ.Ս. Մուխինան պնդում է, որ դպրոցական պատրաստականությունն իրենից ներկայացնում է երեխայի սոցիալական հասունացման արդյունքում առաջացող սովորելու ցանկությունն ու գիտակցումն է, նրա մեջ ներքին հակասությունների առաջացումը, որոնք հանդիսանում են կրթական գործունեության դրդապատճառ [6]:

«Դպրոցին պատրաստ լինել,, չի նշանակում գրել, կարդալ և հաշ-

վել իմանալ: Դպրոցին պատրաստ լինել նշանակում է պատրաստ լինել սովորելու ամբողջ փուլին»,- նշում է Լ. Ա. Վենգերը [7]:

2. Նախադպրոցական տարիքի երեխաների՝ դպրոց հաճախելու հետ կապված, տագնապայնության դրսևորման հոգեբանական առանձնահատկությունները:

Տագնապայնությունն իրենից ներկայացնում է որոշակի երկարատևություն ունեցող և բարդ էմոցիոնալ վիճակ, հաճախ նաև վախի նախնական ձև: Տագնապն առաջանում է, երբ մարդը ենթադրում է, որ ապագայի ինչ-որ իրավիճակ, իրադարձություն կամ հանգամանքներ, կարող են հանգեցնել նրա կյանքի հետաքրքրությունների նկատմամբ դիսթրեսի, անկանխատեսելի և չղեկավարվող վտանգի [2, 39]:

Տագնապայնությունն առաջանում է այն դեպքում, երբ արտաքին սպառնալիքի գնահատականը միավորվում է դրա հաղթահարման միջոցի հարմար տարբերակի բացակայության պատկերացման հետ: Սթրեսային իրավիճակի երկարատև և հաճախակի ազդեցությունը և անհատի կողմից դրան տրվող համապատասխան գնահատականը, դիտարկվում են որպես նևրոտիկ և նախանևրոտիկ հոգեվիճակի, այդ թվում նաև տագնապայնության հիմնական աղբյուր[4, 13]:

Ալբերտ Էլլիսի պնդմամբ, տագնապայնությունն ունի օգտակարություն, որն օգնում է մարդուն զգալ հարմարավետություն, ինչպես նաև պահպանել տեսքը: Քանի որ մարդիկ ծնվում և դաստիարակվում են ցանկություններով, նախապատվություններով և նպատակներով, այդ պատճառով էլ, եթե մարդը չունենար տագնապայնություն, ըստ էության նույնիսկ չէր անհանգստանա իր ցանկություններն իրականացնելու համար [1, 22]:

Հեգեբանական գրականության մեջ կան երկու բազային տերմիններ, որոնք հաճախ օգտագործվում են որպես հոմանիշներ «տագնապ» և «տագնապայություն» տերմինները: Սակայն դրանք առաջին հերթին առանձնանում եմ որպես ինքնուրույն հասկացություններ: Տագնապայնությունն առանձնացնում են որպես անահատականության համեմատաբար մշտական, համեմատաբար անփոփոխ հատկություն (անձնային տագնապայնություն), որը դրսևորվում է ամբողջ կյանքի ընթացքում: Իսկ տագնապը բնութագրվում է որպես բացասական հուզական վիճակ, որը տևում է համեմատաբար երկար և կապված է նյարդահոգեկան գործունեության փոփոխությունների հետ (իրավիճակային տագնապ): Պետք է նշել նաև, որ տագնապի սահամնումը՝ որպես վիճակ, հանդիսանում է

բանալի տագնապայնության՝ որպես հոգեվիճակ, բացահայտման համար. տագնապայնությունը «տագնապի ապրման անհատի հակվածությունն է, բնութագրվում է տագնապի առաջացման ցածր շեմով»: Շատ հեղինակաների կարծիքով երկարատև գոյություն ունեցող տագնապը կարող է դառնալ անահատի որակ՝ անցնելով տագնապայնություն կատեգորիային [12]:

Երբ մարդն ունենում է բարձր տագնապայնություն, ապա դա ազդում է ֆիզիկական, հոգեկան, հուզական, վարքային և, իհարկե, կոգնիտիվ դրսևորումների վրա: Նախադպրոցականը դեռևս ոչ բավարար ձևով է գիտակցում սեփական ապրումները: Այս տարիքային խմբում առավել տարածվածխնդիրներից են՝ տագնապայնության բարձր մակարդակը, նյարդային գրգռվածությունը, նեղացկոտությունը, վերբալ և ոչ վերբալ ագրեսիան, հիպերակտիվությունը և այլն: Երեխաների կողմից թույլ են գիտակցվում սեփական էմոցիաներն ու զգացողությունները, այլ մարդկանց դիմախաղը սխալ է ընկալվում: Ավագ նախադպրոցական տարիքում երեխաների ադապտացիայի վրա մեծ ազդեցություն է ունենում անձնային տագնապայնության բարձր մակարդակը: Այն դրսևորվում է իրական և երևակայական իրավիճակներում տագնապայնության զգացումներով, քանի որ այդ իրավիճակները սուբյեկտիվորեն գնահատվում են վտանգավոր: Մեծահասակների հետ միջանձնային հարաբերություններ խախտումը հանգեցնում է նախադպրոցական տարիքի երեխաների տագնապայնության բարձր մակարդակի: Պետք է նշել, որ բարձր տագնապայնության կրողներն են և' տղաները, և' աղջիկները, բայց, նախադպրոցական տարիքում, ավելի շատ տագնապային են համարվում տղաները: Չնայած դրան, աղջիկներին ավելի շատ են անհանգստացնում միջանձնային հարաբերություններն այլ մարդկանց հետ [8]:

Եթե խոսենք տագնապային երեխաների հետ, ապա պետք է նշենք, որ շատ դեպքերում տագնապային երեխաներ համարվում են այն երեխաները, որոնք ունեն ոչ կայուն ինքնագնահատական և անինքնավստահություն: Անընդհատ ապրվող վախը՝ անհայտի նկատմամբ, հանգեցնում է նրան, որ նրանք ծայրահեղ հազվադեպ են դրսևորվում նախաձեռնողականություն: Լինելով կարգապահ, նրանք նախընտրում են իրենց վրա չգրավել շրջապատի ուշադրությունը, իրենց դրսևորում են օրինակելի և՛ մանկապարտեզում, և՛ տանը, փորձում են հստակ կատարել ծնողների և դաստիարակների վարքը, չեն խախտում կարգ ու կանոնը: Այդպիսի երեխաների երբեմն համարում են համեստ և ամաչ-

կոտ: Բայց նրանց օրինակելությունը, կարգապահությունը կրում են պաշտպանական բնույթ. երեխան անում է ամեն ինչ, որպեսզի խուսափի անհաջողությունից [9]:

3. Հետազոտության ընտրանքը: Նախադպրոցական տարիքի երեխաների դպրոցական ուսումնական գործունեության հոգեբանական պատրաստականության և տագնապայնության մակարդակի ախտորոշման հետազոտական ուսումնասիրությունն անցկացրել ենք Լոռու մարզի Վանաձոր քաղաքի թիվ 30 ՆՈՒՀՀ-ում:


Հետազոտությանը մասնակցել են ավագ խմբերի 48 սաներ, որոնցից 24-ը՝ աղջիկ, 24-ը՝ տղա:

Կիրառված մեթոդիկաներ: «Երեխայի դպրոցի պատրաստականության» ախտորոշման Բ. Չեյփի մեթոդիկա[10]: Ռ. Թեմփլի. Վ. Ամենի, Մ. Դորկի Տագնապայնության ախտորոշման մեթոդիկա [11]:

4. Հետազոտության արդյունքները: Նախադպրոցական տարիքի երեխաների շրջանում տագնապայնության մակարդակի և դպրոցին պատրաստականության աստիճանի հետ կապված, հետազոտական աշխատանքներ իրականացնելուց հետո, կատարել ենք ստացված արդյունքների վերլուծություն:


«Երեխայի դպրոցի պատրաստականության» ախտորոշման Բ. Չեյփի մեթոդիկայի արդյունքների վերլուծությունը թույլ տվեց պարզել, որ 48 հոգուց 12-ը չունեն դպրոցական ուսումնակա գործունեության համար անհրաժեշտ պատրաստականություն, իսկ 36-ը՝ ունեն: Եթե տոկոսային հարաբերությամբ ներկայացնենք, ապա կստանանք հետևյալ պատկերը՝ 25%-ի մոտ բացակայում է դպրոցական ուսումնական գործունեության պատրաստականությունը, իսկ 75%-ի մոտ առկա է համապատասխան պատրաստականություն, որն անհրաժեշտ է դպրոցական ուսումնական գործունեության իրականացման համար:

Ստացված արդյունքներից կարելի է հետևություն անել, որ 48 հոգի ընտրանք կազմող նախադպրոցական տարիքի երեխաների մոտ դպրոցական ուսումնական գործունեության պատրաստականությունը գտնվում է նորմայի սահմաններում՝ 75% (տե՛ս տրամագիր 1):



Տրամագիր 1. Երեխայի դպրոցի պատրաստականություն

Նույն մեթոդիկայով կատարվել է նաև վերլուծություն կապված նախադպրոցական տարիքի երեխաների բազային պատրաստականության հետ՝ դպրոցական ուսումնական գործունեությանը: Ստացված արդյունքները թույլ են տալիս կատարել հետևյալ վերլուծությունը. 48 երեխա ընտրանք կազմող հետազոտության մասնակիցներց միայն 10%-ի մոտ է առկա դպրոցական ուսումնական գործունեության համար անհրաժեշտ բազային պատրաստականություն, իսկ 90%-ի մոտ այն բացակայում է (տե՛ս տրամագիր 2-ում):




Տրամագիր 2. Նախադպրոցական տարիքի երեխաների բազային պատրաստականությունը դպրոցին

Ռ. Թեմփլի, Վ. Ամենի, Մ. Դորկի տագնապայնության ախտորոշման մեթոդիայի արդյունքների վերլուծությունը թույլ տվեց պարզել, որ 48 հոգուց 17-ի մոտ առկա է տագնապայնության բարձր մակարդակ, 28-ի մոտ՝ միջին մակարդակ, 2-ի մոտ՝ ցածր մակարդակ: Եթե նշված թվերը ներկայացնենք տոկոսային հարաբերությամբ, ապա կունենաք հետևյալ

պատկերը՝ 35%-ի մոտ դիտվում է տագնապայնության բարձր մակարդակ, 58%-ի մոտ՝ միջին մակարդակ և 7%-ի մոտ՝ ցածր մակարդակ:

Արդյունքներից պարզ է դառնում, որ 48 հոգի ընտրանք կազմող նախադպրոցական տարիքի երեխաների շրջանում տագնապայնության աստիճանը գտնվում է միջին մակարդակում՝ 58% (տե՛ս տրամագիր 3):



Տրամագիր 3. Նախադպրոցական տարիքի երեխաների տագնապայնության մակարդակը

Մեր հետազոտությանն առաջադրված նպատակին համապատասխան կատարել ենք նաև նախադպրոցական տարիքի երեխաների դպրոցական ուսումնական գործունեության բազային պատրաստականության և տագնապայնության առկա մակարդակների համահարաբերակցային վերլուծություն:

Ստացված արդյունքներից կարելի է կատարել հետևյալ եզրակացությունը. նախադպրոցական տարիքի երեխաների տագնապայնության առկա մակարդակի և դպրոցական ուսումնական գործունեության բազային պատրաստականության միջև առկա է հակադարձ համեմատական կապ (-0,4): Ստացվում է , որ որքան բարձր է տագնապայնությունը, այնքան ցածր է բազային պատրաստականությունը և հակառակը:

Եզրակացություն

Այսպիսով, ամփոփելով հետազոտության ընթացքում ստացված արդյունքները, եկանք այն եզրակացության, որ նախադպրոցական տարիքի երեխաների մոտ առկա տագնապայնության մակարդակն ազդում է նրանց ուսումնական գործունեության հոգեբանական պատրաստականության վրա:

Մեր օրերում բազմաթիվ են տագնապայնության առաջացման պատճառները և անկախ այն հանգամանքից, թե ինչն է պատճառ հանդիսացել տագնապայնության որոշակի մակարդակի առաջացման համար, կարևոր է, որ այն չվերածվի կայուն որակի: Բնականաբար դա էլ իր հերթին կարող է ազդել ոչ միայն երեխայի հոգեբանական պատրաստականությանը դպրոցին, այլ նաև նրա ադապտացիային:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Эллис А. «Успокойся. Контролируй тревогу, прежде чем она начнет контролировать тебя», Питер 1998_23с.
2. Кларк Д. А., Бек А. Т. «Тревога и беспокойство: когнитивно-поведенческий подход», Киев, Диалектика 2019._448с.
3. Конева О. Б.« Психологическая готовность детей к школе», Челябинск, ЮУрГУ, 2000_32с.
4. Прихожан А. М. «Тревожность у детей и подростков: Психологическая природа и возрастная динамика» Воронеж, МОДЭК 2000 _304с.
5. https://edu.tatar.ru (07.07.2021).
6. https://works.doklad.ru (15.08.2021).
7. https://nsportal.ru (25.08.2021).
8. http://www.sgu.ru (20.07.2021).
9. http://chita-doverie.ru (03.08.2021).
10. https://kids.to-var.com (04.09.2021).
11. https://www.child-psy.ru (21.07.2021).
12. http://medpsy.ru (19.08.2021).

Связь психологической готовности дошкольников к школьно-образовательной деятельности с тревожностью

Степаня Лилит
ВГУ, Психология личности и психологическая консультация,
Магистратура, 3-й курс

Резюме

***Ключевые слова**: психологическая готовность, тревожность, тревога, тревожные дети*

В исследовании рассматривалась психологическая готовность дошкольников к школьной учебной деятельности, вопрос о том, как на нее влияет тревожность, ведь для успешной учебной деятельности и развития личности ребенка важно чтобы ребенок посещал вшколу с необходимой психологической готовностью к образовательной деятельности.

Таким образом, обобщая результаты исследования, мы пришли к выводу, что уровень тревожности у дошкольников влияет на их психологическую готовность к учебной деятельности.

В настоящее время существует много причин для возникнавения тревожности, и независимо от того, какова причина определенного уровня тревожности, важно не допускать того, чтобы этопревратитилась в устойчивое качество. В свою очередь это может сказаться не только на психологической готовности ребенка к школе, но и на его адаптации.

The Relation between Anxiety and Psychological Readiness of Preschool Children for School Education

Stepanyan Lilit
VSU, Personality Psychology and Pshycological Counseling,
MA, 3rd course

Summary

Key words: *psychological readiness, worry, anxiety, anxious children*

The study looked at the psychological readiness of preschool children for school activities and how it is affected by anxiety. It is important for a child to attend school with necessary psychological readiness for educational activities in order for him/her to have successful learning and personal development.

Thus, summarizing the results of the study, we conclude that preschool children's level of anxiety affects their psychological readiness for learning activities.

Nowadays, there are many reasons for anxiety, and regardless of the reason for a certain level of anxiety, it is important to prevent it from becoming a persistent quality. This can affect not only a child's psychological readiness for school, but also his/her adaptation.

Քաղաքաբնակ և գյուղաբնակ երիտասարդ ընտանիքների բավարարվածության մակարդակը և բաղադրիչները

Վիրաբյան Օֆելյա
ՎՊՀ, Անձի հոգեբանություն և հոգեբանական խորհրդատվություն, Մագիստրատուրա, 3-րդ կուրս
Գիտական ղեկավար՝ հ. գ. թ., դոցենտ ***Ռ. Ավագիմյան***

Հանգուցային բառեր. *ամուսնություն, երիտասարդ ընտանիք, սոցիալական ինսիտուտ, կենցաղավարում, բավարավածության մակարդակ*

Ընտանիք, ամուսնության կամ ազգակցության վրա հիմնված՝ մարդկանց փոքր խումբ է, որի անդամները միմյանց հետ կապված են կենցաղային ընդհանրությամբ, փոխադարձ օգնությամբ և բարոյական պատասխանատվությամբ: Որպես սոցիալական երևույթ, ընտանիքը փոխվում է հասարակության տնտեսական հիմքի զարգացմանը համապատասխան՝ պահպանելով հարաբերական ինքնուրույնությունը [1, 51-58]:

Ընտանիքը անհատականության ձևավորման ամենակարևոր սոցիալական միջավայրն է համարվում: Հոգեբանական աջակցության և կրթության հիմնական ինսիտուտը, որը պատասխանատու է ոչ միայն սոցիալական վերարտադրության, այլև որոշակի կենսակերպի. մտածելակերպի և հարաբերությունների վերականգման համար: Ուստի հասարակությունը շահագռգռված է ամուր, հոգեպես ու բարոյապես առողջ ընտանիքով, հետևաբար՝ բարեկեցիկ: Ընտանիքի և ամուսնության նկատմամբ հետաքրքրությամբ աճը պայմանավորված է մի շարք պատճառներից:

Ընտանիքի հետ աշխատանքի դասական մոտեցումներում ենթադրվում է, որ կա որոշակի «նորմատիվ» մոդել, որին խորհրդատուն փորձում է մեծացնել ընտանիքը: Սակայն դրանց ձևավորումից անցած կես դարի ընթացքում տեղի են ունեցել զգալի սոցիալ մշակութային փոփոխություններ: Հասարակության (մակրոհամակարգի) փոփոխությունները հանգեցնում են ընտանիքների կենսակերպի (միկրոհամակարգերի) փոփոխության [1, 58-62]:

Ընտանիքն է երեխային դուրս բերում հասարակություն, որում էլ երեխան ստանում է սոց. դաստիարակություն, դառնում է անձնավորություն:

Ընտանիքում են ամրապնդվում երեխայի առողջությունը, զարգա-

նում նրա նախադրյալները ու հնարավորությունները, հոգում նրա կրթության, մտքի զարգացման, որպես քաղաքացի դաստիարակության մասին։

Ընտանիքում է դրվում բնավորության գծերի հիմքը, երեխային սովորեցնում են գնահատել իր արարքները և պատասխան տալ դրանց համար։ Ընտանիքը նախապատրաստում է պատանուն ինքնուրույն ընտանեկան կյանքին, սովորեցնում է հարգել ընտանիքի բարի ավանդույթները և հետևել դրանց։ Ընտանիքը դա տուն է որը միավորում է մարդկանց, հիմք են դրվում մարդկային հարաբերությունները տեղի է ունենում անձնավորության առաջին սոցիալականացումը [2, 55-62]։

Ընտանիքի տարբեր տեսակները կարելի է դասակարգել համապատասխան իրենց կառուցվածքի։ Ըստ կառուցվածքի ընտանիքը լինում է նուկլեար (միջուկային), ընդարձակ, նահապետական։ Նուկլեար ընտանիքը կազմված է ամուսնական զույգերից և երեխաներից։ Չնայած այս տիպի ընտանիքը ազգակացական կապեր է պահպանում կնոջ կամ ամուսնու հարազատների հետ, բայց այն մնում է անկախ, ինքնակարգավորվող միավոր։ Ընդարձակ կոչվում է այն ընտանիքը, որը բաղկացած է մեկ կամ մի քանի նուկլեար ընտանիքներից՝ միասին ապրող մեկ հարկի տակ։ Ընդարձակ ընտանիքներում երիտասարդ զույգը քիչ հնարավորություն ունի վերահսկելու իր կյանքը և յուրաքանչյուր երեխա այդպիսի ընտանիքում դաստիարակվում և սոցիալականացվում է նաև մյուս անդամների կողմից, այլ ոչ միայն ծնողների։ Նահապետական ընտանիք, որը հին և միջին դարերում ընտանիքի հիմնական տեսակն է եղել։ Այստեղ մի քանի սերունդ՝ պապեր, զավակներ, թոռներ, ծոռներ, ինչպես նաև որդիների ընտանիքներ ապրել են մեկ հարկի տակ [2, 50-52]։

Բավականին տարածված ընտանիքի տիպ են հանդիսանում այն ընտանիքները, որոնցում առկա են մի քանի սերունդների ներկայացուցիչներ։ Առհասարակ հասարակության մեջ հաճախակի են հանդիպում ընտանիքի հետևյալ տիպերին՝ երիտասարդ, ոչ լրիվ, կրկնակի ամուսնական և այլն։

- Երիտասարդ ընտանիք է համարվում այն ընտանիքը, որտեղ առկա է ամուսնական զույգ երեխայի հետ, կամ առանց երեխայի։ Այսպիսի ընտանիքի տարիք 5 տարուց ավելի չի կարող լինի, իսկ ամուսինները՝ 30 տարուց ոչ ավել…
- Ոչ լրիվ ընտանիքն այն ընտանիքն է, որտեղ բացակայում են

ամուսիններից մեկը, կամ երեխան ամուսնական կապից չէ:

- Կրկնակի ամուսնացած ընտանիքները այն ընտանիքներն են, որտեղ կան և մայրը, և հայրը, ինչպես նաև երեխաներ, որոնցից մեկը կարող է լինել համետեղ, մյուսները նախորդ ամուսնությունից կամ ամուսնություններից: Երեխային ամենից լավ ճանաչում են ընտանիքում, քանի որ ծնողն ամենից շատ է շփվում երեխայի հետ: Հիմնականում խնդիրներ են առաջանում այն ընտանիքներում, որտեղ դաստիարակվում է հիվանդ երեխա [3, 55-62]:

Ընտանիքն ունի հասարակական նշանակություն ունեցող գործառույթներ, որոնք բխում են հենց հասարակության պահանաջներից: Որպես առավել լայն, հասարակական կառուցվածքի տարր, ընտանիքը բազմաֆունկցիոնալ է և կարելի է առանձնացնել ընտանիքի կողմից կատարվող հմնական գործառույթները:

Այսպիսով ընտանիքի որպես սոցիալական ինստիտուտի գործառույթներն են.

1. Ընտանիքը ապահովում է վերարտադրողականությունը կայուն ընտանեկան զույգերի ստեղծման ճանապարհով, որը պահպանում է մորը հղիության ժամանակահատվածում և երեխաներին՝ կյանքի ճգնաժամային օրերի ընթացքում: Սահմանափակելով զուգընկերների թուլատրելի չափը ընտանիքը նվազացնում է պոտենցիալ կոնֆլիկտների մեծ քանակը, ներառյալ ժառանգականության իրավունքի հետ կապված: Խրախուսվում է ամուսինների միջև սեռական հարաբերությունը՝ դրանով ապահովելով վերարտադրողականությունը: Այսպիսով անմիջական կյանքի վերարտադրողականությունն այնպիսի գործառույթ է, որում առկա է նյութականը, սակայն որն ամենևին չի հանգում դրան: Այն ունի կոմպլեքսային բնույթ և «զտված տեսքով» ներառում է ընտանիքի մյուս բոլոր գործառույթները՝ տնտեսական, դաստիարակչական, սոցիալականացման, հաղորդակցական, զվարճանքի (փոխօգնությունը, առողջության, կենսառիթմի պահպանման խնդրում, ժամանցի և հանգստի կազմակերպումը), կարգավորիչ և այլն:

2. Ընտանիքը կատարում է աճող սերնդի սոցիալականացման գործառույթը: Ընտանիքը երեխաների համար համարվում է առաջնային խումբ, որտեղից էլ սկսվում է անձի զարգացումը: Երեխայի մոտ միշտ էլ մնում են վաղ մանկության շրջանից ընտանիքի հիմնական վարքային նմուշները [3, 55-62]:

Ընտանեկան սոցիալականացման հիմնական միջոցը համարվում է երեխաների կողմից ընտանիքի չափահաս անդամների վարքի մոդելների ընդօրինակումը:

Պետք է նշել, որ ընտանիք նշանակություն եղել և մնում է այն կարևորագույն մասերից մեկ, որը ուսումնասիրվում հոգեբանությունում և հարակից այլ գիտություններում; Ընտանիքի հոգեբանության բնագավառում ակնհայտորեն նկատվում է համակարգային մոտեցում, որի շրջանակներում ընտանիքը դիտարկվում է որպես բաց համակարգ, որը գտնվում է շրջակա միջավայրի հետ անընդհատ փոխազդեցության մեջ: Ընտանեկան համակարգն ինքնակարգավորվող համակարգ է, այսինքն՝ դրա դրսևորումները նպատակաուղղված են և համակարգի փոխակերպումների աղբյուրը գտնվում է նրա ներսում [3, 10-15]:

Ընտանիքի տարբերակումը կապված է նաև բնակության վայրի առանձնահատկությունից: Կապված բնակության վայրի հետ՝ տարբերակում ենք քաղաքային և գյուղական ընտանիքներ:

Գյուղական ընտանիքների առանձնահատկություններից են չափավոր կյանք վարելը, կենցաղային ծանր պայմանները, խիստ հսկողությունը յուրաքանչյուր անդամի նկատմամբ: Պահպանվել են նաև գյուղական հասարակության որոշ էլեմենտներ՝ բարեկամական կապերի կայունությունը, հարևանների հետ սերտ կապը և այլն: Գյուղական ընտանիքներում մեծերն ու փոքրերն առավել հաճախ են հավաքվում միասին, քան քաղաքային ընտանիքներում:

Վերը թվարկված գործոնները հստակեցնում են այն, որ գյուղական ընտանիքներում աճող սերնդի սոցիալականացման գործընթացում նշանակալի մեծ դեր են խաղում, քան քաղաքային ընտանիքները [3, 21-24]:

Քաղաքային ընտանիքները միատեսակ չեն: Նրանք բնորոշում են բնակչության խտությամբ, աշխարհագրական դիրքով, բնակչության գործունեությամբ և զբաղվածությամբ:

Երիտասարդ ընտանիքիում բավարավածության մակարդակը պարզելու համար իրականցրել ենք հետզոտություն մինչև 5 տարի ամուսնական կյանք վարող ընտանիքների հետ: Հետազոտություն իրականացրել ենք գյուղում և քաղաքում ապրող ընտանիքների հետ: Նպատակ ունենալով պարզել առկա նմանությունները և տարբերությունները: Հետազոտություններին մասնակցել են թվով 30 երիտասրադ ընտանիքներ, որոնք ապրում են գյուղում և քաղաքում:

Հետազոտություն իրականցրել են հետևյալ մեթոդների և մեթոդիկաների օգնությամբ՝


- դիտման մեթոդի, նպատակն է եղել ուսումնասիրել երիտասարդ ընտանիքների բավարվածության մակարդակը և բաղադրիչները։
- հարցազրույցի մեթոդի, նպատակն է եղել պարզել գյուղում և քաղաքում ապրող ընտանիքների բավարվածության հիմնական բաղադրիչները և գտնել բավարվածության վրա ազդող հիմնական պատճառները։
- Ամուսնությունից գոհունակության հարցաշարի թեստի նպատակը բավարվածության աստիճանի ՝ ուսումնասիրումն է։ Օգտագործել ենք Վ. Վ. Ստոլին, Թ. Լ. Ռոմանովայի, Գ. Պ. Բուտենկոի «Ամուսնության բավարվածության հարցաթերթիկը» [5, 55-62]։

Ուսումնասիրություններից պարզեցինք որ երիտասարդ ընատնիքների մեծ մասի մոտ նկատվում բավարվածության աստիճանի նվազում որը կապված ֆինանսական միջոցներից, տնտեսական անբավարար վիճակից։ Ուսումնասիրություն անցկացնելով քաղաքում և գյուղում ականտես եղանք շատ տարբերությունների թե զույգերի մտածելակերպի թե ապրրելակերպի առումով սակայն կան նաև նմանություներ էլ 2 վայրերում էլ լիարժեք ընտանիքի գրավականը համարում էին երխան[4, 55-62]։


Քաղաքային բնակություն ունեցող ընտանիքներ մտածելակերպի առումով ավելի ազատ են ավելի հստա և ինքնուրույն դա կապված է նրանից որ քաղաքում երիտասարդ ընտանիքների մեծ մասը ապրում է ծնողներից առանձին ինչ հնարավորություն է տալիս ավելի ինքնութույն լինելու։

Գյուղական բնակություն ունեցող ընտանիքները ապրում են ընտանիքի անդամների հետ։ Ինչ հետագայում խնդիր է հանդիսանում նրանց հոգեբանական բավարվածության նվազման համար։

Հետազոտության արդյունքները ավելի հստակ ներկայացված են դիգրամների տեսքով՝



Տրամագիր 1



Տրամագիր 2

Ըստ հետազոտության արդյունքների ֆինանսական բաղադրիչ կարևոր և նշանակալից մասն է կազմում ընտանիքի բավարվածության համար և դրա ոչ լիարժեք լինելը ազդում է ընտանիքի վրա։

Այսպիսով, անհատի, որպես ընտանիքի անդամի դրսևորումները

պայմանավորվում են նրա մոտիվացիոն ոլորտի, մասնավորապես՝ պահանջմունքների բնույթից, բնակության վայրի առանձնահատկություններից և պայմաններից: Ընդ որում, ընտանիքի բավարվածության մակարդակը անմիջականորեն կապված է ընտանիքի անդամների պահանջմունքների բավարարման չափից: Այսպիսով ընտանիքը դիտվում է որպեզ այն կարեվորագույն ինսիտուտը որտեղ իրականացվում է ձի լիարժեք սոցիալականցումը և դաստիարակությունը որը կապված տնտեսական և հոգեբանական մակարդակից;

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Антонов А.И. Семья как социальный институт // Основы социологии. Под ред. Эфе
2. Аргайл М. Психология счастья / М. Аргайл. – 2-е изд. – Спб.: Питер, 2003. - стр. 271.
3. Артюхов А.В. Государственная семейная политика и ее особенности в России//Социс. 2012. № 7.- стр. 145.
4. Буров С.Н. Брачно-семейные отношения. - М.: Экзамен, 2006. – стр. 127.
5. Гребенников И.В. Основы семейной жизни. - М.: Просвещение, 2017, стр. 450.

Уровень удовлетворенности городских и сельских молодых семей и составляющих

Вирабян Офелия
ВГУ, Психология личности и психологическая консультация,
Магистратура, 3-й курс

Резюме

***Ключевые слова**: брак, молодая семья, социальный институт, образ жизни, уровень удовлетворенности*

Таким образом, проявления личности как члена семьи обусловлены характером его мотивационной сферы, в частности, требованиями, особенностями места жительства. При этом уровень удовлетворенности семьи напрямую связан с тем, насколько удовлетворены потребности членов семьи. Таким образом, семья рассматривается как важнейший институт, где осуществляется полноценная социализация лошади, воспитание которой связано на хозяйственном и психологическом уровне:

Level of Satisfaction of Urban and Rural Young Families and Components

Virabyan Ofelya
VSU, Personality Psychology and Pshycological Counseling,
MA, 3rd course

Summary

***Key words:** marriage, young family, social institution, household, satisfaction level*

Thus, the manifestations of a person as a family member are determined by the nature of his or her motivational sphere, in particular by the requirements and characteristics of his or her place of residence. At the same time, the level of satisfaction of the family is directly related to the extent to which the needs of family members are met. Thus, the family is regarded as the most important institution for the full socialization and upbringing of the individual, which is linked to the household and psychological level.

ՄԱՆԿԱՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ

ПЕДАГОГИКА

PEDAGOGY

Ֆորս-մաժորային իրավիճակներում կրթության կառավարման խնդիրները

Աբազյան Լիանա
ՎՊՀ, Կրթության կառավարում, մագիստրատուրա 2-րդ կուրս
Գիտական ղեկավար՝ մ. գ. թ. դոցենտ ***Լ. Բաղդասարյան***

Հանգույցային բառեր. *արտակարգ իրավիճակ, աղետի պլան, հեռավար ուսուցում, համավարակ*

Վերջին տասնամյակում աշխարհում տեղի ունեցած կլիմայական, գեոֆիզիական, առողջապահական, քաղաքական և այլ ցնցումների (երկրաշարժ, պատերազմ, համավարակ) պատճառով աշխարհի տարբեր երկրներում ապրող մոտ 20 մլն երեխա զրկվել է կրթություն ստանալու իրավունքից: Առնվազն 200 մլն դպրոցական ապրում են այն երկրներում, որոնք պատրաստ չեն արտակարգ իրավիճաներում հեռավար ուսուցում կազմակերպել: ՔՈՎԻԴ-19 համավարակի և դրան հաջորդող արգելափակումների պատճառով աշխարհում աշակերտները բաց են թողել առկա ուսուցման 1.8 տրիլիոն դասաժամ, և այս թիվը գնալով աճում է: Որպես հետևանք՝ սովորողները զրկվել են իրենց կրթությունից և կենսական նշանակության այլ օգուտներից, որոնք ապահովում է դպրոցը [9; 4]:

Հայաստանն աղետների առումով գտնվում է բարձր ռիսկային գոտում, որը լուրջ սպառնալիք է ազգաբնակչության և երկրի կայուն զարգացման համար: Աղետների ռիսկի նվազեցման և սովորողների ու ուսումնական հաստատությունների արտակարգ իրավիճակներում գործելու կարողությունների զարգացումը կարևոր նախադրյալ է կրթական համակարգի անվտանգ գործունեության համար: Հանրակրթական ուսումնական հաստատությունները՝ որպես յուրահատուկ համակարգ, աղետների ռիսկի նվազեցման և ֆորս-մաժորային իրավիճակների առաջացման տեսանկյունից համարվում են բարձր ռիսկային օբյեկտներ: Սովորողներն առավել խոցելի են, քանի որ նրանց մոտ դեռևս ամբողջական ձևավորված չեն կյանքին կամ առողջությանը վտանգ սպառնացող իրավիճակներում արագ կողմնորոշվելու և ինքնապաշտպանվելու մեխանիզմները: Հուզական ֆոնի ազդեցության տակ նրանք կարող են խուճապի մատնվել, կատարել սեփական անձին կամ այլ անձանց վնասող գործողություններ՝ դրանով իսկ խոչընդոտելով ստեղծված իրավիճակում իրենց կողմնորոշվելուն և համապատասխան որոշում կայացնելուն: Սովորողների և աշխատակազմի անվտանգության ապահովումը կարևորագույն

հիմնախնդիր է: Վերջինիս լուծման համար անհրաժեշտ է ուսումնական հաստատություններում իրականացնել աղետների ռիսկի նվազեցման և Ֆորս-մաժորային իրավիճակների գործընթացների արդյունավետ կառավարում (պլանավորում, իրականացում, վերահսկում): Այս գործընթացը խթանում է ոչ միայն ուսումնական հաստատության վարչական, մանկավարժական անձնակազմի, սովորողների, այլև՝ ծնողների, համայնքի ղեկավար կազմի և շահագրգիռ կառույցների ներկայացուցիչների աղետների ռիսկի նվազեցման ոլորտում գիտելիքների, կարողությունների, հմտությունների, մտածողության ձևավորմանն ու զարգացմանը:

Համավարակի պայմաններում կրթության գործընթացի կազմակերպումն ուսուցման հեռավար եղանակով ցույց տվեց, որ գործընթացի կազմակերպման մեջ կան բազմաթիվ թերություններ և խնդիրներ:

Հետևապես հարկ է ուսումնասիրել և վեր հանել ֆորս-մաժորային իրավիճակում կրթության գործընթացի կազմակերպման առկա խնդիրները:

Ֆորս-մաժորային իրավիճակները կանխատեսելի չեն, հետևապես պետք է ստեղծել կրթության կազմակերպման այնպիսի համակարգ, որը պատրաստ լինի այդ իրավիճակներում լիարժեք կրթության կազակերպմանը:

Մարդկության զարգացման ողջ ընթացքում աղետները հազարավոր մարդկային զոհերի, զրկանքների, և նյութական կորուստների պատճառ են դարձել: Դրանք մինչ օրս էլ ներկայացնում են զարգացող և մեծացող վտանգ՝ պետության և հասարակության կողմից պահանջելով մեծ ուշադրություն:

Արտակարգ իրավիճակը (ԱԻ) որևէ տարածքում վթարի, աղետի, համաճարակի, պատերազմի հետևանքով առաջացած իրավիճակն է, որը հանգեցնում է նյութական բարիքների ոչնչացմանը, շրջակա միջավայրի աղտոտմանը: Ըստ ծագման արտակարգ իրավիճակները լինում են բնածին, տեխնոգեն, կենսաբանական, մարդածին [7; 3]:

Հարկ է նշել նաև, որ բնական աղետներն են՝ երկրաշարժը, սողանքը, ջրհեղեղը, փոթորիկը, մրրիկը, հեղեղը, կարկուտը, պտտահողմը, մառախուղը, հրաբուխը, ձնամրրիկը և այլն:

ՀՀ-ը բնածին ծագման ԱԻ-ի հնարավոր դրսևորման տեսակետից տարածաշրջանում գտնվում է բավականին բարձր ռիսկային գոտում: Հայտնի բնածին վտանգավոր երևույթներից 110-ը դրսևորվել է, կամ կարող է դրսևորվել հանրապետությունում: Բնական աղետներից ՀՀ-ը բոլորից շատ ազդեցություն է կրում երկրաշարժից, սողանքներից,

գարնանային ցրտահարությունից, կարկտահարությունից, սելավներից, ուժեղ քամիներից, անտառային հրդեհներից: Սակայն երկրաշարժի վտանգը հանրապետությունում կազմում է աղետների ընդհանուր վտանգի 94 %-ը: ՀՀ-ում տեխնածին վտանգների ռիսկի աղբյուր են հանդիսանում ինչպես Հայաստանի ատոմակայանը, այնպես էլ քլոր, ամոնիակ, աղաթթու և այլ վտանգավոր նյութեր օգտագործող թվով 27 քիմիական գործարան, բարձր պայթյունավտանգ և հրդեհավտանգ շուրջ 1500 ձեռնարկություն, 80 ջրամբար, 19 պոչամբար: Էական փոփոխության է ենթարկվել բնության և հասարակության փոխհարաբերությունների դինամիկ հավասարակշռվածությունը: Առանձնահատուկ տագնապ է հարուցում միջազգային ահաբեկչության ակտիվացումը: Պետության անվտանգության ապահովման համակարգում կարևոր սոցիալ-տնտեսական խնդիր է հանդիսանում հնարավոր վտանգավոր երևույթների կանխատեսումը, կանխարգելումը և հետևանքների վերացումը: Ավելին՝ խնդիրը, լինելով ընդհանուր պետական պաշտպանական համակարգի բաղկացուցիչ մաս, պահանջում է համապարփակ լուծում և բոլոր պետական կառույցների փոխհամագործակցություն[2; 5]:

Վերջին ժամանակներում Հայաստանում ստեղծված համաճարակային և պատերազմական արտակարգ իրավիճակները ռիսկային ազդեցություն ունեցան երկրի սոցիալ- տնտեսական, քաղաքական, կրթական ոլորտի վրա: Եվ քանի որ աղեների մեծ մասն անսպասելի ու անկանխատեսելի են, հետևապես կրթական հաստատություններից պահանջվում է՝

- սովորողներին իրազեկել ԱԻ-ի և պատերազմի ժամանակ պետության կողմից իրականացվող Քաղաքացիական պաշտպանության (ՔՊ) միջոցառումներին՝ կարևորելով այդ գործընթացներում քաղաքացիների իրավունքներն պարտականությունները, ինչպես նաև սովորեցնեն նախընտրելի վարքագծի դրսևորումը,
- սովորողների մոտ ձևավորել ՔՊ անհատական և կոլեկտիվ պաշտպանական միջոցներից օգտվելու հմտություններ,
- ուսուցանել տարաբնույթ ԱԻ-ում նախընտրելի վարվելակերպի դրսևորման ունակություններ, խոցող գործոններից պաշտպանվելու կարողություններ,
- իրազեկել ԱԻ-ում և պատերազմի ժամանակ փրկարարական և անհետաձգելի վթարավերականգնողական աշխատանքների և իրականացվող միջոցառումների մասին,
- ներկայացնել ԱԻ-ում բնակչության բարոյահոգեբանական հնարավոր խանգարումները, ըստ ժամանակահատվածի, խուճապի

դրսևորման և դրանց հաղթահարման ձևերը, հնարքները,

- իրազեկել ԱԻ-ի և պատերազմի ժամանակ բնակչության ազդարարման կարգին և ազդարարման ազդանշանների տրման դեպքում բնակչության գործողություններին,
- ձևավորել պատկերացումներ ԱԻ-ում հումանիտար օգնության, սոցիալ-հոգեբանական աջակցության իրականացման սկզբունքների և իրականացման գործողություններ[7;4]:

Ուսումնական հաստատության անվտանգության մակարդակի բարձրացման նպատակով մշակվում է ուսումնական հաստատության և հարակից տարածքի առանձնահատկություններից բխող աղետների ռիսկի նվազեցման և արտակարգ իրավիճակներում գործելու պլան: Այն պետք է լինի իրատեսական և մատչելի սովորողների, ուսուցիչների, աշխատակիցների և ծնողների համար: Աղետների ռիսկի նվազեցման և արտակարգ իրավիճակներում գործելու պլանի մշակումն ու զարգացումը նպաստում է արտակարգ իրավիճակների կառավարման արդյունավետության բարձրացմանը և անվտանգության մշակույթի ձևավորմանը: Պլանները կազմելիս, հաշվի են առնվում սովորողների և անձնակազմի տարիքային, գենդերային, լեզվական և սահմանափակ կարողություններով սովորողների առանձնահատկությունները: Պլանում հաշվի են առնվում նաև ֆիզիկական, զգայական, շարժական, մտավոր զարգացման խնդիր ունեցող սովորողների, ինչպես նաև մանկավարժների հատուկ կարիքները: Պլանը պարունակում է արտակարգ իրավիճակներում ուսումնական հաստատության անձնակազմի, երեխաների, նրանց ընտանիքների հետ հաղորդակցվելու ձևերը և միջոցները:

Պլանում ընդգրկված գործողություններն անհրաժեշտ է պարբերաբար փորձարկել, ճշգրտել և թարմացնել: Պատրաստվածությունը ներառում է իրավիճակային խաղեր, ուսումնական վարժություններ և վարժանքներ ուսումնական հաստատության սովորողների ու անձնակազմի և այլ շահագրգիռ կողմերի մասնակցությամբ: Պլանում անհրաժեշտ է հստակ սահմանել յուրաքանչյուրի դերակատարումը և պարտականությունները: Պլանը պետք է պարունակի հետևյալ հարցերի պատասխանները՝

- ինչ՞ միջոցառումներ են ձեռնարկվելու,
- ե՞րբ,
- ո՞վ,
- ի՞նչ մեթոդներով է իրականացնելու դրանք:

Աղետներին պատրաստվածության արդյունավետ պլանավորումը

պայմանավորված է արդյունավետ կառավարմամբ և պատրաստված անձնակազմով: Ուսումնական հաստատության տնօրենը և անձնակազմը, ԱԻ-ում բնակչության պաշտպանության բնագավառի (այսուհետ՝ լիազորված մարմնի) համապատասխան ստորաբաժանումների, տեղական ինքնակառավարման մարմինների ու ծնողների աջակցությամբ և սովորողների մասնակցությամբ, ապահովում է ուսումնական հաստատության աղետների ռիսկի նվազեցման և ԱԻ գործընթացը: Պլանը ուսումնական հաստատության դիմակայունության և համալիր անվտանգության անբաժանելի մասն է[9;27]:

Այսպիսով՝ արտակարգ իրավիճակների առաջացումն անկանխատեսելի է և հարկ է ցանկացած պահի պատրաստ լինել դիմակայելու աղետներին և ուսումնական գործընթացն այնպես կազմակերպել, որ առաջացած արտակարգ իրավիճակները մեծապես ազդեցություն չունենան ուսումնական գործընթացի արդյունավետ կազմակերպման վրա, որը կարելի է իրականացնել՝

1. աղետների առաջացման պատճառների մասին իրազեկման դասընթացների կազմակերպման միջոցով,
2. աղետների ռիսկերի նվազեցման միջոցների և ձևերի մասին դասընթացների կազմակերպման միջոցով,
3. հաճախակի ուսումնական տագնապների անցկացման միջոցով,
4. տարհանման պլանի առկայության միջոցով:

Այսօր կրթության համակարգի կառավարման կատարելագործման նպատակով սոցիալ-տնտեսական նոր պայմաններում անհրաժեշտություն է դառնում կառավարման գործընթացի նկատմամբ համակարգային մոտեցման կիրառումը: Երկար տարիներ մանկավարժական գիտության և պրակտիկայի մեջ առաջատար էր գործառույթային մոտեցումը, որի դեպքում խորությամբ և մանրամասնորեն ուսումնասիրվում էին կրթության համակարգի կառավարման բոլոր մակարդակների գործառույթները: Կառավարման նկատմամբ համակարգային մոտեցման հարցերը քննարկված են շատ գիտնականների՝ Ռ. Լ. Ակոֆի, Ա. Ի. Բերգի, Կ. Բոդդինգի, Ու. Ռ. Էմբի և այլնի աշխատություններում: Կառավարման համակարգի առաջատար տարրը կառավարման սուբյեկտն է: Կառավարման սյուբեկտ են համարվում տարբեր մակարդակների ղեկավարները կամ կոլեգիալ մարմինները: Համակարգի երկրորդ տարրը կառավարման օբյեկտն է, որը կարող է լինել առանձին կամ կոնկրետ կատարող, բաժին, ուղղություն և այլն:

Մեր կարծիքով համակարգային մոտեցումը ենթադրում է օբյեկտի

ուսումնասիրումն իր բոլոր արտաքին և ներքին կապերի մեջ, որը թույլ է տալիս առավել խորությամբ բացահայտելու ուսումնասիրվող երևույթների էությունը:

Մեր օրերում 2020 թվականի մարտից սկսած համավարակն ու սեպտեմբերի 27-ին սկսված Արցախյան պատերազմն ստիպեցին փոխել կրթության կազմակերպման ընթացակարգը: Այդ ժամանակահատվածում կրթության գործընթացն իրականացվեց հեռավար եղանակով, շատ դեպքերում, երբ աշակերտը չուներ համապատասխան տեխնիկա կամ համացանց, ուսուցիչն այդ աշակերտի հետ անցկացնում էր անհատական պարապմունք, երբեմն ծնողը մոտենում էր ուսուցչին իր երեխայի համար առաջադրանքներ ստանալու կամ կատարվածը ստուգելու համար: Այն տարածքներում, որոնք գտնվում էին պատերազմական գործողությունների թեժ կիզակետում, կրթական գործընթացը դադարեց, սակայն այն ապաստարաններում որտեղ ուսուցիչներ կային, կազմակերպում էին ուսումնական պարապմունքներ:

Հեռավար կրթությունը կրթական ծրագրի իրականացման ձև է, որի շրջանակներում անմիջական և ոչ անմիջական ուսուցման գործընթացը սովորողի և ուսուցչի միջև իրականացվում է հիմնականում տեղեկատվական տեխնոլոգիաների և հեռահաղորդակցության միջոցներով և հիմնական հանրակրթական ծրագրերի կազմակերպման ընթացքում կարող է կիրառվել կրթության պետական կառավարման լիազորված մարմնի սահմանած կարգով և դեպքերում՝ որոշակի ժամկետով:

Մեր կարծիքով ֆորս-մաժորային իրավիճակում կրթության կառավարման գործընթացի թերություններն են՝

- ուսուցչի և աշակերտի համար անհրաժեշտ տեխնիկայի բացակայությունը,
- համացանցի բացակայություն,
- աշակերտների մասնակցության ցածր մակարդակ,
- ԿԱՊԿՈՒ երեխաների ընդգրկվածության ցածր մակարդակ,
- տեխնիկական խնդիրների առկայություն,
- ուսուցչի օնլայն գործիքների տիրապետման ցածր մակարդակ,

1.1. Ֆորս-մաժորային իրավիճակում կրթության կառավարման գործընթացի առավելություններն են՝

- չի ոտնահարվում երեխայի կրթություն ստանալու իրավունքը,
- ուսումնական գործընթացը շարունակվում է,
- իրականացվում է կրթություն անկախ հեռավորությունից,
- դասապրոցեսում կիրառվում է ՏՀՏ գործիքներ,

- ելք դեպի որակյալ կրթություն։

2. Ֆորս-մաժորային իրավիճակում կրթության կազմակերպման խոչընդոտներն են՝

- աղետների առաջացման պատճառների մասին անտեղյակությունը,
- աղետների ռիսկերի նվազեցման միջոցների և ձևերի մասին չիմացությունը,
- ուսումնական տագնապների միջոցով վարքի մշակման բացակայությունը,
- տարհանման պլանի մասին իրազեկվածության պակասը,
- ուսուցիչների ՏՀՏ գործիքներին չտիրապետելը,
- չվերապատրաստված ուսուցիչները,
- ուսուցիչների և աշակերտների անհրաժեշտ տեխնիկայի բացակայությունը,
- համացանցի բացակայությունը,
- հոսանքի ընդհատումները,
- գիտելիքների ստուգման ժամանակ սովորողների մեծ մասի ինքնուրույնության բացակայություն,
- անմիջական շփման բացակայությունը,
- առողջական խնդիրների առաջացումը (Օր.՝ տեսողական խնդիրների առաջացում)։

3. Ֆորս-մաժորային իրավիճակում կրթության կազմակերպման խնդիրների հաղթահարման համար առաջարկում ենք հետևյալ եղանակները՝

- ուսուցիչներին և աշակերտներին ապահովել անհրաժեշտ տեխնիկայով,
- ապահովել անխափան համացանց,
- իրականացնել ուսուցիչների վերապատրաստումներ (մինչ հեռավար կրթության կազմակերպումը),
- կիրառել ուսուցման հիբրիդային եղանակ,
- տարածքի անվտանգության դեպքում դասապրոցեսը կազմակերպել բացօթյա տարածքներում, համավարակի պայմաններում պահպանելով սոցիալական հեռավորություն,
- պատերազմական պայմաններում ուսումնական գործընթացը հնարավորության դեպքում կազամակերպել ապաստարաններում։

Այսպիսով՝ Հայաստանում և աշխարհում արտակարգ իրավիճակներով պայմանավորված դպրոցների փակումը և հեռավար կրթության

անցումը նպաստեց դպրոցից դուրս մնացած աշակերտների թվի աճին՝ առաջ բերելով մի շարք անհավասարություն նրանց շրջանում: Անկախ առկա իրավիճակից պետությունները պետք է պատրաստ լինեն ցանկացած տեսակի արտակարգ իրավիճակի՝ ունենալով համալիր, ճկուն կրթական ռազմավարություն, որը հիմնված լինի կրթության շահառուների կարիքների վրա՝ երաշխավորելով բոլորի համար որակյալ, չընդհատվող և շարունակական կրթություն:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Ասատյան Լ. Թ., Կարապետյան Ա. Ս., Ասատրյան Մ. Ա., Ցոլակյան Թ. Ֆ., Կրթության համակարգի կառավարման հիմունքները, Երևան 2003 թ., 360 էջ:
2. Ավագյան Ն., Արտակարգ իրավիճակները, դասակարգումը, բնութագրերը, կանխարգելման և բնակչության պաշտպանության ուղիները, մեթոդական ձեռնարկ,ՎՊՄԻ, 2007, 122 էջ:
3. Բեզիրջյան Խ., Խաչատրյան Վ., Հովհաննիսյան Գ., Բաբայան Ս., Հեռավար ուսուցման կազմակերպումը և իրականացումը կանոնակարգող փաստաթղթերի ժողովածու, Երևան, 2017,152 էջ:
4. ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի հրամանը հանրակրթական ուսումնական հաստատություններում հեռավար (դիստացիոն) կրթության կազմակերպման կարգ:
5. Հարությունյան Ս. Հ., Արտակարգ իրավիճակների և քաղաքացիական պաշտպանության հիմնահարցեր, ուսումնական ձեռնարկ, Երևան, Տնտեսագետ, 2009, 203 էջ:
6. Հանրակրթության մասին ՀՀ օրենք, ընդունված է 2009 թվականի հուլիսի 10-ին:
7. Մանուկյան Ս. Ա., Ճաղարյան Գ. Հ., Արտակարգ իրավիճակների և քաղաքացիակա պաշտպանության հարցերը, ուսումնական ձեռնարկ, Երևան, ԵՊՀ հրատարակչություն, 2017, 122 էջ:
8. Ուսումնական հաստատության աղետների ռիսկի նվազեցման և արտակարգ իրավիճակներում գործելու պլանի մշակման մեթոդիկա, Երևան, 2016, 84 էջ:
9. Save the children, Education Care & Protection of Children in Emergencies A Field Guide Carl Triplehorn , 2001. 81 page:

Проблемы управления образованием в условиях форс-мажорных ситуаций

Абазян Лианна
ВГУ, Управление образованием,
Магистратура, 2-й курс

Резюме

Ключевые слова: *чрезвычайная ситуация, план бедствия, дистанционное обучение, пандемия*

В статье говорится об организации, реализации, управлении образования в форс-мажорных ситуациях. Возникновение чрезвычайных ситуаций непредсказуемо, необходимо в любой момент быть готовыми противостоять бедствиям и организовать учебный процесс таким образом, чтобы возникшие чрезвычайные ситуации не оказали большого влияния на эффективную организацию учебного процесса. С целью повышения уровня безопасности учебного заведения разрабатывается план снижения риска бедствий и действий в чрезвычайных ситуациях, вытекающих из особенностей учебного заведения и прилегающей территории.

Problems of Managing Education in Force Majeure Situations

Abazyan Lianna
VSU, Education Management,,
MA, 2nd course

Summary

Key words: *emergency situation, disaster plan, distance learning, pandemic*

The article talks about the organization, implementation, management of education in force majeure situations. The occurrence of emergencies is not predictable, it is necessary at any time to be ready to withstand disasters and organize the educational process in this way, that the emergencies that have arisen have not had a great impact on the effective organization of the educational process. In order to increase the level of safety of the educational institution, a plan is being developed to reduce the risk of disasters and actions in emergency situations arising from the characteristics of the educational institution and the surrounding area.

Ներառական կրթության կազմակերպման խնդիրները ՀՀ-ում

Աբուլյան Ասյա
ՎՊՀ, Կրթության կառավարում, մագիստրատուրա 2-րդ կուրս
*Գիտական ղեկավար՝ մ.գ.թ., դոցենտ **Ա. Հարությունյան***

Հանգուցային բառեր. *ներառական կրթություն, անհատական ուսուցում, ուսուցման պլան, դաստիարակություն, ինտեգրում, սոցիալականացում*

Ժամանակակից զարգացած և զարգացող երկրներում հանրակրթության համակարգի բարեփոխման հիմնական ուղղությունը ներառական կրթության համակարգի ներդրումն է, որը պետք է դառնա մարդու կրթության իրավունքի իրացման հիմնական միջոցը: Ֆիզիկական հաշմանդամություն ունեցող անձինք հաճախ սահմանափակված են ինչպես ֆիզիկական, այնպես էլ սոցիալական արգելքներով, որոնք մեկուսացնում են նրանց հասարակությունից և հնարավորություն չեն տալիս ակտիվ մասնակցություն ունենալ հասարակական կյանքում: ՀՀ-ում ներառական կրթության համակարգի ներդրումն ընթացել է մի քանի փուլերով: ՆԿ օրենսդրական հիմքերը ձևավորվել են 2005 թ.-ին: Սակայն ՆԿ փաստացի իրականացումը սկսել է դեռևս 2001 թ.-ին, երբ կրթության պետական լիազոր մարմնի, Երևանի թիվ 27 միջնակարգ դպրոցի և «Հույսի կամուրջ» հասարակական կազմակերպության միջև կնքվեց եռակողմ համաձայնագիր, որի համաձայն դպրոցը ճանաչվեց հանրապետությունում ներառական կրթություն իրականացնող առաջին հանրակրթական հաստատությունը: Այս քայլն ամբողջովին բխում էր դպրոցի և հասարակական կազմակերպության տնօրինությունների անձնական նախաձեռնությունից [https://www.moj.am, ՀՀ-ում ներառական կրթության իրականացման գնահատում]: Կարևոր է ներառական կրթության հասկացության ըմբռնումը: Ներառական կրթությունը հատուկ պայմանների կարիք ունեցող երեխաներին դպրոցում, բոլոր երեխաների հետ կրթվելու հնարավորություն է ընձեռում: Այն արձագանքում է բոլոր սովորողների բազմազան պահանջմունքներն, ապահովում է նրանց մասնակցությունը ուսումնական, մշակութային և համայնքային կյանքին [2, 30-55]: Ներառական կրթության նպատակը ոչ միայն դպրոցներում սովորողների ուսուցման կազմակերպումն է, այլև ընտանիքում և համայնքում նրանց աջակցելն է: Ավելին, կրթությունը պետք է դիտարկել ուսումնական հաստատություններում, ընտանիքում և համայնքում իրականացվող գործընթաց: Ներառական կրթությունը ենթադրում է փոփոխություններ և բարե-

փոխումներ կրթության բովանդակության մեջ, մոտեցումներում, կառույցներում և մեթոդներում: Ներառական կրթության գաղափարախոսությունը տարածվում է տարիքային խմբի բոլոր երեխաների վրա: Այն հնարավորություն է տալիս ֆիզիկական կամ մտավոր զարգացման խնդիրներ ունեցող անձանց լիարժեք ինտեգրվել հասարակության մեջ՝ բավարարելով վերջիններիս կարիքները [1, 21-30]: Ներառական կրթության կառավարման առանցքային սկզբունքը կայանում է նրանում, որ հատուկ պայմանների կարիք ունեցող անձանց տարատեսակ պահանջմունքների բավարարման համար ստեղծվեն համապատասխան կրթական միջավայր, որը նվազագույն սահմանափակող է և առավելագույնս՝ներառող: Հանրակրթության ոլորտում ներառման գործընթացի զարգացման համար անհրաժեշտ է մշակել ընդհանուր մանկավարժական տեխնոլոգիաներ, երեխաների համագործակցության, մանկավարժական գործընթացին ծնողների ներգրավման տեխնոլոգիաներ: Անառարկելի է, որ ներառական կրթությունը հատուկ կարիքներով անձանց համար ամենանախընտրելի մոտեցումն է, սակայն Հայաստանում դեռևս զարագացման ճանապարհին է [4, 35-50]: Այսօր ներառական կրթություն իրականացնող մի շարք դպրոցներում դեռևս առկա են բազմաթիվ խնդիրներ, մասնավորապես լուծված չէ մանկավարժական կադրային, բովանդակային, մեթոդական, ֆիզիկական,տեխնիկական և այլ հիմնախնդիրներ: Միաժամանակ, շատ դպրոցների կարևորագույն խնդիրը դեռևս հանդիսանում է աշակերտներին ակադեմիական գիտելիքներով զինելը, ոչ թե նրանց պոտենցիալ հնարավորությունների բացահայտումն ու սոցիալականացումը:

«Հատուկ կարիքներ»-ով են համարվում այն երեխաները, որոնց զարգացումը շեղվում է, այսպես կոչված «միջին նորմայից», որն էլ ժամանակի ընթացքում իր ազեցությունն է թողնում նրանց ֆիզիկական և հոգեկան առանձնահատկությունների ու որակների ձևավորման վրա: Զարգացման շեղումները կարող են սկսվել երեխայի ձևավորման և զարգացման ցանկացած փուլում՝ սկսած ամենավաղ՝ սաղմնային շրջանից: «Հատուկ կարիքներ»-ով են համարվում նաև հոգեֆիզիոլոգիական զարգացման առանձնահատկություններ ունեցող այն անձինք, ովքեր շփվելու, տեղաշարժվելու, սովորելու, սոցիալական միջավայրում հարմարվելու և ինքնուրույն ապրելու համար հատուկ պայմանների կարիք են զգում: Այդպիսիք են հատկապես տեսողության, լսողության, խոսքի, հենաշարժական համակարգի խախտումներով,մտավոր խնդիրներով, հոգեկան զարգացման հապաղումով, հուզակամային ոլորտի խանգա-

րումներով երեխաներն ու մարդիկ [2, 24]: Ներառական կրթությունը կրթության կազմակերպման ձև է, որը տարբերվում է հատուկ կրթական հաստատություններում հատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների համար առանձնացված ձևով իրականացվող կրթությունից: Այն հենվում է բոլոր երեխաների (այդ թվում նաև կրթության հատուկ պայմանների կարիք և սոցիալապես սահմանափակ հնարավորություններ ունեցող) կրթություն ստանալու իրավունքի և այն համոզմունքի վրա, որ բոլոր երեխաներին կրթելը հանրակրթական համակարգի պարտականությունն է: Ներառումը ենթադրում է այնպիսի գործընթացի ծավալում, որի նպատակը բոլոր սովորողների, այդ թվում հաշմանդամ և կրթության հատուկ պայմանների կարիք ունեցող այլ անձանց կրթական կարիքների բավարարումն է [3, 15-40]: Կատարված հետազոտության արդյունքում հստակեցվեց առկա խնդիրները կապված կազմակերպման գործընթացի հետ: Այն հարցին, թե արդյո՞ք կարևորում են դպրոցի և ընտանիքի համագործակցությունը, հարցվողների 60%-ը կարծում են, որ ծնողները ծանր են տանում երեխայի մոտ առկա դժվարությունները, իսկ դպրոցները կոչված են մեղմացնելու սթրեսները, 6,74%-ը գտնում են, որ երեխաները հաջողություն են ունենում, երբ դպրոցի և ընտանիքի պահանջները համընկնում են, իսկ 33,3%-ը ավելի կարևորում են մանկավարժների աշխատանքը, իսկ ծնողները քիչ պետք է խառնվեն: Այն հարցին, թե ինչ թերություններ և բացթողումներ են նկատվել ներառական կրթության համակարգում, ծնողների 73,3%-ը համարում են, որ հանրակրթական դպրոցի երեխաները և ծնողները դժվարությամբ են ընդունում հատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների հետ համատեղ ուսումնական գործընթացին մասնակցելու փաստը, 16,7%-ը համարում է, որ երեխան ներառվելով դեռևս լիարժեք չի ադապտացվում նոր միջավայրին, իսկ 10%-ը համարում է, որ ուսումնական գործընթացում քիչ են թերությունները, բայց տեխնիկական առումով՝ շատ (թեքահարթակների բացակայություն, հարմարեցված դասասենյակներ, սան հանգույցներ, տրանսպորտային միջոցների բացակայություն և այլն): Ուսուցիչների 53,3%-ը գտնում են, որ սխալ է հատուկ դպրոցների փակելը, որովհետև այնտեղ կազմակերպվում էր և կրթությունը, և խնամքը, և սնունդն էր ապահովվում, 30%-ը կարծում են, որ ներառական դպրոցում երեխան իրեն ավելի ինքնավստահ է զգում և լիարժեք, իսկ 16,7%-ը գտնում են, որ երեխաները վերադառնում են ընտանիք, ինչը նպաստում է նրանց լիարժեք դաստիարակությանը: Ուսուցիչների 40%-ը գտնում են, որ ներառական կրթության համակարգում առկա խնդիրները և բացթողումները դեռևս դպրոցների

կարևորագույն խնդիր հանիսացող՝ աշակերտներին ակադեմիական գիտելիքներով զինելն է, այլ ոչ թե նրանց սոցիալականացումը, 30%-ը գտնում են, որ կան դպրոցներ, շենքեր, որ լիարժեք ձևով հարմարեցված չեն, առկա են տեխնիկական թերություններ, մյուս 30%-ը համարում են, որ ներառական կրթության գաղափարախոսությունը ճիշտ չի ընկալվում: Իսկ թե ներառական կրթության ուղղությամբ բարեփոխումները ինչին կնպաստեն, ուսուցիչների 40%-ը գտնում են,որ կնպաստեն հատուկ պայմանների կարիք ունեցող բոլոր երեխաներին կրթության մեջ ներգրավմանը, պաշտպանված միջավայրի ստեղծմանը, 33%-ը գտնում են, որ այն կնպաստի հատուկ կրթության վերակողմնորոշմանը դեպի ներառական կրթություն, իսկ 26,7%-ը ներառական կրթություն իրականացնող դպրոցների զարգացմանը:

Ներառական կրթություն իրականացնող հաստատություններում հանուն առավելագույն արդյունավետության անհրաժեշտ է հաշվի առնել մի շարք առանձնահատկություններ:

1. Մանկավարժները պետք է լավ պատկերացնեն հաշմանդամության յուրաքանչյուր տեսակի առանձնահատկությունները և դրանցից բխող կարիքները, որպեսզի հաշվի առնեն վերջիններս ուսումնական ծրագրի մատուցման ժամանակ:

2. Անհրաժեշտ է կենտրոնանալ ոչ թե սահմանափակումների, հաշմանդամության, այլ այլընտրանքային կարողությունների վրա, որոնք հնարավոր է զարգացնել տարբեր տեսակի հաշմանդամություն ունեցող երեխաների մոտ [4, 21-28]: Պետությունները պետք է ընդունեն ինտեգրման պայմաններում հատուկ կարիքներով երեխաների, երիտասարդ մարդկանց և մեծահասակների՝ տարրական, միջնակարգ և բարձրագույն կրթություն ստանալու հնարավորությունների

հավասարության սկզբունքը:

Կրթության հատուկ պայմանների կարիք ունեցող անձանց հետ սոցիալական հարմարմանն ուղղված աշխատանքների իրականացման արդյունավետությունը պամանավորված է ճիշտ կազմակերպված, մանկավարժորեն նպատակաուղղված ներգործությամբ երեխաների հոգեկան յուրահատկությունների հաշվառմամբ, նրանց զարգացման համար սոցիալական պայմանների ստեղծմամբ: Գոյություն ունի իրավական սոցիալացման աշխատանքների համակարգ, որի նպատակն է՝ անհատին հաղորդակից դարձնել սոցիալական կյանքին, օժանդակել նրա կողմից տվյալ հասարակության համար բնորոշ գիտելիքների, արժեհամակարգի, վարքի նորմերի օրինակների յուրացումը, օգնել դառնալու

տվյալ հասարակությունում գործունակ անձ: Այս գիտելիքները նպաստում են սովորողների սոցիալական հարմարման և ինքնուրույն կյանքին պատրաստ լինելու գործընթացներին [5, 20-21]:

Ներառական կրթության համակարգում առկա են մի շարք խնդիրներ

- կրթության հատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների նկատմամբ արմատավորված կանխակալ վերաբերմունք է առկա և դեռևս համոզված չեն, որ կրթության հատուկ պայմանների կարիք ունեցող երեխան լիարժեք ձևով իրեն մեկուսացված չի զգա և ակտիվորեն կմասնակցի հասարակական կյանքին
- ուսուցիչները ավելի տեղեկացված են ներառական կրթության սկզբունքային մոտեցումներին, քան ծնողները
- ծնողները (հատկապես կրթության հատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների) ավելի սուբյեկտիվ են վերաբերվում իրենց երեխաների սոցիալական և կրթական հարցերին,
- ուսուցիչները դեռևս ոչ լիարժեք են համարում կրթական միջավայրը, որը նվազագույն սահմանափակող է և առավելագույնս՝ ներառող, որի հետևանքով կարիք են զգում վերապատրաստման դասընթացների կազմակերպման և նոր մեթոդների կիրառության,
- կրթության հատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների կրթական կարիքներին համապատասխան պարագաների և անհրաժեշտ պայմանների բացակայություն,թերեւս առկա են միայն թեքահարթակներ, (հարմարեցված կահույք, դասասենյակներ, սանհանգույցներ, մեծ տառաչափերով գրքեր, էխո- համակարգեր և այլն բացակայում են):
- Հատուկ կարիքներ ունեցող երեխաների անհատական ուսումնական պլաններին (ԱՈՒՊ), ապա ուսումնասիրության ընթացքում բացահայտվել է, որ դպրոցներում դա համարում են ձևական գործիք, որն ընկալվում է որպես գրավոր փաստաթուղթ, թղթավարության մաս: Ընդհանուր առմամբ, շատ խնդրահարույց է երեխայի կրթության առանձնահատուկ պայմանների կարիքի գնահատման գործընթացը:

Այս խնդիրների լուծման համար առաջարկում ենք՝

- ուսուցիչների վերապատրաստման գործում ուսումնասիրել և կիրառել միջազգային լավագույն փորձը, կազմել վերապատրաստողների թիմ, ստեղծել վերապատրաստումների մի քանի թեմատիկ մոդուլներ, նորընտիր տնօրենների, փոխտնօրենների համար

նախատեսել պարտադիր դասընթացներ ներառական կրթության վերաբերյալ։

- կատարել ներառական կրթության իրականացման ֆինանսական հաշվարկ՝ հասկանալու համար, թե որքան է անհրաժեշտ պայմաններ ապահովելու և արդյունավետ ծառայություններ մատուցելու համար։
- մանկավարժական համալսարաններում ներառական կրթությունը դասավանդել ոչ միայն որպես առանձին առարկա կամ թեմա, այլև դիտարկել որպես դասավանդվող բոլոր առարկաների մաս՝ շեշտը դնելով ներառականություն ապահովող մեթոդների դասավանդման վրա։

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Բաց Ֆայլի Ներառական Կրթության մասին, Օժանդակ Նյութերի Մենեջերների և Ադմինիստրատորների համար, Գործընկերության սահմանում. դպրոցը և ընտանիքը, 179 էջ։
2. Թեթև մտավոր հետամնացություն ունեցող երեխաների հատուկ կրթության պետական չափորոշիչ, 269 էջ։
3. Հատուկ կրթության մեթոդական տեղեկատու 10 / Խմբ. կազմ՝ Վ. Կատինյան, Ռ. Ազարյան, Կ. Մելքոնյան, Երևան, 2013, 112 էջ։
4. Մտավոր հետամնացություն ունեցող սովորողների սոցիալական հարմարումը և կրթական միջավայրում ներառումը / Ա. Լ. Վարանյան, Ա. Ա. Հովսեփյան, Ա. Խ. Մուրայան, Երևան, 2011, 104 էջ։
5. Ներառական կրթության իրականացման ուղեցույց (Հանրակրթական հաստատությունների մանկավարժական աշխատողների համար), Երևան, 2008, 154 էջ։
6. https://www.moj.am, ՀՀ-ում ներառական կրթության իրականացման գնահատում 56 Էջ։

Проблемы организации инклюзивного образования в Армении

Абовян Ася
ВГУ, Управление образованием,
Магистратура, 2-й курс

Резюме

Ключевые слова: *инклюзивное образование, индивидуальное обучение, учебная программа, воспитание, интеграция, социализация*

В системе инклюзивного образования сегодня есть проблемы с интеграцией людей с особыми потребностями. Есть ряд проблем с инклюзивным образованием. В этой сфере предстоит многое сделать, в настоящее время учителя недостаточно подготовлены к инклюзивному образованию, а также учебные заведенияя полностью не приспособлены к потребностям этих детей. Решение этих задач позволит сделать образовательный процесс и развивающе-реабилитационную работу целенаправленной.

Problems of Organizing Inclusive Education in Armenia

Abovyan Asya
VSU, Education Management,
MA, 2nd course

Summary

Key words: *inclusive education, individual training, curriculum, upbringing, integration, socialization*

In the system of inclusive education today there are problems with the integration of people with special needs. There are a number of problems with inclusive education. Much remains to be done in this area, currently teachers are not sufficiently prepared for inclusive education, and educational institutions are not fully adapted to the needs of these children. The solution of these problems will make the educational process and developmental and rehabilitation work purposeful.

Կրթական ծրագրերը որպես որակի ապահովման հիմք

Առաքելյան Սուզաննա
ՎՊՀ, Կրթության կառավարում, մագիստրատուրա 2-րդ կուրս,
Գիտական ղեկավար՝ մ. գ. թ. ***Լ. Դանիելյան***

Հանգուցային բառեր*. որակի ապահովում,կրթական չափորոշիչ, կրթական ծրագիր, ակադեմիական պլանավորում, մոնիթորինգ, պարբերական վերանայում*

Բարձրագույն մասնագիտական կրթությունը յուրաքանչյուր երկրի համար ունի ռազմավարական և պետական նշանակություն: Այն հասարակության և երկրի տնտեսության զարգացման կարևոր օղակն է, որը ձևավորում է երկրի ապագան, և որով էլ պայմանավորված է երկրի վարկանիշը միջազգային ասպարեզում: Այստեղից էլ կանխորոշվում է միասնական և հզոր պետական կրթական քաղաքականության անհրաժեշտությունն ու իրականացումը բարձրագույն մասնագիտական կրթության ոլորտում՝ որպես երիտասարդության կրթության և դաստիարակության, ինչպես նաև երկրի տնտեսական զարգացումն ապահովող կարևոր գրավական: Ըստ Ռոն Լուիսի՝ որակյալ բարձրագույն կրթության ապահովումը ամենակարևոր բաներից մեկն է, որ մենք կարող ենք անել ապագա սերունդների համար: Կարծես թե Ռոն Լուիսին շարունակելով Չարլզ Ռենգելն նշում է, որ բարձրագույն կրթության խրախուսումը մեր երիտասարդների համար կարևոր նշանակություն ունի, այն մեր հավաքական ապագայի հաջողության գրավականն է:

Նախ կարևոր է հասկանալ, թե իրենից ինչ է ենթադրում կրթության որակը, որին էլ պիտի հետամուտ լինեն կրթական մասագիտական ծրագրերը:

Կրթության որակը բավականին բարդ ու տարողունակ մի հասկացություն է, որի կարևորությունը շեշտվում է նաև կրթությանն առնչվող միջազգային տարբեր փաստաթղթերում, ինչպես նաև տեղական օրենսդրություններում: Կրթության որակ սահմանելով օրենսդիրները հիմնականում նպատակ են ունենում սահմանել կրթության չափելի արդյունքներ, որոնք, կախված երկրից ու համատեքստից, որոշակիորեն տարբերվում են՝ չնայած նրանք հիմնականում փորձում են դրանք համապատասխանեցնել ՄԱԿ-ի տարբեր կառույցներում կրթության որակի վերաբերյալ ընդունված փաստաթղթերի տրամաբանությանը: Կրթության

որակ հասկացությունը սերտորեն առնչվում է կրթության մատչելիությանը և, չնայած սրանք երկու տարբեր հասկացություններ են, այնուամենայնիվ փոխլրացնում են միմյանց: Որակյալ կրթությունը միտված է ապագային և ենթադրում է ոչ միայն նախկինում առկա գիտելիքների ուսուցանում և յուրացում, այլև նոր գիտելիքների ստեղծում անհատապես կամ կոլեկտիվ եղանակով: Գիտելիքաստեղծ գործունեությունը որակյալ կրթության հիմքերից է,որին պետք է հասնել ճիշտ և նպատակահարմար կրթական ծրագրերի միջոցով:

Հայաստանի Հանրապետությունում ելակետային չափանիշը (չափանիշները հատուկ առանձնացված ձևակերպումներ են, որոնք վերստուգելի տերմիններով սահմանում են հաստատության գործունեության կամ իրականացվող կրթական ծրագրերի բնութագրերը), ըստ որի գործում են ՄԿԾ-ները հետևյալն է .

«ՄԿԾ-ները համապատասխանում են հաստատության առաքելությանը, կազմում են հաստատության պլանավորման բաղկացուցիչ մաս և նպաստում են շարժունությանը և միջազգայնացմանը» [4, 65]:

Իսկ չափորոշիչները (չափորոշիչները ձևակերպումներ են, որոնք սահմանում են յուրաքանչյուր չափանիշին համապատասխանելու չափը անաչառ գնահատելու համար անհրաժեշտ պայմանները) հետևյալներն են.

1. Կրթական ծրագրերը մանրամասն ձևակերպված են՝ ըստ շնորհվող որակավորումների համապատասխան ակնկալվող ուսումնառության արդյունքների:
2. Մասնագիտության կրթական ծրագրերի ուսումնառության ակնկալվող արդյունքները բավարարում են ուսանողների և այլ շահակիցների կարիքները:
3. Մասնագիտության կրթական ծրագրերը մշտադիտակվում են, իսկ դրանց արդյունավետությունը պարբերաբար գնահատվում է:
4. Նպաստելով ակադեմիական ազնվությանը՝ մասնագիտությունների կրթական ծրագրերն ապահովում են ուսանողների՝ ուսումնառության ակնկալվող արդյունքներին համապատասխան գնահատում:
5. Մասնագիտության կրթական ծրագրերը բովանդկային առումով հուսալի են, հստակ մշակված և համահունչ են նմանատիպ այլ կրթական ծրարգրերի հետ և նպաստում են ուսանողների և դասախոսական կազմի շարժունությանը:

Սրա ENQA ելակետային ստանդարտն է .

«Բուհերը պետք է ունենան պաշտոնական մեխանիզմներ՝ իրենց կրթական ծրագրերի և շնորհվող որակավորումների հաստատման, մոնիթորինգի(մշտադիտարկում) և պարբերական վերանայման համար» [2, 39]:

Բուհը պետք է հետամուտ լինի ուսանողների և այլ շահեկիցների վստահությունը բարձրագույն կրթության նկատմամբ ձեռք բերելուն ու պահպանելուն՝ արդյունավետ գործողություններով, որոնք պետք է երաշխավորեն, որ կրթական ծրագրերը պատշաճ ձևով են մշակված, ենթարկվում են կանոնավոր մոնիթորինգի և պարբերաբար վերանայվում են: Կրթական ծրագրերի շարունակական բարելավումը կարևոր է բուհերում: Դրա նպատակներից մեկը պիտի լինի կրթության պատվիրատուին՝ ուսանողին, որակյալ կրթության տրամադրելը, որպեսզի նա մրցունակ լինի աշխատաշուկայում, իսկ աշխատաշուկայի պահանջներն անընդհատ փոխվում ու նորացվում են: Հիմա ուսանողները բուհում պիտի ստանան այնպիսի արդի և արդյունավետության առնչվող հմտություններ, ինչպիսիք են վերլուծություններ և որոշումներ ընդունում, քննադատական մտածողություն ու փոխգործակցությունը մյուսների հետ: Ընթացակարգերը պետք է հնարավորություն տան՝ հավաստելու հանրությանը կրթական ծրագրերի և շնորհվող որակավորումների՝ տնտեսական զարգացումներին շարունակական համապատասխանությունը և արդիականությունը:

Բուհի մասնագիտական կրթական ծրագրերը պետք է համապատասխանեն բուհի առաքելությանը, պետական կրթական չափորոշիչներին և մանրամասն նկարագրված պիտի լինեն ըստ շնորհվող որակավորումների ակնկալվող ուսումնառության արդյունքների:

Բուհը պետք է ունենա մասնագիտությունների կրթական ծրագրերի ուսումնառության ակնկալվող արդյունքներին համապատասխան դասավանդման,ինչպես նաև ուսումնառության մեթոդների ընտրության քաղաքականություն, որը նպաստում է ուսանողակենտրոն ուսուցմանը:

Դասավանդման և ուսումնառության մեթոդները ձևակերպվում են ՄԿԾ-ներում՝ ըստ առանձին վերջնարդյունքների: Սակայն մեր կարծիքով մեթոդները մեծամասամբ ընդհանուր են բոլոր վերջնարդյունքների համար և չկա մեթոդների տարբերակում ըստ գիտելիքի և հմտության: Ընդ որում դասավանդման և ուսումնառության մեթոդները ավելի շատ միտված են գիտելիքի ձևավորմանը, ինչի մասին վկայում են թե՛ գործատուները, թե՛ շրջանավարտները:

Բուհերը պիտի առանձնակի մեծ ուշադրություն դարձնեն կրթական

ծրագրերի ակադեմիական պլանավորմանը, որի միջոցով բուհը կարող է փոխել իր կրթական առաջարկի կառուցվածքը, ծրագրերի կամ մասնագիտությունների լրակազմը՝ պոտենցիալ ուսանողների կամ աշխատաշուկայի պահանջներին ու միտումներին համապատասխան: Ակադեմիական պլանավորման հիմնական բաղկացուցիչներն են նոր ծրագրերի կամ մասնագիտությունների առաջարկների թղթապանակի ձևավորումը, որակավորման պրոֆիլների, նպատակների ու խնդիրների ձևակերպումը, ուսման վարձի սահմանումը: Ինչպես հասկանում ենք բուհի երկարակեցության և մրցունակության գրավականը հենց առաջին հերթին ակադեմիական պլանվորումն է:

Նոր ծրագրերի կամ մասնագիտությունների առաջարկության մշակման հիմք կարող են հանդիսանալ՝

- ստորաբաժանման (մասնաճյուղի, ֆակուլտետի) զարգացման ռազմավարական նպատակներն ու գերակայությունները (ըստ ստորաբաժանման ստրատեգիական պլանի),
- աշխատաշուկայի և գործատուների պահանջարկի ու կարիքների վերլուծությունը,
- առաջարկության տնտեսական նպատակահարմարության (շահութաբերության) գնահատականը,
- բուհի մրցակցային դիրքը (առավելություններ ու թերությունները) համանման ծրագրեր իրականացնող այլ բուհերի նկատմամբ, արտաքին և միջազգային էտալոնային կողմնորոշիչ պահանջները (benchmarks) տվյալ մասնագիտության համար,
- բուհում դասախոսական, ֆիզիկական, ինֆորմացիոն և այլ անհրաժեշտ ռեսուրսների առկայությունը,
- սուցման տեխնիկական միջոցների առկայությունը:

Ակադեմիական պլանավորմից հետո մրցունակության երաշխիքը կրթական ծրագրերի իրականացման որակի մոնիթորինգն ու պարբերական վերանայումն է: Սրանց հիմնական խնդիրներից են՝

- կատարել ծրագրի քննադատական վերլուծություն՝ դիտարկելով դրա ուժեղ ու թույլ կողմերը իրականացման ընթացքում, և կատարել վերլուծությունից բխող ծրագրային փոփոխություններ,
- ուսումնասիրել ծրագրում ներգրավված ուսանողների և շրջանավարտների կարծիքները ծրագրի որակի վերաբերյալ,
- վերագնահատել ծրագրի արդիականությունը և պահանջվածությունը աշխատաշուկայում,

- հիմնավորել ծրագրի շարունակման, փակման կամ փոփոխման նպատակահարմարությունը: [2, 42]

Մոնիթորինգի և պարբերական վերանայման հիմանական միջոցներ պիտի լինեն՝

- ուսանողների, շրջանավարտների՝ ծրագրից բավարարվածության մակարդակի ուսումնասիրությունը: Պետք է մարնրակրկիտ դիտարկվի ուսանողի կարծիքը կրթական ծրագրի բովանդակության, մատուցման ձևերի, իր տեսանկյունից հաջողված ու անհաջող կամ ավելորդ ծրագրային տարրերի մասին, հետևաբար նաև՝ ակնկալվող ծրագրային փոփոխությունների մասին:
- գործատուների՝ ծրագրից բավարարվածության ուսումնասիրություն, որը բացահայտում է ծրագրի համապատասխանությունը տվյալ մասնագիտության աշխատանքային պահանջներին, ծրագրի արդիականությունը:

Գրականություն

1. Բարձրագույն կրթության որակի ապահովման եվրոպական ասոցիացիա, «Որակի ապահովման չափորոշիչներ և ուղենիշներ բարձրագույն կրթության եվրոպական տարածքում», 2005, էջ 4-14:
2. Բաց հասարակության ինստիտուտի օժանդակության հիմնադրամ Հայաստան, «Որակի ապահովման բուհական համակարգեր» ուղեցույց, Երևան, 2009, էջ 29-57:
3. Մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոն հիմնադրամ, «Հայաստանի մասնագիտական կրթության համակարգում որակի ապահովման ուղենիշներ, չափանիշներ և չափորոշիչներ» աշխատանքային նյութեր, Երևան, 2010, էջ 51-75:
4. ՈԱԱԿ «Բարձրագույն կրթության Հայաստանյան առանձնահատկությունները. Ուսանողների կարծիքի հարցում», Երևան 2012, էջ 27-42:
5. Մեխպոսյան Աննա «Բարձրագույն կրթական համակարգի արդիականացման հիմնախնդիրները Հայաստանի Հանրապետությունում», Երևան 2018, էջ 57-91:

Образовательные программы как основа обеспечения качества

Аракелян Сузанна
ВГУ, Управление образованием,
Магистратура, 2-ӥ курс

Резюме

Ключевые слова: *обеспечение качества, образовательный стандарт, учебная программа, академическое планирование, мониторинг, периодический обзор*

В статье рассматриваются образовательные программы как основа обеспечения качества. Постоянное совершенствование образовательных программ необходимо в процессе обеспечения качества, так как одной из его целей должно быть предоставление обучающемуся образования высокого качества, чтобы он был конкурентоспособен на рынке труда, а требования рынка труда постоянно меняется и обновляется.

Educational Programs as a Basis for Quality Assurance

Arakelyan Suzanna
VSU, Education Management,
MA, 2nd course

Summary

Key words: *quality assurance, educational standard, curriculum, academic planning, monitoring, periodic review*

The article discusses educational programs as a basis for quality assurance. Continuous improvement of educational programs is necessary in the Quality Assurance process, as one of its goals should be providing quality education to the student, so that he / she is competitive in the labor market, and the demands of the labor market are constantly changing and updated.

Դաստիարակության գործընթացի կազմակերպումն ավագ դպրոցում

Մկրտիչյան Մանե
ՎՊՀ, Կրթության կառավարում, մագիստրատուրա 2-րդ կուրս
Գիտական ղեկավար՝ մ.գ.թ., դոցենտ ***Ա. Հարությունյան***

Հանգուցային բառեր. *դաստիարակություն, կրթություն, ավագ դպրոց, Բոլոնյան համակարգ, որակի ապահովում, կրթական ծրագրեր*

Հայտնի է, որ դաստիարակությունը երևան է եկել մարդկային հասարակության ծագման պահից և գոյություն կունենա, քանի դեռ գոյություն ունի ինքը՝ հասարակությունը: Դաստիարակության բովանդակությունն ու խնդիրները պայմանավորված են հասարակության պահանջմունքներով և անմիջականորեն առնչվում են պրակտիկային: Դաստիարակության գործընթացն ունի բավականին բարդ կառուցվածք: Այն ենթադրում է դաստիարակության նպատակի առկայություն, առաջադրված նպատակին հասնելու համար համապատասխան խնդիրների առաջադրում և լուծում, դաստիարակության բովանդակություն, նրա որևէ բաղադրամասի ուղղությամբ իրականացվող դաստիարակության մեթոդների, հնարների, միջոցների ճիշտ ընտրություն, ինչպես նաև ակնկալվող արդյունքներ, դաստիարակչական գործընթացի արդյունավետության վրա ազդող գործոններ, պայմաններ և այլն:

Արդի դաստիարակչական գործընթացում մանկավարժն իրականացնում է մի շարք դերեր՝ դասավանդող, աջակցող, ուղղորդող, երեխայի իրավունքների պաշտպան, ավագ ընկեր, օգնող, խորհրդատու և այլն: Բազմագործոն դերերն ուսուցչին օգնում են ծագած խնդիրներում արագ կողմնորոշվել, համագործակցության շնորհիվ աշակերտի սեփական Ես-ը ձևավորելու, որոշակի հասարակության մեջ նրա պատկանելիությունը հստակեցնելու հարցերում: Լեհ հայտնի մանկավարժ Յանուշ Կորչակը գրում է. «Այն դաստիարակը, ով չի կաշկանդում, այլ ազատում է, չի ճնշում, այլ բարձրացնում է, չի խեղաթյուրում, այլ ձևավորում է, չի թելադրում, այլ սովորեցնում է, ոգեշնչման շատ պահեր է ապրում երեխայի հետ միասին»:

Դաստիարակությունն սկսվում է երեխայի կյանքի առաջին օրերից և գոյատևում մինչև մարդու կյանքի վերջը: Այն երկարատև, դժվարություններով ու հակասություններով լի պրոցես է: Դաստիարակությունն ունի մանկավարժահոգեբանական բարդ մեխանիզմ, որը ղեկավարում է

որոշակի մեթոդներով, հնարներով և միջոցներով: Այդ է պատճառը, որ դաստիարակության բարդ ու աշխատատար պրոցեսում անհատի մեջ ի՞նչ սերմանել և ինչպե՞ս հարցերը ստանում են հույժ կարևոր նշանակություն, որոնց լուծումն արդյունավետ կազմակերպելու համար պետք է քաջատեղյակ լինել նրա մեթոդներին [5, 201]: Ավագ դպրոցում դաստիարակության գործընթացի կազմակերպումն ամենակարևոր կրթության օղակներից է: Այն պետք է լինի հիմնավոր և արդիական՝ ներկայիս բաց հասարակության պահանջներին համապատասխան:Թվային դարաշրջանում այսօրվա դեռահասին քիչ կարելի է զարմացնել, առավել ևս թելադրել աշխարհայացի մեր տեսակետը, այդ իսկ պատճառով անհրաժեշտ է միայն մի փոքր հետաքրքրություն թեմայի շուրջ, մի փոքր ուղղություն, նրբանկատ մոտեցում և մեր նպատակը կհաջողի: Շերտավոր ուսուցման հնարավորությամբ մենք կարողանում ենք բացահայտել աշակերտին և նրա հնարավորությունները,որի արդյունքում ճիշտ ենք բաշխում այն ժամանակը, որն ունենք նրան դաստիարակության գործընթացի կազմակերպման համար:Իսկ որքանով է այսօրվա ավագ դպրոցը, որը հագեցած չէ նյութատեխնիկական բավարար պայմաններով, կարողանում ապահովել ավագ դպրոցում սովորողի դաստիարակության գործընթացի լիարժեք իրականացումը: Արդյոք ապահովվում են բարոյահոգեբանական այն մթնոլորտը, որտեղ ուսումնական գործընթացից բացի կարող է ընթանալ աշակերտի որպես անձ ձևավորումը: Եվ հռետորական հարց,– միթե 18 տարեկան պատանին պատրաստ է կրել ավագ դպրոցի սովորողին ներկայացված իրավունքներն ու պարտականությունները:

Հանրակրթության ոլորտի բարեփոխումների ներկա փուլի հիմնական խնդիրը կրթության որակի ապահովումն է: Այս նպատակով վերջին տարիներին սկիզբ է դրվել բազմաթիվ նախաձեռնությունների, որոնք ներառում են կրթության որակը պայմանավորող գրեթե բոլոր գործոնները՝ մարդկային ռեսուրսները, ծրագրամեթոդական ապահովումը, նորմատիվ-իրավական դաշտը, ինստիտուցիոնալ համակարգը: Բարեփոխումների առանցքային նախաձեռնություններից մեկն անցումն է 12-ամյա հանրակրթական համակարգին, որի իրականացումը սկսվել է 2006 թվականին: Այս գործընթացի շրջանակներում 2009-2010 ուսումնական տարվանից նախատեսվում էր եռամյա ավագ դպրոցի ներդրումը: Սույն ծրագիրն ուղղված է հանրակրթության երրորդ աստիճանում՝ ավագ դպրոցում կրթության որակի և արդյունավետության,դաստիարակության բարձրացմանն ու արդիականացմանը: Ծրագրի ընդունումը կարևոր է, քանի որ ավագ դպրոցը հանդիսանում է «նախամասնագիտական»

կրթություն ապահովող հիմնական օղակը, որի գործունեությունից մեծապես կախված է սովորողների մասնագիտական ճիշտ կողմնորոշումը և հետագա ուսումնառության հաջողությունը: Ինչպես նշված է «Հանրակրթության պետական կրթակարգում», ավագ դպրոցը հանրակրթության վերջին օղակն է և պետք է պատրաստի սովորողներին ինքնուրույն կյանքի ու աշխատանքի շուկա մտնելուն:

Ծրագիրը նկարագրում է առանձին գործող ավագ դպրոցների համակարգը և դրան անցման ռազմավարությունը: Ծրագիրը նպատակաուղղված է լուծում տալու ավագ դպրոցի առջև ծառացած խնդիրներին: Գործող օրինակելի ուսումնական պլանը նախատեսված է ընդհանուր և հոսքային ուսուցման համար, ինչը թույլ է տալիս դպրոցում իրականացնել ուսուցման տարբեր՝ ֆիզիկա-մաթեմատիկական, քիմիա-կենսաբանական, հումանիտար, տնտեսագիտական և այլ ծրագրեր: Միջնակարգ հանրակրթական դպրոցի և տարբերակված (հոսքային) ուսուցում կազմակերպող ավագ դպրոցի (վարժարան, արհեստագործական դպրոց և այլն) օրինակելի ուսումնական պլանը 9-րդ դասարանում ընդգրկում է շաբաթական 35, իսկ 10-րդ դասարանում՝ 34 դասաժամ [2,էջ24]:

Կրթության որակի ապահովման խնդիրը առանձնապես կարևորվում է ավագ դպրոցում, որը հանդիսանում է մասնագիտական կրթության նախաշեմը:

Կրթության որակի վերահսկողության և գնահատման, ինչպես նաև որակի ապահովման համակարգված, գործուն համակարգերը դեռ նոր են ձևավորվում, ուստի որակի մասին կարելի է դատել հասարակությունում առկա գնահատականներից և իրողություններից, դպրոցի ավարտական և բուհական ընդունելության քննությունների արդյունքներից և այլն: Այսպես, ծնողների գերակշիռ մասը չբավարարվելով դպրոցում իրենց երեխաների ստացած գիտելիքներով, դիմում են կրկնուսույցներին՝ բուհական ընդունելության շրջանում մասնավոր պարապմունքների արդյունքում ակնկալելով բարձր գնահատականներ: Կրկնուսույցների մոտ մի քանի առարկայի ծանրաբեռնված ուսուցման հետևանքով սովորողները պատշաճ ուշադրություն չեն դարձնում դպրոցում ուսումնական պլանով նախատեսված մյուս առարկաներին, ինչպես նաև՝ հաճախակի բացակայում են դասերից:

Յուրաքանչյուր տարի պետական բուհերը ունենում են շուրջ 12500 դիմորդներ, իսկ միջին մասնագիտական ուսումնական հաստատությունները՝ 6000-ը: Բուհերի դիմորդների մոտ 8%-ը տվյալ տարվա շրջանավարտներ չեն: Բուհում ուսումնառությունը շարունակում են դիմորդ

շրջանավարտների միայն 60%-ը, իսկ ընդունելության քննության նվազագույն 8 միավորանոց շեմը չի հաղթահարում դիմորդների մոտ 25%-ը և թիվը աճելու միտում ունի (հաշվարկների արդյունքները ներկայացված են միջինացված տեսքով): Միջին մասնագիտական ուսումնական հաստատությունների դիմորդների մոտ մրցույթը անվճար տեղերի համար է և, սովորաբար, բոլոր դիմորդները ընդունվում են: Մարզերի ավագ դպրոցներում ուսման ցածր մակարդակի և բարձրագույն կրթության ցածր մատչելիության մասին է խոսում նաև այն փաստը, որ ՀՀ մարզերի շրջանավարտների միայն 20%-ն է դիմում բուհ, ընդ որում՝ այդ թիվն ունի նվազելու միտում: Երևան քաղաքից բուհ են դիմում շրջանավարտների 40%-ը:

Դրա հետ մեկտեղ կրթությունն ավագ դպրոցում չի համապատասխանում աշխատաշուկայի պահանջներին:

Հանրակրթության ոլորտում իրականացվող բարեփոխումների ներկա փուլը հիմնականում ուղղված է կրթության բովանդակության կատարելագործմանը: Իրականացվող բարեփոխումները նպատակաուղղված են.

ա) ապահովելու որակյալ կրթություն
բ) բարձրացնելու հանրակրթության արդյունավետությունը
գ) կրթությունը դարձնելու արդիական և համապատասխանեցնելու զարգացման պետական և միջազգային միտումներին:

Այդ բարեփոխումների շրջանակներում 2004 թվականին ընդունվել են «Հանրակրթության պետական կրթակարգը» և «Միջնակարգ կրթության պետական չափորոշիչը» և 2006 թվականի սեպտեմբերի 1-ից սկսվել է անցումը 12-ամյա կրթության:

Ներկայումս հանրակրթական համակարգում և, մասնավորապես, ավագ դպրոցում առկա, հիմնախնդիրները ամփոփված են ստորև բերված կետերում.

ա) գործող ուսումնական պլանը ճկուն չէ, այն թույլ չի տալիս սովորողին լիարժեք բավարարել իր հետաքրքրությունները և կատարել առարկաների ընտրություն ըստ իր նախասիրությունների և պահանջմունքների:

բ) դպրոցի կողմից տրված ուսումնական և բուհական ընդունելության համար անհրաժեշտ գիտելիքների ու հմտությունների անհամապատասխանությունը բերում է կրթությունը շարունակելու բարդության:

գ) Առանձին դպրոցների ավագ դասարաններում սովորողների սակավաթվության պատճառով չի ապահովվում կրթական ծրագրերի

(հոսքերի) բազմազանություն, մինչդեռ միջնակարգ դպրոցի շրջանավարտների զգալի մասը նախընտրում է շարունակել կրթությունը միջին մասնագիտական կամ բարձրագույն կրթության հաստատություններում, հետևաբար դպրոցի ուսումնական պլանը պետք է հնարավորություն ընձեռի սովորողներին ստանալ մասնագիտական կրթությունը շարունակելու համար անհրաժեշտ գիտելիքներ՝ ըստ իրենց նախասիրությունների: Այս խնդիրները մասնակիորեն փորձում են լուծել առանձին մասնագիտացված վարժարաններն ու կրթահամալիրները, բայց դրանք չեն կարող բավարարել պահանջարկը:

դ) Հանրակրթության բոլոր մակարդակներում մեկ սովորողի հաշվով ֆինանսավորումը նույնն է, չնայած նրան, որ որքան բարձրանում է կրթության աստիճանը, այդքան ավելի շատ ֆինանսական միջոցներ են պահանջվում:

ե) Ավագ դպրոցում, ավելին քան դպրոցի այլ աստիճաններում, կոռուպցիոն ռիսկերը բարձր են:

զ) Ավագ դպրոցներն այսօր մեծամասնորեն չեն իրականացնում հոսքային ուսուցում՝ տնտեսագիտական, իրավագիտական, արվեստի, ռազմագիտական, մարզական և այլ հոսքերի ուսուցում: Իր ուսումնական խնդիրներով ավագ դպրոցը այսօր քիչ է տարբերվում հիմնական դպրոցից:

Թվարկված հիմնախնդիրներից կարելի է եզրակացնել, որ այսօր ավագ դպրոցը չի իրականացնում իր հիմնական նպատակը՝ մասնագիտական կողմնորոշում, նախնական մասնագիտական կրթություն,և դաստիարակություն տալը:

Ուստի, առավել արդյունավետ է ստեղծել առանձին գործող ավագ դպրոցների համակարգ՝ ապահովված համապատասխան ֆինանսավորմամբ, մանկավարժական կադրերով, նյութատեխնիկական բազայով, որտեղ կառաջարկվի կրթական ծրագրերի բազմազանություն [3, 125]:

Այսօր ամենուր լսում ենք, որ ապրում ենք բազմազան և անընդհատ փոփոխվող աշխարհում: Իհարկե, ոչ միայն լսում ենք, այլև ականատեսն ենք, հաճախ նաև մասնակիցը այդ փոփոխությունների: Բնականաբար, փոփոխվում, զարգանում են նաև գիտությունները: Զարմանալի չէ, որ փոփոխությունների է ենթարկվում նաև կրթական համակարգը: Պարզ է, որ այս տեսանկյունից պետք է դիտարկել ՀՀ կրթական համակարգի ժամանակակից բարեփոխումները և ընկալել, որ դրանք միտված են դպրոցների գործունեության բարելավմանը և նպաստում են համաշխարհային կրթական միասնական տարածք մուտք գործելուն: Կարծում եմ՝

նաև ժամանակի պահանջն էր հանրակրթությունը հիմնական և ավագ առանձին գործող դպրոցների վերածելու: Իհարկե, գործող համակարգի յուրահատկությունը, նրա էական տարբերությունները մեր երկրում գործող ավանդական կրթական համակարգից մի շարք բարդություններ են կանխորոշում, որոնց բախվում է այսօրվա ավագ դպրոցի սովորողը: Եվ հատկապես կարևորվում են այն հարցերը, որոնք կապված են կրթական գործընթացի սուբյեկտներին նոր համակարգին հարմարեցնելու՝ ադապտացնելու հետ: Ավագ դպրոցի ուսուցման հարմարումը բարդ և տարաբնույթ գործընթաց է՝ պայմանավորված նոր մանկավարժական համակարգ անհատի մուտքով՝ ուսուցչի ղեկավարությամբ: Այդ գործընթացը ձևավորում է գործունեության նոր կառուցվածք՝ կապված ուսուցման նորովի կազմակերպման հետ:

Ավագ դպրոցականների ուսուցման հարմարման և դաստիարակության ուղղությամբ իրականացվող աշխատանքներում առանձնացրվում են հետևյալ ուղղությունները՝

ա) ուսումնական գործընթացի կազմակերպում,

բ) աշակերտական կոլեկտիվի ձևավորում,

գ) դաստիարակություն եւ ինքնադաստիարակություն,

դ) մասնագիտական կողմնորոշում,

ե) արտաուսումնական գործունեության իրականացում և այլն:

Յուրաքանչյուր ուսումնական ծրագրով նախատեսված առարկա պետք է ոչ միայն ուսուցանող բովանդակությունը հաղորդի, այլև պետք է դեռահասի մեջ սերմանվի նաև առարկայի դաստիարակչական բովանդակությունը:

Օրինակ Հայոց պատմությունը՝ հայրենասիրական դաստիարակություն, աշխարհագրությունը էկոլոգիական դաստիարակություն, հասարակագիտությունը՝ բարոյական դաստիարակություն, ֆիզկուլտուրան՝ առողջապահական դաստիարակություն, կերպարվեստը՝ գեղագիտական դաստիարակություն և այլն:

Ավագ դպրոցականների դաստիարակության գործընթացում առկա են հետևյալ խնդիրները՝

- Մանկավարժներին անհրաժեշտ է զինել համապատասխան գիտելիքներով և հմտություններով՝ ավագ դպրոցում դաստիարակչական ուսուցում կազմակերպելու համար:
- Դպրոցը չի ապահովում անհրաժեշտ ինքնուրույնություն ավագ դպրոցականների ինքնադրսևորման և արագ միջավայրում ինտեգրման գործընթացի իրականացման համար:

- Հազվադեպ են կազմակերպվում սեմինար-քննարկումներ, բանավեճեր, զրույցներ, որոնք կլինեն արդիական և աշակերտների հետաքրքրություններից բխող։
- Մեծ ուշադրություն չի դարձվում աշակերտների մասնակցությունը մշակույթային կյանքին,
- Թույլ է ընտանիք-դպրոց, դասղեկ-ծնող սերտ համագործակցությունը, եթե կա՝ ապա վերաբերվում է ուսումնական գործընթացին, այլ ոչ դաստիարակությանը։

Եվ այս խնդիրների լուծման համար առաջարկում ենք՝

1. Մեծ ուշադրություն դարձնել դպրոցում արտադասարանական աշխատանքներին։
2. Աշակերտների հետ հաճախ կազմակերպել զբոսանքներ, էքսկուրսիաներ՝ միմյանց հետ շփվելու, ընկերական բարեիդրացիական հարաբերություններ հաստատելու և սոցիալականացումն ապահովելու համար։
3. Ապահովել անկաշկանդ, ինքնադրսևորմանը նպաստող միջավայր, որտեղ յուրաքանչյուր դեռահաս իրեն պաշտպանված է զգում , այլ ոչ անտեսված ու կաշկանդված, խորթ նոր միջավայրին։

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Ամիրջանյան Յ., Ա. Սահակյան «Մանկավարժություն», Երևան, 2005։
2. Ավագ դպրոցների համակարգի ստեղծման ռազմավարական և փորձնական ծրագիր, ՀՀ կառավարության 2008 թ. -ի N12 որոշում։
3. ԵՊՀ ՈՒԳԸ գիտական հոդվածների ժողովածու 2015 թ. տարեկան գիտական նստաշրջանի նյութեր։
4. Հանրակրթական ավագ և միջնակարգ դպրոցների կրթական ծրագրերի համեմատական վերլուծություն, Երևան, 2015։
5. Վարդանյան Է. «Կոմունիստական դաստիարակության ընդհանուր մեթոդներն ու դրանց բնութագիրը», 1973։
6. «Ուսուցում և գնահատում» գիտական նյութեր, Երևան, 2016։

Организация воспитательного процесса в старшей школе

Мкртичян Мане
ВГУ, Управление образованием,
Магистратура, 2-й курс

Резюме

***Ключевые слова**: Воспитание, образование, высшая школа, Болонская система, интерактивные методы*

Процесс воспитания осуществляется в нескольких социальных институтах, что вносит противоречия между участниками процесса с разными системами ценностей. После введения Болонской системы, когда трехуровневая система образования является новой, до сих пор ведутся дискуссии о том, актуален процесс воспитания в старшей школе или нет. В условиях информационно насыщенной реальности обучение современных подростков интерактивными методами является одной из основных задач педагога, что предполагает правильную стратегию, инвестиции в сферу, преданных своему делу педагогов.

Organizing the Upbringing Process in High School

Mkrtichyan Mane
VSU, Education Management,
MA, 2nd course

Summary

***Key words:** Upbringing, education, high school, Bologna system, interactive methods*

The process of upbringing is carried out in several social institutions, which brings contradictions to the participants of the process with different value systems. After the introduction of the Bologna system, when the three-level education system is new, it is still being discussed whether the process of upbringing in high school is relevant or not. In the conditions of information-rich reality, educating and bring up today's adolescents with interactive methods is one of the main tasks of a teacher, which presupposes the right strategy, investment in the field, dedicated pedagogues.

ՀՀ հանրակրթության որակի բարելավման մեխանիզմները

Նիազյան Լիլիթ
ՎՊՀ, Կրթության կառավարում, մագիստրատուրա 2-րդ կուրս
Գիտական ղեկավար՝ մ. գ. թ. դոցենտ ***Լ. Բաղդասարյան***

Հանգուցային բառեր. *կրթություն, ոլորտ, առաքելություն, մատչելիություն, իրավական փաստաթուղթ*

Կրթության որակը բավականին տարողունակ հասկացություն է, որի կարևորությունը շեշտվում է կրթությանն առնչվող միջազգային տարբեր փաստաթղթերում, ինչպես նաև տեղական օրենսդրությունում [1, 12]:

Հասարակության տարբեր խմբեր (դասախոսներ, կառավարիչներ, ուսանողներ, ծնողներ, գործատուներ, քաղաքական գործիչներ և այլն) կարող են կրթության որակը բնորոշել տարբեր սահմանումներով: Մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոնը (այսուհետև՝ ՈԱԱԿ) որդեգրել է որակի մի սահմանում, որը բնութագրում է որակը՝ որպես համարժեքություն հայտարարված նպատակին [1, 11]: Այսինքն՝ յուրաքանչյուր հաստատություն որոշում է, թե որքանով է իր կողմից մատուցվող կրթական ծառայությունը կամ արդյունքը համապատասխանում իր իսկ սահմանած նպատակներին: Նման սահմանումը թույլ է տալիս հաստատություններին իրենց որդեգրած առաքելության մեջ դնել նպատակներ, որոնց հասնելու աստիճանով է գնահատվելու և ներկայացվելու որակը:

Յունեսկոյի միջազգային աշխատանքային խմբի կողմից 2000 թ. Ֆլորենցիայում ընդունված կրթության որակի սահմանման մասին փաստաթղթում նշվում է, որ կրթության որակը շատ դեպքերում կախված է համատեքստից, ինչպես նաև տարբեր շահառուների կողմից առաջ քաշվող պահանջներից ու կրթության որակի վերաբերյալ սեփական ըմբռնումներից [2,15]: Կրթությունը այնպիսի մի ոլորտ է, որը չի շրջանցում հասարակության որևէ անդամի, և այդ անդամներից յուրաքանչյուրը ոչ միայն փորձում է առավելագույնս ստանալ այդ գործընթացից, այլ նաև ունենալ սեփական մոտեցումները լսելի դարձնելու մեխանիզմներ՝ այդ գործընթացների վրա ազդելու տեսանկյունից: Այդ առումով կրթության որակի ապահովման համար պետք է գործառնեն թափանցիկ ու հաշվետվողական համակարգեր ու մեխանիզմներ, որոնք տարբեր շահառուների մասնակիցը կդարձնեն կրթական գործընթացին և վերջիվերջո նրանց կրավարարեն [3, 14-15]: Հասկանալի է, որ որևէ կրթական համակարգ չի

կարող բավարարել բոլոր շահառուներին, սակայն նրանց մեծամասնության պարագայում կարելի է ասել, որ մեխանիզմը աշխատում է:

Կան նաև շատ այլ զեկույցներ և հրապարակումներ, որոնք կրթության որակը դիտարկում են որակի գնահատման և զարգացման տեսանկյունից: Սպանբաուերը նշում է, որ դպրոցները պետք է ունենան որակի ապահովման քաղաքականություն և իբրև օրինակ է բերում Ֆոքս Վելլի տեխնիկական քոլեջը, որը բարձրագույն կրթության չափանիշներին համաձայն տրամադրում է կրթության որակի հետ կապված ցուցումներ և հրահանգներ [3, 11]:

Հանրակրթության համակարգի վրա ուժեղ ներգործություն են ունենում մի շարք փոխկապակցված գործոններ: Այդ գործոնները թե ազգային, և թե ինստիտուցիոնալ մակարդակում պահանջում են շարունակական փոփոխություններ կատարել: Վերջին տասնամյակների ընթացքում գնալով աճում է հանրակրթության նկատմամբ հասարակական պահանջարկը: Դրա հետևանքով կրթական համակարգերն ավելի են ընդլայնվում:

Շատ կարևոր է՝ թե ով է սահմանում կրթության որակը և ինչ նպատակով: Նպատակների բազմազան լինելը նշանակում է, որ որակի ապահովման ցանկացած գործակալության մեթոդաբանություն պետք է հավասարակշռի շահառուների տարբեր հետաքրքրություններ:

Ուսումնասիրելով «կրթության որակ» հասկացությունը՝ մենք նկատեցինք, որ առհասարակ որակ|հասկացությունն ունի լայն իմաստ ցանկացած բնագավառի համար: Դեռևս մարդկության ծագման հետ մեկտեղ մարդիկ փորձել են իրենց գործունեության մեջ կարևորել աշխատանքի որակը, արժևորել աշխատանքի արդյունքները: Անդրադարձ կատարելով կրթության ոլորտում «որակ» հասկացությանը՝ եկանք այն համոզման, որ այն կարևորվել է կրթության առընչվող բոլոր իրավական փաստաթղթերում, օրենսդրությունում, կրթության հետ կապ ունեցող ցանկացած անձի կողմից:

«Կրթության որակ»-ի բարելավման համար կիրառվում են տարբեր մեթոդներ, միջոցներ, եղանակներ, պայմաններ, սկզբունքներ: Կրթության որակի բարելավման մեխանիզմների համար հիմք են համարվում՝ մատչելիության, հավասարության և ուսումնական գործընթացում սովորողների ներգրավման սկզբունքները:

«Կրթության որակ» հասկացությունը սերտորեն առնչվում է կրթության մատչելիության հետ և, չնայած տարբեր հասկացություններ են, այնուամենայնիվ փոխլրացնում են միմյանց: Եթե կրթության որակը հնա-

րավոր չէ առանց կրթության մատչելիության, ապա մատչելիությունը իմաստազրկվում է առանց համապատասխան կրթական որակի ապահովման [3, 17]: Որակյալ կրթությունը միտված է ապագային, և ենթադրում է ոչ միայն նախկինում առկա գիտելիքների ուսուցանում և յուրացում, այլև նոր գիտելիքների ստեղծում: Գիտելիքաստեղծ գործունեությունը որակյալ կրթության հիմքերից է, որը կարող է բերել գիտելիքահեն տնտեսության, ժողովրդավարական հասարակարգի զարգացման, կյանքի զարգացման նոր ուղիների ու մոդելների ստեղծման ու զարգացման [3, 45]:

Կրթության որակի բարելավման համար մյուս կարևոր սկզբունքն է՝ հավասարությունը և սովորողների ներառումն ուսումնական գործընթացում: Բոլոր սովորողների համար կրթության հասանելիության ապահովումը կարևոր մեխանիզմներից է, քանի, որ վաղ հասակից ապահովում է հավասար հնարավորություններ: Նրանք պետք է վստահ լինեն, որ որևէ անձնական կամ սոցիալական հանգամանք (սեռ, ռասա, ինքնություն, հաշմանդամություն, էթնիկական ծագում կամ կրոնական պատկանելիություն) չի կարող խաչընդոտ հանդիսանալ կրթական հնարավորությունների և ցանկությունների իրացման համար: Նման հնարավորություններ ունեցող երեխաները կարող են դառնալ ինքնուրույն, մոտիվացված և պատասխանատու քաղաքացիներ [3, 35]:

Կրթության որակի բարելավման սկզբունքները հիմք են հանդիսանում հետևյալ մեխանիզմների համար.

Կրթության որակի բարելավման կարևոր մեխանիզմ է ուսուցիչների վերապատրաստումը: Ուսուցիչների վերապատրաստումը Հայաստանում դիտարկվում է որպես մասնագիտական զարգացման հիմնական բաղադրիչ: Եթե նախկինում պետության նախաձեռնությամբ իրականացվող բոլոր վերապատրաստումներն անցկացվում էին Կրթության ազգային ինստիտուտի կողմից, ապա նոր կարգով ոլորտում փորձ ունեցող կազմակերպությունները 2012թ.-ից հնարավորություն ունեցան անցկացնելու վերապատրաստումներ: Ուսուցիչների վերապատրաստման դասընթացները ուսուցիչների գիտելիքները թարմացնելու դասընթացի տեսակ են՝ կապված որակավորման նոր մակարդակների աճող անհրաժեշտության և, համապատասխանաբար, մասնագիտական խնդիրների լուծման նոր ուղղությունների և հնարավորությունների հետ [2, 25]:

Այսպիսով՝ վերապատրաստման գործընթացը հնարավորություն է տալիս ցանկացած մանկավարժի ապահովել սեփական առաջընթացը, ինչն իր ազդեցությունն է թողնում ամբողջ ուսումնական գործընթացի

որակի վրա: Վերապատրաստումն ինքնին իրենից ներկայացնում է մոտիվացիա, խթան այն մանկավարժի համար, ով սիրում է իր աշխատանքը, և փորձում կատարելագործվել և իր սաներին տալ լավագույնը, կարևորն ու արժեքավորը:

Որպես հանրակրթության որակի բարելավման կարևոր մեխանիզմ՝ հաջորդը համարվում է ուսուցիչների ատեստավորումը:

Ուսուցիչների ատեստավորման գործընթացի ապահովումն ինքնին պարզ, բայց մեծ ձեռքբերուում է ցանկացած ուսուցչի համար: Ուսուցչի ատեստավորումն անցկացվում է պարզ ընթացակարգով՝ փաստաթղթային ատեստավորման եղանակով (այսուհետ՝ ատեստավորում) ուսուցչի ատեստավորման տարածքային հանձնաժողովի (այսուհետ՝ ատեստավորման հանձնաժողով) կողմից: Ուսուցչի ատեստավորման հանձնաժողովի ձևավորման և գործունեության կարգը սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը [5]: Ցանկացած ուսումնական հաստատության ուսուցչի ատեստավորման գործընթաց կազմակերպում է տվյալ ուսումնական հաստատության տնօրենը:

Կրթության որակի բարելավման մյուս մեխանիզմը ՝ուսուցիչի որակավորման տարակարգերի շնորհումը: Եթե ուսուցիչների ատեստավորումը պարտադիր գործընթաց է, ապա տարակարգերի ձեռքաբերումը նախաձեռնությամբ է որի համար մշակված է հատուկ ընթացակարգ: Ուսուցչի որակավորման տարակարգը քառաստիճան է և շնորհվում է աստիճանակարգության սկզբունքով [4]: Ուսուցիչները կարող են նաև երկու տարվա պարբերականությամբ դիմել որակավորման տարակարգերի համար, ինչը հնարավորություն է տալիս ստանալ հավելավճարներ: Դրանից հետո այն ուսուցիչները, ովքեր ունեն հրատարակված հոդվածներ, գրքեր, պետական մրցանակներ, պարգևներ, վերապատրաստողի վկայական, ակտիվորեն մասնակցում են Հայկական կրթական միջավայր պորտալում, վարել են հեռավար դասընթաց, ունեն բարձր վարպետություն (վերջինս սահմանում է տվյալ դպրոցի տնօրենը, ինչը բավական սուբյեկտիվ է) դիմում են որակավորման տարակարգ ստանալու համար [2, 26]:


Այսպիսով, կրթության որակի բարելավման մեխանիզմները՝ իրար փոխլրացնող քայլերի հաջորդականություն են, որոնք ապահովում են մանկավարժի մասնագիտական զարգացումը:

Այսօր նկատելի է աճող սերնդի պահանջը՝ ստանալ լավագույն կրթություն լավագույն մանկավարժների միջոցով: Լավագույն կրթություն ապահովելու համար կարևոր է, որ ցանկացած մանկավարժ ունենա


մոտիվացիա, ձգտում կատարելագործվելու ավելի գիտակ ու արժեքավոր գիտելիքներ փոխանցելու համար:

Կրթության որակի բարելավման մեխանիզմներն ուսումնասիրելու նպատակով կիրառվել է հարցաթերթիկի մեթոդը հանրակրթական ուսումնական հաստատությունների ուսուցիչների հետ: Հետազոտությանը մասնակցել են 30 տարբեր առարկաներ դասավանդող ուսուցիչներ: Հարցաթերթիկում ընդգրկված է եղել 10 հարց, որոնք գնահատվել են 1-5 բալային համակարգով:


Այսպիսով՝ այն հարցին թե որքանո՞վ են վերապատրաստումներն օգնում մասնագիտական գործունեության կատարելագործմանը, ուսուցիչների 20%-ը գնահատել է առավելագույն միավորը՝ 5, 43.3%-ը գնահատել է՝ 4 միավոր, 26.7%-ը գնահատել է՝ 3 միավոր և 10%-ը՝ 1 միավոր, որը, նշանակում է, որ վերապատրաստումները որևէ մասնագիտական կատարելագործում չեն ապահովում:




Նպատակային են արդյոք վերապատրաստումները հարցին՝ ուսուցիչներից 33.3%-ը գնահատել է՝ 5 միավոր, 30%-ը՝ 4 միավոր, իսկ 36.7%-ը՝ 3 միավոր: Արդյունքները ներկայացված է ստորև՝




Վերապատրաստման ժամանակ ձեռքբերած գիտելիքները և հմտությունները որքանո՞վ են նպաստում գործունեության արդյունավետությանը հարցին ՝ 36.7%-ը գնահատել է՝ 5 միավոր, 40%-ը՝ 4 միավոր, 13.3%-ը՝ 3 միավոր, 6.7%-ը՝ 2 միավոր, 3.3%-ը՝1 միավոր: Ստորև ներկայացված է գրաֆիկական պատկերը.




Որքանո՞վ են խոչընդոտում դպրոցի շենքային և նյութատեխնիկական պայմանները ուսուցման գործընթացի արդյունավետությանը, հետազոտվողներից 23.3%-ը գնահատել է՝ 5 միավոր, 56.7%՝ 4 միավոր, 10%՝ 3 միավոր, 10%՝ 2 միավոր:




Որքանո՞վ է նորարարական տեխնոլոգիաների օգտագործումը նպաստում կրթության որակի բարելավմանը հարցին ուսուցիչներից 46.7% գնահատել է՝ 5 միավոր, 50%՝ 4 միավոր, 3.3%՝ 3 միավոր:




Նշել մասնագիտական զարգացման ուղիներ, որի միջոցով ըստ ձեզ կարող եք ապահովել կրթության բարձր որակ հարցին, ուսուցիչների 66.7%-ը որպես մասնագիտական զարգացման ուղի համարում են առաջավոր փորձի ուսումնասիրման նպատակով այլ դպրոցներ այցերը, մոնիթորինգը՝ 40%, ատեստավորում՝ 33.3%, անհատական կամ խմբային հետազոտությունները՝ 26.7%, կոնֆերասներ՝ 23.3%, 16.7% շարունակական դասընթացները:




Ի՞նչը կարող ենք համարել ամենաբացասական փոփոխությունը, որն ազդել է կրթության որակի վրա հարցին 56.7%-ը՝ պատասխանել է առարկայական ծրագրի բեռնվածությունը, 46.7%-ը՝ դասագրքերի բովանդակությունը, 40%-ը՝ աշակերտների անտարբերությունն ուսման նկատմամբ, 33.3%-ը՝ դասավանդման մեթոդների նվազ արդյունավետությունը և 26.7%-ը՝ 12-ամյա կրթությունը:



Ի՞նչն եք համարում կրթության որակը բարձրացնելու միջոց հարցին 27.6%-ը՝ ընտրել է ծրագրային փոփոխությունները, 27.6%-ը՝ ուսուցիչների տրվող ազատությունը, 20.7%-ը՝ մասնագիտական կատարելագործումը իսկ 24.1%-ը՝ բազմազան մեթոդների կիրառությունը:




Նշել խոչընդոտներից առաջանայինը, որը ուսուցիչը ստիպված է հաղթահարել իր աշխատանքի ընթացքում, կրթության որակ ապահովելու համար ուսուցիչների 40%-ը նշել՝ սոցիալական բնույթի խոչընդոտներ, 33.3%- հոգեբանական և 26.7%-ը՝ ֆինանսատնտեսական:



Ձեր կարծիքով, ուսումնական նյութին տիրապետելուց բացի, ինչ է անհրաժեշտ ուսուցչին՝ կրթության բարձր որակ ապահովելու համար հարցին հարցվողների 43.3%-ը՝ ընտրել է համագործակցությունն

առաջավոր փորձ ունեցողների հետ, 30%-ը՝ ուսուցիչներին ազատության շնորհում դասն ամբողջությամբ տնօրինելու համար, և 26.7%-ը՝ աշակերտների հետ հաղորդակցվելու հմտություններ տարբերակը:



Հոդվածում խոսվում է որակի ապահովման արդյունավետ մեխանիզմների մշակման և կիրառման մասին: Իբրև որակի բարելավման մեխանիզմներ անդրադարձել ենք ուսուցիչների վերապատրաստմանը, ատեստավորմանը, տարակարգի շնորհմանը, չբացառելով բարենպաստ կրթական միջավայրի ապահովումը, արդյունավետ կրթության կառավարումը: Վերջին շրջանում պետությունը մեծ ուշադրություն է դարձրել ատեստավորման գործընթացին, և մշակել կամավոր ատեստավորման փորձնական ծրագիր: Առաջարկում ենք ՀՀ հանրակրթության որակի բարելավման մեխանիզմների իրագործման համալիր մոտեցում՝ դիտելով և ուսուցչին՝ որպես կրթությունն իրականացնող սուբյեկտ, և՛ կրթական միջավայրը, և՛ կառավարման համակարգը:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. «Կրթության որակի ապահովման և գնահատման ներբուհական համակարգ»-ներբուհական մոդել, Վանաձոր, 200, 86էջ:
2. Որակի ապահովում և հավատարմագրում, Հիմանական տերմիրնների և սահմանումնների բացատրրական բառարան:
3. Որակի ապահովման ձեռնարկ (բուհի կրթության որակի ապահովման և դրա գործընթացներում ուսանողների ներգրավման ուսումնամեթոդական ձեռնարկ).- Եր.,: ՃՇՀԱՀ, 2017թ. - 79 էջ:
4. www.anqa.am
5. www.edu.am

Механизмы улучшения качества общего образования РА

Ниазян Лилит
ВГУ, Управление образованием,
Магистратура, 2-й курс

Резюме

Ключевые слова: *образование, сфера, миссия, доступность, юридический документ*

В статье рассматриваются вопросы разработки и применения эффективных механизмов обеспечения качества. В качестве механизмов повышения усовершенствования мы назвали подготовку учителей, сертификацию, присвоение категорий, не исключая образовательную среду, эффективное управление образованием. В последнее время государство уделяет большое внимание процессу аттестации, և разработала пилотную программу добровольной аттестации. Мы предлагаем комплексный подход к реализации механизмов повышения качества общего образования в Республике Армения, рассматривая учителя как субъект, реализующий образование, образовательную среду и систему управления.

Mechanisms for Improving the Quality of RA General Education

Niazyan Lilit
VSU, Education Management,
MA, 2nd course

Summary

Key words: *education, sphere, mission, accessibility, legal document*

The article deals with the development and application of effective quality assurance mechanisms. As mechanisms for increasing improvement, we named teacher training, certification, assignment of categories, not excluding the educational environment, and effective management of education. Recently, the state has been paying great attention to the attestation process, և has developed a pilot program for voluntary attestation. We offer a comprehensive approach to the implementation of mechanisms to improve the quality of general education in the Republic of Armenia, considering the teacher as a subject that implements education, the educational environment and the management system.

Ուսուցիչների վերապատրաստման գործընթացը բուհում՝ որպես նորարարություն

Նիկողոսյան Աննա
ՎՊՀ, Կրթության կառավարում, մագիստրատուրա 2-րդ կուրս,
Գիտական ղեկավար՝ մ. գ. թ. ***Լ. Դանիելյան***

Հանգուցային բառեր*. ուսուցիչների պարտադիր վերապատրաստում, բուհ-դպրոց հետադարձ կապ, ՄԿՕ*

Կրթական նորարարությունը փոփոխությունների միտումնավոր գործընթաց է, որը հնարավորություն է ստեղծում փոխելու բովանդակությունը, վերաբերմունքը, գաղափարները, մոդելները, ներդրվում են նոր մեթոդոլոգիաներ կամ օգտագործվում են նոր ռեսուրսներ և տեխնոլոգիաներ դասավանդման գործընթացում:

Ըստ Իսպանիայի թագավորական ակադեմիայի՝ նորարարության որոշված հայեցակարգն այն է, որ այն ընկալվում է որպես նորարարության գործողություն և ազդեցություն [3, 5]:

Կան նորարարական բազմազաթիվ նախագծեր, որոնք իրականացվել են դպրոցներում, բուհերում: Ըստ Հարիս Դուգլասի՝ հիմնական խնդիրը ոչ թե կրթական հաստատություններում նորարարության բացակայությունն է, այլ չափազանց էպիզոդիկ, հատվածական և ավելորդ նախագծերի առկայությունը [3, 15]:

Նորարարությունը փոփոխություն է առաջացնում կրթական գործընթացներում, դասավանդման պրակտիկայում և արդյունքներում: Այդ փոփոխության համար անհրաժեշտ է հասկանալ դրա բարդությունը, անհրաժեշտությունը և դրա իրականացման համար ինչ ասպեկտներ պետք է հաշվի առնել: Այս համատեքստում անդրադառնանք բուհերի կողմից ուսուցիչների վերապատրաստման գործընթացին, որը նորություն է հայկական կրթական իրականության մեջ:

Կրթության ազգային ինստիտուտի լուծարումից հետո՝ համաձայն ԿԳՄՍ նախարարի 2021թ մարտի 5-ի 24-Ն հրամանի հաստատվել է ուսուցչի ատեստավորման համար վերապատրաստող կազմակերպությունների երաշխավորման նոր կարգ: Համաձայն կարգի՝ վերապատրաստման դասընթացներ կազմակերպելու գործունեությունը երաշխավորվում է երեք տարով, եթե կազմակերպությունը համապատասխանում է կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության սահ-

մանած չափանիշներին: Ցանկում կարող են ընդգրկվել իրավաբանական անձի կարգավիճակ և պետական գրանցում ունեցող ՀՀ պետական և ոչ պետական ուսումնական հաստատությունները: Արդյունքում 2021թ մայիսի 18-ի 780-Ա հրամանի համաձայն 48 կազմակերպություն ստացավ հնարավորություն իրականացնելու ուսուցչի վերապատրաստման գործընթացը:

Համաձայն ԿԳՄՍ 24-Ն հրամանի փաստորեն ուսուցիչների պարտադիր վերապատրաստումը կարող է իրականացվել նաև բուհի կողմից: Երաշխավորված բուհերն են՝

1. Երևանի պետական համալսարան,
2. Վանաձորի Հ. Թումանյանի անվան պետական համալսարան,
3. Շիրակի Մ. Նալբանդյանի անվան պետական համալսարան,
4. Խ. Աբովյանի անվան պետական մանկավարժական համալսարան,
5. Երևանի Վ. Բրյուսովի անվան պետական համալսարան,
6. Գորիսի պետական համալսարան,
7. Երևանի պետական համալսարանի Իջևանի մասնաճյուղ,
8. Հայաստանի ֆիզիկական կուլտուրայի և սպորտի պետական ինստիտուտ:

Ինչպես հասկացանք 2021թ ուսուցիչների վերապատրաստումն իրականացվել է նաև ՀՊՄՀ-ի և ՎՊՀ-ի կողմից: Առանձնացնենք հատկապես այս 2-ը, քանի որ Հայաստանում մանկավարժական կադրերը ձևավորվում են այս բուհերի կողմից, հետևաբար բուհի կողմից իրականացվող վերապատրաստման գործընթացի դերը կարելի է դիտարկել և բուհի և դպրոցների տեսանկյունից:

Ինչպես վերը նշվեց՝ փոփոխության համար անհրաժեշտ է հասկանալ դրա բարդությունը, անհրաժեշտությունը: Բուհերը, որոնք ստանձնում են պարտականություն իրականացնելու ուսուցիչների պարտադիր վերապատրաստում պետք է հաշվի առնեն անհրաժեշտությունը, նշանակությունը: Իսկ ինչ նշանակություն ունի հատկապես բուհերի կողմից մանկավարժների վերապատրաստման գործընթացը՝

1. ստեղծում է հետադարձ կապի հնարավորություն
2. ավելի է սերտանում բուհ-դպրոց կապը և համագործակցությունը
3. նվազում է շահերի բախումը, ուսուցիչները հետադարձ կապի միջոցով հնարավորություն են ստանում բարձրաձայնել առկա խնդիրները:

Ցանկացած կազմակերպություն իր գործունեության ընթացքում ունի

հետադարձ կապի անհրաժեշտություն և բացառություն չեն կազմում նաև ուսումնական հաստատությունները: Բնականաբար բուհերը իրենց գործունեության ընթացքում փորձում են բավարարել շահակիցների պահանջները, համապատասխանել շուկայի պահանջներին և մնալ մրցունակ, սակայն իրենց աշխատանքի արդյունավետությունը կարող են տեսնել վիճակագրությունների և հասանելի տվյալների հիման վրա: Ինչքանով են բավարարում ուսանողների պահանջները՝ ուսանողից կարող են իմանալ մասնակի և երբեմն նաև ստանալ ոչ օբյեկտիվ տվյալներ: Վերապատրաստումների միջոցով բուհ են վերադառնում նախկին ուսանողները, որոնց մի մասը գուցե նույն բուհի շրջանավարտ են: Նախկին ուսանողները հնարավորություն են ունեցել գործնականում կիրառել իրենց գիտելիքները և հմտությունները, իսկ այժմ բուհում անցնում են վերապատրաստման: Բուհերն ունեն հնարավորություն հետադարձ կապի միջոցով հասկանալու թե ինչքանով են մրցունակ իրենց կողմից ձևավորած կադրերը: Համապատասխանում են շուկայի պահանջներին թե ոչ, ընդ որում կարևոր է խնդիրն ուսումնասիրել հայաստանյան շուկայից սկսած, որովհետև մինչ միջազգային նորմերին համապատասխանելը՝ պետք է բավարարվեն ներքին պահանջները:

Վերապատրաստումն իրականացվում է 4 բաղադրիչով՝

1. մասնագիտական գիտելիքներ
2. ՏՀՏ
3. Օրենսդրություն
4. Մանկավարժություն և հոգեբանություն

Վերջում ուսուցիչները կատարում են հետազոտական աշխատանք:

Բաղադրիչները կարևոր են և արդիական՝ պարտադիր ցանկացած մանկավարժի համար: Բաղադիրչների հետ մանկավարժները առնչվում են նախ ուսանող տարիներին՝ բուհի ներսում, իսկ աշխատանքային գործունեության ընթացքում անհրաժեշտ են հմտություններ տվյալ ոլորտներից: Իհարկե ցանկացած բնագավառ ենթակա է փոփոխության և անգամ մասնագիտական գիտելիքները կարող են ինչ-որ պահից սկսած համարվել հնացած, սակայն որքանով են ճկուն մանկավարժները այդ փոփոխությունների նկատմամբ, արդյոք բուհերի կողմից տրվել են համապատասխան հմտություններ և առհասարակ տրված տեսական գիտելիքները որքանով են անհրաժեշտ գործնականում: Բուհերը հետադարձ կապի միջոցով ունեն հնարավորություն ստանալու այս հարցերի պատասխանները, պարզաբանելու թե ինչ բացթողումներ են ունենում, ինչ պահանջներ են դրվում դպրոցներում և նախատեսվում են սրանք

կրթական ծրագրերում թե ոչ: Բնականաբար ՄԿԾ-ների վերանայման ընթացքում վերապատրաստումից ստացված հետադարձ կապը կարող է ունենալ իր դրական ազդեցությունը:

Հետադարձ կապի հնարավորությունը կարելի է դիտարկել նաև մեկ այլ համատեքստում: Նախ չմոռանանք, որ վերապատրաստումներին մասնակցում են սկսնակ և արդեն բավականին փորձառու ուսուցիչներ, հետևաբար պահանջները և ցանկությունները այս ուսուցիչների մոտ հիմնականում տարբեր են լինում: Հակասություններ կարող են լինել նաև կապված բաղադրիչների հետ՝ արդյոք բոլորը նույն ժամաքանակով նույն դասերին պետք է ներկա լինեն, օր՝ սկսնակները միգուցե ավելի կայուն են ՏՀՏ ոլորտում, բայց փոխարենը թերանում են մասնագիտական գիտելիքների շրջանում: Բուհերը, որոնք նաև գտնվում են մրցակցային դիրքերում կարող են օպտիմալ կերպով պլանավորել իրենց աշխատանքները, օրինակ նախապես հայտերի լրացման հետ մեկտեղ անցկացնել հարցումներ՝ պարզելու համար թե 4 բաղադրիչներից որի համար կցանկանային, որ լիներ ավելի շատ ժամաքանակ: Սա նաև կարող է գործիք ծառայել համագործակցության համար, քանի որ ամեն 5 տարին մեկ նույն ժամաքանակով և բաղադրիչներով վերապատրաստումները կարող են ավելորդ ծանրաբեռնվածություն թվալ:

Հաջորդը դասալսումներն են, որոնք ևս պարտադիր են: Հայտնի է, որ ուսանողները ուսումնառության ընթացքում անցնում են պրակտիկա դպրոցներում և նույնիսկ ՀՊՄՀ-ում գործում է Պրակտիկայի կենտրոն, որի նպատակն է նպաստել պրակտիկայի արդյունքների և ուսանողների ձեռքբերումների գնահատման արդիականացմանը՝ հետադարձ կապի կառուցակարգերի ներդրման և հաջողված փորձի իմաստավորման, տարածման և ինստիտուցիոնալացման ճանապարհով: Այժմ ուսանողները բուհ են վերադառնում արդեն որպես ուսուցիչներ, ովքեր պետք է ցույց տան իրենց գործնական հաջողությունները և բնականաբար սա նույնը չէ ինչ պրակտիկան, քանի որ պրակտիկայի ժամանակ ուսանողի ուսերին ավելի քիչ պատասխանատվություն կա, սակայն բուհը վերապատրաստումների ընթացքում ունի հնարավորություն անցկացնելու համեմատականներ և ինչու ոչ հատկապես ուշադրություն դարձնելու սկսնակներին, ովքեր ոչ վաղ անցյալում պրակտիկանտներ էին: Նման դեպքերում որպես նորարարություն բուհերը կարող են աշխատել նաև մենթորության սկզբունքով, որը հաջողված փորձ է մի շարք երկրներում:

Չենք կարող անտեսել նաև հետազոտական աշխատանքները, որոնք հանձնվում են վերապատրաստումների ավարտին և պետք է կցվեն

էլեկտրոնային հարթակում, իսկ էլեկտրոնային հարթակները նորամուծություններ են բուհերի համար: Սա կարող է հնարավորություն ստեղծել համակարգելու հետազոտությունները և վերլուծելու արդյունքները՝ որքանով են պատրաստ ուսուցիչներըկատարելու հետազոտական աշխատանքներ:

▪ Մյուսը՝ բուհ-դպրոց կապն է, որտեղ կապող օղակ կարող է լինել նաև ուսուցիչը: Կապը կարող է հնարավորություն ստեղծել պարզելու, թե որքանով են համապատասխանում դպրոցների և բուհերի պահանջները, որտեղ են հատվում շահերի բախումները, արդյոք հարթ է անցումը դպրոցից բուհ աշակերտի համար և բուհից դպրոց՝ ուսանողների համար, թե պահանջներում և կրթական ծրագրերում ամեն դեպքում կան հակասություններ:

▪ Նվազում է շահերի բախումը, ուսուցիչները հետադարձ կապի միջոցով հնարավորություն են ստանում բարձրաձայնել առկա խնդիրները: Այո, խնդիրներ և բացթողումներ միշտ էլ կարող են լինել, սակայն հարց է, թե արդյոք այս բացթողումներին ուշադրություն դարձվում են, թե ոչ դրանք բարձրաձայնելու հնարավորություն և միջավայր գոյություն ունի, թե ոչ: Համաձայն ՀՀ Հանրակրթության մասին օրենքի՝ պետությունը զբաղեցրած պաշտոնին ուսուցչի համապատասխանությունը ստուգելու նպատակով 5 տարին մեկ անգամ յուրաքանչյուր ուսուցչի համար իրականացնում է հերթական ատեստավորում: Սա նշանակում է, որ գործընթացն իրականացվում է ամեն տարի և ամեն տարի հավաքվում են տարբեր ուսուցիչներ, ովքեր առնչվել են այս կամ այն խնդրի հետ և որոշ խնդիրներ կարող են նաև կապված լինել հենց բուհի գործունեության հետ: Որպես օրինակ անդրադառնանք դասագրքերին: Ճիշտ է նախարարությունը հայտարարում է դասագրքերի ստեղծման և տպագրման մրցույթ, որին կարող են մասնակցել իրավաբանական և ֆիզիկական անձիք, սակայն մենք գիտենք, որ շատ դասագրքերի հեղինակներ դասախոսներ են ՀՊՄՀ-ից և ԵՊՀ-ից: Երկու բուհն էլ այն կազմակերպությունների թվում են, որոնք կարող են և իրականացրել են ուսուցիչների պարտադիր վերապատրաստում: Այստեղ ուսուցիչները ունեն հնարավորություն բարձրաձայնելու թե որքանով են, ըստ իրենց փորձի, դասագրքերը ճիշտ կազմված, համապատասխանում են աշակերտների տարիքային առանձնահատկություններին,թե ոչ, ճիշտ է անցումը մի դասագրքից մյուսը, թե ոչ և նման այլ հարցեր:

Բացի վերը նշված դրական տեղաշարժերից, որ կարող են լինել վերապատրաստումների արդյունքում՝ կարևոր է նաև մրցութային

լինելու սկզբունքը, այսինքն այն, որ որևէ կազմակերպության կամ բուհի չի տրվում վերապատրաստում իրականացնելու մենաշնորհը: Մրցութային լինելը կարող է ստեղծել մրցակցություն, ինչն էլ իր հերթին հնարավորություն է ստեղծում, որ բուհերից յուրաքանչյուրը աշխատանք տանի ավելի գրավիչ լինելու համար, անընդհատ վերանայի իր գործելակերպը այս ուղղությամբ, ծրագրերնու մասնագետներին, կարող է ամեն տարի վերապատրաստման ավարտին հարցում կազմակերպել ուսուցիչների շրջանում՝ պարզելու համար, թե գործընթացում ինչը կցանկանային փոխել կամ ավելացնել: Արդյունքները կարող են օգնել հաջորդ տարիներին աշխատանքը պլանավորելիս:

Դրական այս միտումները իրենց հերթին կարող են առաջացնել հարցեր: Այսպես օրինակ հրամանը հաստատվել է 2021 թվականին և նույն թվականին իրականացվել են վերապատրաստումներ, սա իհարկե նորարարություն է ցանկացած բուհի համար, սակայն հարց է առաջանում, թե որքանով են բուհերը պատրաստ իրականացնելու գործընթացը: Արդյոք բուհերում գործում են համապատասխան կառույցներ, որոնք կմշակեն տարվող աշխատանքները: Եթե խնդիրը դիտարկենք ՎՊՀ-ի և ՀՊՄՀ-ի օրինակով(www. aspu.am, www. vsu.am) և ուսումնասիրելով բուհերի կառուցվածքն ու համապատասխան վարչությունների սահմանած նպատակները, ապա 2-ում էլ արտացոլվում է բուհ-գործատու կապերի ամրապնդման անհրաժեշտությունը և ըստ հաշվետվությունների տարվում են աշխատանքներ այդ կապերի ամրապնդման համար: ՎՊՀ-ում գործում է կրթական բարեփոխումների և վերապատրաստման կենտրոն, որը ծրագրում, պլանավորում, կազմակերպում, կատարում, վերլուծում և հսկում է Համալսարանի կրթական բարեփոխումների և վերապատրաստման տիրույթում իրականացվող աշխատանքները: Իսկ ահա ՀՊՄՀ-ում գործում է կրթական գործընթացների կառավարման և բարեփոխումների վարչություն և համալսարան-գործատու համագործակցության կենտրոնը, որի նպատակներից են՝

1. Ստեղծել և ապահովել հետադարձ կապ գործատուների հետ, ուսումնասիրել և վերլուծել համալսարանի ուսանողների և շրջանավարտների պատրաստվածության վերաբերյալ գործատուի առաջարկները
2. Գործատուների հետ համագործակցության արդյունքում ստացված տվյալների վերլուծությունների տրամադրում՝ ՄԿԾ-ների վերանայման գործընթացին աջակցելու համար:

Նպատակները և մշակված ծրագրերը ունեն կարևոր դեր, սակայն

սրանք անվիարժեք են առանց վերպատրաստող անձնակազմի, ովքեր իրենց հերթին անցնում են վերապատրաստման, սակայն կարևոր է նաև դիտարկել, թե արդյոք վերապատրաստողների կողմից տրված գիտելիքները և նրանց փորձը համապատասխանում են ժամանակակից կրթության և հանրակրթության պահանջներին:

Վերապատրաստումներն իրենց հերթին լավ միջոց են մեկ քայլ առաջ գնալու համար, սակայն կարևոր է հասկանալ, թե այս ուղղությամբ ինչ նպատակներ է դրել բուհը: 1-ին հերթին կարևոր է պատրաստ լինել և բավարարել ուսուցիչների պահանջները, ձևավորել հմտություններ, որոնք անհրաժեշտություն են, ցանկացած փոփոխության համար, այնպես պլանավորել աշխատանքը, որ ժամանակը ուսուցիչների համար կորուստ չլինի և իրապես գիտակցեն վերապատրաստման անհրաժեշտությունը ամեն 5 տարին մեկ՝ սահմանված բաղադրիչներով: Սա իհարկե դպրոցների համար, բայց պլանավորելով աշխատանքը արդյոք բուհերն ունեն ակնկալիքներ իրենց համար:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. ՀՀ Հանրակրթության մասին օրենքը
2. «Ուսուցիչների մասնագիտական զարգացման և կրթության բովանդակության գնահատումը՝ Հայաստանում Հանրակրթության բարեփոխումների համատեքստում» Ս. Խաչատրյան, Ս. Պետրոսյան, Գ. Թերզյան-Երևան 2013, էջ 4- 36:
3. "Teacher Training, Teacher Quality, and Student Achievement" Douglas N. Harris Tim R. Sass- 2019, page 3-57.
4. "Learning and Teaching in Innovation: why it is important for education in 21st century"-Helena Kovacs-2017, page 12-48.
5. www. aspu.am (Հասանելի է՝ 12.02.2022թ.):
6. www. vsu.am (Հասանելի է՝ 12.02.2022թ.):
7. escs.am (Հասանելի է՝ 12.02.2022թ.):
